

Հ. Մ. Ը. Մ.

ՔՍԱՆԱՄԵԱՅ ՅՈՒԾԱՐՁԱՆ

1918-1938



*Պատմական Ծանօթութիւններ
Հայ Մարմնակրթական Եւրժման շուրջ*



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Մ. Ը. Մ. Ի

ՓԱՐԻՋ

1939

Imp. A. DER AGOPIAN
17, Rue Damesme - Paris

Printed in France

ՄԵՐ ՁԵՌՆԱՐԿԻՆ ՆՊԱՏԱԿԸ



Հ. Մ. Ը. Մ. ը, իր քսանամեակին առթիւ, այս հատորին հրատարակութեան ձեռնարկելով, նախապէս ունեցած է հայկական լայն շրջանակներու սեփականութիւնը դարձնել մարմնակրթական շարժման նուիրուած բոլոր ճիւղերը, սկիզբէն մինչեւ մեր օրերը, եւ համակրութեան ու գուրդուրանքի աւելի լայն ու աւելի ջերմ շրջանակ մը ըստեղծել անոր շուրջ :

Ներկայ հատորը՝ իրրեւ յուշարձան, յանձնելով մեր երիտասարդ սերունդի ուշադիր քննութեան, խոր հաւատքն ունինք թէ այն խանդավառ ջանքերն ու տենդային նուիրումը որ այս շարժումին հիմնադիրներուն քայլերը առաջնորդեցին առաջին օրէն իսկ, իրենց համապատասխան արձագանգը պիտի դանեն մեր նոր սերունդին մէջ :

Յաւակնութիւնը չունինք Հ. Մ. Ը. Մ. ի պատմութիւնը լիակատար ձեւով տալու այս հատորին մէջ : Մեր կամքէն անկախ, թերիներ ու մոռացումներ պիտի ըլլան անոր մէջ, արդիւնք՝ մեր ժողովուրդի գրուած վիճակին ու անոյ ստեղծուած անհարթելի դժուարութեանց : Հայ մարմնակրթական շարժումը, բխած ըլլալով բուն իսկ հայ ժողովուրդի ծոցէն ու իրական պահանջներէն, բնական է որ այդ շարժումին բոլոր կենդանի տարրերն ու գործերն ալ, անոր հետ բնկերացած, գրուած պիտի ըլլային ամենուրեք : Այս պայմաններուն մէջ, մեր կարելի բոլոր միջոցները սպառած ենք, Հայոց նորագոյն պատմութեան մարմնակրթական գյուտին պատկանող հսկայ նիւթերը հաւաքելու, դասաւորելու եւ ամփոփ կերպով ներկայացնելու համար, իր դիտարկ դերակատարներով ու անոնց գործերով, նախնական անկազմակերպ շրջանէն մինչեւ Հ. Մ. Ը. Մ. ի ձեւակերպումն ու բարդաւաճումը, մարմնակրթանքի իրրեւ հայկական բնդհանրական միակ կազմակերպութիւն :

Հետեւաբար, այս ձեռնարկը արդիւնք է հաւարական աշխատանքի, որուն իրենց սրտաբուխ մասնակցութիւնը բերին Հ. Մ. Ը. Մ. ի բոլոր շրջաններն և մասնաճիւղերն ու անոր նախկին ու այժմու գործօն անդամները : Այս թանկագին աշխատակցութիւնը սրտադին շնորհակալութեան կը հրաւիրէ մեզ այն բոլորին հանդէպ, որոնք իրենց գործակցութեամբ եկան կանգնելու այս յուշարձանը, որ քանի մը երիտասարդ սերունդներու ամէնէն եռանդուն ու խանդավառ ճիւղերուն, եւ ամէնէն ինքնարեւ նուիրումին թանձրացեալ պատկերն է :

Դժբախտաբար մեր դիտուն վերեւ չունինք հայ պետականութեան մը մեքանան, որ իր հովանաւորութեան տակ պահէր երիտասարդական

04 79

այս շարժումը: Չունինք հայրենի հող մեր ոտքին տակ, որ մշտնջենական սնունդ մատակարար մեր խանդավառ տենչերուն եւ թուխքնե — րուն: Բայց ունինք բարոյական դրամադուլուխ մը, — մեր Միութեան ողին ու վսեմ նպատակը ու անոնց հանդէպ հայ ժողովուրդի բոլոր խաւերուն անվերապահ ու ջերմ համակրանքը:

Անուրանալի իրականութիւն մըն է այժմ, որ յետպատերազմեան մարդկութիւնը, երիտասարդութիւնը մասնաւորապէս, բուրովին նորոգուած եւ փոխուած է: Այժմ, նոր մարդը կուզայ մարդական շարժումներուն միջոցով եւ անոնց հետ:

Հ. Մ. Բ. Մ. ը մեր իրականութեան մէջ, իր սահմանափակ միջոցներով, այդ պահասն է որ կը լրացնէ:

Աշխարհի մէջ ոչ մէկ ժողովուրդ թերեւս այնքան պէտք չունե — նար մարդական շարժման, որքան հայ ժողովուրդը: Դարեր սահեր անցեր են մեր ցեղին վրայէն, տառապանքի, Փիղիքական ու բարոյական սպառման խոր ակօսներ ձգելով: Հին ու նոր ժամանակները մեր ազգային մարմինը խորշոմներով ու սպիռներով ծածկեր են: Վայրենի ու կիսակիրթ ժողովուրդները պղտոր հոսանքի պէս անցեր են մեր հայրենիքին վրայէն, ոտնակոխ են ըրեր մեր ժողովուրդը, կարծելով որ այլեւս դատապարտուած ենք անհետանալու պատմութեան բեմէն: Անոնք ամէնքն ալ սխալեր էին իրենց հապճեպ հաշիւներուն մէջ: Մեր ցեղը կայ ու կ'ապրի եւ նոյնիսկ սնունդ կուտայ այն շարժումներուն, որ մեծ ժողովուրդներու մենաշնորհը կը նկատուի:

Դէպի նորն ու դէպի լաւագոյնը ձգտելու մեր ցեղային ողիին արդիւնքը պէտք է նկատել, անշուշտ, որ նաե՛ւ մարդական շարժումը Հայոց մէջ վերսկսած է գրեթէ այն թուականներուն, երբ Եւրոպայի մէջ դեռ միայն երկու մեծ ազգերու մէջ ծայր տուած էր ան, — ճիշդ այնպէս՝ ինչպէս հին դարերուն, Աթէնքի ու Հռոմի հետ միաժամանակ, անկախ բուն հայկական բաղմաթիւ խաղերէն:

Այսպէս, ողիմպիականներ կազմակերպելու գաղափարը Եւրոպայի մէջ ծնունդ առաւ 1891ին: Քանի մը տարի վերջ, Պոլսոյ Բոսնիա Քուլտուրի հայ տղաքը վարակուած էին մարդական շարժումով:


Սկաուտական շարժումը Ֆրանսայի մէջ կը սկսէր 1912ին: Մեր մէջ՝ նոյն թուականին, ու 1913էն վերջ Պոլսէն կ'անցնէր գաւառ: Իսկ «Չարքաչական ընկերութիւնը» (տես, ներկայ հատորին Ա. շրջանի Ա. մասը), բայց մանաւանդ՝ Մոլտաւիոյ Հայերուն «կորիճ — ներ» ու ընկերակցութիւնը ապացոյցներ են, որ սկաուտական շարժումը, իրրեւ գաղափար ու ոգի, Եւրոպայէն առաջ մեր մէջ ծնունդ է առած, առանց կրելու այդ անունը:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը մեր ցեղի Փիղիքական յարութեան ջահակիրն է, որ չի վհատիր եւ չընկրկիր անհնարին

դժուարութիւններու առջեւ : Իր նշանաբանն իսկ պերճախօս է եւ շատ բան կ'ըսէ արդէն .— «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» : Բարձրացի՛ր՝ Փիղիքական ու բարոյական անկումէ մը : Եւ ոչ միայն բարձրացի՛ր դո՛ւն, հա՛յ մարդ եւ հայ երիտասարդ, այլեւ ուրիշ Հայօրդիներ ալ բարձրացուր քեզի հետ : Վհատութիւն, քէն ու սխ, հոսանք ու խտրութիւն չի ճանչնար ան : Հա՛յ կ'ուզէ ապրիլ, Փիղիքապէս առողջ, հոգեպէս՝ տոկուն, որ կարենայ ազատ ու անկախ շնչել :

Ուրեմն, ներկայ հատորը՝ իբրեւ յուշարձան, թող հանդրուան մը ըլլայ, արագ ակնարկ մը նետելու համար ցարդ կատարուած թանկագին ճիգերուն ու չսակարկուած զոհողութեանց վրայ, չափելու համար մեծութիւնն ու զեղեցկութիւնը այն արու շարժումին զոր մեր նախորդները այնքան խանդով ու հաւատքով ստեղծեցին ու յանձնեցին հայ երիտասարդ սերունդի բոլոր կենսունակ ու հաւատաւոր տարրերուն, ու յետոյ՝ նոր շունչով ու պիրկ կամքով զօրացած, դիմագրաւելու ապագան, նորանոր նուաճումներու ի խնդիր :

Հ . Մ . Ը . Մ .



ՔԱՅԼԵՐԳ ԱՐԻՆԵՐՈՒ

.....

Փող ու ֆոկան, դրօշ ու քմբուկ ,
Արեւաքիթ ու ուազմաֆայլ ,
Մէգ ու գըւարթ , պիրկ ու ֆապուկ ,
Աղուէս ու բու , արծիւ ու գայլ ,—
Որք կորիւններ ֆար ու սարի ,
Մեզ աւագներն եղան օրրան . . .
Ծովերն արեան հայաշխարհի՝
Մըկրտութեան աւագան :

Խիզախ ու ֆաջ ,
Մէկ ձախ մէկ աջ ,
Բարձրանակատ ու հոյալանջ ,—
Միշտ աննըւան
Քալենֆ յառա՛ջ ,
Անշեղ յառա՛ջ , հոգեգըւարն :

Ճիգ ու ձգտում , պողպատեայ կամֆ ,
Անխոցելի եւ անկաշկանդ .
Մէ՛կ ֆանապարհ , մէ՛կ հաւատամֆ՝
Մինչեւ կատարն հայրենաւանդ :
Ո՛չ մէկ օտար շեշտ ու խըթան
Ոգեւորէ թող մեր հոգին .
Միայն երկունքն անկախութեան ,
Հայրենիքին , հայ հողին :

Խիզախ ու ֆաջ , եւայլն :

Վաղն երբ ցաթի թուխպէն արեւ ,
Կեանքն անըստուե՛ր դառնայ հայուն ,
Մեր ծիծաղկոտ հոգին վերեւ
Երբ ծածանի դրօ՛շն եռագոյն ,—
Մէկն հազարո՛վ հատուցանել
Թող ըլլայ մեր պարտքը գըւարթ .
Սէր , աշխատանք , բարիք ցանել՝
Որ սիրտէ սիրտ բացուի վարդ . . . :

Խիզախ ու ֆաջ , եւայլն :

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

.....

Ազգիս երկուսարդութեան մարմնակրթական շարժման համակիր մը եղած եմ միշտ, եւ 1920 - 1922 թուականին Կոստանդնուպոլսի մէջ շահագրգռութեամբ հետեւած եմ մեր արիներու մարզական խաղերուն եւ բանակումներուն, եւ ընդունած նաեւ իրենց շքանշանը : Օտար մը չէ ուրեմն՝ զոր յիշեց «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» քսանամեակի Յանձնաժողովը, եւ խնդրեց մասնակցութիւնս ներկայ հատորին մէջ, նկարագրութեամբ մեր նախնեաց մարզական դործունէութեան, զոր եւ կը կատարեմ յօժարութեամբ :

1. Քաղաքակիրթ ազգերը ինչպէս այժմ, նաեւ ամէն ժամանակ մեծապէս ազդուեր ու նմաներ են իրարու այն ամէն բաներու մէջ, որ կը վերաբերէին մտաց ու մարմնոյ զարգացման : Յունաստան եւ Հռոմ, ընդարձակ ասպարէզներ մարմնակրթութեան, յորդոր եւ օրինակ հանդիսացան նաեւ մեր ազգին, որ իր չափով եւ ոճով հետեւեցաւ անոնց . եւ մենք բաւական ասպացոյցներ ունինք՝ տեսնելու եւ դադափար մը կազմելու անոր զբօսական կամ կրթական խաղերուն, զորս Սարկաւազ վրդ. կը կոչէր հանդիսական ուամուսիք (Սոփերք, Գ. 36), հրապարակաւ ու շքով կատարուելուն համար :

Հայ մատենագրութիւնը կը հանէ մեզ մինչեւ իր դոյութեան ըսկիզբը, ուր Տրդատ արքայ ի մանկութենէ դաստիարակուած Յունաց քով, եւ «յուդիմպիադան Յունաց հսկայազօր երեւեալ», անոնց մէջ ցոյց կուտար «բազում դործս արութեան» (Աղաթ. 157), եւ «ի մրցանակս ազոնին» կամ մարզարանին յաղթանակներ կը տանէր յոյն քաջերու դէմ (Խորեն. Բ. ԳԹ.) : Դառնալով տիրելով հայրենի աշխարհին, կը պատմուի թէ հոն ալ ցուցեր է «բազում դործս արութեանն» (Աղաթ. 144), որ մեր միտքը կը տանի նոյն կարգի խաղերուն :

Ատոնց դոյութեան եւ հնութեան մեր քով՝ աւելի ապահով փաստ մըն է Փաւստոսի վկայութիւնը պատանի Վարազդատ թաղաւորի մասին, « լի արութեամբ, կորովի ձեռք, քաջ սրտիւ » (234), որոյ մրցութիւնները պիտի տեսնենք ստորեւ : Յաջորդ դարուն Ղ. Փարպեցին կը յիշեցնէր Մամիկոնեան Վահանայ «ղհրահանգ հոգեպէս եւ մարմնապէս», զորս անոր այրի մայրը Զուլիկ տուած էր իրեն եւ եղբայրներուն . եւ թէ պատմիչդ անոնց վերնազգեստներ «ի խա -

դու» կամ մարդուելու պահուն կը կրէր անոնց ետեւէն (588, 572) : Կ'ակնարկէ նաեւ «ի դրամունս որոց եւ ի խաղս»՝ զոր կը կատարէին Հայք ու Պարսիկներն ի միասին (51) : Կը յիշէ դարձեալ եւ «զօղտարեր շքեղարար հրահանգս», որոց մէջ կը կրթուէին բոլոր հայ ազատորդիք (334) : Ժ. դարուն Գաղիկ Ա. Արծրունին Աղթա - մարայ մէջ իր կառուցած դրօսական տաճարին որմերը զարդարեց նկարներով, որոնց մէջ նաեւ «ըմբշամարտաց պատերազմունք» (Թ. Արծրունի, 332), որ ուրեմն կը շարունակէին տակաւին :

2. Մարմնակրթութիւնն երկու մաս ունէր. մարմնոյն յօրացու - ցիչ խաղեր, եւ զինուորական հրահանգներ : Առաջիններն յատուկ է - ին աւելի ազնուական դասուն, մինչ վերջինները սեփական կը գտ - նենք թէ անոնց եւ թէ ժողովրդեան : Այսպէս մեր պատմութեանց մէջ ունինք տոհմիկ պատանիներ, Սմբատ եւ Տիրան՝ որդիք Գայլ Վահանայ, Իշխան որդի Խուլ Խաչկի եւ ուրիշներ, որոնք այնչափ վարժ են զինուորութեան մէջ, որ պատերազմի ժամանակ մեծամեծ քաջութիւններ կը դործեն : Եւ ընդհանուր էր այս վարժութիւնն ազ - նուական տոհմերու մէջ, ինչպէս կը զգացնէ Սեբէոս, խօսելով Մա - միկոնեան Համազասպի մասին՝ թէ զրասէր էր, «եւ ոչ ըստ հայրե - նի ազգին վարժ եւ կիրթ հրահանգօք զինուորական վարժից» (234) : Կը գովուի եւ Աշոտ Երկաթ, «բաղմահանդէսն այն եւ աջողակն ի հրահանգս կրթութեան վարժից մարտի» (Յվհ. Կաթողիկոս, 304) : Եւ Լեւոն Բ. իր որդին Հեթումը կը դաստիարակէ ըստ Վահրամայ՝ «եւ ի մարտից դործս վարժեալ» (236) : Շատ բնական էր՝ որ ժողո - վրդեան այն մասն ալ, որ պատերազմելու պարտաւոր էր, կանխաւ կրթուէր զինավարժութեան : Փաւստոս կը նկարագրէ շինական երի - տասարդ մը, որ թերեւս աւաղակութենէ կը դառնար, կ'ըսէ. «Կր - թեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտույ, աղեղնակապարճ զմի - ջովն» (266). զէնքեր՝ որ ընտանի էին իրեն :

Մարզանքները կը պահանջէին իրենց ուսուցիչներն ալ, որ ան - պակաս էին եւ մարզիչ կը կոչուէին (Բ. Մակար. Գ. 14) : Այսպէս Սարկաւազ վրդ. ԺԲ. դարու սկիզբները կը թուէ մեր քով ծանօթ զանազան խաղեր, եւ անոնց ուսուցումը. «ձիավարժութեան եւ ա - զեղնաւորութեան եւ այլոց զինուց շարժականութեան, կ'ըսէ, առանց խրատու եւ ի մանկութենէ արուեստապէս վարժութեան չիք հնար տեղեկութիւն առնուլ. նմանապէս եւ բռնամարտկութեան եւ այլոց հանդիսական ուսմանց» (Սոփերք, Գ. 36) : Ասոնք բոլորն ուրեմն կը ստացուէին պատանեկութենէ եւ ուսմամբ, ինչպէս ըսինք : Ազնուա - կան պատանեաց մարդումը կը կատարուէր իրենց յատուկ դաստիա - րակաց կողմանէ կամ հսկողութեան ներքեւ : Բայց երբեմն կային նա -

եւ հասարակաց մարդիչներ անոնց հետ. զոր օրինակ Արշակունի Գնէլի համար կը պատմէ Խորենացին՝ թէ նախարարաց զաւակներն հաւաքելով, «մեծապէս հանդերձեաց զարդու եւ զինու», որ է զինուորական արուեստի մէջ (Գ. ԻԲ.) :

Հասարակաց մարդանքը կամ անոնց հանդիսական ներկայացումը կը պահանջէին յատուկ մարդարաններ ալ, Եղնիկէն կոռւանց կոչուած՝ յունարէն պալեստրայի նմանութեամբ (56), եւ Սամ. Կամրջաձորեցիէն՝ մրցարան (Հյկղ. բառ.) : Մրցութիւնն Յունաց պէս մեր քով եւս կը կատարուէր քատրնէրու մէջ ալ, որ շատ սովորական էին ի Հայս, ինչպէս այլուր ցուցուցած եմ : Իսկ հեծելութեան համար կային ասպարէզք, ինչպէս Շահապիլանին ու Զարեհաւանին (Փաւս. 117, 176) : Ընդհանուր ձեւով յիշուած նաեւ Ազաթանդեղոսէ (23), եւ Խորենացիէն կոչուած ձիարձակարան (Գ. ԾԵ.) յունարէն իպպոդրոմոսի կայմով :

3. Այժմ տեսնենք նախ բուն մարզական խաղերը, որոնց նպատակն էր տալ մարմնույն կայտառութիւն, պնդութիւն եւ դիւրաշարժութիւն. եւ որոնք թուով ինն են. եւ զորս պիտի կոչեմ զասական անուաններով :

Մակառական խաղ, յիշուած Խորենացիէն, որ կը կատարուէր քանի մը հողով : Մէջտեղ կը զբուէր զնդակ մը. եւ խաղացողները մէկ մէկ մահան կամ դաւաղան բռնած, անով իւրաքանչիւր ոք կը ջանար իր կողմն անցընել զնդակը, եւ անշուշտ տանիլ մինչեւ սահմանեալ կէտ մը, որով կը շահէր յաղթութիւնը : Մեր պատմիչը զայն անդամ մը խաղալ կուտայ Շաւասպ Արծրունուոյ եւ Շապուհ պարսկին՝ ձիարձակարանի մէջ (Խոր. Գ. ԾԵ.) : Նոյնը կար ու կը յիշուի է. դարուն նաեւ Մամիկոնեան պատմիչէն (51-2). եւ կը կատարուէր «յերկիր տափարակ եւ դաշտային» (28) : Կը հանդիպինք անոր նաեւ Թ. դարուն, ուր սակայն կը կատարուի ձիերու մրայ, եւ այս ձեւով խաղալ կուտայ Արծրունեաց պատմիչը Խորենացուոյն յիշածն ալ «խաղս ձիընթացիկ արշաւանաց զնդակացն» (77) : Նոյն կերպով կը կատարէ զայն Վասպուրականի Աշոտ իշխանը (նոյն՝ 242) : Նոյնպէս եւ Անձեւացեաց Դերենիկ արքայն (975ին) Արարաց հետ, որոնց զերին էր. կը պատրաստէ «սրընթաց ձի» մը, անով կը մտնէ «ի խաղ զնդին. եւ առեալ զգունդն տանէր հեռագոյն, որպէսզի փախչէր, ինչպէս եւ ըրաւ (Ուռհ. 32, Արզր. Կիլիկ. նիդ) :

Հասեառիկ անուն հայկական խաղ մը կը յիշէ Եւսեբիոյ ժամանակագրութեան հայ թարգմանիչը (Ա. 300), բնագրէն կազմով եւ իմաստով հեռի, եւ որոյ յօրինուածին մէջ ունինք նկարագիրն ալ :

Վաղելու մրցանք մըն էր, եւ սահմանեալ հեռաւորութեան վրայ կը դնէին նպատակ մը, գուցէ մրցանակն իսկ. եւ մրցողները միասին ընթանալով, առաջին հասնողը կ'առնէր դայն եւ կը շահէր յաղթու-
թիւնը:

Արշաւանը, սուրբական կոչում Ե. դարու (Ա. Մակար. Թ. 68), նման էր նախորդին, եւ կը կայանար երկայն ասպարէզներ զանազան անդամներ վաղելու մէջ, ինչպէս Յոյներն ալ կ'ընէին: Բայց իր յիշատակութիւնն ուշ է մնացեր մեր քով. Յվհ. Կաթողիկոսն է՝ որ կը պատմէ Աշոտ Երկաթի մասին՝ թէ մինչդեռ պատանի էր, իր հասակակցաց հետ «բաղում ընթացութիւնս եւ նահատակութիւնս քաջութեանց ուժեղակ մրցութեամբ ցուցանէր» (304): Մխիթար Գօշ կը յիշէ մեր քով ասոր տարբեր մէկ ձեւն աճ, որ է գրաւ դնել եւ «ի բարձանց ի խոնարհ վաղել» . եւ կամ «ընդ դժուարս եւ ընդ ձիւնս եւ ընդ այլ ինչ այսպիսի դնալ» (Դոստոն. 323): Ասոնց առաջինը Կիլիկիոյ Հայոց մէջ ալ լինելու է, որով Սմբատ կը յիշէ դայն, «ի բարձրր տեղաց ի վայր վաղել» (Օրէնք, ձԻԸ):

Վագ կամ վագֆ կը կոչուէր ոստումը փոսի վրայէն (Եւսեբ. Ժմնկ. Ա. 286. Խորեն. Գ. Խ.), որ մին էր մարդախաղերէն Յունաց ու մեր քով: Փոխանակ նկարագրութեան՝ իր դործնական օրինակը միայն յիշուած է մեր պատմութեան մէջ: Այսպէս Վարազդատ արքայն աւաղակաց հանդիպեցաւ, որոնք աղատելու համար իր ձեռքէն, Եփրատի նեղուցէն անցան ու կամրջափայտը վար ձղեցին, այն ժամանակ Վարազդատ «վաղեաց զԵփրատաւ», կը գրէ Խորենացին, իբր քսան եւ երկու կանդուն լայնութեան վրայէն. ի տես որոյ աւաղակները սարսափած՝ անձնատուր եղան: Յոյն վաղողները փոքր ծանրոցներ ալ կը բռնէին զանազան նիւթերէ, աւելի քաջութիւն ցուցնելու նպատակաւ:

Լոյ կամ լոյղը (վեցօր. 161, Ոսկ. Մտթ. Ա. 107) նոյնպէս մարդական խաղերէն մին էր, որով Հայերը վարժուած, շատ անգամ այդ կերպով կ'անցնէին իրենց լայն եւ յորդաջուր դետերէն: Տրդատ պատերազմի մը մէջ կը վերաւորուի. կը հանէ իր եւ ձիուն դրահները, իր կռնակին կը կապէ, եւ ձին ետեւէն քաշելով, «ի լուղ» կ'անցնի Եփրատէն (Աղաթ. 158). նոյն ձեւով կ'անցնի նաեւ Վահան Ամիկոնեան՝ է. դարուն՝ Արածանիէն (Յվ. Մամիկ. 51): Ունինք նաեւ բանակաց համախումբ անցքեր. ինչպէս Վարդանանցը՝ Կուրէն (Փարպ. 193) եւ Տղմուտէն (Եղիշ. 91). Վահանանցն՝ Երասխէն (Փարպ. 524 - 25). Սմբատին՝ Արածանիէն՝ (Ղեւոնդ՝ 181), եւ Արաս արքային՝ Կուրէն (Ասող. 158): Պատանեաց ջրի մէջ լողալու

փորձերն ալ կը յիշեն Մխ. Գօշ (322) ու Սմբատ (Իդ) : Եւ նոյն ըզբօսանքին զո՛ճ զնաց Լեւոն Բ. ի որդին Ալինախ, որ Տարսոնի գետին մէջ լողալու պահուն մօտն ունէր տաճիկ ձին, սը կից մը զարկաւ անոր դլիին ու սպաննեց (Սամ. 156 - 57) :

Ծանրաբարձութիւնն ուժի դլխաւոր փորձերէն էր, մանր նկարադրուած Յունաց քով, մինչ հնութիւնն օրինակներ միայն պահած է մեր մօտ : Այսպէս Տրդատ Հախիսիմեանց վկայարանաց շինութեան ասթիւ՛ Մասիս լեռնէն «հայկաբար» կոնակին բարձած մեծամեծ ու դժուարաշարժ քարեր, կը տանէր անոնց նահատակութեան տեղը (Ազաթ. 576) : Մանուէլ ու Կոմս Մամիկոնեանք հալածուած Շապուհէ, երբ հեախոտն Հայաստան կը դառնային, Կոմսի ստքերը ցաւեցան, եւ եղբայրը զայն իր վրայ առած, տանէ տան հրասախ կը տանի կը հասցնէ հայրենի աշխարհը (Փաւս. 239) : Հսկայազօր Սմբատ Բաղրատունեայ մասին, ապրած Զ - է. դարուց միջեւ, կը պատմուի թէ կառչելով ծառի մը ճիւղին, սրունքներովը կը պրկէր հեծած ձին ու կը բարձրացնէր զեանէն. այնպէս սը զօրքերը զարմանք ու սարսափ կը զգային (Սեր. 90) : Իսկ ըստ Գօշի՝ ծանրաբարձութիւնն իր օրով արդէն մրցութեան նիւթ էր երկտասարդաց միջեւ, եւ զիրար կը դրդուէին՝ վերցնելու քարեր եւ այլ նման ծանր բաներ. եւ հրապուրիչ դարձնելու համար զրաւ կը դնէին (323) : Նոյնը կար եւ Կիլիկիոյ մէջ, ինչպէս կը վկայէ Սմբատ. «զրաւով ծանար իրք վերցնեն կամ ուժփորձուկ այնեն» (Օրէնք, ճիթ) :

Ըմբռամարտ կամ գիրկընդխառն կռիւ (Ոսկ. Ա. 70, Եւսեբ. Ժմնկ. Ա. 288) յայտնի է միշտ մեր պատմութեան մէջ իր զոյուլթեամբ, բայց ոչ մանր նկարագրով՝ զոր կը գտնենք Յունաց քով : Այսպէս Եղիշէ կ'ըսէ այլաբանօրէն. «մերկնեաց իբրեւ զըմբռամարտիկ, օժ իւղովն Քրիստոսի, զի մի կռուեսցեն ի քեզ ձեռք ախոյանին» (164) : Ակնարկեցինք կանխաւ Գաղիկ Արծրունեայ սիրած ու նկարած «ըմբռամարտաց» իտպերուն. եւ Լաստիվերտացիէն կը յիշուին Կարսի «ըմբռամարտք» (62) : Իւրաքանչիւր «մարտուսոյց», կ'ըսէ Եղնիկ, մեծապէս նախանձայոյղ էր իր աշակերտաց յաջողութեան, եւ կը պահանջէր անորմէ մեռնիլ պատուով, քան յաղթուիլ ի վնաս իր եւ ուսուցչին անուան : Այդ պարապային պատիժ կ'ընդունէին ուսուցչէն, եւ մինչեւ անգամ մահը (57). ապացոյց՝ թէ կռուողները դերիներ կամ ստրուկներ էին : Սարգիս վրդ. ԺԲ. դարուն կը վկայէ՝ թէ յաղթականն իր շահած յաջողութեան վրայ նախ կը պարծէր հանդիսականաց առջեւ. ապա կը մօտենար «մարտադրին» կամ մրցանքը պատրաստողին, եւ բարձրիզլուխ կը պահանջէր պսակը (118) :

Կռփամարտիկ կամ բռնամարտիկ (Եւս. Ժմնկ. Ա. 285, 287), որ

է ծանօթ վայրենի կռիւը կռփի հարուածներով, թէպէտ ընդունուած քաղաքակիրթ ազգերէ : Վարազդատ թագաւորն ասոր ախոյան մըն էր, Պիռասի մէջ «զբռնամարտիկսն յաղթելով» (Խորեն. Գ. Խ.) : Ոսկեբերանի թարգմանիչը կը յաւելու նոյն խաղն իբրեւ ծանօթ Հայոց (Մեկ. Պօղ. Ա. 816), եւ Սարգիս վրդ. տակաւին կ'ակնարկէ նոյն «բռնամարտիկութեան» (Սովերք, Գ. 36) : Յունաց քով ունէր իր տեսակները, որոնց մին էր «պանկրատիոնը», խառնուրդ բռնամարտի եւ ըմբշամարտի, նպատակ ունենալով յաղթել որ եւ է ձեւով. եւ բուն դայս կը մատնանշէ մերս Նարեկացին, յիշելով իւրի օծումն «առ բռնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս» (256) :

Գագանամարտի յիշատակութիւնը չկայ մեր աշխարհին մէջ, սակայն ունեցած ենք անձինք՝ որ ատոր մէջ ալ փայլեր են Հայաստանէն դուրս : Այսպէս Վարազդատ առիւծներ կը սպաննէ Արեւ քաղաքի մէջ (Խորեն. Գ. Խ.) : Իսկ վերոյիշեալ Սմբատ Բագրատունին Բիւզանդիոնի կրկէսին մէջ բռնցով արջ մը կը մահացնէ, ցլի մը կը զակն ու եղջիւրները կը թափէ եւ առիւծ մը կը խեղդէ (Սեբ. 90-91) :

4. Կ'անցնինք այժմ զինուորական հրահանգներուն, որոնք անհատական օգտէն աւելի նկատի ունէին հայրենի աշխարհին պահպանութիւնը. եւ այս պատճառաւ ալ մեծագոյն կարեւորութիւն ունէին քան նախորդ հասարակ մարդանքները. որով եւ աւելի ընդարձակ ու ստիպողական էին հայ երիտասարդութեան :

Սուսերաձգութիւնն էր անոնց առաջինը, յորում հայ պատանին արդէն ի հնուց վարժ էր : Դ. դարուն ունինք օրինակը Մամիկոնեան Արտաւազդայ, որ տակաւին «պատանեակ մը կայտառ անմորուս», սպարապետէն զաղտնի կը մտնէ ճակատամարտի մէջ, եւ Մերուժանայ դօրքերէն շատեր «ընդ սուր հանեալ» կը կոտորէ (Փաւս. 254) : Վարազդատ արքայ, նոյնպէս «տիրովք մանուկ», եւ հինգ ախոյենից հետ միանգամայն ճակատած, հինգն ալ կը սպաննէ «սուսերաւ» (Խոր. Գ. Խ.) : Եւ Գաղիկ Արծրունեայ տաճարին նկարներուն մէջ կային նաեւ «սուսերամերկաց հոյլք» մրցելով իրարու հետ (Արծր. 332) :

Աղեղնաւորութիւն կամ նետաձգութիւնն ալ մեծ յարգ ու խնամք կը վայելէր ազգիս մէջ, եւ հռչակուած նաեւ օտար աշխարհներ, այնպէս որ հռոմայեցի քերթողն Որատիոս կը դրէր Հայոց մասին թէ փախչելու ժամանակ իսկ «աղեղամբն ահաւորք» էին : Այդ վարժութիւնը կը ստացուէր նոյնպէս հրահանգութեամբ, ինչպէս կը պատմէ Խորենացին Արտաշիսի համար՝ թէ իր Տիգրան որդին կը յանձնէ Վարաժ անուն պատանւոյ մը, որ հռչակուած էր «ի նետաձգութիւն կորովութեան», ուսուցանելու այն արուեստը (Բ. ԺԱ) : Մամի-

կոնեան վասակայ զօրքերը Փաւստոս կը սահմանէր «աղեղնաւորք անվրէպք կորովիք» (130) . եւ Փարպեցին՝ Մամիկոնեան տոհմն «ի նետաձողութեանն դեղեցկաձիգք եւ դիպեցուցողք» (387) : Իրենցմէ վերոյիշեալ Արտաւաղդ պատանին Մերուժանայ նշանակրէն յարձակում կրելով, կը լարէ աղեղը, նետը կ'անցնէ անոր դրահին պարաններէն եւ դետին կը տապալէ դայն (Նոյն՝ 254) : Վարադդատ նոյն պէս կը զովուի իբրեւ «յոյժ կորովի նետաձողութեամբ» . եւ բերդի մը վրայ յարձակելով, տասնեւեօթ հոգի նետահար վար կը թօթափէ (Խորեն. Գ. Խ) : Ղազար կը պատմէ՝ թէ քաջին Վահանայ զօրքերը դէշեր մը Պարսից զակչին դիմաց երթալով, տեղատարափ շառաչման պէս՝ «նետաձիգ սաստկութեամբ զլունդս Պարսից ահաբեկէին» (459) - Կոմիտաս Հոխիսիմեանց շարականին մէջ զՀայս կը կոչէ «կորովիք հաստաձիգ աղեղաց» : Եւ Յովհ. Կաթողիկոս Գէորդ Շահանի զօրաց համար կը պատմէ՝ թէ «զրեթէ ի մայոյ ոչ վրիպէին» (445) :

Սարկաւաղ վրդ. կը վկայէ՝ թէ Հայր կը շարունակէին ուսանիլ նետաձողութիւնն ի պատանեկութենէ (Մովսէրք, Գ. 36) : Իսկ անոր հրապարակային մրցութիւնք կը կատարուէին հետիտն կամ ձիով : Այս վերջինն իսկ կը նկարագրէ Աղաթանդեղոս այլաբանօրէն, յիշելով ձին հեծնելը, ասպարիղի մէջ մտնելը, արշաւելու ժամանակ դէպի նպատակը դառնալը, աղեղը լարելն ու նետն արձակելը (23) :

Նիզակահարութիւնն ալ կար ու կը կարօտէր ասանձին հրահան - ղութեան, ինչպէս ունէին եւ Յոյները . եւ Գրիգոր Տղայ հայ մարդանաց կարգին կը յիշէ «նիզակակիրքն վահանին» (Ողբ. Երուսղ.) , զորս միասին կը կրէին մարտի մէջ եւս : Կան նշանաւոր դէմքեր ու դէպքեր նաեւ այս մասին մէջ : Մանուէլ Մամիկոնեան ու Մերուժան Արծրունի մենամարտութեան կը բռնուին, եւ իրարու նիզակաց հարուածներուն ներքեւ միասին կը տապալին ձիերէն : Այդ պահուն Բաբիկ Սիւնի կը հասնի, նիզակը ձիէն կը վարսէ դրահապատ ուրացողի կողին, եւ դայն դետին կը դամէ (Փատո. 254) : Վիլլեբրանտ 1212ին ներկայ էր ի Կիլիկիա ջրօրհնեաց հանդիսին, ուր յետ սրբազան արարողութեանց՝ մեծն Լեւոն իր զօրքերով դաշտը դնաց . եւ հոն, կ'ըսէ, «պալարակապ երիւթներով արշաւելով, եւ նիզակներ խորտակելով, զինուորական խաղեր կատարեցին» (Սիսուան, 476) :

Տեգրնիկեցութիւնը փոքր նիզակի դարձածութիւնն էր, զոր բռնած կը նետէին թշնամեաց, եւ որ մեծադոյն ճարտարութիւն կը պահանջէր : Մակարայեցոյ զերքն երբ կը յիշէ սկաւառակի խաղը, որ չկար մեր քով, հայ թարգմանիչը դայն կը փոխէ «արդնրնիկէց տեգրնիկէց» հոմանիշ բառերուն (Գ. 14), զգացնելով ասոր դոյութիւնը մեր քով Ե. դարուն : Խորենացին պատմելով Արշակայ մասին՝ թէ «նիզակն

լը բոլորապէս» կամ աչալէն նետելով, «խորագոյնս նստոյց» իր կանգնած երկանաքարին վրայ (Բ. Թ.), կը վկայէ աւելի խաղին իրականութեան՝ քան պատմական իրողութեան մը: Մարդանքս կը կատարուէր Յունաց քով հետիտան կամ հեծած. նոյնպէս էր եւ մեր մէջ, որով Սորենացին կը շեշտէ Արշակայ ձեւն՝ «ի հետեւակուց»:

Պարսաբարուքիւնը նոյնպէս ծանօթ էր մեր քով, լինելով պատերազմի դէնքերէն մին, եւ դանազան անպամներ յիշուած: Սորենացին կը դովէ Տիգրանայ բանակը՝ թէ «պարսաւորքն առ հասարակ դիպադեզուհք» էին (Ա. ԻԳ): Յոհան Մամիկոնեան կը պատմէ՝ թէ Հայք է. դարու կսիւներուն մէջ նետելով ու «պարսաքարօք» մեծ ջարդ կուտային Պարսից (39,48): Ասոր դարձածութեան կը հանդիպինք նաեւ յետոյ շատ անպամներ. եւ Գրիգոր Տղայ կը յիշէ իր մարդիկներն ալ. «Ո՞ւր պարսաւորք ճահողակին» (Ողբ. Երուսղ.):

Գլարձակուքիւնը, որ է՝ ձեռամբ գիլ կամ վիր նետելու գործը, նոյնպէս մասն էր պատերազմի, եւ կանխաւ վարժութիւն կը պահանջէր, զոր կը ցուցնեն Հայք յաճախ: Այսպէս երբ պարսիկ մողերը Վարդանանց օրով խուժեցին Հայաստան, Ղեւոնդ եւ Ժողովուրդը «վիրդս ի ձեանս ասեայ», անոնց գլուխները ջարդեցին (Եղիշէ՝ 44): Նաեւ է. դարուն Հայերը ճակատելով Պարսից դէմ, «դլօք» եւ ուրիշ դէնքերով ծանր կոտորած տուին անոնց (ՅՏ. Մամիկոնեան, 27, 39). եւ թշնամի այրուձիտյն դէմ ելնելով, «ջլաջարդ ասնէին» անոնց երիվարաց ճակատները, չինայելով եւ ոչ հեծելոց (Ձենոբ, 45): Գուրդէն Արծրունուոյ մէկ ճակատամարտին մէջ սամիկն անոր օղնութեան փութաց նոյնպէս «քարամբք» (Արծր. 165). եւ անուանին Այծեամն 1196ին: Անուոյ պարսպին մրայ կանգնած, Արարներն «հալածականս ասնէր քարամբք» (Մամուէլ, 126-27):

Հեծելուքիւնն Հայոց պարձանքներէն մին եղած է, եւ մեր այրուձին համբաւ փայելեր է միշտ օտարաց առջեւ, որոնք շատ անպամներ անոր օղնութիւնը խնդրեր եւ յաղթութիւններ շահեր են: Իսկ մեր պատմութիւնը կը թուէ դանազան հայ ախոյաններ հեծելութեան մէջ, զորս ծանր կը լինէր յիշել հոս մի առ մի: Ասոր ուսումն հայ մարդական հրահանգաց մասն էր. եւ ասոր ապացոյց են մեր հեն աստատեաներս կամ ձիարձակարանք՝ զորս տեսանք կանխաւ: Վանայ մօտ եւս կար «ձիրնթացիկ ասպարէցն» (Արծր. 268), ուր օր մօ Գասին Արամբուտան «ճախր ասեայ ձեմէր» ուրիշ ազատաց հետ (ՅՏ. կաթող. 222): Սարկաւաղ մարդապետին ալ ծանօթ էր այս մարդանքը (Մսիկերք, Գ. 63): Եւ Ենորհային կը յիշէ հայ դինուրութիւնն անպակաս «ի իրախճանութիւնս խաղուց ձիրնթացից» (Նամակ. 66): Մենք տեսանք հեծելութիւնը նաեւ խառն մականախաղի,

լողի, աղեղնաւորութեան, նիզակահարութեան եւ տեղընկեցութեան հետ, որոնց համար մեծադոյն ճարտարութիւն կը պահանջուէր հայ պարմանէին, քան երբ անոնք դատ կատարուէին: Չաքարիա կաթո - ղիկոսէն եւ ուրիշներէ վիտենք ձիերու դործածութիւնը նաեւ հար - սանեաց առթիւ, փեսային, հարսին ու հարսնեւորաց կողմանէ՝ եկե - ղեցի երթալու եւ դառնալու ժամանակ (Հայուհին, 73):

Որքա՞ վերջին մարդանքն էր Հայոց ու Պարսից, նպատակ ունե - նալով ոչ միայն սրկորին յաղուրդ տալ, այլ եւ հրահանդել երիտա - սարդութիւնը զինաչարժութեան մէջ. տեսակ մը զինուորական պատ - րաստութիւն էր: Այսպէս Մեծն Տրդատի համար կը կարգանք՝ թէ օր մը սրսի կ'երթայ «ամենայն զօրաց» հետ (Աղաթ. 164). եւ Մա - նուէլ Մամիկոնեան նոյնը կը հրամայէ Բաղրեւանդայ մէջ «ամենայն Հայոց զնդին» (Փաւս. 252): Այնչափ կարեւոր ու յարգի էր այս կրթութիւնը, որ Վահան Մամիկոնեան հայ ուրացողները կը պար - սաւէր Նիխորայ առջեւ իբրեւ անպէտ մարդիկ եւ «լքեալք յորսոյ» (Փարպ. 511): Ղաղար յիշատակը կ'ընէ նաեւ Ե. դարու «որսատենչ աղատացն», որոնք իրենց զաւակներով յաճախ այլ դրօսանքին ետե - լէն կը վաղէին՝ հետիտան կամ ձիերով (26. 27. 337 - 385): Շատ են օրինակներն այս հրահանգութեան. եւ առ այս կային նաեւ բնական կամ արուեստով պատրաստուած յատուկ վայրեր Հայաստանի դա - նապան կողմերը:

Ասոնք են հայ անցելոյն մէջ ծանօթ մարդանքները, որոնց հա - մա օտ յիշատակութեամբ շատացայ հոս. իսկ իրենց մանրամասն նկարագրութիւնը տուած եմ առանձին հատորի մը մէջ, «Դաստիա - րակութիւնը հին Հայոց քով», որու կարող են դիմել հետաքրքիրներ:

Առիթն է միանգամայն յայտնելու մեր մարմնակրթական միու - թեանց՝ ջերմ բաղձանքս՝ նորուումած տեսելու անոնց խաղերուն մէջ մեր նախնեաց այս հրահանգները, որոնք հայ մարդիկներուն եւ հանդիսականաց առջեւ պիտի նորոգեն հին հարց յիշատակները, պի - տի նպաստեն աւելի պնդացնելու նոր սերունդին կապն անոնց հետ, եւ հայկական յատուկ նկարագիր մը պիտի տան նոյն կազմակեր - պութեանց:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ



ՀԻՆ ՀԱՅՈՑ ՆԱԼԱՍԱՐԳԵԱՆ ԽԱՂԵՐԸ



Ունէի՞ն հին՝ հեթանոս Հայերը « Նալասարդեան խաղեր » : Եթէ այս՝ որո՞նք էին այդ խաղերը : Քանի՞ հատ ու տեսակ էին : Ի՞նչ մանրամասն պարագաներով տեղի կ'ունենային անոնք : Միայն Հայոց Նալասարդի տօնի՞ն կը խաղացուէին՝ թէ ուրիշ ասիթներով ալ : Հայերո՞ւն յատուկ էին անոնք՝ թէ ուրիշ ժողովուրդներէ առնուած էին : — Ահա կարդ մը հարցումներ, որոնք խնդրի մեր առջեւ կը ցցուին, երբ կը ձեռնարկենք հին Հայոց « Նալասարդեան » ըսուած խաղերու վրայ փոքրիկ քննական ակնարկ մը նետել : Հարցեր, զորոնք որքան հեշտ է հրատարակ զնելը, նո՛յնքան զժուարին է անոնց պահանջիչ պատասխաններ պահելը :

Հին Հայոց Նալասարդ իր՝ Հայոց Նոր տարին ու միանգամայն հունձքի տօնն էր : Իսկ Նալասարդ իր՝ կը համապատասխանէ ներկայ նոր ամսարի Օգոստոսի 24ին : Հետեւաբար այդ օրը՝ թէ՛ իբրեւ Նոր տարույ եւ թէ՛ նաեւ հունձքի տօն՝ մեծ շքեղութեամբ կը տօնախրմբ — բուէր հին Հայերու կողմէ : Այդ օրը նուիրուած էր — ինչպէս ջանացած ենք ապացուցանել մեր « Հին Հայոց Նոր Տարին » աշխատութեան մէջ — երկու արդային զերազոյն դից — Արամազդայ եւ Անահիտի — , որոնց ի պատիւ Բագրեւանդ պալատի Բագաւան կամ Դիցաւան զիւղաքաղաքին մէջ ցնծատօն կը կատարուէր վերոյիշեալ դից մեհեանին (կամ թերեւս մեհեաններուն) շուրջը, ուր խուռներամ կը զիմէին Հայաստանի 15 նահանգներու բնակիչները :

Ագաքանգեղոս ու Խորենացի հետեւեալ խօսքերով յիշատակու — թիւնը կ'ընեն տօնիս .

« ... Յառաջագոյն կարծեալ սնուեացն պաշտաման՝ ի ժամա — նակի դիցն ամանորայ ամենաբեր նորոց պտղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի, գոր յառաջագոյն իսկ ի նսին տեղուջ պաշտէին՝ յուրախութեան Նալասարդ աւուր : (Աղաթանդեղոս, Պատմութիւն Հայոց : Վենետիկ 1862 — էջ 623) :

« Յորում պատմէ (Բարդեժան) ի մեհեանիցն պաշտամանց, վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ գգերեզման եղբօրն իւրոյ Մա — ժանայ քոնապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրեւանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի ի գոհիցն ամենայն անցաւորք վայելեացեն, եւ բնդունիցին հիւրք երեկօթիւք : Յորում եւ զկնի վա — դարչ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկզբան ամի նարոյ, ի մուտն Նալասարդի » : (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց : Վենետիկ 1843, էջ 146) :

Հեթանոս Հայաստանի ամէնէն մեծ ու ամէնէն ժողովրդական տօներէն մէկն էր Նաւասարդ 1ի տօնը^(*)։ Այդ օրը ժողովուրդը իր արտի հունձքէն, պարտէզի պտուղէն ու անասնոց ծնունդէն զոհա նուէր կը բերէր մայր հայրենիքի «լիութիւն պարարտութեան արին Արամազդայ» (Ազաթ. էջ 106) Հայաստանի «դիցահօրն» (անդ՝ էջ 590) ու մեծին Անահտայ, որ է «մայր... բարերար ամենայն մարդկան բնութեան» (անդ՝ էջ 51 — 52), «որով կեաց եւ զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց» (անդ՝ էջ 61)։ Իսկ ինքը՝ ժողովուրդն ալ միւս կողմանէ վայելակից կ'ըլլար «դիցն ամանորայ ամենաբեր նորոց պտղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի» զոհերուն։

Էմիլնեանի կարծիքով (Մկրտիչ Էմին, Հնախօսութիւնք ի վերայ հայկական հեթանոսութեանց. Թարգմ. Յովհ. Մկր. Տ. Կրտ. Տէրոյենց։ Արմաշ 1875, էջ 26) վեց օր կը տեւէր այս ժողովրդական տօնախմբութիւնը, որուն միջոցին բոլոր պանդուխտներն ու օտարականները Բաղաւանի մեհեանին շուրջը կ'իջեւանէին ու հոն թէ՛ դիչերելու օթեւան^(**) եւ թէ՛ միանգամայն կերակուր կը զտնէին։ Խորենացին կ'ըսէ. «Զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, եւ ընդունիցին հիւրք երեկօթիւք»։

Մեր կարծիքով շատ հաւանական է՝ թէ հայ թագաւորական տունն ու հայ ազատանին եւս իրենց ներկայութեամբը շուք ու փայլ կուտային համազդային այս մեծ տօնախմբութեան։

Արդ, հոս կրկին անգամ հարց կուտանք մենք մեզի. ունէի՞ն Հայերը նաւասարդեան այս տօնին առթիւ յատուկ խաղեր ու զբօսանքներ, որոնց կարելի ըլլայ մէկ բառով «Նաւասարդեան խաղեր» յորջորջումը տալ։— Ազաթանդեղոս ու Խորենացի, որոնք չափուած ու կշռուած վերոյիշեալ ճղճիմ բառերով հազիւ յիշատակութիւնը կ'ընեն Նաւասարդի կամ հայկական Ամանորայ եւ հունձքի տօնին՝ բնակա նաբար որ եւ է յիշատակութիւն ու ակնարկութիւն չեն ըներ նոյնին

(*) Թէ ի՛նչքան մեծ նշանակութիւն ունէր այդ տօնը հայ հեթանոսութեան շրջանին՝ անկէ՛ ալ յայտնի կ'ըլլայ որ, երբ յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ գայն ջնջելով անոր տեղը փոխանակեց Ս. Յովհաննէս Մկրտչի եւ Ս. Աթանազիոսի յիշատակը՝ կը գրէ պատմագիրը թէ. «Եւ գյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց տօն մեծ հոչակել» (Ագաթանգեղոս, անդ էջ 612), մոռցնել տալու համար նախկինը։

(**) Կամ՝ օթեվան. Արամազդայ «Վանատուր» յորջորջումին իմաստն ասկէ առնուած է. «Վանատուր»՝ կը նշանակէ վան կամ բնակարան տունը։ Տես՝ եւ Մանդակունի, հառ Ի։

տօնախմբութեան մանրամասն պարագաներուն եւ յատկապէս այդ առթիւ տեղի ունեցած խաղերուն եւ զբօսանքներուն մասին :

Թէեւ Ագաթանգեղոսի սա ասութիւնը . « Չոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան նաւասարդ առար », բաւա - կանապէս մատնանիչ կ'ընէ՝ թէ շատ մեծ ուրախութեան ու ցնծու - թեան տօն մըն էր նաւասարդի այդ տօնախմբութիւնը Հայ ժողո - վուրդին համար՝ սակայն անհնարին է ուրախութիւն այդ բառին մէջ ընդնշմարել այն մանրամասն պարագաները , որոնք այդ ուրախու - թիւնը կ'առթէին ու զայն յատաջ կը բերէին : Որո՞նք էին այդ ուրա - խութեան ազգականները : Արդեօք Ամանորայ եւ հունձքի աստուածոց մատուցուած յաշտերն ու այդ առթիւ տեղի ունեցած պէս պէսնուիրա - կան արարողութիւններն էին անոնք : Թէ հայ քաջերու ըմբշամար - տութիւնները , սրախաղերը , ճիարչաւները , նետընկիցութիւններն ու խմբական սրսորդութիւնները : Արդեօք ճարտար լարախաղացներուն ու ձեռնածուներուն հմայիչ խաղե՞րը՝ թէ հայ գուսաններուն ու երա - ժիշտներուն բեմադրած նուագահանդէսները : Կամ թէ նոյն ինքն հայ ժողովուրդին յատուկ տօնական երգե՞րը , դոյզդոյն պարե՞րն ու խա - դե՞րը : Կամ թերեւս այս ամէնուն համադրութիւնն ու զուամ՞րը :— Չենք դիտեր : Ու հայ հնագոյն պատմադիրներն ու մատենագիրները լրած են այս մասին : Յետագայ անմիջական դարերն ալ , որչափ դի - տենք , այդ մասին չունին կարեւոր ակնարկութիւն մը :

Շատ ուշ , ԺԱ . դարուն է որ կը դառնուի հայ ուսումնասէր մատե - նագիր մը , որ ուշ կը դարձնէ իր ժամանակի ժողովուրդին բերնին մէջ շեռ եւս երգուած հին հայ նաւասարդեան տօնական երգերու պա - տառիկի մը , ու կը փութայ գուրգուրտ խնամքով մը դրի առնուլ ու իբրեւ թանկագին ազգային աւանդ՝ զայն յետագայ հայ սերունդնե - րուն փոխանցել : Իսկական պատառիկ մըն է այն , երգի , անգին ու գողարիկ՝ սսկեղենիկ բարբառով ու արուեստով յօրինուած : Անոր վերջին երկու տողերը միայն կասկածելի կը մնան՝ թէ՛ իրենց բո - վանդակութեան եւ թէ՛ , մանաւանդ յեղուին տեսակէտով :

Գրիգոր Մագիստրոս (— 1058), որուն կը պարտինք նաւասարդ - եան տօնի մասին այդ միակ փոքրիկ բանաստեղծական գոհարը՝ իր նամակներուն մէջ կը գրէ՝ (Կ . Կոստանեանց , Գրիգոր Մագիստրոսի թղթերը : Ալեքսանդրապօլ 1910 , էջ 87) թէ ինքն անձամբ լրած է ա - սոր հայ ժողովուրդին բերնին մէջ տակաւին երգուիլը :

Շատերուն ծանօթ է արդէն այդ երգը , բայց մենք անգամ մը եւս յառաջ պիտի բերենք հոս՝ ցոյց տալու համար անոր մէջ ակնարկուած հին հայ նաւասարդեան տօնի զբօսանքներէն կամ խաղերէն գոնէ մէկ հատը :

Ահա այդ երգը .

« Ո՛ր տայր ինձ գծուխ ծխանի
Եւ գառաւօտն Նաւասարդի ,
Զվագելն եղանց եւ զվագելն եղջերուաց .
(Մեք փող հարուստ եւ թմբկի հարկանէստ ,
Որպէս օրէն է թագաւորաց) (***) :

Նաւասարդեան տօնախմբութեան նուիրուած բանաստեղծութիւններէն ահա այն միակ երգը , որ մեր ձեռքն հասած է եւ այն՝ ինչպէս ըսինք՝ տասնութհերորդ դարու քրիստոնեայ հայ ժողովուրդի բերնէն դրի առնուած ու աւանդուած : Տասնութհերորդ դարու հայ ժողովուրդը դեռ անմոռաց սլահած էր զայդ ու կ'երգէր՝ թերեւս ցանկալի վերապրում մը ունենալու համար ա՛յն բերկրալի ուրախութենէն , զոր վայելած էին իրեն հին հայրերն ու նախնիքները «Նաւասարդի առաւօտը» , կամ «յուրախութեան Նաւասարդ աւուր» :

Ո՞վ է այս սիրուն երգին հեղինակը : Ե՞րբ յօրինուած ու երգուած է ան : — Եթէ հայ ժողովրդական աւանդութեան հարցնենք՝ ան կ'ըսէ թէ մեր Արտաշէս Պարթեւ թագաւորն երգած է զայդ : Չենք դիտեր թէ ի՛նչ արժէք կը ներկայացնէ ժողովրդական այս բերանացի աւանդութիւնը . սակայն կը թուի թէ ատոր իսկական հեղինակը՝ ո՛չ թէ մեր հեթանոսական շրջանի , այլ մեր քրիստոնէական շրջանի առաջին դարու կամ դարերու մտայլին մէջ դեռ երկար ատեն անձանօթ պիտի մնայ : Անոր ընթերցումէն մենք այն տպաւորութիւնը կը ստանանք՝ թէ անոր հեղինակը խոր վիշտ ու ցաւ մը ունի նախկին հեթանոս տօնին ու ուրախութեան կորուստին սլատճառաւ : Սեւ թախիծով մը հին Նաւասարդին կորուստը կ'ողբայ , դայն կ'երագէ ու անոր կարօտովը կ'այրի : Չափազանցութիւն չըլլար , հետեւաբար , երբ ըսենք թէ անոր երգիչը՝ չորրորդ կամ հինգերորդ դարու դեռ սրտով ու հոգիով հեթանոս մնացած հայ բանաստեղծ մը ըլլալու է :

Ինչ որ ալ ըլլայ խնդիրը՝ ա՛յն մեղի համար կարեւոր է սակայն՝ որ այդ երգին մէջ յայտնապէս մատնանիչ կ'ըլլայ թէ Նաւասարդի տօնին առթիւ որսորդութիւն տեղի կ'ունենար : «Զվագելն եղանց եւ զվագելն եղջերուաց» : Եւ այն՝ մասնաւորապէս խմբական որսորդութիւն է հող յիշատակուածը : Վասն զի որքան ալ երգին վերջին մասը կասկածելի ըլլայ (***) սակայն ամբողջովին , այսինքն՝

(***) Կ. Կոստանեանց , անդ :

(****) Հ. Յովսէփ վ. Գաթրբեան (Պատմութիւն մատենագրութեան Հայոց . Վիէննա 1851 , էջ 40) յառաջ բերած է երգս՝ դուրս թողլով անոր վերջին տողը («Որպէս օրէն է թագաւորաց») : Իսկ

« Զվագելն » էն սկսած մինչեւ « թագաւորաց » ին սլարդ իմաստը — նոյնիսկ վերջին մասը նկատի չառնելով ալ — յայտնապէս խմբական ու բազմութեամբ կատարուած որսորդութիւն կը մատնանշէ (*****) : Հետեւաբար այսչափը գոնէ ստուգապէս կրնանք ըսել՝ թէ մեր Նա — ւասարդի կամ հին Ամանորայ տօնին առթիւ իբրեւ զբօսանք կամ խաղ՝ որսորդութիւն եւ յատկապէս խմբական որսորդութիւն տեղի կ'ունենար :

Ի հարկէ, տարակոյս չունինք թէ բացի որսորդութենէն՝ ուրիշ դանազան խաղեր ու զուարճութիւններ ալ տեղի կ'ունենային տօնա — կան այդ մէկէ աւելի օրերու ուրախութեանց ատեն, սակայն դժբախ — տութիւնն այն է՝ որ այդ մասին չունինք յիշատակութիւն հնութե — նէն : Հաւանականութենէ զուրկ չէ, օրինակ, ենթադրել թէ Հայկա — կան Նաւասարդեան տօնին առթիւ Ելլադայի հին ողիմպիական խա — դերն եւս կը խաղացուէին մերիններուն կողմէ, ուր քաջերն ու յաղ — թականները դափնիներու բրաբիոններ կը խլէին : Այս մասին սակայն մակարեքութիւններ լսկ կարող ենք ընել, չունենալով ի ձեռին որ եւ է փաստացի վկայութիւն :

Աւելի հաւանականօրէն կրնանք ընդունիլ թէ նորագոյն հայ ժողովուրդի ամառնային տօներու (օրինակ՝ Վարդավառի) առթիւ ասկէ դեռ մինչեւ 20 տարի առաջ Հայաստանի դանազան դաւառներուն մէջ տեղի ունեցած խաղերէն գօտեմարտը կամ ըմբշամարտը (կիւլէշ), մականախաղը, ձիարշարը, ցլամարտը (մանաւանդ գումշամարտն) ու դեռ կարգ մը նմանները՝ մնացորդներ են հին Նաւասարդեան խա — դերուն :

Այս հարցը կարօտ է տակաւին խորագոյն ու մանրամասն ուսում — նասիրութեան մը :

Պլովդիւ

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

վերջընթեր տողին («Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք») հա — մար կ'ըսէ. «Վերջի տողին գոնէ անարատ մնացած ըլլալուն երաշխա — ւոր կենայ չենք կրնար» : (Ծանօթ. 3) :

(*****) Որսորդութիւնը հին Հայերու շատ սիրելի մէկ զբօսանքն էր. մասնաւորապէս թագաւորներն ու իշխանները յաճախ կը կատա — րէին գայն մեծ բազմութեամբ ու հանդէսով : Ունէին նաեւ յատուկ որսորդութեան վայրեր : Ոչ միայն իբր զբօսանք, այլեւ իբր զինու — րական կրթութիւն, նետաձգութեան ու զինաշարժութեան վարժու — քիւն կ'ընէին գայն :

ԽԱՂՆ ՈՒ ՄԱՐԶԱՆՔԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ



ՔԻՉ ՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ

«Այլ երբեմն՝ի մականական խաղուն երկիցս պատահեաց
Շաւասպայ Արծրունւոյ՝ զգնդակն հանել ի Շապհոյ...»:
Խորեն. Գ. ԾԵ.

«... զ՛նուագս ուրախութեան, երգս արբեցութեան, կարգս
երաժշտական, եւ զ՛երգս հեթանոսական...»:
Եղիշէ, Յղնկ. Դ.

«Ո՛ւ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի ,
գվագելն եղանց եւ գվագելն եղջերուաց, մեք փող հարուաք
եւ թմբկի հարկանէաք...»:
Գր. Մղսար. 44

«... Աշխարհական գրոյց եւ հանելուկ, բուհապ եւ աւաջ,
յիշոցք եւ այլ բանք ...: Մանկունք յորժամ տեսանեն ...
թէ գիտարխնուկն կամ գայլ ինչ ի խաղալկացն առնուցու ոք...»:
Բրսղ. Մշկւրցի. Մեկն. Մրկսի 68 -468

« ... Թատերք, հտպխտ, երկպաշտէ, ծաղրածու, շաղա-
կրատ, գուսան, կաքաւ, պար, պարառաջ...»:
Ոսկերերան, Մնդկնի. Եւն.:

Հին Հայը գիտէ՞ր խաղալ եւ զբօսնուլ, մարդուիլ ու մարդել իր
զաւակները: -- Դարերու երեսին՝ հարցում մը ...

Եթէ գիտէր՝ ի՞նչ խաղեր ծանօթ էին իրեն: Ի՞նչ զբօսներ ու ժա-
մանցի նիւթեր ունեցեր է դարէ ի դար: Ի՞նչ կարգ ու կանոնով գիտ-
ցած է մարդել իր ջլապինդ աւեղամները: Հայկական, Արմենական ,
Ուրարտական, Խալդեան կամ Հիթիթ անուններով՝ դարերու խո՛ր
կնիքով ծանօթ այն հայ բազուկ ու սրունքները՝ որ գիտցած են նե-
տաւառ տապալ - տուպուլ ընել Բէլեր, նիզակ ցցել Պոնտոսի արաս-
տոյ քարարձաններուն մէջ, Նիւքարներ դամառկախ ձօճել բերդին
ճակատը, մէկ հարուածով սրակտուր ընել հսկան ու իր ձին, ոտնա-
թռիկ՝ Եփրատի մէկ ափէն միւսը ցատկել, ամեհի ձիերէ թոցուած
կառքին ետեւէն հասնիլ ու բռնել - կեցնել, փիղեր սրակոտոր բե-
րել, պողպատէ զնդակը նետել՝ թշնամու տուն ու տեղը փոշիին տալ
փշրտել, եւ ... «կռապաշտի անօրէն թագաւորը բռնել՝ քառսուն
կանգուն ամբոնաչոր գետինը ներս զարնել...», -- պատմական արագ
հպանցումով մը՝ Հայկէն մինչեւ Արամ, Արշակ Ա. Վարազդատ, Տր-

դատ, Վարդան ու Վահան եւ Մուշեղ, մինչեւ Սանասար ու Դաւիթ - Մհէր ...

Առանց խաղ ու մարզանքի՝ այս եւ իրենց նման բազմաթիւ հայ քաջեր՝ կրնայի՞ն ի հանդէս գալ ազգային ու միջազգային կրկէս - ներուն վրայ, ու յաղթականի դափնիներ խլել:

Դարերու երկար շարանով մը եւ քաղաքական ու ազգային ան - կախ ու հզօր կեանքով մը ապրող, եւ մտացի, դեղարուեստագէտ, ստեղծագործ մեծ ազգ մը՝ ինչպէս եղած է Հայ Ազգը, -- կրնա՞յ ապ - րած ըլլալ առանց մարզական կեանքի: Այն պետական ազգը, որ դա - րեր շարունակ մարտնչած է հարաւէն ու հիւսիսէն, արեւելքէն ու ար - եւմուտքէն իր վրայ խուժող անարկու բանակներու դէմ, --- ասո - րական, բարելական, պարթեւական, սկիւթական, պարսկական, մակեդոնական, յունական, արարական, թաթարական ու թրքա - կան ...

Այն ազգը --- Հայկազուն Արմենական -- որուն գեղածիծաղ բը - նութեան ծոցին մէջ՝ ամէն տարի՝ ամբան արեւներուն սարքուած Նաւասարդեան Ամառորի աշխարհախումբ հանդէսը՝ ինքնին փառա - ւոր գրաւական մըն է իր ցեղային ազնուական մարդումներուն: Մար - ղումներ՝ որ ձեւաւորուած կազմակերպուած են ի հարկէ ժամանա - կին պահանջներուն, ըմբռնումներուն եւ արուեստներուն համաձայն: Մարդումներ -- ինչպէս արդի դարու մեծ ու փոքր ազգերուն մէջ -- որոնց մասին մանրամասնութիւններ չեն հասած մեզի զժբախտա - բար:

Որոնց մասին մեր հին մատենագիրները թէ լուս են թէ կը հա - նեն կը ցուցադրեն պերճախօս երկրաւեր, ինչպէս քիչ վերը կը տես - նենք մէկ քանի հատուածներու մէջ, -- ամլյափոյ յիշուած այս ու այն պատմիչ - մեկնիչներէն:

Մեզի հասածները մեծ թիւ մը չեն կազմեր տարաբախտաբար: Հասածներուն մէջ՝ մանրամասնութիւններ բնական է որ տրուած չէին կրնար ըլլալ, կրօնական նախապաշարումներու բերումով, կամ խաղն ու դրօսը արհամարհանքի սկիսողով դիտուած ըլլալով: Իսկ անդարմանելի պատճառը մանաւանդ՝ մեր աշխարհի գլխին ե - կած դարաւոր հալածանքներուն, հրդեհներուն, կողոպուտին զոհ դացեր են անթիւ ձեռագիր - զրչագիրներ, որոնց մէջ հաւանաբար կային նաեւ մարմնակրթանքի եւ խաղ ու դրօսի վերաբերեալ գըր - ուածքներ:

Սակայն մեզի հասած սակաւաթիւ նշխարներն ալ բաւական պեր - ճախօս են՝ հին Հայուն կողմէ դործադրուած բազմապիսի խաղե - րուն տեսակին ու որակին ի նպատակ, -- Հայուն ծանօթ՝ ընդարձակ

խաղաշխարհի մը, մարմնական, ձայնական եւ իմացական երրեակ բեմերով :

Ահա Խորենացին, Եղիշէն, Մագիստրոսը, Մաշկեւորցին, Ոսկերեանը, Մանդակունին, -- եւ եթէ մարդական ակնոցով քննենք՝ ապահովաբար նաեւ միւս մատենագիրներուն քով (Ազաթանգեղոս, Փաւստոս, Փարպեցի, Թովմա Արծրունի, Դաւրիթեցի եւն . եւն .) պիտի գտնենք բազում ակնարկներ կամ բառեր՝ հին Հայաստանի մարդական կեանքին շուրջը :

«Հին Հայը գիտէր ուրախանալ, եւ իրաւունք ունէր ուրախ ըլլալու : Երկու երեք հազար տարիներու հնութեան մը մէջ, հոն, Նպատի ստորոտը, Զիրաւի դաշտին մէջ, Դիցաւանի առջեւ, Հայաստանի բոլոր ծագերէն թափուած բիւրաւոր բազմութիւնը կը տօնէր տօն աշխարհախումբ, պաշտելով Վանատուր Դիքը՝ ի մուտն Նաւասարդի :

«Արքայ եւ Դշխոյ, քուրմ եւ քրմանուշ, նախարար եւ տիկին, սեպուհ եւ դրանիկ, զօրք եւ զօրական, արհեստաւոր, շինական եւ ծառայ, -- ամբողջ Հայաշխարհը խոնուած էր այդ օրը՝ հոն՝ ուրախանալու, խաղալ - երգելու, մարդելու իր մարմինն ու միտքը :

«Ուժեղ էին անոնք, մեր պապերը, այդ հուժկու Արմէնները : Եւ ինչպէ՛ս գիտէին զուարճանալ : — Ըմբիշներու մրցում, ձիարշաւ, մականախաղ (javelot), վազք եւ քանի - քանի խաղեր՝ կը ծառայէին անոնց մարմինն ուժովցնելու եւ գեղեցկացնելու :

«Այդ աշխարհախումբ բազմութեան առջեւ՝ հին Արմէնը իր բազուկներուն եւ սրունքներուն ուժը, ճկունութիւնն ու ճարպիկութիւնը կուզար ցուցադրելու եւ դափնիներ խլելու :

«Գուսաններ՝ բամբիռներու նուագով՝ պատկառոտ այդ բազմութեան առջեւ կուգային՝ երգելով վերյիշելու իրենց մեծ ու քաջ նախնիքներուն յիշատակի արժանի գործերը, — թէ ի՛նչպէս ծնաւ Վիշապաքաղն Վահագն կրակէն ու ջուրէն . . . , Երկնէր երկին եւ երկիր . . . թէ ինչպէս Հայկ՝ քաջազանգուր, խայտակն ու կարշնեղ՝ արդարակորով ու սրտոտ՝ պրկեց իր աղեղը, սլաքեց՝ դիտապաստ գետին փռեց բռնակալ Բէլը, ու հիմը դրաւ Հայ Հայրենիքին» :

Նաւասարդեան աշխարհախումբ տօնին խաղցած խաղերն ու մարդական մրցումները, -- Հայկական Ողիմպիականները --- թիւով, տեսակով ու որակով ետ չէին մնար անկասկած՝ ժամանակակից միւս ազգերու խաղերէն, մրցում ու մարզանքներէն կամ երգասացքներէն, -- «Թուելեաց Երգք»՝ ըստ պատմահայր Խորենացիին :

Ահա բառեր՝ մարմնական, ձայնական եւ իմացական զրօսներու, -- յայտարար կորիզ՝ ծառին տեսակն ու աճը ցուցնող . . .

-- Մականական խաղ, գնդակ, աղեղ ու կապարն, խարխուկ, եղանց ետեւէ վագֆ, եղջերուաց վագելը, կաք, կաքաւ, պար, պա -

բառաջ, ձիարշառ ու գօտեմարտ, ցլամարտ ու ցուպանխաղ, *եւն. եւն.* մարմնական ձեւի խաղեր ու մրցումներ :

-- Թուելեաց երգի, նուագս ուրախութեան, երգս ու կարգս երաժշտական, երգ հեթանոսական, փող, թմբուկ, աւազ, գողթանի երգեր, *եւն. եւն.* --- ձայնականին ու հողեկանին համար :

-- Զրոյց եւ հանելուկ, թատերիք, շաղակրատ, գուսան, խեղկատակ, երկպաշտէ, հուպիտ, ծաղրածու *եւն. եւն.* — խմացական զըլարթ ժամանցներու յայտարար :

«Ահա շարք մը իրողութիւններ՝ որոնք շատ բան կը խօսին դիտող եւ ուսումնասիրող աչքերու : Որք ի վեր կը հանեն կարեւորութիւնը՝ Հայկական Սաղաշխարհին՝ ընդհանրապէս Հայ Ազգազրութեան տեսակէտով, եւ մասնաւորապէս դպրոցական ու առտնին դաստիարակութեան կամ նոր սերունդին առողջ կազմաւորման տեսակէտով» :

ԱՆԳԻՐԸ՝ ԳՐԱԽՈՐԻՆ ՊԱԿԱՍԸ ԿԸ ԼՐԱՑՆԷ

Եթէ գիրք մեծ մասով մեռած է ու մեղի չէ հասած դարերու աւերումներէն յետոյ, -- խօսքը կենդանի է մնացեր սակայն : Բերանն աւանդած է այն՝ ինչ որ դրիչն ու թուղթը չեն կրցած : Ժողովրդի խօսուն բարբառը, ամէնօրեայ ընտանեկան լեզուն՝ իբր մշտական ձայնազիր՝ անաղարտ պահեր ու սերունդէ սերունդ մինչեւ մեզի հասցուցեր է հին դարերու հայեցի աւանդը : Կրակէն չազատածը՝ լեզուն պահեր ու ձայնի ալիքներովը մեզի բերեր է, -- հայ աւանդապահ մամիկին բերնին մէջ, պապիկին ու թոռնիկին, մայրիկին ու քոյրիկին, հայրիկին ու աղբարիկին տաքչունչ հայեցի բերաններուն մէջ :

Մաղաղաթը հուրի ձարակ կամ խոնաւութեան կեր է դացեր, իսկ ականջին բարակ թմբկաթաղանթը անկէզ, լեզունն անչոր ու անփուտ կաշին անմահ մնացեր ու մեղ թրթռացուցեր են, երկար դարերու մշուշներէն, -- բիւրաւոր բառեր, խօսքեր, խաղեր, ձայներ, երգեր, դիծեր, երանգներ -- ամբողջութիւն մը՝ ազգազրական հարուստ դանձերու : Այնպէս ալ հայ խաղաշխարհի մարդին մէջ :

Ի՞ՆՉ ԽԱՂԵՐ ՈՒՆԻՆՔ

Ժամանակին ըմբռնումներուն եւ տարիքի ու սեռի համեմատ ստեղծուած են տարբեր խաղեր եւ մարդանքներ :

Աչքի առջեւ ունենալով հայ անզիր աղբիւրներէ քաղած մեր ազգային հարուստ խաղացանկը, եւ նկատի առնելով անոնց ամէն մէկի խաղաձեւը՝ կրնանք բաժնել զանոնք հետեւեալ խմբաւորումներու ...

Խոչոր գիծերու մէջ, նախ, խաղերը կը ներկայանան երկու ձե-
ւով. -- Սենեակի Խաղեր կամ Նըստխաղեր, եւ Բացօթեայ Խաղեր
կամ Վաղխաղեր:

Երկրորդ ստորաբաժանումով մը՝ կ'որոշուին Մանկական Խա-
ղեր, Մանկապատանեկան Խաղեր եւ Պատանեկան խաղեր:

Պարերը, որոնք երգով խաղեր ու մարզանքներ են -- կրնայ ըս-
ուիլ --, կը կադմեն առանձին խումբ մը եւ նոյնքան հարուստ են՝
որքան բուն խաղերն ու մարզանքները՝ իրենց երբեակ բաժանում
ներովը:

Բուն խաղերը կը խաղցուին առաւելագէտ խմբովի, քիչ ան-
դամ միմալ: Որով կրնայինք որոշել Խմբախաղեր եւ Մենախաղեր:

Օրինակներով աւելի հասկնալի ըլլար թերեւս. --

Նըստախաղեր են, եւ բնակարանի մէջ կամ տունէն դուրս մար-
գերու վրայ նստած կը խաղցուին՝ Մուտ - Մուտ, Զուխտ - Կըտ, Քա-
րուկ, Մնջոցիկ, Զաղաց - Զաղաց, Պարուն - Գգիր, Դալար - Թաթիկ,
Գէլ - Գառ, Տող եւն. անուններով խաղեր:

Վաղխաղեր են եւ բաց դաշտի կամ դպրոցական խաղավայրերու
մէջ վազվրգելով կը խաղցուին՝ Գերի, Կրակ - տարուկ, Աւելոցիկ,
Դդէգ, Տուշիէտ, Սանդ, Հոլոցիկ, Սարգա, Սեր-Մածուն, Զիանթրոց,
Կորոց, Դմակտարոցիկ, Խըռ, եւն. անուններով մարզախաղեր:

Մանկական խաղեր են՝ Ալնիս - Բալնիս, ձիկ - Բօ, Գարէխուրձ,
Կծուպանիր, Կուկուզ պառաւ, Զձում - Կարագ, ձըվի - ձըվի, Ուլի-
Ուլի, Պուպու, Փըշի - Փըշի, եւն. բառակադմութեամբ անգամ ման-
կական: Անոնք կադմուած են՝ լեզուի մէջ ծանօթ նախնական ձեւերով.
-- վանկերու կրկնութիւններով, եւ կը խաղցուին պարզ, անսեթեւեթ,
կարճ - կտրուկ, առանց ձանձրոյթ առթելու դեռամիտ մանուկին:

Մանկապատեմական ու Պատանեկան խաղերը՝ տարիքի առաջաց -
ման եւ կադմին ուժեղացման համընթաց՝ աւելի բարդ ձեւեր ունին,
եւ դնդերի ու միտքի որոշ հասունութիւն կը պահանջեն:

Այսպէս են՝ Ակնավոտիկ, Աչկապուկ, Գոդ - փաշա, Ինամասիկ,
Խըռ, Կըռչ - կըռչ, Կօկօջ, Քարուկ, Պուտ, Տուշիէտ, Գմբէթախաղ,
Կորոց, Սանդ, Ճմուռ, Պաղնիս - էշ, եւն. եւն.:

Աւելի խորանալով՝ կը գտնենք առաւել հարուստ երակներ ու ե-
րանդներ՝ հայ բնիկ խաղերուն մէջ: Կը դասաւորենք զանոնք՝ եւ կ'ու-
նենանք հետեւեալ պատկառելի ու նախանձելի պատկերը. --

1. Նմանախաղեր, Արհեստախաղեր, թիւով 30:
2. Առարկայական Խաղեր, թիւով 30:
3. Անդամախաղեր, Մարմնախաղեր, թիւով 18:
4. Երգախաղեր, Խաղադասքներ, թիւով 50:
5. Ծաղրական Խաղեր, թիւով 27:

6. Դաւխաղեր, Փորձախաղեր, թիւով 15:
7. Ճատրակախաղեր, թիւով 5:
8. Գրաւախաղեր, թիւով 10:
9. Արարողական խաղեր, թիւով 10:
10. Աւանդաչունչ խաղեր, թիւով 10:
11. Մրցախաղեր, թիւով 5:
12. Քաղաքացիական - Վարչական խաղեր, թիւով 3-4:
13. Ռազմախաղեր, թիւով 7 - 8:
14. Մարզախաղեր (sport), թիւով 20:

Ընդամէնը երկուքուկէս հարիւրեակ մը մեծ ու փոքր այս խաղերէն՝ առանձնապէս աչքի կը զարնեն՝ մաս մը բոլորովին ինքնատիպ հայկական խաղեր, որոնցմէ ուրիշ ազգերը չունին (որչափ ինձ ծանօթ է՝ կատարած մէկ բաղդատական ուսումնասիրութենէս), եւ մաս մը՝ համաշխարհային խաղեր:

Այս բոլոր տեսակի երկար թէ կարճ խաղերու մանրակրկիտ նկարագրութենէն, ինչպէս նաեւ համապատասխանն ունեցող ուրիշ ազգերու խաղերուն հետ բաղդատութենէն՝ երեւան կուգայ համադրապէս մեր ազգային բնիկ խաղերուն բարձր արժէքը՝ ազգային կեանքի տեսակէտով... Մերինները թէ՛ աւելի ճոխ են, թէ՛ աւելի մտացի, թէ՛ գերազանցապէս ոգեւոր, կենսունակ, խայտուն ինչպէս մեր չնաչխարհիկ հայրենիքը՝ պճնուած բնութեան հազար բարիքներով... ծառ, ծաղիկ, մարգ, դար - դալար, լեռ ու ձիւնափառ սնար. ակ - ակնաղբիւր, գետ, լիճ ու ծովակ. հաւ ու ճիւղ, երկնից թռչուն ու գետնի սողուն. պճեղ ու սմբակ ունեցող անասուն:

ԽԱՂԵՐՈՒՆ ՔԵՐՍԿԱՆՆ ՈՒ ՇՆՈՐՀՆԵՐԸ

Օգտակար է մօտենալ ու ծանօթանալ մեր խաղերուն քերականական բառակազմական օրէնքներուն՝ որ այնքան պարզ են ինչպէս առաջին դասարանի բերականը: Ճանչնալ թէ ի՞նչպէս կազմուած են. ի՞նչ նպատակը կրնան ընձեռել հայ գրականութեան. ի՞նչպէս պէտք է օգտուիլ անոնց անտաշ, աղաւաղ կամ մշուշոտ կազմուածքէն՝ մանկավարժական եւ մարմնակրթական կրկնակ տեսակէտով:

Խմբաւորելով՝ կը տեսնենք որ մեր խաղերուն անուններն անգամ՝ մեծ մասով՝ ունին հայեցի դրոշմ, լեզուական արժէք եւ բերականական «անգիր» կանոն:

Մեր խաղանուններուն մեծ մասը կազմուած են ոց կամ ոցիկ ածանցով: Ինչպէս՝ կրակտարոց՝ կրակ տանելու խաղ. Զիանթրոց՝ ձի վազցնելու խաղ. Տղկոցիկ՝ տղկելու, թրջելու խաղ. Եռոցիկ՝ եռելու, գիծի մէջ առնելով խաղալու խաղ. Մնջոցիկ՝ մունջ մնալու, լռութիւն պահելու խաղ. Ծնոցիկ՝ ծնեցնելու խաղ. Գլորոցիկ՝ գնդակ

գլորելու խաղ. Պահճըլոցիկ՝ պահուլտուքի խաղ. Աւելոցիկ՝ աւել թոցնելու խաղ, եւն. եւն.:

Մաս մը խաղեր յօրինուած են իկ մասնիկով, ինչպէս՝ Ակնատտիկ՝ Ինամասիկ, Իլմփիկ - Իլմփիկ, Ճըվիկ - Ճըվիկ, Ճըլփոցիկ, Ֆըռֆոիկ, եւն.:

Ուրիշ խումբ մը՝ ուկ ածանցը կը կրեն, -- Ականջքաշուկ, Աչքա - կապուկ, Խրքատարուկ, Մնտուկ - Պնտուկ, Քարուկ, եւն.:

Կանխները՝ խաղ բառով բարդուած են, — Ճոպանխաղ, Զիախաղ, Ճանխաղ, Գմբէթխաղ, Վրճկախաղ, Պնդկախաղ, եւն.:

Օտար եկամուտ խաղեր եւ խաղանուններ ալ, որոնք պակաս չեն հայեցի խաղերու կարգին, բնական հետեւանքն են՝ նախ մեր ազգային քաղաքական դարաւոր դժբախտութիւններուն, եւ ապա՝ միջազգային շփումներուն, որոնք մանաւանդ խաղաշխարհի բեմին վրայ աւելի կը դիւրանան:

— «Միջազգային քաղաքակրթութեան մէջ ոչինչ այնքան շուտ կը փոխանցուի, այնքան արագ առաջ կ'երթայ ու սահմանները կը գլխի՛նցնի՝ որքան խաղը:

«Եւ բնական է որ մեր խաղաշխարհի ընդարձակ բեմին վրայ խաղցուած հնիկ - մնիկ խաղերն ալ փոխանցում տուած - առած ըլլան՝ դարերու դրացնութեամբ ապրած չըջարնակ մեծ ու փոքր ազգերուն հետ»:

Մեր բնիկ հայեցի կամ հայացած խաղերուն ընձեռելիք օղո՞ւտը, -- արդեօք տարակոյս կը վերցնէ՞: Մեր դրաւոր բարբառին մէջ՝ խաղարարի մթերքը այնքա՛ն աղքատ է որ՝ օտար լեզուներէ հայերէնի բառերը պատրաստողները ստիպուած են կամ զանց ընել բառը, կամ «խաղ ինչ», «խաղի մը անուն» եւն. ըսելով անցնիլ, եւ կամ մըտածին նոր բառեր — յաճախ խորթ ու սխալ դարբնել, յարմարցնել՝ իբր համազօր օտար բառին:

Մեր մանկապարտէզները, երէկ եւ այսօր, կը ծիւրեն մեր մանուկները՝ մայրենի նիւթերէ զուրկ, փոխառիկ ու անմարս երգերով, խաղերով ու բառերով, ձեւերով ու մարդանքներով: Մինչդեռ անսպա՛ռ նիւթ կայ մեր խաղերուն ու դրօսներուն մէջ. անհո՛ւն ստաղձ, կայ մեր հայեցի խաղերուն ծոցը. — Մօր մը հարազատ կաթին պէս քաղցր, համով հոտով՝ նիւթ ու հիւթ կայ մեր հարուստ երգախաղերուն մէջ:

Ամբողջ - ամբողջ մէկ շարթուան ընթացքին, գիշերները մէկ - երկու ժամ աշխատելով՝ յաւէտ ողբացեալ Կոմիտաս Վարդապետի հետ, Պոլիս 1914ին, մշակեցինք ու պատրաստեցինք երեսունէն աւելի Մանկապարտէզի յատուկ հայեցի նիւթեր, միաձայն, երկձայն ու բազմաձայն երգի եղանակներով, դերերու բաժանումներով (դժբախտարար դեռ անտիպ):

Այժմ հետեւինք վերի ցանկին եւ տանք խաղերէն իւրաքանչիւ -
րին հակիրճ դիմագիծերը :

1. ՆՄԱՆԱԽԱՂԵՐ , ԱՐ ՀԵՍՏԱԽԱՂԵՐ

Անցնելով բուն խաղերու տեսակներուն , կարգով , պարզէն դէպի
բարդ , ինչպէս է խաղի աշխարհին մէջ ,-- կը տեսնենք՝ խաղակ - մա-
նուկին կամ պատանիին քով՝ նմանցնելու , արհեստելու ձեւեր , հետեւ-
եալ խաղերուն եւ նմաններուն մէջ .--

Գարեխուրձ , գարիի կամ ցորենի խուրձի մը կը նմանի տղեկը՝
երբ դրկած կը նետես ուսիդ վրայ :

Դմակ - տարոցիկ՝ դմակով ոչխարի եւ ոչխարին կլորիկ բրդոտ
դմակը դարնել - թուցնելու նմանանքով :

Կաթսայ , Ադաման , Կրկնոց , Ճննդուկ , (cocotte) , Նաւ , Շապիկ ,
Վարտիֆ , Փուֆս , թուղթէ խաղերն են մանուկին :

Կատուի Սանդուղ կը շինէ տղան՝ մատներն իրարու վրայ ոլորե-
լով :

Կերեփոցիկ խաղով՝ առտնին խոհակերութեան փորձեր կ'ընէ :

Կծու Պանիր (Jeu des quatre coins) կը ծախէ մէկը՝ միւսը շալակն
առած ու երթեւեկելով :

Կուկուլիկու խաղին մէջ՝ անհուն հրճուանքն ունի տղեկը՝ իբր
աքլոր կանչելով .--

-- Կո՛ւկուլի՛կո՛ւ , Սա՛նա՛մա՛յր ,

Մե՛գ հաւ մը կար՝ ո՞ւր գնաց . . . եւն . :

Ձի կամ Ձիանթրոց (Jeu du cheval) խաղով՝ հեծելութիւն կը կապ-
կէ խաղցողը :

Պառաւ - Խեղդոցիկն ուրիշ բան չէ՝ եթէ ոչ ջատու , դժնէ պա -
ռաւը զսպելու փորձ մը :

Պուպու՝ Յոպոպ թռչունն է , որուն սրտադրաւ կանչը ձեւացնել
կը ջանայ հայ տղեկը , իսկ աղջիկը՝ սանտր մըն ալ ծամերուն ինք-
նատիպ խաղերդի մը մէջ (*) —

-- Պո՛ւպո՛ւ .

= Քանի՞ հաց ես թըխեր .

— Ո՛ւթ , ո՛ւթ .

= Ո՞ւր ես դրեր .

--- Պո՛ւտո՛ւկ . . . եւն . եւն . :

Ջաղաց - Ջաղաց , մատները դէմ դէմի , ջաղացի գործող աչքե -

(*) Աւանդութիւնը կ'ըսէ որ Յոպոպ կամ Սանտրակատար թռ-
չունը՝ Յախապէս օրիորդ մը եղած է : 2.

ըստն պէս բացխփիկ, կ'երդեն դէմդիմաց՝ մէկը միւսին հեզնաբար . . .

-- Ջաղաց - ջաղաց՝ քեզ ո՞ր ջաղաց .

= Ինծի ա՛յս ջաղաց . . . եւն . եւն . :

Տաֆ - Պաղ կը խաղան՝ ջուրը տա՞ք է թէ պաղ հասկնալու հա -
մար : Ով որ երկար ականջ ունենալ ուզէ՝ թող խաղայ . . .

Աստղապոչը գիսաւոր աստղին նմանելու եւ ցոլաստղի պէս թե -
լաւոր քար մը օդն ի վեր սըլլացնելու խաղն է՝ ինքնատիպ ու բա -
նաստեղծական :

Արիեստ (Les Métiers mimés, les Musiciens) կը խաղան տղաք . կը
կեղծեն, կը ձեւակերպեն տնայնագործական ամէն արհեստ, — զուլ -
պայ կը հիւսեն . . . կար կը կարեն . . . բոք կը մանեն . . . բամպակ կը
դղեն . . . փայտ կը տաշեն . . . արտ կը հերկեն . . . բոլորը ձեռքի խա -
ղերով, դէմքի գիծերով :

Դրոդրոնիկ կամ Մեւ Դդէզ կը ձեւացնէ՝ նուրբ տախտակի լե -
զու մը թելով դարձդարձելով օդին մէջ :

Թելով կաղեր, կիզար, Գայլի - Բերան, Օրբոց, եւն . ձեւացնելը
եւ ձեւէ ձեւ շուտ շուտ փոխելը՝ դէմ - դէմի՝ մանուկը միայն գի -
տէ թէ ի՞նչ հաճոյք կուտայ իր մտքին :

Նաւի Պարան (La Toile tendue) ձեւացումն է խաղցողներուն ան -
ձովը կաղմուած եւ իրերանցիկ շղթայի, արարողական երգասաց -
քով մը դարձած ու պրկուած, հիւսուած . . .

Կրակտարուկ, Գերի, Արախչի - Տարոցիկ (les Barres)՝ մէյմէկ
ձեւակերպումներ են՝ կրակ տանելու, դերի վարելու, դղակ թռցնե -
լու :

Մուկ - Կատու (Le chat et le rat) խաղն է՝ բոլորակի մը ծակե -
րէն մուկին փախուստին ու կատուին հետապնդումին, -- մուկն ալ՝
կատուն ալ՝ խաղակներն իրենք ըլլալով :

Պուտ (Le Loup, le Berger et les Moutons) խաղը՝ մայրական ինքնա -
պաշտպանութեան եւ դաւակատիրութեան ու դորովին՝ սիրուն նա -
խափորձ մըն է :

Սեր - Մաժուն (Ricochet) խաղաղ ջրի երեսին՝ քարիկ մը կը սա -
հեցնես, թէ թրթռալով քերէ անցնի՝ սեր է, եթէ դպած տեղը ջրին
մէջ սուզի՝ մաժուն է . . . մակրդուած : Սաղ մը՝ զոր Փրանսացի նկարի -
չը անմահացուցեր է կտաւին վրայ :

Քարափոսիկ (Aqueduc, Monticul) ինչքա՞ն սիրելի խաղերէն մէկը՝
մանուկներուն թէ մեծերուն՝ երբ ամբան տաքին, ծառերուն շուքին,
մանր փոշի ունին ձեռքի տակ, ու երգելով շինեն քարի չափ ամուր
տնափոսիկը . . .

-- Քարափոսի՛կ, մագաբուսի՛կ . . . կամ՝

Քարափոսի՛կ ինձ մաա՛ա՛ա՛գ տո՛ո՛ո՛ւ՛ր . . .

Դիէզ ողեւոր խաղին մէջ՝ մեղր քաղելու եւ փեթակին մեղունե -
րուն դը՛ղղղ ... ձայնին ու խայթումներուն նմանախաղն է՝ զուար -
ճալի ինքնատիպ ձեւով :

Գիր - Գրոցիկը՝ հայ այբուբենին մարմնագրումն է . անդամնե -
րուն ծալծլումներովը՝ այբ, բեն, գիւմ, մինչեւ ֆէ գիրերուն ձեւերը
կազմելու փորձ :

Կալօ - Մրոօ, Հիւանդ - Աղբէր՝ ծոյլ եւ ժիր զոյգ մը երկրա -
զործ եղբայրներու պատկերը կը ծաղրանկարէ ---

-- Օ՛, Կալօ - Մրոօ՛, ել երթանք՝ վար - ցանք ընենք ...

= Ա՛խ ... Ես ... հիւա՛նդ ... Եմ ... չե՛մ կրնար ...

--- Վա՛խ, իմ եղբայրս հիւանդացե՛ր է ...

Հիւանդ ինկեր՝ ունեցւորք է՛ ...

Քիթն երկրնցեր՝ փորն անցե՛ր է ... եւն . եւն . :

Ի՛նչ սրամտութիւն, ի՛նչ հեղնանք ... Մոլիէոն անգամ կրնար
նախանձիլ :

-- Օ՛ Կալօ - Մրոօ, ե՛լ երթանք՝ կալը բաժնե՛նք ...

= Հա՛, ելնեմ երթանք՝ կէս ընենք ...

Ժիր եղբայրը հերկեր, ցաներ, ջրեր, քաղեր է : Բերքը բաժնե -
լու պահուն՝ ծոյլ եղբայրը ոտքի վրայ է հիմա, ցաւն ու չօռը շո -
գիացեր վեր ցնդեր են ...

Շնոցիկ (L'Ours Martin) իր որջին մէջ կապը վիղին (հոս ձեռ -
քին) պահապան շունի խաղձեւացումն է : Թաշկինակէ մտրակներով
վրան վազող եւ բոյնին աւանդները թռցնելու ճգնողները պիտի վա -
նէ կամ բռնէ ...

Քար - ֆոֆոիկ կամ Դվդըվիկ՝ ջաղցի քարին՝ յեսանի, կամ
բրուտի դուրգին նմանութիւնն է, կլորիկ յղկուած քարով մը եւ մի -
ջանցիկ թելով մը բացխփիկ ու թաւալական :

2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Թաշկինակէ Մուկ՝ կը ձեւացնեն կերպ - կերպ, կարգ - կարգ
ծալքերէ անցընելով թաշկինակ մը, պոչն ու աղանջները չմոռնա -
լով :

Թղթէ Խաղալիկներ (տե՛ս թիւ 1ի մէջ) :

Կշիռք, Կշոցիկ՝ խաղն է խանութպանի կշիռքին, իբր նիւթ ու -
նենալով ծառի կեղեւ կամ դդումի պատեան, ողորկ կլոր, տաշած ,
երեքական թելերով առկաի՝ մէտին երկու ծայրերէն :

Ճլըխթրիկ (Canonière) կը շինեն թուղթէ պարզ եւ ինքնախփիկ ,
կամ լիսեռնէ եւ կաշիէ ու ծառի տերեւէ : Երեք չորս անգամ աւելի
հարուստ խաղ մը՝ քան քոյր եւրոպականը :

Պլիկ՝ դրամ կտրելու խաղ՝ մանուկը կը փորձէ ստեպղինով : Ան-

ուածեւ կամ դրամածեւ կը որ - տափակ կը կտրէ, ու ձեւին կանոնաւորութենէն օգտուելով՝ նաեւ մանր, միջակ ու մեծ կը շարէ ստեպղին - ստակները՝ դեղին ու մոյզ:

Փոփոիկ (Շուրնչան, Toupie, le Toton), փայտէ փոփոիկ, ձախարակէ փոփոիկ, Թոթէ փոփոիկ եւ մանաւանդ ինքնատիպ հայկականը՝ Խնձորէ փոփոիկը այլի մէջ, ծաղիկներու բուրմունքին ու ծառերուն երդող շուքերուն տակ՝ սիրական առարկաներն են խաղասուն հայ մտացի խաղակներուն:

Արուղա (Ballon) փամփուշտ կը ձեւացնեն օճառի պղպղակներով, ցողի մը մէջէն փչելով, կամ ոչխարի փամփուշտը օղով ուռեցնելով:

Գլորոցիկ (Jeu de billes, la Tapette) հանրածանօթ խաղ մը, իբր նիւթ ունենալով ուլունք, կաղին, ընկոյզ եւ նման հատապտուղներ, կամ կը որ քարուկներ:

Ծալր (Jeu aux plumes) խաղ մը, նիւթով թէեւ նոր՝ բայց վէզին վրայէն պատուաստուած: Մետաղէ դրձածայրը վէզի ձեւով կը ձգեն դետին, եւ սալ կամ կոր կը խաղան, ինչպէս ճանր (վէզ): Միայն թէ ճանին փուկ եւ քափը հոս չկայ, այն պարզ պատճառով որ ճայրը երկու երես միայն ունի, իսկ ճանր չորս:

Ծնոցիկ, խաղանիւթը ճանն է (վէզ), որուն երեսներուն քուէովը պէտք է ծնեցնել - բերել՝ ի գլուխ հանել, յաջողցնել խաղը -- այսինքն երես ճաներն այ ձգել փուկ կամ քափ, սալ կամ կոռ (կոր):

Կօկօջ (La Godiche) ձեռնաքարով մը ու սակորով մը կը խաղան՝ բայց ու հարթ խաղալայրի մը վրայ, կամ ձմեռը՝ սառոյցի վրայ: Կօկօջը եւ տնկեն՝ յափիկով կը դարնեն՝ թոցնել կ'աշխատին:

Ճան (Les Osselets) ոչխարի կամ հորթի պճեղին, բայց մանաւանդ ոչխարին սակորն է, չորս երեսով՝ չորս անունով, -- փուկ, քափ, սալ, կոռ (կոր): Անով կը խաղան՝ Ծնոցիկ, Պաշ, Պարոն - Գղիք, Սարգա, Փոխրնդոցիկ խաղերը:

Ճոււնիկ (Les Osselets) խիստ բառն է՝ խի, խը սկզբնաձայնին անկումովը՝ խր - փոււնիկ դարձած ու նուագականի փոխուած: Կը խաղան անով Շատփարէն, Հինգփարէն եւ Հայտիկ ձեւերը: Խեցիի դրամածեւ յղկուած կտորներէն՝ 5, 10, 20, 100, 300 հատով՝ ձեռքի տակ պատրաստ՝ կը գործածեն շատ սիրուած խաղերէն մէկը եղող Ճոււնիկ կամ Քարուկ խաղին մէջ, առաւելապէս աղջիկ - խաղակները:

Եոնցիկ (La Balle empoisonnée), մաղէ գնդակի խաղ մը, բոլորակ գծի -- եռի մը մէջ՝ ներսը՝ եւ գիծին շուրջը դուրսը, խումբ կազմողներու ձեռքին մէջ, խաղին կանոնովը խաղալի:

Հոլ կամ Հոլոցիկ (Le Mail), աշխարհածանօթ խաղերէն մէկը՝

իրը նիւթ ունենալով ձուածեւ սսկոր մը, հայերէն Հարսընկուլ (rotule), քնքշիկ աւանդութիւնով մը օժտուած՝ ինչպէս ամօթխած հայ հարսնուկը: Սաղցողները կը ջանան ձեռնափայտերով դարնել՝ բոյնէն թոցնել հոլը, զոր կրկին բոյնին մէջ բերելու է բունկալ - պահապանը:

Այս խաղը մանրանկար մնացորդն է՝ նախնական, շատ հին Հորացիկին, զոր խաղալու համար՝ յատուկ հոլտուններ ալ եղեր են, ինչպէս կը տեսնենք մեր հայ ժողովրդական դիւցազնավէպին -- Սասմանց Տունին — Թյուլ Դաւիթի ճիւղին մէջ, ուր մերազգի պատանի հերոսը՝ Դաւիթ յաղթական դուրս կուգայ Մըսրամելիքի դէմ:

Իսկ աւելի հնադարեան յիշուածքը այս խաղին կը գտնենք Սորենացի քով՝ Մակիսնական Խաղ անունով — «Այլ երբեմն ի մականահան խաղուն երկիցս պատահեաց Շաւասպայ Արծրունույ՝ դէնդակն հանել ի Շապհոյ: Եւ նորա ածեալ նմա մականաւն՝ ասէ. Ծանիր դքեզ: Այո, ասէ, ճանաչեմ եւ զիս արքայորդի ի սերմանէ Սանասարայ . . . Եւ դայս ստացեալ յոյժ քամահարար՝ ի ձիարձակարանին արիադայնաց լինէր» (Սոր. Գ. ԾԵ.):

Կը տեսնենք յստակօրէն որ այն խաղը զոր կը խաղային երէկ Վասպուրականցի տղաք՝ Բերդին ստորոտը կամ Այգեստանի պարտէզներուն մէջ, տասնհինգ դարեր առաջ նոյն խաղը զրեթէ նոյն ձեւով կը խաղային հայ արքայազուները՝ դրացի պարսիկ պաշտպաններուն հետ, հին դարար կոչումներով . . . ձիարձակարանին մէջ՝ մականով կը գարնէին՝ գնդակը կը թոցնէին:

Հսկաներու դարերուն՝ Հոլոցիկի տարբեր մէկ նմոյշն ալ եղած է հաւանաբար, Գորգ թալելու (դուրդ նետելու) կամ Գորգոցիկ մարդախաղը, զոր մեզ կ'աւանդէ դարձեալ մեր ժողովրդական Դիւցազնավէպը:

Ձիւնախաղ՝ ձիւնէ մարդ, ձիւնէ դնդակ, ձիւնէ անիւ, ուսի շինել - ձեւացնելու խաղն է: Մերթ ալ ձիւնադնդակի խաղ կը խաղան՝ բանակի բանակի ոչմ կանգնած:

Ձու, ձուախաղ, «Դո'ւն պառկէ», «Ձէ', առաջ դո'ւն պառկէ» . . . կ'առաջարկեն իրարու, եւ համաձայնած՝ չըք՝ ճաթեցաւ մէկ հակիթը: Ծայրը կամ տակը դնա՞ց՝ տէրը կորսնցուց խաղը: Իսկ կաթարը կը խաղան շատ հակիթով:

Նետ. Աղեղ (l'Arc) աղեղնաձիգներու դարէն մնացած խաղ մը՝ հնաբոյր եւ նոյնատեն միշտ արդիական: Կը խաղան՝ ձկուն սաս մը Ոտառին պէս ծուելով, երկու ծայրերը լարով կապելով ու կեռ նետեր լարին դէմ քաշել - թողտալով: Բլթակաւոր եւ փողաւոր աղեղներ ալ կը յինեն, որոնց մէջէն կը սահեցնեն դամաձեւ նետեր՝ երբեմն ասեղներով զինուած (Arbalète):

Նախնական մարդուն անդրանիկ զէնքը. — Անտ եւ աղեղ : Մեր ազգին նահապետ՝ «քաջադանդուր, խայտակն եւ հաստաբազուկ, գեղապատշաճ եւ անձնեայ» Հայկ դիւցազնին՝ պանծալի «աղեղը լայնալիճ» եւ «սլաքը երեքթեւեան», որով դիտապաստ «յերկիր անկանէ՝ ճոխացեալն տիտանեան» --- Բէլը (Խոր. Ա. ԺԱ.) :

Էծ - Էծ կամ Ջէջէ՝ երեխայական ձեւերով խաղցուած խաղը՝ նոյնպէս հնուց հասած է մեղի : Զողով մը -- ջըրիմդ (javelot) կը խաղան կերպ - կերպ : Իսկ մեր նախնի ռազմիկ քաջերը՝ նիզակի ձեւով կը գործածէին : Արշակ Ա.ի հռչակաւոր «նիզակը բոլորատէգ, որ էր արեամբ գեռնոյ միսեայ», ծակեց՝ մէջը ցցուեցաւ Պոնդոսի ծովեզրին կանգնեցուցած «երկանաքար արձանին» (Խոր. Բ. Թ.) :

Շամուան (Le Pot cassé) աշտանակ մը ձեռք բռնելու եւ չբռնելու, յանցանքի մը պէս իրարու վրայ նետելու մնջխաղ մըն է՝ զոյգ - զոյգ խաղընկերներով՝ բոլորչի նստած :

Ջիմագ (La Fourchette), հաւեղէնի կուրծքին երկճղի ոսկորն է նիւթը, եւ խաղցուածը գրաւախաղ մըն է : «Միտս է» ըսողը չի խաբուիր. «Եատէստ» ըսել կըցողը կը շահի գրաւը :

Սատանի Փոս (La Balle aux pots), զարմանաւոր խաղերէն մէկը : Գետնի վրայ՝ խաղցողներուն թիւին չափ փոսիկներ փորուած, մէկ փոս ալ՝ մէջտեղը սատանի համար : Մազէ գնդակը որո՛ւ փոսին մէջ իյնայ՝ ձգողն անոր կունակը կ'ելլէ : Եթէ սատանի փոսին մէջ իյնայ՝ ձգողը գնդակն առնելով՝ միւսներուն ետեւէն կը վազէ՝ մինչեւ որ դպցնէ մէկուն եւ բերէ իրեն փոխարէն փոսերուն պահնորդ կեցնէ :

Տուշ - Փէտ (Batonnet), Ձեռմանց, Գետմանց ու Տաճկերէն՝ Տուշ Փէտ, --- գրեթէ ամէն տղու խաղցած խաղն է եղած : Զեւով, բառով եւ ասութիւններով հարուստ, աշխոյժ խաղ մը՝ հայերէնին մէջ :

3. ԱՆԴԱՄԱԽԱՂԵՐ, ՄԱՐՄՆԱԽԱՂԵՐ

Խաղցողները, այս բաժնին մէջ, իրենց անդամներէն մէկ կամ միւսը, եւ կամ ամբողջ մարմինն է որ խաղի ու մարզի առարկայ կ'ընեն :

Պարոն Կ'րսէ (La Toilette de madame), Ի՞նչ կ'ըսէ Պարոնը...

-- Պարոնը կ'ըսէ դրէ՛ք. (ձեռքերը բոլորը մէկէն կը տեղաւոր ուին գետնի վրայ) :

-- Կ'ըսէ վե՛ր վերցուցէ՛ք : (բոլորանիստ խաղցողներուն ձեռները անշարժ կը մնան, Պարոնը չէ հրաման տուողը, ու շաղկերու թի՛ւն...):

-- Պարոնը կ'ըսէ վերուցէ՛ք. (ձեռները կը վերնան վեր՝ օդին մէջ՝ վարպետին ձեռներուն հաւասար) :

-- Վերուցէ՛ք, վերուցէ՛ք, աւելի վեր հանեցէ՛ք. (ըջ՛շտ ... Պարոնը չէ հրամայողը) :

Սխալողին ձեռքին՝ շլօ՛ւի կ'իջնէ ապտակը: Կիլիկեան հայ իշխանաւորներու պարոններու դարէ՞ն մնացած արդեօք:

Գլորոցիկ (Culbute), մարմնով գլխուն վրայէն դառնալու, գլորկտելու, Թագլա տալու կերպ - կերպ խաղն է:

Դալար - Թաթիկ, երդախաղ մը. մեծերէն մէկը՝ փոքրիկին դաստակը բռնած՝ ցնցելով կ'ըսէ ---

-- Դալար թաթի'կ, ջո՛ւր բեր.

— Ես չեմ կրնար, դո՛ւն բեր... եւն.:

Դրօմփիւս. բոլորուած նստած խումբը՝ բթամատերը ասիւրուն մէջ եւ ձեռքերը ձեռքերու վրայ բրդացած՝ խաչածեւ՝ կ'եղանակեն՝ ձեռնասիւնը վերվարելով համաչափ ---

— Օ'փիւս', դրօմփիւս', (ափ ինե, դի'ր, ափ ինե մէջ).

Խաչ - գաւազան վըրան շինէ.

Պարոնը կ'ըսէ՝ վերինը քաշէ՝ տակինը մնա՛յ:

Կատուի Սանդուղ, իրար վրայ դարձուած մատներով, կամ ծալծալ սիւնածեւ կաղմուած թուղթով:

Ճվիկ - Ճվիկ. Դրօմփիւսային քոյրն է. փոխանակ բթամատերը ասիւրու մէջ բռնելու՝ բոյթ ու ցուցամատերով ձեռներեաները կը փոթեն կը բռնեն դէմ - դէմի եւ վերվարելով կ'երգեն ---

-- Ճըվի' քըվի', ալլա' քըվի,

Ակլէն գընա՛ց Երուսաղէմ ... եւն.:

Մատնախաղ (Mourre): Մանուկը քա՛ր կը հանէ ամէնէն բանգէտ ու բառադէտ ուսումնականին: Ան վաղս՛ւց մէկմէկ անուն ու զատ զատ պաշտօն է տուեր ձեռքի մատներուն: Ճկոյթէն կը համրէ մինչեւ բուժը ---

-- Ուլո'ւի'կ, (փոքրիկ ուլ, ֆկոյթը).

Ուլկէ'մերի'կ, (ուլիկին մայրիկը, մատնեմատ).

Երկէ'ն տահի'կ, (երկար Թուրք, միջնամատ).

Ճաշլըկըսթո՛ղ, (հաշ լգող. ցուցամատ).

Ոջիկ կտուո՛ղ, (ոջիլը գոյգ եղունգներուն մէջ ֆզմող, բթամատ):

Կայ նաեւ երկրորդ ձեւ մը՝ «Էսա կ'ասի՛ անութի եմ» ... եւն.:

Պնիկիօ, հոս թուչերն են խաղանիւթ՝ ձեռքով ու շունչով խաղերգուած: Շունչով կ'ուռեցնես թուչերդ (կամ թուչդ), կուռփովդ կը դարնես կը պայթեցնես՝ ձայնդ կը հնչէ՝ Օո՛ւ Պը'նի'նկոն'ւ:

Կը խաղան նաեւ երգելով ---

— Ադուէսն եկա վերին քաղէն, Օո'ւ՛ Պընիկիօն'ւ, պընիկիօն'ւ...

Մածուն կերաւ՝ քափա վերէն, Օո'ւ՛ պընիկիօն'ւ, պընիկիօ՛...

Զուարթ, ցնծուն, շէնչող խաղ մը: Քալած ատեն անգամ կը խա-

դան . թուշը կ'ուռեցնեն՝ կը պայթեցնեն ու կ'երգեն ,-- Օտ'ւ պրնինկո՛ , պր'նինկո՛ . . .

(Որ իբր կրկնակ (refrain) դրած եմ՝ իմ յօրինած ու հինգ տարբեր երգահաններու եղանակներովը երգուած Պրնինկո ժողովրդական ծանօթ երգին) :

Փըսի - Փըսի , ձեռքին մորթը կը շոյեն ու կ'եղանակեն . . .

-- Փըսի՛ , փըսի՛ , փամփուզիկ ,

էպրէսի՛մա՛ , Սանդուխիկ ,

Ես Պարոնի՛ տղա՛յ եմ ,

Թագաւորին փեսա՛յ եմ . . .

Քանի՛ դարերու հունն ի վեր պէտք է բարձրանայ . Ռուբինեա՞ն , Արծրունի՞ , Բադրատունի՞ , Արշակունի՞ թէ՞ Հայկադեան Արմենա - կան հարստութիւններէն մէկուն կամ միւսին հասնելու , անոնց փառաւոր ինքնիշխան օրերուն մէջ՝ իրենց մէջքէն ոսկեհուռ սուրը քաշող հայ իշխանաւոր Պարոնին տղան ողեկոչելու , կամ մեծաշուք թագակապ Հայոց Մեծաց Արքային փեսայանալու . . . -- խաղ ու դրօսի մարզին մէջ :

Ծափոցիկ . դէմ դէմի ծալապատիկ նստած , ափ - ափի , ափ - ծունկի , եւ աջը ձախի ու ձախը աջի՛ ծափելու ողեւոր խաղ մը : Ուրիշ մէկ ձեւն ալ՝ կ'ըսուի ձլրփոցիկ , կամ՝ քրտերէն՝ Քի՞ Տրգիա : Ափին մէջ շաչեցնելով՝ կ'եղանակեն . . .

-- ձէլէկըմըն քի՞ տրգիա . (Իմ կովը ո՞վ է տարեր) .

= Ագ նա՛ տրգիամ . (Ես չեմ տարեր) .

-- Բա՛ քի՞ տրգիա . (Հասլա ո՞վ է տարեր) .

= Ա՛վա տրգիա . . . (Ա՛ս է տարեր) եւն . եւն . :

Շակրավոռիկ , դէմադէմ նստած , մէկը ոտքը բռնած , աջին մէջ գդակ՝ երկու հոգի փոխընդփոխ կը ճկին ու կը թեքուին՝ միմեանց յետոյքներուն գդակի հարուած տալով :

Կ'էհայ - կըգայ (Les Girouettes) , գիւղական յոյժ իսկատիպ խաղ մըն է : Վարպետին ցուցմունքներուն համաձայն , կարգով , տասնեակ մը խաղցողներուն նախ մէկ ձեռքն է որ կ'երթայ կուգայ : Յետոյ մէկ ոտքն ալ՝ մէկ ձեռքին հետ կ'երթայ - կուգայ : Ապա՛ մէկ ձեռք , մէկ ոտք ու գլուխը կ'երթայ - կուգայ : Ու շարքով՝ համաչափ եղանակելով՝ մինչեւ դժուարագոյն ձեւը . . .

-- Ի՛մ երկու ձեռք , Ի՛մ երկու ոտք , Ե՛ւ իմ գլուխ , Ե՛ւ իմ լեզուն , Ե՛ւ իմ աչքեր , Ե՛ւ իմ մէջքը . . . Կ'էհայ - Կըգա՛յ , կ'էհայ - կըգա՛յ . . .

Փորձեցէք . . . Սքանչելի մարդախաղ՝ թեւ ու թիկունք , աչք ու լեզու , գլուխ , վիզ ու մէջք՝ համաչափ ու յառաջատուական մարդանքի մղելու եւ երկար շունչի վարժեցնելու . . .

Ու պատկերացուցէք՝ նուազային համաշարժ անդամախաղն ու

երգասացը՝ տասնեակ մը խաղակիցներուն մէկ անգամէն, բոլորչի բազմած - երերուն ... -- Ու եթէ կրնաք, ցուցուցէք նման զուար - ճալի ու կենսալի, մարդակազմական ինքնատիպ խաղ մը՝ օտար ազ - գի մը խաղերուն մէջ:

Ճմուռ. բոլորանիստ խաղցողներէն ով որ սխալի խաղասացքին մէջ՝ իր աջակողմի ընկերին ծունկին վրայ երկարած աջ ոտքին մատ - ները կը նմուռին՝ յանկերգով մը... նը՛մն՛ւո՛ւտ, նըմն՛ւո՛ւտ : Մինչեւ նորէն անսխալ եղանակէ «վարպետին ըսածը», վանկ առ վանկ... --

-- Շախլախկի՛կի՛կո, սարի՛ սօղա՛ն - տօ՛ղրան - տօղրան, եմէ - լի՛կիկօ՛ ... եւն. եւն. յարածուն խօսքերով :

Հայ սկաուտներուն համար, ճամբարի (camping) աղուոր խաղ մը, խօսքերը հայացնելով:

Մամէմուս. երկու հոգի՛ բարձի մը հակառակ անկիւններէն ձախ ձեռքով բռնած, Փետրուարի ձուկերուն դիրքովը, աչքերնին կապած, թաշկինակէ մտրակը աջերնուն մէջ՝ մէկը կը ձայնէ հետակորոյս...

-- Մամէ՛մն՛ւս ...

Միւսը կը պատասխանէ ...

== Լա՛պէ՛խն՛ւս ...:

Մէկ հատ տո՛ւր մէջ գլխուս...

Ու թաշկինակէ մտրակը վը՛ղղ կը շաչէ՛ կոյրզկուրայն, ախոյ - եանին ձայնին կողմը: Խաղը՝ փոխնիփոխ:

4.— ԵՐԳԱՆԱՂԵՐ

Բաղմաթիւ են ու բազմազան՝ անունով, ձեւով, երգերով ու ե - դանակով, -- մանուկին, սրտանիին ու երիտասարդին բերնին մէջ, ... Թէ մանչ խաղակներուն քով:

Ի՛նչ գունադեղ հարուստ վանձարան՝ Հայ Մանկապարտէզին ու Հոս Մատիկներուն առջեւ:

Յիւզեղինք արդէն՝ երգասացներով խաղցուածներէն՝ Դալար - Թաթիկ, Իրօմփինա, Կուկուլիկու, Ճըվի - Ճըվի, Պուպու, Փըսի - Փըսի, Քարափոսիկ, Կէհայ - Կրգայ, Շամդան, եւն.:

Յիւզեղ դեռ եւս մէկ - քանիներ՝ արագ թուարկումով... --

Անիս - Բայնիս, Կուկուգ - Պառա, Չձում - Կարագ, Ուլի - Ու - լի, Տուտուխիկ, Մակատուգ, Իըմփիկ - Իրմփիկ, Լէվան - Սօլթան, (Le pont d'Avignon), Նարու Պարան, Մէր - Կատու (Le Statuaire) Պու - պուգ, Խուճկուլուլու, Ճոօր, եւն. եւն.:

Երգով ու եղանակով խաղցուած խաղերը եթէ մէկ-մէկ թուէինք հոս՝ շա՛տ արշալոյս ու վերջալոյսներ պիտի յաջորդէին իրարու:

(Տեսնել իմ երկհատոր Խաղաշխարհին մէջ):

5. ԾԱՂՐԱԿԱՆ ԽԱՂԵՐ ,
6. ԴԱԽ - ԽԱՂԵՐ , ՓՈՐՁԱԽԱՂԵՐ .
7. ՃԱՏՐԱԿԱԽԱՂԵՐ .
8. ԳՐԱԽԱՂԵՐ .
9. ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ԽԱՂԵՐ .
10. ԱԻԱՆԴԱՇՈՒՆՉ ԽԱՂԵՐ .

Ասոնցմէ են՝ այն խաղերը , որոնց մասին մենք առիթ ունեցանք աշդէն մի առ մի թուելու եւ խօսելու , ինչպէս Հիւանդ Եղբայր , Կապո - Մրտո , եւն . :

Առանձնապէս շեշտելի են Աւանդաշունչ խաղերէն . . .

Ճոպաւնխաղ ,-- հին - հին դարերու յիշատակը կենդանացնող խաղ մը՝ հսկաներու վայել , որ հանդէս կուգայ մեր զմայլելի ժողովրդ . Դիւցազնավէպին՝ «Սասմանց Տուն»ի մէջ : Սասունցի Թլու Դաւիթի եւ Մըսրամելիքի խաղցած դիւցազնախաղը՝ վիթխարի փոսի մը մէջ՝ ճոպաններով (երկաթէ հաստաբետ շղթայ) կապուած՝ ամեհի ձիերու վրայ : Նկարագրութեան համար շատ նեղ կուգան այս էջերը :

Գորգ , Գորգոցիկ եւ Հոլ , Հոլոցիկ , որոնց մասին գրուեցաւ քիչ վերը :

11. ՄՐՑԱԽԱՂԵՐ

Հին Նաւասարդեան խաղերու մնացորդներ են , անկասկած , մէկ քանին այն մրցումներէն , որ ժամանակ - ժամանակ ի հանդէս կուգան մեր հայ գիւղական համայնքին բաց դաշտերու կրկէսին մէջ : Մէկ քանին ալ սենեակի եւ լիճի - գետի խաղ մրցումներ են :

Ապաւնի խաղցնել , Ա.վ.ուր կռուեցնել , Ձիանթրոց եւ Գումշակուի՝ հնարոյր Նաւասարդեան խաղերու կարգէն են . . . «Ո՛ տայր ինձ գծուխ ծխանի եւ զաւառօտն Նաւաւարդի . . .» : Ասոնց կարգին նաեւ Որսորդութիւնն ու Լող՝ հին դարերէն մինչեւ նորը՝ Հայոց մէջ ծանօթ ու գերազանցապէս օգտադործուած են :

12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ - ՎԱՐՁԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Քիչ թիւ մը կը կազմեն անոնք : Եւ այդպէս ըլլալը բնական է՝ բընութեան մեծ ըմբոստին՝ մանուկին համար : Ան՝ օրէնքի , կարգուկանոնի գլուխ չունի . ամէն օրէնք իր բաղձանքներուն մէջ սեղմուած են , «որչափ հատանէ՛ այնքան ունի» :

Պարուն - Գգիր (Esclave dépouillé) կը խաղան երկու կերպ՝ երկուքն ալ նանով : Մանրամասնութիւնները երկար են :

Գոզ - Փաշա (Insubordination) , ուր կը տեսնուի Ապահովութեան մարմին մը — Իշխանաւորը (փաշա) , Թիկնապահները , Դրան պահապան գամբու - առիւծը եւ Ոստիկանները :

Պաղնիս - էշ, Հիւանդ Եղբայր, Գերի եւ նման քանի մը խաղերու մէջ ալ որոշ չափով անցքեր կան՝ քաղաքացիական խաղերու:

13. ՌԱԶՄԱԽԱՂԵՐ

Պատերազմական շարժումներու յատուկ եւ ռազմավարական ընդունակութիւններ երեւան բերող մաս մը խաղեր՝ ամէնէն շատ սիրուած ու յաճախ խաղցուածներն ալ են...

Կրակ - Տարոցիկ կամ Կրակ - Տարուկ եւ Գերի (La Passe, les Barres) խաղերը՝ ճակատէ ճակատ երկու խմբակներու միջեւ մղուած գոյութեան կռիւի խաղեր են: Փորուած փոսին կամ ափին մէջ հարուած ու հետապնդում՝ փոխն ի փոխ, եւ պարտուածը գերի տանելու,-- խաղը շահելու -- ճիգեր՝ Երսէն ու դուրսէն:

Կտրոց (La chasse au Cerf) շատուր խումբով խաղցուած ամէնէն կրակոտ ռազմախաղն է: Խաղերուն գլուխ դործոցը: Մէջտեղը ֆոլֆն է, դուք ըսէք ֆաղաֆը, զոր առնելու կը ձգտին երկու կողմէն ալ: Հայկական Փութայոլի տեսակ մը: Մէկ խումբի անդամներէն ոեւէ մէկը՝ եթէ միւս խումբի անդամներէն մէկը կամ միւսը կիսաչրջանակի մէջ առնել յաջողի՝ ան կտրուած կ'ըլլայ, զինաթափ է ու կը նստի: Իսկ ֆոլֆն առնել՝ խաղը շահիլ է:

Քոլֆով Խըն՝ Կտրոցին նմանող խաղ մըն է՝ քիչ տարբերութիւնով, ու կը խաղցուի դարձեալ ռազմավարական շարժումներով:

Պարսետ (La Fronde), եւ Նետ - Աղեղը (քիչ վերը յիշուած), մարտական արուեստի նախնական ղէնքերէն երկուքը՝ խաղաբեմին վրայ ամէն ոչ կը դառնան խաղակ սերունդին ձեռքին մէջ:

14. ՄԱՐԶԱԽԱՂԵՐ (SPORTS)

Մարմնամարզի յատուկ խաղեր՝ փոքր թիւ մը չեն կազմեր մեր մէջ: Թէեւ նախնական պարզ ձեւերով արտայայտուած՝ բայց հարուստ ու լայն հիմերով մարմնակրթանքի հայ շէնք մը կառուցանելու չափ ատաղձ կրնան հայթայթել:

Վերյիշելով՝ Տուշփէտ, Կրակ - Տարուկ, Գիր Գրոցիկ, Շրջոցիկ, Դղէգ, Թիս - Մուրուս, Հոլ, Սնդուկ - Պնդուկ, Լոդ, Պաղնիս - էշ, ու նման խաղեր՝ իբր մշակելի մարմնամարզական ձեւեր, շեշտենք մանաւանդ կարեւորները...

Գմբէթ-ախաղ (Octogone), որ կը կազմուի թեւկից երեք խումբերէ՝ միմեանց ուսերուն վրայ բարձրացած: Խարխախը եթէ վեց հոգիով կազմուած է՝ երկրորդ յարկը 3 - 4 հոգիով, երրորդը՝ 1 - 2 հոգիով կը կառուցուի:

Անյոցիկ (La-vieille mère Garuche) հայկա-հայր բնատիպ Փութայոլն է: Կաշի գնդակին փոխան՝ կճատ աւելիլէ կայ: Տուքով կը դարնեն կը

Թռցնեն՝ դէմ - դէմի երկու խումբեր: Կը շահի այն խումբը որ կը յաջողի աւելը դիծէն անդին թռցնել:

Սօլ - Փոխոցիկ կամ Եռասում (Le saute Mouton, à la semelle), կամ Թռնոցիկ, շատ տարածուած եւ իրարու նման խաղեր են: Ցատկողները՝ իրենց կարգին համեմատ՝ որոշ անուկներ ունին, -- Պապ, Պապեղբայր, Նախիր - Քշող: Անոնք կը ցատկեն կացող - ին կռնակին վրայէն: Անճարակ Պապերը՝ Պապկացու ալ կ'ըլլան: Այրենգիւմ խաղը՝ ասոր մէկ տեսակն է:

Գնդակով Տուշփէտը (Courte paume, le Lawn tennis), ոգելոր խաղերէն մէկն է: Մաղէ դնդակ եւ թաթ կամ թաթածեւ տախտակ մը, եւ երկու խումբ խաղցողներ՝ կը բաւեն:

Ջէջէ, թռքերը զօրացնող, շունչը մարդող՝ սքանչելի իսկատիպ խաղ մըն է (վերը յիշուած):

Կրոչ - Կրոչ (La Serpente ou la Carotte) կամ Կոչալնոսիկ. ցպիկներու վրայէն եւ միջոցներէն ակնառտիկ (à cloche pied) ցատկելով՝ սրունքներն ուժովցնող, թեւ ու ճիվերը մարդող խաղերէն մէկն է:

Շրջոցիկ կամ Պարսկի Կռիւ (յիշեցինք)՝ սրունքի մարզախաղն է:

Պաղ - Զարկոցիկ (Patinage), Քուշտիկ (դօտեմարտ), Փէտէվոտ (Les Echasses), Քար - Թալիկ (Lance - pierre), Ժանօթ մարզախաղեր:

Խընչ (La Roue) խաղին մէջ՝ երկու հողի ոտք ոտքի դէմ, փայտ մը ձեռքին մէջ, հակընդդէմ պրկումով՝ փայտը խընչ կոտրելու կ'աշխատին: Եթէ մէկը կարենայ մըցորդը դէպի ինքը քաշել փայտին հետ՝ առաւելագոյն յաղթանակը կը շահի:

Սանդ (Saut)՝ գերազանց մարզախաղն է՝ կանաչ մարգերուն կամ աւազուտ դաշտերուն վրայ: Չորսը մէկ խումբ, չորսը միւս՝ կացող ու զարնող երկու խումբ են խաղցողները: Կացողներէն երկուքը յետոյք - յետոյքի եւ երկուքը գլուխին անոնց աղբրերուն կազմած կահուրջին տակ խոթած՝ թեւերովը սրունքները բռնած՝ Սանդ (mortier) մը կը ձեւացնեն: Զարնող միւս չորս հողին՝ Պապ, Պապեղբայր են, կարգով թափով կուգան՝ ճախր տալով կը բարձրանան գլխի վրայ դարձած՝ կ'իջնեն սանդին մէջ, ու մէկալ կողմը ոտքի կը կենան դարձեալ:

Խըն (Le Chat)՝ իր տեսակներովը -- Տանելով խըն, Անվոտ խըն, Քօղֆով խըն --, նաեւ ուրիշ բնիկ շատ մը վաղխաղեր՝ եթէ մշակուելու եւ ձեւաւորուելու ըլլան, Հայ Մարմնակրթական Միութիւնները կրնան ունենալ՝ հարուստ, շատ հարուստ խաղացանկ մը:

ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅԻՆ ԽԱՂԵՐ, ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ

Ուսումնասիրելով մեր ազգային խաղաչխարհին մէջ ծանօթ ու սերունդէ սերունդ դարերէ ի վեր հոլովաբար աճելով կամ մաշելով

խաղցուած հարիւրաւոր խաղերը, եւ բաղդատելով եւրոպականներուն կամ արեւելեաններուն հետ, կը գտնենք որ անոնցմէ մեծ մաս մը իրարու հետ կը խնամիանան:

Խաղը՝ համաշխարհային բնոյթ ունի: Մանուկը՝ ամէն երկնքի տակ նոյն մանուկ - խաղակն է. նոյն ստեղծագործ փոքրիկ հանճարն ունի: Խաղերու աշխարհին մէջ ալ՝ գիւտերը նման աղերէ պիտի բռնիսին բնականաբար:

Առիթ ունենալով քննելու նաեւ Մայրագոյն Արեւելքի զաւակնե-րուն՝ Ճափոնի խաղերը (իմ թարգմանած «Կեանքը Ճափոնի մէջ» խորագրով յօդուածը (Սուրհանդակ, օրաթերթ, 3 օգոստ. 1904), զարմանքով տեսած եմ որ Ճափոնցի մանչ ու աղջիկ խաղակներ ալ՝ իրենց երկրին զարդն ու շուքն եղող յաղթ կեռասիներու շունքին տակ՝ Աչֆկապուկ (Colin - Maillard) կը խաղան, գրեթէ յար եւ նման մեր տղաներուն խաղցածին:

Համաշխարհային խաղերու կարգին՝ մերիններէն կրնանք թուել՝ Արուդա (Ballon), Աչֆապուկ կամ Աչֆապուցիկ, Պաիոցիկ կամ Պուֆախ - Պուֆախ (Quatre - Coins), Ջուխտ - Կըտ (Pair ou non), Ճննդուկ (Cocote), Ձի կամ Ձիանթրոց (Jeu de cheval), Ֆոֆոիկ (Toupie), Թոուցիկ (Cerf Volant), Գոդ - Փաշա, Խըռ, Խոծիկ (Poupée), Ճանցիկ (Os selets), Ճոօր (Escarpolette) Չւանցիկ (La corde), Այրեմգիմ կամ Թոնոցիկ կամ Սօլփոխոցիկ (Saute - Mouton), Գերի կամ Կրակ - Տարոցիկ (Les Barres), Տուշփէտ (Batonnet), Պրակոշտ կամ Կրակտարուկ (La Main chaude), Հոլոցիկ (Le Mail), Վիմակ (Loto), Կօկօջ (La Godiche), եւն. եւն. եւն.:

Եթէ փորձէինք փոքրիկ բաղդատութիւն մը ընելու մեր հայեցի խաղերուն եւ օտար եւրոպականներուն մէջ, վստահաբար՝ Հայ Խաղաշխարհը գերազանց պիտի գտնէինք:

Գերազանց՝ խաղերուն բազմազանութեամբ, գերազանց՝ խաղին անուններովը, գերազանց՝ խաղանուններուն աւելի հմուտ կազմութիւնովը: Հոս տեղը չէ այդ բաղդատական երկար ուսումնասիրութիւնն ընելու. կրկնած պիտի ըլլայինք՝ ինչ որ ըսած ենք մեր «Խաղաշխարհ»ին երկրորդ հատորին մէջ (երես 318 - 325):

Ուրիշ հարց մը...

Բոլորն խաղերն ալ հաւասար յարգ ունի՞ն. միեւնոյն եռանդով կը խաղցուի՞ն, կամ կա՞ն մասնաւոր խաղեր՝ որ աւելի շատ սիրուած ու յաճախ կը խաղան մեր խաղակ - մանուկները, — ճիշդ բառով՝ մանուկ-խաղադէտները: Որո՞նք են այդ շատ խաղցուած, սիրական խաղերը:

Ծնած ու ապրած ըլլալով այն հայաշունչ հարազատ միջավայրին մէջ՝ «Վասպուրական մեր աշխարհ», ուր այդ երկհարիւրեակ խաղերը կը խաղցուէին՝ տունի, դպրոցի ու դաշտի երրեակ իմա-

դավայրերուն վրայ, — ինձ համար պարզ են այդ հարցումները :

Սրբուած խաղերն են՝ Ջր, Ջրասթրոց, Կրակտարոցիկ, Կերի, Տուշպետ, Կալաց, Պաղսիսէշ, Խրո, Աւելոցիկ, Բոխչատարիկ, Շնոցրիկ, Խոնոցրիկ (Շոստոում, իւչատում), Սանդ, Ճան, Սարգա, Եւն. մանչերու համար :

Հուսանցրիկ, Սնչոցրիկ, Աչկապուկ, Արդար - Մեղաւոր, Իրմիկի-Իրսարիկ, Իսամարիկ, Խոծկոցրիկ, Կրոչ - Կրոչ, Ճոօր, Քարուկ, Պուպուկ, Պուտ Եւն. աղջիկներու համար :

ԺԱՄԱՆՅՆԵՐ՝ ՄԻՏՔԻ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

Հայաստանի մայր հողին ու երկինքին բնիկ զաւակները՝ մարմնապա խաղերու մէջ միայն սահմանափակուած չեն : Անոնք՝ այդչափ հանձարեղ խաղերու ստեղծագործութեան ու բեմադրումին հեղինակ՝ կրնային զուրկ ու անտառանգ ըլլալ՝ միտքի գրասերէ, իմացական խաղ ու մարզանէ :

Արդարեւ՝ մեր խաղաշխարհին խորը՝ կը գտնենք անհուն նոր տարածութիւն մը, ընդարձակ ուրիշ բեմ մը, ուր հանդէս կուգան բազմաձայն էջեր, ժամանցի անսպառ նիւթ ու գանձ :

Անոնցմէ ո՞րն ըսեմ՝ ո՞րը թողում : Ի՞նչպէս թողում ...

Ահա՛ Պարեր, երգով ու նուագարաններով, պէսպիսուն :

Շուտասելուկներ կարճ, հոսուն, հրահանգիչ :

Հանելուկներ, պարզ թէ դժուարալոյծ, երկտող, քառունակ, բազմատող, հարիւրաւոր :

Առակներ, առածներ, խրատական, զուարճալի, աւանդագեղ :

Հէֆեսթներ (Կէր - Կէր, ճեռօկ), -- հրաշապատում զրոյցներ՝ պատմական, դիւցազնական, կենդանական, երգիծական, այլաբանական, ուղեւորական Եւն. սեռերով :

Այդ «Հայկական Հաղարումէկ Գիշերներ»ը՝ եթէ այստեղ պատմել փորձէի ... հէքեաթասացիս ըսածին պէս՝ «հուր ու քուր կ'եղնէր» : Հիմա ... հէքեաթներուն համեղ վերջաբանով ըսենք՝ «Երկնուց երեք խնձոր իջաւ, մէկն ասողաց, մէկը լսողաց, մէկն ալ ականջ արողաց » ...

Եւ ահա ասոր համար՝ հայ մարզի՛կ, այս խաղ ու մարզանքներու հակիրճ տողանցումին համընթաց, յիշէ՛ որ դուն Հայ ես, ու Հայ ծնելուդ համար հպարտ պէտք է ըլլաս :

Յիշէ՛ նոյնպէս այդ սառն՛ւմ դարերու վճիտ ակերէն եկած քեզի հասած երկբառ ոսկի պատգամը հայրենական .—

-- «Ով չի շիներ՝ քամկով տընիկ,

Չի՛ քրնիր մէջ՝ անո՛ւշ քրնիկ ... » :

ԶԻԹՈՒՆԻ

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

.....
Ա. ՇՐՋԱՆ

(1900 - 1908)

Ազգերու ժամանակակից կեանքին մէջ մարզանքն ու մարդասիրտները գրաւած են կարեւորագոյն տեղերէն մէկը :

Այսօր բոլոր քաղաքակիրթ ազգերու ղեկավարներ, պետական պատասխանատու անձեր կ'ընդունին որ ժողովուրդի մը տոկալու եւ յարատեւելու պայմանները մեծապէս կախում ունին նոյն ժողովուրդին անհատներուն Փիղիքական եւ առողջապահական պայմաններէն : Ահա թէ ինչու մարզական ու մարմնակիրթական շարժումը, քաղաքակիրթ ժողովուրդներու մօտ, կը վայելէ տեսակ մը պետական պաշտպանութիւն ու օժանդակութիւն :

Այս վերադարձնումը մասնաւորաբար սկսաւ անցեալ դարու կէսերէն : Յեղին ազնուացման, Փիղիքական ու մարմնական կատարելութեան հասնելու խոչալով խանդավառուած միջազգային ռահվիրաներ, սկսան երազել հին Յոյներու փառքի օրերը, ուր մարմնական գեղեցկութեան պաշտամունքը ազգային դաւանանք մը դարձած էր :

Եւրոպա ու Ամերիկա տուին նշանաւոր մարզիկներ, մարմնակիրթական վարիչներ, զանազան տեսութիւններու վրայ հիմնուած մարմնամարզի դրութիւններ : Եթէ ոմանք մարմնակիրթական դրութեան տարածիչներ եղան, անդին, ուրիշներ նորագոյն Ողիմպիական խաղերուն կազմակերպութիւնը գլուխ հանեցին :

Օրուան կարդախօսը եղաւ « Առողջ միտք, առողջ մարմնի մէջ » : Ամէն ժողովուրդ սկսաւ կիրարկել զայն իր ուժերուն ներած չափով, ու շարժումը դարձաւ վարակիչ ցեղէ ցեղ :

Ի հարկէ Հայերս, մեծամասնաբար թուրքիոյ մէջ բնակութիւն հաստատած ու նկատուած՝ յառաջապահները եւրոպական մշակոյթին ու քաղաքակիրթութեան Մերձաւոր Արեւելքի մէջ, անհաղորդ պիտի չմնայինք այս շարժումին :

Բայց տալէ առաջ պատկերը 1900էն յետոյ Պոլսոյ ու մասամբ դաւառի մէջ ծայր տուող մարզական շարժման, ստորեւ կը ներկայացնենք երկու ուրիշ ձեռնարկներ, որոնք աւելի հին թուականներու են կապուած եւ որոնք պէտք է նկատուին Հայոց մէջ վերանորոգող մարզական ու նաեւ սկսուող սկսուտական շարժման նախաքայլերը :

Առաջինը կը քաղենք Պ. Մինաս Չերազի մէկ գրութենէն, առնելով միայն կարեւոր մասերը.—

ՉԱՐՔԱՇԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ասկէ 50 — 60 տարի առաջ (1870ին), ինչպէս ամէն դպրոցի մէջ, մեր՝ Խասպիւղի Ներսէսեան վարժարանին մէջ ալ զգալի եղաւ մտքին հետ մարմինը կազդուրելու պէտքը, մանաւանդ երբ կարդացինք, Խորենացիէն, Եղիշէն եւ Բիւզանդէն յետոյ, Սպարդայի ու Հռոմի պատմութիւնները: Զէյթունի ապստամբութեան արձագանգը եկաւ բորբոքել մեր մատղաշ երեւակայութիւնը: Կիրակի առտուները, Ս. Ստեփաննոսի դասին մէջ, Ռ. Պէրպէրեանի եւ Ե. Տէմիրճիպաշ — եանի հետ իրար կը դռնէինք ընդհանրապէս, եւ, հեթանոսին անմատչելի այդ սրբավայրին մէջ, չէինք կշտանար կարգալով Պէշիկթաշ — լեանի ըմբոստ երգը:

Խասպիւղի վարժարանը դաւառէն բերուեցան 10 ուշիմ պատանիներ, ժառանգաւոր ըլլալու համար: Այս ուսանողները Կիլիկեցի էին ընդհանրապէս: Անոնք բերած էին ուրբինեան դրամներ, եւ իրենց Պոլսեցի դասընկերներուն նուիրեցին դանոնք: Մասունքի պէս պահեցինք այդ տաշած մաշած պղինձները. «Կարողութեամբն Աստուծոյ շինեալ ի քաղաքն Սիս», որոնց վրայ կը նշմարէինք հայատառ արձանագրութիւններ, Լեւոններու, Հեթումներու, Կոստանդիններու թաշաւորական անուներ ու պատկերներ, խաչի ու առիւծի քանդակներ:

Ուստի, վարժարանին պահպանողական տեսուչէն եւ նոյնիսկ աշակերտներէն գաղտնի Կիլիկեցի ժառանգաւորներուն հետ կազմեցինք միութիւն մը՝ ՉԱՐՔԱՇԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ անունով, նախապատրաստուելու համար մեր ապագայ խստամբեր կեանքին: Չուզեցինք կանոնադիր ունենալ, դիտնալով թէ գիրը օտարի ձեռք իյնալով, կրնայ վտանգել որ եւ է դաւադրական ընկերութիւն: Խիստ քննութենէ յետոյ կ'ընդունէինք նոր անդամներ, եւ հրահանգները բերանացի կը հաղորդէինք անոնց:

Այսպէս.

1.— Չարքաշական ընկերութեան անդամները տախտակի վրայ պառկելու էին, ամրացնելու համար իրենց ոսկրային դրութիւնը: Գիշերը, անկողինէն բարձ մը եւ վերմակ մը առնելով, պառկելու էին քովի տախտակամածին վրայ, եւ առտուն, կրկին քրքրելու էին անկողինը՝ կարծել տալու համար թէ հոն պառկած էին:

2.— Զբօսանքի ատեն մարմնամարզով միայն զբաղելու էին:

3.— Գոց ընելու էին Գամառ = Քաթիպայի երգերը:

4.— Քալելու, վազելու, մագլցելու ատեն քար մը կապելու էին իրենց մէջքը՝ չյոգնելու համար, ինչպէս կ'ընեն եղեր Զէյթունցիները :

5.— Իրենց կուրծքին վրայ կրելու էին հմայեակ մը, որ հող պարունակէր այն ռազմադաշտէն, ուր Զէյթունի մարտիկները յաղթական կանգնած էին թուրքերուն վրայ: Այդ հողէն բերել տուած էինք:

ԿՏՐԻՃՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆՆԸ

Զարգաշականէն առաջ, սակայն, մեր մէջ հիմը դրուած է միու թեան մը, որ իր էութեանը մէջ սկաուտիսմն է եւ որ ծնունդ առած է Պատրն Բաուէլէն երկու հարիւր տարիներ առաջ: Արդարեւ, էջմիածնայ « Արարատ » թերթի հին թիւերէն մէկուն մէջ կը հանդիպինք կանոնադրութեան մը, որ 1680ական թուականներէն սկսած մինչեւ 19րդ դարու սկիզբները յաջորդաբար վաւերացուած է էջմիածնայ Եղիազար, Աղեքսանդր եւ Արղութեան Յովսէփ կաթողիկոսներէն, իսկ մէնէն վերջ՝ Պեսարապիոյ Գրիգոր Արքեպիսկոպոսէն :

Կանոնադրութիւնը կը վերաբերի Մոլտաւիոյ Պոթուշան եւ ուրիշ քաղաքներու հայ պատանիներուն կազմակերպութեան (Պրասդաւա), որուն անդամները կտրին բառով կ'որակուէին :

Այդ կազմակերպութեան նպատակն է եղած Մոլտաւիոյ հայ պատանիներուն հոգեկան ու մարմնական աղնուացումը :

Պ. Տիգրան Խոյեան, առանձին գրութեան մը մէջ խօսելով այս մասին, կուտայ կարգ մը ծանօթութիւններ :

Այսպէս, յիշեալ կանոնադրութեան համաձայն, իւրաքանչիւր պատանի որ կը թեւակոխէր 12 տարին, պարտաւոր էր արձանագրուիլ իրրեւ նախընթաց պրաստաւային եւ հաղորդուելէ ու երդուելէ վերջը, պատկանիլ այդ կազմակերպութեան՝ կտրին անունով, մինչեւ ամուսնութիւնը :

Կտրիճները իրենց թիւին համեմատ կ'ունենային խմբապետ մը կամ խմբապետներ: Կտրիճներէն պահանջուած ամենակարեւոր յատկութիւններն էին կարգապահութիւն եւ բացարձակ հնազանդութիւն: Անոնք պարտաւոր էին հսկել իրարու վրայ փոխադարձաբար, եւ իրենցմէ մէկուն անպատշաճ մէկ ընթացքը տեսնելու պարագային զզացնել իրեն :

Ինչպէս կը տեսնուի, այդ կազմակերպութիւնը չափազանց նմանութիւն ունի մեր ներկայի սկաուտիսմին հետ :

Մեր մէջ ալ ուրեմն մարմնակրթանքի ջերմեռանդ հաւատացեալներ, հեռուէն կամ մօտէն հաղորդակից եւրոպ. մշակոյթին ու անոր

զանազան երեւոյթներուն ու հոնկէ քաղելով իրենց համեստ պաշարն ու ծանօթութիւնները, պիտի գային այս նոր ու բարերար շարժում մին յառաջապահները ըլլալու, աւելի լայն ու աւելի հիմնական ձեւ մը տալով շարժումին :

Ու ատիկա, դեռ 900ական թուականներէն: Գրիգոր Յակոբեաններ, Վահան Չերազներ, Շաւարշ Քրիսեաններ ու Գր. Մերձանօֆներ՝ Պոլսէն, էլմասեաններ, Եանրդեաններ՝ Իզմիրէն սկսան տեսակ մը նոր վարդապետութիւն քարոզել նախ իրենց անմիջական շրջանակին ու ապա տարածուելով իրենց ամբողջ համայնքին մէջ: Ամէն մէկը սկսաւ իր շուրջը ու իր միջավայրին մէջ կորիզ մը ստեղծել, կապելով իրեն ու իր շարժումին նորեկներ, որոնք իրենց կարգին պիտի տարածէին զայն իրենց շրջապատին մէջ :

Այսպէս է որ հետզհետէ ծագում առին հայ մարդական միութիւններ Պոլսոյ ու Իզմիրի զանազան թաղերուն մէջ:

Ի հարկէ այս նորութիւնը, Մերձաւոր Արեւելքի ու մեր մէջ տարածելու եւ սիրցնելու մեծապէս նպաստեցին օտար ու մանաւանդ Ամերիկեան կրթական հաստատութիւնները՝ ինչպէս Ռօպըրթ Քօլէճը, Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն վարժարանը, կամ Սարբերդի Այնթապի, Մարգուանի եւն. Ամերիկեան քօլէճները:

Չարմանալի չէ ուրեմն որ ոչ միայն մարդական կեանքի մեր լաւագոյն ներկայացուցիչները, այլեւ մարմնակրթանքի մեր զըլ - խաւոր ղեկավարները իրենց հիւթը քաղեցին այդ հաստատութիւններէն: Մասնաւորաբար Ռօպըրթ Քօլէճի դերը մեծ եղաւ այս տեսակէտով: Ան է որ մեզի տուաւ Յակոբեան մը, Քրիսեան մը, Բ. Կէօ - զիւպէօյիւքեան մը, Վ. Ս. Փափաղեան մը, Մ. Մկրեան, Մ. Գու - յումճեան մը, Ս. Մկրեան մը եւ այնքան շատ ուրիշներ :

Ժամանակաւրական տեսակէտով, սակայն, նախապատուութիւնը պէտք է տանք, կ'ենթադրենք, Գրիգոր Յակոբեանի եւ Շաւարշ Քրիսեանի: Արդարեւ, առաջինը եղաւ, նախ, որ քօլէճէն դուրս եւս մարմնակրթանքով շահագրգռուեցաւ ու իր թաղին հայ տղոց մէջ շարժում ստեղծեց: Միաժամանակ 1902-1904 յարաբերութեան մէջ մտնելով Ֆրանսական մարմնակրթական հաստատութեանց հետ, սկսաւ լրջօրէն հետեւիլ անոր՝ կիրարկելու համար զայն մեր մէջ: Ֆութպօլը այդ շրջանին նորօրինակ երեւոյթ մըն էր Պոլսոյ մէջ ու ծանօթ միայն Ռօպըրթ Քօլէճի տղոց, անգլ. եւ ամերիկեան յաճանաւերու նաւագներուն եւ Պոլիս հաստատուած անգլիական գաղութին: Այս խումբերէն կարելի է յիշել «Imogen» նաւագներու խումբը, « Սթրըկլըրս », « Մօտաքլիւպ », « Գատըքէօյ » եւն. խումբերը :

Այդ օրերուն, Գրիգոր Յակոբեան եւ իր քօլէճական ընկերները հիմը կը դնէին Պօյաճը գիւղի մէջ, համանուն դաշտին անունով Պալթալիմանի խումբին, որ իր ժամանակին մեծ հռչակ հանեց, մրցելով վերոյիշեալ օտար խումբերուն հետ եւ յաղթելով անոնցմէ ոմանց :

Հայ մարզական կեանքին մէջ Շաւարշ Քրիսեանի դերը փայլուն էջով մը պիտի սկսէր 1909էն վերջ: Հետեւաբար իր մասին պիտի խօսուի այդ գլուխին տակ :

Սակայն, հոս պիտի վերյիշենք ուրիշ եղակի դէմք մը, որուն դերը նմանապէս շատ մեծ եղաւ հայ մարզական շարժումը տարածելուն մէջ, անոր սկզբնական օրերուն :

Այդ մէկը Վահան Չերաղն էր, որուն անձն ու գործը, իր կարգին ներկայացուած է առանձինն :

Միայն, պատմական տեղեկատուութեան կարգը պահելու համար, ըսենք անգամ մըն ալ որ ինք եղաւ առաջին անգամ Փութալու կեդրոնականի տղոց ծանօթացնողն ու սիրցնողը: Անգլիա ապրած ըլլալով այդ օրերուն, վերադարձին իրեն հետ կը բերէր Փութալու մը, որ պիտի կազմէր առաջին գնդակը՝ իր ապագայ դասընկերներուն, կեդրոնականի տղոց: Փութալու «Սանթրալ Ակումբը» կը կազմուէր ատկէ անմիջապէս վերջ: Անոր կը հետեւէր «Գում - Գափու» ակումբին կազմութիւնը :

Յետագային երբ «Սանթրալ»ը փոխարինուեցաւ «Տորք»ով, «Գում - Գափու»ն ալ եկաւ «Տորք»ին մէջ լուծուելու :

Ստորեւ կը յիշատակենք, հին ընթացքին ընթացքին իրենց հիմը դնող այս քանի մը խումբերը, իրենց գլխաւոր գործունէութեամբ :

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(1900 - 1908)

ՊԱԼԹԱԼԻՄԱՆ (Վոսիոր) .— Պոլսահայ խումբերէն երիցագոյնը, կազմուած 1905-1906ին, Ռոպըրթ Քօլէճի աշակերտներու եւ Ր. Հիսարի ու Պօյաճը գիւղի հայ երիտասարդներու նախաձեռնութեամբ: Յաջողութեամբ ճակատած է իր օրով գոյութիւն ունեցող օտար խումբերու հետ: Իրմով սփօռի նուիրուած են հայ մարզական շարժման ապագայ ղեկավարներէն շատերը: Իր մէջ են եղած Գրիգոր եւ Լեւոն Յակոբեանները, Շաւարշ Քրիսեան, Վարազ Փողարեան, Վարդգէս Աղաբէգեան, Միհրան Նաքաչեան, Գ. Գասապեան, Ս. Պողոսեան, Յ. Խուպէսէրեան եւն.: Քանի մը օտարներ ալ մասնակցած են անոր՝ կազմը լրացնելու համար: «Պալթա Կիման» Պոլսոյ միջազգային մըր-

ցումներուն մասնակցելով, երկրորդ հանդիսացաւ: «Կալաթա Սէրայ»ին յաղթեց 5 կօլով, հաւասար մնաց «Մօտա Բլիւպ»ի եւ անդլնաւազներու Imogen խումբերուն հետ, պարտուեցաւ միայն «Գատրքէօյ»էն, որ իր ատենին Պոլսոյ ամէնէն զօրաւոր խումբն էր:

ՍԱՆԹՐԱԼ (Ղալաթիա).— Պոլսոյ առաջին հայ Ֆուլթաօլի խումբերէն մէկը, հիմնուած Վահան Չերազի կողմէ. կազմուած էր Կեդրոնական վարժարանի սաներէն: Իր անդամներուն մէջ կային Եղիշէ Քաջունի, Հայկ Սէմէրճեան, Կարապետ Գաղանճեան՝ Գանտիտ մականուանեալն, Կոպեռնիկ եւ Արտաշէս Սէֆէրեան եղբարք, եւն.:

ԳՈՒՄ - ԳԱՓՈՒ.— Համիտեան լուծին տակ շնչող մեր սակաւթիւ մարզական կորիզներէն մէկն էր «Գում Գափուկ» որ տուաւ տիպար մարզիկներ: «Տորք»ի կազմութենէն յետոյ միացաւ անոր: Հիմնադիրներէն կը յիշուին Յակոբ Գափուճեան, որ Հ. Մ. Ը. Մ. ի կազմութենէն վերջ միշտ ալ բերած է իր աշխատանքի բաժինը: Նմանապէս Ս. Պապիկեան եւ ուրիշներ: Պոլսոյ մէջ կազմուած Ֆուլթաօլի Ա. խումբերէն մէկն եղաւ, որ յունական եւ այլ խումբերու հետ մրցելով յաջողութիւններ ձեռք բերած էր:

ՏՈՐՔ (Գում-Գարու).— «Տորք»ը կազմուած է 1908ին Կեդրոնականի սաներուն կողմէ: Հիմնադիրներն են եղած Վահան Չերազ, Եղիշէ եւ Եղնիկ Քաջունի, Կ. Գաղանճեան, Վարադ Փողարեան, Պօղոս Շապոյեան, Հայկ Սէմէրճեան, Ասատուր Պոթիկեան, Գաբրիէլ Մաճառեան, Վահրամ Մատթէոսեան: Անդամակցած են Հայկ Ճօլօլեան, Տիգրան Սաչատուրեան, Լեւոն Յակոբեան, Տատ եւ Միջի Տատեաններ, Ս. Պապիկեան, Կարդոս Յարութիւնեան, Մ. Մալումեան, Հայկազ Աբէլեան, Կարապետ Պօյաճեան, Չարմայր Իերձակեան, Չարմայր Այճեան, Ա. Այճեան, Յարութիւն Սէմէրճեան, Յարութիւն Գողորեան, եւն.:

«Տորք»ի անդամները, Պոլսոյ զանազան արուարձաններէն ըլլալով հանդերձ, իբր խումբի կեդրոն ընտրած էին Գում-Գափուկի շրջանը: Իր ծրագրին մաս կազմած են գլխաւորաբար Ֆուլթաօլը, լողալը, դաշտային խաղերը եւ արշաւանքները: Իր կիրակնօրեայ հանդիպումները կատարած է ընդհանրապէս Բրօթիի, Գատրղիւղի, Պէյքօղի, Մազրիղիւղի, Պէօյիւք տէրէի եւ Պալթալիմանի դաշտերուն վրայ: «Տորք»ի անդամներուն մէջ ընկերական կապը շատ զօրաւոր եղած է եւ դրեթէ ոչ մէկ ներքին վէճ ունեցած են: Ամէնքն ալ դործը տարած են զմայլելի նուիրումով եւ ընկերասիրութեամբ:

«Տորք»ը եղած է Ֆուլթաօլի առաջնակարգ խումբ մը: Ան ճակատած է դրեթէ բոլոր համբաւաւոր Ֆուլթաօլի խումբերուն հետ, որոնց վրայ



*Պոլսոյ երբեմնի Արաքս Փուլթպոլի խումբը կազմուած 1908ին ,
լուսանկարուած 1910 Ապրիլին :*

Նստած՝ ձախէն աջ

*Համազասպ Փանոսեան, Հայկ Ճօլօլեան, Աստիկ Ասատուրեան,
Բարսեղ Յովհաննէսեան, Պօղոս Նասիպեան :*

Ծունկի՝ ձախէն աջ

Մուրատ Մուրատեան, Միհրան Մրտիկեան, Պետրոս Սալաեան :

Ոտքի՝ կեդրոնը

Գարեգին Դարբինեան, Լեւոն Նառլեան, Օննիկ Փրէնկեան :

Զախ եւ աջ՝ քաղաքային տարագով

Հայկ Մրտիկեան եւ Յովհ. Պէօրէքեան (երկուքն ալ սպաննուած)

չատ անդամ ջախջախիչ յաղթանակներ է տարած եւ դասուած է մի-
ջաղգային լաւագոյն խումբերէն մին :

« Տորք » ի դործունէութիւնը փակուած է ընդհ. պատերազմի
նախօրէին Ալէմտաղի կատարուած մեծ արշաւանքէ մը վերջ :

Տորքը ձեռնարկած էր նաեւ առողջապահական դասախօսութեանց :
1911 Դեկտ. ին առաջին դասախօսն էր Եզնիկ Քաջունի : Տորքի Ֆուլթ-
պօլի տարազին զոյնը եղած է սեւ ու կարմիր :

ԱՐԱՔՍ (Բերա) .— Պատերազմէն առաջ կազմուած Ֆուլթպօլի
լաւագոյն խումբերէն մէկն էր «Տորք»էն վերջ : Ունէր ահումբ մը :
Իր կիրակնօրեայ փորձերը կը կատարէր, մինչեւ Օսմ. սահմանա -
դրութեան հռչակումը, Շիշլիի պուլկարական հիւանդանոցի հանդի -
պակաց դաշտագետնին վրայ, որ յետոյ կոչուեցաւ «Ազատութեան Բը -
լուր» : Իսկ անկէ վերջ Քեաղատհանէի, Պօյաճըզիւղի եւ Պալթալի -
մանի մարդապետիններուն վրայ :

«Արաքս»ը իբրեւ Ֆուլթպօլի զօրաւոր խումբ, շուտով հռչակ հանեց
եւ «Տորք»ի կողքին եղաւ Երկրորդ հայ խումբը, որ կրցաւ օտար խումբ-
երու հետ փայլուն հանդիպումներ ունենալ : Արաքսի գլխաւոր ան -
դամներն եղան Օննիկ Ֆրէնկեան, Գարեղին Դարբինեան, Հայկ Ճօլօլ-
եան, Լեւոն Նարլեան, Համազասպ Փանոսեան, Պօղոս Նասիպեան, Տատ
եւ Միջի Տատեաններ, Սալայեան, Մուրատ, Աստիկ, Հայկ Մրտիկ -
եան եւ Պէօրէքճեան (այս վերջին երկուքը զինադադարի նախօրեա -
կին Պոլսոյ մէջ, նոյն օրն ու նոյն վայրին մէջ սպաննուեցան անգլ :
օդանաւերու նետած ումբերէն) : Ասոնք ամէնքն ալ կը կազմէին Առա -
ջին խումբը : Սարգիս եւ Յովհաննէս Խուպէսէրեան,
Չարմայր Դերձակեան, Անդրանիկ Արծիւեան, Եղուարդ Ճէզիրեան,
Վաղինակ եւ Արմենակ Խաչիկեան, Արամ Մրտիկեան եւ ուրիշներ կը
կազմէին Երկրորդ խումբը :

Հայկ. Ողիմպիական մրցումներուն կանոնաւորաբար մասնակցած
եւ լաւ յաջողութիւններ ունեցած է :

ՍԿԻԻՏԱՐ .— 1906ի սկիզբները Ռոպըրթ Քօլէճի եւ Պարտիզակի
Ամերիկ. Վարժարանի ու Պէրպէրեանի աշակերտներու միացումով
Ֆուլթպօլի խումբ մը յառաջ եկած է, որ օտար խումբերու հետ մրցում-
ներ կատարած եւ իր ժամանակին լաւագոյն խումբերէն մէկը եղած է :
Մարզարան չունենալուն պատճառաւ Սկիւտարի Գալֆայի - պաղի
դաշտին վրայ մրցումներ կը կատարէր : Իբեւ յաջորդող խումբերը
եւս նոյն դաշտը օգտագործեցին : Իր անդամներէն կը յիշուին Էքսէր -
ճեան, Գոնարաճեան եւն. :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ



ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1908 — 1915)

Բռնապետական շրջանին, հակառակ վարչաձևի խստութեանց, սկսող այլ շարժումը բնականաբար ազատ թափ սխախտանալով 1908ի Յուլիսէն վերջ, երբ Օսմ. Մահմանադրութիւնն էր հռչակուած եւ հաստատուած էր ազատ կարգ ու սարք մը :

Մասնաւորապէս Թրքահայոց համար կը սկսէր նոր շրջան մը, — քաղաքական, մշակութային ու ազգային տեսակէտով :

Մարդական կեանքը, իր կարգին, կ'ընդլայնէր իր հարիւրները: Պոլսոյ թաղերուն մէջ արդէն իսկ զոյութիւն ունեցող խումբերը անդամներու թիւի զգալի յաւելումներ կ'ունենային: Կը կազմուէին նոր խումբեր: Մրցումներն ու հանդիպումները աւելի ազատ ու աւելի յաճախակի կը դառնային: Ճիշդ է, որ այդ օրերուն, իբրեւ մարդական շարժում, գլխաւորաբար Փութայոլը կար: Ու միայն Բոպէրթ Քոլէճի տղաքն ու մէկ երկու ուրիշ անձեր էին որ կը կիրարկէին մարդանքի միւս ճիւղերը: Բայց, անոնք սխախտ կազմէին կորիզը՝ այդ ճիւղերը տարածելու եւ ընդհանրացնելու համար: Ամէնէն առաջ հարկ էր սրբադրել սխալ ըմբռնում մը: Մարդանքին նպատակը բիրտ ուժը չէր բնականաբար: Ոչ այլ՝ միայն Փութայոլը: Ֆիզիքական ներդաշնակութիւն, նկարագրի կադմութիւն, մոլութիւններու խափանում, փոխադարձ յարդանք, մրցման մէջ՝ արդիւնքովը շահագրգռուել, եւ ոչ թէ յաղթելու բնապղին զոհացում տալ, — պարագաներ էին ասոնք, զորս հարկ էր ուսուցանել, պարզել եւ ընդհանրացնել :

Որով եւ հարկ էր աշխատանքը դասաւորել ու ծրագրել, ու անվհատ կերպով ընթացք տալ անոր: Ուղղութիւն մը եւ մղիչ մը անհրաժեշտ էր, ուրեմն :

Ահա այդ շրջանին էր, որ Շաւար, Քրիսեան՝ իր ընդունակութիւններէն, ներքին մղումէն, նպատակին հանդէպ իր ունեցած խորունկ սէրէն, ինչպէս նաև արդէն իսկ զոյութիւն ունեցող ուրիշ ուժերէ ստացած թելադրանքներէն ու դտած քաջալերանքներէն մղուած, կը դառնար թափ ստացող շարժման ազդարարը, մարմնակրթական աշխատանքը ասպարէզ ընտրելով իրեն: Այդ դեռնին վրայ իր խորհրդատուներն ու գործակիցներն էին Յակոբեան եղբայրները, Յ. Թ. Հինդլեան, Եղնիկ եւ Եղիշէ Քաջունի, Վահան Չերազ, Արամ Նիկո-

դոսեան, Յ. Մերձանօֆ, Յ. Ճ. Սիրուենի, Վ. Ս. Փափազեան, Բ. Կէօղիւպէօյիւքեան, Մարտիրոս Գուլումճեան, Վ. Փողարեան, Մկր. Մկրեան եւ ուրիշներ, որոնք շարժումին առանցքը պիտի կազմէին, աւելի յետոյ, պատերազմէն վերջ, Հ. Մ. Բ. Մ. ի խարխախը դառնալով՝ ուրիշ կարեւոր ուժերու հետ :

Պոլսոյ այս շարժումը կը տարածուէր նաեւ դաւաւր, ուր, ինչպէս տեսանք նախորդ պլուխին մէջ, տեղ տեղ միութիւններ կազմուած էին :

Այսպէս, մարդական միութիւններ ունէին կամ ունեցան Ատափաղար, Պարտիզակ, Իղմիր, Տրապիզոն, Վասպուրական, Կարին, Տիվրիկ, Կեսարիա, Երզնկա, Խարբերդ, Չմշկածագ, Ատանա, Հաճըն, Մարդուան, Սերաստիա եւ այլ վայրեր :

Ասանցմէ Իղմիրը միշտ մարդական ուժեղ շարժում մը ունեցաւ : Ատանան, թափ տալու համար մարմնակիրթանքին, մասնաւոր ուսուցիչներ ապահովեց Պոլսէն (նախ՝ Վարադ Փողարեան, ու յետոյ՝ Մատթէոս Զարիֆեան, տարաբախտ քերթողը) :

Մարմնակիրթական շարժումը հովանաւորութիւն դտաւ նաեւ մտաւորական տարրերու կողմէ : Հայ մամուլին մէկ մասը դօրավիզ եղաւ անոր : Իսկ ազդային իշխանութիւններէն՝ Ուսումն. խորհուրդը, Արամ Նիկողոսեանի եւ Յ. Հինդլեանի ջանքերով, մարզանքը մտցուց դպրոցներու կրթ. ծրագրին մէջ :

Գաւառի մէջ եւս, հոն ուր տեղական թերթեր յոյս կը տեսնէին, մարմնակիրթական շարժման մասին կը հրատարակուէին գրութիւններ, նպաստելու համար շարժումի տարածման : Օրինակ, Կարնոյ Յառաջը, եւ Խարբերոյ Եփրատ թերթը :

Այս բոլորը, բնականաբար, հիմնական փոփոխում մը դրին տիրոջ բմբռնումներուն, մարդական ձեւերուն, հանրային վերաբերումին ու շարժումի մասին տիրող տրամադրութեան մէջ :

Շ. Քրիսեան, բլլայով մարդանքի ուսուցիչ, դանադան վարժաւաններու մէջ, իր առջեւ ունէր պատանիներու թարմ խմոր մը՝ անհրաժեշտ ձեւով կազմելու եւ թրծելու համար դայն : Անկէ դատ, ինք՝ ինչպէս նաեւ Գրիգոր Յակոբեան, Գրիգոր Մերձանօֆ, Քաջունի, Գարյօ Շահինեան եւ Մեր. Մկրեան Պոլսոյ դանադան թաղերու մարդական միութիւններուն կ'այցելէին կանոնաւորաբար, դասախօսութիւններ կատարելու համար :

Ստեղծուած ատ մթնոլորտին մէջ, սակայն, չափազանց դժուար էր պահասը սարքերանի մը, որ կեդրոնաձիգ ու մղիչ ազդակը պիտի բլլար : Այդ պահանջը դժացած էին վարիչ տարրեր, ինչպէս եւ՝ մարդական շարժման մօտ մտաւորականներ, որոնցմէ մասնաւորապէս Պ. Յ. Ճ. Սիրուենին որ իր անվերապահ աջակցութիւնը լայնօրէն պի-

տի բերէր : Նիւթական (Յակոբեան եղբայրներ) ու բարոյական այս
օժանդակութեանց շնորհիւ Շ. Քրիսեան հրատարակ կը հանէր Մարմ-
նամարզը, 1911 Փետրուարին, զայն շարունակելով մինչեւ 1914 :

Աւելորդ է ըսել, որ զուտ մարմնակրթանքի նուիրուած այս սար-
բերականին դերը բնականաբար մեծ եղաւ շարժումին աստիճանական
դարդացման ու բարելաւման տեսակէտէն : Եւրոպայի մէջ իր ձեռք
ծրած ծանօթութիւններուն, ինչպէս նաեւ իր կարող աշխատակիցնե-
րուն ու գործակիցներուն շնորհիւ, Քրիսեան իր թերթը դարձուց
ընդհանուր ուղեցոյց մը, որ օրի նորութիւններու մղելով մարդական

Այսպէս, դեկտեմբերու այս հոյն էր, որ ծրարեց ու հրատար-
ակ դրաւ մրցահանդէսներու դադափարը՝ Պոլսոյ մէջ (Գատը Գիւղ,
Իւնիօն քիւլ) :

միութիւնները :

Այս մրցահանդէսները, որոնց ասաջինը տեղի ունեցաւ 1911 Մա-
յիս Աին, սղեկոչումն էին, կարծէք, անցեալ դարերուն, երբ մեր
նախնիքները, հայրենիքի մէջ, Նաւասարդեան խաղեր կը կազմա-
կերպէին ...

Ձեռնարկը ոչ միայն դրաւ իջ, այլեւ՝ ողբերիչ էր, անշուշտ,
երբ, վեց դարերու ստրկութենէն վերջ, մեր ժողովուրդի գաւազնե-
րէն մաս մը՝ ասոյց եւ ջլատինդ, համաչափ ու խրոխտ տողանցքներ
կը կատարէր՝ խոնուած հազարաւոր բողմութեան առջեւ, եւ իր
մկաններուն ուժը մրցումի կը դնէր բաց դաշտին վրայ ...

Այս մրցահանդէսները, ուրեմն, որոնք «Հայկական Ողիմպիա ...
կաններ» սրակուեցան, ամէն տարի տեղի ունեցան, — մինչեւ ընդհ-
պատերազմ (չորս հատ) : Անոնց արդիւնքները կ'երեւին ներկայ հա-
տորին այն դլուխին մէջ, որ կը պատկերացնէ բոլոր հայ մրցահան-
դէսներուն թուականները, չափանիշները եւ ախոյեանները :

Մրցահանդէսի դադափարը այնքան ընդհանրացած, ու հայ մկա-
նին ուժը ցոյց տալու արդար փափաքը այնքան զօրացեր էր, որ
1912ի Սթոքհոլմի միջազգային ողիմպիականին Պոլսէն հոն կը զըր-
կուէին այդ օրերու մեր յաւազոյն մարզիկներէն Մկր. Մկրեան եւ
Վ. Ս. Փափաղեան :

Ընդհ. պատերազմէն առաջ էր, դարձեալ, որ սկաուտական
շարժման նախաքայլը կ'առնուէր մեր մէջ :

Աւելի լայն դադափար մը տալու համար այս մասին, մեր ներ-
կայ հատորին այս դլուխին մէջ կը հրատարակենք Հ. Մ. Ը. Մ.ի
Պուլկարիոյ շրջանի սկաուտ. ընդհ. պետ Ներսէս Աստուածատուր -
եանի շահեկան յօդուածը :

Աւելցնենք, որ, իբրեւ բանակում, Գում - Գափուի «Տորք»ին
երկօրեայ արշաւն է որ տեղի ունեցած է, 1914 Յուլիսին, Վարդա -



ՇԱԻԱՐՇ ՔՐԻՍՏԻԱՆ

վառի տօնին առթիւ, դէպի Քեաղըտհանէ, 60 հողիով: «Տորք»ին կ'ընկերանային նոյն վայրի «Ասպարէզ» լսարանի անդամները: Իսկ Մազրի դիւղի «Ա.Փսոնը»՝ Ալէմտաղի: Այդ բանակումները կատար — ուած են ճիշդ սկաուտական ոգիով:

Մինչ Պոլսոյ եւ դաւառներու մէջ մարդական շարժումը այսպէս թափ կը ստանար, Կովկասի մէջ որ եւ է ձեռնարկ չէր կատարուեր: միայն Գանձակի ու Ղարաբաղի մէջ էր որ Գրիգոր Մերձանօֆ կազ — մած էր մարմն. միութիւններ, որոնք դադրեցան դոյութիւն ունենալէ երբ յիշեալը հեռացաւ անկէ:

ՄԱՐՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

.....

1908 — 1915

Ստորեւ այբուբենական կարգով կը յիշենք նախ Պոլսոյ կազմակեր — պութիւնները, ապա դաւառական ու արտասահմանեան: Անշուշտ, լիա — կատար չեն մեր հաւաքած տեղեկութիւնները, որովհետեւ գործին հետ կապուած շատ մը իրազեկ մարդիկ չկրցան մեղի հարկ եղած նիւթերն հասցնել: Ամէն պարագայի, անկախ մեր կամքէն, ինչ որ հաւաքած ենք, կ'ուզենք հանրութեան սեփականութիւնը դարձնել Հ. Մ. Ը. Մ. ի Քսանամեակին առթիւ, իբրեւ նախնական կմախք, որպէսզի յետագա — յին աւելի դիւրին ըլլայ վաւերական աշխատութիւն մը մէջտեղ բե — րել: Այս ցանկին պատրաստութեան ատեն, օգտուած ենք մասնաւորա — բար Ռուսաստանի շրջանին օրկան «Արի»ի 1936ի բացառիկ թիւէն ուր նման աշխատանք մը կատարուած էր արդէն, որուն վրայ նոր յաւե — լումներ կատարած ու ընդլայնած ենք դայն:

ՊՈԼԻՍ ԵՒ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐ

Ա.Դ.Ա.Մ.Ա.Ն.Դ.Ա.Գ.ՈՐԾՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ. — Բերա, Թալիմհանէի ետեւը հաստատուած, աղամանդ յղկելու գործարանին հայ գործաւոր — ներէն կազմուած Փութպօլի խումբ մը. տղոց մեծ մասը «Արաքս»ին անդամներէն եղած են:

Ա.Հ.Ա.ՐՈՆԵԱՆ (Պէշիկթաշ). — Պատերազմէն առաջ Փութպօլի խումբ մը կար, որ երբեմն մրցումներ կ'ունենար Պոլսոյ դանազան խումբերու հետ:

Ա.Ն.Դ.Ր.ԱՆԻԿ (Սկիւտար). — Պատերազմէն առաջ ատեն մը դոյութիւն ունէր եւ կը զբաղէր Փութպօլով եւ արլեթիֆով: Իր հիմնադիրն ու ղեկավարն էր Սիմօն Սանթուրեան:

ԱՍՊԱՐԷՁ (Գուժ - Գափու) --- Լսարանական կենսունակ միութիւն մը, որ երբեմն մարզանքի ճիւղ մըն ալ ունեցաւ :

ԱՐԱԳԱԾ (Գուժ - Գափու), **ԱՐԱԳԱԾ** (Սկիւտար), **ԱՐԱՐԱՏ** (Գուժ - Գափու), որոնց մասին ստոյգ տեղեկութիւններ չունինք :

ԱՐԱՐԱՏ (Արդի Վարժարան, Նշան Թաշ) --- Ֆութպօլի այս խումբը կազմուած է 1912ին Արդի Վարժարանի աշակերտութեան կողմէ, նախաձեռնութեամբ Հայկ Ճօլօլեանի, որ նոյն դպրոցի աշակերտներէն եւ ապա ուսուցիչներէն եղած էր մաթեմատիքի, դժագրութեան եւ մարմնամարզի : Այս խումբին մաս կը կազմէին Սարգիս Խուսիսէրեան, Յ. Ագալըյըեան, Գէորգ Մահմուդեան (Հաճի), Պարոն-վարդեան Գրիգոր եւ ուրիշներ :

Արդի Վարժարանի ներքին շրջափակը դարձած էր մարզարան, իսկ ֆութպօլի վարժութիւնները դպրոցին շրջակայ դաշտերուն մէջ կը կատարուէին : «Արարատ» խումբը տուած է նաեւ Հայկ Ողիմպիականներու մասնակցող լաւ մարզիկներ :

Ֆութպօլի մրցումներէն զատ «Արարատ» մարմ. խումբը, տարե-վերջին կը կատարէր նաեւ դպրոցին աթլէթիք ախոյեանական մրցումները :

ԱՐԱՔՍ (Բերա եւ Շիշի), նախորդ շրջանին ծնունդ առնող ֆութպօլի այս խումբը, որուն մասին խօսած ենք նախորդ գլուխին մէջ, իր դոյութիւնը պահեց մինչեւ 1915, աւելի դօրացած նոր ուժերով, ու ֆութպօլի կողքին մշակելով նաեւ աթլէթիք փորձերը : Իր ծոցէն տուաւ Հայկ. Ողիմպիականներու մէջ յաղթական Վաղարշակ Վարժապետեանը (հեծելանիւ 1912 — 1913), Պօղոս Նասիպեան (քառորդ մղոն վազք 1912) եւ Արմենակ Խաչիկեան 800 եւ 1500 մէթր վազքերու մասնագէտ : 1911ի եղանակին համար Մազրի գիւղի միջազգային «Րումէլի վիկ»ին ֆութպօլի ախոյեանութիւնը շահեցաւ :

ԱՐԾԻԻ (Մաքրիգիւղ) .—

ԱՐԾԻԻ (Եէնի-Գափու) .— Կազմուած Գալուստ Արխանեանի ջանքերով եւ յետոյ մասնաճիւղ դարձած Գուրուչէչմէի «Արտաւազդ»ին :

ԱՐՏԱԻԱՁԴ ԱԿՈՒՄԲ (Գուրուչէչմէ) .— 1911 փետրուարին հիմը կը դրուի նախաձեռնութեամբ Վահրամ Փափաղեանի եւ Յակոբ Քրիսեանի : Իր մարզիկները 1911ի Ողիմպիականին իսկ կը շահին երկու Ա. մրցանակներ : Ատեն մը իր մասնաճիւղն ալ ունեցաւ Ենի Գափուի մէջ : Ան յաջողեցաւ իր անդամներէն Վահրամ Փափաղեանը Սթօքհոլմ դրկել 1912ի Միջազգային Ողիմպիականին մասնակցելու համար : Այս խումբի գրադումներն են եղած ֆութպօլ, աթլէթիք եւ լողալ :

ԱՐՏԱԻԱՁԴ (Եէնի Գափու) : Այս աղումբը կազմուած է 1912ին, Գալուստ Արխանեանի նախաձեռնութեամբ, իբր Վոսփորի արտա-լազդին մասնաճիւղը :

ԲՐՕԹԻ (Հայ կղզի) .— Պոլսոյ երբեմնի լաւագոյն խումբերէն մէկը՝ որ կազմուած է Վահան Չերագլի պատրաստած սերունդի տղաներէն : Հայ մարզական աշխարհին տուած է շատ մը կարող Փութպոլիստներ .— Տ. Սոյեան, Չ. Մաճառեան, Լ. Պաքրճեան, Յովհ. Կորեան, Ե. Սաչատուրեան, Սէրվեան եղբայրներ եւն. :

ԲԵՐԱՅԻ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ .— Սահմանադրութենէն վերջ, 1910ին առաջին հայ մարմնամարզարանն էր, ներկայ Բօսմոկրաֆ սինէմային տեղը, ուր շուէտական եւ գործիական դրութեամբ դանազան տեսակի մարզանքներ կ'ըլլային :

Մարզարանը շուէտական խաղերու համար իբր ուսուցիչ ունէր Շաւարշ Քրիսեանը, որուն կողքին կային նաեւ փորձ ու կարող այցելու մարզիչներ գործիական մարզանքներու, ըմբշամարտութեան եւն. ի համար :

Բերայի մարմնամարզարանին վարիչներուն մէջ կը գտնուէին Յ. Սաւայեան, Ալեքսանդր Խանճեան, իսկ լաւագոյն ուժերուն մաս կը կազմէին Լեւոն Յակոբեան, ըմբիչ Երուանդ, Հայկ Դօլօլեան, Հայկ եւ Արամ Մրտիկեան, Կարդոս Յարութիւնեան եւն. :

ԵՌԱՆԴ (Նիկողոսեան վարժարան) .— Նիկողոսեան աղջկանց վարժարանի սանուհիներուն կողմէ 1913ին հիմնուած մարմնամարզի իզական միութիւն մը : Ունեցած է 60ի չափ անդամուհիներ :

Մարմնամարզի դասերը կ'աւանդէր Շաւարշ Քրիսեան :

ԷՍԱԵԱՆ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԻԻՆ (իզական) .— Պոլսոյ մէջ, առաջին իզական մարմնամարզական միութիւնը, կազմուած 1911 Մայիսին Շաւարշ Քրիսեանի ջանքերով, Էսաեան Սանուց մշակութային եւ բարենպատակ միութեան կողքին : Մարմնամարզական իր առաջին մասնախումբը բաղկացած է հետեւեալ անդամուհիներէ, Օրիորդներ Աղնիւ Կարապետեան, Աղէիւ Մերտինեան, Եւնիկէ Հաճեան, Զապէլ Համբիկեան եւ Կատարինէ Քիւրթնեան :

ԷՍԱԵԱՆ (Բերա) .— 1910 — 11ին Մանչերու վարժարանին տղոցմէն կազմուած Փութպոլի խումբ, որուն մաս կազմած են Արտաշէս Սէմէրճեան, Հրանդ Էքնաեան, Ժիրայր եւ Տրդատ Զիվանեան, Վահրամ Գուլումճեան, Արամ Փէքմէղեան, Վահագն Պալըքճեան եւ ուրիշներ :

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ (Մաքրի գիւղ) .— Լսարանական միութիւն մը՝ որ իր մարզական ճիւղն ալ ունեցաւ Փութպոլի խումբով եւ հովանաւորեց «Տիտան» մարզական միութիւնը :

ԺՈՂՈՎՈՒՐԴ (Սամաթիա) .— Լսարանական Միութիւն մը, որ 1911 մայիսին մարզական ճիւղ մըն ալ աւելցուց իր կազմին վրայ : Երբեմն հովանաւորած է «Վահագն» մարզական Միութիւնը :

ԻԺԻ (ԱՌՈՂՁՈՒԹԻԻՆ) .— Աղջկանց երկրորդ մարմնամարզական

ակումբը կազմուած է 1912 Յուլիսին Սկիւտարի մէջ, քանի մը օր -
խորդներու նախաձեռնութեամբ, Իժի (առողջութիւն) անունով :

ԿԱՅԾԱԿ (Սկիւտար) .— Ֆուլթաօլի խումբ մը 1912ին :

ԿԻԼԻԿԻԱ (Գոլմ Գափու) .— 1911ին գոյութիւն ունեցող Ֆուլթաօ-
լի խումբ մը :

ՀԱՅ ԱԿՈՒՄԲ (Գատը գիւղ) .— Խիստ կենսունակ միութիւն մը,
որ պատերազմէն առաջ տարիի մը չափ ունեցած է իր մարզական ճիւ-
ղը :

ՀԱՅ ԵՐԿՍԵՌ ՄԻՈՒԹԻՒՆ (Շիւլի) .— 1911ի Մայիսին մարզական
ճիւղ մը կցեց իրեն :

ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱՐԱՆ (Սկիւտար) .— «Բաֆֆի»ի մնացորդ-
ներէն կազմուած պատերազմէն առաջ՝ 1912ին , գլխաւորութեամբ
Մկր . Մկրեանի : Հայ մարզարանը կեդրոն ունէր Զիֆթլիկի պարտէ-
ղը : Մկրեան շարունակած է ղեկավարել զայն մինչեւ 1913ի վերջերը ,
ապա իր Անգլիա մեկնումով անոր հողն ստանձնած է Գրիգոր Յակոբ-
եան , որ մինչեւ 1915 ձեռնհասօրէն վարած է :

Գրիգոր Յակոբեան նախաձեռնարկ եղաւ «Հայ Մարմնամարզա-
չանի» տղոցմով սկստուական խումբ մը կազմելու , «Հրատ»ի խում-
բէն զատ :

Անդամներէն կը յիշուին ողբացեալ Թահթաճեան Բազրատ , որ
Անգլիացի նաւաստիի մը հետ կռիւմարտի ատեն մեռաւ ,
Հայկ Պասմաճեան , որ ձողով բարձրութիւն ցատկելու մէջ ախոյե-
նութիւն ստացաւ թէ օտար եւ թէ Հայկ . Ողիմպիականներուն , Նու-
պար Ճէլալեան , Շահան Կիւրճեան , Արտաշէս Եփրեմ , Ժ . եւ Զ .
Սմբատեան , Սեփոն Սինէմեան , Սարգիս Մկրեան , Լեւոն
Պէշիրեան եւ Սուրէն Պոստանճեան՝ որ Հ . Մ . Ը . Մ .ի կազմութեան
ատեն Սկիւտարի մասնաճիւղի ամէնէն շատ աշխատողներէն մէկն ե-
ղաւ :

ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ .— 1911ին Սկիւտարի մէջ
հիմնեց զայն Պէրպէրեանի աշակերտներէն Գառլօ Շահինեան որ նա -
խապէս կը ղեկավարէր «Հրատ» անունով մարզական ակումբ մը :
«Հայորդի»ն կազմուած էր գլխաւորաբար դպրոցական պատանիներէ ,
որոնցմէ կը յիշուին Հ . Մ . Ը . Մ .ի Պուլկարիոյ շրջանի ներկայ վա-
րիչներէն Ներսէս Աստուածատուրեան , Մարտիկ Շիշմանեան , Հայ-
կազուն Կոթողեան (այժմ Հայաստան եւ սկստուապետ) , Հրանտ
Պարսամեան , որ Հ . Մ . Ը . Մ .ի շրջանին ալ իր մարզական աշխա-
տութեան բաժինը բերաւ եւ ներկայիս ալ Թուրքիոյ մէջ Ֆուլթաօլի
հայ ակումբ մը կը վարէ , Սեպուհ Գարազաշեան , Յարութիւն Գէորդ-
եան , Յարութիւն Գալփաքճեան , Ստեփան Տէվլէթեան եւն . : Հայոր-
դիներու Ընկերակցութիւնը ունեցաւ նաեւ իր սեփական մարզարանը :

Թէնիսը, որ ծանօթ չէր եւ կը խաղցուէր միայն Ամերիկեան վարժարաններուն մէջ, ինքն ալ որդեգրեց եւ թէնիսի դաշտ մը ունեցաւ եւ Հ. Մ. Է. Մ. ի կազմութենէն վերջ պատրաստեց արժէքաւոր ախոյեան մը՝ Վահրամ Շիրինեան, որ Թուրքիոյ, Պուլկարիոյ եւ Ռումանիոյ մէջ առաջնութիւն շահեցաւ : Իր անդամներէն շատեր մասնակցեցան 1913 եւ 14ի Հայկ. Ողիմպիականներուն : Հիմնադիր Գ. Շահինեան՝ ուժով բարձրութիւն ցատկելու առաջնութիւն շահեցաւ երկու տարի շարունակ ինչպէս եւ 1914ին շահեցաւ կեցած բարձրութիւն ցատկելու մրցումը : 1915ի կառավարական հրամանով մարզարանը դոցուեցաւ եւ իր անդամներն ալ ցրուեցան միւսներուն պէս : Հ. Մ. Է. Մ. ի կազմութեան միջոցին Հայորդիներու Ընկերակցութիւնը իր մեծ բաժինն ունեցաւ եւ առաջին օրէն արամադրեց իր մարզարանը եւ միացաւ անոր :

ՄԱՍԵԱՅ ԱԿՈՒՄԲ (Գատը դիւղ) .— Մշակութային միութիւն մը, որ երբեմն մարզական ճիւղ ալ ունեցած է պատերազմէն առաջ :

ՄԱՍԻՍ (Գատը դիւղ) .— Եռանդուն անդամներէ կազմուած մարզական միութիւն մը, հիմնուած 1908ին, եւ ատեն մը դասուած Պոլսոյ լաւագոյն խումբերուն կարգը : Իր Փութպօլի խումբը 1911ին Փութպօլի ախոյեան հռչակուեցաւ Բումէլի Լիկին մրցումներուն մէջ : Իր մարզիկները 1911ի Ա. ողիմպիականին կը շահին երկրորդ մրցանակ մը : Վարչութեան մաս կը կազմէին Թէրճէմանեան, Տամլամանեան, Թիւթիւնճեան, Նախնիքեան, Գալէնտէր :

Իսկ ընդհ. ժողովի դիւանը կազմուած էր հետեւեալներէ : Գալէնտէր, Սարաֆեան, Խուպէսէրեան, Մանուկեան :

ՄԱՍԼԱՔ (Շիւբ) .— Պատերազմէն առաջ կարճ ատեն մը դոյութիւն է ունեցած իբրեւ Փութպօլի խումբ :

ՄԱՔՐԻԻԲԷՕՅ (Մաքրի դիւղ) .— դոյութիւն ունեցած է նոյնիսկ սահմանադրութենէն առաջ : Կազմուած է կեդրոնական վարժարանի Մաքրիդիւղի տղոց նախաձեռնութեամբ :

ՄԽԻԹԱՐԵԱՆ (Գատը դիւղ) .— Կազմուած համանուն վարժարանի սաներէն : Միխիթարեանները նոյնիսկ համիտեան շրջանին դանց չէին ըրած մարմնակրթութիւնը, հասցնելով լաւ մարզիկներ : Յայտնի դերասան Վահրամ Փափաղեանը եղած է միաժանակ ճարպիկ մարզիկ մը : Ունէր իր Փութպօլի խումբը :

ՅԱՌԱՋԻՄԱԿԱՆ (Սկիւտար) .— Սկիւտարի մէջ գործող այս միութիւնը, որ յետոյ միացաւ «Րաֆֆի»ին, 1912ի սկիզբը սիօնի ճիւղ մը կցեց իրեն, նպատակ ունենալով քաջալերել Փութպօլը, թէնիսը, պասկէտ պօլը, որսորդութիւնը, դաշտային խաղերը, հետիոտն երկար պոռոյտները : Գործադիր մարմնին մէջ կային Մ. Մկրեան, Հայկ

Ճիզմէճեան, Արամ Նիկողոսեան, Հայկ Յովակիմեան, Զարեհ Մեծա-
տուրեան, Կ. Ծահրնեան, Գ. Ուշագլեան եւ այլն :

ՆԱՐՊԷՅ (Պէշիկթաշ) .— Ապրած է կարճ շրջան մը պատերազմէն
առաջ :

ՆՈՐ ԴՊՐՈՅ (Բանկալթի) .— Հինդէանի եւ Մալաթեանի հիմնած
այս կրթարանը միակն է եղած որ լրջօրէն որդեգրած է մարմնակրթ-
թանքը իբրեւ դաստիարակութեան անմիջական միջոց : Իր սաները
ունեցած են սկաուտական եւ ֆութպօլի խումբեր :

ՇԱՆԹ (Օրթապիւղ) .— Կը կազմուի 1912ին Գրիգոր Յակոբեանի
ջանքերով : Առաջին ատիւր ունեցած է 30ի շափ անդամներ :

ՇԱՐԺՈՒՄ (Եէնի Գաբու) .— Հիմնուած 1911ին եւ նուիրուած նո-
րահաս սերունդի մտաւոր եւ ֆիզիքական դարգացման :

ՈՐԲԱՆՈՅ (Գուժ-Գաբու) .— Հիմնուած Գալուստ Արխանեանի
ջանքերով եւ դիւսաւորաբար որք տղոցմէ բաղկացած : Յետոյ ձուլուե-
ցաւ Գուրուչէշմէի «Արտաւազդ»ին կողմէ կազմուած մասնաճիւղին
մէջ :

ՊԵՐՊԵՐԵԱՆ (Սկիւտար) .— 1912ին Բիւղանդ Կէօղիպէօյիւկեանի եւ
դպրոցի փոխ-տնօրէն Արամ Նիկողոսեանի նախաձեռնութեամբ կազմը-
ւած է «Մարգասիրաց» ընկերութիւն մը : Դպրոցին սարքած «Նաւա-
ւասարդեան օրեր»ը դիւսաւորաբար նուիրուած էին դաշտային մրցում-
ներու եւ մարզանքի : 1922էն յետոյ, երբ այլեւս Հ.Մ.Ը.Մ.ի մասնա-
ճիւղեր չէին կրնար դոյութիւն ունենալ Պոլսոյ մէջ, Պէրպէրեանի սա-
ները իրենց մարզական խումբը կազմեցին : Պասքէթ-սօլի խումբ մըն
ալ ունէր Պէրպէրեանը :

ՍԱՆԹՐԱԼ (Ղալաթիա) .— Այս անունով, երկրորդ անգամ ֆութ-
պօլի խումբ մը կազմուած է 1910—11ի շրջանին, Կեդրոնականի ու
սանողներուն կողմէ :

ԲԱՑՅԻ (Սկիւտար) .— Համանուն լսարանական միութեան կըց-
ուած մարզական միութիւն մը, որուն շունչ կուտար հայ լաւագոյն
մարզիկը Մ. Մ կըրեան :

ՌՈՊԸՐԹ ՔՈԼԷՃԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ .— Անպաշտօն միու-
թիւն մը կարելի է նկատել Ռօպըրթ Քոլէճի հայ ուսանողութիւնը,
որովհետեւ այդ անունով առանձին խումբ դոյութիւն չէ ունեցած : Եւ
սակայն Ռօպըրթ Քոլէճը հասցուցած ըլլալով մեր մարզական իրա-
կանութեան մէջ ամէնէն պատկառելի արժէքները, հայ մարզական
Մարմինները՝ Ողիմպիականի կազմակերպիչ յանձնախումբը կամ
«Մարմնամարզ» թերթը, միշտ նկատի առած են զայն իբր հեղինա-
կաւոր հաւաքականութիւն մը, եւ միշտ հրաւիրած են զայն, զանա-
զան հարցերու շուրջ կատարուած խորհրդակցութեանց :

Այսպէս, 1911ին, Ռօպըրթ Քոլէճի ուսանողութեան անունով, Ա.

Ողիմպիական մրցումներու կազմակերպութեան խորհրդակցական ժողովին կը մասնակցէր Մարտիրոս Գուլումճեան, Քուլէճին ամէնէն փայլուն մարզիկներէն մին :

Նոյն հանգամանքով դարձեալ կը մասնակցէր 1912 փետրուար 18ին՝ «Մարմնամարզ»ի հրաւերով տեղի ունեցող ժողովի մը, ուր պիտի որոշուէր Աթոքհոլմի Միջազգ. Ողիմպիականին ղրկուելիք հայ ներկայացուցիչները :

Աւելցնենք որ, Մարտիրոս Գուլումճեան եղած է կատարեալ մարզիկ մը, փայլելով ոչ միայն Ողիմպիական խաղերու՝ այլ նաեւ գործիական մարզանքներու մէջ :

Քուլէճի ուսանողութեան տարիներուն կազմած էր «Dodge» մարմնամարզական միութիւն մը որուն ղեկավարն էր :

Ռոպրթ Քուլէճի հայ ուսանողութենէն կարելի է յիշել մեր լաւագոյն մարզիկներէն Բ. Կէօղիւպէօյիւքեան, Ա. Սալմասլեան, Յ. Ս. Փափաղեան, Վ. Ս. Փափաղեան, Մ. Մկրեան, Ս. Մկրեան, Ս. Սամուէլեան, եւն. :

ՍԱՀԱԿԵԱՆ (Սամաթիա). — Պատերազմէն առաջ կազմուած Սահակեան վարժարանի սաներէն : Ուժ կուտար Փութայօլի :

ՄԱՐՏԻՐՈՍ (Մաքրիգիւղ). — Հիմնուած 1911ին Գէորգ Քէրէստէճեանի եւ Երուանդ Նշանեանի կողմէ : Փութայօլի լաւ խումբ մը ունեցած է եւ մասնակցած հայկ. ախոյեանական մրցումներուն : 1912-13ին եւ Բ. հանդիսացած : 1913-14ին մասնակցած է միջազգային մրցումներուն եւ վեց խումբերու մէջ Ա. հանդիսացած է : Ունեցած է մինչեւ 50 անդամներ :

ՍԱՍՈՒՆ (Պալաթ). — Կը դործէր 1912ին :

ՎԱՀԱԳՆ (Սամաթիա). — Շուէտական մարզանքի, բուրգերու կազմութեան եւ նաեւ Փութայօլի նուիրուած միութիւն մը, որ շունչ առած է շնորհիւ հայ մարզական շարժման ղեկավարներէն մէկոյն՝ Գրիգոր Մերձանօֆի եւ աջակցութեամբ Լեւոն Գլրճեանի : Կազմուած է 1909ին Սամաթիոյ լսարանական միութեան կողքին, իրրեւ աւոր մէկ մասնաձիւղը : Ունեցած է 37 հետեւորդներ : Հետեւած է նոյն ձեւի մարզանքներու, ինչ որ «Տիտան» մարզական միութիւնը : Կը գործածէր նոյն տարազն ու գլխարկը : Ունէր իրեն յատուկ դրօշակը «Վահագն» միութեան վերտառութեամբ : Տեւած է 1909էն մինչեւ 1915 : Մասնակցած է բոլոր հանդէսներուն եւ ողիմպիական խաղերուն :

ՎԱՐԱԶԴԱՏ (Սամաթիա). —

ՏԻՏԱՆ (Մաքրիգիւղ). — Կազմուած 1909 Մարտին, նախաձեռնութեամբ Գրիգոր Մերձանօֆի, Մաքրիգիւղի լսարանական միութեան կողքին : Տեւած է մինչեւ 1915 եւ վեց ու կէս տարուան աշխատանքէ վերջ դադրած է : Անդամները մեծ մասամբ Մաքրիգիւղի պատանի-

ներն էին : Սկսած է 15 պատանիներով եւ հետզհետէ իր թիւը հասցուցած մինչեւ 43ի : Առաւելապէս հետեւած է շուէտական , չափական եւ գործիական մարզանքներու : Տուած է բեմական հանդէսներ եւ Նաւասարդեան խաղեր : Կատարած է արշաւներ Յաքաճըքի ճամբով մինչեւ Ալէմտաղի տասը օր վրաններու տակ ապրելով : Մասնակցած է Գատրգիւղի ողիմպիական խաղերուն 60 մարզիկներով «Վահագն»ի հետ խառն խումբով մը : Իր չափական մարզանքներով եւ բուրգերով արժանացած ներկայ հասարակութեան ջերմ դնահատանքին : Իբր տարալընդունած էր ճերմակ կարճ տաբատ մը , ճերմակ շապիկ եւ ամերիկեան նաւաղի պլխանոց : Ունէր իրեն յատուկ դրօշ մը Տիտան միութիւն վերտառութեամբ :

ՏՈՐՔ (Գուժ պափու) .— Տորքը որուն կազմութիւնն ու գործունէութիւնը տեսանք նախորդ պլուխին մէջ , իր պոյութիւնը շարունակեց մինչեւ ընդհ . պատերազմ :

Սահմանադրութեան շրջանին Ֆութպօլէն պատ ուժ տուաւ նաեւ ասիլէթիք խաղերու եւ Ողիմպիական մրցումներու մէջ ունեցաւ շատ մը յաջողութիւններ :

Իր անդամներէն Հայկ Սէմէրճեան , 1911ին Ա . Ողիմպիականի քառորդ մղոնը կը շահէր : Վարապ Փողարեան՝ երկաթի , ձողի , սկաւառակի , երկայնութիւն ցատկելու , նիզակ նետելու մրցումներուն մէջ յաղթական կը հանդիսանար , Հայկ Ճօլօլեան բարձրութիւն ցատկելու մէջ (1912) առաջնութիւն կը խլէր :

Տորքը կը շահէր նոյնպէս ակումբային դրօշարշաւը 1912ին : Ամէն տարի կը կազմակերպէր նաեւ իր ներքին ասիլէթիք եւ լողալու մրցումները :

Իր վերապրող անդամները , Զինադադարին , Հ . Մ . Ը . Մ . ի ամէնէն եռանդուն գործիչներէն եղան :

ՏՈՐՔ (Պէշիկթաշ) .— Ատեն մը պոյութիւն ունեցած է պատերազմէն առաջ , իբր մասնաճիւղ Գուժ-Գափուի համանուն միութեան :

ՏՈՐՔ (Սկիւտար) . Հիմնադիրն է եղած Եղ . Քաջունի :

ՖՐԱԹԷՐՆԷԼ (Մաքրիգիւղ) .— Հիմնուած 1912ին Մաքրիգիւղի Ֆրանսական վարժարանի հայ աշակերտութեան կողմէ , որ վերջը միացած է Սասուն Ակումբին : Ֆութպօլի լաւ խումբ մըն էր :

ԳԱԽԱՌՆԵՐ

ԱԹԼԱՍ (Իզմիտ) .— Կազմուած 1912 Ապրիլին Հ . Յ . Դ . ի նախաձեռնութեամբ : Կը հետեւի Ֆութպօլի մարզանքի , նշանառութեան փորձերու , սուսերամարտի եւ կռիամարտի :

ԱՐԱՄԱԶԴ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Ատափաղար) .— Հ .

Յ. Դ. ի կողմէ կազմուած այս միութիւնը, Պոլսոյ մերձաւոր դա -
ւառին ամէնէն աշխոյժ միութիւնը եղած է: Իր ծոցէն տուաւ ընտիր
ախոյեան մը՝ Սարգիս Թարիզեան, որ Պոլսոյ Գ. եւ Դ. Ողիմպիա -
կաններուն յայտնութիւն մը եղաւ:

Մասնաւորաբար 1914ին, երկաթ նետելու մրցման մէջ իր տարած
յաղթանակով ամէնուն հիացման կ'արժանանար: Վարադի մրցանիշը
10,60 մթ. մէկ անգամէն պատկառելի տարբերութեամբ կը կոտրէր,
նետելով 12,06 $\frac{1}{2}$, եղած է նաեւ ընտիր հեծանաւորդ մը: Այս պատ -
ուական մարդիկն ալ տեղահանութեան արհաւիրքներուն զոհ դնաց:

Թարիզեանէն դատ, Ատափազարը ունեցած է նաեւ մարզական
չարժման մէջ ուրիշ սիրահարներ, ինչպէս Բիւզանդ Փափազեան,
Ստեփան Միսքճեան, Յովհ. Մուրատեան, Յակոբ թէրեան, Սարգիս
Էրզեան եւն. որոնք 1911ին արդէն, քաղաքին դաշտադետիններուն մէջ
կազմակերպած են աթլէթիք մրցումներ:

ԱՐԱՐԱՏ (Հալէպ):

ԱՐԱՐԱՏ (Մանիսա). — 1911ին կազմուած մարզական միութիւն
մը:

ԱՐԱՐԱՏ (Մանիսա). — Հիմնուած 1911ի դարնան:

ԱՐԱՔԱ (Իզմիտ). — Ֆութպօլի խումբ մը, հիմնուած 1913ին Պոլ -
սոյ Արաքսի անդամներէն Համադասպ Փանոսեանի կողմէ:

ԱՐԾԻԻ (Պարտիզակ). — Կազմուած 1912 Մայիսին եւ առաջին
առթիւ իսկ կ'ունենայ 35-40 անդամներ: Մասնաւորապէս հետեւած է
Ֆութպօլի եւ մարզանքի:

ԱՐԾԻԻ (Վէզիր Քէօփրիւ, Սամսոն). — 1913ին Հ. Յ. Դաշնակ -
ցութեան ահուժբին մէջ կազմուած մարմնամարզական միութիւն մը:

ԱՐԾԻԻ (Տրապիզոն):

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ (Պարտիզակ). — Ուրիշ ամերիկեան
դուլէճներու պէս Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն վարժարանն ալ
մարմնակրթանքի ուժ կուտար եւ դրեթէ ամէն տարի մրցահանդէս կը
սարքէր: Կ'ունենար նաեւ միջդասարանային մրցումներ ուրիշ ամերիկ -
եան կրթարաններու նման:

ԳԱՅԼ (Չէնկիլէր). — Մարմնամարզական ահուժբ մը տեղւոյն
Ազդ. Մեսրոպեան վարժարանին մէջ կազմուած 1913ին:

ԵԴԵՍԻԱ (Եդեսիա). — Տեղւոյն Ազդ. Կեդրոնական վարժարանին
մէջ մարզական շարժման ուժ տրուած է: Յակոբ Սէրիկեան եղած է
դպրոցին մարմնամարզի ուսուցիչը: 1912 Յունիս 16ին կազմակերպած
են շատ յաջող մարզահանդէս մը, տեղւոյն առաջնորդ Արտաւազդ Ծ.
Վրդ. ի նախագահութեան տակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Կարին). —
Կազմուած 1912ի ամառը նպատակ ունենալով մեր ազգային դոյութիւ -

նը վտանգող ձուլումը բառնալ եւ դրական եղանակով մարմնական ուժ եւ առողջութիւն ձեռք բերել :

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (Վան) .
— 1913ին գոյութիւն ունեցող մարմնամարդական միութիւն մը :

ԷՖԻԻՐԷ (Կեսարիա) .— Ս . Կարապետի վանքին հոլարարձու —
թիւնը գնահատելով մարդանքին օգուտը , մարդիկներուն տրամա —
դրութեան տակ դրած է գեղեցիկ դաշտ մը :

ԺԱՅՈՒ (Երզնկայ) .— Կազմուած 1912ի ամառը նախատակ ունենալով զարդացնել իր անդամներուն Ֆիզիքական կարողութիւնը :

ԽԱՆԴԱՎԱՌ (Պարտիզակ) .— 1911ին կը կազմուի Ամերիկեան բարձրագոյն վարժարանի սաներէն Պ . Բիւզանդ . Կէօղիւպէօյիւքեանի թելադրութեամբ : Նոյն տարուան Նոյեմբերին կը սարքէ դաշտային մրցումներ :

ԿԵՍԱՐԻԱ (Կեսարիա) :

ՀԱՅ ՈՐՍՈՐԴԱՅ ԱԿՈՒՄԲ (Իզմիր) .— Այդ մասին կարգալ , ա —
սանձին յօդուածը :

ՀԱՅՈՐԴԻ (Մարդուան) .— Մարդուանի Ադդ . Սահակեան վարժա —
րանի աշակերտական միութիւն մը , որ կը սարքէր դաշտային խաղեր
եւ տարեկան մարդահանդէսներ :

ՀԱՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Երզնկա) .— Կազմուած 1911
Մարտին , նախատակ ունենալով ինքնադարդացման զանազան ճիւղերու
հետ մղում տալ նաեւ մարմնամարդի , առողջապահութեան եւ կազդու —
րիչ դբօսանքներու :

ՀԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Այն —
թապ) .— 1909 կազմուած մարմնամարդական ակումբ մը :

Զինադարէն յետոյ ալ իր թողած կորիպր 1918 — 1921 կազ —
մած է միութիւն մը : Յետոյ զաղթած է Հալէպ : Ունեցած է մինչեւ
120 անդամ , 4 Ֆութպօլի խումբ , ակթիթիկ խաղեր ու շուէտական
մարդանք :

ՄԱՍԵԱՅ ՄԱՐՄՆ . ՄԻՈՒԹԻՒՆ (Գոնիա) .— Գոյութիւն ունէր
1913ին :

ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Տիպրիկ) .— 1912ի սկիզբը կազ —
մուած Հ . Յ . Դաշնակցութեան կողմէ , սկիզբը 30 անդամներով : Ա —
կումբը ունեցած է իր մարմնամարդի յատուկ վայրը տեղւոյն Դաշ —
նակցութեան կեդրոնատեղիին մէջ , իսկ դաշտային , Ֆութպօլի եւայլ
խաղերու համար քաղաքէն տասը վայրկեան հեռու ընդարձակ դաշտ
մը :

ՄԻԱՑԵԱԼ ԱԿՈՒՄԲ (Հաճըն) .— Կազմուած 1911ին Հաճընի Մի —
ացեալ Ընկերութեան վարժարանի սաներէն Պ . Պ . Միքայէլ Խաչիկ —
եանի եւ Շմաւոն Փոստոյեանի նախաձեռնութեամբ : Միացեալ Ընկե —



ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈՒԵԱՆ

Հայ Սկաուտներու ազգ. ընդհ. պետ

Ինքնին իր գաւառի կրթարաններուն մէջ լայն տեղ տալ սկսած էր մարմնակրթութեան, երբ հասաւ ընդհ. պատերազմը :

ՇԱԽԱՐՇԱՆ ԱԿՈՒՄԲ (Մարդուան) .— Այս միութիւնը կազմուած է տեղւոյն Անաթոլիա Քօլէճին աշակերտութեան կողմէ :

Քօլէճին մէջ հինէն ի վեր գոյութիւն ունեցած է հայ գրական միութիւն մը, որ սակայն ուրիշ շատերու նման շուտ թօշնած է բռնապետութեան մթնոլորտին մէջ : 1908ին սակայն վերակենդանացած է այդ միութիւնը ունենալով երկու ճիւղեր, գրական եւ մարմնամարզական, ուրոյն կազմակերպութիւններով : Այս երկու ճիւղերը վերջնապէս 1909ին միացան «Շաւարշան» ընդհանուր անուան տակ : Շաւարշանը գրական, երաժշտական եւ մարմնամարզական երրեակ նպատակներով կը ձգտէր կրթել հայ աշակերտութեան միտքը, մարմինը, ճաշակը եւ պատրաստել օգտակար քաղաքացիներ :

1912ին ունէր մօտաւորապէս 110 անդամներ : Մարմնամարզական բաժինը ունեցած է իր խաղի գործիքները, Փութպոլի եւ Պէյզպոլի խումբերը : Կը հրատարակէր «Նոր Այգ» հանդէսը :

1912 Յունիս 1ին, Եաւարշանի տարեկան մարզահանդէսը տեղի ունեցած է շատ փայլուն յաջողութեամբ, որուն ներկայ եղած են տեղւոյն դայմագամը, կառավարական պաշտօնեաները, Ամերիկացիներ, Քոլէճին երկսեռ ուսուցչութիւնը, աշակերտութիւնը եւ հոծ բազմութիւն մը :

1919ին Զինադադարի վաղորդայնին, Անաթոլիա քոլէճի վերաբացումով, Եաւարշանը վերակազմուեցաւ ու չորս դժնդակ տարիներէ վերջ, երբ հուրի ու սուրի մատնուած ժողովուրդը կոտորակուած էր, երիտասարդութիւնն ու ուսանողութիւնը կրկին յարուստիւն կ'առնէին ու նոյեմբեր 26ին արդէն կը կազմակերպէին իրենց տարեկան դաշտային մարզահանդէսը, դեկավարութեամբ Արամ Զէյլէեանի :

ՈՒՍՈՒՄ (Հալէպ) :

ԶՄՇԿԱԾԱԳ. — Մարզական եւ սկաուտական շարժումը Զմշկածագի մէջ մուտ դտաւ 1913ին, շնորհիւ երկու երիտասարդ հայրենասէր ուսուցիչներու, Ղազարոս Գուլումճեանի եւ Պօղոս Զէննէեանի, որոնք դո՛հ պահին 1915ին, ընդհ. տեղահանութեան շրջանին :

Ղազարոս Գուլումճեան, Սանասարեանցի ուշիմ ընթացաւարտ, եկած էր Զմշկածագ, Ծովաղ աշխարհի գիւղերուն ու պատանիներուն լոյս ջամբելու, իբր Միացեալ ընկերութեան Իւզպէկի երկու վարժարանաց տնօրէն :

Պօղոս Զէննէեան, նոյնքան փայլուն ընթացաւարտ Պրուսայի շերամարուծական վարժարանէն, հրաժարելով աւելի հրապուրիչ պաշտօններէ, նախընտրած էր նուիրուիլ իր ծննդավայրին նոր սերունդին դաստիարակութեան :

Գուլումճեան ու Զէննէեան, երկուքով դիրար կը լրացնէին Զմշկածագի մէջ մարզական ու սկաուտական կեանքը սիրցնելու համար :

Արդարեւ տնօրէն Գուլումճեանն էր որ, 1913ին, աշակերտութեան կը բաժնէր Յ. Թ. Հինդլեանի եւ Շ. Քրիսեանի հրատարակած սկաուտական գրքոյքը ու հակառակ տեղւոյն հայութիւնը շրջապատող թշնամի աչքերուն, կը փորձէին նոյնիսկ 20 հոգինոց սկաուտական խումբ մը կազմել, իրենց զգեստաւորումը պատշաճեցնելով տեղական պայմաններուն : Իր կազմած գաւառի առաջին հայ սկաուտներու մասին՝ խանդավառ թղթակցութիւն մը գրած է «Մարմնամարզ»ի 1913 նոյեմբեր, դեկտեմբեր թիւերուն մէջ ուր կ'ըսէ. «... Հայ պօյսկաուտներու «Տէրսիմ խումբ»ի մօտաւոր նպատակը պիտի ըլլայ առայժմ վարժարանին մէջ եւ յետոյ դուրսը հետեւելով պօյսկաուտի սկզբունքներուն, զարգանալ ու զարգացնել իրենք զիրենք եւ ուրիշ —

ները (յետագայ բարձրացիր — բարձրացուրին նման) մտքով մարմնով եւ հոգիով, ապագային ըլլալու համար մտացի, առողջ եւ նկարագրի տէր երիտասարդներ եւ քաղաքացիներ » :

Այդ խումբին պատկանող սկուտներէն մին՝ Վաղդէն Անդրէաս — եան, քառորդ դար յետոյ, Փարիզի շրջանի սկաուտներուն պետը պիտի ըլլար :

Խումբը արշաւներ կատարած է Ծովաց Աշխարհի մէջ, — դէպի Ռոսեդի լիճերը, Արածանիի եւ Եփրատի ափերը, Ծակալիքը եւն. :

Իսկ Պ. Զէննէեան, իբր ճարտար մարմնամարզիկ, իր փորձերով պատանիներուն մօտ մարզանքի ճաշակը ու սէրը կ'արթնցնէր :

ՊԱՐԹԵԻ (Սերաստիա).— Կազմուած 1911 Օդոստոսին, նպատակ ունենալով ուժ տալ ազատ մարզանքի, կուփամարտութեան, վազքի, կախօրանի եւ օդակներու վրայ փորձերու : Ունէր 24 անդամներ :

ՍԱՄՍՈՆԻ «Կայծակ» մարզական խումբ :

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ (Կարին) : (Տես առանձին յօդուած) :

ՄԻՍՈՒԱՆ ՄԱՐՄ . ՄԻՈՒԹԻԻՆ (Տէօրթ Եօլ) .— Որ ունէր իր մէջ մէկէ աւելի Ֆուլթպօլի խումբեր զանազան անուններով :

ՎԱՐԴԱՆԵԱՆ (Իզմիր) .

ՎԻՇԱՊ (Օվաճըզ) .— 1912ին նոյն քաղաքին մէջ գործող Ֆուլթպօլի միութիւն մը :

ՏԱՐՕՆ (Պարտիզակ) .— Ֆուլթպօլի խումբ մը որ գոյութիւն ունէր 1912ին :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԱՐԱՐԱՏ (Գահիրէ) :

ԱՐԱՐԱՏ (Ռուսճուք) .— 1906ին կազմուած եւ ատեն մը կիսակազմալոյժ : Կը վերակազմուի 1911 Մայիսին : Իր նպատակն էր մարմնամարզը կիրարկել իր բոլոր ձեւերուն տակ : Պատուաբեր մասնակցութիւն բերած է իր շրջանի մէջ կազմակերպուած միջազգային մըրցումներուն :

ԱՐԾԻԻ (Վառնա) .

ԴԱՅԼԱՅԼԻԿ — ԱՐՇԱԼՈՅՍ (Ֆիլիպէ) .— 1905ի շրջանին 25 — 30 անդամներով կազմուած մարզական միութիւն մը Աշոտ Պասմաճեանի ղեկավարութեամբ որ սակայն 6 ամիսէ աւելի կեանք մը չունեցաւ :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՃԱՌ (Ուէսթհապօքըն) .— Հիմնուած 1899ին : Մասնակցած ըլլալով 1910ի վերջերը այդ քաղաքին հաստատութեան առթիւ տեղի ունեցած հանդէսներուն եւ զօրանցքներուն, ամերիկեան թերթ մը գրած էր թէ «ամէնէն աւելի ուշադրութիւն գրաւեցին 300 Հայեր, որոնք իրենց երկրին պատմական զէն ու զարդով նկարագրեղ տե-

սարան մը կը պարզէին : Եւ եթէ ծափահարութիւնները նշանակութիւն մը ունին եւ հաշուի կ'առնուին , Հայերը լիապէս վարձատրուեցան» :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Ուստր) .— Կազմուած է 1911ի սկիզբը :

ԿԱՄՔ (Աղեքսանդրիա) .— 1912ին կազմուած մարմնամարզի ուսուցիչ Ստեփան Խանճեանի նախաձեռնութեամբ :

ՄԱՐԶԱՍԻՐ (Գահիրէ) .— Գահիրէ Ազգ. վարժարանի սաներէն կազմուած միութիւն մը , որ տարին անդամ մը մրցահանդէս կը սարքէր : Նախաձեռնողն էր դպրոցին տնօրէն Մինաս Ծալեան եւ մարզիչը Հայկ Նալճեան :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Ֆաւլը) .— Կազմուած 1910ի վերջերը հայ երիտասարդութեան նախաձեռնութեամբ , նպատակ ունենալով մասնաւորապէս հայ նորահաս սերունդին ֆիզիքական դարձացման աշխատիլ : Տեղի կ'ունենային մարզանքներ եւ երբեմն զինավարժութեան փորձեր :

ՎԱՀԱԳՆ (Ֆիլիպէ) .— 1904 սեպտեմբեր 1ին , անդրանիկ հայ մարզական շարժման հիմք կը դրուի Ֆիլիպէի մէջ , Ռոստոմ Զօրեանի հիմնած մասնաւոր վարժարանին կից , դըլսաւորաբար Գրիգոր Մէրճանօֆի , Աշոտ Պատմաճեանի , Ամբակում Դաւիթեանի , Հրանտ Տէմիրզափիլեանի , Յակոբ Շարապճեանի , Յարութիւն Շահպաղեանի եւ Գրիգոր Գաղաղեանի ջանքերով :

Միութիւնը պուլկար մարզական «Թրաքիսքի Եօւնաք» միութեան համազգեստը կը կրէր եւ իր մասնաւոր զինանշանով անոր հովանաւորութիւնը կը վայելէր :

« Վահագն »ի մարզիչ ուսուցիչն էր Գրիգոր Մէրճանօֆ որ կը մարզէր նաեւ Զօրեան վարժարանի վերջին դասարանին աշակերտութիւնը :

Այս միութիւնը փայլուն դործունէութիւն ցոյց տուած է մինչեւ Մէրճանօֆի մեկնումը՝ 1906 :

ՏՈՐՔ (Գահիրէ) .— 1912ին կը կազմուի 25ի մօտ գործօն անդամներով :

1918 — 1922

ԱՆԳՂ (Պուլքէշ) .— Կարգ մը տեղացի պատանիներէ բաղկացած ֆութպօլի խումբ մը , որ 1926ին ձուլուեցաւ նորահազմ « Երեւան » Գեղար . Միութեան մէջ եւ յետոյ անցաւ Հ . Մ . Ը . Մ .ին :

ԱՌԻԻԾ (Կ . Պոլիս) .— Հ . Մ . Ը . Մ .ի քայքայուելէն եւ տարագրուելէն վերջ ստեղծուեցաւ Պոլսոյ մէջ :

ԱՐՏԱԻԱԶԴ (Ռուսճուք) .

ԱՐՄԱՇ (գիւղատնտեսական խումբ) .— Հասցուց որք սկսուածնու-
րու կայտառ խումբ մը որ Հայաստան մեկնեցաւ սկս մը, կրկին Պո-
լիս վերադառնալու համար :

ԱՐԾԻԻ (Քոսթանցա) .— Կազմուած զինադադարէն յետոյ եւ
1922ին ձուլուած Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ մասնաճիւղին մէջ :

ԲԱԳԱՐԱՏ (Քոսթանցա) .— Զինադադարէն յետոյ կազմուած, Հ.
Մ. Ը. Մ. ի մասնաճիւղին մէջ կը ձուլուի 1924ին :

ԲԱՆԿԱԼԹԻ (Բերա) .— Կազմուած է այս խումբը 1922էն յետոյ :

ԽԱՍԳԻԻՂ (Խասգիւղ) .— Կազմուած 1922էն յետոյ, ծանօթ դէպ-
քերուն հետեւանքով երբ քայքայուեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի տեղւոյն մաս-
նաճիւղը :

ԿԱՅԾ (Ռուսճուք) .— Կազմուած 1925ին «Բազարատ» խումբի խա-
ղացողներէն :

ԿԱՅԾԱԿ (Վառնա) .— Պահ մը դոյուլթիւն ունեցած է եւ յետոյ
դադրած :

ԿԻԼԻԿԻԱ ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻԻՆ (Ատանա) :

ՀԱՄԱԶԱՍՊ (Հալէպ) .—

ՀԱՅ ԱՌՈՂԶԱՊԱՀԻԿ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻԻՆ (Ժընեւ) .—
Հիմնուած 1925ին Պընեէնի հայ վարժարանի սաներէն :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ (Յունաստան) .— Այս անուան տակ
կարգ մը մարզական միութիւններ կան Յունաստանի մէջ :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ (Պելլիւրատ) .— Կազմուած 1922ին,
նախաձեռնութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Գում-Գափուլի մասնաճիւղէն
Վահրամ Եարըմեանի : Կարճատեւ դոյուլթիւն մը ունեցաւ :

ՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ (Ճափա) .— Կազմուած 1922 Յուլիս
23ին «Արմիներն Սփորթինկ Քլիւպ» անուան տակ :

ՀԱՅ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ (Իդմիր) .— Հիմնուած 1919 Ապ-
րիլին : Պատուոյ պետն էր Ամերիկացի Նիոմէն, իսկ ղեկավարը Մկր-
տիչ Եանըքեան :

ՀԱՅ ՍՓՕՐԹ (Թեհրան) .

ՄԱՍԻՍ (Բերա) .— 1922էն յետոյ սկս մը ապրած, 1924ին լուծ-
ուած է «Շիլի» միութեան մէջ :

ՆՈՐ ՇԻՇԼԻ (Շիլի) .— Պոլսոյ մէջ գործող ամէնէն կենսունակ
մարզական միութիւններէն մէկն է 1922ին Հ. Մ. Ը. Մ. ի լուծուելէն
վերջ :

ՇԱՆԹ (Կ. Պոլիս) .— 1922էն յետոյ Պոլսոյ մէջ դոյուլթիւն առած
Ֆուլթայօլի խումբերէն մէկն է եղած :

ՇԱՆԹ (Տիլիպէ) .— Մարզական եռանդուն միութիւն մը, որ
1924ին միացաւ Հ. Մ. Ը. Մ. ին : Յետոյ կազմուեցաւ նոյն անունով
ուրիշ մը՝ Հ. Մ. Ը. Մ. ին հեռացած աղոցմէ :

ՇԱՐԺՈՒՄ (Տրապիզոն) .— Նախապէս գոյութիւն ունեցող մարզական միութիւն մը, որ 1922ին ամբողջ կը վերակազմուի «Շարժում» անուան տակ յօգուտ Տրապիզոնի հայ երիտասարդութեան ֆիզիքական զարգացման :

ՇԻՇԼԻ (Շիշլի) .— Իր թաղին անունով կը կոչուէր մարզական այս միութիւնը, որ կազմուած էր 1922ին Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղի լուծումէն յետոյ եւ տեղի տուած «Նոր Շիշլի»ին :

ՊԵՉՃԵԱՆ (Գում-Գաբու) .— Կազմուած 1922էն յետոյ, երբ Հ. Մ. Ը. Մ. եւ իր մասնաճիւղերը լուծուեցան Պոլսոյ մէջ :


ՍԱՀԱԿԵԱՆ (Սամաթիա) .— Պատերազմէն առաջ կազմուած Սահակեան վարժարանի սաներէն : Ուժ կուտար Փոլթալի :

ՍԹԱՏ (Կ. Պոլիս) .— 1922էն յետոյ Պոլսոյ մէջ կազմուած Փոլթալի խումբերէն մէկը :

ՎԱՀԱԳՆ (Դամասկոս) .— Հայ պատանեկան միութիւն, որ ունեցած է Փոլթալի ճիւղ մը :

ՏԱՏԵԱՆ (Մաքրիզիւղ) .— Մաքրիզիւղի համանուն վարժարանին շրջ Փոլթալի խումբ մը, որ կը գործէ այս պահուս :

ՏՈՐՔ (Աղեքսանդրիա) .— 1923ին կը կազմուի Ռամլէյի մէջ : Երկու տարի վերջ կը ձուլուի Հ. Մ. Ը. Մ. ի նորակազմ մասնաճիւղին մէջ :



Շաւարշ Քրիսեանի շրջանին կազմուած սկաուտական խումբերէն «Նոր Դպրոց» ի եւ Սկիւտարի Հ. Մ. ի սկաուտները միասին լուսանկարուած 17 Մայիս 1914ին, Սկիւտար հանդէսէ մը վերջ : Մէջտեղը Հ. Մ. ի վարիչ եւ սկաուտներու պետ Գրիգոր Յակոբեան :

Ք Ա Ի Ա Ռ Ն Ե Բ Ը



ԻԶՄԻՐ

90 ական թուականներուն սկսաւ հայ մարզական կեանքը Իզմիրի մէջ եւ կարճ ժամանակի ընթացքին հայ մարզիկները մասնաւոր յատկութիւն երեւան բերին ու կրցան ներկայանալ խումբեր կազմել: Ասոնց մեծ մասը զարգացան օտար խումբերու մէջ եւ որոշ շրջան մը համիտեան ըէժիմի պատճառաւ իսկական հայ խումբեր չկազմուեցան, ասոր հետ մէկտեղ անոնցմէ ախոյեաններ ի յայտ դալով՝ մեկնեցան Եւրոպա կատարելագործելու համար իրենց մասնագիտութիւնը: Յաւալի է սակայն արձանագրել որ անոնցմէ քիչեր միայն իրենց կոչումին գիտակցութիւնը ունեցան եւրոպական ազատ մթնոլորտին մէջ:

Բայց եւ այնպէս հատ մը, իսկական դմիւռնահայ դէմք մը, չմուցաւ իր ետին մնացած հարիւրաւոր պատանիները, անմիջապէս որ ձեռք բերաւ պէտք եղած ձեռնհասութիւնը, յաջողութեամբ աւարտելէ վերջ սբօր եւ աթլէթիզմի վարժարանը փրօֆէսէօրի տիտղոսով, վերադարձաւ Իզմիր եւ անուանուեցաւ Աղզ. Վարժարանին դասատու: Այս անձը Պ. Էլմասեանն էր:

Էլմասեանի շրջան

1900ին Էլմասեան իր պաշտօնին ձեռնարկած ժամանակ, Աղզ. Վարժարանները զուրկ էին տարրական դործիքներէ, անհրաժեշտ էր դպրոցին կից մասնաւոր մարզարանի մը կառուցումը: Իր առաջին դործը եղաւ դասախօսութիւններով եւ հրապարակագրութեամբ այդ թերին մատնանշել եւ կոչ ընել հասարակութեան ընդառաջ երթալու այս կենսական հարցին: Գծրախտարար Աղզ. վարժարաններու ելեւմտացոյցը փայլուն չէր եւ դպրոցի պիւտձէն ընաւ թոյլատու չէր նոր ծախքերու դուռ բանալ:

Իր կոչը երկար ատեն անհետեւանք չմնաց, բարերար մը ըմբռնեց այս հարցի կարեւորութիւնը եւ այդ նպատակին համար յատկացուց 500 ոսկի: Իզմիրի անցեալը փայլուն է նման բարերարներու ցանկով, որոնք անգամ մը համողուելէ վերջ ազգային օգտակար ձեռնարկներուն, լայնօրէն բացած են իրենց քսակը:

Էլմասեան երջանիկ էր, քիչ ատենուան մէջ Մեսրոպեան վարժարանի ընդարձակ պարտէզին մէկ անկիւնը տիպար մարզարան մը պատրաստեց՝ օժտուած ամէն տեսակ մարզական արդիական գործիքներով:

Էլմասեան իր դպրոցական դասընթացքներով չգոհացաւ. հետաքրքրութիւն արթնցուց եւ նախկին շրջանաւարտ աշակերտներէն յարմարութիւն ունեցողներն ալ իր շուրջ հաւաքելով, հաստատեց դիշերային եւ կիրակնօրեայ դասեր, հետո՛ւ նիւթական ակնկալութիւններէ՝ անձնազուհէ նուիրումով մարդեց նաեւ այս վերջինները: Իր ջանքերը ապարդիւն չմնացին, ախոյեանները սկսան իրար յաջորդել:

1901 Յունիսին տեղի ունեցաւ տարեկան մարդահանդէս մը, մասնակցութեամբ հարիւրէ աւելի մարդիկներու. յաջողութիւնը եւ խանդավառութիւնը մեծ եղաւ, այն աստիճան որ դադութը իր թմբիրէն դուրս դալով այնուհետեւ իր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը նուիրեց սոյն գործին:

Տարիները անցան եւ ամէն անգամուն աւելի փայլուն հանդէսներ տեղի ունեցան: Էլմասեանի ցանկութիւնն էր իր սկսած գործին տեւականութիւնը ապահովել եւ արժանաւոր յաջորդներ ունենալ: Կարելի է ըսել որ ան արդէն նախազգացում մ'ունէր, որովհետեւ 1905ին ենթադրաբար մատնուած, օրուան հալածանքները սկսան մինչեւ իր անձին հասնիլ: Ան ստիպուեցաւ թողուլ Իզմիրը եւ հեռանալ: Չեմ կրնար ըսել որ ան յեղափոխական մ'էր, բայց ամէն բանէ առաջ հայ էր եւ կ'ուզէր տարածել — առողջ միտք, առողջ մարմնոյ մէջ — ընդհանրական սկզբունքը նաեւ հայոց մէջ:

Պ. Էլմասեանի մեկնելէն վերջ իր աշակերտները՝ որոնք ամէնքը չափահասներ դարձած էին, կաղմեցին Մեսրոպեան Միութիւնը (Ակումբ բառը գործածել արտօնուած չէր եւ ամէն շարժում դպրոցին կամ եկեղեցիին պէտք էր կապել), եւ կրցան անոր սկսած գործը շարունակել մինչեւ 1910 թուականը:

1910ին, Մեսրոպեան վարժարանի տնօրէնութիւնը, նկատելով որ Էլմասեանի գործիական մարմնակրթանքի դրութիւնը այլեւս Եւրոպայի մէջ յարգի չէր ու նաեւ պետական վարժարաններն ալ դադրեցուցած էին այդ ուղղութեամբ դասաւանդութիւնը, եւ որուն համակիր չէին նաեւ բժշկական միութիւնները, որոշեց գործիական մարդանքին մէջ շուէտական մարմնամարդի դրութիւնը հաստատել: Այս մտադրութեամբ, Իզմիր հրաւիրեց Շուէտական մարմնամարդի մասնագէտ եւ նախկին ախոյեան Պ. Մելիքեանը որ համբաւաւոր էր նաեւ իբր գնդամուղի (պիլարտօ) փրօֆէսէօր:

Մելիքեանի առաջին գործը եղաւ, իր նախորդին հաստատած մարզարանը քանդել, գործիքները վերցնել ու վարժարանին գետնայարկին մէջ փակել ուր տարիներու ընթացքին փտելու դատասարտուեցան:

Այս անգամ, Եւրոպայէն նոր գործիքներ բերել տուաւ իբրեւ վերջին նորութիւններ: Ու սկսաւ իր ըմբռնած ձեւով դասաւանդու-

թեան, գլխաւորաբար շուէտական մարզանք եւ սուսերամարտութիւն: Նպատակս չէ հոս իր գործունէութեան եղանակը քննութեան ենթարկել կամ քննադատել, սակայն ստոյգ է որ իր միակողմանի դրութեամբը չկրցաւ երիտասարդութիւնն ու պատանեկութիւնը տաք շունչով մը խանդալառել ու դանոնք աւելի ու աւելի շարժման կապել: Աշակերտներս, քանի քանի անդամներ իրեն դիտել տուինք թէ աթլէթիզմն ու բացօթեայ խաղերն եւ առհասարակ միջազգ. ողիմպիական մրցումներն ալ կարելի էր շուէտականի ծրագրին մասնակատել ու իբր այդ կիրարկել:

Սակայն, ինք այդ ճիւղերուն մէջ բաւականաչափ հմտութիւն եւ փորձառութիւն չունենալով բնաւ հարկ չտեսաւ տղոց ընդհանուր փափաքին ընդառաջ երթալ: Արդիւնքն այն եղաւ որ երիտասարդները աստիճանաբար պաղեցան ու քաշուեցան: Մեսրոպեան Միութիւնն ալ լուծուեցաւ:

Այդ շրջանին, արդէն սկսած էին կազմուիլ մարմնակրթական նոր միութիւններ, որոնցմէ դուրս եկան ապապայ փայլուն մարզիկներ եւ Փութպօլիստներ:

1900էն առաջ դոյութիւն ունէին արդէն անհաս հայ Փութպօլիստներ, սակայն մեծամասնութիւնը օտար խումբերու մէջ արձանագրութեամբ ըլլալով, հաւաքական արժէք մը չէին ներկայացնէր:

Երբ էլմասեան առաջին անգամ դործի ձեռնարկեց, նկատեց որ մաս մը կարող մարզիկներու խտալը Փութպօլն է: Հակառակ որ ինք Փութպօլի մասնազէտ մը չէր, այնուամենայնիւ ընդառաջ դնաց տղոց բաղձանքին ու հայ «Փութպօլի Միութիւն» անուան տակ կազմեց առաջին Փութպօլի խումբը:

Համիտեան ըէժիմբ սակայն մեծ դժուարութիւններ կը ներկայացնէր ազատ գործունէութեան համար արդելք ըլլալով միջազգային մրցումներու մասնակցելու, ուստի խոհեմութիւն սեպեց ազատ թողուլ այն անդամները, որոնք փափաք եւ կարողութիւն ունէին օտար ակումբի մը մասնակցելու:

Յունական «Pelops» ակումբը սիրով ընդունեց իր ծոցին մէջ հայ մարզիկները որոնք մինչեւ 1909 մաս կազմեցին անոր:

Այս երիտասարդութեան մէջ կային շատ վարպետ խաղացողներ որոնք յունական խումբին լաւագոյն ուժերը հանդիսացան: Այն աստիճան որ երբ «Pelops»ը միջազգային մրցում մը կ'ունենար 9 հայ մարզիկ կը համրուէր 11 հողինոց խումբի մը մէջ: Pelopsի մաս կազմելով հանդերձ, հայ խաղացողները իրաւունք ունէին հայ անուան տակ ոչ պաշտօնական եւ բարեկամական մրցումներ կատարելու:

1908ին, համիտեան ըէժիմբ տապալումով, հայերը որոշ ազատութիւն ձեռք բերին: Այս պատեհութենէն օգտուելով, հայ մարզիկ-

ները կրկին խնդրեցան ու կազմեցին Հայ Մարմնակրթական Ակումբ մը, սակայն մինչեւ մէկ տարի չկրցան հրապարակային պաշտօնական մրցումներ կատարել մինչեւ որ իրենց կանոնագիրը կառավարութենէն վաւերացուեցաւ :

« Հայ Որսորդաց Ակումբ »ի կազմութիւնը

Չորս անջատ մարմնակրթական խումբեր իրարու մօտ դալով կազմած էին « Հայ Որսորդաց Ակումբ »ը :

Այս խումբերը՝ որոնք իրենց առանձին ներքին կանոնագիրն ու գործելու ազատութիւնը ունէին, կը կոչուէին « Քնար » « Վասպուրական », « Վարդանեան » եւ « Սահակեան » խումբեր : Իւրաքանչիւրը ունէր երկու ներկայացուցիչ « Հայ Որսորդաց Ակումբ »ի Վարչութեան մէջ, որուն կը նախագահէր « Որսորդաց Ակումբ »ի վարչական մէկ անդամը :

Բնականաբար հաւաքաբար գործակցելու այս աշխատանքը մէկ



Իգմիրի Հայ Որսորդաց Ակումբի ֆութպոլի խումբը 1911ին

օրէն միւսը կատարուելիք գործ չէր , պարզ այն պատճառով որ հայ մարզիկներուն կարեւոր մէկ մասը յունական Pelops խումբին անդամ արձանագրուած էր որ իր կարգին Աթէնքի Փուլթաօլի համադաշնակցութեան մաս կը կազմէր եւ որ իր ձայնը ունէր : Եւ ա — կայն Իզմիրի հայ մարզական կեանքին աչքառու դէմքերէն մէկուն , Մ . Եանրդեանի ջանքերով կարելի եղաւ այս խնդիրը հաշտարար ձեւով կարգադրել : Այսպէսով , Pelops ակումբի վարչութիւնը սիրով ընդունեց հայ մարզիկներու հաւաքական հրաժարականը , պայմանաւ որ անոնք ուրիշ ոեւէ օտար միութեան արձանագրուելու իրաւունք չունենան եւ միայն գործեն « Հայ Ակումբ » անունին տակ :

Այս առաջին ձեռնարկին յաջողութենէն խանդավառուած Մ . Եանրդեան ամբողջովին նուիրուեցաւ նորակազմ « Հայ Ակումբ »-ին կազմակերպութեան ու յառաջդիմութեան , անդամներու թիւը հասցընելով 600ի : Իզմիրի հայ մարզական կեանքին մէջ , Եանրդեանի կատարած դերը զինքը կը դասէ էլմասեանէն վերջ առաջին գծին վրայ :

Կազմակերպչական առաջին աշխատանքները լրացան մինչեւ 1910 սեպտեմբեր : Ծրագիր - կանոնագիր , դաշտ , մարզարան ու այն ամէնը ինչ որ անհրաժեշտ է մարզիկին համար , պատրաստուած է արդէն : Նկատի առնելով միջազգային մրցումներու մօտալուտ սկընաւորութիւնը , վարչութիւնը որոշեց եւ անմիջապէս ձեռնարկեց հայկական արծաթ բաժակի մրցումներուն , վերոյիշեալ չորս խումբերուն միջեւ , որ ոչ միայն լաւագոյն առիթ մը պիտի ըլլար տղոց կանոնաւոր փորձեր կատարել տալու , այլեւ կարելի պիտի ըլլար , երկու առաջնակարգ հայ խումբերու կազմութեան համար , լաւագոյն մարզիկները զատել , որոնք միջազգային մրցումներու մէջ հայ Փուլթաօլը պիտի ներկայացնէին : Այս մրցումները , իրենց բրոյական կողմէն զատ , ունեցան նաեւ նիւթական կարեւոր արդիւնքներ ինչ որ թոյլ տուաւ Եւրոպայէն կարգ մը պիտոյքներ բերել տալ :

Այսպէս ուրեմն , Իզմիրի հայ Փուլթաօլի ներկայացուցչական խումբը կազմուած էր , եւ կը ներկայացնէր պատկառելի ուժ մը : Կը մնար իր արժէքը ցոյց տալ միջազգային հանդիպումներու մէջ : Այդ առիթը չուշացաւ :

1911-12ի Փուլթաօլի եղանակին հայ խումբը յաջորդաբար մրցեցաւ տեղական բոլոր կարեւոր խումբերուն՝ յունական Pelops, Appolon, Panioniou եւ անգլիական Bournalat խումբերուն որոնք բոլորին վրայ ալ փայլուն յաղթանակներ տանելով 1912 մարտ 26ին շահեցաւ արծաթ բաժակը :

Այս պատուաբեր յաղթանակը նիւթականէն աւելի բարոյական մեծ յաջողութիւն մը կազմեց միութեան համար , դառնալով ազդակ

մը եւ գրգիռ մը հայ գաղութին մէջ ստեղծելու բարերար շարժում մը: Բոլոր թերահաւատները, բոլոր անտարբերները որոնք կազմա-կերպութենէն հեռու մնացած էին, զգացին իրենց մէջ խօսող ցեղին ոգին ու ազդային հպարտութիւն մը, ինչ որ ղերենք մօտեցուց միութեան: 1912ի վերջը, հայ Որսորդաց Ակումբը իր մէջ կը հաշուէր մօտ 1000 գործօն անդամներ:

Հայ Որսորդաց Ակումբի Փութպօլի խումբին կազմը, որ կը մասնակցէր բաժակի մրցման, հետեւեալն էր.

Դանիէլ Ազսարալեան՝ բերդապահ, Գէորդ Յարէթեան եւ Ernest Parkinson վերջապահ, Արտաշէս Ղարիպեան, կարապետ Օհաննէսեան եւ Յարութիւն Թէքաթլեան՝ միջնապահ, Լեւոն Քէչկէկեան, Հրանտ Փափաղեան, Harold Charnant, Մկրտիչ Եանըզեան եւ Սարգիս Թիւթիւնճեան՝ յտաջապահ:

« Բաժակի » այս յաղթանակին արձագանգը եւ Իզմիրի Որսորդաց Հայ Ակումբին համբաւը շուտով տարածուեցաւ Իզմիրէն դուրս Պօլիս եւ այլ հայկական քաղաքներու մէջ:

Այդ օրերուն Պոլսոյ հայութիւնն ալ մարզական իր վերածնունդի շրջանը կ'ապրէր եւ իր մէջ կը համրէր մէկէ աւելի Փութպօլի զօրաւոր հայ խումբեր: Միւս կողմէ նահատակ Շաւարշ Քրիսեան, Եւրօպայէն նոր վերադարձած, նուիրուած էր հայ մարզական շարժումը գիտական հաստատ հիմերու վրայ դնել եւ իր հիմնած « Մարմնամարդ » թերթով շաղկապ մը հանդիսացած բոլոր հայ մարզական միութիւններուն Փութպօլի խումբերուն միջեւ: Նոյն տարիներուն կը կազմակերպուէին նաեւ առաջին հայ-ողիմպիական մրցումները:

Այս պայմաններու մէջ ուրեմն, երբ Պոլսոյ հայ երիտասարդութիւնը որոշ չափով մարմնակրթանքին կարեւորութիւնը ըմբռնած ու Փութպօլի խաղին մեծ դարկ տուած էր, չափազանց հետաքրքրական ու դաստիարակիչ պիտի ըլլար Իզմիրի իրենց Վարպետ հայրենակիցներու խաղը վայելել: « Մարմնամարդ » թերթը ուրեմն նախաձեռնարկ եղաւ հրաւէր ուղղելու Իզմիրի Հայ Որսորդաց Ակումբին, որպէսզի Պոլիս դալով տեղական թուրք եւ հայ Փութպօլի լաւագոյն խումբերուն հետ մրցումներ կատարէ:

1913ին ծրագրուած այցելութիւնը կատարուեցաւ: Տասը օրուան իրենց Պոլսոյ մէջ ներկայութեան ընթացքին, Իզմիրի Հայ Որսորդաց Ակումբը կատարեց չորս մրցում. Կալաթա Սէրայի, « Տորք »ի, « Արաքս »ի եւ « Ֆէնէր Պաղչէի » դէմ: Առաջինին հաւասար 2-2ով: Երկրորդ եւ երրորդ մրցումներով դիւրին յաղթանակներ տարաւ « Տորք »ի եւ « Արաքս »ի վրայ, իսկ իրենց վերջին հանդիպումը՝ Պոլսոյ զօրաւորագոյն խումբին՝ « Ֆէնէր Պաղչէի » դէմ, վերջացաւ իզմիրցիներու պարտութեամբ 2-4ով: Բնականաբար իրենց ե-

րեք յաջորդական մրցումները չափազանց յոգնեցուցած էին զիրենք, միևս կողմէ երկու կարեւոր խաղացողներ վիրաւորուած ըլլալով, փոխարինուած էին «Տորք»ի երկու անդամներով, ինչ որ որոշ չափով աղղած էր խումբին ներդաշնակութեան վրայ: Պատճառներ էին ասոնք, որոնք մեծ չափով կը նուազեցնէին խումբին յաղթելու հաւանականութիւնները, ինչպէս ցոյց տուաւ մրցման արդիւնքը:

Հայ Որսորդաց Ակումբի Փութպօլի յաջողութիւնները շարունակուեցան մինչեւ 1914, թէ տեղական խումբերու եւ թէ անգլիական, գերմանական եւ ամերիկեան մարտանաւերու խումբերու դէմ:

Պէտք է շեշտել որ այս յաջողութիւններուն մէջ Մ. Շանըգեանի դերը շատ մեծ եղաւ:

Շանըգեանի շրջան

Փութպօլի զուգընթաց, զանց չէր առնուած նաեւ մարմնակրթմանքի եւ բացօթեայ խաղերու վարժութիւնները:

Ամէն խումբ, արդէն իր սեփական միջոցներով հաստատած էր իր սեփական մարզարանը ուր տեղի կ'ունենային զանազան տեսակի մարզական փորձեր:

1910ին Հայ Ակումբի վարչութիւնը որոշեց կատարել մարզական ախոյեանութեան տարեկան մրցումներ, որոնք տեղի պիտի ունենային ամէն տարի Մայիս ամսու վերջը: Այդ մրցումներուն մէջ, լաւագոյն հանդիսացողները, իրաւունք ունէին տարեկան միջազգային ողիմպիական մրցումներուն մասնակցիլ, որոնք հովանաւորուած էին Աթէնքի Կեդրոնական Լիկէն:

Մարզական կեանքի աչքաուու դէմքերէն կարելի է յիշել Գէորգ Յարեթեանը, երկայնութիւն ցատկելու եւ 100 մէթր վազելու ախոյեան, Կ. Յովհաննէսեան՝ բարձրութիւն եւ երեք քայլ ցատկելու մէջ, Գ. Շաքարեանը՝ սկաւառակ նետելու, եւ Ա. Ֆընտրղլեանը 400 մէթր վազքի մէջ:

Սոյն մարզական մրցումներուն մաս կը կազմէին նաեւ նշանառութիւնը ինչպէս նաեւ կարգ մը ամերիկեան եւ անգլիական խաղեր, որոնք ժողովրդին հետաքրքրութիւնն ու խանդավառութիւնը կ'աւելցընէին:

Պոլիսը 1911ին, սկսած էր արդէն իր հայկական ողիմպիականներուն կազմակերպութեան, որոնք պոլսահայ երիտասարդութեան համար դարձած էին տեսակ մը նուիրական տօնակատարութիւններ, նուիրուած հայ ուժին ու մարմինին:

Իր երկրորդ ողիմպիականին կազմակերպութեան առթիւ, 1913ին պոլսահայ ողիմպիականի կազմակերպիչ յանձնախումբը Իդմիրի հայ մարզիկներուն ալ մասնակցութեան հրաւեր ուղղեց:

Միայն Գէորգ Յարեթեանն է որ փափաք յայտնեց իր անձնական

ԿԱՐԻՆ

Սանասարեան անունը այլեւս ու եւ է հմայք չունի նոր սերունդին համար. իսկ հին սերունդին համար կը թուի ըլլալ հին — հին դարուց յիշատակ : Եւ սակայն իր տեսակին մէջ բարձր միջնակարգ վարժարան մըն էր, հաստատուած Բարձր Հայքի սրտին վրայ, Կարնոյ մէջ : Բացի իր ուսումնական եղական աստիճանէն, որու մասին հիացումով արտայայտուած էին բազմաթիւ արեւելադնաց Եւրոպացիներ՝ պատմաբան, երկրախոյզ, դիւնական, անտեսադէտ, սրոյ ի շարս մանաւանդ գերմանացի Լէման — Հաուբթ՝ հեղինակ Armenien Einst und Jetzt (Հայաստան անցնելումն եւ այժմ) եւահատոր դժայլիլի քննական պատմութեան, Սանասարեանի մարդական եւ բացօթեայ խաղերու դրութիւնը, բացի Անդլիայէն, Գերմանիայէն եւ Պալթիկեան ու Սքանտինաւեան երկիրներէն, զրեթէ զոյուլթիւն չունէր սրիչ երկրի վարժարաններուն մէջ :

Ճախքով մեկնիլ ու մասնակցիլ մրցումներուն : Արդարեւ իր մարդական կարողութիւնները յայտնութիւն մը եղան պոլսահայերուն համար, որոնք զինքը ճանչցած էին արդէն, Իգմիրի Հայ Որսորդաց Ակումբի Պոլիս այցելութեան ատեն իբրեւ խումբին յաղթանդամ վերջապահ : Այս անգամ Յարեթեան ի յայտ կուգար սքանչելի արագավազ մարդիկ մը, խլելով 100 մէթրի մրցումը 12 2/5 երկվայրկեանէն : Նոյն օրը երկրորդ յաղթանակով մը, երկարութիւն ցատկելու մէջ (5,94), Իգմիրի հայութեան պատիւը կը փրկէր :

Այս առաջին տարուան յաջողութենէն վերջ, ուր Յարեթեան երկու առաջնութիւն կը շահէր բնական էր որ յաջորդ տարի, իր ներկայութիւնը կրկին ցանկալի դառնար :

1914ին ուրեմն, Գ. Յարեթեան երկրորդ անգամ ըլլալով կը մասնակցէր Պոլսոյ հայկ. ողիմպիական մրցումներուն, սակայն դժբախտաբար չկրցաւ նախորդ տարուան իր փայլուն արդիւնքները ձեռք բերել : Միայն երկայնութիւն ցատկելու մէջ է որ առաջնութիւն շահեցաւ, առանց իր մրցանիչը կարենալ կոտրելու, ցատկելով միայն 5,68. իսկ 100 մէթրի մէջ դասուեցաւ միայն երկրորդ Նուպար Ճէյալեանէն վերջ, ու բարձրութիւն ցատկելու մէջ երկրորդ՝ Գառլո Շասենեանէն եւ Հայկ Ճօլօլեանէն վերջ :

Այս ողիմպիականէն վերջ, շատ շանցած ընդհանուր պատերազմը պայթեցաւ : Չորս երկար տարիներու ընթացքին ամէն տեղի նման Իգմիրի մէջ ալ մարդական ամէն կարգի դործունէութիւնները ամլութեան դատապարտուեցան :

Յ. ՄԱԹԻԿԵԱՆ

Չմոռնանք սակայն, որ մենք կ'ապրէինք բռնակալ եւ յետամնաց երկրի մը մէջ :

Գերմանիայէն ապսպրուած մեր չմուշկները ամիսներով մաքսատուներ կը մնային, որովհետեւ վարիչները չէին կրնար երեւակայել, թէ ի՞նչ բանի կրնային ծառայել այդ «սատանայական դործիքները», որոնց արտահանումի թղթին վրայ պաշտօնեան անգամ մը ճարահատ դրեր է, վերջապէս անուն մը դրած ըլլալու հարկադրութեամբ, թիւրքմէտէ իսմի նիսմի օլմայան մուխթէլիֆ ալաթ ու էտէվաթ (թուրքերէն լեզուի մէջ անանուն եւ անդոյ զանազան գործիքներ !!) :

Պատկերը կատարեալ ըլլալու համար անցողակի միայն յիշենք, թէ Լառուսի բառգիրքերս ալ անգամ մը բոլորովին գրաւուեցան (12 հատ), որովհետեւ մէջը Arménie, Tigran le grand եւն. բառեր կային :

Եթէ Սանասարեանի տեսչութիւնը կրցած է՝ հակառակ տիրող աննպաստ պայմաններուն եւ միջավայրին, հետզհետէ դէպի կատարելագործում առաջնորդել հայկական այդ մշտավառ ուսումնարանը, ատիկա կը պարտէին թէ՛ իրենց հեռատեսութեան, առողջ քաղաքականութեան եւ թէ վարժարանին ուսաստիճանով ըլլալու հանգամանքին, ինչպէս որ էր ինքն՝ Աղա Մկրտիչ Սանասարեան հիմնադիր-բարերարը :

Ուսուցչական կազմը կը բաղկանար, քանի մը բացառութեամբ, մանկավարժ համալսարանականներէ, որոնք մարզուած էին գերմանական լուրջ կրթութեամբ: Անոնց մտահոգութեան առարկան էր ո՛չ միայն սաներուն ուսումնական կեանքը այլ նաեւ քաջառողջութիւնը :

Հետեւաբար, զուգահեռական դժով կ'ընթանային ուսումն ու մարզանքը, եւ այս պատճառաւ ալ, նպաստաւորուած նաեւ զմայլելի բնութենէն, դուք կը հանդիպէիք մտքով ու մարմնով առողջ, վարքով ու բարքով օրինակելի Սանասարեանցի հոյլերու, որոնք իրարու կապուած կը մնային յաւիտենական եղբայրակցութեամբ :

Սանասարեանի մարզական կեանքի գլխաւոր առանցքը կը կազմէին երկու ամենակարեւոր ճիւղերը՝ լողալ եւ չմշկել (patinage) . չափազանց սլարդ էին մեր միջոցները կամ հանդերձաւորումը (équipement) բայց յառաջդիմութիւնն ու յանդգնութիւնը՝ անսահման: Հայաստանցի պատանիներ բոլորն ալ, անվախ, հպարտ, անձնագոհ, դիւրաւ կարելի է երեւակայել, թէ կարճ ժամանակէն ի՞նչ արժէքներ երեւան կուդային մարզական կեանքին մէջ: Առողջարար է Կարնոյ սաստիկ ցուրտը՝ Սեպտեմբերէն մինչեւ Մարտ ամիսը, սովորաբար դերօէն վար 20° սանթիկրատ, դէպի Դեկտեմբեր 25 — 30°, իսկ երբեմն գիշերներ բեւեռային ցուրտ՝ այն աստիճան որ դուրսը դրուած ջերմաչափին մէջ ալքով կամ սնդիկը հատուկուտոր նուրբ գիծ մը կը ցուցնէին:

Մառի վրայ կատարուած խիստ յանդուգն փորձերը կամ չմուշկով դժուած պատկերները՝ աղեղ, շրջան, խաչաձեւ հատածներ աջ ու ձախ, ետ ու առաջ, կամ թիւեր՝ 3, 5, 8 մէկ կամ երկու ոտքով դըժուած, այսօր իսկ, 40 — 50 տարի յետոյ, միջազգային մրցումներու հիմը կը կազմեն . . . :

Մեղի համար կամ բազմաթիւ ընտիր սահողներու սովորական յանդուգն փորձերն էին՝ չմուշկով արգելքի մը վրայէն ցատկել, շրջաթայ կազմած սահիլ եւ յանկարծ մէկ ծայրը իբր խարխիս ըրած՝ կեդրոնաձիգ ոյժով դարձնել ամբողջ շղթան, որու միւս ծայրը դանուող 2 կամ 3 հոգին գլխի պտոյտ պատճառող կեդրոնախոյս ոյժով կը դառնան, քիչօմէթլական համեմատական արագութեամբ կարելի է առանց չափազանցութեան ըսել՝ ժամը 150քմ . : Տասնեակ տարիներու ընթացքին հազիւ քանի մը ոչ ծանր արկածներ արձանագրուած են : Թէեւ սահիլը պարտաւորիչ չէր պաշտօնապէս, բայց իւրաքանչիւր աչակերտ ունէր իր սեփական չմուշկը, այնպէս որ դրեթէ բացառութիւն կազմող չկար գոնէ իբր պարզ սահող : Քաղաքին բոլոր հիւպատոսները, ընտանիքները կամ մեր ժամանակ Նաղրմ փաշա կուսակալին շնորհալի դաւակները յաճախ մեր սառի հիւրերն էին : Սահելու սքանչելի ու առողջարար մարզանքը, որ տեղի կ'ունենար կէսօրուան ճաշէն յետոյ մինչեւ ժամ 2, Կիրակի եւ տօնական օրեր ամբողջ օրը, կը սկսէր Հոկտեմբեր - Նոյեմբերէն մինչեւ Փետրուար - Մարտ, ըստ կլիմայական պայմաններուն (*):

Պարտաւորիչ էր սակայն լողալու մարզանքը, որ կը սկսէր ամբողջ աչակերտութեամբ եւ ուսուցչական կազմով մեր Սրտածոր փոխադրուելէն եւ վրանաբնակ կեանքը վարելու օրէն, Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն : Սրտածորը կամ Յրտածորը կը դանուի Կարինէն դէպի Հիւսիս - Արեւելք, ոտքով 4 ժամ հեռաւորութեան վրայ դէպի Տումլու - Շատգոմք լեռներու մէկ ձորաբերանը, Խաչկալանքին մօտ, Եփրատ գետի գլխաւոր մէկ բազուկին եզրը, որու ակունքն է Խաչափայտ : Այդ գետին վրայ կը յարդարէինք լողարանը՝ քարշարով եւ դուղձով . առաւօտուն՝ ջուրը սառնորակ ըլլալով, լողալը կամաւոր էր, իսկ կէսօրին ու երեկոյին՝ պարտաւորիչ : Լողալ չուզողին ոտքէն ձեռքէն բռնելով ջուրը կը նետէին : Ես ալ, 12 տարեկանիս, կը սարսափէի ջուրէն, առաջին ամարանոցս էր տակաւին . եւ մեծերը ոտքերէս ու թեւերէս բռնած՝ ջուրը նետեցին : Ահա այդ մկրտութենէն վերջ եւ տարիներ յետոյ Ֆրանսայի մէջ, իբր լուղորդ, պիտի մասնակցէի

(*) Ծ . Խ . — Լեհական թերթեր կը գրէին թէ չմշկելը առաջին անգամ Հայերը հնարած են՝ «իբրեւ միջոց իրենց լեռներէն իջնելու» :

Union Sportive Montargeoiseի մրցումին եւ յաղթանակ տանէի արագութեան եւ կռնակի լող բաժիններուն մէջ :

Լեռնային պատյտները մեծ տեղ կը դրաւէին, հսկայական բարձրութիւնները, անդնդախոր ձորերը, սարսափազդու ապառաժները բնակելիւղ չէին պատճառեր ոչ մէկ աշակերտի, կատարեալ alpinisme մը իր ամենալայն հմայքներով, վտանգներով, հորիզոններով, չարքա - շութեամբ եւ անբացատրելի ողբերգութեամբ : Բարձրագոյն դասարանի աշակերտներէն պետեր կը նշանակուէին խումբերուն թէ՛ ամարանոցի եւ թէ՛ առօրեայ պատյտներու ժամանակ : Գիտէինք լեռնային բոլոր արահետները, ըլլայ խուլ ձորերու մէջ թէ դէպի աւելի քան 2000 մէթր բարձրութեանց վրայ դտնուող սառնարաններն ու ձիւնի շեղջերը, որոնք յաւիտենական են : Պարզասլէս դմայլելի էր անձնուրութեան ոգին իրարու հանդէպ . այս՛, «Պէյթըն Բաուլ եւ Հիւպըրթ Մարթին»ները սքաութական շարժումը չէին իսկ ծրագրած, երբ Հայաստանի լանջին վրայ ամենախրոխտ scoutismeը վաստ եւ իրականութիւն էր յանձին Սանասարեան աշակերտութեան եւ որու դրուագները հատորներ կրնան լեցնել :

Ժամանակի ընթացքին, ողիմպիական խաղերն ալ, զորս մենք կ'անուանէինք Նաւասարդեան խաղեր, տեղ դրաւեցին մեր մարզանքներուն մէջ . վաղելու, ցատկելու, ձողով ցատկելու, սկաւառակ նետելու, պարկաւազքի, երկաթ դունդ նետելու եւ ասոնց պէս բազմաթիւ մրցումներ :

Գնդակախաղերը առօրեայ մարզանքի գեղեցկագոյն մասը կը կազմէին երկու մարդարաններուն մէջ ալ, ինչպէս նաեւ գնդամուղը (croquet) :

Ափսո՛ս որ այս հակիրճ տողերուն մէջ պիտի չկրնամ օրինակներով ու անուններով յիշել, թէ Հայաստանցի այսպիսի մարզիկները ինքնօգնութեան, անձնագոհութեան, վեհանձնութեան ինչպիսի՛ ապացոյցներ տուած են : Հպարտ թող ըլլան մեր նոր սերունդի մարզիկները Սանասարեան անունով, որու շունչը ապահովաբար հասած է իրենց ուղղակի կամ անուղղակի Հայաստանի անուշ ձորերէն եւ վսեմ լեռներու կատարէն, եւ ինչ որ բնազդաբար մեր նշանաբանն էր, իսկ իրենց իսկական պիտակը, թող բարձրանան եւ բարձրացնեն :

ՀԱՅԿ - ԱՐԱՄ ՔԻՊԱՐԵԱՆ

ԽԱՐԲԵՐԴ

Խարբերդը եղած էր Անատոլուի ամէնէն կարեւոր մէկ քաղաքը , որովհետեւ չկար որ եւ է քաղաք՝ Պոլսէն վերջ՝ որ իր ծոցին մէջ ունենար երեք քօլէժներ , Եփրատ , գերմանական եւ Ֆրանսական , կեդր . վարժարան , Թլկատինցին եւ Սուլթանիէ : 1912ին հայ ուսանողներու թիւը կը համրուէր մօտ 4000 :

Ինչպէս ամէն տեղ , Խարբերդն ալ իր Եփրատ , գերմանական եւ Ֆրանսական քօլէժներով սկսած էր մարմնակրթական շարժումին : Առաջին ազդանշանը տրուած էր Եփրատ քօլէժէն , պապէթ պօլի խաղով , բայց սահմանափակուած էր իր աշակերտութեան մէջ : Փութպոլը թէեւ դոյութիւն ունէր գերմանական եւ Եփրատ քօլէժներուն մէջ , բայց դնդակին դարնելով ետեւէն վաղել կը հասկնային : Արշաւներ միշտ դոյութիւն ունէին . հեծելանիւր օրուան նորոյթն էր եւ ամէն կիրակի 30 — 40 ուսանողներ կը պտտէին մեծ պողոտային վրայ :

1912ի դարնան էր որ կը կազմակերպուէր Փութպոլի առաջին մրցումը : Խանդավառութիւնը մեծ էր . չորս քօլէժներու ամբողջ աշակերտութիւնը եւ ուսուցիչները ներկայ էին . եւ ամէն ոք ունէր իր քօլէժին դոյնը եւ նշանը :

Չկար ոչ Փութպոլի կօշիկ , եւ ոչ ալ Փօրմա : Խաղացողները մեծադոյն մասամբ կը խաղային էնթարիով , կամ երկար տաքատով :

Պէտք է խոստովանիլ որ Ֆրանսական քօլէժի մէջ շատ աւելի լաւ կազմակերպուած էին դաշտային խաղերը : Կար տեսակ մը սկաուտիսմ , բաթրօնաժ անունով , որ դեռ այսօր ալ դոյութիւն ունի Ֆրանսայի մէջ , եւ ամէնէն զօրաւոր կազմակերպութիւններէն մէկն է :

Այսպէս շարունակուեցաւ մինչեւ 1914 , որմէ վերջ , ծանօթ է ամէնուն , տարագրութիւն ու ջարդ : Եւ այսօր հաւանաբար այդ ժամանակուան աշակերտութենէն քիչեր միայն կ'ապրին :

ԱՅՆԹԱՊ

Հայ Ուսումնասիրաց Մարմնամարզական Ակումբը՝ Հայ Ուսումնասիրաց Ընկերութեան մարզական բաժինն է , կազմակերպուած՝ ընկերութեան հիմնումէն հինգ տարի յետոյ , 1909ին , Այնթապ : Սկսած թուականէն մինչեւ գաղթականութեան շրջանը , ան իր շուրջ հաւաքած է իր ժամանակին երիտասարդ-պատանիներէն ստուար թիւ մը : Ունեցած է իր առանձին մարզարանը : Ան եւս Փութպոլի խաղը ընտրած է իբր կախարդական միջոց՝ երիտասարդները սիրաշահելու , որովհետեւ երիտասարդները զայն կը սիրեն աւելի , եւ յետոյ՝ ան է

մեր աղքատիկ կեանքին մէջ մարդանքի ամենադիւրին միջոցը: Քիչ ծախք. — Գնդակի մը գինը եւ ո եւ է դաշտ, — անաւասիկ մարդական կեանք մը: Այդ միջոցով է որ նոյն ընկերութեան տարադրուած անդամներէն ոմանք, նոյնիսկ իրենց աքսորավայրին մէջ, չկարենալով գանել Փութպոլ մը, եղան թուքի փամփուշտով խաղացին, եւ այսպէս մարդուած՝ ի մի հաւաքուած, ընկերային կեանքը ջերմ պահած, դաշնակիցներու գրաւման շրջանին աւաջին անդամ անդլիական խումբի մը հետ խաղալով անոնց յաղթած են:

Զինադադարէն յետոյ, 1918 — 1921, ան իր դործունէութիւնը ունեցած է Այնթապ, աւելի վարժ եւ դործնական միջոցներով: Կեդրոնավայրն է եղած տարադրութենէ դարձող շատ մը հայ պատանի եւ երիտասարդներու, մինչեւ Այնթապի պարսլումը, որմէ ետք միութիւնը իր դործունէութիւնը շարունակած է Հայէպի մէջ:

ԵԳԻՊՏՈՍ

Մինչեւ 1912, պատահական եւ անյարատեւ շարժումներ միայն երեւան եկած են: Այի մը երիտասարդներ վարանոտ փորձեր կատարեցին, ջանալով ընդօրինակել օտար շրջանակներու աշխոյժը: Բրօֆ. Արթիւր Էլմասի կը վիճակէր հայ երիտասարդութիւնը պատրաստել մարդասիրութեան, եւ ան յաջողած է իր ժրաջան աշխատութեանց պտուղը վայելել գէթ մէկ վկայեալ մարդանքի ուսուցչի մը արտագրութեամբն՝ յանձին Պ. Ստեփան Սանճեանի: Իսկ Պ. Բ. Օհանեան՝ նիւթական եւ բարոյական մեծ դոհողութիւններով վերջապէս կը յաջողէր գետին մը ասպանակել, 1912ին՝ Կաւմէ Հայ Մարմնամարդական Միութիւնը եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւնը հիմնելով:

Օրինակը վարակիչ էր, եւ երկու տարի վերջ, Գահիրէի մէջ ալ հայ մարդասէր երիտասարդութիւն մը համախմբուելով, Գալուստեան Աղգային վարժարանի շրջափակին մէջ ծնունդ կուտար Արարատ Հայ Մարմնամարդական Ակումբին: Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի այս քոյր հաստատութիւնները հազիւ թէ ամրացած՝ համաշխարհային մեծ պատերազմը վրայ կը հասնէր:

Կաւմէ Հ. Մ. Մ. եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւնը մինչեւ 1915 յիայլուն շրջան մը բոլորելէ վերջ, սկսած են ուժանալ, եւ զուտ մարդական գետին մը ըլլալէ դադրել: 1916 — 17ի շրջաններուն խումբ մը երիտասարդներ բաժնուելով Կաւմէէն կը հիմնէին Հայկական Փութպոլի խումբը, միասին տանելով գրեթէ օրուան բոլոր ուժերը: Կաւմէի մէջ մնացողները կարելին ըրած են կենդանի մնալու՝ եւ յաջողած են շնորհիւ ձրիաբար տրամադրուած մարդավայրի մը դոյութեան: Այս կացութեան անտանելիութիւնը այնչափ


զգալի եղած է որ՝ 1921ին խումբ մը երիտասարդներ՝ թուով փոքր, ջանացած են անջատ գործունէութիւն մը ստեղծել զուտ մարզական գետնի վրայ: Յարմար գետնի մը չգոյութիւնը միշտ արգելք հան — դիսացած է Փութպօլէ զատ այլ մարզական ճիւղերու Կամֆէն գուրս մշակուելուն: Այս իսկ պատճառաւ, այս նոր խմբաւորումը Տորֆ Հայ Փութպօլի միութիւն անուան տակ երեւան եկած է: Տասնեակ մը անդամներով ճամբայ ելլող այս միութիւնը՝ երկամեայ աշխոյժ կեանքէ մը վերջ, ազնիւ ժէսթը կ'ունենար ընդհանուր հայ մարզասէր եղ — բայրութեան շարքերուն միանալու, Աղեքսանդրիոյ մէջ պարգելով Հ. Մ. Ը. Մ. ի առաջին դրօշը:

Գահիրէի Արարատ հայ մարմնամարզական ակումբը միշտ վայելած է ու կը վայելէ հայ դաղութին սէրն ու համակրանքը, սակայն դժբախտ եղած է մարզավայրի կողմանէ:

Գահիրէի եւ արուարձաններու հայ երիտասարդութիւնը բաժան բաժան եղած էր:

Հէլիօպօլսոյ մէջ երեւան կուղար Ջանֆ հայ Մարմնամարզական Միութիւնը, Գահիրէի մէջ Մասիս եւ Հ. Յ. Դ. Պատանեկան միութեան Փութպօլի խումբերը, Արածանի մարմնամարզական միութիւնը, Կայ — ծակ Մարմնամարզական միութիւնը, եւ Հայ Երիտասարդաց Քրիս — տոնէական Ընկերակցութիւնը:

Վ. Ս. Շ.



Պոլսոյ Նոր Դպրոցի սկաուտները արշաւէ մը դարձին 1920ին

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

(1912 — 1914)



1908 Յունուարէն մինչեւ Մարտ ամիսը զօրավար Պէյտրն Փառւլ 6 պրակներով կը հրատարակէր «Սքառւթինկ Փօր Պօյլ»ը, համաչ — խարհային նոր «վարդապետութեան» մը առաջին քանդակները: Գիրքին առաջին ու ամբողջական տպագրութիւնը տեղի կ'ունենար նոյն տարուայ մայիսին ու մինչեւ 1909 ապրիլին հարկ կ'ըլլար եօթներորդ անգամ տպարան դրկել զայն, մասամբ բաւարարելու համար եղած պահանջները, որոնք ամէն կողմէ կը տեղային:

1908 Յունուարէն մինչեւ Մարտ կարող ենք սկառուտական համաչխարհային շարժման նախաքայլերը համարել եւ անոր արագ դրեթէ բունն ձեւաւորումը արձանագրել. որովհետեւ, «Սքառւթինկ Փօր Պօյլ»ի մէկ քանի պրակներու հրատարակութենէն վերջ Մեծն Բրիտանիոյ զանազան մասերուն մէջ սկառուտական խումբեր երեւան եկած էին արդէն:

Շարժումը Գրանտա անցնելու համար չորս երկար տարիներու կարօտեցաւ: Ամերիկացիք հազիւ 1910ին սրդեղրած էին սկառուտական դադափարը: Թուրքերը Պալքանեան պատերազմի պարտութենէն վերջ փորձեցին լայն կազմակերպութեան մը հիմերը նետել պետական նախաձեռնութեամբ ու դինուորական պատրաստութեան նպատակաւ: Իսկ Պուլկարները 1924ին միայն կը շարուէին սկառուտական դրօշի տակ:

Մեր մէջ սկառուտական շարժման արձադանդ կը հանդիսանար Շաւարշի ամսագիրը — «Մարմնամարդ» — նորահաս սերունդի աչնուացման բոլոր ձեւնարկներուն խանդավառ յառաջապահը: Առաջին դրութիւնը սրուն կը հանդիպինք այդ ամսագրին մէջ, կարճ ու ամփոփ տեղեկութիւններ են «Անդլիոյ մէջ տղոց կազմած հսկայ կազմակերպութեան» մասին: Այդ դրութիւնը «Տղայոց դումարտակներ» վերնադրով, թէեւ անստորագիր, սակայն ոճը ու յայտնուած դադափարները ցոյց կուտան մեզի թէ Շաւարշի դրիչէն է ելած: Յօդուածը ինքնին պարզ ակնարկ մըն է եւ յայտնի կ'երեւայ, որ Շաւարշ մտքէն իսկ չէ անցուցած սկառուտական խումբեր կազմելու կարելիութիւնը: Ո՛չ մէկ տարակոյս, որ այդ թուականին — 1912 Յունուար — սկառուտական շարժումը անժամանակ համարուած ըլլայ մեզի Հայերուս համար, որովհետեւ շատ սահմանափակ ցանկութիւն մը միայն կը յայտնուի Շաւարշի կողմէ այդ տողերու վերջաւորութեանը: «Որքան փափաքելի պիտի ըլլար որ զանազան Հայ վարժարաններու աշակերտ-

ներ պատասխանատու մեծի մը ընկերակցութեամբ պարբերաբար պտոյտներ կազմակերպէին զանազան բացօթեայ վայրեր: Եթէ կ'ուզէք տղայոց մէջ բարոյականը վառ պահել, անոնց սորվեցուցէք բնութեան սէրը եւ անոր զեղեցկութիւնները »:

Այսքան միայն: Սկառուտական հոյակապ ծրագրէն «Մարմնա — մարզ» բնութեան մէջ ապրելու մասը կ'իւրացնէ լոկ ու կը թելադրէ ի պէտս հայ վարժարաններու աշակերտաց:

Նորութիւնը այս ձեւով հաղորդելէ վերջ, այլեւս այս հարցի շուրջ որ եւ է դրութեան չենք հանդիպիր «Մարմնամարզ»-ի մէջ մինչեւ տասներորդ թիւը — Մայիս 15, 1912 — ուր հայ դաստիարակ մը — Յ. Թ. Հինդլեան — յօդուածաշարք մը կը սկսէր մանրամասնօրէն պատկերացնելով «Պոյ Սքառուը եւ իր կեանքին նպատակը »:

Սկառուտիզմի այս առաջին լուրջ վերլուծումը, ուր նաեւ մեր ազգային պայմաններու պատշաճեցում մըն ալ փորձուած է, կը շարունակուէր մինչեւ նոյն տարուան 13րդ թիւը:

Այդ յօդուածաշարքի վերջին մասը, որ փորձառու դաստիարակին թելադրանքը կը պարունակէ, կը մատնանչէ մեր քաղելիք օգուտը այս շարժումէն: Այդ մասը իրաւացիօրէն մեր ուշադրութիւնը կը դրաւէ, քանի որ լծուած ենք հայ սկառուտական շարժման սկիզբը խղճմտօրէն ուրուադժեղու աշխատանքին:

Շաւարշի նման Յ. Թ. Հինդլեանի ալ մտքէն հեռու է սկառուտական ընդհանուր կազմակերպութեան մը հիմերը դնելու գաղափարը: Ինք գիտէ, որ հայ տղաքը, որոնք «մէկ դպրոցի մէջ հինգ վեց մարմնամարզական ակումբներ կը կազմեն», պիտի փափաքին խանդավառօրէն նաեւ «պայ սկառուտ ակումբը կազմել»:

Սակայն ինք «Պէյտրն Փաուլի կազմակերպութիւնը ծանօթացնելով բնաւ նպատակ չէ ունեցած նմանօրինակ կազմակերպութեամբ պոյ սկառուտներու ակումբներ հիմնելու գաղափարը ներշնչել »: Այդ՝ «քիչ մը չափազանց յանդուղն բան մըն է տակաւին մեզի համար»: «Աշ — խարհի մէջ շատ զեղեցիկ ձեռնարկներ կան, բայց յարաբերականու — թեան օրէնք մըն ալ՝ ըստ որու «ձեռնարկ մը որ օգտակար է այս ինչ միջավայրի մէջ, կրնայ անօգուտ, եւ նոյնիսկ վնասակար ըլլալ ուրիշ միջավայրի մը մէջ: Իմաստուն մարդը ան է որ օգտակար ձեռնարկի մը գաղափարը կ'առնէ եւ գայն կը պատշաճեցնէ իր միջավայրին»: Հետեւաբար ինք խորհուրդ կուտայ ո՛չ թէ կազմակերպութիւնը հիմնել, այլ մեր տղոց բարքերուն մէջ մտցնել այդ ձեռնարկին ոգին եւ այդ կ'որակէ «արդարակշիռ ազգասիրութեան գործ»: Յ. Թ. Հինդլեան մեր մէջ սկառուտիզմի կիրառման կարելիութեանց աւելի համոզուած կ'երեւի քան՝ Շաւարշ Քրիսեան, երբ իր «Տղայոց գումարտակները» հրատարակ կը նետէր: Սկզբունքը ընդունուած է այլեւս, ար-

տաքին ձեւն է միայն որ բազմաթիւ ու բազմատեսակ նկատումներու առջեւ մերժում կը ստանար: Մտահոգութիւն մը կայ: Սկաուտական սկզբունքներն ու մեթոտները կը կիրառուին տեսակ մը զինուորական շրջանակի մէջ. խորքը գիւնուորացան է — հետախուզական վարժութիւններ, բանակում, տողանցք, հրամաններ, համազգեստ եւն.: Այս բոլորը ի՞նչ աչքով պիտի դիտէր կառավարութիւնը ու մանաւանդ թուրք ժողովուրդը: Պիտի հասկնա՞ր արդեօք, սկաուտիզմի դերազանցապէս դաստիարակչական հանդամանքը, թէ՞ քաղաքական կասկածամտութիւնը իր դոււիսը պիտի ցցէր, կրքերը պիտի հրահրէր ու ցաւալի հետեւանքներու ծնունդ տար: Յետոյ ի՞նչ պիտի ըլլար ծնողներու դիրքը, համամտութեան սահմանը. որքա՞նը պիտի թոյլատրէին ու որքա՞նը արդիւլէին այդ նոր մեթոտներէն ու պահանջներէն:

Սկզբունքը՝ միայն ուղին ներմուծելը — առանց սկաուտական սկզբումբ՝ այդ «քիչ մը չափազանց յանդուզն բանը» կազմելու, կը մնար սակայն վերացական անիրազործելի բան մը:

Ոգիին ընդունուելը, այն է սկաուտական մեթոտներու համաձայն ապրելով, իւրացնելու դրութիւնը անխուսափելիօրէն իրեն հետ կը քաշէ ե՛ւ արտաքին ձեւը: Ճամբան հարթելու համար պէտք պիտի ըլլար որ Սմերիկայէն Տ. Ե. Սիրամարդ յօդուած մը հասցնէր «Մարմնամարդ»ի Օլոստոսի թիւին, յայտարարելով թէ ժամանակ է, թելադրելու հայ ժողովուրդին, որ հայ տղաքներու մէջ եւս սկսի տարածել այս շարժումը՝ հայրենիքի մէջ: Աւելցնելէ յետոյ թէ Ա. — մերիկայի Հայերն ալ մէկ երկու տեղեր ձեռնարկած են արդէն» (*): Տ. Ե. Սիրամարդ ուղղակի կը մատնանշէ «Մարմնամարդ»ի խմբադրութիւնը իբր անվիճելի «պարապլուսը այս մեծ նշանակութիւն ունեցող շարժումին», համոզուած որ «Մարմնամարդ»ն է որ պէտք է չանտեսէ հայ տղաքը՝ վաղուան հայ սերունդին ատաղձը:

Ըստ երեւոյթին վճռական քայլը առնելու այս հրաւերն ալ ապարդիւն մնացած ըլլալ կ'երեւի, քանի որ մինչեւ թերթին երկրորդ տարեշրջանի աւարտիլը, «Մարմնամարդ» կատարեալ լռութիւն կը պահէ:

Ըստ երեւոյթին ըսինք, որովհետեւ եթէ սկաուտական մեթոտները վերլուծող եւ նոր դադափարականին տարածման նպաստող գրութիւնները իբր ազդակ ընդունինք, չենք կրնար անտեսել ուրիշ ազդակ մըն ալ նոյնքան եւ աւելի կարեւոր: Ընկերային շարժում մը ստեղծելու համար պայման է, որ մասնաւորապէս այդ ազդակը հրա-

(*) Կ'երեւի նախափորձեր, որոնք ոչ մէկ լուրջ հետեւանք ունեցած են, դժբախտաբար:

պարակ իջնէ՝ իրեն վերապահուած կենսական դերը խաղալու : Շահագրգռուող տարրն է այդ, որ ընդունակ պէտք է ըլլայ դադափարական սերմը արգասաւորելու :

Հնարաւոր է երեւակայել Ֆրանսական յեղափոխութիւնը, եթէ Ֆրանսայի ժողովրդական զանդուածները իրենց դադափարախօսներու մտքերուն հաղորդուելու ընդունակ դարձած չըլլային : Նոյնպէս դոր. Պէյտըն Փաուէլ հատորներ կրնար շարել առանց քայլ մը իսկ առած ըլլալու, եթէ անգլիացի տղան բթացած ըլլար հանդէպ ամէնէն պարզ ճշմարտութիւններուն եւ ինքնարեւարար — ներքին մղումով — աշխատանքի չլծուէր :

Պէտք է ընդունել, որ հայ սկառտական շարժման մէջ շահագրգռուող տարրը — հայ տղան — անմիջապէս ըմբռնեց ու դգաց : Նոր Աղանդի մասին ըսուած ամէն խօսք կ'արձագանդէր իր հոգիին մէջ : Խմորումը կը սկսէր առաջին մէկ օրէն. երեւակայութիւնները տեն — դատ կը դործէին : Սկառտիզմի շուրջ տրուած իւրաքանչիւր բացատրութիւն նոր աշխարհ մը կը բանար հայ տղուն առջեւ ու եթէ ըսենք, որ վարէն վեր ճնշում մը կար — յարածուն պահանջ մը տղոց կողմէ, որ շարժման ծնունդը կ'արագացնէր, անոր հաւանական առաջնորդները հրապարակ կը քչէր ու դործի անցնել կը ստիպէր, սխալած չենք ըլլար : Այսպէս 1912ը խորհրդածութեան, միջավայրի ու պայմաններու քննութեան, չափելու եւ ձեւելու, համոզումը եւ վճռականութիւնը կազմաւորելու շրջան կրնանք համարել :

1913 թ. Յունուարին, Շաւարշ աւելի քան վճռական է, դպրոցական տղոց միայն «պտոյտներ» թելադրելով այլեւս չըբաւարարուիր :

Հայ սկառտական կազմակերպութեան մը իրականացումը հասարակական գործիչի իր ծրագրին մէջ մտցուցած է այլեւս : Ինք համոզուած է ու խանդավառ. դիտէ որ «անոնք — հայ Պոյ Սկաուլթները — այսօր չկան, բայց վաղը պիտի ողջունենք զանոնք» : Խօսքով ու գրչով վճռականօրէն հետապնդած իր նպատակը — կազմակերպութիւնն է. հայ պատանեկութենէն կազմուած մէկ եւ ընդհ. կազմակերպութիւն մը. եւ «վստահ է որ այն շարժումը զորս զանազան պատճառներով չկարողացաւ մեծերով յաջողցնել » դպրոցական տղոցմով «պիտի կարենայ դլուխ հանել» : Ինք հրապարակաւ ու «գիտակցօրէն» իր սկառտական երդումը կ'ընէ «Պատուոյն վրայ երդնուլ, ազգին ու հայրենիքին որ եւ է կերպով օգտակար ըլլալու», կը ստորագրէ անոր տակ ու կը հարցնէ «պիտի չուզէ՞ք ինծի պէս ընել » : Ալ գործնական քայլեր են որ կ'առնուին, ինք առաջին հայ սկառտն է. իր երդումը ըրաւ. կը մնայ որ ուրիշներ հետեւին իրեն :

« Մարմնամարզ » ի խմբագրութեան շուրջ հաւաքուած են նոր ծրագրի մը համակիրներ. շարժումը ծայր տուած է :

Հայ Պօյ սկաուտներու հիմնական կանոնագրութիւնը թարգմանարար ու մաս առ մաս լոյս կը տեսնէ թերթին մէջ: Յ. Թ. Հինդլեանի նախորդ տարուան յօդուածաշարքը հրատարակ կ'ելլէ առանձին գրքոյկով մը, որուն կը կցուին նաեւ կանոնագրական յօդուածներ՝ իբր առաջարկներ, որոնք պիտի ենթարկուին կազմակերպութեան առաջին ընդհանուր ժողովի վաւերացման:

Շաւարշ իր դասախօսած վարժարաններուն մէջ «Նոր Աղանդ»ը կը բացատրէ իր շունչով. իր տաք, համողիչ ու վստահ խօսքերով:

Իրիկուն մը, — 1913 Մարտ 16 — կ'անցնի Սկիւտար՝ «Յառաջդիմական»ի սրահին մէջ խօսելու սկաուտիզմի մասին: Հաւաքումը կազմակերպական հանգամանք կ'առնէ, «երկսեռ ներկաներու ստուար թիւ մը ինքզինքը հայ սկաուտիզմի օժանդակ անդամ» կը հռչակէ եւ ծնունդ կուտայ «Հայ սկաուտներու առժամեայ Տնօրէն ժողովին»:

Շաւարշ, Մարտ ամսուան իր խմբագրականը կը նուիրէ «առաջին հայ պօյ սկաուտներուն» խանդավառ տողերով եւ հանդիսաւոր ոճով իր օրհնէնքը տալով Սկիւտարի հայ երիտասարդութեան:

Շաւարշ խանդավառուած՝ նամակ կը գրէ Լոնտոն պօյ-սկաուտի հազուատներ բերել տալու համար անոնց:

«Նոր Դպրոց»եանները իրենց տնօրէնին շունչին տակ ու Շաւարշի անմիջական ազդեցութեամբ կը կազմակերպուէին: Շաւարշ ունէր նաեւ իր արժանաւոր փոխանորդը Զայրմայր Այճեանը(*) որ նուիրումով կը տանէր իրեն վիճակուած աշխատանքը:

Մինչ Նոր Դպրոցի աշակերտութենէն «Կ. Պոլսոյ եւրոպական եղբրքի Ա. Գունդի» առաջին միաւորները կը կազմուէին, Սկիւտարցի պատանիներ տակաւ հակելով սկաուտական ծրագրին՝ հիմը կը դնէին «Ասիական եղբրքի Ա. դունդին», տալով երկու խմբակներ Առիւծ եւ Արծիւ:

Տա՛նք, այս պատանիներու սկաուտ դառնալու պատմութիւնը հետեւելու համար այն աստիճանական թափանցումին, զոր սկաուտիզմը ունեցաւ մտքերէն ներս:

Մարմնամարդական փոքրիկ ակումբ մը կար Սկիւտարի մէջ, որ միւս պոլսական ակումբներէն բացառութիւն կազմելու համար մոլորակային դրութիւնը խախտելով անկէ Հրատը վար առած էր իր ճակատը զարդարելու համար:

«Հրատ» կազմուած էր 1911ի արձակուրդի շրջանին. հիմնադիր ղեկավարը եւ մարզիչը Գառլօ Շահինեանն էր, այն ատեն իրաւարանական ուսանող: Տեսակ մը դրացիական հաւաքոյթ: Անդամները՝ ո-

(*) Նոր Դպրոցի սաներէն ու «Տորֆ»ի անդամներէն՝ ծնած 1897ին Սկիւտար: Ընդհ. պատերազմի գոհերէն:

րոնց մէջ նաեւ այս տողերը դրողը, իրարու մօտիկ կապուած տղաք էին :

Մարմնակրթութեան մէջ բարոյական ու խոհալ տեսնել կ'ուզէինք. չէինք կրնար դո՛ւնալ այն կարգ մը բարոյա — առողջապահական տուեալներով, որոնց դործադրութիւնը թէեւ կը հետապնդէինք հաւատացեալի անկեղծութեամբ, որոնք սակայն բաւարար չէին գեղեցիկ մարմնին հետ գեղեցիկ նկարագիրը եւ հոյին կառուցելու համար : Հետզհետէ մեր «չծխել, ուրիշ ըմպելի չդործածել, ժուժկալ եւ մաքուր ըլլալ» պատուիրաններուն վրայ նոր սկզբունքներ կ'ուզէինք աւելցնել — Յ. Թ. Հինդլեանի թելադրութեանց ազդեցութիւնը, թերեւս :

Յետոյ որոշած էինք մեր ակումբին համազգեստը ունենալ, արշաւներու ատեն հաղնիյու համար : Որով՝ ամէն անգամ որ քովէ քով դայինք խորհրդածութիւնները կը սկսէին. տափառի կամ շապիկի գոյնին եւ ձեւին մասին. ընդհանրապէս աժանի եւ սուղի հարցը մտահոգութեամբ կը ծեծուէր եւ գլխարկի ձեւը որոշելու յայտնի դժուարութիւններ ունէինք :

Այդ միջոցներուն — 1913 թ. փետրուարեան օր մը, իրիկունը, Գառլօ Շահինեան կը վերադառնար Պոլսէն՝ դործ մը լմնցուցած ըլլալու գոհունակութեամբ : «Մարմնամարզ»ի խմբադրատունն է եղեր. սկառուտական կազմակերպութեան մը հիմերը դնելու մասին տեսնուած են Շաւարշի հետ ու անոր հետ վճռած «Հրատ»ի ճակատագիրը : Սկառուտ պիտի ըլլայինք : Այդ օրը Գառլօն վճռած էր նաեւ համազգեստի հարցը ու Շաւարշի միջոցաւ ապսպրած սկառուտական տարազը բոլորիս համար(*) :

Մարտի վերջերը կամ Ապրիլի սկիզբը համազգեստները կը հասնէին. շաբաթ իրիկուն մը ուշ ատեն Գառլօն Պոլսէն կը բերէր ու յաջորդ օրը բոլորս ալ հագուած՝ ու իւրաքանչիւր խմբակ իր նիզակադրօշը առջեւէն՝ արշաւի կ'երթայինք : Անպատմելի էր մեր խանդավառութիւնը : Չէինք քալեր կարծես — այնքա՛ն թեթեւ ու արագ էին մեր քայլերը : Երազային վերելք էր մեր ճամբան, ուր ամէն քայլափոխիդ պահանջ կը զգաս ստուգելու ազուր իրականութիւնը : Հոգեկան այդ բարձր տրամադրութեամբ շունչերնիս Գայրը Տաղիի ստորտը կ'առնէինք :

(*) «Նոր Դպրոց»ի սկառուտներուն եւ մեր տարագները միասին կ'ապսպրուէին եւ միասին ալ կը ստացուէին : «Նոր Դպրոց»ը ունէր իսաֆի շապիկ եւ կապոյտ տափառ, իսկ «Հրատ»ը կապոյտ շապիկ եւ իսաֆի տափառ :

«Նոր Դպրոց»ի եւ «Հրատ»ի սկաուտական խումբերը կը կազմուէին միաժամանակ: 1913ի Հայկական Ողիմպիականը կ'ողջունէր հայ սկաուտները որոնք «օրուայ ամէնէն հաճելի եւ աչքառու նորութիւնն» էին: Սկաուտներու երեւումը առաջին անգամ հայկական հանդէսի մը մէջ, անոնց տողանցքը «ընդհանուր գոհունակութիւն կը պատճառէր ներկայներուն»: Եւրոպական եզերքի սկաուտները իրենց սեփական սրնդահարներու խմբակը ունէին: Տողանցքէն վերջ հաւաքական մարզանքներ կը կատարէին եւրոպական եզերքի սկաուտները «առաջնորդութեամբ սկաուտական խումբերու կազմակերպիչ եւ թերթիս տնօրէն Տ. Շաւարշ Բրիտանի» (տես «Մարմնամարզ»):

«Սկաուտական խումբերու կազմակերպիչ»—այս բացատրութիւնը քանի մը անգամներ եւ զանազան առիթներով գործածած է «Մարմնամարզ»ի խմբագրութիւնը, որ թարգմանի նոյն ինքն Շաւարշ: Նպատակը եւ դրդապատճառը այս մասնաւոր ընդդժումին կը կարծենք գտնել Շաւարշի հանդիպած ընդդիմութեան — Առժամեայի ժողովներու ընթացքին: Որով՝ սխալ մը սրբազրեւու նպատակաւ կը փորձէ իր վրայ կեդրոնացնել սկաուտներու կազմակերպումը, խուսափելով ժողովներու ծանծաղուտէն, ուր մարդիկ որքան ալ լաւ տրամադրուած ըլլային, սերած էին որոշ շրջանակներէ եւ հետեւաբար որոշ շահեր պիտի հետապնդէին (*):

Այդ միջոցներուն Սկիւտարի երկու հայ միութիւններուն՝ «Հրատ»ի եւ «Հայ Մարմնամարզարան»ի միջեւ խառն ժողովներ տեղի կ'ունենան ուր երկուստեք շատ խելացի խօսքեր կ'արտասանուին միանալու եւ հաւաքական ոյժերով տիրպար մարզարան մը հաստատելու համար Սկիւտարի մէջ:

Տեղի չունենար այդ միացումը, սակայն երկու կողմերն ալ կը տիրանան մարզարաններու:

«Հայ Մարմնամարզարան»ը Զիֆլիկի պարտէզը, իսկ «Հրատ»ը՝ Զիչէքճիինը կը վարձէ, իրարմէ ոչ շատ հեռու:

Նոյն տարուան աշնան «Հայ Մարմնամարզարանն» ալ կը կազմէր իր սկաուտական խումբը Գրիգոր Յակոբեանի նախաձեռնութեամբ:

«Հայ Մարմնամարզարան»ի հիմնադիր եւ անոր զրեթէ բոլոր քայլերուն ներշնչումը հանդիսացող մեր անուանի մարզիկներէն Պ. Մ. Մկրեանի կողմէ — որ այդ միջոցին Մանչէսթըր կը գտնուէր — սկաուտական տարազներ կը ստացուէին. ու Հայ Մարմնամարզարանի

(*) Տես «Յայտարարութիւն հայ սկաուտներու կազմակերպութեան առժամեայ տնօրէն ժողովոյ»:

սկաուտական խումբը կը պատրաստուի Պ. Յ. Յակոբեանի ղեկավարութեամբ, որ նոյն օրերուն 1914ի Ողիմպիականին կը մասնակցէր «Նոր Դպրոց»ի սկաուտներուն հետ :

Եթէ դասաւորում մը պէտք է կատարել աչքի առջեւ եղած երեք խումբերէն, սկաուտական դաւանանքի եւ խոնարհ տեսակէտով՝ առաջնութիւնը պէտք է տալ «Նոր Դպրոց»ի եւ «Հրատ»ի սկաուտներուն՝ իբր առաջին արտայայտութիւնը հայ տղան հոգեկան պահանջին եւ տեսլապաշտ հակումներուն : Իսկ թէքնիքի եւ մարզական գերակշռութիւնը անվիճելիօրէն պէտք է ընդունիլ որ կը պատկանի Պ. Յակոբեանի ձեռքին տակ պատրաստուած «Հայ Մարզարան»ի տղոց :

Ճիշդ պիտի չըլլար նաեւ մոռացութեան տալ «Հրատ»ի խմբակներուն բազմաթիւ արշաւները եւ ձեռնարկած աշխատանքը, որ սկաուտական հոյակապ վարժարան մըն էր մարմինը ու մանաւանդ նկարագիրը եւ ձեռնական ճարտարութիւնը զարգացնող :

Ահա իր կարելի մանրամասնութիւններով հայ սկաուտական շարժման սկիզբի օրերու պատկերը, զոր կուտանք հիմնուելով մեր յիշողութեան եւ կարգ մը աղբիւրներու վրայ :

Մենք պիտի անուանէինք դայն հայ սկաուտական պատմութեան նախաշրջանը, որ իր խարխափումներուն եւ միանգամայն իր տեսլապաշտ թռիչքին մէջ պիտի կրէր սաղմերը 1918 — 1922ի փառաւոր եւ արգասաւոր շրջանին :

1918ին հսկայ կազմակերպութիւն մը կը ձեւակերպուէր, մինչ տարաբախտ Շաւարշի օրով կարելի չէր անոր ծրագրային գոյութիւնն իսկ ճանչցնել տալ, երբ կազմուող սկաուտական խումբերը կը մնային հոս հոն՝ որը «Նոր Դպրոց»ի, որը «Հրատ»ի կամ «Հայ Մարմնամարզարան»ի շուքին տակ. բոլորը իրարու նման, եւ սակայն իրարմէ հեռու առանց կապի եւ հաղորդակցութեան :

Այսօր կայ ամբողջ սերունդ մը հայ սկաուտներու, որ իր հոգիին խորը պահած ցեղին խոնարհները ու կարօտը հայրենի երկրին՝ կը թափառի աշխարհէ աշխարհ, կը հիւժի օտար ափերուն վրայ, բայց չի մոռնար ու պիտի չմոռնայ երբեք իր վերացնող երդումը «Ծառայել հայրենիքին», եւ դարերու փորձառութեամբ թրծուած շունչը իր պապերուն որ կը թելադրէ «Պատրա՛ստ, մի՛ շտ պատրաստ» :

Ն. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

.....

Որքան ալ ուզենք առարկայական ըլլալ՝ պատմութիւնը տալու համար իր չոր ու ցամաք իրականութեամբ, ստիպուած ենք, սակայն, ուշադրութեան յանձնել պարտաւայ մը, որ կը բնորոշէ բացառապէս հայ — ցեղային յատկանշական դիժ մը:

Ընդհ. պատերազմը արիւնով ողողած է մեզ: Գաւառը անողոք կերպով ջարդուած: Թրքական ամենի թաթը տրորած է ոչ միայն կոտորակեալ Հայութեան, այլեւ ամէն մէկ Հայու մտածումը, գըլխատուած է մտաւորականութիւնը, բովանդակ մարդկութիւնը չորս տարի շարունակ ապրած է մահուան արհաւիրքը, երկիրներ են աւերուած ու միլիոնաւոր երիտասարդութիւն զս է գացած թնդանօթ — ներու եւ դնդացիրներու, ու կուտող կողմերը ա'լ սպառած, կը փորձեն վերջ մը տալ խելայեղ պայքարին, բայց դեռ Թուրքիան, փաստօրէն պարտուած թէեւ, այսուհանդերձ պատերազմի մէջ է, ու թրքահայ մնացեալ հայութիւնը՝ սարսափի եւ անթիւ զոհերու շմեցնող հարուածին ազդեցութեան տակ... բայց, նոյն այդ «Մնացորդաց»ին մէջ՝ խորունկ կսկիծին եւ շրջապատին ազգած սարսափին հետ կայ նաեւ, — երեւա'ն կուղայ, յանկարծ, — վերականգնումի տենչը ...

Չմոռնանք, որ նաեւ Եւրոպան իր բանակները դեռ տուն ուղարկած չէ, իսկ մարդական հաւաքական կամ մասնաւոր կեանք ոչ մէկ երկրի մէջ է վերսկսած:

Այսուհանդերձ, Հայը, — Փիւնիկեան հոյակա'պ ոգի, — կը խորհի ոտքի կանգնիլ, «Մեծերէն» առաջ շտկել իր ողնայարը, համա — խմբել իր պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը, ծածանեցնել դրօշ մը ու հաւաքուիլ անոր ներքեւ ...

Տեսէ՛ք, Հ. Մ. Ը. Մ. Ի ջլապինդ ձեռքը, Հայկ ձիգմէճեանն է որ կը պատմէ . —

« ... Ընդհ. պատերազմին մասնակցող «Զինակցութեան» կողմը արդէն իսկ ստիպուած էր ընդունիլ պարտուած ըլլալ, եւ թուրք պատգամաւորը կը պատրաստուէր մեկնիլ Չանաք — Քալէէն դուրս, բաց ծովու վրայ երթալ «Համաձայնականներու» մօտ, առժամեայ զինադադարէն օգտուելով հաշտութեան նախադիժ մը ճշդելու: Օրուան զինուորական եւ քաղաքական կացութեան ճշդումին յաւակնութիւնը ինձմէ հեռու ըլլալով, սա միայն որոշ կրնամ ըսել, որ մեր զինուորական հագուստները անպաշտօն կերպով մէկ կողմ դրած, մէկ քանիներս այնպէս կը զգայինք թէ ընդհանուր պատերազմին քաջա — լերուած հայկական սպանդն ալ վերջ գտած կրնայինք նկատել եւ

դիպուածով վերապրողի յոգնած մէկ շունչը կ'ուզէինք առնել . . . :
Ուրեմն, 1918ի հոկտեմբերի վերջերուն (Ծ . Խ . Ձինադադարը կնքուե-
ցաւ 1918 Նոյեմբեր 11ին) Տիգրան Սոյեանը եկաւ ինծի : Հազիւ մէկ
երկու խօսք աջէն ու ձախէն, հայ մարդական կեանքի անցեալին մէկ
քանի ակնարկութիւն, հինին յուշերովն ու յոյզերովը պզտիկ խան -
դավառում մը, անդրադարձում մը մենէ անդարձ բաժնուող կարիճ
դէմքերուն, մնացեալներու անունին մէկ վերաքաղը, անոնց հին յա-
րաբերութիւններու մասին կարծիքներ, եւ վերջապէս խօսք առաւ
Տիգրան աւելի վարանոտ՝ քան վճռական ձեւով մը, եւ ըսաւ . «Հա՛յկ,
Գրիգոր Յակոբեան ալ համաձայն է, որ հաւաքուինք մէկ մը, եւ
կարծիքներու փոխանակում մը ունենանք մարդական կեանքի վերա -
կազմութեան խնդրի շուրջ : Քեզի համար անպատեհութիւն մը կա՞յ
Յակոբեաններու դրասենեակը հաւաքուելուն մէջ» : Անշուշտ, Տիգ -
րանի հետ մեր շատ մտերմութիւնն էր որ ինձ իրաւունք տուաւ սա



1919ի Պոլսոյ Հ . Մ . Ը . Մ . ի ողիմպիականէն վերջ առնուած խրմ-
բանկար մը Զաւէն պատրիարքի շուրջ :

Կ'երեւան ձախէն աջ՝ Լ . Յակոբեան, Հ . Ճիգմէնեան, Բ . Կէօզիւ-
պէօյիւքեան, Ա . Սալմասլեան, Յ . Թ . Հինդլեան, Տոբթ . Էֆմէֆեան,
Զաւէն պատրիարք, Տոբթ . Ուզունեան, Գ . Յակոբեան, Ժ . Խօրասան-
եան, Ա . Գափանօզեան, Ա . Ալլահվերտի :

կերպ պատասխանելու. «յիմա՞ր ես, ի՞նչ ես, ի՞նչ անպատեհու — թիւն » :

«Քիչ առաջուան վարանոտ Տիւրանին դէմքին վրայ ուրախութիւն մը վայլատակեց, եւ անմիջապէս դրոպանէն հանեց նամակ մը, որ հասցէս կը կրէր եւ ձեռքս տուաւ : Թերթ մը թուղթ. վրան՝ որոշապէս Տիւրանին զիրովը դրուած մէկ քանի տող, ստորադրուած՝ Գրիգոր Յակոբեանէն՝ ամէնէն կարճ միջոցին մէջ զիս իր մօտ կը հրաւիրէր : Այս զիբը վերջը կեդրոնին տրամադրած էի՝ իբր Հ. Մ. Ը. Մ. ի նա — խաքայլը յաւերժացնող փաստաթուղթ» :

Կարօ Ուշագլխան, «Հայ Սկասուտ»ի խմբադիրը, իր նկարագրութեան մէջ կուտայ այդ հրաւերին պատճէնը. —

« Հայ Մարդական Միութիւն մը կազմելու համար, ժողով մը տեղի պիտի ունենայ մեր գրասենեակը, Վիթայի խան, թիւ 7, կը խնդրուի ներկայ գտնուիլ : Գ. Յակոբեան » :

«Հ. Ճիզմէճեանի դրկուած այս տոմսին տակ, — կ'աւելցնէ Կ. Ուշագլխան, — թուական չկար եւ ես չկրցայ ճշդել ճիշդ օրը : Միայն նոյեմբերի մէջ ըլլալը կը յիշեմ : Նոյն օրերուն էր որ Համաձայնական բանակները Պոլիս մտան իբրեւ յաղթականներ» :

Հ. Մ. Ը. Մ. -ը, եւս «Հայ Սկասուտ»ի Ա. թիւով (տես, «Հայ Սկասուտ» թիւ 1, էջ 7) եւ «Մեր Գործը» վերնագրով կը պատմէ իր ծնունդը, ու կը սկսի սապէս. —

«Զինադադարի առաջին օրերուն, երբ Հայութիւնը արիւնի մկրտութենէն տակաւին նոր դուրս էր եկեր, իր շղթաներուն կղպանքները հազիւ քակուած, խումբ մը երիտասարդներ հաւաքուեցանք, Պ. Գրիգոր Յակոբեանի կոչին վրայ, կազմելու համար Հայ Մարմնա — կրթական Ընդհ. Միութիւնը (Հ. Մ. Ը. Մ.) : Առաջին նիստը գումարուեցաւ 1 նոյեմբեր 1918ին, 9 հոգիի ներկայութեամբ, որոնք հրաշքով մը աւերի ճիրաններէն դուրս մնացած էին եւ որ նախկին սիրահարներ ու մասնապէտներ էին մարզանքի եւ սփռքի կեանքին» :

Բայց, խօսքը տանք նաեւ իրեն՝ Գրիգոր Յակոբեանին, այս ձեռնարկի մասին. —

« Հ. Մ. Ը. Մ. ի նման կազմակերպութիւն մը ստեղծելու գաղափարը վաղուց կար, պատերազմէն իսկ առաջ : Երբ Օսմ. Սահմանադրութենէն յետոյ հայ երիտասարդութիւնը սկսաւ շունչ առնել թուրքիոյ մէջ, եւ հետզհետէ սկսան կազմակերպուիլ մարզական միութիւններ, անհրաժեշտութիւն ծագեցաւ անհատական ճիգերը համախմբելու եւ հաւաքական աշխատանքով իրականացնելու մեր վաղուան սերունդին Փիզիքական դաստիարակութեան գործը : 1911ին, հայկական առաջին ողիմպիականէն յետոյ, մարզական շարժման նուիրուած քանի մը ընկերներով փորձեցինք մարմնակրթական ընդհանուր կազ-

մակերպութեան մը կորիզը ստեղծել՝ իրարու մօտ համախմբելով դո-
յութիւն ունեցող մարդական միութիւնները, — որոնց ղլխաւորներն
էին «Րաֆֆի»ն, «Տարք»ը, «Արաքս»ը, «Արտաւազ»ը, «Տիտան» եւ
«Վահագն» եւայլն, — անոնցմէ բխեցնելով ղեկավար մարմինը^(*) :

« Ապարդիւն անցան մեր առաջին փորձերը : Շատ էին մեր ճամ-
բուն վրայ խոչընդոտները : Դառն է զանոնք յիշել (միութիւններէն ո-
մանց արտարբերութիւնը եւ կարգ մը վարիչներու անձնական, եսի
խնդիրները) : Կ'ըսեմ անոր համար որպէսզի ղլխացուի թէ պատերազ-
մէն առաջ ալ հասունցած էր Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան
մը կազմութեան դադափարը, եւ զայն իրականացնելու համար քա-
նիցս ձեռնարկ եղած է :

Պէտք էր, սակայն, մարմին տալ այս դադափարին : Խնդիրը կը
դառնար նախաձեռնութիւնը ստանձնելուն մէջ : Առաջին աշխատանքը
բարեկամի մը հետ ունեցանք մեր տունը : Որոշեցինք խորհրդակցու-
թեան մը կանչել մեր մարդական շարժման վեթերաններն ու ամենա-
մօտ բարեկամները (Ծ. Խ. — Որոնք վարիչներն էին ղլխութիւն ու-
նեցող միութիւններու) : Նոյեմբեր 1ին էր որ մեր դրասենեակին մէջ
տեղի ունեցաւ այդ պատմական նիստը : Հոն էին Հայկ Ճիզմէճեան,
Տիգրան Խոյեան, Գառլո Շահինեան, Լեւոն Յակոբեան, Սիրուհի եւ
Ես : Հարկ չկայ ըսելու թէ բոլորին ալ սրտին մօտ էր դադափարը :
Այդ ժողովն էր որ հիմը եղաւ : Ներկաներն էին որ պիտի կազմէին
առաջին խարխիւր՝ իբրեւ Կեդրոնական վարչութիւն, քանի մը բա-
ցականեր կցելով իրենց, ինչպէս՝ Յ. Հինդլեան, Վահրամ Փափազ-
եան, Գրիգոր Մերձահօֆ : Սիրուհին էր միայն, որ չմտաւ վարչու-
թեան մէջ՝ խոստանալով դուրսէն աշխատիլ : (Ծ. Խ. — Այս վարիչ-
ները իրենց խումբերը պիտի վերածէին Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղե-
րու) : Յետոյ էր որ երբ ցանցը տարածուէր, պիտի խորհուէր ընդհ.
Ժողովի հրաւիրելու եւ ընտրովի ստեղծելու Կեդր. Վերին Մարմինը :
Ըսեմ այս առթիւ, որ այս առաջին նիստին իսկ մարմնակրթանքն ու

(*) Հայկ Ճիզմէճեանի եւս Հ. Մ. Ը. Մ. ի կազմութեան մասին գրի
առած իր նօթերուն մէջ, կ'անդրադառնայ այս կէտին, ու կ'ըսէ. —
« 1912 — 1913 թուականներուն, արդէն՝ Հայ Մարմնամարզական
Ընդհ. Միութիւն մը ստեղծելու գադափարը գոյութիւն ունէր. այն
ատենուան Պոլսոյ արուարձաններուն մէջ գործող մարզական եւ
ֆութպոլի խումբերը Շաւարշ Քրիսեանի հրաւերով Մարմնամարզ
թերթի խմբագրատունը հաւաքուելով ունեցած են քանի մը խոր-
հրդակցական ժողովներ, բայց դժբախտաբար արդիւնաւոր չէ եղած
եւ տարի մը յետոյ ընդհ. պատերազմը վրայ հասնելով ամէն ինչ մոռ-
ցուած է :

սկառախամբ միացուեցան միակ դրօշի մը տակ, իբրեւ լրացուցիչ մաս իրարու: Ապագան ցոյց տուաւ թէ իրաւունք ունէինք: Ու աւելցնեմ որ առանց պատճառի չէր որ որդեգրեցինք «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն» վերտառութիւնը: «Մարմնամարզական» բառը բաւական չէր՝ մեր իտէպը պարզելու համար: Մեր որդեգրածը մարմնամարզը չէր միայն. այլ՝ մարմնակրթութիւնը՝ իր լայն, ամբողջական եւ բարերար իմաստով: Հետաքրքրական է յիշել թէ այդ նիստին մէջ էր որ «Հ. Մ. Ը. Մ.» կրճատումն ալ ստեղծուեցաւ:



Հ. Մ. Ը. Մ. ի երկրորդ պատգամաւորական ժողովի անդամները
Գարակէօզեան սրբանոցին մէջ

Առաջին պահուն խորթ եղաւ մեր ականջին: Բայց, ան կամաց կա — մաց ընդհանրացաւ, սիրուեցաւ, մինչեւ դարձաւ համազգային դուր — դուրանքի առարկայ: Տեսակ մը խորհրդանշան»:

Սրտաբուխ ու ջերմ տողեր ունի նաեւ այս մասին Հ. Ճիզմէ — ճեանը. —

«... Քիչատիչ, բղբտող, բաժան բաժան ընել ուզող այդ սեւ օ — րերէն ետք, իրարու քով, իրարու հետ, համերաշխ եւ ալ անբաժան ապրելու ծարաւն իր ծայրայեղ սաստկութեան էր հասած: Հասկցած էինք դառնօրէն՝ օտարներէ ակնկալուած շնորհներուն արժէքը: Տե — սանք թէ ամէն ցեղ՝ իր փրկութիւնն իր ողնայարին վրայ միայն կը — նար կանգուն պահել: Դարերուն մէջէն մեզ հասած խիստ թանգ պա — տանին, Հայ անունը չթաղել, իր մէջ կեանքը վերարծարծելու յոյսի միակ համեստ կորիզն էր մնացած բոլւ մը պատանեկութեան տրուե — լիք առողջ դաստիարակութեան փրկարար գործին մէջ: Կը հասկցուի, ուրեմն, որ Հ. Մ. Ը. Մ. -ը չունեցաւ մեծ հիմնադիր: Այլ՝ մեծ Հ. Մ. Ը. Մ. -ը ունեցաւ նախքան պատերազմը ապրող մարդական ակումբ — ներուն մէջ իրենց նկարագրին հիմունքը կազմած մէկ քանի վերապ — րողներ՝ իբր ճամբայ բացողներ»:

Այդ ժողովին մէջ կ'որոշուի նաեւ «խօսքէն աւելի գործ ցոյց տալ առանց աղմուկի»: Որով, ուշադրութեան վլխաւոր առարկան կ'ըլլայ կազմակերպել սկաուտական խումբեր, քաջ դիտնալով որ մեր պատա — նիններուն շատ աւելի կարեւոր էր այս՝ դանոնք մարդելու համար մարմինով եւ հոգիով: Եւ քիչ ատենի մէջ զգալի թիւ մը կը գոյանայ այս ուղղութեամբ: Պոլսոյ արուարձաններուն մէջ գոյութիւն ունե — ցող բոլոր մարդական եւ Փութպոլի միութիւնները առանց վարանելու վերածուեցան Հ. Մ. Ը. Մ. -ի մասնաճիւղերու: 1918 Դեկտեմբերին Ադդ. Կեդր. վարչութեան Քաղաքական Ժողովը կը վաւերացնէ Հ. Մ. Ը. Մ. -ը: Պէտք էր անմիջապէս գործի լծուիլ:

Առաջին ձեռնարկ

Առաջին պատեհութեամբ՝ Ղալաթիոյ եկեղեցւոյ շրջափակին եւ Սկիւտարի մէջ հիմը դրուեցաւ առաջին ձրի դեղարաններուն եւ շարժուն հիւանդանոցներուն: Սկաուտներ յատկացուեցան այդ գոր — ծին համար, աշխատանքի բաժանման եւ կարգապահութեան մասին կարելին եղաւ, եւ այդ գործը տեւեց երկու ամիս, որու ընթացքին 1500ի մօտ հայ գաղթականներ եւ կարօտ հիւանդներ խնամուեցան: Ասոնցմէ միայն երկու զոհ տրուեցան, պարզ այն պատճառաւ որ հի — ւանդները Հ. Մ. Ը. Մ. -ի ձեռքը հասան մահամերձ վիճակի մէջ: Այս ձեռնարկին մէջ Հ. Մ. Ը. Մ. -ի աջակցեցան մէկ քանի հայ բժիշկ — ներ: Հայ Կարմիր Խաչի հաստատումով, Հ. Մ. Ը. Մ. -ը թողուց այս

գործը: Թէեւ, կրկին աշխատեցաւ այդ ուղղութեամբ եւս: Գաղթա-
կաններու չորցած փայտեր կտրեցին բերին, որբահաւաքներուն օգ-
նեցին եւ օգտակար եղան որբերու տեղափոխումի գործին:

Որբերու դաստիարակումը

Հ. Մ. Ը. Մ. ի անմիջական մտահոգութիւններէն մին եղաւ նաեւ
մեր որբերու բարոյական — Փիզիքական դաստիարակութիւնը: Նախ-
կին մարդիկ եւ ախոյեան Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան, որ այն ատեն
խնամատարութեան տնօրէնն էր, սկառուտիսմը եւ մարզանքը պարտա-
ւորիչ դարձուց որբանոցներէն ներս, վստահելով այդ ծանր գործը
Հ. Մ. Ը. Մ. ին: Այսպէսով, ամէն մասնաճիւղ կը ստանձնէր իր շըր-
ջանին մէջ գտնուող որբանոցին սկառուտական ու մարզանքի դասա-
ւանդութիւնը: (Տես, այս մասին, առանձին գրութիւնը՝ «Հ. Մ. Ը.
Մ. ը որբանոցներէն ներս» խորագրով):

Երկու ճակատ

Ուրեմն, հետզհետէ կը ձեւաւորուէր ու կը սահմանաւորուէր Հ.
Մ. Ը. Մ. ի գործունէութեան իսկական մարդը: Այդ գործը, սա-
կայն, ունէր երկու ճակատ, — 1) ներքին — վարչական եւ 2) ծրագրա-
յին գործունէութիւն:

Վարչական

Ու քանի որ նախ պիտի խօսինք վարչական — կազմակերպչական
ճակատի մասին, խօսքը տանք Հ. Մ. Ը. Մ. ի քարտուղարին՝ Կարօ
Ուշաքլեանին, իբրեւ այդ գործին անձնապէս կապուած անձի. —

«Հ. Մ. Ը. Մ. ի վարչական մեքենան օրէ օր կանոնաւորուելու վրայ
էր եւ մենք պիտի կրնայինք դայն հասցնել Եւրոպական կազմակեր-
պութեան մը աստիճանին: Պ. Գ. Շէհրիկեան ստանձնած էր, ճրի-
օրէն, հաշուակալական ճիւղը եւ որդեգրած էր շատ խղճամիտ սիս-
դէմ մը, որմէ մեծապէս կ'օգտուէր կեդրոնի եւ մասնաճիւղերու հաշ-
ուական գործը: Ամբողջ շարժումը կեդրոնացած էր ընդհ. կեդրոնի
գրասենեակին մէջ: Հոն ունէինք անդամներու հսկայ տոմարը, ուր
արձանագրուած էր ամէն մէկ անդամ, ինքնութեան բոլոր մանրա-
մասնութիւններովը: Եթէ պատահէր որ անդամ մը մասնաճիւղէ մը
ուրիշ մասնաճիւղ անցնէր, իր նոր մասնաճիւղէն եկած ինքնութեան
թուղթը, տոմարին մէջ արձանագրուելէ առաջ՝ անուանացանկը աչքէ
կ'անցուէր եւ յայտնի կ'ըլլար որ այս նոր անդամը, նախապէս այսինչ
մասնաճիւղին արձնագրուած է, հոն սաչափ պարտք ձգած է, կամ
այդ մասնաճիւղէն վտարուած կամ կախակայուած է: Կարելի էր
գիտնալ նոյնպէս թէ, Միութեան մէջ, օրինակ, քանի՞ Յակոբ անու-
նով մարդ կայ, քանի՞ Կարապետ կամ Լեւոն կայ, եւ կամ քանի՞ դե-

դագործ, կօշկակար, դերձակ կամ ուսուցիչ կայ: Եւ անոնք ինչ հիւանդութիւններ անցուցած են, եւն. եւն.:

«Պ. Շէհրիկեան, ուրիշ տետրակի մը մէջ, իբր ապրանք Մուսք կ'անցնէր բոլոր անդամները: Իսկ հրաժարող, մեռնող, կամ վտարուողներն ալ՝ Ելք: Այսպէս, դիտէինք թէ որքան թիւ ունինք Միութեան մէջ: Երբ անդամական ճիւղը այս կերպ էր, կրնաք եթադրել հաշուական ճիւղը, 10 փարայի աւելորդ ծախքի համար նամակ կը դրէր մասնաճիւղերուն, բացատրութիւն կը պահանջէր եւ եթէ գոհացուցիչ չգտնէր, չէր փակեր հաշիւը :

«Քալով միւս ճիւղերուն, մարդական, Փութպոլ եւ սկաուտական, անոնք ալ իրենց մանրամասն տոմարները ունէին: Ամբողջ շարժումը աչքի առջեւ էր: Եւ օրէ օր կատարելադործուելով պիտի հասնէր իտէալ ձեւի մը: Կեդրոնի մէջ ունէինք մարդական չափանիշներ.— ցուցակը, Փութպոլի մրցումներու տեղեկագիրները, սկաուտական քննութիւններու արդիւնքները եւ բոլոր սկաուտներուն՝ նկարներով արձանադրութիւնը, մասնաճիւղերու բարոյական դործունէութիւնն ալ մեզի անձանօթ չէր»:

Յաջորդական վարչութիւններ

26 Նոյեմբեր 1919ին տեղի ունեցաւ Ա. պատգամաւորական ժողովը, Բերայի Եսայեան վարժարանի սրահին մէջ: Կը մասնակցէին բոլոր մասնաճիւղերը՝ իրենց ներկայացուցիչներով: Ժողովը իր աշխատանքները տարաւ տաք, եղբայրական ու համերաշխ մթնոլորտի մը մէջ: Բարեփոխեց ծրագիրը — կանոնադրի մէկ քանի յօդուածները: Ընտրեց Կեդր. վարչութիւն՝ հետեւեալ կազմով.—

Պ. Պ. Յովհ. Հինգլեան, Արամ Նիկողոսեան, Հայկ Ծիղմէճեան, Գրիգոր Յակոբեան, Հայր Արիստակէս Վարդանեան, Լեւոն Յակոբեան :

20 Մարտ 1924ին գումարուեցաւ Բ. Պատգամ. ժողովը, 18 մասնաճիւղերու 54 պատգամաւորներով, որոնք 30 օր Գարակէօղեան որբանոցի պարտէզին մէջ վրաններու տակ դիչերելով տարին լիակատար աշխատանք՝ Հ. Մ. Ը. Մ. ի վարչական մեքենան լաւագոյն հիմերու վրայ դնելու համար :

Այս ժողովէն ընտրուեցաւ նոր վարչութիւն մը.— Թ. Մեծատուրեան, Ժ. Խորասանճեան, Հրաչեայ Տէր Ներսէսեան, Գառլօ Շահինեան, Վահրամ Փափազեան, Ա. Քրիսեան, Պօղոս Շապոյեան :

Սկաուտ. յանձնախումբ.— Յ. Թ. Հինգլեան, Հ. Ծիղմէճեան, Գ. Յակոբեան, Արչակ Յակոբեան, Օ. Ֆրէնքեան, Օ. Գովան եւ Ա. Ալլահվէրաի :

Շուէտ. յանձնախումբ.— Պ. Շապոյեան եւ Ա. Քրիսեան :

Աթլէթիք.— Գ. Շահինեան, Գաբրիէլ Շիշմանեան եւ Վ. Թէր —
դեան :

Ֆութպոլի ճիւղ.— Վարազ Փողարեանի յանձնուած :

1921 Նոյեմբեր 27ին կը դուժարուի Գ. պատղամաւորական ժողո-
վը, որ կ'ընտրէ հետեւեալ կեդր. վարչութիւնը.—

Ն. Խորասանճեան (ատենապետ), Խաչիկ Ալեանաքեան (ատենա-
դպիր), Արամ Կեսարեան (գանձապահ), Հայկ Ճիզմէճեան, Յակոբ
Անտոնեան, Լեւոն Յակոբեան, Տոքթ. Սալբի, Քրիս Թէնէրճեան եւ
Թ. Մեծատուրեան՝ անդամներ :

1923ը պիտի ըլլար վարչական կազմակերպութեան նոր շրջան մը :
« Կեդրոնի դրասենեակը, — համաձայն, դարձեալ, Կ. Ուշազէանի
վկայութեան, — սկսած էր կարգի դնել բոլոր վարչական թուղթերը,
դասաւորել գործունէութեան ձեւը : Մտադրած էինք եւրոպական ձե-
ւով ու յստակ կերպով պատրաստել թուղթեր եւ կանոններ՝ բոլոր
մասնաճիւղերուն համար, որպէսզի դիւրացնենք անոնց վարչութիւն-
ներուն աշխատանքները : Պարզ դրութեան մը պիտի վերածէինք դոր-
ծը, — Ամերիկայէն մինչեւ Հայաստան ու Պարսկաստան, շրջաններու
վերածելով :

Մեր նպատակն էր վարչական գործերը թեթեւցնելով ուժ տալ ի-
րական գործունէութեան : Մեր ժամանակին մեծ մասը կը դրաւէին
նամակապրութիւններ եւ տեղեկագիրներ, հաշուեցոյցեր եւ այլն :

« Ասոնց փոխարէն՝ մենք պատրաստեցու վրայ էինք ֆորմիւլներ՝
կարճ եւ յստակ, որոնք մի քանի տողով լեցուելով կեդրոն պիտի
դրկուէին մասնաճիւղերու եւ յանձնախումբերու կողմէ՝ առանց ժա-
մանակի կորուստի » :

Ծրագրային

Հ. Մ. Ը. Մ. ի բուն գործունէութիւնը, բնականաբար, պիտի տա-
րածուէր ծրագրային մարդին մէջ :

Քանի մը ամսուան իր գործունէութիւնը դադրեցականներու մէջ՝
հանրային համակրանք մը ստեղծած էին արդէն իր մասին :

Մանաւանդ՝ իր անդամներուն ջերմ գործակցութիւնը՝ որբերու
հաւաքման գործին մէջ, աւելի խորացուցած էր, հասարակութեան
մէջ սէրը դէպի Հ. Մ. Ը. Մ. ր :

Մասնաճիւղեր

Ինչպէս տեսանք, արդէն, վարչական բաժնէն, Միութեան մաս-
նաճիւղերը արագօրէն շտապած են : Այսպէս, մասնաճիւղեր են կազ-
մուած Պոլսոյ հետեւեալ թաղերուն ու դանազան քաղաքներուն մէջ.
— Բերա, Շիշլի, Վոսփոր, Պալթալիման, Պէշիկթաշ, Գումգափու,


Սամաթիա, Մաքրիքէօյ, Ս. Սթէֆանօ, Հայ Կղզի, Գատըքէօյ, Սկիւտար, Նոր Դպրոց, Ատափազար, Իզմիտ, Պարտիզակ: Աւելի վերջ Սասքէօյ, Պալատ, Էյուսպ, Պէյլէրպէյ, Գուլէլի, Օրթաքէօյ, Ռոտոսթօ, Մալկարա, Արմաշ, Պրուսա, Փարիզ, Նիւ Եորք, Իզմիր, Կիւլիկիա, Ռումանիա, Պուլկարիա ու Հայաստան:

Այս մասնաճիւղերու գործունէութեանց մասին անջատ անջատ խօսիլ անկարելի պիտի ըլլար՝ թէ՛ նիւթերու հաւաքման եւ թէ՛ տեղի պատճառաւ: Հայաստանի մասին յատկացուցած ենք առանձին գլուխ մը: Իսկ Պոլսէն դուրս՝ մէկ քանի քաղաքներու գործունէութիւնները կ'երեւին՝ իրազեկ աշխատակիցներու մասնաւոր գրութիւններովը, զորս կցած ենք ներկայ գլուխին:

« Հայ Սկաուտ »

Կասկած չկայ, որ այսքան լայն ու ծրագրական գործունէութիւն մը կը կարօտէր նաեւ մամուլի բաժնի մը, որ Միութենէն ներս ու դուրս ըլլար բարոյական կապն ու մղիչ ազդակը:

Այդ էր պատճառը, որ Կեդր. Վարչութիւնը, Միութեան հիմնադրութենէն քանի մը ամիս վերջ, 1915 Հոկտեմբեր 25ին լոյս կ'ըն՝ ծայէր մեր օրկանին՝ «Հայ Սկաուտ»ի Ա. թիւը: Մեր կիսամսեայ պարբերականը իր գոյութիւնը շարունակեց մինչեւ վերջին օրը, երբ քաղաքական դէպքերը կը հարկադրէին փակել Կեդր. գրասենեակը, ու վերջ տալ՝ Պոլսոյ մէջ՝ Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութեան:



Յուլիս 14ի ցոյցին յաջորդ օրը Պոլսոյ հայ սկաուտներու ընդհ. խումբը Շիշլիի բացերը արշաւի մը պահուն:

ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏՆԵՐՈՒ 1919 ՅՈՒԼԻՍ 14Ի
ՓԱՌԱՅԵՂ ԶԱՀԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

.....

Հ. Մ. Ը. Մ. ի կեանքին մէջ անհրաժեշտ է մասնաւոր տեղ մը տալ հայ սկառտներու փառայեղ ջահագնացութեան, Պոլսոյ մէջ, 1919 Յուլիս 14ի Փրանս. Ազգ. Տօնին առթիւ, որովհետեւ Զինադադարի այդ օրերուն, երբ հայկական եղեռնի կսկիծը կար մեր մէջ, ու օտարներու մօտ՝ անոր թողած դառն տալաւորութիւնը, մեր տղոց շքեղ տողանցքը ոչ միայն ազգային քարոզչութեան դեղեցիկ ազդակ մը եղաւ, այլեւ երեւան բերաւ մեր ժողովուրդի՝ արիւնի լճին մէջ իսկ վերընձիւղելու դարաւոր ուղին: Բայց, լաւ է որ ջահագնացութիւնը նկարագրենք այնպէս ինչպէս որ տեղի ունեցաւ, ինչ որ ամէնէն պերճախօս փաստն է՝ անոր թողած ազդեցութեանը մասին:



Ժամը Գուկէսին, 200ի չափ հայ սկառտներ Բերայի ահուճբի մարդավայրէն ճամբայ ելան դէպի Փրանս. դեսպանատունը, առաջ նորդութեամբ իրենց պետին՝ Պ. Գրիգոր Յակոբեանի եւ Հայկ Ճիզմէճեանի:

Ամէնքն ալ կանոնաւոր հազուած, ամերիկեան ձեւի ճերմակ դտակներով եւ անթերի կարգապահութեամբ անցան Բերայի մայթերէն: Առջեւէն կ'երթար Քնար նուազախումբը, նոյնպէս կանոնաւոր եւ միատեսակ համապատաստով, հնչեցնելով հայկական եւ եւրոպական եղանակներ, ինչպէս «Մարսէյէզ», «Լուսին չկար», «Մշակ բան ուոր» եւայլն:

Իւրաքանչիւր ութնեակի մէջ կային ջահակիրներ, իսկ մէջտեղէն հայ սկառտի մը կուրծքէն վեր բարձրացած ձողի մը վրայ խրոխտ օրէն կը ծածանէր հայկական դրօշ մը:

Խումբը առաջին անգամ կանդ առաւ Թաքսիմ, Փրանսական ծովային հիւանդանոցին առջեւ, ուր նուազախումբը նուազեց «Մարսէյէզ» ու «Մշակ բանուոր», եւ արժանացաւ խիստ սիրալիւր ընդունելութեանը Փրանսացի սպաներու եւ զինուորներու, որոնք կ'աղաղակէին «կեցցէ՛ Հայաստան», «կեցցէ՛ Ֆրանսա»:

Յունական հիւպատոսարանին առջեւ նուազեց հելլենական քայլերդը, մինչ Յոյները «կեցցէ՛ Հայաստան եւ Յունաստան» աղաղակներով կը թնդացնէին օդը: Բումէլի Փասաթին մօտ հայ տուներէ ծաղիկներ թափեցին սկառտներուն վրայ, եւ կեցցէներով ու ծափահարութիւններով հարկադրեցին որ անոնք կանգ առնեն հոն և Նուա-

գախումբը հոն դարձեալ նուազեց «Բա՛մ Փորոտան» եւ «Մարսէյ — եէզ» :

Սկառուտները կեցան նաեւ Թոքաթլեան պանդոկին առջեւ, վեր — ջապէս անոնք մօտեցան Փրանսական դեսպանատան, մտան շրջափա — կը, եւ վերին քոմիսէրին յանձնեցին զեղեցիկ ծաղկեփունջ մը, որուն վրայ գրուած էր .

— « Հայ սկառուտներու կազմակերպուիւնը կը մասնակցի ֆը — րանսական ցնծութեան եւ կը ներկայացնէ իր յարգանքը, ֆրանսա — կան մեծ ազգին, իրենց ազգային տօնին առթիւ » :

Նուազախումբը նուազեց Մարսէյեէզը : Հայր Տէր Մարգարեան Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ շնորհաւորեց տօնը, երբ Փրանս. վերին քոմի — սէր Պ. Տը Ֆրանս ներկայացաւ իր հետեւորդներով : Եւ կարճ ճառով մը շնորհակալութիւն յայտնեց : Սկառուտները տողանցք մը կատարե — լով մեկնեցան դեսպանատունէն, մինչ նուազախումբը սկսած էր նուազել «Մշակ բանուոր»ը :

Վերադարձը աւելի փառաւոր եղաւ : Հսկայական թափօր մը ձե — ւացած էր այն հետաքրքիրներու բաղմուտենէն, որ ամէն կողմէ շըր — ջապատած էր հայ սկառուտներու թափօրը : Կալաթա Սէրային առջեւ մեր սկառուտներուն ի պատիւ հրավառութիւններ կատարուեցան, եւ սկառուտները պահ մը ողողուեցան դոյնդոյն զեղեցիկ լոյսերով :

Սկառուտները Պրուսա փողոցը մտնելով կեցան մեր Պատրիար — քարանի դրան առջեւ եւ նուազախումբը նուազեց «Բա՛մ Փորոտան»ը : Ֆրանսական հիւանդանոցին առջեւ կրկին անգամ կանդ առին անոնք ու նուազուեցաւ Փրանս. քայլերդը, մինչ մեր սկառուտները յարգանքի բարեւ կուտային՝ իրենց գլխարկները ձողերուն ծայրը անցուցած ու դէպի վեր բարձրացնելով : Ամէն կողմէ կը լսուէին ծափ ու հուռու — ներ : Խանդավառութիւնը աննկարագրելի էր :

Օտարականները եւ Բերայի հասարակութիւնը վարժուած չըլլա — լով Հայոց կողմէ այդ տեսակ օրինակելի եւ խիստ կանոնաւոր ձեռ — նարկներու, երբ կը նայէին հայկական դրօշին, զարմացումով կը համոզուէին թէ Հայեր են անոնք : Իսկ ամէն մէկ Հայ, որ կը լսէր իր հայրենի երգը և կը տեսնէր իր արենակից կտրիճներու վսեմ տողանց — քը, սիրտը կ'ուռէր եւ կը փղձկէր : Շատեր յարգանքի համար գըլ — խարկները հանած՝ կուլային : «Լսեցի», կը գրէր Ճակատամարտի մէջ ահանատես մը, ծերունի մը, որ արցունքներու մէջէն կը հեկեկար .

— « Փառք քեզ, Աստուա՛ծ, որ այս օրն ալ տեսանք » . . .

Իսկ ուրիշ մը կ'ըսէր .

— « 68 տարեկան էի, բայց այսօր 25 տարեկայ եղայ » . . .

Ուշ էր արդէն, երբ հայ սկառուտներու խումբը հասաւ մարզա — րան, ուր մասնաւոր վրաններ ղետեղուած էին՝ գիշերելու համար :

Այս առթիւ, Ֆրանսական վերին քոմիսէրուիտէնէն Հ. Մ. Ը. Մ. ի
Կեդր. Վարչութիւնը կը ստանար հետեւեալ գրութիւնը. —

Cons/ple, le 16/7/1919

Haut Commissariat
de la
République Française
Service Politique

Le Haut Commissaire de la République, très touché des félicitations que l'Organisation des Boy - Scouts Arméniens a bien voulu lui adresser à l'occasion de la Fête Nationale du 14 Juillet, la prie d'agréer ses remerciements.

L. S.

Իսկ Հ. Ճիզմէճեան, իր մէկ գրութեան մէջ, անցողակի կերպով
յիշելով նաեւ այս ջահազնացութիւնը, կ'ըսէ. —

« 14 Յուլիս 1919ը պատմական թուական մըն է, անմոռանալի
թուական մը՝ մեր պատմութեան մէջ, խանդավառութիւնը իր դա -
պաթնակէտին հասած էր: Ֆրանսացի սպայ մը, որ նոյն օրը Պոլիս
գտնուած ու ականատես եղած էր, հարց կուտար իր քով գտնուող
բարեկամին. «ասոնք այն ջարդուած, կոտորակուած Հայե՞րն են:
Ո՞ւրկէ բուսան, ե՞րբ կազմակերպուեցան»... »

Այս մասին յուշեր ունի նաեւ Գ. Յակոբեան, պետը Հայ սկա -
ուտներու .

« ... 1000 թրքական ոսկի պարտքի տակ մտնելով, մէջտեղ բե -
րինք 200 հողինոց նոր համադրեստով սկաուտներու բանակը :

« Սուլթանական մայրաքաղաքին եւրոպական թաղամասը, Բե -
րան, կը գոռար, կ'ալեկոծէր, կը խանդավառուէր: Չէին գիտեր թէ
մենք Հայ ենք. ժողովուրդը անդիտակ էր կատարուող հրաշքին :
Չէին կրնար հաւատալ, թէ եւթադաններու տակ խողխողուող Հա -
յութիւնը կրնար այս անախնկայր հրամցնել: Այս ազգը, զոր վայրագ
գիշատիչներ կարծեցին բնաջինջ ընել, իր երիտասարդութեան այս
փոքրիկ՝ բայց կարգապահ եւ մեծ օրինակովը կուգար ջախջախել դա -
հիճներուն մտայնութիւնը :

« Հայ սկաուտներուն քայուածքը համաչափ էր եւ տիրապետող :
Հայ ըլլալնիս հասկցողը կուգար ողջագուրելու: «Կեցցէ՛ Հայաստան»,
« Zito », « Bravo » բացազանչութիւններ կ'որոտային ամէն կողմէ » :

« Եւ , վերջապէս , առանց վարանելու կարելի է ըսել , թէ , — կը
գրէր պոլսահայ օրաթերթ մը՝ իր կարգին , — Ֆրանսական ազգային
տօնին առթիւ Պոլսոյ մէջ կատարուած ցոյցերուն ամէնէն փայլուն -
ներէն եղաւ հայ սկաուտներու կազմակերպած ջահազնացութիւնը » :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔ


Սոյն տողանցքը եւս, որու մասին մանրամասնօրէն գրեցին Պոլսոյ հայ եւ օտար թերթեր, եւ յետոյ շարժանկարի վրայ ցոյց տրուեցաւ հասարակութեան, իրապէս փառքի եւ հայ կենսունակութեան ապացոյցի օր մը եղաւ Հայերու համար :

Նոյն օրը, անխտիր ամէն հայու սիրտ հպարտ յուզումով մը եւ աչքերը ուրախութեան արցունքով լեցուեցան :

Մանաւանդ որբերու շարքերը ոչ միայն դնահատանքին արժանացան օտարներուն, այլեւ ապշութեան մատնեցին զանոնք :

Քաղաքակիրթ վրէժն էր որ կը լուծուէր այդ օրը: «Հայ դրօշը կարծես գիտակցօրէն կը պանծար — կը դրէր «Հայ Սկաուտ», — կը ծփար, հովանաւորելով իր ապագայ քաղաքացիները, բարձրացած՝ անոնց կուռ բազուկներուն վրայ» :

Նոյն օրը, դարերով ստրուկ ապրած՝ ազատատենչ Հայը, ինքնավստահ կերպով մրցումի մտաւ դարերով ազատ ապրած ազգերու զաւակներուն հետ եւ իր ազգային պատիւը վաւերացուց միջազգային կնիքով :



1922ի Պոլսոյ ողիմպիականին ցանկարշաւի մեկնումը :

Զախէն աջ՝ Վ. Շիրինեան, Ս. Կոստիկեան, Գ. Քէշիշեան եւ Ն. Ճէլալեան որ կը շահի 18 2/5 երկվայրկեանէն :

Այդ օրը, Հայը ցոյց տուաւ իր քննադատներուն, որ ինք միայն լալով չնորհ չի խնդրեր, այլեւ դիտէ սէզ կեցուածքով ու զուարթ դէմքով ոգեւորութիւն սփռել իր շուրջ :

ԳՆԱՀԱՏԱՆՔ

Այս առթիւ աւելորդ չենք դտներ հոս տալ այն բացառիկ դնա - հատանքը որուն արժանացան Հ. Մ. Ը. Մ. ի սկառուտական շարքերը :

Այսպէս, Պոլսոյ միջազգային ոստիկանութեան պետ եւ պոյ սկառուտներու միջազգային կազմակերպութեան նախագահ զնդ. Մաք - սուէլ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան կ'ուղղէր հետեւեալ դրու - թիւնը . —

Սիրելի սկառուտներ,

Իբրեւ ձեր նախագահը, կ'ուզեմ յայտնել ձեզ ամէնուդ, ըլլաք խմբապետ, առաջնորդ թէ պարզ սկառուտ, ինչ աստիճանի որ պատկանիք, ամէն տղու առանց բացառութեան իմ խորին գոհունակու - թիւնս այն կարգուսարքին համար, որով տեղի ունեցաւ ձեր տողանց - քը, անցեալ կիրակի, 20 Յունիս 1920ին :

Թէ' Զօր. Ուիլսըն եւ թէ' ես պիտի փափաքէինք անշուշտ իւրա - քանչիւր սկառուտի ուղղել մեր խօսքը, բայց, ինչպէս կ'ըմբռնէք, ժա - մանակը թոյլատու չէր այդ բանին :

Մինչ ձեր շարքերուն առջեւէն կ'անցնէի, քանի քանի անգամներ փորձուեցայ գատել այս կամ այն պայծառ աչուի եւ վառվռուն սկա - րուտը, եւ մինչեւ վերջ, տղայ դէմքերը դիտելով հանոյքով, կը նըշ - մարէի հոն ցոյացումը մաքուր եւ առողջարար սկառուտական կեան - քի մը :

Բոլորդ ալ սկառուտական օրէնքին համաձայն նշմարիտ սկառուտի կարգապահութիւնը ցոյց տուիք, եւ երբ խուռն բազմութեան խան - դավառութիւնը տեսաք, մեզմէ իւրաքանչիւրը զգաց թէ որքան գո - վելի է սկառուտներուն կատարեալ կարգապահութեան տիրացած ըլ - լալ, որով կրցաք Թաքսիմի մարզավայրին վրայ այդքան հոյակապ տեսարան մը ներկայացնել :

Տողանցքը մեծ գոհունակութիւն պատճառեց Զօր. Հըր Հէնրի Ուիլսընի, որ բարեհանեցաւ սկառուտական բարեւը առնել : Ի տես այս բանին՝ զգացի թէ իւրաքանչիւր սկառուտ որքան մեծ պատիւ մը կը բերէր ինծի՝ իմ նախագահի հանգամանքիս մէջ :

Շնորհակալութիւն կը յայտնեմ ամէնուն ալ յանուն Զօր. Ուիլ - սընի ու Տիկնօջ, եւ նաեւ իմ անունովս, այն փառաւոր «հուրրա»նե - րուն համար որոնցմով ողջունեցիք մեզ՝ ձեր գլխարկները ձեր գա - ւազաններուն վրայ բարձրացնելով :

Իմ կեանքիս ամենէն յիշատակելի եւ հետաքրքրական օրերէն մէկը պիտի նկատեմ այն օրը, երբ իմ պոյ — սկաուտներս ներկայացուցան ինձի :

Ձերդ անկեղծօրէն՝
Ի. ՔԱՍԷԼ ՄԱՔՍՈՒԷԼ

ՁԱՆԱԶԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

.....

ԶԱՐԴԱՆԻՇԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՀԱԻԱՔՈՒՄ

Հ. Մ. Ը. Մ. ի զլիսաւոր գործունէութիւններէն անջատ, որոնց մասին առանձին զլուխներ ենք յատկացուցած, հարկ է յիշել, արագ գիծերով, քօքարտարաչխումներն ու հանդերձահաւաքումները :

Այսպէս, 1920 Ապրիլին, Հ. Մ. Ը. Մ. ը կը ձեռնարկէ ի նպաստ որբ սկաուտներու հանդերձանքին՝ քօքարտարաչխումի, եւ կը հաւաքէ 4000 թրք. ոսկի :

1920 Նոյեմբերին, Պոլսոյ բոլոր մասնաճիւղերը տուններէն դրամ եւ հագուստ կը հաւաքեն՝ Հայաստանի սկաուտներուն համար :

1921 Մարտին, դարձեալ Պոլսոյ մէջ, Հայաստանի սկաուտներուն համար կը հաւաքեն 26 հակ հագուստ եւ եւ մօտ 2500 ոսկի :

1921 Մայիս 1ին կը կատարուի քօքարտարաչխում՝ դարձեալ որբ սկաուտներու հագուստներուն եւ գոյքերուն համար : Կը գոյանայ 2525 ոսկի :

ԱՐՇԱԻԱՆՔՆԵՐ

Լրացնելու համար Հ. Մ. Ը. Մ. ի Պոլսոյ գործունէութեան այս ամփոփ բաժինը, աւելցնենք որ մինչեւ 1922ի աշունը կազմակերպուած են նաեւ արշաւանքներ :

Այս արշաւանքները կ'ըլլային մասնակի ու ընդհանուր : Մասնակի արշաւները կը կազմակերպէին մասնաճիւղերը՝ առանձին, առանձին գրեթէ ամէն շաբաթ : Իսկ չորս ընդհանուր ու մեծ արշաւանքներ կազմակերպած է Սկաուտական Կեդր. Յանձնախումբը : Առաջինը՝ Վէլի Էֆէնտի, Բ. ը՝ Գայիշ Տաղը, Գ. ը՝ Չամլըճա, իսկ Դ. ը՝ Քեա — դրտհանէ : Այս արշաւանքներուն կը մասնակցէին 1500 — 2000 սկաուտներ : Վերջին արշաւանքին տրուեցաւ զինուորական բնոյթ՝ պատերազմական մասնակի գործողութիւններով :

Ընդհանուր բանակումները տեղի կ'ունենային Յուլիս — Օգոստոս ամիսներուն :

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԵՈՅԵԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Պոլսոյ մէջ, 9 — 10 — 11 Յունիս 1922ին, տեղի ունեցան միջազգային աթլէթիք եւ Փուլթպոլի ախոյեանական մրցումներ: Կը մասնակցէին Հայերը, Յոյները, Հրեաները, Թուրքերը, Ռուսերը եւ ուրիշ օտար կաղմակերպուած իւրերեսներ :

Հայերէն կը մասնակցէին Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղերը եւ Սկիւտարի Հայ Մարզարանը:

Աթլէթիք մրցումներու ընթացքին, մենք շահեցանք 7 առաջին, 4՝ երկրորդ եւ 4 Գ. մրցանակներ, բայց Գ.րդ օրը դատաւորին կողմէ եղած բացայայտ անարդարութեան մը վրայ, մեր մարզիկները ստիպուեցան հեռանալ դաշտէն: Մեր հեռացումի պահուն արդէն իսկ շահած էինք 45 կէտ, մինչ ատոր դէմ Յոյները ունէին 36 կէտ, Հրեաները՝ 1, Ռուսերը՝ 3, ու միւս բոլոր օտարները՝ 5: Ոչ մէկ կասկած, որ եթէ շարունակէինք՝ ախոյեանութիւնը պիտի խլէինք:

Փուլթպոլի մրցումներուն մէջ մեր խումբը յաղթեց Թուրքերուն եւ Հրեաներուն: Վերջին մրցումը տեղի պիտի ունենար մեր եւ Յոյներու միջեւ: Բայց, մեր հեռանալով, Յոյները յաղթական հռչակուեցան :

*** 1920 Հոկտեմբեր 3. — Արծաթ բաժակի միջազգային մրցումներուն մէջ Հ. Մ. Ը. Մ. ի խառն խումբը կը շահի՝ յաղթելով իրլանտական զինուորական խումբին :

ՄԻՋՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ, Պոլսոյ մէջ, կաղմակերպուած են միջմասնաճիւղային 2 Փուլթպոլի թուռնուաներ: Կը մասնակցէին Բերա — Շիշլի, Գում Գափու, Պէշիկթաշ, Սկիւտար, Սամաթիա, Սասգիւղ, Մազրիզիւղ, Գաալլիւղ, Սան Սթէֆանօ, Փրոթի, Վոսփոր եւ Իդմիտ:

Երկու «Թուռնուա»ներուն ալ ֆինալը՝ մնացած է Բերա — Շիշլի մասնաճիւղերու թիմերուն, ու երկուքին ալ ախոյեան ելած է Բերա — Շիշլի մասնաճիւղին թիմը :

Եղած կարգադրութեան համաձայն, Հ. Մ. Ը. Մ. ի Պոլսոյ խառն խումբը 1922 Սեպտեմբերին պիտի երթար Իդմիր՝ մրցելու համար Իդմիրի խումբին հետ, բայց Իդմիրի գրաւումը արգելք հանդիսացաւ :

ՈՒՐԻՇ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Փակելէ առաջ Հ. Մ. Ը. Մ. ի ընդհ. գործունէութեան այս բան-

ժինը, ժամանակագրական կարգով ստորեւ կուտանք մէկ քանի ձեռնարկներ եւս, զանց առնելով մանրամասնութիւնները։—


1919 Հոկտեմբեր 7.— Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցիչները կը մասնակցին սկաուտական միջազգային խորհրդակցութեան մը :

1921 Ապրիլ 17.— «Բոյրլ Ճորճ» անդլ. տրէթնութին հրամանատարը, Մ. Թէսկըր, աչքէ կ'անցընէ, Բերա - Շիչլի մասնաճիւղի մար - զարանին մէջ, հայ սկաուտները, իսկ մայիս 9ին՝ Գուլէլի Կեզը. որբանոցին սկաուտները :

1921 Յունիս.— Սկաուտութեան միջազգային պետ Զօր. Պէտըն Փաուլ զնահատական զիր մը կ'ուղարկէ Հ. Մ. Ը. Մ. ին :

1922 Ապրիլ 2.— Հ. Մ. Ը. Մ. ը կը մասնակցի անդլիական բանակի կոյր զինուորներուն ի նպաստ տրուած դաշտահանդէսին :

1922 Մայիս 28.— Հ. Մ. Ը. Մ. ը կը մասնակցի Պրիւքսէլի սկաուտական ցուցահանդէսին :



Սկիւտարի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղային մրցմանց առթիւ (1921) տողանցք՝ խումբին վարիչ Գ. Շահինեանի առաջնորդութեամբ :

ԸՆԴՀ. ՄՐՑԱՀԱՆԴԻՍՆԵՐ ԵՒ ՄՐՑԱՆԻՇԵՐ

.....

Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղերու տեղական մրցահանդէսներէն զատ զոր գրեթէ ամէն մասնաճիւղ կը կազմակերպէր իր անդամներուն միջեւ՝ տեղւոյն վրայ, Պոլսոյ մէջ, Կեդր. վարչութեան նախաձեռնութեամբ, տեղի ունեցան երեք ընդհանուր մրցահանդէսներ՝ երեքն ալ Գատրդիւղի Իւնիօն Քլիւպին մէջ: Այս մրցահանդէսներուն կը մասնակցէին շուրջ 200 մրցորդ — մարզիկներ: Կը կազմուէր մասնաւոր յանձնախումբ մը, որ կը տանէր նախապատրաստական բոլոր աշխատանքները, կ'ընտրէր դատաւորներ, ճամբայ հանողներ, չափողներ, ստուգողներ, յայտարարողներ եւայլն:

Մրցահանդէսները կը սկսէին Հ. Մ. Ը. Մ. ի սկառտներու եւ մարզիկներու մեծ տողանցքովը, որուն կը մասնակցէին շուրջ 2000 հոգի՝ խանդավառ մթնոլորտ մը ստեղծելով, հազարաւոր ներկաներու համար: Գաղափար մը տալու համար այդ մասին, կ'արտագրենք Հ. Մ. Ը. Մ. ի Ա. մրցահանդէսի նկարագրութենէն մաս մը:

« ... Բազմութիւնը կը յորդի: Լեցուն են պատուոյ պատշգամբ, երկու յարակից ամփիթատրոնները, ինչպէս նաեւ դաշտին հանդիպակաց ամփիթատրոնը՝ ուր հանդիսականներու հետ տեղ գրաւած են նաեւ որբեր: Օրուան պաշտօնատարները բոլորն ալ իրենց պաշտօնին պիտի զուլան են: Դաշտի վրայ են կարգադիր մասնախումբին անդամները, դատաւորները, հաշտարարը եւայլն: Լուսանկարիչներ՝ զանազան կէտերու վրայ: Ազդանշանը կը տրուի: «Քնար նուազախումբը» կը նուազէ: Ու ահա օրուան մրցորդները տողանցք մը կը կատարեն՝ ընդհ. ծափերու մէջ: Բոլորը միօրինակ հազուած են, իրենց կուրծքերուն վրայ ունենալով իրենց թիւն ու իրենց մասնաճիւղը խորհրդանշող դոյնը: Անդլիացի բազմաթիւ զինուորներ տեղ բռնած են ամփիթատրոններուն մէջ: Հետզհետէ կը հասնին սպաներ ալ: Ներկայ են անգլիացի ոստիկանապետ Մ. Լաֆոնթէն, Ֆրանսացի եւ Յոյն սկառտական ներկայացուցիչներ: Օրուան հանդէսին ներկայ գտնուելու համար Հ. Մ. Ը. Մ. ի Ատափազարի, Իզմիրի եւ Իզմիտի մասնաճիւղերէն ներկայացուցիչներ կան: Մրցավայր կը մտնէ Չաւէն Պատրիարք, որ նախադահն է Հ. Մ. Ը. Մ. ի եւ հայ սկառտ մըն ինք ալ՝ արձանագրուած հայ սկառտներու շարքին մէջ: Քիչ վերջ կը հասնի անգլիական զօրքերու հրամանատարը: Կը ծածանին հայկական եւ անգլիական դրօշները:

« ... Տողանցքն է: Հայ սկառտներու բոլոր ջոկատները Պ. Գրիգոր Յակոբեանի առաջնորդութեամբ անթերի տողանցք մը կը կա —

տարեն : Անոնց կը հետեւի Սկիւտարի Հայ — սկառւտ օրիորդներու
ջոկատ մը՝ առաջնորդութեամբ Պ. Զունդ Սմբատեանի» :

X

Հայկական մրցահանդէսներու առթիւ, Ա. Վուամեան «Ազատա —
մարտ»ի մէջ ստորագրած է հետեւեալ գրութիւնը որ ոգեկոչումն է
հին դարերուն՝ հայրենի աշխարհին մէջ կատարուող նաւասարդեան
խաղերուն . —

ՈՂՋՈ՛ՅՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ

« Ի ժամանակի դիցն Ամանորայ ամենաբեր նորոց
պտղոց տօնից հիւրընկալ դիցն Վանատրի, գոր յառաջա-
գոյն իսկ ի նմին տեղոց պաշտէի՞մ յուրախութեան Նա-
ւասարդաւոր » : ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

« Վաղարշ՝ տօն աշխարհախումբ կարգեաց ի սկըգ-
բան ամի նորոյ ի մուտ Նաւասարդի » : ԽՈՐԵՆԱՑԻ

Հայ մարդիկը ողջունելու կ'երթամ այսօր : Բայց ո՛ւր . . .

Եւ աչքերուս առջեւ, անցեալի խորհրդաւոր մշուշին մէջէն, դան-
դաղ ու հանդիսաւոր կը բարձրանայ տակաւ՝ վարադոյրը երկու հազա-
րամեայ հնութեան մը . . . :

Եւ հո՛ն, հեռո՛ւ հեռունե՛րը, ծովերէն ու սարերէն անդին, Նպատի
ստորոտը, Զիրաւի դաշտին մէջ, Դիցաւանի առջեւ, կ'ընդնշմարեմ
յանկարծ Հայաստանի բոլոր ծաղերէն թափուած, բիւր բիւրոցը՝ «տօն
աշխարհախումբ» որ եկած է պաշտելու Վանատուր դի՛ք, « ի
մուտն Նաւասարդի » :

Արքայ եւ դշխոյ, քուրմ եւ քըրմանուշ, նախարար եւ տիկին,
սեպուհ եւ դրանիկ, դօրք եւ արհեստաւոր, շինական եւ ծառայ —
սմբողջ Հայաստանն է որ խոնուած է, այդ օրը հոն՝ ուրախանալու՝
խաղալու եւ երգելու՝ մարգելու իր մարմինն ու միտքը :

Զի մեզ պէս թուլամորթ չէին անոնք՝ մեր պապերը, այդ հուժկու
եւ ահարկու Արմէնները՝ որոնք Քրիստոսէ ինը դար առաջ անցան Գայլ
գետը, եւ խաղաղ ու յամառ թափանցումով մը դէպի առաջ՝ յուշիկ
յուշիկ ստեղծեցին Հայաստանը Տաւրոսի ու Պարխարի մէջ բարձրա-
նալով մինչեւ Կուր գետ :

Այդ երկար ու դարաւոր ազգակերտումին մէջ գիտակցութիւնը
կրեցին անոնք՝ իրենց ուժին, ու հայ կոչեցին իրենք զիրենք : Այսինքն
պետ երկրի մը, զոր իրենք ձուլած էին, այլազան եւ իրերամարտ
տարրերէ :

Ուժեղ էին անոնք եւ ինչպէ՛ս գիտէին ուրախանալ անոնք :



Գատը - Գիւղի Մխիթարեան վարժարանի սկաուտներու երդման արարողութիւնը

Ըմբիշներու մրցում, ձիարշաւ, մահանախաղ, վազք, եւ քանի քանի խաղեր, որոնց հետքը պահած չէ պատմութիւնը, կը ծառայէր անոնց մարմինը ուժովցնելու եւ վեղեցկացնելու :

Շքեղ ու մեծագանձ մեհեաններ, սիւռուած Արածանիի եւ Եփրատի, Երասխի, Տիգրիսի գեղածիծաղ հովիտներուն մէջ կամ Վանայ լճին անտառագեղ եզրերուն վրայ ժամադրավայրն էր դարեր շարունակ՝ ցեղին երիտասարդութեան :

Կոպիտ ուժը չէր միայն որ մեր պապերը բարձրացուց կէս - վաշկատուն, կէս խաշնարած վիճակէն իրենց հետագայ քաղաքակրթութեանը :

Քեղեցիկին սէրը՝ բնութեան սէրին մէջ գիտցան անոնք դտնել ու պաշտել՝ աստիճան մը՝ որուն չկրցինք մենք հասնիլ դժբախտաբար :

Վարդավառը, ծաղիկներու հանդէսը, ի՞նչ սիրուն ու միամիտ գուրգուրանքով մը կը տօնէին անոնք: Վարդը անոնց խորհրդանշանն էր, Հայուն աղգային ծաղիկն էր ան, մանուշակին հետ :

Կարելի՞ է մոռնալ Վահեվանեան տօները ու Դիցաւանի մըր - ցումները, եւ այսօր ալ քսան եւ եօթը դարեր ետքը հայ ժողովուրդը մոռցած չէ իր Նաւասարդը . . . :

Սիւնեցի գեղջուկը նուիրական փոխինդը կը կտրէ ամէն տարի, Նաւասարդի առաջին օրը՝ իսկ «Մշոյ Սուլթան Ս. Կարապետ»ի տօնին, Վարդավառին, հայ գուսանը եւ հայ ըմբիշը կը տնտղեն տակաւին մոխիրը հին հին աւանդութիւններու :

Բայց տունկը չի մեռնիր — երբ ամուր եւ խոր է անոր արմատը — եւ ահա՛ վերածնումի առաջին շողերուն հետ, ի յայտ կուգայ նորէն ցեղին խանդն ու կորովը :

Անհուն գորովով եւ սիւսիանքով է որ կուգամ ծափելու ձեզ, համբուրելու ձեր ճակատը ով դուք բոլորդ պատանիներ ու երիտասարդներ որ այսօր օտար ափերու վրայ ցեղին աւանդութիւններն է որ կուգաք վերականգնելու :

Որքա՛ն մեծ է ձեր բաժինը հայ վերակերտումի ծանրածանր բայց նուիրական գործին մէջ :

Ցեղին ուժեղացումն է, ցեղին գեղեցկացումն է, ցեղին ազնուացումն է որ կը ձեւակերտէք դուք, տղաք, — յամառ ու պինդ քալեցէք ձեր ճամբան :

Պատրաստեցէք զգաստ ու կայտառ ուրախութիւնը մեր յարկերուն տակ, անողոք վանելով անկէ բոլոր ոգիները, ոգելից ըմպելիքներէն՝ մինչեւ չարոգի խորհուրդները :

Քալեցէք անոնց հետ քով քովի Արեւելքի վերածնումին մէջ ձեր պարտքը կատարելու՝ գիտակցօրէն ու անձնուիրաբար :

Քալեցէք, տղա՛ք, եւ հեռու Քաղկեդոնէն, աչքերնիդ դարձուցէք

պահ մը դէպի Աշտիշտո ու Դիցաւան — ձեր մեծ պապերուն ստուեր-
ներն են որ կը հսկեն ձեզ :

Փառք, եւ ողջո՛յն Նաւասարդեան խաղերուն :

1914

Ա. ՎՌԱՄԵԱՆ



Կարելի չըլլալով հոս ռալ բոլոր մրցահանդէսներուն նկարագրու-
թիւնն ու մրցումներու մանրամասնութիւնը, կը գոհանանք ներկայա-
ցնելով տախտակը հայկական մրցանիշերուն, իրենց ախոյեաններով
ու մրցանիշերով, անոնց դէմ դնելով միջազգային մրցանիշերը :

Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպած մրցահանդէսները տեղի ունեցած
են հետեւեալ խուականներուն.—

Ա. ը 31 օգոստոս 1919, Բ. ը՝ 2 հոկտեմբեր 1921, իսկ Գ. ը՝ 27 օ-
գոստոս 1922/ին :

Ստորեւ՝ յաղդատական ցանկ մը՝ հայկական եւ միջազգային
մրցանիշերու : Միջազգային մրցանիշները փակագծի մէջ են :

100 մ. վազք.— Յ. Երամեան 11 1/10 (10 2/10)

200 մ. վազք.— Յ. Մամիկոնեան 24 երկվ. (20 3/10)

400 մ. վազք.— Յ. ձէլալեան 55 1/5 (46 1/10)

800 մ. վազք.— Ս. Սամուէլեան 2.11 1/5 (1.48 4/10)

1500 մ. վազք.— Հ. Իսկէնտէրեան 4.36 (3.47 8/10)

3000 մ. վազք.— Յ. Մամիկոնեան 10.2 2/5 (8.18 6/10)

Դրօշարշաւ $\times 100$.— Փարիզի մասնաճիւղ (Յ. Մամիկոնեան,
Սինէմեան, Պ. Չաքըճեան եւ Վ. Թէրղեան) 48 3/5 (39 8/10)

100 մ. ցանկարշաւ.— Ն. ձէլալեան 18 2/5 (13 7/10)

Ուժով բարձրութիւն ցատկել.— Յ. Երամեան 1.73 (2.09)

Կեցած բարձրութիւն ցատկել.— Ա. Քսարիկեան 1.40 (1.67)

Ուժով երկայնութիւն ցատկել.— Յ. Երամեան 6.71 (8.43)

3 քայլ ցատկել.— Յ. Երամեան 13.37 (16 մ.)

Չոզով բարձրութիւն ցատկել.— Յ. Մամիկոնեան (Sélectionի առ-
թիւ) 3.660 (8.13)

Երկաթ նետել.— Ժ. Խարիկեան 12.84 (17.40)

Սկաւառակ նետել.— Մ. Մկրեան 35.99 (53.10)

Նիզակ նետել.— Բ.Ժ. Թաշճեան 50.05 (78.70)

Ծանօթ.— Չոզով բարձրութիւն ցատկելու, երկաթ նետելու, մէկ
քայլ ցատկելու եւ այլն հայկական մրցանիշերը կը հաւասարին ու
նոյնիսկ երբեմն աւելի բարձր են քան Պալքանեան փոքր պետութիւն-
ներու մրցանիշերը :

ԲԱՆԱԿՈՒՄ - ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ



1922 ՍԵՊՏԵՄԲԵՐ 8 — 11

Հ. Մ. Ը. Մ. ի սկստական կեդր. Յանձնախումբը եւ թէքնիք յանձնախումբը միասնաբար որոշեցին կազմակերպել, 1922ի աշնան, բանակում — ցուցահանդէս մը (հաւրար) Պէօյիւկ տէրէյի մէջ: Սկստական յանձնախումբը կը կազմէին՝ Հայկ Ճիզմէճեան, Արշակ Յակոբեան, Օննիկ Գուլան, Օննիկ Ֆրէնկեան եւ Արտաշէս Ալլահաւէրտի: Իսկ սկստական թէքնիք յանձնախումբը՝ Արա Տօմինեան, Մկրտիչ Մալումեան, Լեւոն Գաղանձեան եւ Լ. Սարուխան:

Բանակում — ցուցահանդէսը կազմակերպելու հողը ստանձնած էր սկստական թէքնիք յանձնախումբը, որ յարմար տեսաւ կատարել երկու նախապատրաստական բանակումներ:

Ա. մասնակցութեամբ աստիճանաւոր սկսուտներու Վէլի էֆէնտիի դաշտին վրայ՝ Մազրի դիւղ 1 — 2 Յուլիս 922: Յայտագիր 1 Յուլիս, շաբաթ դիշեր ժամը 22ին, — Բանակումի կրակի պատմականը Արայ Տօմինեան:

Բանակում — ցուցահանդէսի ծրագիրը, նպատակը, միջոցները եւ նախապատրաստութիւնը՝ Հայկ Ճիզմէճեան:

Կրակին շուրջ խաղեր, սկստական պարեր ու երգ՝ Մկրտիչ Մալումեան:

Բանակումի կրակին շուրջ պատմուածք՝ Օննիկ Գուլան:

2 Յուլիս. Զարթնում, մաքրութիւն, մարզանք, նախաճաշ:

Դրօշի պարզում եւ աղօթք՝ Արշակ Յակոբեան:

Վրաններու քննութիւն եւ բացատրութիւն՝ թէքնիք յանձնախումբ:

Կամրջաշինութիւն դետակին վրայ. — Ատաղձով՝ Արա Տօմինեան, չուանով՝ Մկրտիչ Մալումեան:

Ժամը 12ին ճաշ, խմբակային դրութեամբ:

Ձեռական աշխատութիւն, հաւաքածոներ, եւայլն:

Ժամը 4.30ին նիդակի նմոյշ մը, յայտարարութիւնը եւ բացատրութիւնը՝ Մկրտիչ Մալումեան:

Ժամը 5.50ին դրօշի հաւաքում եւ մեկնում:

Ծանօթ. — Կապոյտ դրօշ՝ բացարձակ հանգիստ, կարմիր դրօշ՝ խաղեր, կանանչ դրօշ՝ ազատ:

Բանակումի պետ՝ Արշակ Յակոբեան:

Բանակատեղի պետ՝ Օննիկ Ֆրէնկեան:

Որոշուած օրը տեղի ունեցաւ նախապատրաստական բանակում — ցուցահանդէսը, եւ ըստ ծրագրի նոյնութեամբ ժամը ժամին գործադրուեցաւ մասնակցութեամբ 320 աստիճանաւոր սկսուտներու:

Խանդավառութիւնը մեծ էր (տես Հայ Սկաուտ, Բ. տարի թիւ 23 , էջ 354) :

Նախապատրաստական Բ. բանակում, 29 յուլիս շաբաթ դիշեր, ժամը 10էն 30 յուլիս կիրակի ժամը 7.30 : Բնակավայր Պէօյիւք Տէրէ, Նեկտարի պարտէզի յարակից դաշտը, (յայտագիր տես Հայ Սկաուտ էջ 362, Բ. տարի թիւ 23) :

Նոյնքան խանդավառութեամբ անցաւ երկրորդ փորձն ալ : Բոլորն ալ օգտուեցան բացատրութենէն եւ միաբերան որոշեցին սեպտ. ծին հաւաքուիլ մեծ բանակում — ցուցահանդէսին :

Պատրաստութիւնները շատ խնամքով յառաջ կը տարուէին : Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնը իսկական բանակետղի մը դարձած էր. ամէն ոք կը սպասէր անհամբեր այդ օրուան : Վերջապէս սպասուած օրը հասած էր : Պոլսոյ ամէն թաղերէն կը հասնէին, սկաուտներ, մարդիկ — ներ, որբեր : Հինգշաբթի առաւօտ արդէն առաջին վրանները կանգնեցան, Բերայի Չ. խումբն էր որ կը կանգնէր իր բանակետղը : Յաջորդաբար կը հասնին Գարակէօղեան որբանոցը՝ իր տնօրէնով (Պ. Արամ Նիկողոսեան, հաղած էր սկաուտական հազուստ), Պէյլէրպէյը ,



Հ. Մ. Ը. Մ. ի վոսփորի (Պոլիս) մասնաճիւղին սկաուտները

Սկիւտարը, Մաքրիգիւղը, Օրթագիւղը, Պէշիկթաշը, Բերայի միւս խումբերը: Երեկոյեան արդէն հոն են մօտ 1500 սկաուտներ եւ վարիչներ: Ուրբաթ առաւօտ կը հասնին բոլոր որբանոցները, քանի որ որոշուած էր այդ տարին բանակում — ցուցահանդէսին հետ միասնաբար կատարել միջորբանոցային ախոյեանութեան մրցումները: Շաբաթ առաւօտ հսկայ «քաղաքը» արդէն գործի վրայ է: Մէկ կողմէն դաշտին վրայ տեղի կ'ունենան Աթլէթիկ մրցումները, գետակին միւս կողմը տեղի կ'ունենայ պատրաստութիւնը, քանի որ կէսօրէն վերջ պաշտօնապէս բացուած պիտի յայտարարուի բանակում — ցուցահանդէսը:

Բանակումի ընդհ. պետ որոշուած է Արշակ Յակոբեան, իսկ բանակետղի պետ՝ Մկրտիչ Մալումեան, ընդհ. կարգադրող պետ՝ Ներսէս Սերոբեան:

Շաբաթ, ժամը 24, արդէն ամէն ինչ պատրաստ է, յաջորդաբար հիւրերը կը հասնին: Ժամը 3ին կը սկսի ընդհ. տողանցքը, որուն մաս կ'առնեն սկաուտները, որբերը, օրուան դատաւորները, մարզիկները եւայլն: Հայկ Ճիզմէճեան, Արտաշէս Ալլահվէրտի, Օննիկ Ֆրէնկեան եւ Ժիրայր Խօրասանճեան կը ստանան շրջանային սկաուտապետի աստիճան: Պոլիսը կը բաժնուի 4 շրջանի. բարձրաւանդակին վրայ են Արշակ Յակոբեան, փոխ ընդհ. խմբապետ՝ Հայկ Ճիզմէճեան, Արտաշէս Ալլահվէրտի, Օննիկ Ֆրէնկեան, Ժիրայր Խօրասանճեան եւ Օննիկ Գովան:

Մկրտիչ Մալումեանի «Քայլ յառաջ, օ'ն»ին վրայ 3000 սկաուտներով կը սկսի տողանցքը, որուն առջեւէն կը քալեն Բերա Շիշլիի Զ. խումբի սկաուտները՝ հնդկական տարազով: Խանդավառութիւնը մեծ է ամէն կողմ: Տողանցքը կը վերջանայ: Բացումը կ'ըլլայ տաղաւարներուն, կամուրջներուն, հիւղակներու եւ ցուցահանդէսին, ամէն խումբ ըրած է իր կարելին գերազանցելու համար ուրիշները:

Շաբաթ երեկոյեան կրակը անմոռանալի է: Հոն են կեդր. վարչութեան անդամները, Հ. Մ. Ը. Մ. ի կեդր. յանձնախումբի անդամները, բոլոր մասնաճիւղի վարչութիւնները: Հսկայ վրանաքաղաքը լոյսերուն մէջ կը շողշողայ: Պատմուածքներ, երգ, խաղ եւայլն: Քունի ժամն է: Փողը կը հնչէ: Կէս ժամ վերջ խոր քունի մէջ են օրուան աշխատանքէն յոգնած: Միայն պահակներն են որ կը շրջին, իսկ անդին բանակետղի պետը, բանակումի պետին հետ կարգադրութիւն կ'ընէ յաջորդ օրուան համար:

Կիրակի առաւօտ, 10 սեպտեմբեր, զարթնումի փողին հետ վրանաքաղաքը եռուզեռի մէջ է. դրօշակի պարզումը իսկապէս հրաշալի էր: Կայմին վրայ կը ծածանին սկաուտական ընդհ. դրօշակը, Աթլէ-

Թիկ դրօշակը եւ Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղերու դրօշակները: Մէկ հրամանի վրայ հաղարաւոր ձեռքեր կը բարեւեն:

Յաջորդաբար կը հասնին ծնողները: հիւրերը եւ ժողովուրդը, ամէն կողմ նշանատախտակներ, թօթեմներ, կամուրջներ, դղեակներ, հիւղակներ, ճամբաներ, ո՞ր մէկը թուել: Կէս օր է արդէն, ճաշի պահն է: Ճաշէն վերջ ընդհ. տողանցք՝ հիւրերուն ի պատիւ:

Քուլօնէլ Մաքսուէլ կը հասնի իր հետեւորդներով: Քիչ վերջ կը հասնի Միս Հէսթինկս N. E. R. սրբանոցներու տնօրինուհին: Յաջորդաբար կը հասնին միջազգային սկաուտական կազմակերպութեանց ներկայացուցիչները, թերթի թղթակիցները հայ եւ օտար, վերջապէս ժամը 2.30ին փողի հրամանին վրայ կը սկսի տողանցքը, որ բոլորին հիացմունքին եւ ծափերուն մէջ կը վերջանայ:

Կը սկսի դեղարուեստական բաժինը: Բերայի վեցերորդ խումբը կը ներկայացնէ իր պատրաստած հիւղակներուն մէջ հնդկական կեանքէ թատերախաղ մը, դրուած՝ Օննիկ Գովանի կողմէ:

Հիւրերու խումբը կը մեկնի ցուցահանդէսի մեծ վրանը. կը սքանչանան հայ սկաուտներու ձեռական աշխատութեանց վրայ, Mr. Berry կը խօսի Պատէն Փաուլի կողմէ եւ կը յանձնէ նամակը այս առիթով: Ապա խօսք կ'առնէ Քուլօնէլ Մաքսուէլ իբրեւ պետ. Պուլսոյ միջազգային սկաուտներու եւ կ'ըսէ. «Անդլիացիները սկսան սկաուտիամը, Հայերը կատարելագործեցին»:

Հիւրերը կը սկսին մեկնիլ. նմանապէս շատ մը ծնողքներ: Ռանդալաուութիւնը կը շարունակուի:

Եշուկներ կը տարածուին թէ Իդմիր բոցերու մէջ է: Սկաուտական յանձնախումբը կը հաւաքուի, կ'որոշէ մրցանակները՝ օրուան դատաւորներուն հետ: Յետոյ կը կատարուի ժողով մը, որոշում կ'առնուի ո եւ է լուր պիտի շարուի սկաուտներուն: Միայն՝ ոչ ճայն, եւ ոչ ալ լոյս բանակատեղիին մէջ:

Երեկոյ է արդէն. խմբապետները կը հաւաքուին: Կուտան հարկ եղած հրահանգները: Ոչ մէկ սկաուտ բանակատեղիէն պէտք է հեռանայ, խմբապետներն են որ պիտի ստանձնեն բանակումին պահպանութիւնը:

Ժամը հազիւ թէ ծն է, մութը սկսած է արդէն, եւ ահա բարբարոս խուժանը կը սկսի ուրախութեան աղաղակներով անցնիլ ճիշդ մերքովէն: Հրացանաձգութիւն: Բանակատեղին գրեթէ սուգի մէջ է: Մըր է ցերեկուան խանդավառութիւնը: Կը դիմենք անմիջապէս անգլիական բանակատեղը որ բանակումի վայրէն հեռու չէ, եւ կը խնդրենք պաշտպանութիւն:

Անգլիացի հրամանատարը կը խոստանայ եւ ժամը 10ին արդէն ունինք անգլիացի զինուորներ, որոնք յանձն կ'առնեն բանակատեղիի պաշտպանութիւնը :

Վարիչներէն ոչ մէկը քնացած է : Մինչեւ յոյս հսկած են սկառուտներու վրայ : Առաւօտեան արդէն սկսած են քանդել երէկուան այս սքանչելի վրանաքաղաքը :

Շատերը, վախնալով, մեկնած են արդէն առաջին շոգենաւով : Հրապարակի վրայ կը գտնէք Ճիզմէճեան, Մալումեան, Պողոսեան, Սերոբեան եւ որբանոցներու սկառուտները : Ժամը 11ին պաշտը վերստացած է իր նախկին ամայի վիճակը, ժամը 24ին կը հասնին քամիոնները, Աշոտ Մամիկոնեանի ղեկավարութեան տակ : Հոս պէտք է յիշել որ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան ատենապետ Պ. Խորասանճեան Չարեհ իր քսակէն հոգաց այս փախադրութեան բոլոր ծախսերը :

Յաջորդ օրը արդէն ամէն բան լրացած էր, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութիւնը երեքշաբթի օր հաւաքուած էր եւ որոշած էր Պոլսոյ մէջ վերջ տալ Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութեան ... որով, Հ. Մ. Ը. Մ. ի երեք տարուան գործունէութիւնը վերջացաւ բանակում — ցուցահանդէսի այդ փառաւոր կազմակերպութեամբ :



Հայկ Սէմէրճեան, 1911ի Հայկ. Ողիմպիկանին մէջ 400 մեթրի առաջինը :

Հ.Մ.Ը.Մ. Ը ՈՒԲԱՆՈՑՆԵՐԷՆ ՆԵՐՍ



1918ին, երբ Ձինադադարը կնքուեցաւ, գաւառի բոլոր կողմերէն գունդ առ գունդ որբերու կարաւաններ սկսան հասնիլ Պոլիս : Այդ շրջանին ոչ մէկ տեղ կազմակերպուած որբանոցներ գոյութիւն ունէին, յաջորդաբար սկսան նորանոր որբանոցներ բացուիլ Պոլսոյ գրեթէ բոլոր թաղերուն մէջ :

Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութիւնը անմիջապէս գործի լծուեցաւ եւ կազմակերպեց այդ որբանոցներու մէջ սկաուտական խումբեր :

Որբերէն շատեր, անապատներէն հոն եկած՝ այդ հաստատութիւններուն մէջ, հայերէն չէին գիտեր, փիլաֆը ափով կ'ուտէին, հացը իրարու ձեռքէ կը քաշէին : Բայց սկաուտական ուղին եւ մասնաւորաբար դաւանանքը քիչ ժամանակի մը մէջ դանոնք կը թեց, եւ քանի մը ամիս վերջ կարելի չէր դանազանել դանոնք մեր միւս սկաուտներէն :


1919ին գոյութիւն ունէին Գարակէօղեան, Եսայեան, Պէյլէրպէյի, Խասգիւղի, Արնաւուտ գիւղի, Ետի գուլէի, Արամեան (Գատրգիւղ), Պէղաղեան, Մխիթարեան որբանոցները, որոնց մէջ կը հաշուուէին մօտ 1500 սկաուտներ :

Շարժումը գոյութիւն ունէր, բայց լըջօրէն ձեռք առնուած չէր, սկաուտը դեռ իր նորընծայի քննութիւնը չանցուցած՝ տարազը կը հազնէր : 1920ին էր, երբ կազմուեցաւ կեդրոնի սկաուտական յանձնախումբը, պատրաստեց իր ծրագիրը եւ սկսաւ գործի : Քիչ ժամանակուայ մէջ այդ 1500ի հասնող թիւէն հազիւ 500 միայն իրաւունք ստացած էր հազուատ հազնելու . . . պէտք է խոստովանիլ որ ձեռներէց խմբապետներն ալ կը պակսէին : Յաջորդաբար հասան վարիչներ եւ այսպիսով վարիչ մարմինէն վրայէն բնոր թեթեւցաւ եւ գործը դրուեցաւ լաւ պայմաններու մէջ :

Մարմնակրթանք կար ու չկար, ասաւոտները երբեմն կ'ընէին շուէտական մարդանքի քանի մը շարժումներ, կիրակի օրերը երբեմն արշաւներ : Բուն շարժումը սկսաւ երբ կազմուեցաւ Ազգ. Կեդր. որբանոցը Գուլէլիի վարժարանին մէջ, Պ. Բիւզանդ Կէօղիւպէօյիւքեանի եւ ուրիշներու ջանքերով : Մարմնակրթական շարժումը Ազգ. Կեդր. որբանոցին մէջ որոշ բարձրութեան հասաւ :

Գուլէլին էր որ առաջին անգամ կազմակերպեց իր ախոյեանութեան մրցումները : Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնը նախաձեռնեց միջորբանոցային ախոյեանութեան մրցումներուն, որոնք եղան յաղթութեան օր մը, բայց տակաւ այդ շարժումը կասեցաւ :

ԳԱՐԱԿԻՉՁԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ (Շիշլի) .— Կազմութեան օրէն սկսեալ
Հ. Մ. Ը. Մ. գոյութիւն ունէր թէեւ, բայց երբ տնօրէնութեան
կոչուեցաւ Պ. Նիկողոսեան՝ գործը աւելի լաւ հիմներու վրայ դրուե-
ցաւ: Ինք անձամբ ամէն առաւօտ կը վարէր առօրեայ մարզանքը, ու-
նեցանք հոն վարիչ խմբապետներ, ինչպէս Վաղգէն Տէր Անդրէասեան՝
փոխ խմբապետ որ երկար ատեն վարեց Գարակչօղեանի սկաուտական
խումբը: Նմանապէս Լեւոն Սարուխան, Ժամանակ մըն ալ՝ ստորագր-



Հ. Մ. Ը. Մ. ի նոր Գպրոցի սկաուտներու խումբը
Կեդրոնը՝ Ա. Քրիսեան, Յ. Թ. Հինդլեան, Գ. Մալաթեան եւ Ս. Քնարեան

եալս : 1922ին հասան որբերէն լաւ առաջնորդներ եւ վարիչ առաջ - նորդներ , որոնցմէ կազմեցինք սկառուտական խորհուրդ մը որ սկսաւ գործը տանիլ լաւ կերպով , կազմակերպեցինք արշաւանքներ եւ տաս - նըհինգօրեայ բանակումներ :

ԵՍԱՅԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ .— Բերայի կեդրոնը գտնուող այս որբա - նոցը ունեցաւ արդիւնաւոր գործունէութիւն մը , շնորհիւ Բերա - Շիչ - լի մասնաճիւղին : Հոն ալ ունեցանք զանազան սկառուտ վարիչներ , բայց մինչեւ 1921 մեծ արդիւնք մը չունեցաւ սկառուտական շարժու - մը : 1921էն վերջ ունեցաւ լուրջ գործունէութիւն մը շնորհիւ իրենց խմբապետին՝ Ժիրայր Մինթանճեանի եւ իր ընկերներուն , որոնք սի - րով յանձն առած էին զանազան դասախօսութիւններ : Իրենց Ֆութ - պոլի խումբը կրցաւ խլել քանիցս միջորբանոցային ախոյեանու - թիւնը :

ԽԱՍ ԳԻՒՂԻ ՈՐԲԱՆՈՑ .— 1920ին ինծի յանձնուեցաւ կազմակեր - պել սկառուտական խումբը այդ որբանոցին մէջ : Ան ունեցաւ քանի մը ամսուան կեանք , որմէ յետոյ փոխադրուելով կեդր . որբանոց , չունե - ցաւ մեծ գործունէութիւն մը :

ԱՐՄԱՇԱԿԱՆՆԵՐ .— Արմաշի դիւղատնտեսական որբանոցին մէջ ալ ունեցանք սկառուտական խումբ մը , բայց հազիւ թէ կազմակերպու - թիւնը ծաղկիլ սկսած էր , փոխադրուեցան Հայաստան :

ԱՐԱՄԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ (Գատը գիւղ) .— Բաւական լուրջ կազմա - կերպութիւն մը կար այս որբանոցին մէջ , շնորհիւ մասնաւորաբար Պ . Ներսէս Օհանեանին : Սկառուտական խումբը լաւ պատանիներէ կազմուած էր : Ունեցաւ իր Ֆութպոլի խումբը , մարզիկները եւ լուղորդները : Սկառուտները հասան մինչեւ երկրորդ կարգի : Իրենցմով կը զբաղէի ես՝ օգնական ունենալով Օ . Դարբինեանը :

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՈՐԲԱՆՈՑ (Գատը գիւղ) .— Վարժա - րանին մարզանքի ուսուցիչն ըլլալով , կազմեցի սկառուտական խում - բը՝ մօտ 90 սկառուտներէ : Ան ունեցաւ փայլուն գործունէութիւն մը թէ սկառուտական եւ թէ մարզական տեսակէտով :

Մխիթարեան վարժարանը ունեցաւ նաեւ պասֆէթպոլի դաշտը , վազելու փխտը , եւ լողալու վայրը : Հ . Մ . Ը . Մ . ի վարիչները կազ - մակերպեցին , 1922ին , լողալու մրցումները՝ վարժարանին մէջ : Վարժարանը տրամադրեց իր մարզարանը Հ . Մ . Ը . Մ . ի մասնաճիւ - ղին , որոնց մարզիկները կուգային ամէն կիրակի խաղալու համար պասֆէթպոլ եւայլն : Վարժարանը կազմակերպեց Գայիչ Տաղիի մեծ արշաւանքը որուն մասնակցեցան 14 մասնաճիւղեր :

ՊԵՅԼԷՐՊԵՅԻ .— Միշտ եղած է քիչ մը ըմբոստ, բայց արտա-
դրած է լաւ մարդիկներ: Մեզի պատեհութիւնը տուած են տեսնելու
ըրենց բուրդերը, 1921ին, առաջնորդութեամբ Սկիւտարի մասնա-
ճիւղին պէտ շրանդ Պարսամեանի: Ունեցած է իր Փութպուլի խումբը
յաջողութիւններով: Պէտք է խոստովանիլ որ Սկիւտարի մասնաճիւ-
ղին կը պարտինք այդ արդիւնքները:

ԱՐՆԱՒՈՒՏ ԳԻՒՂ .— Այս որբանոցը աշխատած է լուի մնջիկ :
Ունեցած է լաւ վարիչներ եւ լաւ տնօրէն, յանձին Պ. Քաջունիին
(Վարդգէս): Սկաուտ խմբապետներ ունեցած է ողբացեալ Նազարեա-
նը եւ Սերոբեան Ներսէս: Արնաուտ գիւղի որբանոցը նշանաւոր է -
ղած է միշտ իր ձեռական աշխատութիւններով, սկաուտական ոգիով,
բայց Մարմնակրթական մեծ դործունէութիւն մը ունեցած չէ:

ՊԵՋԱՋԵՍՆ ՈՐԲԱՆՈՑ՝ ՎԱՐԺԱՐՍՆ (Մագրիգիւղ) .— Հինէն ի
վեր դոյութիւն ունեցած է, նախնական շրջանին Քերովբէ Ժպտունին
վարած է սկաուտ խմբապետութիւնը: Ան տարած է բեղմնաւոր աշ-
խատանք մը: Կազմակերպած է դանաղան արշաւներ եւ բանակումներ:
Իր մեկնելէն վերջ խումբին առաջնորդներէն կազմուած է սկաուտա-
կան խորհուրդ մը, որ տարած է դործը լաւ կերպով:

Ունեցած են իրենց Փութպուլի խումբը, ունեցած են լաւագոյն
աթլէթներ :

ՎԻՔԻԻ ՀՕՄ ԵՆ ՏԷՕՁ ՀՕՄ .— Առաջինը՝ Գոլմ Գափու, իսկ երկ-
րորդը Մահմուտ Փաշայի մէջ. բոլոր որբանոցներէ հասնող որբերը
կը բերուէին հող: Անոնք ինքնաբաւ կը դառնային յաջորդաբար, եւ
դուրս կ'ելլէին եւ կը կազմէին ընտանեկան օճախներ. կազմակեր-
պուեցան քանի մը անգամներ այդ որբանոցներուն համար պտոյտներ,
ծրագրուած էր կազմել քօլր սկաուտներ (որսորդական կամ ձիաւո-
րական) բայց ծրագիրը մնաց թերի, որովհետեւ այդ շրջանին էր որ
տեղափոխութիւնը սկսաւ :

Ամէն պարագայի, Հ. Մ. Ը. Մ. ը կրցաւ հսկայ շարժում մը յա-
ռաջ բերել այդ հաստատութիւններուն մէջ: Շատ աւելին պիտի ընէր,
եթէ իրերը վերի վար չչրջուէին :



1922 Սեպտեմբեր 11ին, երբ Իզմիր ինկաւ, բոլոր որբաշխարհը
փոխադրուեցաւ Յունաստան: Մօտ 15.000 որբեր, (որոնց 8500ը ման-
չեր), զետեղուեցան Քորֆուլի, Լութրաքիայի, Կորնթոսի, Հալքիսի,
Օռոփոսի, Սիրայի եւ Զաբիոնի մէջ :

Ամերիկեան N. E. R մարմնակրթանքին շատ մեծ կարեւորութիւն կուտար, ինչ որ եղաւ փրկարար մեր նոր սերունդին համար :

Քանի մը որբանոցներու մէջ Ամերիկացի մարզիչներ ստանձնած էին գործը, ուրիշ տեղեր՝ Ռուսեր : Իսկ հայ ըլլալով գրեթէ ես կայի : Ժամանակ մըն ալ Յակոբեան Արտաշէս՝ Կորընթոսի մէջ, ուր մօտ մէկ տարի զբաղեցաւ եւ կազմակերպեց քանի մը մրցումներ :

Երբ N. E. R.ի կեդրոնական մարմինը 1923ին որոշեց 14 տարեկանէն վեր եղողները հեռացնել որբանոցներէն, ինքնաբաւ դարձնելու համար, գործունէութիւնը կամաց կամաց կասեցաւ եւ չտուաւ այն արդիւնքը ինչ որ եղաւ փոխադրութենէն վերջ :

Սկաուտական կեանք՝ կարելի է ըսել՝ բացի Լութրաքիայէն եւ Քորֆուէն՝ գոյութիւն չունէր : Բայց, դուրս ելլող որբերը երբ հաստատուեցան զանազան քաղաքներու մէջ, Հ. Մ. Ը. Մ.ի ցանած սերմերը սկսան ծլիլ եւ նոր արդիւնքներ տալ : Այսօրուան Յունաստանի շրջանին սկաուտներուն եւ մարզիկներուն 70 առ հարիւրը մեր որբ եղբայրներէն կազմուած է :

Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ



Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ



Հ. Մ. Ը. Մ. ի Փարիզի ֆուտբոլի խումբերը 1939

Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

ԴԵՊՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

.....

ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԵՐԹԸ

1919ի փետրուարի սկիզբը Աստախազարէն Արմաշ այցելութեանս առթիւ, դադափարը սենեցայ մեր դպրեմանքը վերածել գործնական դիւղատնտեսական վարժարանի, անապատներէն դարձող մեր որբէ — րէն 200 հատ հոն տանիլ ու անոնցմէ, երկու տարուան դասընթացքներով, անկախ Հայաստանին հասցնել դիւղատնտեսներ :

Պոլիս վերադարձիս՝ ներկայացուցած ծրագիրս մեծ ընդունելութիւն գտաւ Պատրիարքարանի (յանձին Զաւէն պատրիարքի եւ Եղիշէ եպ. Դուրեանի) . — Աղգային Կեդր. Վարչութեան եւ խնամակալութեան կողմէ :

Ծրագիրը գործադրութեան դրուեցաւ: Նոյն տարուան դարձողական տարեմուտին շէնքը վերանորոգուած, սլիւտճէն ապահովուած, 200 աշկերտութիւնով եւ Խօթը պաշտօնէութիւնով դործի սկսանք :

Ամէն բանէ առաջ մեզ մտահոգող կէտը մեր տղայոց դաստիարակութեան հարցն էր: Լերան գլուխը տանիլ 200 որբեր, տարբեր տարբեր միջավայրի ծնունդներ, դրեթէ անդաստիարակ ու անապատներու մէջ հասակ նետած տղաներ, անհրաժեշտ էր տալ անոնց հայեցի առողջ դաստիարակութիւն, ծնողական դուրգուրանք, հայրենիքի ու հողի ճշմարիտ սէր :

Հ. Մ. Ը. Մ. ի դրօշակը եւ սկառուտական ծրագիրը եղան մեր դործի յաջողութեան գլխաւոր աղգակները. նման պարագաներու մէջ սկառուտիգմբ հրաշքներ կը դործէ: Հողիով ու մարմնով առողջ ու խանդավառ մեր տղաքը շուտով աղգային այդ հաստատութիւնը կատարեալ մեղուի փեթակի վերածեցին: Անկախ Հայաստանի ապագայ մշակները լծուած էին շինարար աշխատանքի, հողը իրենց քրտինքով ուռճացած էր :

Ապագան մեզ համար վարդագոյն էր: 1921ին 25ի չափ գործնական գիւղատնտեսներ Հայաստանի գիւղատնտեսական նախարարութեան տրամադրութեան տակ պիտի դնէինք: Աւա՛ղ, 1920ի կոտորածը աւելի շուտ եկաւ ու մենք ամէն ինչ ձգած՝ մեր շունչը Պոլիս կ'առնէինք, քէմալական վտանգէն խուսափելու համար :

Մեր սկառուտ հողագործները Պոլիսով չողեւորուեցան: Պոլիսը իրենց խառնուածքին չէր համապատասխաներ: Մաքուր օդ, ազատ բնութիւն եւ հողի սէր, — ահա թէ ինչ կը փնտռէին: Հայաստան եր-

Թալու գաղափարը ողբերգած էր զիրենք, անհամբեր դարձած էին . «Պարոն, ե՞րբ պիտի երթանք» ի ամենօրեայ հարցումներէն ազատելու համար, համախորհուրդ ազգային իշխանութեանց եւ Հ. Մ. Բ. Մ. ի հետ, ծրագրեցինք մեր Հայաստան ուղեւորութիւնը :

1920ի օգոստոս ամսոյ գեղեցիկ օր մը Ղալաթիոյ քարափը հաղա-
րաւոր երկսեռ ու հայրենասէր հասարակութիւն մը հաւաքուած էր ի
տես մեր շողենաւին որ զարդարուած էր Փրանսական ու հայկական
եռագոյններով եւ Հ. Մ. Բ. Մ. ի դրօշակով: Եկած էին արասուա-
խառն աչքերով մեզ բարի ճանապարհ մաղթելու: Անկախ Հայաս-
տանի ճանապարհն էր որ մեր 126 սկառւանները հաւաքաբար պիտի
բանային՝ իրենց ետեւէն քաշելու համար ցիրուցան բաղմութիւններ:

Հայ սկառւար Հայաստանի ճանապարհին վրայ իր առաջնորդողի
դերին մէջն էր, Հ. Մ. Բ. Մ. ի անձնուէր ներկայացուցիչները իրենց
դրօշակը մեզ նստիւած ատեն այնքան խորապէս դրացած չէին իրենց
ձեռնարկին ու գործին մեծութիւնը:

Մեր շողենաւը կը ճեղքէր Վասիտը, կը սուրար դէպի Սեւ ծով:
Տեսանք Իյնէպօլուն, Սամսոնը, Կիրասոնը, Օրսուն: Բոլորն ալ կոր-
սրնցուցած էին իրենց երբեմնի շէնութիւնը: Սահեմութիւնը մեզ կը
պարտադրէր թրքական ջուրերուն մէջ զղոյշ շարժիլ, ալիպէս ալ ը-
րինք. բայց ի տես Տրապիզոնին՝ դարերով կուտակուած հրաբուխը կը
ժայթքէր, ո՛չ մէկ օրէնք, ո՛չ մէկ պարտադրութիւն կարող էին լռնե-
ղնել մեր տղարը: Հայաստանի ասպաղայ մեծ նաւահանդիստի առջեւն
էինք, այն օրերուն ունէինք այդ յոյսն ու ողբերգութիւնը: Այնտեղ
հանդիպեցանք քէմալական իշխանութեան ներկայացուցիչներուն, ե-
կած էին առնելու Փրանսական կառավարութեան կողմէ իրենց նորա-
կազմ բանակին համար ուղարկուած առաջին նստիչները, հագուստ,
ուտելիք եւ սպորտամթերք:

Ողբերգութիւնն թէ կատակերգութիւն... արհարմարհեցինք այդ,
ու շարունակեցինք մեր ճանապարհը նոյն ողբերգութիւնով:

Քսոյր անկախ հանրապետութեան՝ Վրաստանի նաւահանդիստը
Պաթումի հայ հասարակութիւնով յեղուած է, եկած էին հոն հաղա-
րաւորներ. հոն է, առաջին դժին վրայ մեր հանրապետութեան ներ-
կայացուցիչ՝ Աթապէկեան իր պաշտօնէութիւնով, հոն են մեր ազգա-
յին եւ դինուորական իշխանութեանց ներկայացուցիչները, մեր որ-
բերր սրբ չէին այլեւս, իրենց մայր հայրենիքի ներկայացուցիչները
եկած էին դիտենք բնուունելու: Հայաստանի կառավարութեան ներկա-
յացուցիչը մեզ պահեց ու պատուեց մէկ օր, իսկ Վրաստանի կառա-
վարութիւնը կեդրոնի հրահանգով մեզ տրամադրեց առանձին կառա-
խումբ մը որու ծաղիկներով զարդարուած վայրաշարժը հպարտօրէն
կը կրէր քոյր հանրապետութեանց դրօշակները:

Երկաթուղին կը սուրայ, մեր ողեւորութիւնը, երգերը, նուագախումբի ձայնը կը լեցնեն ազատ Վրաստանի հրաշագեղ մթնոլորտը : Կը ճեղքենք ձորեր, լեռներ ու քաղաքներ : Կը հանդիպինք կայարաններու մէջ վրացախօս Հայերու : Ամէնքն ալ Հայեր են մեզ նման ողեւորուած, երանի՛ կուտան որ իրենցմէ առաջ Հայաստան կ'երթանք :

Հասած ենք Թիֆլիս, կայարանն ենք, կոկոնուած ու պատրաստ : Ո՛վ տեսած է Թիֆլիսը, կարող է դիւրութեամբ երեւակայել, թէ ան պայծառ արեւի տակ ինչպիսի ողեւորութիւն կ'ապրի, ամէնքը փողոցներն են. ու մեր տղաքը իրենց սկսուտական տարազով նուագախումբի շունչին տակ կը յտաճանան Վրաստանի մայրաքաղաքի փողոցներէն : Զարդուփշուր եղած աղբի մը բեկորներն են որ կ'անցնին հպարտ ու ինքնադո՛հ : Երեւանեան հրապարակէն կը մտնենք Կալաւիինաքի փողոցը ու կանդ կ'առնենք մեր հանրապետութեան շէնքին առջեւ, որու պատշգամէն Տիգրան Պէկղատեան, յանուն Հայաստանի կառավարութեան բարիպալուստի խօսք կ'ուղղէ մեզ, ու կ'առաջնորդուինք նոյն շէնքի ներքնասրահ, ուր մասնաւոր ճաշասեղան մը պատրաստած էր մեզ համար :

Անօթի էինք, բայց մեր յուզումէն եւ խանդավառութենէն գրեթէ ոչինչ կերանք : Հայաստանի դորավարներ, դործիչներ, դեսպան, դանազան նախարարութեանց ներկայացուցիչներ, հոն նոյն սեղաններու շուրջ, երեխայի նման ուրախ, խանդավառ ու յուզումով լեցուն, մեզ հետ են : Կախեթի գինին ու ռուսական պորճը չկերած գինովցած էինք, երա՞ղ թէ իրականութիւն : Ի՞նչպէս հաշտեցնել այս ներկան, անցեալի թրքական ոճրային պատկերներու հետ : Այդ բոպէն կեանք մըն էր մեզ համար, մոռցած էինք մօտիկ անցեալը ու վաղուան մեծ յոյսը մեր առջեւն էր : «Յառաջ նահատակ» խմբերգով կը յառաջանանք փողոցէն : Կանդ կ'առնենք Վորոնցով Տաշկովի պալատին առջեւ, Վրաստանի կեդր. կառավարութեան շէնքն է, Նոյ ժօրտանիան իր նախարարներով շրջապատուած, պատշգամէն կ'ընդունի մեր յարգանքին ու շնորհակալութեան տուրքը :


Մեր մեքենավարին պատուիրած ենք որ կառախումբը կեցնէ ճիշդ Հայաստանի սահմանադրուիսը, Կալաքերան :

Մայրամուտի սրահն է, հասած ենք Լօռիի շրջանը, բարեւի կեցած են մեր տղաքը, նշանատախտակ մը որու մէկ կողմը գրուած է Վրաստան, իսկ միւս կողմը Հայաստան. մենք մեր բաժինին մէջն ենք, մեր հողին վրայ, վսեմ, նուիրական եւ ինքնաբուխ պարտականութիւն մը ունինք կատարելիք,—ծունկի եկած համբուրել այն հողը,որու համար միլիոնաւոր զոհեր տուած էինք :

Երեկոյեան մեղմ հովէն կը ծածանի վայրաշարժի վրայէն մեր եռագոյնը : Նուագախումբը կը նուագէ «Մեր հայրենիք ազատ անկա-

խ»ը, իսկ մենք ծունկի եկած արտասուախառն աչքերով կը համբու-
րենք ու կը համբուրենք Հայաստանի հողը: Հոն մեզ հետ են Լոռիի
երկսեռ դիւղացիները, անոնք ալ կ'արտասուեն մեզ նման եւ մեզի
չափ: Մէկ հոգիով միեւնոյն սրբազան աւագանին մէջ մկրտուած էինք
մենք բոլորս :

Գիշեր է արդէն: Մթութեան մէջէն տեսնուած սեւ կէտ մը կ'ողե-
ւորէ մեր տղաքը, «հայկական է, հայկական»: Հասած ենք Ղարաքի-
լիսէ: Ղարաքիլիսէ՛ եւ Սարտարապատ, — Հայաստանի հանրապե -



Խ • Հայաստանի մէջ սկսուած շրջանի քաղաքացիական շարժումը

տութեան երկու գլխաւոր հիմնաքարերը լսած ու կարդացած էինք արտասահմանի մէջ, այժմ շօշափել ու գուրգուրալ կը մնար մեզ : Առաջին իսկ նշանին կը ցատկենք վար : Կայարանը հաւաքուող բազմութեանը կը խառնուինք, Հայեր ենք, իրենք ալ Հայեր, մենք անպաշտպան նահատակուածներ, իրենք պաշտպանութեան հերոսներ, եկած ենք իրենց, զիրենք սիրելու, նաեւ՝ օժանդակելու իրենց վերաշինութեան գործին :

Պոլիսէն մինչեւ Ղարաքիլիսէ մենք տեսանք ճոխութիւն եւ փայլուն կեանք, հոս, աշխարհի այս համեստ անկիւնը, պատերազմէն հազիւ գուրս եկած յոգնած ու քայքայուած կար ու կ'ապրէր համեստութիւն, պարզութիւն եւ նամանաւանդ անկեղծութիւն, մեր տղայոց խորհածը այս էր :

Երկաթուղին կը յառաջանայ մթութեան մէջէն, աջ եւ ձախ կը փնտռենք Արագածը, Անին, ոչինչ կը տեսնուի : Առաւօտեան պայծառ ու ջինջ արեւով կը հասնինք մեր մայրաքաղաքը Երեւան : Բնութիւնը մեզ հետ կը խնդայ, հեռո՛ւն աստուածատուր Մասիսը, փառապանծ դազաթներով վեհօրէն կը հսկէ Հայաստանի վրայ, ի տե՛ս անոնց անկարելի է կորաքամակ կենալ, ուղիղ, հպարտ եւ յաղթական քայլերով կը յառաջանանք, նուազախումբը կը նուազէ «Արեւ ծագեց Զէյթունցիներ » :

Պէտք է ըսել որ մեր տղաքը լաւ հագուած էին, սկառուտական սպիտակ գլխանոցներով ու մերկ սրունքներով ամերիկեան զինուորի տպաւորութիւն կը ձգէին առաջին առթիւ : Երեւանի ժողովուրդը յանկարծակիի եկած էր, ամէն կողմէ կը վազէին մեզ, «Հայե՛ր են, Հայե՛ր» : Այո՛, Հայեր էինք ու կ'երթայինք մեր կառավարութեան մեր հպատակութիւնը յայտնելու :

Վերը պատշգամին վրայ հայ նախարարները՝ գլխաւորութեամբ վարչապետին, կ'ունկնդրեն մեր սկառուտական երգումը, «Կ'երգնունք հաւատարիմ մնալ Ազգիս ու Հայրենիքիս» : Հ. Օհանջանեանը արտասուախառն աչքերով կը շնորհաւորէ ազգին հարազատ դաւակները : Հայաստանի քաղաքացիներ էինք այլեւս :

Ծնողք մը կորուստէ վերադատած իր դաւակին հանդէպ՝ այնքա՛ն գուրգուրոտ չի կրնար ըլլալ, որքան մեր կառավարութիւնը եղաւ մեր որբերուն համար : Զանդուի ափին, օդաւէտ ու ընդարձակ դօրանոց մը տրամադրուեցաւ մեզ, 130ի չափ անկողինի կազմածներով, պետական պահեստի դուռները բացուեցան մեր առջեւ, ամէն հնարաւորութիւն, ամէ՛ն դիւրութիւն տրուեցաւ մեզ օր առաջ գործի ձեռնարկելու :

Մեր սկառուտները երջանիկ էին . . . :

ՀԱՅԿ ՍԷՐԷՆԿԻՒԼԵԱՆ

ՆԱԵԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ

Որք — սկաուտներու առաքումէն զատ, Հայաստան դրկուած էին նաեւ, իբրեւ մարզիչներ, Հ. Մ. Ը. Մ. ի դեկավարներէն երեք ան — ձեր .—

Վ. Չերաղ, Տ. Խոյեան եւ Օ. Եաղմաճեան, այս մասնագէտ մարդիչները ուղարկուեցան Հայաստանի հանրապետական կառավարութեան պահանջին վրայ : Կրթ. նախարարութիւնը, 1 մարտ 1920 թուականի պաշտօնական գրութեամբ մը՝ ուղղուած «Հայ Սկաուտ» թերթի խմբագրութեան, կը յայտնէր «իր մեծ գոհունակութիւնը Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցող սկաուտական շարժման առիթով» : Ու կը խնդրէր տասը օրինակ Սկաուտ ուղարկել : Դարձեալ կրթ. նախարարութեան մէկ ուրիշ պաշտօնական գրութիւնը, ուղղուած Հայաստանի հանրապետութեան Պոլսոյ դիւանագիտական ներկայացուցիչին (16 Յունիս, 1920), կ'ըսէր ի մէջ այլոց. — «Ի լրումն մեր հեռագրի, խնդրում ենք երկու մասնագէտ սկաուտ պետեր յղել Երեւան : Պատիւ ունեմ տեղեկացնելու որ նախարարութեան ծրագիրն է Հայաստանի մէջ ամենալայն չափով տարածել սկաուտութիւնը, բայց դրան արդեւք է հանդիսա — նում հմուտ մասնագէտների բացակայութիւնը : Ուստի, եթէ տակաւին չէք դրկած մարդիչներ, բարեհաճեցէք առանց յապաղելու կատարել մեր խնդրանքը, որովհետեւ ժամանակն անցնում է ու կարիքը ահագին է» :

Հայաստան է, իբրեւ փորձ — մարդիչ, Եղնիկ Քաջունին միայն : Ան, դեռ 1919ի նոյեմբերին, Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան ուղղեալ նամակով մը կ'ըսէ ի մէջ այլոց .—

« Երեւանի մէջ, ինչպէս նաեւ Հայաստանի բոլոր միւս կեդրոնները պիտի աշխատինք ծաւալելու այդ նոր դադափարը գործով : Կըրթական նախարարութիւնը անսահման խոստումներ ունի, եւ կարելի է ըսել որ արդէն գործի սկսած ենք» :

Որպէսզի առարկայօրէն տուած ըլլանք նաեւ այդ օրերու մարդական կեանքը՝ Հայաստանի մէջ, աւելցնենք, որ Ե. Քաջունի իր մէկ ուրիշ նամակով կուտայ հետեւեալ տեղեկութիւնները .—

— « Իմ սկաուտներու «Արծիւ» խումբը կը բաղկանայ «Աղեք — սանդրեան» եւ «Գայիանեան» աղջկանց վարժարաններու 12—18 տարեկան 200 աղջիկներէն, մօտ 150 ալ տղաներու խումբէ մը : Արդէն մէկ ու կէս ամիս է սկսած եմ կազմակերպութեան : Ունինք չորս թմբուկ, 12 հատ սրինգ» :

Իսկ Հ. Մ. Ը. Մ. ի Կեդր. Վարչութեան անդամներէն Գր. Մեր —

ճանօֆ, որ 1920ի սկիզբը նոր էր վերադարձած Երեւանէն, Սկաուտի խմբադրութեան կ'ընէր հետեւեալ յայտարարութիւնը.—

« Ներկայիս Հայաստանի մէջ կան 20.000 երկսեռ որբեր: Ասոնք առ այժմ կը հետեւին մարզանքի դասերուն, որուն համար իբր ուսուցիչ ունինք Պ. Եղնիկ Քաջունին եւ ուրիշ հունդար մը, զոր կառավարութիւնը յատուկ բերել տուած է մարզանքի համար: Սկաուտներ կան հոն եւս: Բայց, դիւրին միջոցներ չունին: Նախարարութիւնը ընդարձակ մարզարաններ յատկացուցած է անոնց: Նախարարութիւնը կ'ուզէ հաստատուն հիմերու վրայ դնել դործը: Պիտիւն սահմանուած է մէկ միլիոն ըուպլի: Նախարարը կ'ուզէ Հ. Մ. Ը. Մ. ի աջակցութիւնը »:

Հ. Մ. Ը. Մ., բնականաբար, ընթացք պիտի տար այս հրաւերին: Եւ, ինչպէս ըսինք, անմիջապէս Հայաստան կ'ուղարկէր երեք սկաուտական մարդիչներ: Այս առիթով, իր օրկանը, Սկաուտ, «Դէպի երկիր» խորագրով խմբագրականի մը մէջ կ'ըսէր.—

« Պոլսէն Հայաստան մեկնեցան երեք ուխտաւորներ, սկաուտական հայրենաշէն դործը հոն եւս տարածելու համար: Պէտք էր երթալ եւ դիմագրել ամէն դժուարութեան, քանի որ մերն է հայրենիքը եւ մերը պիտի ըլլայ հոն ցանուած ամէն սերմի արդիւնք: Քարափին վրայ, Հայ Դրօշին քով կը ծածանէր Հ. Մ. Ը. Մ. ի դրօշը, որ կ'երթար իր ծփանքներովը մեղմացնել հայրենի ցաւերէն իրեն բաժին ինկած մասը »:

Ու մեր մարդիչները, Վ. Չերաղ, Տիգրան Խոյեան եւ Օ. Եազմաճեան, դործի կը սկսին դեռ Պաթումէն: Հազիւ հոն հասած, Չերաղ կը դրէ Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնին.

— « Տրապիզոնի առջեւ տեղեկացանք թէ այնտեղ պատանեկան միութիւն կայ եւ մարզանք կ'աւանդուի որբերուն: Անմիջապէս նամակ մը դրեցինք՝ ցուցմունքներ ընելով, քաջայերելով եւ հրաւիրելով որ կապ հաստատեն Հ. Մ. Ը. Մ. ի հետ: Ընթացք տուէք դործին եւ դրեցէք Տրապիզոն: Պաթում եկած էր Ե. Քաջունին, որ այսօր վերադարձաւ Ալեքսանդրապոլ: Անոր դիրքը շատ բարձր է, ու ինծի խոստացաւ իր պահեստէն մեզի սկաուտական հագուստի կտաւ, գուլպայ, կօշիկ եւ ապաղային այ մարմնակրթական ամէն հարկաւոր գոյքեր հայթայթել: Ներշնչուած առաքեալներու նման փրփփականտ կը մըղենք եւ արդէն շուրջերնիս կարծես ամէն բան կը սկաուտանայ: Շատեր արդէն Հ. Մ. Ը. Մ. ի հետ հիմէնեան կապեր հաստատեցին: Հաւանական է որ մեր կեդրոնը Ալեքսանդրապոլ ըլլայ (Լէնինական): Հոն 12.000 որբ կայ, իսկ Կարս, որ շատ մօտ է, 10.000 որբ:

«Այսօր կապ հաստատեցինք տեղական սկաուտներուն հետ, որոնք թիւով 20 հատ են»:


Մարզիչները հասած են Հայաստան : Ու գործի ձեռնարկած : Սօս-
քը տանք կրկին իրենց : Ձերազն է որ կը գրէ Երեւանէն , 17 սեպտ .
1920ին , Հ . Մ . Ը . Մ . ի կեդրոնին .—

« ... Մեր առաջին այցելութենէն իսկ , մեզ շատ պարզօրէն երեւ-
ցաւ թէ Հայաստանի մէջ մարմնակրթական շարժումի կեդրոնը , իր
բազմապիսի առաւելութեանց պատճառով , կարող էր լինել Ալեք-
սանդրապոլը (Լենինական) : Ան Հայաստանի կեդրոնն է . երկաթու-
ղային միակ հանգույցն է Երեւանի եւ Կարսի գիծերուն իրար միացած
տեղը : Պոլսոյ ալ աւելի մօտ է :

Երեւանի մէջ առ այժմ ունինք 120 սկաուտ , 30 — 40 աղջիկ ,
Փութպոլի խումբ մը . մինչդեռ Ալեքսանդրապոլ արդէն իսկ 5 — 600
սկաուտ կայ : Պիտի կազմենք սկաուտական խումբեր ամէն տեղ ,
անձամբ հսկելով ամենաչնչին մանրամասնութեան վրայ : Պիտի հա-
յացնենք լեզուն , հրամանները : Պիտի մտնենք որբանոցները , ուր հա-
զարներու զանգուած մը կայ՝ անանուն , անզոյն , անժպիտ եւ սակայն
անգին : Պիտի հսկենք դպրոցներուն մարմնակրթական դասաւանդու-
թեանց : Կարս արդէն թերթ կը հրատարակուի (Հայ Արի) : Արշա-
ւանքներ պէտք է կատարենք նախնական միջոցներով օժտուած երկրի
մը մէջ :

« ... Ձեր ողիմպիականին օրը Ախուրեան գետի եզերքն էինք դա-
ցեր լոգանքի եւ Փութպոլի , եւ յիշեցինք ձեզ ու ձեր օրը : Մեր օրը
պիտի ունենանք մենք ալ եկող տարի » :

Յետոյ կը խօսի զգեստներու անբաւականութենէն : Կեդրոնը ,



Հայաստանի մարզիկներու խումբ մը

Պոլսէն, ղրկած է կարգ մը իրեր: Կ'ուզեն դրօշ, հագուստ, գլխարկ, ուսադիրի ժապաւէն, կնիք . . .

Կրկին Չերազն է որ կը գրէ .

« Անցեալ օր էջմիածին գացինք, եւ երէկ վերադարձանք: Գեղեցիկ, մաքուր, ազգայնական սկաուտական եւ գեղարուեստական ապրումներու, երկու երջանիկ օրեր անցուցինք: Բնականաբար սկաուտական գործով ալ զբաղեցանք: Սկաուտական խմբապետուհի Օր . Կարինէ Աղազարեանի պէտք եղած հրահանգներն ու քաջալերութիւնը տուինք, թերթ եւ դիրք տրամադրեցինք եւ յանձնարարեցինք որ շարժումը վարէ՝ մինչեւ որ ի վիճակի ըլլանք այնտեղ ուղարկելու մանչ մարդիչ մը »:

Մեր մարդիչ ընկերները, Հայաստանի մէջ, առաջին առթիւ կը հանդիպին դժուարութեան մը: Մարմնակրթական գործը կապուած է կրթ. նախարարութեան ասոցիալատական բաժնին: Իսկ այս բաժնին վարիչն է Բժ . Արծրունի: Այս վերջինը, սակայն, սկաուտական գործի մասին հասկացողութիւն չունի եւ օրէնքի տառին կապուած մարդ է, ինչպէս կը գրէր Եզ . Քաջունի: Գործը կը կաղայ: Տղաքը դժգոհ են: Ի վերջոյ կը ներկայանան նախարարին, ու Արծրունի կը հեռանայ իր պաշտօնէն:



Որպէսզի աւելի լայն դադափար մը տուած ըլլանք Հայաստանի մարմնակրթական շարժման մասին, ստորեւ կը ներկայացնենք, յաջորդաբար, երկու գրութիւններ, զորս գրի առած է Եզ . Քաջունի, Թաւրիզի մէջ, 22 Յունուար, 1929ին :



ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԵՐԵՒԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

1918 — 1921

1918 թուականը բոլորովին ապարդիւն տարի է Հայաստանի հանրապետութեան համար դպրոցական տեսակէտէ: Ո՞վ ժամանակ ունէր մտածելու այդ մասին:

Դպրոցը խաղաղութեան ծնունդ է եւ այդ ծնունդը պէտք է կատարուած հաշուել միայն 1919 թուականին :

Այդ թուականին սկընաւորութեան միայն սկսաւ փոքր առ փոքր դպրոցական կեանքը: Քաղաքային դպրոցներէն ինչքան կը յիշեմ արական գիմնազիան շնորհիւ իր մարզական գործիքներուն կ'ունենար իր մարզանքները, առանց ուսուցչի, մեծ աշակերտներու նախաձեռնութեամբ. իսկ Հռիփսիմեան օրիորդաց գիմնազիան ունէր իր մար-

զանքի ուսուցչուհին՝ Օր. Փավիզը: Դարձեալ 1919 թուականի դարձնան էր որ Ամերիկեան I Որբանոց դպրոցը ունեցաւ իր կանոնաւոր ամենօրեայ մարզանքի դասերը: Միւս դպրոցներէն Սեմինարեան հիւանդանոցի էր վերածուած, Գայիանեան օրիորդացը զուրկ էր ուսուցիչէ, Թեմականը՝ նոյնպէս, Ալեքսանտրեանը զուրկ էր մնացեր՝ ուսուցչուհի սպաննուելուն հետեւանքով:

1919 — 1920, Հայաստանի լուսաւորութեան նախարարութիւնը ուսումնական տարուայ ծրագրին մէջ մեծ տեղ էր տուեր նաեւ մարմնակրթութեան դասարանական պարտադիր դասերուն: Արդէն իսկ պաշտօնավարող Օր. Փավիզէն զատ երկու նոր մարզանքի ուսուցիչներ էին ներկայացած: Օրիորդաց Գայիանեան եւ Ալեքսանդրեան — գիմնազիաներու դասերը կը տրուին հայ ուսուցչին, իսկ արական գիմնազիայինը՝ հունգար ուսուցչին կողմէ:

Միւսները՝ Թեմականը որպէս միջնակարգ եւ մասնաւոր միջնակարգ դպրոց մը, ինչքան կը յիշեմ, մնացին զուրկ մարզանքի դասերէ:

Նախարարութիւնը շարունակեց զարկ տալ մարզական մղումին. նախարարը ներկայ եղաւ այդ առթիւ կազմակերպուած բոլոր դպրոցական եւ արտադպրոցական հանդէսներուն: Իսկ դարմանելու համար խոշոր պակաս մը ծխական—թաղային դպրոցներու մէջ, կազմակերպեց մասնաւոր տեսական եւ գործնական դասեր նախակրթարաններու այն ուսուցիչ — ուսուցչուհիներու համար, որոնք կը յօժարէին ստանձնելու այդ դպրոցներու մարմնակրթութեան դասերը:

Այս կարգադրութեան շնորհիւ Երեւանի ծխական դպրոցներու մեր փոքրիկները կարողացան ունենալ իրենց առօրեայ մարզանքի դասերը կիրարկուելով հայ ուսուցիչի մը պատրաստած անգործիք մարզանքի դրութիւնը. սակայն պէտք չէ մտածել որ ատով Երեւանի ամբողջ աշակերտութիւնը ունեցաւ մարզական կեանք:

1920 — 21 տարուայ համար դէպքերու դասաւորումը տարբեր ուղղութիւն տուաւ աշակերտութեան մարզական կեանքին:

Այսպէս, 1919ի դարնան մէջտեղ եկաւ երեւոյթ մը որ նոր չէր մեզ իր անունով, եւ որ, սակայն, վերջ ի վերջոյ իր բնոյթով անախորժ դարձաւ մեզ բոլորիս որ ծանօթ էինք սկառտիզմի էութեան:

Հունգար ուսուցիչ Սիրմային սկառտիզմի պիտակով մէջտեղ կը նետէր այլասերուած շարժում մը: Իզմիրի Հայ Սպայից Միութենէն Գ. Լազեանը, Մկրեանը եւ ուրիշներ հեզնանքով դիտեցին խումբ մը որ կը հետեւէր թմբուկի մը, եւ որուն եղանակը կը յիշեցնէր Պոլսոյ Բամազանի տավուրը: Երեխաներ կը հետեւէին անոր իրենց ձեռքերը մարզական փոքր գաւազաններով, որպէս սկառտականի: Անունը՝ Սկառտ: Իսկ տղոց ոգիի մշակման գործը, որ էական մասն է սկառտ-


տիզմի, իր վրայ էր վերցուցեր դպրոցի Բ. տեսուչ Տիգրան Մուշեղ-
եանը :

Սիրմային ծափեր խլեց, սակայն, իր ութմիքով՝ որպէս նորու-
թիւն: Որպէս սկաուտական աշխատանք՝ բանջարանոց մը միայն
ցանեցին, որուն արդիւնքի մեծ մասը, կ'ըսէին չար լեզուները, Սիր-
մային գրպանելով Երեւանէն հեռացաւ Տիգրան Մուշեղեանի հեռաց-
ուելէն մէկ քանի շաբաթ յետոյ :

Հայ ուսուցիչը Սիրմային ձեռնարկներուն հակազդելու համար,
հարկադրուած էր ընդհանուր սկաուտական օրէնքէն շեղելով, դոնէ
սկզբնաւորութեանը, շարքերուն մէջ անխտիր ընդունելու աշակերտ-
ներու բոլոր դիմումները, բայց հազիւ ժամանակ ունեցաւ որ կարո-
ղանայ ընդհանուր աշխատանքին զուգընթաց մեծերէ ընտրուած
խումբ մը վարժեցնել առանձնապէս :

Ի պատիւ սկաուտ աշակերտուհիներու պէտք է յիշատակել այն
եռանդը եւ մտացիօրէն կարգապահ ոգին, զոր անոնք յայտնաբերեցին
գործի ամբողջ ընթացքին:

1919 զատկական տօներուն տասնեակ մը կարի մեքենաներ հաւա-
քելով, Ալեքսանտրեան դիմնազիայի աշակերտուհիները իրենք կարե-
ցին իրենց գլխարկները եւ հագուստները՝ նշանակուած ձեւով: Գա-
յիանեան դպրոցի մէջ իրենց շերամները պահելու համար աներեւա-
կայելի եռանդով թթի տերեւներ կը կրէին անոնք, փողոցներէն ինչ-
քան որք եւ հիւանդ երեխաներ են հաւաքուած եւ յանձնուած, անոնց




Հայաստանի մարզկուհիներու տողանցքը

ձեռքով, որբանոց կամ հիւանդանոց: Անոնց վարիչները գիտեն թէ
ինչպէս քրտնաթոր չորս սկառու աղջիկներ, հիւանդ խոշոր տղայ մը
կը փոխադրէին, օր մը: Դեռ ինչքան յուսալից համեմատութիւններու
կրնար հասնիլ այդ շարժումը, որ սակայն կը դատապարտուէր ամ —
լութեան շնորհիւ ստեղծուած քաղաքական աննպաստ պայմաններուն:

Արմաշի գիւղատնտեսական դպրոցի սկառուներու Երեւան հաս—
նելուն առիթով նախարարութիւնը Անգլիական այգիին մէջ կազմա—
կերպեց հանդէս մը, որուն 250ի մօտ սկառու աղջիկներու մասնակ —
ցութիւնը ճշմարիտ յայտնութիւն մը եղաւ քաղաքին համար: Մեր
աղջիկները, բոլորն ալ տարազով, հպարտ, ուղիղ քայլերով, գեղե—
ցիկ, ազատ մարզական շարժումներով, խլեցին ուրախ բացազանչու—
թիւններ: Փորձերը մղեցին քաղաքի զինուորական պարէտ Շահխա —
թունիին հարցնելու զարմացած, «միթէ՞ մենք ունէինք այսքան մեծ,
այսքան գեղեցիկ մարզուած խումբ»:

Դպրոցներու մէջ աւանդուած մարզական սիստեմները այլազան
էին: Կովկասի դպրոցներուն մէջ ընդհանրապէս ընդունուածը գեր —
մանականն է, կամ այն որ՝ Ֆրանսական եւ ուրիշ բանակներու մէջ
չատ է ընդհանրացած մեծ տարիքներու համար եւ որ աննպատակա—
յարմար է աշակերտական տարիքին :

Հայ ուսուցչի աղջկանց սկառուտական խումբը 1919ի ամբողջ ա —



Հայաստանի մարզիկներու տաղանցքը

մառը եւ յաջորդող տարին օգտուեցաւ Հրազդան գետի իրեն տրամադրուած լողարանէն : Քաղաքէն մինչեւ լողարան եւ շրջակաները կատարուած ամենօրեայ արշաւանքներուն , այեփառ Մասիսի դէմ առ դէմ , անոնք ունեցան իրենց ոգիի մշակման այլազան դասերը : Անոնցմէ ո՞վ ուռած կուրծքով չի յիշեր այդ օրերը :

ԵԶՆԻԿ ՔԱԶՈՒՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

1918 — 1921

1918ը թուականը , ինչպէս նոր կազմուած Հայաստանի քաղաքային դպրոցներու , նոյնպէս եւ որբանոցներու կրթական կեանքին մէջ , մարմնակրթութեան համար որ եւ է բան չունի արձանագրելու , ճիշդ այն պատճառներով , զորս յիշեցինք Հայաստանի դպրոցներու մարդական կեանքին յատուկ մեր դրութեան սկիզբը :

Երեք որբանոցներ կային այն ատեն ,— Պետական , Ռըլիֆի եւ Պօրտ ընկերութեան :

Այսպէս , ուրեմն , 1919ի դարնան Ամերիկեան Ա. որբանոց — դպրոցի տնօրէն Պ. Նշան Յովհաննէսեան նախաձեռնութիւնը կ'ունենար , որպէս առաջինը , մարզանքի դասեր ներմուծելու իր ծրագրին մէջ , որմէ նպաստաւորուեցան մօտ 15 որբանոցներ : Այստեղ կարելի չէ չյիշել նաեւ Ռըլիֆի երկու շատ յարգելի վարիչներու քէթթըններ Ճէրօլտի եւ Հարօլտի անունները ,— երկու երիտասարդ ամերիկացի զինուորականներ , որոնցմէ մեր որբերը կը պահեն ճշմարտապէս երկու մեծ եղբայրներու յիշատակներ :

Առաջին որբանոց դպրոցը հայ ուսուցչի մը միջոցաւ 1929ի դարնան սկիզբը քսանի մօտ ընտրուած մեծ աշակերտներէ ունեցաւ մարզանքի դասարան մը : Շուէտականի կանոնաւոր դասերու շնորհիւ մինչեւ արձակուրդները մարզուած այդ խումբը , արձակուրդներու ամբողջ տեւողութեան կարողացաւ Երեւանի Անգլիական Այգի դրօսավայրի մէջ օրական 2 — 3 ժամ տեւողութեամբ զբաղեցնել եւ մարզել մօտ 17 որբանոցներու երկսեռ աշակերտութիւնը :

Մարզանքի ուսուցչի հսկողութեամբ եւ մարզական առօրեայ ծրագրով կատարուած այդ աշխատանքը ամէն օր կը փակուէր հաւաքական երթով մը՝ թմբուկի ընկերակցութեամբ : Հայաստանի ամէնէն ոգեւորող եւ ամէնէն զուարթ տրամադրութիւնը ստեղծող շարժումն է եղած այդ օրերուն որբանոցներու այդ մարզական դասը :

Ամենափոքրիկները եւս անմասն չմնացին այդ աշխատանքէն : Նման կազմակերպութիւն , տեսակ մը բացօթեայ հսկայ մանկապարտէզ , գեղեցիկ ծառաստանի մը մէջ , կազմակերպուած էր Օր. Ազնիւ

Գրիգորեանի, կողմէ եւ իր ղեկավարութեամբ :

1919 — 20 ուսումնական տարուայ համար, Երեւանի բոլոր որ — բանոցներու համար ընդհանուր կրթական տեսուչի մը պէտքը զգաց — ուած էր եւ հրաւիրուած էր մանկավարժ — հոգեբան Պ. Տիգրան Մար — գարեանը :

Ռըլիֆի կառավարիչ Տօքթոր Սրօնը, ոտնահարելով իր նախորդի պայմանագրութիւնը՝ Տիգրան Մարգարեանի հետ, իր Տիկինը նշա — նակեց որբանոցներու ընդհ. կրթական տեսուչ: Վերին աստիճան յա — ւակնոտ այս տիկինը միայն մէկ ցանկութիւն ունէր, — պար — տադրել իր աշխարհաքաղաքացիական ծրագիրը: Ան կ'ըսէր, ի միջի այլոց. — « Ես կ'ուզեմ, որ հայ որբերը հպարտ մեծնան », եւ սակայն կը ջանար պարտադրել որ հայ որբերը չունենան հայոց պատմութեան, աշխարհագրութեան եւ առ հասարակ իրենց հայ լինելը չեչտող դա — սեր :

Ուսուցիչներէն ոմանք, կրթական ծրագրի շուրջ վէճի ընթացքին իրենց տհաճութիւնը եւ արհամարհանքը յայտնելէ յետոյ Տիկին Սրօ — րին, անդարձ հեռացան: Հեռացան Մարգարեանը, մարզանքի ուսու — ցիչը եւ մի երկու ուրիշ ուսուցիչներ :

Կարճ ժամանակ յետոյ Սրօրները նոյնպէս հեռացան:

1919 — 1920 կրթական շրջանին էր որ հասաւ կարծեմ Պ. Մարգիս Սամուէլեանը: Մինչեւ այդ, որբանոցները առանձին առանձին իրենց ուսուցիչներէն մէկն ու մէկի նախաձեռնութեամբ ունեցած են մար — գանքի դասեր: Մինչեւ այս թուականը եւ մինչեւ 1921ը, կարելի է նոյնիսկ ընդունիլ որ ամբողջ Հայաստանի մէջ մարզական կեանքին ամէնէն աւելի նպաստաւորուող դասը եղած է հայ որբը, եկող դացող բոլոր ուսուցիչներու հոգածութեան գլխաւոր առարկան եղած է յատ — կապէս հայ որբը:

Պ. Մարգիս Սամուէլեան հասաւ ճիշդ այնպիսի ժամանակ երբ որ — բանոցները կամաց կամաց կը զգային մարզանքի ուժեղ ուսուցչի մը պահանջը :

Բացի այդ, Սամուէլեանի մարզանքի դասերը կը մտնէին ուրիշ ձեւի մէջ: Ան, Երեւանի Ամերիկեան որբանոցներու դասերը սկսաւ շուէտական ազատ շարժումները համեմելով ատլէտիկի և սքօրի հետ:

Օրին մէկը, Սամուէլեանը տեսանք ղինուորական հագուստներով, իր մարզանքի դասերը թողած:

Ու այնուհետեւ Հայաստանի թաւալգլոր դէպքերը մարզանքի կա — նոնաւոր դասերը մատնեցին անորոշութեան եւ անստուգութեան մին — չեւ 1921ի ձախորդ վերիվայրումի օրերը :

Հայաստանի Որբաշխարհի համար մարզական կեանքի գեղեցիկ օրեր պէտք է համարիլ խորհրդային տիրապետութեան այն օրերը ուր

մասամբ ազատութիւններ կային դեռ ամերիկեան կոմիտէի ձեռքը, որբերու կրթական գործը վարելու սեփական ձեռքերով: Մեր որբերը ամբողջ երկրի սահմաններուն մէջ դեռ ունէին Չերազն ու Նազմաճեանը: Այդ երկուքի որբանոցային մարմնակրթական գործունէութեան մասին բոլոր հասած տեղեկութիւնները տեսակ մը յարգանքի զգացում կը ներշնչեն մեզ՝ իրենց անձին հանդէպ, արդեօք անո՞ր համար որ անոնց հոգիներու մղիչը եւ գործերը մերիններու հետ մէկ ընդհանուր եւ հասարակաց դրդիչ ունին: **ԵՋՆԻԿ ՔԱՋՈՒՆԻ**

×

Հակառակ միջոցներու եւ ուժերու անբաւականութեան, Հ. Մ. Ը. Մ.ի առաքելութեան անդամները կը շարունակեն անկարելին կարելի դարձնել, համախմբել, մարդել ու կոփել հայ երկսեռ պատանեկութիւնը՝ Մայր Երկրի մէջ, նոյնիսկ այն օրերուն երբ քաղաքական մութ ամպեր կ'երեւին:

Իրենցմէ ուրիշ մը, Օննիկ Նազմաճեան կը գրէ, 18 Նոյեմբեր 1920 թուականով .—

« ... Պատերազմական դրութիւնը կարծես աւելի մեծ ուժ եւ եռանդ է տուած, եւ տղաքը այս վայրկեանին աւելի լաւ փարած են սկստական գործին: Մեր դասախօսութիւնները կը շարունակենք: Այս շաբթու մտադիր ենք երկրորդ կարգի սկստաներու քննութեանց



Հայաստանի մէջ ջնշկող պատանիներ

սկսիլ արդիւնքը ձեզ կը տեղեկացնեմ : Զանազան ճակատներ ու — դարկեցինք սկառւտներ՝ զանազան պաշտօններով . օր . սուրհանդակ , մթերանոցներու հսկիչ , կարմիր խաչ : Սկառւտ դրօշախօսները , այս պահուս նմանապէս կը գտնուին Շարուրի ճակատը , անոնք հոն ուղարկուած են տեղւոյն զինուորական պետին հրահանգին համաձայն : Երկու սկառւտ ուղարկուած է Ուլուխանլու , ուր կը գտնուի դաղթա — կաններու համար բացուած սննդակայանը , ուր սկառւտները կը պատ — րաստեն թէյ , կերակուր եւն . : Նոր Գաւիթ գիւղն ալ սկառւտներ կան , ուր կը պատրաստուի դաղթականներու հացը , յիշեալ սկառւտները տեղւոյն պաշտօնեաներուն վրայ իբրեւ հսկիչ ուղարկուած են : Երկու սկառւտ ալ ունինք ելմտական նախարարութեան մէջ եւ այլ տեղեր : Երեւան լեցուն է դաղթականներով եւ սրբերով : Երկուշաբթի օր դա — ցինք մեր Կարմիր Խնձի հետ եւ դարմանեցինք 30 — 40 սրբեր , սրոնք Կարսէն փախած ատեն վիրաւորուած էին եւ զանազան վէրքեր ու — նէին : Բաւական գործ տեսանք :

« Այսօր , Խնամատարութեան նախարարի հրահանգով մեզ յանձ — նուեցաւ թեմական դպրոցի մէջ գտնուող 1000 դաղթականներու հոգը : Վաղը գործի պիտի ձեռնարկենք : Ասկէ դատ , նախարարութիւնը մեզի կ'ուղէ յանձնել Երեւանի 400 սրբերու փոխադրութիւնը դէպի Էջմիա — ծին , տրամադրութեանս տակ մեծ տղայ չմնաց . այսուհանդերձ , պղտիկներն ալ քաղաքին մէջ կրնան գործածուիլ , մեղուներու պէս կ'աշխատին » :

Դէպքերը թաւալդլոր կ'ընթանան , սակայն : Թրքական յարձա — կումը , Կարսի անկումը , ստեղծուած խուճապն ու խորհրդային բա — նակի մուտքը՝ Հայաստան , տակն ու վրայ կ'ընեն ամէն բան :

— « . . . Կարսի դէպքերուն յաջորդող անցքերը Հայաստանը դար — ձուցին մեծամասնական — կը դրէ Եզ . Քաջունի : Եաղմաճեանը եւ ես կ'ըմբռնէինք , որ մեր դերը այլեւս կրաւորական կրնար ըլլալ : Եր — կուքս կանչուեցանք Լուսժողկոմ , Աշոտ Յովհաննէսեանի մօտ : (Հոս , Քաջունի , տալով խօսակցութիւնը , կը յայտնէ թէ Յովհաննէսեան սաստած է դիրենք՝ դիտել տալով որ միայն դասակարգային նպա — տակներ կը հետաքրքրեն Խ . Հայաստանը) : Դուրս ելանք : Եաղմա — ճեան քանի մը օր վերջ Փէրտահճեան եպիսկոպոսի հետ կը մեկնէր Պոլիս : Բայց , Սաղախլուի պաշտօնատուներ զինքը կ'ուղարկէ այլ տեղ : Քաջունի կրկին կը կանչուի Լուսժողկոմ : Իրեն կը յանձնէ ոուսերէն ծրագիրներ՝ Փիղկուլտուրայի մասին , ու պաշտօնէուհի Տիկին Արմե — նուհի Վ . Ահարոնեանի կը յանձնարարէ զանոնք հայերէնի թարգ — մանել :

« Այդ օրերուն , — կը շարունակէ Քաջունի , — Չերագ հասեր էր Երեւան եւ գրեթէ դուրս չէր ելլեր : Ծրագիրի թարգմանութիւնը չտե —

սայ, որովհետեւ բանտարկուեցայ: Յետոյ, փետրուարեան դէպքերէն վերջ, անցայ Թաւրիզ: Չերազ յամառօրէն անցեր էր Ալեքսանդրապօլ, ուր մնաց: Յետագային վերադարձեր էր նաեւ Եազմաճեանը: Առաքելութեան այս երկու անդամները, այնուհետեւ, օգտագործելով ամէն պատեհութիւն, աշխատեցան: Մէկը՝ Ալեքսանդրապօլի որբանոցներուն մէջ, միւսը՝ Երեւան, արժեքաւորելու համար իրենց սիրած դործը, մինչեւ որ երկուքն ալ, տարբեր պատճառներով, հարկադրուեցան վերջ տալ իրենց դործին: Եազմաճեան անցաւ սահմանը: Չերազ, ախո՛ս, աքսորի, բանտի ե՛ւ մռայլութեան մէջ, 1928ի յունուարի 13ի առաւօտուն Թիֆլիսի մէջ զնդակահարուեցաւ »:

Ահա, իր կարելի մանրամասնութիւններով, այն գեղեցիկ առաքելութիւնը, որուն ձեռնարկած էր Հ. Մ. Ը. Մ. ը եւ որ նպատակ ունէր իր դործունէութեան խարխիսը դարձնել մայր երկիրը: Տրուած պայմաններուն մէջ, ու մանաւանդ այդքան կարճ ժամանակի ընթացքին բնականաբար աւելին կարելի չէր: Բայց ինչ որ կատարուեցաւ, այնքան ջերմեռանդ ու բոլորանուէր կերպով, ապացոյց մըն է թէ սկսուած այդ շարժումը իրապէս օրհնութիւն մը պիտի դառնար Հայաստանի համար՝ նոր սերունդի Փիղիքական ու բարոյական դաստիարակութեան եւ հաւաքական ու ազգային ոգիով կազմակերպման տեսակէտէն, եթէ քաղաքական պայմանները թոյլատու ըլլային:

Լրացուցած ըլլալու համար Հայաստանի բաժինը, — իբրեւ անուղղակի կերպով անոր կապուած մաս, — ըսենք նաեւ որ Թիֆլիսի մէջ եւս օր օրի կը դարգանար սկսուտական շարժումը:

Այսպէս, Թիֆլիսի սկսուտներու պէտ Ս. Մատոյեան Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնին կը դրէր ի մէջ այլոց. — (Եզ. Քաջունի, 1917ին, Թիֆլիսի մէջ հիմնած էր Փութպօլի խումբ մը):

«Մեր Վահագն սկսուտական բաժինը կը կատարէ իր սկսուտական երդումը: Ան ունի դեռ երկու ամսուայ կեանք: Միացուցինք բոլոր սկսուտական խումբերը: «Վահագն»ի մէջ կը մտնեն 150 սկսուտներ: Ունինք ծնողական խորհուրդ: Դեռ զուրկ ենք շատ մը միջոցներէ եւ պիտոյքներէ: Ծնողական խորհուրդը կարճ ժամանակի ընթացքին կարողացաւ հասարակութեան մէջ արծարծել սկսուտի դմի գաղափարը, դործի հրաւիրելով շատերը: Միւս կողմէ, ան ձեռք բերաւ որոշ դումար մը: Կազմակերպած ենք դասախօսութիւններ: Մեր ոգեւորութիւնը օր օրի կը կրկնապատկուի: Մեզ տրամադրուած է Բէհրուդեան փողոցի վրայ գտնուած Գայիանեան դպրոցի ապագայ շէնքի տեղը՝ մէկ տարիով: Պէտք է տեսնել թէ սկսուտները ինչ եռանդով ու խանդավառութեամբ կ'աշխատին, միշտ երազելով որ շուտով պատրաստ կ'ըլլայ դաշտը՝ իր աւազանով, մարզական գործիքներով եւայլն»:

Գ Ա Ի Ա Ռ Ն Ե Ր Ը



Զինադադարի շրջանին, երբ «Մնացորդաց»ը վերադարձած էր, հանրային կեանքի վերագարք-ման հետ կը սկսին կազմուիլ մարզական միութիւններ: Բնականաբար աւելի շատ Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղեր են որ կը կազմուին: Դժբախտաբար անկարելի եղաւ համադրել բոլոր այդ միութիւնները: Կուտանք մէկ քանին միայն:

ՏԱՐՏԱՆԷԼ

Տարտանէլը իր սկաուտական կազմը կը պարտի ընկեր Ազրիպպաս Թորոսեանի — ներկայիս ի Պուէնոս Այրէս — որ պատերազմի միջոցին իբր ծովային ղինուոր մարզուած եւ ղինադադարէն վերջ կաշեվաճառութեամբ զբաղելով միշտ առիթ կ'ունենար Պոլիս երթեւեկելու:

Հաւանաբար այս կերպով ինք շիման մէջ կը գտնուի Պոլսոյ Հայ սկաուտական կազմակերպութեանց հետ եւ բարի յղացումը կ'ունենայ ինք եւս դործի լծուելու այդ ուղղութեամբ: 1920ի ամառն էր, եռուզեռ մը պզտիկներուն մօտ. հազուստներ կը պատրաստուին, ցուպեր, գօտիներ, թմբուկ, շեփոր, եւ առհասարակ սկաուտի պէտք եղած նիւթերը Պոլիս կ'ապսպրուին, իսկ գիշերները ընթրիքէն վերջ կանոնաւոր կերպով՝ Ազգ. վարժարանի բակին մէջ, պզտիկները կը մարզուին եւ ուր շատ անգամ ծնողքներ եւ համակիր երիտասարդութիւնը ներկայ կը գտնուէին: Անդին՝ մի քանի օրիորդներ քաջալերելու համար այս շարժումը իրենց ձեռքերովը կը պատրաստեն մետաքսեայ փառապանծ դրօշակը եւ կը նուիրեն իրենց եղբայրներուն, հետեւած ըլլալու համար հայկական աւանդութեան:

Կազմին պակասը լրացնելու համար Պ. Գր. Սիրան Թորոսեան եւ Գաբիկ Ղազէրեան իբր օգնական խմբապետներ կ'արձանագրուին:

Տարտանէլի պոյ-սկաուտը իրականութիւն մը դարձած էր այլ — եւս իր 50ի մօտ անդամներով:

29 սեպտեմբեր 1920ին երդման հանդէսը պիտի կատարուէր նորագիր հայդուկներուն: Տեղւոյն հայութիւնը արտասովոր խրախճանութեան մը վայելքը կ'ակնկալէր: Ընկ. սկաուտապետը ժողովուրդին ընդարձակ վայր մը տրամադրելու հոգովը տարուած, շիման մէջ կը գտնուի Յոյն սկաուտապետին հետ եւ հայ քահանայի միջամտութեամբ կը տրամադրուի Յունաց ընդարձակ մարզավայրը:

Կրնամ ըսել հանդէսը մեր պզտիկներուն համար կատարելութիւն մը եղաւ առանց որ եւ է միջադէպի եւ ի ներկայութեան Յոյն եւ Հայ ստուար բազմութեան մը:

Բաց աստի, Յոյները տրամադրած էին իրենց սկաուտները՝ հսկելու համար հայկական այդ օրուան կարգապահութեան, սկիզբէն մինչեւ վերջ: Անկէ վերջ մասնաճիւղը շարունակեց իր աշխատանքները մինչեւ 1922:

ԿԻԼԻԿԻԱ

Ատանա հրատարակուող «Կիլիկիա» օրաթերթի 28 Մարտ 1919 թիւին մէջ Պ. Ռ. Շիրվան «Հայ Նոր Սերունդին Մարմնակրթութիւնը» վերնագրով յօդուածի մը մէջ անհրաժեշտութիւնը կը տեսնէ Կիլիկիոյ նոր սերունդին ֆիզիքական ու բարոյական դաստիարակութեան, ու կոչ կ'ուզէ երիտասարդութեան կազմակերպել «Կիլիկեան Հայ Մարմնամարզական Միութիւն մը»:

Տեղւոյն մէջ արդէն դոյութիւն ունեցող երիտասարդական երկսեռ միութեան կողքին, խումբ մը մարզասէր երիտասարդներ կը հիմնեն Արիամարտ Մարմնակրթական Միութիւնը, որուն նպատակը կ'ըլլայ դաշտային խաղեր, շուէտական մարզանք ու ֆութպօլ: Կարճ ժամանակի մէջ «Արիամարտ» ձևօք կը բերէ կարեւոր յաջողութիւններ մերթ րնդ մերթ մրցելով ու պարտութեան մատնելով անգլիական ու ֆրանսական զինուորներու ֆութպօլի խումբերը: Այս խումբ մը ջղուտ երիտասարդներուն գործունէութիւնը միշտ վառ պահելու համար, վերոյիշեալ թերթը խմբադրականով մը անոնց գովասանքը կ'ընէ ու խորհուրդ կուտայ որ սկսած գործը առանց վհատելու շարունակեն ցեղին բարձրացման համար:

«Արիամարտ» քաջալերուած՝ կը փափաքի իր աշխատութիւնը բնդլայնել ու այդ նպատակաւ Պոլիս Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնական վարչութեան ուղղեալ անոր թերթին 23 մայիս 1919 թիւին մէջ կը հրատարակէ բաց նամակ մը, յայտնելով իր կազմութիւնը եւ խնդրելով կեդրոնի աջակցութիւնը:

Այս բաց նամակէն յետոյ Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնական վարչութեան ու Հ. Ե. Ե. Միութեան «Արիամարտ» մարմնակրթական մասնախումբի միջեւ տեղի ունեցած կարճ թղթակցութենէ մը վերջ, Ատանայի մէջ կը կազմուի Հ. Մ. Ը. Մ. ի առժամեայ յանձնախումբ մը, որուն առաջին գործունէութիւնը կ'ըլլայ զբաղիլ սկաուտիստով: Նոյն տարուոյ 14 Հոկտեմբերին առժամեայ յանձնախումբը ազդով մը կը հրաւիրէ ամբողջ Կիլիկիոյ, եւ մասնաւորաբար Ատանայի ծնողները որ իրենց զաւակները (11 — 19 տարեկան) յանձնեն նորակազմ սկաուտական միութեան: 4 Նոյեմբեր 1919ին տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Կիլիկիոյ Երջանային վարչութեան ընտրութիւնը:

Նորընտիր Երջ. Վարչութիւնը հաւատարմօրէն փարելով այս նշանակալից գործին, չորս ամսուան յամառ ու յարատեւ գործունէութե-

նէ մը յետոյ 28 Մարտ 1920ին Աբգարեան վարժարանին մէջ կը յաջողի կազմակերպել սկաուտներու երդման արարողութեան հանդէս մը՝ հովանաւորութեամբ ամբողջական Հայաստանի պատուիրակու թեան ներկայացուցիչ Պ. Մ. Տամատեանի: Այս առթիւ խօսք կ'առնեն օրուան նախագահը՝ Պ. Մ. Տամատեան եւ Պ. Պ. Կ. Աստուածատուր եւ Վ. Արծրունի: Հանդէսը չվերջացած, Շրջ. Վարչութիւնը կուտայ սկաուտական աստիճաններ:

Հայ Կաթոլիկ Առաջնորդարանի բակին մէջ 9 Մայիս 1920ին տեղի կ'ունենայ երկրորդ սկաուտական երդման արարողութեան հանդէս մը, նախագահութեամբ Պ. Մ. Տամատեանի: Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. Վարչութեան կողմէ խօսք առած է Պ. Կ. Աստուածատուր բացատրելով ներկաներուն սկաուտիզմի նպատակը:

Այսպէս, ուրեմն, երբ Կիլիկիոյ ծոցին մէջ եւս կը սկսի ծլիլ մեր կազմակերպութիւնը՝ օր օրէ իր ցանցը տարածելու համար, վերահաս քաղաքական դէպքերը կուզան վեր ի վայր շրջելու ամէն բան:

ՄԱԼԿԱՐԱ

Նախապատերազմեան շրջանին, Մալկարան կազմակերպուած խումբերով մարդական կեանք չունէր: Ասիկա, ի հարկէ, ըսել չէ որ Մալկարան կ'անդիտանար մարդանքի անհրաժեշտութիւնը, մանաւանդ դպրոցական սերունդին համար: Մալկարացիներու «Մամիկոնեան» երկյարկանի շքեղ դպրոցը ունէր մարդանքի մասնաւոր սրահ: Կը յիշեմ որ այդ սրահներու ձեղունէն կախուած էին երկու կախօրաններ, որոնց վրայ դանազան «վարպետութիւններ» կ'ընէին դպրոցական բարձրագոյն կարգի տղաքը:

Տարագրութիւնը քանդեց Մալկարայի գեղեցիկ ծրագիրն ալ: Դպրոցական յառաջադէմ ու դարդացած սերունդը հնձուեցաւ Արարիոյ անապատներուն մէջ:

Աքսորէն վերադառնալէ յետոյ, Արամայիս Բանիկեան, որ թէ՛ Հայէպի եւ թէ՛ Պոլսոյ մէջ տեսած ու հիացած էր հայ արիներու կազմակերպութեան, առաջին անգամ, կիրակի օր մը, «Մամիկոնեան» վարժարանի տակի սրահներէն մէկուն մէջ, դպրոցի բարձրագոյն կարգի տղոց խօսեցաւ արիական շարժման մասին եւ թելադրեց որ ամէն տղայ անդամագրուելով Հ. Մ. Ը. Մ. ի, Մալկարայի մէջ ալ հիմնուի Մասնաճիւղ մը: Այս հիմնադիր ժողովին ներկայ էին նաեւ ի միջի այլոց Վահան Յարութիւնեան եւ Կարապ Պոշիկեան: Այս վերջիններն ալ պատշաճ խօսքեր ըրին հոն հաւաքուած տղոց եւ ծնողներուն: Այսպէսով, Մալկարայի մէջ ալ հիմը դրուեցաւ, 1920ին, Հ. Մ. Ը. Մ. ի, եթէ չեմ սխալիր, 23րդ մասնաճիւղին:

Վարչութեան ատենապետ ընտրուեցաւ այդ ժամանակ Մալկարա պաշտօնավարող ուսուցիչ Յարութիւն Փորեաճեան: (Այժմ Տ. Դաթէոս քհնյ. Փորեաճեան, ի Պուրկաղ):

Հ. Մ. Ը. Մ. ի մարդիկներուն խմբապետ նշանակուեցաւ Օ. Բանիկեան: Հաղիւ աշխատանքի սկսուած էր, երբ Ֆիլիպէի «Շանթ» (չչփոթել այժմու «Շանթ»ին հետ) մարդական խումբի փոխ – խմբապետ Յակոբ Նշանեան, վերադարձաւ իր ծննդավայրը, Մալկարա:

Նորակազմ Հ. Մ. Ը. Մ. ին համար բարեբախտութիւն մը եղաւ Յակոբ Նշանեանի ներկայութիւնը: Օ. Բանիկեան, տեսնելով որ «Շանթ»ի փոխ – խմբապետը աւելի օգտակար պիտի ըլլայ Հ. Մ. Ը. Մ. ին քան ինքը, հրաժարեցաւ խմբապետի պաշտօնէն ու դարձաւ փոխ – խմբապետ՝ իր տեղը տալով Յակոբին:

Յակոբը հայրենասէր ու նուիրուած մարդիկ էր, ափսո՛ս որ այս ընտիր երիտասարդը շատ կանուխ մեռաւ, մօտաւորապէս հինգ տարի առաջ, Սոֆիայի մէջ: Յակոբի ջանքերուն շնորհիւ Մալկարայի Հ. Մ. Ը. Մ. ը եռանդուն դործի լծուեցաւ: Շաբաթը երկու – երեք դիշեր, դպրոցի սրահին մէջ, կանոնաւոր մարզանքներ տեղի կ'ունենային, որոնց կը հետեւէին 30 — 35 մարդիկներ:

Մինչ այդ՝ Կ. Պոլսոյ կեդրոնին հետ արդէն կանոնաւոր թղթակցութեան մէջ էր Մասնաճիւղը: Անհատական սերտ կապ ստեղծուած էր նաեւ դրացի Ռոտոսթոյի Հ. Մ. Ը. Մ. ին հետ: Ռոտոսթոյիներու խմբական այցը Այաղմայի տարեդարձին, մեծ խանդավառութիւն էր ստեղծած Մալկարացիներուն մէջ:

Խմբապետ Յակոբ Նշանեանի անակնկալ մեկնումէն վերջ, խմբապետութիւնը դարձեալ վիճակուեցաւ Օ. Բանիկեանի որ մինչեւ վերջին տեղահանութիւնը մնաց իր պաշտօնին վրայ:

ՄԱԼԿԱՐԱՅԻ

ՌՈՏՈՍԹՕ

Զինադադարի առաջին օրերուն, «Արարատ» Լսարան – Ընթերցարանը վերաբացուած էր եւ նորանոր միութիւններ թափ կուտային իրենց դործունէութեան: Հ. Մ. Ը. Մ. ը արձագանգ կուտար:

Աքսորէ դարձին տեղական թուրք ֆուլթպուլի խումբի մը գոյու – թիւնը՝ պատճառ դարձաւ «Արարատ»ի խումբին շուտափոյթ կազմութեան: Հայ եւ թուրք խումբերը մէկ քանի առիթով մը ցումներ կազմակերպեցին, որոնցմէ Հայերը միշտ յաղթական դուրս եկան:

Յունական գրաւումէն յետոյ, Ռոտոսթոյի մարդական կեանքը աւելի որոշ դիմադիժ ստացաւ: Գրաւումէն մէկ քանի շաբաթ վերջ Ս. Աստուածածնայ տօնն էր: Այս տօնը նոյն ատեն մեր ծննդավայրի Ս.

Թագաւոր եկեղեցւոյ ցնծութեան օրն է : Ամէն տարի ջերմեռանդ բազմութիւն մը ուխտաւորներու չորս կողմերէն ուխտի կուգայ :

Կիրակի առաւօտուն դրօշադարդուած շողենաւ մը ուխտաւորներու նոր եւ մեծ բազմութիւն մը բերած էր Պոլսէն, որոնց կ'ընկերանային «Քնար» նուագախումբը (Սամաթիա), Հ. Օ. Մարմնի անդամները, յայտնի մտաւորական դէմքեր, խմբագիրներ եւ մէկ քանի խմբակ ալ Գում — Գափուի մասնաճիւղի սկաուտներէն : Այդ օրը Ռօտոսթոյի նախկին հայ կեանքը վերակենդանացած էր, կարծես զուլումի օրերը դոյութիւն ունեցած չըլլային : Սկաուտ խմբակները այդ օրը իրենց պետերու առաջնորդութեամբ կը մասնակցէին հսկայ թափօրին ցոյցերուն :

Սկաուտներու այս երեւումը գլխաւոր մղիչ ուժը եղաւ Ռօտոս — Թոյի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղի կազմութեան եւ յետագայ տենդոտ գործունէութեան :

1920 — 1921 դպրոցական տարեշրջանին «Յովհաննէսեան» վարժարանի տնօրէնութեան պաշտօնին կոչուեցաւ Պ. Հրանդ Տէր Անդրէասեան : Աշակերտութեան մարզանքի դասերը, եւ վերջն ալ սկաուտ խմբապետութիւնը իր վրայ վերցուց, ու մեծ ձեռնահասութեամբ կատարեց : Անոր երեւումէն առաջ Հ. Մ. Ը. Մ. ի 24րդ մասնաճիւղի կորիզը դրուած էր արդէն, բայց կը սպասուէր աւելի խելահաս ու փորձառու ձեռքերու օժանդակութեան : Պ. Անդրէասեան այդ պակասը լիուլի լրացուցած էր : Ունեցանք մարդագաշտ մը :

Տղոց մեծ մասը քիչ ժամանակ վերջ պատրաստուած ըլլալով տուին իրենց նորընծայի քննութիւնները : Շուտով հասան Պոլսէն անոնց գլխարկներն ու գօտիները՝ այնպէս որ Զատիկի խթման օրը ունեցանք կազմ ու պատրաստ 35 հագուած սկաուտներ :

Վերջի երկու խումբերը ամէն կերպով գրեթէ պատրաստ էին, բայց յետագայ դէպքերու բերումով, բախտաւորութիւնը չունեցան սկաուտական տարադ հագնելու, եւ քիչ ժամանակ վերջ ցրուեցան :

Փութպոլի ճիւղը իր կարգին գործունէութեան մէջ էր : Բոլոր նախկին խաղացողները հաւաքուած էին Հ. Մ. Ը. Մ. ի դրօշին ներքեւ եւ այսպէսով կազմուած էր Փութպոլի զօրաւոր թիւ մը :


Յոյն խումբը արհամարհելի ուժ մը չէր ներկայացներ, ունէր Պոլսէն եւ Յունաստանի զանազան կողմերէն եկած կարող խաղացողներ, այսուհանդերձ հայ խումբին յաղթելու փառքին չկրցաւ արժանանալ :

Աթլէթիք խաղերէն որոշ արդիւնքներ դեռ ձեռք չէին բերուած, որով մրցահանդէս կազմակերպելու փափաքը չիրականացաւ :

Որոշուեցաւ Մալկարա այց մը կազմակերպել, մասնաճիւղի մը հիմը դնելու նպատակաւ: Մէկ քանի օր վերջ այս որոշումը իրականացած էր: Տասնեակ մը տարիքոտ սկաուտներ, մարդիկներ եւ վարչական անդամներ հետիոտն կտրելով 52 քիլոմեթր ճամբայ հասած էին Մալկարա, ասկից ալ դէպի ուխտավայր: Երբ ասոնք իրենց պարտականութիւնը կատարած վերադարձան, ուրախութեամբ տեղեկացանք այն տեղի մարզական շարժման գոյութիւնը որ դիւրացուցեր էր իրենց աշխատանքը: Մեր արիւնները ականատես ըլլալով դպրոցական տղոց մարզանքներուն, անոնց նորատեսակ ձեւերը իրենց զարմանք առթած էին: Ստուգեցի որ անոնց տեսածը զինուորական եւ ռիթմիք ծանր մարզանքներ էին, զոր սորվեցուցեր էր Պ. Օ. Բանիկեան:

Պարտաւորիչ զինուորութեան դրութեան պատճառաւ, երիտասարդութիւնը բացակայեցաւ եւ տուժեցին տեղույս մշակութային միութիւնները: Ասոնց կարգին նաեւ Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղը: Աթլէթիք եւ Ֆութպոլի ճիւղերու գործունէութիւնը դադրած էր, կը մնային միայն սկաուտները:

Գ. Ս.



Ռոտոսթոյի սկաուտները Մարմարա կղզիին մէջ բանակումի պահուն, 26 Յունիս 1922:

ԻԶՄԻՐ

Զինադադարէն անմիջապէս յետոյ, մարմնակրթանքի սիրահար հայ երիտասարդները իրարու մօտ գալով կազմեցին իրենց ակումբը, այս անգամ սեւի ընդարձակ ծրագրով, վեց տարբեր ճիւղերով (մարզական, որսորդական, երաժշտական, նուագախմբային, գեղարուեստական եւ թատերական բաժիններով) :

Մարզականն ալ իր կարգին երեք ճիւղ կ'ընդգրկէր. ֆութպօլ, աթլէթիզմ եւ սկաուտիզմ : Այս իւրաքանչիւր ճիւղերը ունէին իրենց յատուկ վարչութիւնները որոնք կը գործէին անջատօրէն ու տարին քանի մը անգամ կը կատարէին խառն ժողովներ : Իզմիրը ուրեմն վերսկսաւ մարզական ախոյեանական մրցումներուն, որոնք միշտ յաջողութեամբ պսակուեցան : Հայ երիտասարդներն ու պատանիները եկան անգամ մը եւս հաստատելու թէ, հակառակ պատերազմի չորս դժնդակ տարիներուն, չեն կորսնցուցած իրենց ֆիզիքական ու մարզական կարողութիւնները : Մասնաւորաբար պատերազմէն վերջ հասնող մարզիկներուն մէջ կ'արժէ յիշատակել Կարապետ Շահինեանը որ իր ձեռք բերած արդիւնքներով յատկանշուեցաւ իրր աչքառու մարզիկ : 1922ին մասնակցելով Իզմիրի միջազգային մրցումներուն, առաջին հանդիսացած է չորս խաղերու մէջ : Մէկ քայլ ցատկել, 6 մէթր 50. երկու քայլ ցատկել, 12 մէթր 7, բարձր ցատկել 1 մէթր 60, եւ 200 մէթր վաղք 25 երկվ. : Միաժամանակ էր նաեւ Իզմիրի Արմինիըն ֆութպօլի խումբին կեդրոնի յառաջապահը : Նոյնպէս մասկազմեց Իզմիրէն Աթէնք մեկնող ֆութպօլի խառն խումբին իր երկու ընկերներուն՝ Գ. Յարեթեանի եւ Զ. Մինասեանի հետ :

Նոյն տարին մեկնեցաւ Պօլիս հայկ. ճրդ ընդհ. ողիմպիականին մասնակցելու : Հոն է որ իր մարզիկի արտակարգ վարպետութիւնը անգամ մը եւս ի յայտ բերաւ, շահելով երկայնութիւն ցատկելու մրցումը, 6 մէթր 55ի անախընթաց ուստումով մը : Իր այդ յաջողութիւնը զինքը դարձուց օրուան ամէնէն համակրելի մարզիկներէն մին : Այս առաջնութենէն դատ Շահինեան նոյն օրը երկրորդ հանդիսացաւ նաեւ բարձրութիւն եւ երեք քայլ ցատկելու մրցումներուն մէջ, առաջինը 1 մէթր 58ով, իսկ երկրորդը 12 մէթր 30ով :

Սկաուտական շարժումը Իզմիրի մէջ

Ընդհ. պատերազմէն առաջ սկաուտիզմը գոյութիւն ունէր միայն օտար վարժարաններու մէջ :

1919ին երբ Հայ Ակումբը վերակազմուեցաւ, պաշտօն տրուեցաւ Մ. Եանըգեանի սկաուտական շարժման կազմակերպութեամբ զբաղել : Իզմիրի ապագայ սկաուտներու պետը, իրեն վստահուած գործը

քիչ ատենի մէջ յաջողութեամբ գլուխ հանեց ու 1921ի դարնան արդէն 100է աւելի սկաուտներ իրենց համազգեստով ու ամէն կարգի դոյքերով կանոնաւոր խումբ մը կազմած էին: Մէկ կողմէ անոնց սորվեցուց մարզական վարժութիւններն ու կարգապահութիւնը, միւս կողմէ կատարեց դասախօսութիւններ սկաուտական ոգին ու գիտելիքները բացատրող: Իր այս աշխատանքներուն զուգընթաց, թարգմանեց նաեւ ամերիկեան սկաուտական ուղեցոյց գիրքը, որուն տպագրական ծախքերը ապահովող հարուստ բարերար մը գտաւ:

Իզմիրի հայ սկաուտները ունեցան նաեւ իրենց պաշտօնաթերթը « Պատրաստ »:

Այդ օրերուն, Պօլսոյ Հ. Մ. Ը. Մ. ը յարաբերութեան մէջ մտած էր Իզմիրի մարզական եւ սկաուտական կազմակերպութեանց հետ,



ԳԻՈՐԳ ՅԱԲԷԹԵԱՆ

Իզմիրի հայ մարզական կեանքին ամէնէն աչքառու ներկայացուցիչը, «Հայ Որսորդաց» ֆութպոլի ակումբին համբաւաւոր յետապառն էր եւ Պոլսոյ ու Իզմիրի Ողիմպիական խաղերու յաղթականը, (100 մեթր երկայնութիւն, բարձրութիւն):

փափաքելով աւելի սերտ գործակցութիւն մը՝ ի հարկին ձուլում մը կատարելու համար :

Հակառակ տիրող ցանկութեան, Իզմիրը՝ Հ. Մ. Ը. Մ. ին մասնաճիւղ մը դառնալու համար որոշ դժուարութիւններ կը ներկայացնէր որոնք աւելորդ են հոս մի առ մի թուել : Բայց եւ այնպէս որոշ տրամադրութիւն մը կար միջին ճամբայ մը գտնելու : Առ այդ, Պօլսոյ Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնին կողմէ Թադէոս Մեծատուրեան պատուիրակ եկաւ Իզմիր այս միացումը գլուխ հանելու համար : Երկար բանակցութիւններէ վերջ, Իզմիրցիները իրենց պայմաններն ու բաղձանքները յայտնեցին որպէսզի Հ. Մ. Ը. Մ. ի պատուիրակը իր վերադարձին ներկայացնէ կեդրոնի իր ընկերներուն ու անոնց հաւանութեան արժանացնէ : Դժբախտաբար այս բանակցութիւնները երկար չտևեցին : Վրայ հասաւ շուտով քէմալական արշաւանքը որուն ազետալի հետեւանքները հիմնովին քարուքանդ ըրին Իզմիրի պէս շէն ու բարգաւաճ քաղաք մը : Ջարդերէն եւ հրկիզումներէն ազատողները դադթեցին Յունաստան, Ֆրանսա կամ այլուր, ուր նոր կեանք մը կը սկսէր անոնց համար :

Յ. ՄԱԹԻԿԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի ՏԵՂԱՀԱՆՈՒՄԸ

.....

Մինչ շարժումը այսքան լայն ու խոր կերպով տարածուած է, քաղաքական աննպաստ դէպքեր կուզան տակն ու վրայ ընելու ամէն ինչ :

Քէմալական բանակը գրեթէ մտած է Պոլիս : Փոքր Ասիոյ հայութիւնը կ'ապաստանի Թրակիա եւ Յունաստան : Իսկ Պոլիս կ'ապրի մօտալուտ խուճապի մը օրերը :

Այս պայմաններուն մէջ, բնականաբար կը կասէր մեր հանրային կեանքը : Մանաւանդ որ Պոլսոյ թուրք տարրն ու իշխանութիւնները հետզհետէ անսանձ կը դառնային :

Հ. Մ. Ը. Մ. ի կեդր. Վարչութիւնը, այս աննպաստ ու անթոյլատու կացութեան մէջ, իր վերջին նիստը կը գումարէ 1922 սեպտեմբեր 16ին եւ լուծուած կը հռչակէ Հ. Մ. Ը. Մ. ը թուրքիոյ սահմաններուն մէջ :

Հ. Մ. Ը. Մ. Ի ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՆԱՍՏԱՆ



Հ. Մ. Ը. Մ. Ի գործունէութեան մաս կը կազմէ նաեւ առաքելութիւն մը, գոր ան կազմակերպած ու նախքան է դէպի Թրակիա եւ Թէսալոնիկէ՝ Հայրենիքի Օգնութեան Մարմինին հետ համախորհուրդ:

Առաքելութիւնը կազմուած էր հետեւեալներէն.—

Պատասխանատու վարիչներ.— Արշակ Յակոբեան՝ Հայ Սկառուներու ընդհանուր փոխ-խմբապետ, եւ Մկրտիչ Մալումեան՝ Սկառու խմբապետ :

Պատուոյ անդամ.— Կարօ Ուշապէան (Ծեր Ողնի) :

Անդամներ.— Ժիրայր Մինթանճեան՝ Սկառու-խմբապետ Եսայեան որբանոցի, Օննիկ Դարբինեան՝ Սկառու - խմբապետ Գատրդիւղի մասնաճիւղին, Միհրան Զարիֆեան՝ վարիչ առաջնորդ Մխիթարեան խումբին Բերա, Արա՝ վարիչ առաջնորդ Սամաթիոյ մասնաճիւղին :

Առաքելութեան կազմակերպութիւնը.— Կը հաւաքուին, ճամբայ ելլելէ առաջ, Պոլսոյ մեր մասնաճիւղերէն, սկառուական դոյքեր (վրան, լապտեր, կաթսայ եւայլն), հայ առեւտրականներէն՝ դրամ եւ զանազան պիտանի դոյքեր, թաղերուն մէջ կը սկսին հաւաքել հագուստ, կօշիկ, ճերմակեղէն, ծածկոցներ եւայլն :

Կը դիմենք Աղղերու Դաշնակցութեան Կ. Պոլսոյ ճիւղին պատուոյ նախագահուհի Տիկին Ռըմպօլտին, որ դնահատելով մեր ձեռնարկը, կը խոստանայ մեզ տալ իր լայն աջակցութիւնը: Հրահանգ կուտայ Թրակիոյ եւ Մակեդոնիոյ իրենց մասնաճիւղերուն որ մեր առաքելութեան օժանդակեն, եւ մեր տրամադրութեան տակ դնեն դեղ, պանտաթներ, ծածկոցներ եւ ուտելիք: Այդ իմաստով մեզ կը յանձնուին յանձնարարողիւններ :

Տասը օրուան ընթացքին առաքելութիւնը կրցաւ տեսնել իր պատրաստութիւնը.— անցադիր, յանձնարարողիւններ, դեղօրայք, հագուստեղէն, վրան եւայլն, պատրաստ էինք մեկնելու :

Առաքելութիւնը վաւերացուեցաւ Պատրիարքարանէն, Հ. Օ. Մ. էն, յունական դեսպանատունէն եւ Աղղերու Դաշնակցութեան Կ. Պոլսոյ ներկայացուցիչէն :

Առաքելութիւնը ճամբայ ելաւ Հոկտեմբեր 7ին, իր հետ ունենալով 90 հակ հագուստեղէն, 7 սնտուկ զանազան դեղեր, 6 հակ վրան եւ սկառուական իրեր: Հ. Մ. Ը. Մ. Ի լուծուած կեդրոնական վարչու-

Թիւնը առաքելութեան տրամադրութեան տակ դրած էր կեդրոնի մէջ մնացած գոյքերը :

Փոքրիկ շոգենաւ մը, բայց 750 դաղթականներով լեցուն, Առաքելութեան հսկողութեան տակ :

Թրակիոյ հողին վրայ

Հոկտեմբեր 11ին կը հասնինք Տէտէ Աղաճ, առաքելութեան երկու պատասխանատուները ցամաք ելլելով կ'երթան Եկեղեցի : Իսկ միւսները կը սպասեն նաւամատոյցը գոյքերուն քով : Եկեղեցին լեցուած է Թրակիոյ, Պիղայի եւ Մշեցի դաղթականներով :

Կը ծանօթանանք Թրակիոյ շրջանին խնամատարութեան տնօրէն Պ. Հայկ Սէրէնկիւլեանի եւ միւս անդամներուն որ մեր առաքելութեան մասին արդէն կարգացած էին լրագիրներու մէջ եւ կը սպասէին :

Հոս կ'արժէ յիշատակել Տոքթ. Տուտիի անունը, ինչպէս նաեւ Պանտրմայի նախկին սկաուտ պատասխանատու վարիչ Պ. Հրանդ Քէօսէեանը, որոնք մեծ ծառայութիւն մատուցին մեր ձեռնարկին :

Առաքելութիւնը անմիջապէս կը սկսի գործի՝ նոյն օրը, կը ներկայանանք տեղւոյն կառավարիչին որ մեզի սիրալիր ընդունելութիւն մը կ'ընէ . հրահանգ կուտայ ոստիկանութեան եւ մաքսատան, որ մեզի օժանակես՝ ամէն կերպով, կը պատրաստէ իր ձեռքով մեզ յանձնարարագիրներ որ իր շրջանին մէջ ամէն օգնութիւն չզլացուի մեզի :

Կէս օրէ վերջ կ'երթանք Ազգերու Դաշնակցութեան Գաղթականներու գրասենեակը, ուր տեղեակ են մեր առաքելութեան մասին : Կը



Սկաուտական առաքելութեան կազմը

Նստած՝ ձախէն աջ՝ Արշակ Յակոբեան, Մ. Մալումեան
Ոտքի՝ ձախէն աջ՝ Արա, Ժիրայր, Օննիկ եւ Զարիֆեան

խոստանան օժանդակել, եւ առաջին առիթով մեզ կը տրամադրեն կաթ, շաքար, բրինձ եւայլն, դաղթականներուն համար :

Յաջորդ օրը, խորհրդակցաբար Տօքթ. Տուտիի հետ, հականկ — խում կ'ընենք ընդհ. դաղթակայանին, դարմանում հիւանդներուն եւայլն :

Կառավարիչին օժանդակութեամբ կը ստանանք հակերը : Կը սկըսինք հազուտներու բաշխման :

Մեր ունեցած վրաններէն երկուքը կը լարենք հրապարակին վրայ, եւ դաղթակայանին երիտասարդները կը փոխադրենք վրաններուն մէջ, սրովհետեւ դանազան միջազգայն տեղի կ'ունենային միշտ :

Կէս օրերէն առաջ կը դրողէինք դաղթականներու պատուաստումով. այդ շրջանին մէջ գոյութիւն ունէին, ըստ մեր «Մարդահամար»ին, 300ի մօտ դաղթականներ. կը պատուաստէինք ծաղիկի, քուլբրայի եւ տիզանթէրիի դէմ, սրոնց շիճուկները բերած էինք միասին Պոլսէն :

Կ'որոշենք Տէտէադաճի մէջ պահել քարտուղար մը, մառանապետ մը եւ երկու գործիչներ : Գործիչները փոխն ի փոխն կը պտտէին բոլոր դաղթակայանները եւ քաղաքները, յարաբերութեան կը մտնէին տեղական իշխանութիւններու հետ եւն. :

Առաքելութեանս անդամներէն Պ. Ժիրայր Մինթանճեան ընկե — րակցութեամբ վարիչ առաջնորդ Զարիֆեանի որոշ պաշտօնադրով եւ Տէտէադաճի կառավարիչին յանձնարարադրով ուղարկուեցաւ Կիւ — միւլճինա, դիմում կատարելու կուսակալին մօտ. այդ դիմումը տուաւ շտտ լաւ արդիւնք, կառավարութիւնը տրամադրեց ինամտ — տարութեան քսան խորանարդ մեքր փայտ, դաղթակայանի մը շի — նութեանը համար :

Ուղարկուեցաւ հազուատեղէն, պատուաստ, վրան եւն., Կիւմիւլ — ճինա, Տրամա, Սքէչէ, Սէրէղ եւ Քաւլալա : Առաջին երեք քաղաքներուն համար պաշտօն տրուեցաւ Պ. Պ. Ժիրայր Մինթանճեանի եւ Զարիֆեանի : Իսկ Քաւլալայի եւ շրջակայ փոքր դիւղաքաղաքներուն՝ Պ. Պ. Օննիկ Դարբինեանի եւ Արային : Անոնք տասնըհինգ օրուան ըն — թացքին լաւադոյն կերպով կատարեցին իրենց պաշտօնները, թէ հա — գուստի բաշխման մէջ, թէ դետեղման, թէ պատուաստի եւ թէ մարդա — համարին մէջ :

Սելանիկի մէջ

Պ. Պ. Արչակ Յակոբեան, Հ. Սէրէնկիւլեան եւ Մալումեան մեկ — նեցան Սելանիկ, որ դաղթականներով լեցուն է : Կը ներկայանան կու — մակալին որ հրահանգ կուտայ իր պատասխանատու քարտուղարին որ

տրամադրէ բոլոր միջոցները, որպէսզի կարողանան գործը շարունակել :

Կը տրուին յանձնարարագիրներ: Հրահանգ կը տրուի երկաթուղիի տնօրէնութեան որ մերօնք կարողանան ճամբորդել Սելանիկի շրջանը: Ինչպէս եւ գոյքերը կարողանան ձրի փոխադրել ամէն տեղ:

Սելանիկի բոլոր կայանները առանձին առանձին կը պատին, կ'ուսումնասիրեն գաղթականներու վիճակը, կ'այցելեն Ամերիկեան Կարմիր Խաչի կեդրոնը, Ալզերու Դաշնակցութեան գրասենեակը, խօսք կ'առնեն անոնցմէ ալ որ պիտի օժանդակեն, կը կազմուի խնամատարական նոր մարմին մը:

Առաքելութիւնը գործի ձեռնարկելով այս շրջանին մէջ, 45 մեծ հակ հազուստներ կը սկսի բաժնել գաղթականներուն, 10 հակ կօշիկ եւ միւս կողմէն օժանդակութեամբ բժշկներու կը տանի պատուաստի գործը. կը ստիպուին Կիւմիւլճինայէն եւ Քալալայէն կանչել միւս ընկերները, որովհետեւ գործը շատ աւելի ընդարձակ էր այստեղ:

Կը կազմակերպուի խնամատարական գրասենեակ, տնօրինութեամբ Պ. Պօյաճեանի, պաշտօնեաներով եւն.:

Ամէն օր կանոնաւոր հացի բաշխում, ուր ներկայ կ'ըլլայ առաքելութեան մէկ անդամը: Միւս կողմէ հազուստի բաշխում, պատուաստ եւ տեղաւորում:

Առաքելութեան երկու անդամները, ընկերակցութեամբ Տօքթ. Ասլանեանի, Պ. Պ. Պօյաճեանի եւ Մակարեանի, կ'այցելեն քաղաքէն հեռու գտնուած նախկին ղինուորական պարագները, որոնք կը տրամադրուին մեզ՝ կուսակալութեան կողմէ: Որոշում կը տրուի մաս մը գաղթականներ հոն փոխադրել, խճողումին առջեւը առնելու համար. առաքելութիւնը ինք կը ստանձնէ այդ աշխատանքը եւ պաշտօն կուտայ Պ. Օննիկ Դարբինեանի, որ 15 օրուան մէջ մեծ յաջողութեամբ գլուխ կը հանէ այդ դժուարին գործը: Միւս կողմէ Պ. Մինթանճեան հազուստի, Արա՝ հացին բաշխումը կը ղեկավարեն, իսկ Զարիֆեանը գաղթականներու մաքրութեան գործին կը հսկէ:

Պ. Ա. Մակարեան եւս գործակցեցաւ խնամատարական մարմինին:

Մէկ կողմէն գործերը այս ձեւով կը քալէին, միւս կողմէ յարաբերութիւնը կը շարունակուէր բոլոր քաղաքներուն հետ՝ ուր որ գաղթականներ կային: Այսպէսով կը կազմուին՝ Թէսալոնիկէի եւ Տէտէաղաճի մէջ՝ երկու խնամատարական մարմիններ, որոնք կրցան ղեկավարել Թրակիան եւ Մակեդոնիան, շատ լաւ կերպով:

Առաքելութիւնը յաջողեցաւ ստանալ Սելանիկի մէջ ալ բուրդեղէն, ծածկոցներ, կաթ եւայլն, եւ խնամատարութեան տրամադրութեան տակ դնել:

Աթէնքի մէջ

Գործերը այս ձեւին մէջ էին, երբ Աթէնքէն կը ստացուին տխուր լուրեր: Աթէնք կը մեկնի Պ. Մալումեան: Դիմում կ'ըլլայ դաղթային նախարարութեան եւ Յունաստանի այն ատենուան դիկղատէօրին՝ Զօր. Բլասթիրասի որ կը գնահատէ մերոնց ծառայութիւնները եւ հրահանգ կուտայ՝ ուր որ անկ է՝ նր օժանդակեն ամէն կերպով: Կը փափաքի երկու վարիչները ներկայացնել Եորկիոս թագաւորին: Բայց, թագաւորին տկար ըլլալուն պատճառով, եղբայրը կ'ընդունի պաշտին մէջ: Ան Յունաստանի սկաուտներուն ընդհ. պատուոյ պետն էր այդ շրջանին: Սիրալիր ընդունելութիւն մը տեղի կ'ունենայ սկաուտական ոճով, ծանօթութիւններ կ'ուզէ եւ կը գնահատէ մեր առաքելութեանց ոգին եւ դործը, կը տեղեկացնէ Յունական սկաուտական կեդրոնին որ մեզ օժանդակեն:

Մերոնք յարաբերութեան մէջ կը մտնեն Դուրեան Աւետիկ եպիսկոպոսին հետ, որ Իզմիրէն գացած էր Աթէնք: Խնամատարութիւնն ու սրբազանը վէճի մէջ էին:

Իրամը կը մսխուէր՝ առանց կանոնաւոր հաշիւի, կը տեղեկագրեն Հ. Օ. Մ. ի կեդրոնը, բայց քաղաքական դէպքերու բերումով լուծուած էր նաեւ այդ միութիւնը:

Վերջապէս շատ մը խորհրդակցութիւններէ վերջ խնամատարական մարմինին մէջ կարելի կ'ըլլայ մտցնել դաղթականներու ներկայացուցիչներ, եւ դործը կը քալէ:

Պ. Առաքել Պետրոսեանի եւ պատուելի Յ. Աճէմեանի ջանքերը եւ օժանդակութիւնները մեր ծրագրին յաջողութեան համար ամէն դովասանքէ վեր էին: Յետագային Հ. Մ. Ը. Մ. ի Յունաստանի շրջանի վարչութեան անդամներ եղան երկուքն ալ:

Վերստին դէպի Թէսաղոնիկէ

Յանկարծ հեռագիր մը կը ստանան Տէտէաղաճէն: Սելանիկի մէջ դժուարութեան կը մատնուին խնամատարական մարմինի անդամները դաղթականներու գետեղման դործին մէջ: Կան անպատասխանատու մարդիկ, որոնք ծեծով եւ սպառնալիքներով կը խօսին: Կը դիմեն ոստիկանութեան միջամտութեան:

Տէտէաղաճի մէջ Պ. Յակոբեան կը տեսակցի Փէրտահճեան Սրբազանի հետ, կը գումարեն ժողովներ, կը վաւերացնեն յետ քննութեան հաշիւները եւ կը մեկնին Թէսաղոնիկէ:

Պէտք է յիշել հոս մեծ ծառայութիւնը եւ օժանդակութիւնը Թրակիոյ երեսփոխան Պ. Գ. Փափազեանի, որ միշտ կ'ընկերանար Փէրտահճեան սրբազանին: Միշտ եղաւ առաքելութեան բարեկամը եւ խորհրդատուն:

Սելանիկի մէջ տեղի կ'ունենայ լիազուժար նիստ խնամատարա-
կան մարմինի, սկաուտական առաքելութեան վարիչներուն եւ Փէր-
տահճեան Սրբազանի միջեւ: Որոշում կը տրուի հաստատել առաջնոր-
դարան, փոխադրել խնամատարական մարմինը հոն եւ գործը շարու-
նակել:

Լուծում

Առաքելութիւնը Պոլսէն մեկնած էր մէկ ամսուան համար, իր
պիւտճէն սպառած էր արդէն, եւ անհատական եւ սկաուտական զոհո-
ղութիւնով գործը կը տարուէր:

Փէրտահճեան Սրբազան կը քննէ բոլոր հաշիւները եւ կը տեղե-
կագրէ Պատրիարքարան, խնդրելով որ երկարաձգուի Առաքելութեան
երկու պատասխանատու վարիչներուն ներկայութիւնը քանի մը ամ-
սուան համար: Պատրիարքարանը լուռ կը մնայ:

Թրակիոյ շրջանի խնամատարական մարմինը Հ. Օ. Մ. ի հաշ-
ուոյն առաքելութեան կը տրամադրէ գումար մը առաքելութեան
ծախսերուն համար, բայց կարելի չէր 6 անդամներ պահել, որով ա-
ռաքելութեան չորս անդամները կը յայտարարեն թէ այլեւս իրենք
պիտի չկրնան շարունակել այս գործը: Մեր անդամներէն Պ. Պ. Օննիկ
Դարբինեան եւ Ժիրայր Մինթանճեան իբրեւ պաշտօնեաներ մտան
խնամատարութեան մէջ եւ կատարեցին դնահատելի ծառայութիւն -
ներ: Մինչ այդ, Առաքելութեան միւս անդամները՝ Մինթանճեան,
Զարիֆեան, Դարբինեան եւ Արա նոյն ձեւով աշխատած են միւս քա-
ղաքներուն մէջ՝ բաժնուելով երկու խումբի: Սէրէզի մէջ կ'ընեն ա-
ռողջապահական կարգադրութիւններ, հիմք կը դնեն Հ. Մ. Ը. Մ. ի
մասնաճիւղի մը, մօտակայ դիւղերու հայ դպրոցականներուն կ'օգնեն:
Քսանթիի մէջ ծխախոտի ամերիկեան հաստատութեան մէջ գործ կը
դնեն հայ դպրոցականներուն: Կ'անցնին Քալայա ու Տրամա, տանե-
լով նոյն ձեւի աշխատանքներ:

Առաքելութեան վարիչները, ուղեւոր գնահատել այս անոսմնե-
րուն ջանքերը, Ժիրայր Մինթանճեանին կուտան «Արարատեան սկա-
ուտ» տիտղոսը, Օննիկ Դարբինեանին՝ սեւոստ խմբապետի աստի-
ճան, Արային ու Զարիֆեանին՝ փոխ - խմբապետի աստիճան:

Առաքելութիւնը կը լուծուի 1923 Փետրուարի սկիզբը՝ իր պաշ-
տօնը լիուլի կատարելէ վերջ:

Մ. Մ.



Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ի համբաւաւոր ֆութպոլի խումբը իր լաւագոյն կազմով :
Առաջին շարք ծունկի՝ Մ. Մկրեան, Վ. Տէվէնեան, Ռ. Շահմիրեան, Երկրորդ շարքին մէջ կան՝ Գամէր,
Պարոյր, իսկ երրորդ շարքին մէջ՝ Ասատուր, Շ. Պաքըրեան, Կ. Կարապետեան, Ս. Կարապետեան

ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՄԷՋ

.....

Պոլսոյ մէջ քէմալական իշխանութեան հաստատումէն վերջ , Փոքր Ասիայէն , Թրակիայէն , ինչպէս եւ մասամբ Պոլսէն կը մեկնին բազմաթիւ Հայեր՝ ցրուելով զանազան երկիրներու մէջ : Առաջին տարիներու անորոշ կայքէ վերջ սակայն , երբ իրենց կեանքը կը դառնայ բնականոն , մարդական շարժումը վերսկսած է : Գրեթէ ամէն տեղ կազմուած են Հ . Մ . Ը . Մ . ի մասնաճիւղեր , իսկ մէկ քանի երկիրներու մէջ , քիչ ատենէն , շրջանային վարչութիւններ՝ իրենց տեղական կազմերով :

Այս գլուխին մէջ այդ բաժինն է որ կ'երևի : Անշուշտ ամբողջական չէ անիկա : Գրեթէ 20 տարուան կեանք մը անկարելի էր մանրամասն կամ ամբողջապէս տալ : Զանացինք մէկտեղել , սակայն , այն բոլորը ինչ որ տրամադրեցին մեզ շրջանները եւ մասնաճիւղերը : Անխտրական կերպով տեղ տուինք նաեւ այն միութիւններուն , որոնք Հ . Մ . Ը . Մ . է դուրս կը մնան , բայց զրկած են մեզի իրենց զործունէութեան պատկերը : Իսկ կարգ մը վայրերու Հ . Մ . Ը . Մ . երը , իրենց թերացումով , արձազանդ չունեցան հոս :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ

ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻՋ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐ

1920ին , քանի մը մարդասէր երիտասարդներ կազմած են Փարիզի մասնաճիւղը , կապ պահելով Հ . Մ . Ը . Մ . ի Պոլսոյ կեդրոնին հետ :

Սկիզբները հազիւ 20 — 30 անդամներ կային , որոնք միայն Փութպոլով կը զբաղէին 1922 — 23ին , երբ Պոլսէն ու Իզմիրէն բաւական թիւով երիտասարդներ հասան Փարիզ , մեծ մասամբ Հ . Մ . Ը . Մ . ականներ , շատ մեծ ոգեւորութիւն մը ստեղծուեցաւ Հ . Մ . Ը : Մ . ի շուրջ : Գիշերային հաւաքոյթներ , կիրակնօրեայ պտոյտներ : Իսկ առաջին անգամ 1923ին սթատ Սէն — Մորի մէջ տեղի կ'ունենային Փարիզահայ ախոյեանական մրցումներ : 1924ին հետզհետէ Փարիզ կը ժամանէին Հ . Մ . Ը . Մ . ի նախկին վարիչներն ու մարզիկները :

Արդէն իսկ կազմուած էր վարչութիւն մը : 1924 Յուլիսին Սթատ Էլիզապէթի մէջ կազմակերպուեցաւ մրցահանդէս մը նախագահութեամբ հանգուցեալ Գ . Նորատունկեանի , եւ հոժ բազմութեան մը

ներկայութեան : Կը մասնակցէին 80է աւելի մարզիկներ : Մրցահան —
դէսը անցաւ շատ յաջող : Նոյն թուականներուն կազմուած էր սկաու—
տական խումբ մը՝ նախաձեռնութեամբ Ա. Պէրպէրեանի : Խումբը ա—
մէն կիրակի կը կատարէր արշաւներ :

Այս միջոցներուն Հ. Մ. Ը. Մ. ը ունէր մօտաւորապէս 300 ան—
դամ :

Կազմուած էին Ֆութպոլի հինգ խումբեր, որոնք ամէն կիրակի
մրցումներ կը կատարէին օտար եւ Փրանսական խումբերու հետ :

1925ին, նախաձեռնութեամբ Պօղոս Ֆրէնկեանի կազմուեցաւ
Ֆութպոլի յանձնախումբ մը ու շնորհիւ անոր մեր խումբը մեծ յա—
ջողութիւններ ունեցաւ, տանելով բազմաթիւ յաղթանակներ օտար
խումբերու վրայ : Փարիզահայ դաղութը մեծ համակրութեամբ կը
քաջալերէր ամէն ձեռնարկ որ կը բխէր Հ. Մ. Ը. Մ. էն : Ասոր իբր ա—
պացոյց կարելի է յիշել Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպած քանի մը պա—
րահանդէսները, որոնք մինչեւ 20.000 Փրանք գուտ հասոյթ կ'ա—
պահովէին միութեան :

Նկատի առնելով որ Փարիզահայ երիտասարդութիւնը, մեծ մա—
սով՝ կը բնակի արուարձանները՝ ու տեսնելով դժուարութիւնները
բոլոր ուժերը հաւաքելու տեսակէտէն, կազմուեցան շատ մը մասնա—
ճիւղեր Փարիզի արուարձաններու շուրջ :

Այսպէս՝ Պուա — Քոլումպ իր շրջակայքով (Քոլումպ, Արժանթէօյլ,
Անիէո, Լա Կառէն եւ Քուրպըվուա), Ալֆորվիլ, Սարսէլ, Արնուվիլ



Փարիզահայ Բ. մարզահանդէսին (1924), մարզիկներու 'տողանցքը

լէ Կոնէս, Անկիէն, Ռօնի, Ռէնսի, Պէլվիլ, Իթալի, Իսի լէ Մուլինօ, Գարակէօղեան, Շաւիլ եւ Ժուանվիլ:

Այս բոլոր մասնաճիւղերու Ա. շրջանային պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 1926ին եւ կազմուեցաւ Տոքթ. Լ. Գրիգորեանի նախագահութեամբ շրջանային վարչութիւն մը, որ տարաւ աշխատանքը որոշ ժամանակ, թէեւ Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութիւնը այլ եւս միայն Փութպոլն էր:

1927ին վերոյիշեալ շրջանային վարչութեան հրատարումէն յետոյ կազմուեցաւ Բ. շրջանային վարչութիւն մը հետեւեալներէ, — Աթոք Կէվրէկ, Տոքթ. Իգմիրլեան, Տոքթ. Խանջէր, Նշան Սէրքոյեան, Ս. Ճէպպար, Արայ Արեւեան: Այս վարչութիւնը ուղեց Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութիւնը աւելի տարածել, կազմակերպելով տարեկան մըր-շահանդէսներ եւ միջմասնաճիւղային Փութպոլի մրցումներ:

Այս շրջաններուն գաւառի մէջ եւս շարժումը բաւական տարածումած ըլլալուն, անհրաժեշտ նկատուեցաւ Ֆրանսայի շրջանային վարչութիւն մը ստեղծել: Մարսէյլի եւ Փարիզի մասնաճիւղերու նախաձեռնութեամբ կազմակերպուեցաւ պատգամաւորական շրջանային ժողով մը Փարիզ եւ շրջաններ, Մարսէյլ, Պերճիքա, Լիօն, Տէսին, Վալանս, Վիէն եւ Փարիզի մէջ գործող Հ. Մարզական միութիւնը եւ կարգ մը մարզական անջատ կազմակերպութիւններ՝ որոնք կ'ուղէին գալ միանալ Հ. Մ. Ը. Մ. ի դրօշին տակ:



Փարիզահայ մարզիկներու վարժութիւններէն
Գ. Շախինեան, 100 մէթր վազքի մեկնման հրամանը կուտայ

Սոյն պատգամաւորական ժողովը ընտրեց Արեւմտեան Եւրոպայի կեդրոնական վարչութիւն՝ հետեւեալ կազմով: Տիարք Պ. Էսմէրեան՝ (ատենապետ), Վ. Թադւորեան, Հ. Ճէվահիրճեան, Ս. Քարեան, Հ. Աբելեան, Բ. Համբարձումեան, Կ. Ուշաքլեան, Մ. Մալումեան եւ Վ. Հարիկեան :

Դժբախտաբար այս վարչութիւնը երկար կեանք չունեցաւ եւ կարգ մը նկատումներուն անդամներէն ոմանք հրաժարեցան, եւ այսպէսով այն աշխատանքները որ կատարուած էին, ապարդիւն անցան :

Մինչեւ 1928ի վերջ Փարիզի եւ արուարձանի մասնաճիւղերը անջատ անջատ դործեցին, պահելով իրարու հետ բարոյական կապ մը միայն: Հոս փակադժի մէջ ըսենք որ այս թուականներուն էր որ Փարիզի Հ. Մ. Բ. Մ. ի սկաուտական խումբը հրաւիրուած էր Անգլիա: Խումբ մը տղաք մեկնեցան Փարիզէն Հ. Մ. Բ. Մ. ի դրօշին տակ, անոնք վայելեցին ամէն հողածութիւն ու հիւրասիրութիւն Լոնտոնի հայ դպրութիւն կողմէ, նոյնիսկ նիւթական նուէրներ ալ եղան: Հ. Մ. Բ. Մ. ի այն ատենուան վարչութեան մեծ «սխալը» եղաւ անոնցմէ նիւթական հաշիւ պահանջել: Եւ անոնք խուսափելով հաշիւ տալէ, լքեցին մայր միութիւնը ու հեռացան առանձին միութիւն մը կազմելով: Հ. Մ. Բ. Մ. ի յաջորդական բոլոր վարչութիւններու կողմէ յատ մը ձեռնարկներ եղան, որպէսզի անոնք վերստին միանան Հ. Մ. Բ. Մ. ին, բայց կարգ մը անհատներ արդեւք հանդիսացած են: Առանց մանրամասնութեանց մտնելու, հոս կուզենք յիշել միայն պարագայ մը որ ընդմիջեցուցիչ կը նկատենք: Ըստ միջազգային օրէնքի, սկաուտը եղբայր է ամէն օտար սկաուտի, առանց կրօնքի եւ դաւանանքի խտրութեան: Ուրեմն, եղբայր է Ռուսին, Հրեային, Յոյնին, Անգլիացիին եւ բոլորին, եւ ամէն առթիւ որ անոնց կը հանդիպի կը բարեւէ, բայց այս անմեղ պատանիներուն իրենց պետերուն հրահանգով արգիլուած էր Հ. Մ. Բ. Մ. ի սկաուտներուն բարեւել... եւն.: Սակայն, մեր տղաքը ամէն առթիւ որ կը հանդիպէին անոնց, ամենայն հեղութեամբ կը բարեւէին եւ մինչեւ այսօր կը բարեւեն: Մենք ունինք դօրաւոր փաստեր, վաւերացութիւններ եւ վկաներ, բայց չենք ուղեր մեր այս հատորին սուղ էջերը մրտտել, մեղ համար ցաւայի նըկատուած այս խնդիրը վերարժարծելով: Բայց հարկ էր այս ճշդումը ընել դայն յանձնելով պատմութեան:

Փարիզ գտնուող Հ. Մ. Բ. Մ. ի բոլոր խմբապետները, իրարու քով եկան եւ կադմեցին սկաուտական յանձնախումբ մը: Բոլորն ալ յծուեցան գործի՝ ստանձնելով առանձին առանձին շրջաններ: Այսպէս, կազմուեցան սկաուտական խումբեր՝ Անկիէն, Ալֆորվիլ, Պուա-Քո-

լոնալ, Իթալի, Պէլլիլ, Սէվրան, Սարսէլ, Առնուվիլ-լէ-Կոնէս, Ռօնի, Ռէնսի, Իսի-լէ-Մուլլինօ, Շավիլ, Վէնսէն :

Առաջին առթիւ ձեռնարկուեցաւ շրջանային պատգամաւորական ժողովի մը, ուր կազմուեցաւ շրջ. վարչութիւն մը նախագահութեամբ հանդուցեալ Ներսէս Օհանեանի : Այս շրջանային վարչութեան առաջին գործը եղաւ խտացնել սկաուտական շարքերը, կազմակերպել շրջաններ (գաւառ) եւ կապ հաստատել բոլոր շրջաններուն հետ : Եւ որոշեց նաեւ վերահրատարակել միութեանս պաշտօնաթերթ « Հայ Սկաուտ »ը : Կեդրոնի նախկին պատ. քարտուղար Կարօ Ուշաքլեան անուանուած էր խմբագիր Հայ Սկաուտի եւ քարտուղար Շրջ. Վարչութեան : « Հայ Սկաուտ »ի վերեւումը սթափած էր բոլոր շրջանները : Մութին մէջ մնացած բոլոր հին Հ. Մ. Ը. Մ. ախանները հրապարակ կ'իջնէին : Մեծ էր ոգեւորութիւնը, մեքենան շարժման մէջ դրուած էր, պէտք էր գործել : Եւ, շնորհիւ մեր հին խմբապետերուն ջանքերուն, արդէն իսկ Փարիզ եւ իր արուարձանները կը համրէին 500 սկաուտներ :

Տարեկան մրցահանդէսներն ու դաշտահանդէսները մեծ խանդավառութիւն կը ստեղծէին Հ. Մ. Ը. Մ. ի շուրջ, հետզհետէ համակիրներու թիւը կը շատնար, Փարիզահայ գաղութի բոլոր խաւերուն մէջ Հ. Մ. Ը. Մ. ի ժողովրդականութիւնը օր օրի կ'աւելնար :




ԿԱՐՕ ՈՒՇԱՔԼԵԱՆ

Ներսէս Օհանեան, մեր անմոռանալի հայրիկը, հակառակ իր յառաջացած տարիքին, կ'ուզէր ամէն գնով տարածել ու ժողովրդակա-նացնել Հ. Մ. Ը. Մ. ի վսեմ գործը: Ինք ջերմ հաւատացեալ մըն էր: Յաճախ կ'ըսէր. — « Եթէ մեր ժողովուրդը կ'ուզէ 50 տարիներ յետոյ Փարիզի մայթերու վրայ Հայեր տեսնել, ատիկա պիտի ըլլայ շնորհիւ Հ. Մ. Ը. Մ. ի սկառուական շարքերուն »:

Ինչպէս ըսինք, « Հայ Սկառու » թերթը սկսած էր արդէն հետաքրքրութիւն արթնցնել դաղութներու մէջ, եւ ընդհանուր կեդրոնի մը գոյութիւնը օր ըստ օրէ անհրաժեշտութիւն մը կը դառնար:

Իոյր շրջաններէ առաջարկներ կուգային որ Փարիզը նախաձեռնարկ ըլլայ ընդհանուր պատգամաւորական ժողովի մը նախապատրաստական աշխատանքներուն: Եւ, այսպէս, շնորհիւ Շրջ. վարչութեան եւ « Հայ Սկառու » թերթի ջանքերուն, 1931ին գումարուեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի ընդհ. պատգամաւորական ժողովը՝ Փարիզի մէջ, ու տեւեց երկու ամիս: Կը մասնակցէին Սուրիա, Պալքաններ, Հարաւային Ամերիկա, Հիւսիսային Ամերիկա, Եգիպտոս, եւ Ֆրանսա: Սուրիա եւ Հիւսիսային Ամերիկա զրկած էին պատգամաւորներ իսկ միւս շրջանները նշանակովի ընտրած էին իրենց պատգամաւորները: Ժողովը անցաւ բաւական արդիւնաւոր, մշակեց նոր ծրագիր սկառուներու յատուկ, իսկ կարգ մը անհրաժեշտ բարեփոխութիւններ կատարեց Հ. Մ. Ը. Մ. ի կանոնագրին մէջ, եւ ընտրեց Հ. Մ. Ը. Մ. ի



Փարիզի հայ սկառուներու բանակումի կեանքէն
(Մանչի վրայ, Սթեյլա բլաժ 1928)


Ընդհանուր Կեդրոնական Վարչութիւնը: Հետեւեալներէ. — Տիարք՝ Լ. Կիւմիւշկէրտան՝ (ատենապետ), Լ. Բաշալեան, Տոքթ. Լ. Գրիգորեան, Զ. Խանգատեան, Ն. Օհանեան, Ն. Գարեան եւ Ա. Զաքրեան:

Իսկ այդ վարչութեան կողքին սկաուտական վերին մարմին մը հետեւեալներէ. — Տիարք Վահան Փաստրմաճեան՝ (ատենապետ), Գրիգոր Յակոբեան՝ (ազգային պետ), Օննիկ Եազմաճեան, Գ. Յովհաննէսեան, Տիկին Էլլէն Բիւզանդ, Յով. Պապէսեան, Հ. Աբելեան՝ (չրջանային սկաուտ պետ):

Վերոյիշեալ վարչութիւնը գործեց մօտ մէկ տարի եւ յետոյ ցրուեցաւ: Ու մինչեւ այսօր Հ. Մ. Ը. Մ. ը կը մնայ առանց Ընդհանուր Կեդրոնի:

Սկաուտական վերին մարմնոյ անդամները տարին աշխատանքը մինչեւ 1932ին վերջերը, կազմակերպելով Ֆրանսայի միւս մասնաճիւղերը, կատարելով սկաուտական տարեկան բանակումներ, միասնաբար, Մարսէլի շրջանը, յաջորդ տարին՝ Նիսի շրջանը, եւ այսպէս գաւառն ալ սկսաւ մղում տալ սկաուտական շարժման:

1933ին, կարգ մը նախանձախնդիր Հ. Մ. Ը. Մ. ականներ ուղեցին Ֆրանսայի շրջանային վարչութիւնը վերակազմել: Գումարուեցաւ



Փարիզի սկաուտներու տարեկան բանակումը 1929ին Սթեյլա փրամ Ա. կարգի վրայ մեր ողբացեալ ընկերներէն Գ. Պետրոսեան

պատ՝ ժողով մը եւ ընտրուեցաւ շրջանային վարչութիւն մը նախա-
գահութեամբ Ա. Չաքրեանի :

Վերոյիշեալ վարչութիւնը տարաւ աշխատանքը բաւական ար-
դիւնաւոր կերպով, համերաշխութիւն ստեղծելով Հ. Մ. Ը. Մ. ի բո-
լոր ճիւղերուն միջեւ, բայց հետզհետէ տիրող տնտեսական եւ քաղա-
քական ծանր պայմաններու ներքեւ ստիպուեցաւ հրաժարիլ :

1934ի սկիզբը վերջին ընդհանուր պատգամաւորական ժողովի
ողբացեալ նախագահ Ներսէս Օհանեան եւ ազգային սկաուտ պետ
Գրիգոր Յակոբեան, օրուան սկաուտ վարիչներու եւ նախկին խմբա-
պետներու դիմումներուն ընդ առաջ երթալով Պ. Վաղդէն Անդրէաս-
եանի լիազօրութիւն տուին վերակազմելու Ֆրանսայի շրջանային
վարչութիւնը եւ սկաուտական վերին մարմինը :

Առաջին առիթով վերակազմուեցաւ սկաուտական վերին մար-
մինը հետեւեալ կազմով. — Տիարք՝ Վաղդէն Անդրէասեան՝ (ատե-
նապետ), Օննիկ Եազմաճեան՝ (ատենադպիր), Ժիրայր Մինթան-
ճեան՝ (շրջանային սկաուտ փոխ խմբապետ), Միհրան Քիւրքճեան՝
(գանձապահ), Օննիկ Դարբինեան՝ (խորհրդական) :

Սկաուտական վերին մարմինը իր առաջին դործը նկատեց գանա-
զան շրջաններու հետ յարաբերութեան մտնել: Եւ, իրօք, մինչեւ
Հնդկաստան եւ հեռաւոր Պրազիլիա անոր կոչերը ջերմ արձագանգ
գտան Հ. Մ. Ը. Մ. ախաններու մօտ :

Հ. Մ. Ը. Մ. ի պաշտօնական օրկան «Հայ Սկաուտ»էն դատ հրա-
պարակ հանուեցան «Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտներու բարեկամ»ներու
տոմսեր որոնց հասոյթը կ'ապահովէր ամսաթերթին ծախքերը :

Բացի Փարիզի եւ Ենթաշրջանի կազմակերպութենէն, վերոյիշեալ
մարմինը ազգային սկաուտ պետի դիւսաւորութեամբ առաքելութիւն-
ներ դրկեց նախ Մարսէյլ, ու ապա կեդրոնական Ֆրանսայի Ենթաշր-
ջանի քաղաքները, ուր անոնք մեծ ընդունելութիւն գտնելով խանդա-
վառ եւ մեծ յոյսերով վերադարձան :

Մինչդեռ սկաուտական վերին մարմինը, սկաուտական ընդհա-
նուր դործին եւ Ֆրանսայի շրջանի խումբերուն վերակազմութեան
մղում կուտար, ազգային պետը, Օհանեան եւ Պ. Գառնիկ Յովհան-
նէսեան յաջողեցան Ֆրանսայի շրջանային վարչութեան մը ընտրու-
թեան համար պատգամաւորական ժողով գումարել որմէ ընտրուած
շրջանային վարչութիւնը, Մ. Մալումեանի շուրջ հաւաքուած Փա-
րիզի մասնաճիւղէն չորս հոգի եւս աւելցնելով իր կազմին վրայ, աշ-
խատեցաւ իր հեղինակութիւնը տարածել համայն շրջանին մէջ :

Այդ շրջանային վարչութեան կազմն էր հետեւեալը. — Առաքել

Չաքրեան՝ (ատենապետ), Սահակ Տէր Թովմասեան՝ (փոխ ատենապետ), Վազգէն Անդրէասեան՝ (ատենադպիր), Փափազեան՝ (փոխ ատենադպիր), Խուարիկեան՝ (գանձապահ), եւ անդամներ Արէլեան, Մալուճեան, Քիւրքճեան, Էլմայեան, Ասատուրեան, Սարաֆեան :

Այս շրջանային վարչութիւնը շատ մը ծրագիրներ մշակեց, բայց դժբախտաբար գործադրել չյաջողեցաւ :

Այս շրջանին, ուրեմն, սկստուտական գործը աննախանձելի վիճակի մէջ էր, Փարիզի մարզական ճիւղը նոր վերակազմուած էր եւ կը զբաղէր միմիայն Ֆութպոլով :

Մարտէյլի մէջ սկստուտութիւնը կը սլալար միայն, թէեւ Ֆութպոլը միշտ գործօն վիճակ ունէր, իսկ Թուլոնի մէջ կազմուած նոր վարչութիւնը երկար կեանք չունեցաւ, բայց անոնց միջոցաւ էր որ տեղի ունեցաւ 1935ի սկստուտական տարեկան բանակումը Քարքերանի մէջ :


Նիսի եւ կեդրոնական Ֆրանսայի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղերը քայքայուած էին, բայց 1937ին Վիէնի մէջ կազմուեցաւ սկստուտ խումբ մը եւ Լիոնի մէջ կը գործեն Ֆութպոլի խումբեր :

Տնտեսական տագնապը, անգործութիւնը եւ մեծ մասամբ անտարբերութիւնը յուսահատական վիճակի մատնած էին Հ. Մ. Ը. Մ. ի եւ առհասարակ ազգային ամէն գործունէութիւն :

Հակառակ այս բոլոր դժուարութեանց, սկստուտական ճիւղը ի գին յամառ ջանքերու, կը մնայ կանգուն եւ այսօր ալ ամէն կողմ Հ. Մ. Ը. Մ. ի գայլիկները, սկստուտներն ու կայտերը իրենց սիրուն տարազներով կը շարունակեն կատարելու արշաւներ, բանակումներ եւ հանդէսներ :

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՃԻՒՂԸ.— Ինչպէս ըսուեցաւ, 1922ին Իզմիրի աղետէն վերջ յաջորդաբար Ֆրանսա հասան Հ. Մ. Ը. Մ. ի վարիչները եւ սկսան անմիջապէս գործի ձեռնարկել, Փարիզն էր որ կը սկսէր Ֆութպոլի եւ աթլէթիզմի առաջին նշանը տալ : 1923ին կազմակերպուեցան առաջին ախոյեանական մրցումները եւ յաջորդաբար շարունակուեցան ամէն տարի, մինչեւ 1924 : Մարտէյլ կը կազմակերպէր, 1925ին, իր ախոյեանական մրցումները եւ 1926 — 1927 եւ 1928ին Փարիզ կ'ուղղարկէր իր լաւագոյն մարզիկները, ապահովելով այս երեք տարուան մէջ Ֆրանսահայ մասնաճիւղային ախոյեանութիւնը : 1926ին կը տանէր Չախախիչ յաղթանակ մը՝ ապահովելով 7 առաջին, 3 երկրորդ, եւ 3 երրորդ եւ չահելով Պ. Ճէվահիրճեանի նուիրած բաժակը իբրեւ ախոյեան Ֆրանսայի շրջանին :

1928էն վերջ Շրջ. Վարչութիւնը Պ. Մալուճեանի կը յանձնէր



1938 Յունիս 19ին Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ, նահատակ եւ վախճանած հայ մարզիկներու յիշատակին կատարուած հոգեհանգիստէ մը վերջ առնուած խմբանկար :



Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտական առաջին խումբը (1924) երեցներէ կազմուած

աթլէթիկ եւ Ֆութպոլի կազմակերպութեան գործը: 1929ին կը կազմակերպուէին երկու աթլէթիկ մրցումներ: Առաջինը՝ Փարիզահայ, իսկ երկրորդը՝ Ֆրանսահայ, որոնք կ'անցնին շատ յաջող եւ Փարիզի բոլոր ախոյենական մրցումներէն ամէնէն խանդավառը: 1930 եւ 1931ին եւս կազմակերպուած են ախոյենական մրցումներ, բայց չեն ունեցած նոյն յաջողութիւնը, իսկ ատկէ վերջ ցարդ չեն կազմակերպուած ախոյենական մրցումներ:

Գալով Ֆութպոլին, Փարիզը եւ Մարսէյը եղած են այս շրջանին լաւագոյն խումբերը:

Փարիզ ունեցած է պատուոյ դասակարգի համահաւասար խումբ մը, որ տեւած է մինչեւ 1927, որմէ վերջ խաղացողներու եւ վարիչներու միջեւ անհամաձայնութիւն ծագելով, խումբը բաժնուած է, եւ մէջտեղ եկած են անհատական խումբեր, Տորք, F. C. Armenien, եւայլն:

1928ին, Ֆութպոլի գործը յանձնուեցաւ Մ. Մալումեանի որ կըրցաւ համաձայնութիւն գոյացնել բոլորին միջեւ: Նմանապէս Ֆրանսական համադաշնակցութենէն արտօնութիւն ձեռք բերուեցաւ, որ Փարիզի մէջ միակ հայ կազմակերպութիւնը պիտի մնայ Հ. Մ. Ը. Մ. Ը:

Անմիջապէս ձեռնարկուեցաւ միջմասնաճիւղերու մրցումներուն, որ յառաջ բերին մեծ խանդավառութիւն: Առաջին մրցումները տեղի ունեցան Յ մասնաճիւղերու միջեւ, եւ ԻԹԱԼԻ շահեցաւ ախոյեաններու բաժակը:

Երկրորդ տարին ՍԱՐՍԷԼն էր որ կը շահէր ախոյենական բաժակը:

1930ին «Ապագայ» թերթը կազմակերպեց Հ. Մ. Ը. Մ. Ի հետ միասին Ֆրանսահայ – Ֆութպոլի բաժակի մրցում մը, որուն բոլոր ծախսերը ստանձնեց, եւ յաղթականին նուիրեց արժէքաւոր բաժակ մը, իսկ խաղացողներուն սիրուն նուէրներ: Կը մասնակցէին Հ. Մ. Ը. Մ. Փարիզ, Հ. Մ. Ը. Մ. Մարսէյ, Հ. Մ. Ը. Մ. Վիէն եւ Տորքի խումբը. բաժակը շահեցաւ Փարիզի Հ. Մ. Ը. Մ. Ի խումբը:

1931ին կրկին կազմակերպուեցան միջմասնաճիւղերու մրցումներ, որոնք անցան շատ յաջող եւ խանդավառ:

Երեք տարուան գործունէութենէ մը վերջ Ֆութպոլի խումբերը կազմալուծուեցան: Աթլէթիզմը տեւեց մինչեւ 1935:

1935ին գումարեցաւ ընդհ. ժողով, որուն մասնակցեցան Ֆութպոլիստները եւ մարզիկները, եւ գործի վերակազմութիւնը կրկին յանձնուեցաւ Մ. Մալումեանի, որ 1936ի գարնան կազմակերպեց 7

խումբեր, որոնք կատարեցին միջմասնաճիւղային մրցումներ, անոնք տեւեցին 3 ամիս. վերջին մրցման Պուա Քոլոմպ շահեցաւ Մալուժ — եանի կողմէ նուիրուած բաժակը: Այսպէս, նոյն թուականէն սկսած կանոնաւորապէս կը կատարուին մրցումներ, ամէն կիրակի, օտար եւ Ֆրանսական խումբերու միջեւ: Այսօր Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի եւ շրջանին մէջ կան 5 Փութպոլի խումբեր:

Իսկ աթլէթիկ ներկայիս գոյութիւն չունի, որովհետեւ քաղաքական հանգամանքները եւ անդործութիւնը պատճառ դարձան որ այս ճիւղին հետեւողները դադրեցնեն իրենց փորձերը՝ նիւթականի պահասին համար:

1935 — 1936 տարեշրջանին որոշուած էր Հայաստան ուղարկել Փարիզի Հ. Մ. Բ. Մ. ի: Ամէն պատրաստութիւն տեսնուած էր: Խումբը ճամբայ պիտի ելլէր, երբ մեր լաւագոյն խաղացողներէն երկու մարդիկ ծանրապէս վիրաւորուեցան. մինչեւ որ նոր հրաման անուեցաւ, հոկտեմբեր ամիսը վրայ հասաւ, Հայաստանի ձմեռը սկսաւ եւ խումբին մեկնումը յետաձգուեցաւ:

Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի մասնաճիւղը մօտ 10.000 Փր. արժողութեամբ մարդական գոյքեր ուղղարկեց Հայաստանի իր եղբայր մարդիկներուն, որոնք գնուած էին իբրեւ նուէր տարուելու համար:

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ. — Ներկայ հատորին մէջ, կ'արժէ տալ քանի մը համառօտ տեղեկութիւն Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի ենթաշրջանի սկսուտական գործունէութեանց մասին: Աւելորդ չպիտի ըլլայ նաեւ յիշել ենթաշրջանի ամենափայլուն օրերը 1929 — 31, գրեթէ մինչեւ 1932, երբ հին ղեկավարներ, շարժումին փարած, թափկուտային անոր դնացքին: Գործունէութիւն մը աչքառու, եւ հիացման արժանի: Սակայն կարելի չեղաւ շարունակել այդ գեղեցիկ գործը, երբ հետզհետէ ղեկավարները անհատական եւ ընտանեկան ծանր հոգերով բռնաւորուած կը հեռանային գործօն շարքերէն:

Ահաւասիկ հակիրճ ծանօթութիւններ խումբերու ներկայ վիճակին մասին. —

Ալֆորվիլ. — Ալֆորվիլի սկսուտական խումբը, Փարիզի ենթաշրջանի ամենահին խումբերէն մին, կարողացած է տեւականօրէն իր գոյութիւնը եւ գործունէութիւնը պահել տարիներու ընթացքին, շնորհիւ տեղւոյն համախմբուած հայութեան: Տեղւոյն եկեղեցիին հոգաբարձութիւնը տարիներէ ի վեր տրամադրած է եկեղեցւոյ կից սրահ մը որ խումբին հաւաքատեղի կը ծառայէ: Ունի 13 սկսուտ եւ 18 քայլիկ:

Փարիզ.— Փարիզի խումբը, որուն սկաուտները կը բաղկանան զանազան թաղամասերէ եւ մօտակայ արուարձաններէ, ժրաջան գործունէութիւն մը ունի՝ հակառակ տեղական պայմաններու անյարմարութեան եւ սեփական հաւաքատեղիի չգոյութեան: Ունի 20 սկաուտ եւ 9 գայլիկ:

Փարիզի կայտեր.— Կայտերու խումբին ցրումէն բաւական վերջ, անհրաժեշտ նկատուեցաւ անոր վերակազմութիւնը, նպատակ ունենալով պատրաստել ազագայ դաստիարակչութիւններ գայլիկներու ղեկավարութեան համար: Կայտերու խումբը վերակազմուեցաւ մօտ մէկուկէս տարի առաջ եւ կը կառավարուի իր սեփական ոյժերով: Խումբը ունի 6 կայտ:

Շաւիլ.— Շաւիլի խումբը, պատասխանատուի չգոյութեան պատճառաւ, կորսնցուցած է իր նախկին կազմը եւ վարչականօրէն ու գործնականօրէն կապուած է Փարիզի խումբին: Ունի 4 սկաուտ եւ 2 գայլիկ:

Պուա - Քոլոնպ.— Պատասխանատուի չգոյութեան եւ նիւթական պայմաններու աննպաստ ըլլալուն պատճառաւ, խումբը իր կազմէն մաս մը կորսնցուց, չկարողանալով մասնակցիլ Փարիզի խումբին արշաւներուն: Խումբը գործնականօրէն կապուած է Փարիզի խումբին: Ունի 3 սկաուտ եւ 4 գայլիկ:



ՀԱՅԿԱԶՆ ԱՐԵԼԵԱՆ

Վիթրի - Շուազի. — Վերոյիշեալ պատճառներով խումբը կապ -
ուած է Ալֆորվիլի խումբին: Խումբին հաւաքատեղին է տեղւոյն
դպրոցին սրահը: Ունի 4 սկաուտ եւ 6 գայլիկ :

Ռէնսի - Վիլմոմպլը. — Միեւնոյն պատճառներով, խումբը կապ -
ուած է Փարիզի հոյլին: Ունի 1 սկաուտ եւ 4 գայլիկ :

Գործունէութիւն. — Փարիզի ենթաշրջանը ունի 45 սկաուտ, 43
գայլիկ, 6 կայտ եւ 7 պատասխանատու խմբապետ եւ խմբապետուհի:
Այս վերջին երեք տարիներու ընթացքին ան կազմակերպեց 4 հանդէս -
ներ, սարքեց 5 ծնողական թէյասեղան, 1 հացկերոյթ: Կատարեց 171
արշաւներ, 9 աստիճանաւորական արշաւներ, 6 ուսումնասիրական
թանգարաններու այցելութիւններ, տօնական օրերու 8 բանակում -
ներ, եւ 4 տարեկան արձակուրդ բանակումներ: Ա. 1935, օգոստոս,
Carqueiranne, Բ. 1936 Նիս, Գ. 1937 St. Jorioz, Դ. 1938 Նիս, բոլորը
օգոստոս ամիսները, շրջանի եւ փոխ շրջանի պետերու պատասխանա -
տու հսկողութեան ներքեւ: 1937ի Սէն - Ժօրիօզի բանակումին սկա -
ուտները ժընեւ այցելեցին, իսկ 1938 Նիսի բանակումին՝ Քորսիքայ
կղզին :



ՎԱԶԳԻՆ ԱՆԻՐԷԱՍԵԱՆ

Ֆրանսայի շրջանի սկաուտ պետ

20 պաշտօններու եւ 14 աստիճաններու բարձրացում :

Թէպէտեւ ենթաշրջանիս կազմը մեծ չէ, իր թուով, եւ շատ համեստ իր գործունէութեամբ, բայց ան կարողացաւ որոշ հետաքրքրութիւն մը ստեղծել ամէն տեղ ուր այցելեց կամ բանակեցաւ, ըլլայ իր կարգապահական եւ սկստական ոգիով, ըլլայ նաեւ սկստական կազմակերպչական գետնի վրայ, ոչ թէ միայն մեր ազգային շրջանակներու մէջ, այլեւ օտար միութիւններու եւ մարմիններու առջեւ պահելով միշտ բարձր Հ. Մ. Ը. Մ. ի բարոյական արժէքը: Հոն կը տիրէ կարգապահական ոգին, ու փոխադարձ օգնութեան եւ յարգանքի բարձր գաղափարը: Ու հակառակ իր նուազ թուին, ան կը ճգնի, մեծ զոհողութիւններով, պահել գոյութիւնը, որ իրեն փոխանցուեցաւ՝ նախորդներէն:

ՄԱՐՍԻՅԼ

Հ. Մ. Ը. Մ. ի Մարտէյլի մասնաճիւղը հիմնուած է 1924ին, Վազգէն Անդրէասեանի ջանքերով :

Մասնաճիւղին հիմնադրութեան առաջին օրէն իսկ միութեան շուրջ ստեղծուած էր մեծ խանդավառութիւն մը, Հ. Մ. Ը. Մ. ի դրօշին տակ ամփոփելով Մարտէյլի ամբողջ երիտասարդութիւնն ու պատանեկութիւնը: Ողբերգութիւնը մեծ էր նաեւ միութեան սեմէն դուրս, եւ արդէն ստեղծուած էր համակիրներու լայն շրջանակ մը, որ չէր զլանար իր բարոյական եւ նիւթական աջակցութիւնը :

Ծնորհիւ միութեան եռանդուն աշխատակիցներուն՝ Վ. Անդրէասեանի, Մ. Մալումեանի եւ Մ. Փափազեանի, սկստական կազմը, Ֆութպօլն ու աթլէթիզմը համերաշխ կ'ընթանային :

Հետզհետէ Հ. Մ. Ը. Մ. ի պաշտօնական հիմերու վրայ դնելու համար, 1925ին ճանչցուեցաւ կառավարութենէն, յետոյ Ֆութպօլի, աթլէթիզմի, լողալու, հեծանիւի եւ սօքսի Ֆէտէրասիօններէն: Այս բոլոր մարզերուն մէջ մասնաճիւղը ունեցած է խումբեր՝ որոնք առաջին տարին ունեցան բարեկամական մրցումներ օտար խումբերու հետ :

Մարտէյլի հայ դաղութը տեսնելով Հ. Մ. Ը. Մ. ի գործունէութիւնը, աւելի մօտէն հետաքրքրուեցաւ եւ 1925ին կազմուեցաւ պատուոյ վարչութիւն մը հետեւեալներէ՝ Պ. Պ. Յ. Սահաթեան, Տօքթ. Քէչեան, Ս. Երէցեան, Մ. Տէրտէրեան, Հ. Գուլումեան, Վ. Սահաթեան եւ Մ. Մալումեան թէքնիք վարիչ: Այս վարչութիւնը տարաւ աշխատանքը արդիւնաւոր կերպով մինչեւ 1928: Մ. Մալումեան

այս երեք տարուան ընթացքին բերաւ իր աշխատանքի մեծ բաժինը, կազմակերպելով Ֆութպոլի խումբերը, աթլէթիզմի հեծելանիւնի եւն. . :

Առաջին օրերուն օտար խումբերը կարեւորութիւն չէին ընծայեր Հ. Մ. Ը. Մ. -ի, բայց հետզհետէ ան տարաւ շատ մը յաղթանակներ բոլոր մարզերուն մէջ :

Մասնաճիւղը ունեցած է, այս շրջաններուն, մինչեւ 300 անդամներ, Ֆութպոլի 8 խումբեր, մարզիկներ, հեծելանաւորներ, լուսնորդներ եւայլն :

Կազմակերպած է միջազգային մրցահանդէսներ՝ որոնց մէջ շահած է 4 առաջնութիւններ, 4 երկրորդ եւ 3 երրորդ մրցանակներ :

1926ին ունեցանք մեր սեփական դաշտը «Parc des Sports» ուրտեղ առաջին անգամ ըլլալով, Մ. Մալուճեանի նախաձեռնութեամբ, կազմակերպուեցան միջազգային ախոյեանական մրցումներ, որոնց մասնակցեցան Սպանիացիներ, Յոյներ, Պելճիքացիներ, Իտալացիներ, Զուիցերիացիներ եւ Հայեր : Հ. Մ. Ը. Մ. -ը ջախջախիչ յաղթութիւն տարաւ բոլոր մրցումներուն մէջ, ապահովելով 6 առաջնութիւն, 3 երկրորդ եւ 1 երրորդ, եւ յայտարարուեցաւ champion Etranger du Littoral :

Մարդական եւ Ֆութպոլի շարժումը բաւական յառաջ դացած էր, բայց դժբախտաբար սկառուտիզմը մնաց շատ սահմանափակ պայմաններու տակ : Ասոր գլխաւոր պատճառը կարող վարիչի մը պակասն էր, յետոյ նիւթական պայմանները թոյլատու չեն եղած սկառուտական շարժումը տարածելու համար :

Մարտէսը Ֆութպոլի սիրահարներու կեդրոն մը ըլլալուն, գրեթէ բոլոր ազգերն ալ ամէնէն շատ Ֆութպոլի ուժ տուած են, եւ այս պատճառաւ ներկայիս մարդական շարժում գրեթէ չկայ, սկառուտիզմը՝ հազիւ քանի մը խմբակ, իսկ կ'արժէ որ Ֆութպոլի պատմականը ընենք :

Մասնաճիւղս կը մասնակցի, 1925էն ի վեր, ախոյեանական մրցումներուն (championnat) : Ըստ Fédérationի օրէնքին 4 դասակարգ գոյութիւն ունի, Ա. Բ. Գ. Դ. . : Ո եւ է խումբ որ կ'արձանագրուի լիկին որչափ ալ զօրաւոր ըլլայ, ստիպուած է Դ. դասակարգի խումբերուն հետ կատարել իր պաշտօնական մրցումները : Ուրեմն, Հ. Մ. Ը. Մ. ալ սկսած է Դ. դասակարգի խումբերուն հետ մրցում կատարելով :

Երկու տարի յետոյ, Հ. Մ. Ը. Մ. -ը կ'անցնէր Գ. դասակարգի, ու հետզհետէ շնորհիւ իր տարած բազմաթիւ յաղթանակներուն, ներկայիս Հ. Մ. Ը. Մ. -ը կը պատկանի պատուոյ դասակարգին (Division



Փարիզի սկաուտները նախկին հայ կամաւորներու հետ
Յաղթական կամարին առջեւ (1936)



Փարիզի սկաուտական խումբ, վարիչ՝ Աշոտ Սերբանեան



: Փարիզի ֆուտբոլի խումբը 1929ին



Փարիզի գալիկներու եւ կայտերու խումբը
Խմբապետուհի՝ Անահիտ Սերճանեան

d'Honneur) : Մինչդեռ Հ. Մ. Ը. Մ. ի հետ սկսած շատ մը օտար եւ նոյնիսկ Քրանսական խումբերու անունները շատոնց ջնջուած են Քրանսական դաշնակցութեան ցանկէն :

Անցեալ եղանակին դաւառի 150 խումբերու բաժակի մրցումնէ — րուն Հ. Մ. Ը. Մ. ը կարողացաւ հասնիլ մինչեւ նախավերջին շրջանը (Demi - Finale) ուր պարտուեցաւ պղտիկ անուշադրութեամբ մը :

Մասնաճիւղս ունի ներկայիս ութ Փութպոլի խումբեր, միւս ստորադաս խումբերն ալ տարիներու ընթացքին ունեցած են աւելի կամ նուազ յաջողութիւններ : Լիայոյս ենք որ մեր նորահաս սերունդը մօտաւոր ապագայի մէջ պիտի դայ գրաւել հիներուն տեղը, միութեանս նորանոր յաղթանակներ ապահովելու համար :

Հ. Մ. Ը. Մ. ՄԱՐՍԷՅԷ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱԻԱՅԻՆ ՖՐԱՆՍԱ

ԼԻՈՆ. — Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղը հիմնուած է 1925ին Յարութիւն Բէքմէդեանի ջանքերով, Յարութիւնն է որ առաջին անգամ կազմած է սկաուտական խումբ մը : Ունեցած է 80 անդամներ՝ որոնց մեծ մասը Փութպոլիստներ եւ մարզիկներ եղած են :

ՎԻԷՆ. — Հ. Մ. Ը. Մ. ի Վիէնի մասնաճիւղը հիմնուած է 1926ին Մեսրոպ Դանիէլեանի ջանքերով : Վիէնը եղած է առաւելապէս Փութպոլի մասնաճիւղ մը : Կը մասնակցի F. F. F. A. ին ախոյենական մրցումներուն, եւ գրեթէ միշտ յաղթական եղած է : 1931ին ունեցած են սկաուտական խումբ մը :

ԿՐԸՆՈՊԼԸ. — Հիմնուած է 1927ին, եղած է առաւելապէս Փութպոլիստներու խումբ մը եւ ներկայիս գրեթէ գործունէութիւն չունին :

ՏԷՍԻՆ. — Այս մասնաճիւղը եւս հիմնուած է Մեսրոպ Դանիէլեանի ջանքերով : Ունեցած է սկաուտական խումբ մը եւ բաւական գործունէութիւն :

ՎԱԼԱՆՍ. — Հիմնուած է 1925ին Գուլէլիի որբանոցի սկաուտներէն Կօշկակարեանի ջանքերով, ունեցած են Փութպոլի խումբ մինչեւ 50 անդամներ, եւ սկաուտական խումբ մը :

1925 — 26 շրջանին իր Փութպոլի խումբը Ֆէտէրասիոնի անդամակցելով իրաւունք ստացաւ մասնակցելու Գ. շրջանային Ախոյենական մրցումներուն, ուր կարողացաւ հասնիլ մինչեւ տրմի ֆինալ :

1926ի երկրորդ եռամսեային խումբը քայքայուած վիճակ մը ցոյց կուտար : Երկու Հ. Մ. Ը. Մ. ի հին անդամներ, որ մասնակցած են Պոլսոյ եւ Սոֆիայի մասնաճիւղերուն, անմիջապէս թողլով Փրան — սական խումբերը ձեռնարկեցին վերակազմել քայքայուած խումբը եւ Օդոստոսին Հ. Մ. Ը. Մ. ի անունով հրապարակ իջաւ, աւելի ստուար եւ կամքի տէր երիտասարդներէ :

1926 — 27ին Հ. Մ. Ը. Մ. ը ունէր երկու խումբ : Առաջինը՝ սոյն շրջանի Գ. դասակարգի ախոյենական մրցումներուն մասնակցեցաւ աւելի ուժեղ կազմով, եւ տարաւ փայլուն յաղթանակներ որ մինչեւ տրմի ֆինալ հասաւ :

1927 — 28ի շրջանին Հ. Մ. Ը. Մ. ը մասնակցեցաւ Բ. եւ Գ. դասակարգի ախոյենական մրցումներու : Ա. խումբը մինչեւ վերջ շարունակեց, իսկ Բ. ը հաղիւ քանի մը բարեկամական մրցում ունեցած քայքայուեցաւ :

1926ին Հ. Մ. Ը. Մ. ի նորընտիր վարչութիւնը իր առաջին դործը ըրաւ եղանակին համեմատ մարզիկներուն դործ հայթայթել եւ այդ իսկ պատճառով կազմակերպեց երկու հեծելանիւի մրցում : Ա. ը 36 քիլոմետր ուր Ա. հանդիսացաւ Պ. Յ. Գապայեան, տեւողութիւն ճիշդ 1 ժամէն : Բ. ը 58 քիլոմետր, առաջին հանդիսացաւ Պ. Հայկազ Յովհաննէսեան եւ Բ. ը Պ. Յ. Գապայեան, ժամանակ 1 ժամ 38 վայրկեան : Ա. մրցումը Հ. Մ. Ը. Մ. ի անդամներուն յատուկ էր, իսկ Բ. ը Վալանսի եւ շրջականերու հայ մարզիկներուն :

1927 շրջանին վարչութիւնը կազմակերպեց նոր մրցում մը փոքրերու եւ մեծերու : Ա. ը շահեցաւ Պ. Հայկազ Յովհաննէսեան 1.33 ժամէն մեծերէն, իսկ փոքրերէն, Պ. Հայեազ Պարսամեան, ժամանակ ճիշդ 2 ժամէն : Հեռաւորութիւն 56 քիլոմետր :

Սկաուտական առաջին շարժումը սկսաւ 1927ի սկիզբը, բայց ձեռնարկը խանգարուեցաւ, տիրող դործադրկութեան պատճառաւ : Բ. անգամ կրկին նոյն նպատակաւ Պ. Պայեանի ջանքերով 1928 մայիս 20ին կազմուեցաւ սկաուտական խումբի կորիզ մը :

Վալանսի մէջ հաստատուած էր Պ. Ս. Մանտրոյեան, ընտիր մարզիկ մը որու մասին Փրանսերէն թերթերը համակրանքով խօսած են միշտ :

Իր առաջին յաջողութիւնը եղած է 1924ին, Հ. Մ. Ը. Մ. ի Մարսէլի մասնաճիւղի կազմակերպած 80 քիլոմետրի հեծելանիւի մրցումը շահելով : 1925ի Փարիզի Հ. Մ. Ը. Մ. ի Փրանսահայ ընդհանուր մրցահանդէսին կազմակերպուած հեծելանիւի մրցումին մէջ առաջին հանդիսացաւ : Յաջորդ տարիներուն ալ տասնեակ մը տեղական հեծելանիւի մրցումներուն մէջ առաջնութիւնը խլած է :

Վալանսի բոլոր խումբերը 1929ին միանալով կազմած են կեդրոնական Ֆրանսայի շրջանային պատգամ . ժողով մը եւ շրջանային վարչութիւն մը կեդրոն ունենալով Լիօնը, սակայն դժբախտաբար երկար չէ տեւած :

ՆԻՍ .— Հ . Մ . Ը . Մ . ի Նիսի մասնաճիւղը հիմնուած է Լեւոն Գա-
յանճեանի եւ Իբրանոսեանի (Մերուկ) ջանքերով, Ունեցած է բաւա-
կան բեղմնաւոր գործունէութիւն, Փութպոլի խումբ: Իսկ մեր Մե-
րուկը ինք է որ կազմած է սկաուտական խումբը եւ ամէն կիրակի
դանօնք առաջնորդած է արշաւներու :

×

Ֆրանսայի կարգ մը գաւառներու մէջ կազմուած են շատ մը մաս-
նաճիւղեր՝ որոնք դժբախտաբար երկար կեանք չեն ունեցած եւ որոնց
մասին տեղեկութիւններ չունինք :

Ունեցած ենք Տրակինեանի մասնաճիւղ մը որ միայն Փութպոլով
դբաղած է : Նոյնպէս Սէն Շամօն, Սէնթ Էթիէն, եւն . :



Ալֆորվիլի սկաուտական խումբ, վարիչ՝ Սարգիս Գարասալմասեան

ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ մէջ Հայկ. Մարմ. Միութիւններ կամ Ֆութպոլի որ եւ է խումբ գոյութիւն չունի դժբախտաբար: Քիչ անդամներ կը պատահի, այն ալ պաշտօնական հանդէսներու առթիւ, որ Մուրատ — Ռափայէլեան վարժարանի աշակերտները հայկական անունով դուրս դան եւ մասնակցին տեղական մարզական մրցումներուն՝ առաջնութիւններ շահելով զանազան կէտերու մէջ: Այսպէս, յիշատակութեան արժանի է ողիմպիականի մը մասնակցելով մերիններուն գտած յաջողութիւնը, զոր ստորեւ կուտամ քաղելով «Բազմավէպ»էն.

Այս տարի Պալիլայի (պատանիներու մարզական պետական ընկերակցութեան) վարչութիւնը ողիմպիական մը կազմակերպեց Վենե — տիկի միջնակարգ եւ միւս դպրոցներու աշակերտներու համար, որ տեղի ունեցաւ Մայիս 16 — 17 օրերուն քաղաքիս մարզադաշտին մէջ: Մուրատ — Ռափայէլեան վարժարանն ալ մասնակցեցաւ այս ողիմպիականին երեք խումբերով (ամէն խումբ կազմուած էր 18 հոգիէ): Մրցումները կը կայանային հաւաքական, այսինքն իւրաքանչիւր խումբէ կատարուած, եւ անհատական մարզական փորձերու մէջ, առաջին հանդիսացող երեք դպրոցներուն պիտի վիճակուէին երեք գըլխաւոր վարժատրութիւններ, իսկ խումբերուն ալ առանձին մրցանակներ:

Մուրատ Ռափայէլեան վարժարանը առաջին հանդիսացաւ միջնակարգ դպրոցներու մէջ եւ արժանացաւ ոսկիէ շքանշանին: Իսկ երեք խումբերն ալ ստացան առաջին մրցանակները, որ է մէկ մէկ դափնեպսակ, հաւաքական մարզանքին մէջ ցոյց տուած յաջողութեանց հա-



Պուա — Բոլոնայի սկաուտական խումբը

մար : Ընդհանրական մարզափորձերուն մէջ ալ վարժարանիս աչա – կերտներէն շատեր բարձր մրցանիշներ շահեցան : Պ . Պ . Ղ . Աճէմեան եւ Ա . Սըզըեան գունտ նետելու մէջ առաջին ելան , իսկ Պ . Արսէն Ի – փէքճեան նիզակ նետելուն մէջ : Բարձրութիւն ցատկելուն մէջ Պ . Յովհաննէս Երամեան առաջին հանդիսացաւ , իսկ Պ . Վ . Չըռոզեան երկարութիւն ցատկելուն մէջ երրորդ . խառն ոստումին մէջ առաջին հանդիսացաւ Պ . Պետրոս Թազիճեան , իսկ ձողով ցատկելուն մէջ Պ : Ն . Ոսկեան . 80 մեդրի վազքին մէջ բարձր մրցանիշներ առին Պ . Պ . Յակոբ Գաղանճեան , Վ . Սրապեան եւ Ա . Կիւլէսէրեան :

Այսպէս Մուրատ – Ռաիայէլեան վարժարանը օտար երկրի մէջ եւ տեղական բազմաթիւ աշակերտութեան մէջ (երեք հազար մարզիկ – ներ ներկայացած էին) իր երեք խումբերով միասին , մինչ ուրիշ դպ – րոցներ եօթն եւ աւելի ալ խումբեր կրցած էին տրամադրել , կրցաւ անոնցմէ խլել առաջնութիւնը թէ ընդհանուրին եւ թէ մասնական խա – շերուն մէջ . նշան է ասիկա այն բարձր կրթութեան՝ նոյնիսկ մարզա – կան մասին մէջ , որ կ'աւանդուի այդ հաստատութեան մէջ եւ միան – դամայն աշակերտներու նախանձայոյդ եռանդին պահելու անաղարտ եւ կանգուն պատիւը ազգային զգացման եւ վարժարանին :

*** Մ . Ռ . վարժարանը պասքէթ – պօլի խումբ մըն ալ ունի , ինչ – պէս նաեւ երկու մակոյկներ որ կը ծառայեն աշակերտներու նաւա – մարզի մէջ հրահանգուելու համար :

*** Տեղւոյս խաւրական Clube Sportivo Veneziano Փութպօլի խում – բին երկու տարի կանոնաւորապէս կը մասնակցէր Պոլսեցի Պ . Յարու – թիւն (Արթաքի) Պասմաճեան , որ ցէնթրի ճկուն եւ դեղեցիկ խաղար – կութեամբ մեծ համակրութիւն շահած է եւ տեղական թերթերը ամէն առթիւ գովասանքով կը խօսին անոր մասին՝ վեր հանելով Փութպօ – լիստի իր յատկութիւնները :

Ինչպէս վերոյիշեալ պարոնը , նոյնպէս ուրիշներ , դանազան քա – ղաքներու մէջ հայկ . խումբերու չզոյութեան պատճառաւ կ'անդա – մակցին օտար մարզական ընկերութիւններու :

Իգնատ .

ԶՈՒԻՑԵՐԻԱ

Գրեթէ մինչեւ « Հայ Դպրոց »-ի (Պընեէն – Ժընեւ) հիմնարկու – թիւնը , Զուիցերիոյ մէջ իսկական ըմբռնումով հայ մարզական կեանք գոյութիւն չէ ունեցած : Եղած են միայն հայ անհատներ , որոնք մաս – նակցած են տեղական մարմնակրթական միութիւններու :

Զուիցերիահայ մարզական կեանքը իսկապէս կը սկսի Պընեէն –

Ժընեւի « Հայ Դպրոց »ի հիմնարկութենէն յետոյ : Այս դպրոցը, որ « Հայոց բարեկամ » գուրգերիացի քաղաքացիներու նախաձեռնութեան արդիւնքն է, 1922 Դեկտեմբեր 1ին փոխադրուած է Զուրիցերիա եւ իր « պիտի տողանք » (Nous maintiendrons) գեղեցիկ նշանաբանով կը ներկայացընէ իր հայրենիքէն վտարուած հայ տղուն սպառնացող ապաղ-գայնացման վտանգին դէմ պայքարի սկզբունքը :

Դպրոցը կը բաղկանար երկու իրարու ամբողջացուցիչ հաստա-տութիւններէ, նոյն կրթական տնօրէնութեան տակ. 1.— Հայ նախա-կրթարան մը, Պընեէնի մէջ : 2.— Հայ Աշակերտական Տուն մը, Ժը-նեւի մէջ (Շանբէլ) :

Զուրիցերիահայ մարդական կեանքը կը սկսի ահա այս դպրոցէն, ուր Փիզիքական դաստիարակութիւնը լուրջ հողածութեան առարկայ դարձած է առօրեայ մարզանքներով, շատ անպամ մէկ քանի օր տեւող արշաւներով, տղոց չափումի, կշռումի եւ բժշկական քննութեան կա-նոնաւոր կիրառումով :

Առաջին անգամ, Պընեէնի « Հայ Դպրոց »ի նախակրթարանի աշա-կերտներէն, դիւղին բժիշկ Տոքթ. Ֆրանքըն (Francken)ի տիկնոջ կող-մէ կազմակերպուեցաւ դայլիկներու խմբակ մը : Նոյն դպրոցի աւելի մեծ աշակերտներով կազմուեցաւ սկաուտական խումբ մը, որուն պե-տը եղաւ յետոյ՝ Շանբէլի շրջանաւարտներէն մէկը՝ Ազատ Սաֆրադ-եան, վկայեալ երկրագործական վարժարանէն : Այս խումբին նշանն է ագեվագը (Kangourou) :


Շանբէլի տղաք սկաուտական խումբ չկազմեցին, բայց իրենց մէ-ջէն ոմանք, թէ՛ մանչերէն եւ թէ՛ աղջիկներէն, քաղաքին (Ժընեւ : Շանբէլ մէկ թաղն է Ժընեւի) սկաուտական խումբերուն անդամակ-ցած են ատեն մը : Ասոր փոխարէն, 1925ին Գէորգ Սէմէրճեանի նա-խաձեռնութեամբ կազմեցին « Հայ Առողջապահիկ Մարզիկներու Մի-ութիւն » մը, միայն մանչերէ բաղկացած, որուն նշանաբանն է « Մա-բուր ապրիմֆ », մաքուր՝ Փիզիքապէս, մաքուր՝ բարոյապէս :

Այս խումբին գործունէութիւնը եղած է 1.— Անհատական մար-զանք, իբր առողջապահական միջոց : 2.— Ոմբական մարզանքներ, ա-մառը առտուան զանգակէն քիչ մը կանուխ ելլելով : 3.— Կազմակեր-պութիւն տարեկան ողիմպիականներու, Աշակերտական Տան պարտէ-զին մէջ :

Կազմուած էր նաեւ Փութպոլի խումբ մը, սակայն Փութպոլ խա-ղացողները աւելի տեղական խումբերու մրցումներուն անհատաբար կ'երթային կը մասնակցէին :



Մարսիլիոյ Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկներու երկսեռ խումբը 1925ին



Հ. Մ. Ը. Մ. ի Մարտիկոյ խումբը 1935ին, բանակումի պահուն



Հ. Մ. Ը. Մ. ի Մարտիկոյ խումբի բանակումի կեանքն

ՊԵԼՃԻՔԱ

Հ. Մ. Ը. Մ. ի Պրիւքսէլի մասնաճիւղը հիմնուեցաւ 1925ին Պ. Պ. Գովանի եւ Գոյունեան եղբայրներու նախաձեռնութեամբ եւ ընդունուեցաւ Union Royale Belge des Sociétés de Football Associationի գիրկը, մասնակցելով անոր պաշտօնական բոլոր մրցումներուն, շարունակ 4 տարի, բայց դժբախտաբար գաղութիս գրեթէ բովանդակ մեծամասնութիւնը, այս բրօքականտի գործին հանդէպ բացարձակ անտարբեր գտնուելու եւ կարողագոյն մարզիկներէն մի քանիներուն պելճիական խումբերու մէջ մտնելուն պատճառաւ, միութիւնս այս տարի խիստ արգասատելի շրջան մը բոլորեց, եւ իր երեք տարուան շարունակական յաղթանակներուն փառքը նսեմացաւ իր այս շրջանի տեւական պարտութիւններէն առաջ :

Եւ եթէ դեռ մինչեւ տարիներ առաջ կ'ապրէր ու կ'ուզէր ապրիլ, ան ալ Մսրեան եւ Չամքէրթէն ընտանիքին նիւթական օգնութեան ու ստորագրեալիս եւ վարչութեան անդամներէն ատենապետ Պ. Պ. Պ. Մուրատեան, մատակարար Մ. Պալճեանի անխոնջ ջանքերուն շնորհիւն է :

Միութիւնս իր հիմնարկութենէն 2 տարի վերջ, միացուց իր Ֆութպոլի ճիւղին, թէնիզի ճիւղ մը, յանձնելով զայն ենթակոմիտէի մը որ թէեւ լաւ եռանդով տոգորուած ի սկզբան, դժբախտաբար չկարողացաւ ի գլուխ հանել իրեն յանձնուած գործը եւ լքեց զայն 2000 Քրանք բացով, առանց նոյնիսկ հաշիւ եւ հրաժարական ներկայացնելու գինք ընտրող վարչութեան :

Վարչութիւնս հակառակ իր կրկնակի դիմումներուն, չկարողացաւ նոր վարչութիւն մը ընտրել եւ ցաւ ի սիրտ լքեց իր կարգին թէնիզի ճիւղը :

Մարզանքը գաղութիս մեծամասնութեան կողմէ, անկարեւոր նկատուած էր եւ անով հետաքրքրուողներու թիւը 30ը չէր անցներ : Այս խիստ ցաւալի վիճակին մէջ չենք գիտեր թէ պիտի կարողանա՞նք շարունակել յառաջիկայ շրջանին, այս խիստ կարեւոր գործը, որ հայութեան անունը եւ կարողութիւնը ճանչցուց, ու բարձրացուց նոյնիսկ Պելճիքայի ամենախոր անկիւններուն մէջ :

Պելճիական մարզական թերթեր շատ գրեցին հայկական խումբին մասին, Պագրճեան (խումբիս պետը) Մաճարեան, Մասեհեան եւ դեռ մի քանի ուրիշներ պանծացուցին հայ անունը Պելճիքացիներուն առաջ :

Անգամ մը, Fédérationին քարտուղարը խօսելով հայ մարզիկներու

մասին կը հարցնէր թէ «ինչ կը պարունակէ հայ երիտասարդին արիւնը, որ այդքան նշանաւոր մարդիկ մը կ'ըլլայ» :

Ցաւալի է, որ այսքան լաւ անցեալ մը ունեցող այս միութիւնը տեղւոյս հայ դադութը իր անտարբերութեամբ թոյլ տուաւ որ ան — յայտանայ :

Քարտուղար Կ. ԳՕՅՈՒՆՃԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱ

Կ. ՊՈԼԻՍ

1922ի ամառնաւերջին, ծանօթ քաղաքական դէպքերու բերումով, Հ. Մ. Ը. Մ. կեդրոնի եւ Պոլսոյ մասնաճիւղերու լուծումը ծանօթ է արդէն ամէնուն : Հակառակ նիւթէս դուրս ըլլալուն, որպէս պատմական փաստ պիտի յիշեցնեմ 2 հոկտեմբեր 1922ին Սիրքէճի, կայարանի պարտէզը դումարուող բացառիկ պատգամ. ժողովը, որմէ թերեւս շատեր անտեղեակ են :

×

Մինչեւ 1923ի աշունը ո՛չ մէկ շարժում, միայն ատկէց վերջն է որ, Օ. Ֆրէնքիանի թելադրութեամբ, Շիշլիցի տղաքներ, ամառը Պոլիս այցելող պուլկարական «Սլավիա»ի մրցումներէն առինքնուած, «Շիշլի» (1) անունով, եւ հազիւ 15 անդամնոց միութիւն մը կը կազմեն : Զմեռը՝ այս ափ մը տղաքը, կը սկսին տկար խումբերու հետ մրցիլ եւ տակաւ ճլտորիլ, եւ ահա սրուի խիստ խանդավառ դէմք մըն ալ — Ալիքսան Մկրտիչեան (Ալէքս) — որ այդ ատենները պոլսահայ թերթերու աշխատակիցն էր, այս տղաքը անձամբ կը քաջալերէ, մինչեւ իսկ այդ տարիքին մրցումի մը ժամանակ պակասած տղու մը տեղ ֆութպոլ խաղալով :

1924ին Շիշլիցիներու անունը կը սկսի մամուլին մէջ, եւ իրապէս,

(1) 1909ին, Հ. Մ. Ը. Մ. Բերա մասնաճիւղէն դժգոհ ֆուքսօլէտ եւ Աթլէթ անդամներու կողմէ «Շիշլի» անունով անցատ միութիւն մը կազմուած է եւ մէկուկէս տարուան փառաւոր գործունէութենէ մը վերջ, Բերա մասնաճիւղին միանալով, կազմուած է նշանաւոր «Բերա - Շիշլի» մասնաճիւղը :

մամուլով հրապարակումը Շիշլի տղոց Փութպուլի մրցումներուն, տեսակ մը գրգիռ կ'ըլլայ միւս թաղերու դպրոցականներուն անպաշտօն կերպով իրարու քով գալու: 1924ի Փութպուլի սէզօնին արդէն մենք կարգաւ կը տեսնենք կազմութիւնը Գատրգիւղ՝ Ունճեան, Սամաթիա՝ Սահակեան, Գում - Գափու՝ Պէզճեան, Մադրիգիւղ՝ Հայ Մարմնամարզական խումբերուն: Այս խումբերը իրարու դէմ մրցե-



Հ. Մ. Ը. Մ. ի վիէնի սկաուտական խումբը 1937



Հ. Մ. Ը. Մ. ի վիէնի խումբը 1937ին

լով, այդ տարի յաղթական կը հանդիսանայ Շիշլին, որը՝ բաւական ուռճացած էր: Այդ տարուան ընթացքին՝ մեր ախոյեանը (Աշոտ Մամիկոնեան), թրքական Փէտէրասիոնի կողմէ կազմակերպուած 10 հազար մեթր հեծելանիւի եւ Սթատիում – Պէնտլէր Բրօս Բօնթրիի մրցումներուն մասնակցելով, այս երկրին համար ապշեցուցիչ առաջնութիւններ կը հաստատէ եւ այս պարագան թուրք մամուլին մէջ ալ օրերով խնդրոյ նիւթ կը դառնայ: Կ'արժէ յիշատակել նաեւ Շիշլիցիներու Փուլթալի մրցումները Յունական Բերա, Իսֆէսթօս եւ Աթլաս խումբերու դէմ եւ Y. M. C. A. ի կազմակերպած թուռնուային մասնակցութիւնը: Մագրիզիւղի մէջ՝ «Փոքր – Սասուն» անուն երեք ամիս կեանք ունեցող խումբ մըն ալ կար, որ այդ դիւղի «ախոյեան» խումբը հանդիսացաւ:

1925ին վերողրեալ խումբերէն դատ, Պոլիսը կ'ունենայ նաեւ Բերայի մէջ՝ Եսայեան եւ Գատրդիւղ՝ «Արաքս» եւ Սկիւտարի Պէրպէրեանը: Այս տարուան ընթացքին միջ – խմբային բաժակի մրցումներ տեղի կ'ունենան:

1926ին, Հայ խումբեր չունենալով զօրաւոր ձեռքեր՝ դիրենք կառավարող, արձանագրելու հաւաքական յաջողութիւն ցոյց չեն կրնար տալ:

1927ին, երիտասարդութիւնը կը բոլորուի Մարմնակրթ. Միութեանց շուրջ: Մասնաւորապէս Շիշլիցիք 200է աւելի անդամ կ'ունենան, մեծամասնութիւնը դպրոցականներ եւ տասնեակ մըն ալ աղջիկներ: Ալէքսի յոգնատանջ ջանքերուն շնորհիւ, «Շիշլի» Միութիւնը, Պոլսոյ կուսակալութենէն վաւերացուելով կը դառնայ «Նոր – Շիշլի»



Հայկ. Ա. և Բ. Ողիմպիականներուն տրուած մրցանակներէն նմոյշ մը

եւ կը փոխադրուի այժմու ընդարձակ հաւաքատեղին, Սթատիստի մէջ: Սկիւտարի մէջ միւս կողմէ՝ Պէրպէրեան, Գուժ — Գափուի՝ Պէզճեան եւ Մազրիպիւղի խումբերը կը լուծուին: Միայն այս վերջինները յետոյ Պէզազեան եւ տարեվերջին Տատեան խումբերը կ'ունենան: Եսայեանցիք խիստ կը տկարանան, տեղի տալով Եիշլիցիներու արադընթաց յառաջդիմութեան: Անցեալ տարուան դպրոցներու ողիմ — պիականները, Պ. Արթօի ջանքերով աչքառու տեղ մը կը գրաւեն, մասնաւորապէս Վիէնկ. Մխիթարեան, Նոր — Դպրոց, Կեդրոնական եւ Եսայեան վարժարաններունը: Այս սղտիկ ողիմպիականները՝ Ալէքսին գրգիռ մը կ'ըլլան՝ կազմակերպելու Պոլսահայ դպրոցականներու Ա. ողիմպիականը, որ իր տեսակին մէջ առաջին եւ արդիւնքի տեսակէտով ալ խիստ յուսադրիչ անցաւ:

Զմեանամուտին Եիշլիցիք եւ մէկ — քանի փոքր խումբեր ունեցան իրենց այլեւս պայմանադրական դարձած ողիմպիականները, աւելորդ է ըսել դեռ շատ հեռու ըլլալով, նշանակելի արդիւնքներ ցոյց տալէ:

Եիշլիցիք դարնան աւելի թափ տալով, անդամադրականին, հետզհետէ ծանր կշռել սկսան: Միւս կողմէ «Եսայեան» անունով ծանօթ Փութպոյլի խումբը՝ արդէն ինքնին ուժ մը չըլլալուն, ինքնաբերաբար եկաւ միանալու Եիշլիցիներուն ուր՝ սիրալիր եւ անխտրական ընդունելութիւն մը գտաւ բոլոր տղոցմէ:

Ալէքսի մահէն մեծ Սրթօ Գայիաքճեան կը կազմակերպէ դպրոցներու մրցահանդէսները, որոնց մէջ, յիշատակութեան արժանի է Վիէննկ. Մխիթարեան վարժարանինը, ըլլայ արդիւնքի թէ կազմակերպութեան տեսակէտով:

Սեպտեմբեր 7ին Եիշլիցիք, Գատրոհիւղի մէջ կազմակերպեցին իրենց Գ. մրցահանդէսը, մասնակցութեամբ 80է աւելի մարդիկներու, Սթատիստի մէջ:

Պոլիս դանուող բոյոր Հիները կողանք այս ողիմպիականին չուրջ բոյորել: Այսպէս դատաւոր եկած էին, Վարադ, Շապոյեան, Ա. Եփրեմ, Լ. Յակոբեան, Օ. Ֆրէնկեան, Ա. Գայիաքճեան, Հ. Թէրդեան եւ Այոտ Մամիկոնեանը: Այդ օրը՝ տեսակ մը Հ. Մ. Ը. Մ. ի մրցահանդէսներու յատուկ տօնի օր մը ապրեցանք: Վեց տարիէ ի վեր, այսքան հետաքրքրութիւն բնաւ ստեղծուած չէր:

1928ի ընդհ. մրցահանդէսին մասնակցեցան 72 մարդիկներ, պատկանելով՝ Մագրոհիւղի Պէզազեան, Տատեան, Սամաթիոյ Սահակեան, Բերայէն Նոր — Եիշլի, Վոսիտրէն՝ Վիշապ եւ Օրթագիւղէն Եանթ խումբերու: Արաքսի մարդիկները ստուար թիւով, անհատապէս եկան մասնակցելու:

Սամաթիոյ Սահակեան խումբն ալ անջատօրէն կատարեց իր լո —

դալու եւ աթլէթիք մրցումները, որոնք ամէն տեսակէտով դովելի նօթ մը կը կազմեն :

Ընդհ. մրցահանդէսէն անմիջապէս վերջ սկսան Փուլթպուլի մըր - ցումները :

Շիշլիցիք, Փուլթպուլի նոր եղանակին համար որոշ ծրագրով հրապարակ իջան : Շիշլի ունէր 63 Փուլթպուլէօն, որոնք երեք կարգի բաժնուած են : Ա. թիմը, այդ տարին շատ ուժով էր, կրնամ ըսել քիչ ժամանակի մէջ կրցան Ֆէնէր եւ Կալաթա Սէրայ խումբերուն հետ չափուիլ եւ շատ պատուաբեր դուրս դալ : Շիշլիցիք շատ մը կարեւոր մրցումներ ըրին : Պուլթիշ-Սօսիէշընի դէմ 3 — 9 կօլով, Քուլէճի դէմ 1 — 3 կօլով յաղթեցին եւ Պուլսոյ ոչ — Ֆէտէրէ խումբերու ախոյեան թաթաւլայի դէմ մրցելով 1 — 1 կօլով հաւասար մնացին : Ամէն շաբթու Բ. եւ Գ. թիմերը եւս մրցումներ կ'ունենային :

« Նոր Շիշլին » ունի 294 անդամ, որոնց 161ը դործօն եւ մնաց — եալը համակիր : Օրըստօրէ աւելի ընդարձակուելու ամէն հաւանակա — նութիւն ունի : Շուէտական եւ ազատ մարզանքները կը վարէ Արթօ Գալիաքճեան : Ունի պասքէթպուլի եւ վօլէյպուլի կանոնաւոր թիմեր, որոնք յաճախ մրցումներ կ'ընէին այժմու ընդարձակ մարզարանին մէջ :

Շիշլիի ներկայ հաւաքատեղին Սթատիօնի դաշտը նայող ընդարձակ սրահէ մը եւ երկու սենեակներէ կը բաղկանայ, մէկը վարչու — թեան եւ միւսը դոյքատեղի է : Վարձք կը վճարուի, ամսական 30 ոսկի. բայց հոս մտնելու համար մօտաւորապէս 700 ոսկի շինու — թեան եւայլ ծախքեր եղած են :

Բերայի մէջ կան «Էսաեան» եւ «Թաքսիմ Սրօն» անունով Փուլթ — պուլի խումբեր : Որպէս ուժ երկուքը միասին բան մը չեն արժեր :

Մադրիդիւղի մէջ կան Պէզաղեան (30 անդամնոց) եւ Տատեան (40 — 50 հոգինոց) խումբերը : Առաջինին արեւը մարը մտնալու վըրայ է, այժմ ջանքեր կ'ըլլան երկուքը միացնելու :

Սամաթիոյ մէջ կայ Սահակեան միութիւնը, մօտաւորապէս 60 անդամնոց : Ասոնք, եթէ պատճառ մը կենայ իրարու քով կուգան եւ անկից վերջ դարձեալ ցրուած վիճակ մը կ'ապրին : Այսպէս, մրցա — հանդէսին եւ թուռնուային լաւ կերպով իրարու մօտեցած էին, այսուհանդերձ, կարող վարիչներ եւ մարզիկներ ունեցող խումբ մըն է :

Գատըզիւղ «Արաքս»ը կայ :

Սկիւտարի մէջ կար՝ «Սկիւտար Իտման Եուրտու» անունով միու — թիւն մը, որուն անդամներուն թիւը 25ը չանցնիր : Այս խումբին վա — րիչն է Ջահենց, որուն երեսէն Սկիւտարի տղաքը ցրուած վիճակ մը

ունէին : Այս խումբը ունէր 10 հատ սկաուտ , որոնք Սկիւտարի թուրք սկաուտներու խումբին ենթակայ խմբակ մըն էին :

Ամբողջացնելու համար պոլսահայ խումբերու անունները պէտք է յիշատակել նաեւ Վոսփօրի «Վիշապ» եւ Օրթադիւղի «Շանթ» խումբերը :

Այժմու պոլսահայ մարդական շարժումին խարխախը պէտք է նկատել «Նոր - Շիշի» միութիւնը , որուն շուրջ բոլորուած են գործէն հասկցող եւ հին վարիչներ :

Դպրոցներու մէջ , մարմնակրթութեան մասնաւոր կարեւորութիւն կը տրուի եւ ըստ կրթական գործավարութեան հրահանգին նախակրթարաններու մէջ պարտաւորիչ է : Նոր - Դպրոց , Էսաեան եւ Վիէննկ . Մխիթարեան վարժարաններու մէջ կը դասախօսէ Արթօ Գալիաքճեանը : Կեդրոնական վարժարանի երբեմնի տնօրէն Պ . Ստ - րունի , պիւտճէն պատճառ բռնելով , չուղեց Արթօին պահանջած ճնշին մէկ յաւելումը վճարել եւ այդ տարին պոլսահայ միակ երկրորդական վարժարանի տղաքը զրկուեցան անձնուէր եւ կարող ուսուցիչէ մը :

Յ . ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Հ . Մ . Ը . Մ . ր՝ Պուլկարահայ դաղութին ազգային ոգևով տոգորուած երիտասարդական ծաւալուն եւ ամենակենսունակ մարդական կազմակերպութիւնն է :

Նախքան Հ . Մ . Ը . Մ . ի հիմնումը Պուլկարիոյ շարք մը հայաչատ վայրերու մէջ եղած են մարդական անջատ միութիւններ ու Հ . Մ . Ը . Մ . ի առանձին մասնաճիւղեր :

Հ . Մ . Ը . Մ . ր իբր կազմակերպուած շրջան փաստօրէն դոյուլթիւն առած է 1924ին Ֆիլիպէի մասնաճիւղի նախաձեռնութեամբ նոյն քաղաքին մէջ հրաւիրուած անդրանիկ պատգամ . Ժողովէն , որուն մասնակցած են Բլովտիվ (Ֆիլիպէ) , Սոֆիա , Վաւնա , Թ . Բաղարճըք , Սթ . Չակօրա :

Նոյն ժողովին մասնակցած է նաեւ այդ շրջանին Բլովտիվի մէջ դոյուլթիւն ունեցող «Շանթ» մարդական միութիւնը , որ իւրացնելով Հ . Մ . Ը . Մ . ի ծրագիրը միացած է անոր մասնաճիւղին :

Վերոյիշեալ պատգամ . Ժողովը կ'ընտրէ շրջ . վարչութիւն Բլովի - տէն՝ ատենապետութեամբը Տօքթ . Թ . Թովմասեանի , կը մշակուի ծրագիր կանոնագիր Շրջ . վարչութեան կողմէ , որ յետագային կ'իւրացուի նոյնութեամբ նաեւ մասնաճիւղերէն եւ կը վաւերացուի պուլկար իշխանութենէն :

1924էն մինչեւ 1934ը՝ Հ. Մ. Ը. Մ. ի Շրջ. վարչութեան վայր կը մնայ Բլովտիվը, որուն կ'ատենապետեն նաեւ Կ. Ղազարոսեան, Յ. Մալխասեան, Ն. Աստուածատուրեան եւ ուրիշներ :

1934 — 35ի շրջանին կը փոխադրուի Սոֆիա, ատենապետութեամբ բժ. Թ. Սեդրակեանի, 1935 — 36ի շրջանին կրկին կը փոխանցուի Բլովտիվ ատենապետութեամբ Կ. Ղազարոսեանի :

Իսկ 1936 յուլիսէն ի վեր 13րդ պատգմ. ժողովը Շրջ. վարչութիւնը ընտրած է Վառնայէն հետեւեալ կազմով՝

Ատենապետ՝ Տօքթ. Պերճ Հաճօլեան

Փ. ատենապետ՝ Արշակ Զազէեան

Ատենադպիր՝ Կարօ Զիվիճեան

Գանձապահ՝ Բարթող Մինասեան

Մարզ. ղեկավար՝ Յովսէփ Երեմեան

14րդ պատգ. ժողովը տեղի ունեցած է Վառնայի մէջ եւ 1937—38ի շրջանի համար վերընտրուած է վերոյիշեալ կազմը :



Հ. Մ. Ը. Մ. ի Պալֆանեան շրջանի պատգմ. ժողովէ մը վերջ Անունները մեզի ծանօթ են՝ նստած ձախէն աջ՝ Թագւոր Թագւորեան, Յ. Ճ. Սիրունի, Կ. Ղազարոսեան: Աջէն ոտքի երկրորդը՝ Սիւսն Պապիկեան:

Պուլկարիոյ շրջանը օրինակելի կանոնաւորութեամբ ամէն տարի ունեցած է իր պատգմ . ժողովը , որուն կը մասնակցին բոլոր մասնաճիւղերը իրենց ձայնի իրաւունքի համեմատութեամբ պատգամաւորներով :

Վերջին տարիներ , այս պատգ . ժողովներու կողքին տեղի կ'ունենայ նաև սկաուտական բաժնի համագումարը , որուն որոշումները ենթակայ են Հ . Մ . Ը . Մ .ի պատգմ . ժողովի եւ կամ Շրջ . վարչութեան վաւերացման :

Առաջին պատգմ . ժողովէն յետոյ Պուլկարիոյ շրջանը կը համրէր 11 մասնաճիւղեր :

Այժմ դոյութիւն ունին միայն 9 մասնաճիւղեր մարզական եւ սկաուտական բաժիններով , հետեւեալ դասաւորումով

Ա . Ալիվէն , այժմ ունի մօտաւորապէս 60 դործօն անդամներ , սկաուտ եւ մարզիկ :

Բ . — Ռուսէ , 80 անդամներով :

Գ . — Թ . Բազարճըք՝ 50 անդամներով :

Դ . — Բլոյտիվ՝ 250 անդամներով :

Ե . — Վառնա՝ 130 անդամներով :

Զ . — Պուրկազ՝ 130 անդամներով :

Է . — Սոֆիա՝ 135 անդամներով :

Ը . — Խասքօլօ՝ 50 անդամներով :

Թ . — Շումէն՝ 50 անդամներով :

Ընդհ . շրջանը կը համրէ իր մէջ , մարզիկ ու սկաուտ , շուրջ 950 դործօն անդամներ :

Դժբախտաբար տարիներ առաջ կազմալուծուած են Սթ . Զակօրայի եւ Պօրիսօվկրատի մասնաճիւղերը , դործօն տարրերու այլ վայրեր փոխադրուած ըլլալնուն պատճառաւ :

Բացի մէկ երկու մասնաճիւղերէ , որոնք իբր հաւաքավայր կ'օգտագործեն ընթերցասրահները , մնացեալ բոլոր մասնաճիւղերն ալ ունին իրենց առանձին ակումբները , բայց գրեթէ ոչ մէկ մասնաճիւղ ունի դժբախտաբար իր սեփական խաղավայրը , որ այնքան կենսական անհրաժեշտութիւն է մարզ . կազմակերպութեանց համար :

Շրջանիս մէջ առանձին ուշադրութեան առարկայ է սկաուտական բաժինը որ կը ղեկավարուի շրջանային դործադիր մարմնէ մը որուն կ'ատենապետէ շրջանին ընդհ . սկաուտական խմբապետ Ներսէս Աստուածատուրեան :

Սկսուտական բաժինը մաս կը կազմէ պուլկարական սկսուտական կազմակերպութեան՝ (Օ. Պ. Մ. Թ.) եւ կը հովանաւորուի իշխանութեանց կողմէ :

Իրաւական տեսակէտէն աւելի ամուր է սկսուտ. բաժնի դիրքը, քան մարդական բաժնի, ի բաց առեալ Բլովտիվի եւ Պուրկազի մասնաճիւղերէ՝ որոնք ուղղակի անդամ են պուլկար մարդական դաշնակցութեան (Պ. Ն. Ս. Ֆ.) իսկ մնացեալ մասնաճիւղերը կ'անդամակցին մարդական դաշնակցութեան անուղղակիօրէն, մաս կազմելով ու առանձին հատուած դառնալով անդամ-պուլկարական ակումբի մը :

Սկսուտական եւ մարդական բաժիններու ընդհ. գործունէութիւնը ներդաշնակելու եւ Հ. Մ. Ը. Մ. ի ուղղութիւնն ու ծրագիրը անխախտ կերպով կարենալ գործադրելու համար մասնաճիւղերու վարչութեանց ձեջ իրենց ներկայացուցիչը կ'ունենայ սկսուտական բաժինը՝ յանձին իր խմբապետին :

Պուլկարիոյ հայ մարդական կեանքը ունի իր պատուաւոր տեղը Հ. Մ. Ը. Մ. ի շնորհիւ :

Շրջանս մինչեւ 1936ը ունեցած է 9 ընդհ. մրցահանդէսներ՝ հետեւեալ վայրերուն ու թուականներուն՝

Ա. — Բլովտիվի մէջ 1926 Օգոստոս 26 — 29ին :

Բ. — Բլովտիվի մէջ 1927 Հոկտեմբեր 2 — 3ին :

Գ. — Բլովտիվ՝ 1928 Հոկտեմբեր 6 — 7ին :

Դ. — Սոֆիա՝ 1929 Օգոստոս 28ին :

Ե. — Բլովտիվ՝ 1930 Սեպտեմբեր 7 — 8ին :

Զ. Բլովտիվ՝ 1931 Սեպտեմբեր 12 — 13ին :

Է. — Բլովտիվ՝ 1932 Սեպտեմբեր 2—3ին :

Ը. — Բլովտիվ՝ 1934 Օգոստոս 26 — 28ին :

Թ. — Վառնա՝ 1936 Օգոստոս 28 — 30ին :

Երդ ողիմպիականէն յետոյ պատգմ. ժողովը նկատի առնելով ամէն տարի թէ՛ սկսուտական բանակում եւ թէ՛ ողիմպիական կազմակերպելու նիւթական դժուարութիւնները որոշեց ողիմպիականներ հազմակերպել երկու տարին անգամ մը, նոյնպէս եւ սկսուտական բանակում, այնպէս որ 1933ին բանակում տեղի ունեցած է Պուրկազի մէջ, 1935ին Սոֆիայի մէջ Օգոստոս 18 28ը Եւրոպիոյ յուշարձանի բացման եւ Հայ Յեղափոխական Ռահվիրայ Գր. Միջայէլեանի մահուան 30ամեակի առիթով, իսկ 1937 Օգոստոս 18 — 30ը Վառնայի մէջ :


Ըստ 14րդ պատգմ. ժողովի որոշման, այս տարի Հ. Մ. Ը. Մ. ի Պալք. շրջանի Ժրդ ողիմպիականը տեղի կ'ունենայ Սոֆիայի մէջ :

Պուլկարահայ իրականութեան մէջ մարդական (Աթլէթիկ) ախոյ-
եանութիւնը տարիներէ ի վեր կը պատկանի բլովտիվի մասնաճիւղին
որ կը կրէ «Վարազդատ Արշակունի բաժակը» :

Պուլկարիսյ մարդական կեանքի պատմութեան մէջ, Հ. Մ. Ը. Մ. ը
ընդհանրապէս, իսկ անոր մարզիկ անդամները մասնաւորապէս փըն -



Պուրկազի Հ. Մ. Ը. Մ. ի կեանքին
Մարզական մրցումներէ վերջ քաշուած խմբանկար մը



Հ. Մ. Ը. Մ. ի վառնայի VI խումբի գայլիկներէն մաս մը, իրենց խմբապետ Օննիկ Էնկիպարեանի
եւ փոխ խմբապետ Մուշեղ Կուտսուգեանի հետ լուսանկարուած

տուուած լաւագոյն մարզիկներն են յաճախ, որոնց մասին գնահատանքով կը խօսին մարզական շրջանակներու ու մամուլի էջերուն մէջ :

Պուլկարիոյ Հ. Մ. Ը. Մ. ը իր շարքերուն մէջ ունեցած է եւ ունի համազգային չափանիշով մարզիկներ որոնք զանազան առիթներով հաստատած են ազգ. նոր մրցանիշեր եւ որոնք մեծապէս գնահատուած են անգամ պուլկար մարզական դաշնակցութենէն (Պ. Ն. Ս. Ֆ.) :

Աւելորդ չենք նկատեր անոնցմէ մէկ քանին յիշատակել հոս՝ իրենց ձեռք բերած փայլուն արդիւնքներով :

Ա.— Յովսէփ Երեմեան (Վառնայէն) Պուլկարահայ բոլոր ողիմպիականներուն —բացի առաջինէն— մասնակցած եւ բոլորէն ալ հրաշակուած է օրուան ախոյեան :

Ունի չորս ազգ. մրցանիշներ՝ 1) 100 մ. վազք՝ 11 1/10, 1933ին, 2) բարձրութիւն ցատկել՝ 1.73 (1934ին, պուլկարահայ ճրդ ողիմպիական Բլովտիվ, 3) երկայնութիւն ցատկել՝ 6.71 (1934 Վառնայի Փէտէրասիոնի կազմակերպած մրցահանդէսին, Վառնա), 4) Երեք քայլ ցատքել՝ 13.31 (նոյնպէս Փէտէրասիոնի նոյն մրցահանդէսին 1934):

Ունի նաեւ դունդ նետելու պուլկարահայ մրցանիշը 11.28ը :

Վերջին երկու տարին հետեւած է թէնիսի փորձերուն եւ 1937ին շահած թէնիսի Վառնայի ախոյեանութիւնը օտար մրցորդներու դէմ :

Բ.— Հրայր Սրապեան (Բլովտիվ, այժմ Մարօք) ունի 800 մեթր վազքի ազգ. մրցանիշը 2.11ով (հաստատուած պուլկարահայ ճրդ ողիմպիականին, Բլովտիվ 1931ին) :

Մասնակցած է նաեւ զանազան պուլկարական մրցահանդէսներու ըլլան տեղական կամ շրջանային որ միշտ ալ պատուաւոր արդիւնքներ արձանագրած է :

Գ.— Եփրատ Յակոբեան (Բլովտիվ) խոստմնալից պատանի մարզիկ մը որ պուլկարահայ թրդ ողիմպիականին (Վառնա) շահած է 100 մ., 200 մ. եւ 400 մ. վազքերու առաջնութիւնները 11 4/10ով, 26 4/10, եւ 1 0 2/5ով :

Վերոյիշեալ մարզիկները Պուլկարիոյ անունով մասնակցած են Աթէնքի մէջ կազմակերպուած միջ - պալքանեան Աթլէթիկ մրցումներուն :

Կան նաեւ Պուրկազի, Սլիվէնի, Սոֆիայի մասնաճիւղերուն մէջ յաջող մարզիկներ որոնք կրնան պատիւ բերել շրջանին :

Յուշադրի (գնդակախաղ) մարզին մէջ եւս Հ. Մ. Ը. Մ. ի Պուլկարի

կարիոյ շրջանը ունեցած է եւ ունի ներկայիս բաւական թիւով գնահատուած խաղացողներ :

Անցեալի մէջ լաւագոյն խաղացողներ եղած են հանգուցեալ Պետրոս Գազանձեան, (1934ին գործողութեան մը հետեւանքով վախճանած) որ իր գեղեցիկ խաղարկութեամբ (կեղք. յառաջապահ) մեծապէս գնահատուած էր նաեւ պուլկար մարզ. շրջանակներէ եւ գրեթէ տեւապէս կը մասնակցէր Բլովտիվի քաղաքային թեմին :

Թորգոմ Գալբաքճեան երկար տարիներ եղած է Բլովտիվի մասնաճիւղի Փուլթպուլի խմբապետ եւ մարզիչը, նոյնպէս կը մասնակցէր քաղաքային թեմին :

Հրայր Սրապեան, Եր. Քէպապճեան (այժմ Պոսթըն) , Յ. Արեմեան եւն. եւն. :

Այժմ որպէս լաւագոյն խաղացողներ՝ կ'արժէ յիշել Օննիկ Ղարիպեան եւ Կարօ Կարապետեան (Վառնայէն) որոնք կ'անդամակցին նաեւ Վառնայի առաջնակարգ, ազգ. տիվիդիօնի անդամ Թիչաին եւ իբր յետսապահներ կը խաղան յիշեալ միութեան, առաջին խումբէն :

Օ. Ղարիպեան, 1934 — 35 տարեշրջանին եղած է Պուլկար ազգային թիմի աջ յետսապահ :

Վառնայի Հ. Մ. Ը. Մ.ի Փուլթպուլի առաջին թիմը, գրեթէ ամբողջ շրջանի մէջ առաջնագոյն խաղացողներէ կազմուած է եւ Ըրդ եւ Քրդ ողիմպիականներուն եղած է Փուլթպուլի ախոյեան խումբ եւ տիրացած՝ «Մեծն Տիգրան» բաժակին :

Նաեւ Փուլթպուլի մարզին մէջ ապագայ խոստացող ուժեր ունի Սոփիան, Բլովտիվը եւ Ալիվէնը :

Թ. Փաղաքճըքի Ռուսէի եւ Շումէնի մասնաճիւղերը առաւելապէս եղած են սկաուտական մասնաճիւղեր, իսկ Խասքովան վերջին տարին մարզական կեանքին մէջ սկսած է գովելի եռանդ ցոյց տալ, ունի իր նորակազմ Փուլթպուլի թիմը եւ կը պատրաստուի ժրդ ողիմպիականին :

Հ. Մ. Ը. Մ.ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վառնա, 1938 Յուլիս 20





ՍԻՎԷՆԻ Հ. Մ. Ը. Մ. Ի ֆուտբոլի Բ. խումբը 1928



Յ. Երեմեան, Պուլկարահայ ախոյեանը

ՌՈՒՄԱՆԻԱ

Ապագայ հայ մարզական կեանքի պատմագրին ատաղձ հայթայթելու մտահոգութեամբ, որպէս մօտէն ծանօթ մը Ռումանահայ Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպութեան, հիմնուած իրական տուեալներու վրայ, եւ օգտուած Ռումանիոյ շրջ. վարչութեան արխիւներէն, պիտի ջանամ տալ ամփոփ տեղեկութիւններ, պատմական թուականներ այս շրջանի գործունէութեան շուրջ:

Տակաւին Վառնա էի, 1921ի սկիզբը երբ օր մը Պոլսոյ թերթերէն տեղեկացայ թէ Պուքրէշի մէջ գոյութիւն ունի սկաուտական կազմակերպութիւն մը մօտաւորապէս 40 — 50 անդամ — անդամուհիներով: Քանի մը ամիս վերջը ինձ վիճակուեցաւ գաղթել Պուլկարիայէն եւ հաստատուիլ Պուքրէշ: Առաջին առթիւ իսկ հետաքրքրուեցայ տեսնել այս կազմակերպութեան նախաձեռնարկները եւ շնորհաւորել զիրենք:

Որպէս խմբապետ ինձ կը ներկայանայ բարձրահասակ եւ նիհարակազմ երիտասարդ մը Երուանդ Մմսարեան՝ Վանեցի, զոր արդէն կը ճանչնայի, իր Վառնայէն անցնելուն առթիւ:

Ժամանակէ մը յետոյ կը պարզուի, որ յիշեալը քաջալերութիւն



Պուքրէշի սկաուտները

նտացած այդ շրջանի Պուքրէշի ազգ. վարժարանի հոգաբարձութենէն եւ զանազան ազգայիններէ հիմը կը դնէ այդ կազմակերպութեան 1921 սեպտեմբեր սկիզբը :

Անցաւ ամիս մը եւ սկսան դժգոհութիւնները խմբապետին շուրջ, իր հակամանկավարժական ընթացքին համար, տղաքը սկսան պաղիւլ եւ այն օրէն ահա սկսանք աւելի հետաքրքրուիլ այս կազմակերպութեամբ: Պարզուեցաւ որ յիշեալը ոչ վարչութիւն կազմած է եւ ոչ ալ կանոնաւոր արձանագրութիւններ ունի, այլ սկսած է դէպի շարը գործածել իրեն վստահուած պաշտօնը: Քանի մը երիտասարդներ խորհրդակցելով կը հրաւիրենք Պ. Սմասրեանը որ կարգի բերէ այս գործը հիմնուելով Պոլսոյ մէջ ընդունուած ծրագիր — կանոնագրի տրամադրութիւններուն: Կը դիմենք հոգաբարձութեան որ կը համաձայնի կազմել վարչութիւն մը եւ կապ հաստատել Պոլսոյ Հ. Մ. Ը. Մ. ի հետ :

Նորարաց « Արարատ » ընթերցարանին մէջ կ'ունենանք առաջին ընդհ. ժողովը ուր կ'ընտրուի տեղական վարչութիւնը: Պիտի ընենք մեր առաջին վարչական ժողովը: Ժամադրուած ենք Պ. Գէորգ Քես — տանեանի տունը, կ'երթանք սակայն տունը մարդ չկայ: «Փօփա—նան» փողոցի անկիւնի գարեջրատունը կը մտնենք եւ, մէյ մէկ գարեջուր մեր առջեւ, կը կազմենք դիւանը :

Ահա, այսպէս է որ հիմը կը դրուի Հ. Մ. Ը. Մ. ի օրինաւոր կազմակերպութեան 1922 փետրուարին:

Ասկէ վերջ, շարժումը թափ ու ծաւալ կը ստանայ: Երկար կ'ըլլար ասոր ամբողջ պատմականը ընել: Ստորեւ կուտամ գլխաւոր դիժերը իր կեանքին.—

1921 Մայիս.— Պուքրէշի մէջ սկսուողական շարժում մը ստեղծելու անհատական փորձ մը տեղի կ'ունենայ, ու կարճ ատեն տեւելէ յետոյ կը վիժի՝ նախաձեռնողին բացասական դժերուն հետեւանքով :

1922 Փետրուար 22.— Պուքրէշի մէջ Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղի մը հիմնարկութեան առաջին պաշտօնական ձեռնարկը կ'ըլլայ նախաձեռնութեամբ Պ. Պ. Գ. Քէստանեանի, Արսէն Սայեանի, Յակոբ Պրգտիկեանի եւ Կ. Բոլատեանի եւ այս կերպով ստեղծուած մասնաճիւղը կը վաւերացուի Հ. Մ. Ը. Մ. ի Պոլսոյ կեդրոնէն :

1922 Յունիս 12.— Կը կազմուի Սիլիստրէի մասնաճիւղը՝ Պուքրէշի մասնաճիւղի կողմէ Սիլիստրէ ղրկուած Յակոբ Թոգաթլեանի, Յ. Պզտիկեանի եւ Արսէն Սայեանի նախաձեռնութեամբ :

1922 Յուլիս 22.— Պուքրէշի մասնաճիւղէն անդամներու ջանքե —

րով՝ կը հիմնուի Քոսթանցայի մասնաճիւղը, իր մէջ ձուլելով «Ար. — ծիւ» մարմնակրթական սկումբը՝ Ֆուլթպոլի իր երկու թիմերով :

1922 Յուլիս 26.— Կը հիմնուի Պաղարճըքի մասնաճիւղը նոյն քաղաքը այցելող Պուքրէշի մասնաճիւղէն անդամներու նախաձեռնու թեամբ : Հ. Մ. Ը. Մ. ին կը միանայ «Փայլակ» մարզական միութիւնը՝ Ֆուլթպոլի իր երեք թիմերուն հետ :

1923 Մայիս.— Սթրունկայի սումանահայ սրբանոցին մէջ կը կազմուի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղի մը կորիզը՝ Պուքրէշի մասնաճիւղին թելադրանքով եւ սրբանոցին մարզանքի ուսուցիչ Յ. Թօղաթլեանի ջանքերով :

1923 Օգոստոս 10.— Քոստանցայի մէջ տեղի կ'ունենայ առաջին ընդհ. բանակումը Պուքրէշի, Քոսթանցայի, Պաղարճըքի եւ Սիլիսթրէի մասնաճիւղերու սկսուածներուն մասնակցութեամբ :

1923 Սեպտեմբեր 30.— Պուքրէշի մասնաճիւղին նախաձեռնու թեամբ կը դումարուի Ա. Շրջ. Ժողովը Հ. Մ. Ը. Մ. ի Ռումանիոյ Շրջանի : Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին Պ. Պ. Տոքթ. Սալբի (ատենապետ), Շ. Կիւրճեան (ատենադպիր), Վահէ Տիրատուրեան (դանձապետ), Յ. Աթանասեան (համարակալ), Սիրունի (անդամ) : Ուրիշ երկու ընտրուածներ երբեք չեն մասնակցիր աշխատանքի :

1924 Փետրուար 1.— Լոյս կը տեսնէ «Արի» իբր տեղեկատու Հ. Մ. Ը. Մ. ի Ռումանիոյ Շրջանի : («Արի»ին Ա. տարին լոյս կը տեսնէ 7 թիւ, Բ. տարին 8 թիւ, Գ. տարին 4 թիւ, որմէ յետոյ կը դադրի երբ Ֆիլիպէի մէջ կը սկսի հրատարակուիլ «Հ. Մ. Ը. Մ.»ը՝ իբր երկու շրջաններու օսկան) :

1924 Ապրիլ 14.— Քոսթանցայի «Բադրատ» մարզական միութիւնը կը ձուլուի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղին մէջ՝ իր մարզիկներով ու գոյքերով :

1924 Ապրիլ 14.— Պաղարճըքի մասնաճիւղին Ֆուլթպոլի «Փայլակ» խումբը Բ. դասակարգի ախոյեանութեան 1924ի բաժակը կը շահի մրցելով «Քալիաքրա» խումբին հետ :


1924 Յուլիս 20.— Պուքրէշ, Ռումէն Մարզական Ընկերակցու թեանց Դաշնակցութեան (F. S. S. R.) մարզադաշտին վրայ տեղի կ'ունենայ Ռումանահայ Ա. ողիմպիականի մրցումներուն մէկ մասը :

1924 Օգոստոս 17.— Քոսթանցայի մէջ կը շարունակուին եւ կ'աւարտին մրցումները : Ընդհ. ախոյեան Յ. Ապագաեան (Պուքրէշ) որ

շահած է 3 առաջին 1 երրորդ մրցանակ : Ախոյեան մասնաճիւղ՝ Պուք-
րէշ : Ֆութպոլի յաղթական Պուքրէշ : Իրօշարշաւի յաղթական Քոս-
թանցա :

1924 Օգոստոս 15 — 18.— Քոսթանցայի մէջ կը գումարուի Հ. Մ .
Ը. Մ.ի Ռուժանիոյ Շրջանի Բ. Շրջ. Ժողովը : Շրջ. պիւտճէ կը քուէ-
արկուի 48.000 լէյ : Շրջ. վարչութեան անդամ կ'ընտրուին Սիրունի
(ատենապետ), Յ. Նշանեան (ատենադպիր), Վ. Տիրատուրեան (գան-
ձապետ), Տոքթ. Սալբի եւ Վահան Ալթունեան (անդամ) : Ուրիշ եր-
կու ընտրուածներ երբեք չեն մասնակցիր աշխատանքի :

1924 Օգոստոս 4 — 18.— Քոսթանցայի մէջ տեղի կ'ունենայ Շրջ.



Հ. Մ. Ը. Մ.ի Պալչըքի Մ.նիւղի առաջնորդները այգեստանի
ջրվեժին տան :

Բ. բանակում՝ Պուֆրէշի, Քոսթանցայի եւ Սիլիսթրէի մասնաճիւղերուն մասնակցութեամբ :

1925 Փետրուար .— Հիմը կը դրուի Սթրուսկայի մէջ պաշտօնական մասնաճիւղի մը, որուն հանդիսաւոր բացումը տեղի կ'ունենայ Զատկին, Շրջ. Վարչութեան ներկայացուցիչ Պ. Պ. Յ. Նշանեանի եւ Յ. Պզտիկեանի կողմէ :



Պուֆրէշի սկաուտները եւ Սթրուսկայի որբանոցի սկաուտները,

26 Յուլիս 1925ին արշաւանքի մը պահուն

1925 Մարտ 2.— Հիմը կը դրուի Կալացի մասնաճիւղին՝ Շրջ. Վարչութեան կողմէ լիազօրուած Տոքթ. Սալբիի նախաձեռնութեամբ :

1925 Մարտ.— Շրջ. Վարչութեան հրաւերով Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղերը հանդանակութեան մը կը ձեռնարկեն որք սկառտներու հանդերձանքին համար հաւաքելով 48,288 լէյ, մեծ մասամբ հնչուն դրամով եւ մասամբ կերպասեղէնով :

1925 Ապրիլ 18 — 20.— Շրջ. Վարչութիւնը 50 հոգինոց առաքելութիւն մը կը դրկէ Կէոլա՝ անդամներէ, մարզիկներէ եւ սկառտներէ բաղկացած : Շքեղ ընդունելութիւն մը կը կազմակերպեն երբեմնի հայաքաղաքին մեր ազգայինները : Այս առթիւ Փութպօլի մրցում Պուքրէշի Հ. Մ. Ը. Մ. ի խումբին եւ Կեոլայի «Սփարթա» խումբին միջեւ, այս վերջինին յաղթականով 1 — 3 :

1925 Յուլիս 19.— Պուքրէշ, F. S. S. R. ի մարզադաշտին վրայ տեղի կ'ունենայ Ռումանահայ Բ. ողիմպիականը : Օրուան թագուհի Տիկին Քունտաքճեան : Օրուան ախոյեան կը հռչակուի Վահրամ Մերձանեան (Կալաց) որ շահած էր 2 առաջին եւ 1 երկրորդ մրցանակ : Ախոյեան մասնաճիւղ՝ Պուքրէշ որ շահած էր 43 կէտ : Դրօշարշաւի ախոյեան՝ Պուքրէշ :

1925 Յուլիս 18 — 22.— Պուքրէշի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Գ. Շրջանային ժողովը : Շրջ. պիւտճէ կը քուէարկուի 226015 լէյ : Նոր Շրջ. վարչութիւնը կը կազմուի Սիրունի (ատենապետ), Շ. Կիւրճեան (ատենադպիր), Պ. Տէիրմէնճեան, Գ. Հաճի Արթինեան եւ Օ. Սինանեան : Ընտրուածներէն միւս երկուքը երբեք չեն մասնակցիր վարչութեան կազմին :

1925 Յուլիս 26.— Ռումէն մարզական Ընկերակցութեանց Դաշնակցութեան (F. S. S. R.) Կեդր. վարչութեան նիստին մէջ կը վաւերացուին Հ. Մ. Ը. Մ. ի Պուքրէշի, Սիլիսթրէի, Քոսթանցայի, Պաղարճըքի եւ Կալացի մասնաճիւղերը իբր անդամ F. S. S. R. ի :

1925 Օգոստոս 10 — 25.— Դ. Շրջ. բանակում Պալչըզի մէջ, գլխաւորաբար Պաղարճըքի եւ Պուքրէշի մասնաճիւղերուն մասնակցութեամբ :

1925 Հոկտեմբեր — Շրջ. Վարչութիւնը Պուքրէշի եւ Քոսթանցայի Փութպօլի խումբերէն բաղկացած առաքելութիւն մը կը դրկէ Քիշնէվ : Հ. Մ. Ը. Մ. ի երկու խումբերը այդ առթիւ Փութպօլի մրցում կ'ունենան տեղական խիստ զօրաւոր երկու խումբերու հետ, որոցմէ կը պարտուին :

1925 Հոկտեմբեր 4.— Կալացի մասնաճիւղը, Հ. Մ. Ը. Մ. ի Ռուս-մանիոյ մասնաճիւղերուն մէջ առաջինը ըլլալով կը սարքէ իր տեղական մրցահանդէսը: Օրուան ախոյեան՝ Յարութիւն Պետոյեան՝ որ շահած է 5 առաջին մրցանակ:

1925 Նոյեմբեր 21.— Շրջ. Վարչութիւնը անդամներու եւ մար-դիկներու առաքելութիւն մը կը ղրկէ Ռուսաճուք, ուր այդ առթիւ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ Շրջաններու խորհրդաժողովը, հիմը դրուելով երկու շրջաններու գործակցութեան, ստեղծուելով «Հ. Մ. Ը. Մ.»-ը իբրեւ հասարակաց օրկան, Առժամեայ կեդր. յանձնախումբ Հ. Մ. Ը. Մ. ի, եւ տրուելով որոշումներ Հ. Մ. Ը. Մ. ի կերողնին վերստեղծմանը համար:

1925 Դեկտեմբեր 7.— Հ. Մ. Ը. Մ. ի Պուքրէշի մասնաճիւղը բացումը կը կատարէ իր սեփական ահումբին:

1926 Յունուար — Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ լոյս կը տեսնէ «Ուղեցոյց Արի»-ի առաջին հատորը, նորրիմաներու պատրաստութեան նուիրուած:

1926 Մարտ 4.— Շրջ. Վարչութիւնը կը սարքէ հայկական շքեղ երեկոյթ — պարահանդէս մը, Լիտէրթաֆէլի սրահներուն մէջ: Կը դոյանայ մօտ 55000 լէյի զուտ հասոյթ մը՝ բացի պարահանդէսէն մնացած օդապորժելի դոյքերէն՝ որոնց արժէքը 30.000 լէյէն պակաս չէ:

1926 Մայիս — Շրջ. Վարչութիւնը լոյս կ'ընծայէ «Ուղեցոյց Արի»-ի Բ. հատորը՝ նուիրուած Բ. կարգի սկաուտներու պատրաստութեան:

1926 Մայիս 14.— Աշխատանքի հայազգի նախարար Պ. Գրիգոր Թրանքու Եաշ կ'ընտրուի Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսմանիոյ Շրջանի պատուոյ նախագահ, տիտղոս՝ զոր Պ. Թրանքու Եաշ կ'ընդունի Տ Յուլիա Թուակիր գրով մը:

1926 Յունիս 13.— Կալացի մէջ տեղի ունեցած միջազգային մրցահանդէսի մը առթիւ Հ. Մ. Ը. Մ. ի անդամներէն առաջնութիւն կը շահին Պ. Պ. Մ. Մ կրեան (երկաթ), Յ. Պետոյեան (ձող) եւ երկրորդութիւն Վ. Արզուեան (ձող) եւ Ա. Խաշխաշեան (ուժով բարձրութիւն):

1926 Սեպտեմբեր 4.— Տեղի կ'ունենայ Գ. ողիմպիականը Մարմնակրթութեան Ազգային Հաստատութեան (O. N. E. F.) սթատիօմին վրայ: Օրուան թագուհի՝ Տիկին Ա. Մանիսալեան: Ախոյեան Մովսէս Շլուկեան (Պուքրէշ) որ շահած էր 2 առաջին, 1 երկրորդ մրցանակ: Ախոյեան մասնաճիւղ Պուքրէշ որ շահած էր 90 կէտերէն 60ը: Դրօ —

չարչաւի յաղթական Պուրբէշ: Մրցումներու ընթացքին կը կոտորուին նախորդ ողիմպիականներու մրցանիշերէն 10ը:

1926 Սեպտեմբեր 5 — 7. — Դ. Շրջ. Ժողով Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսմանիոյ Շրջանի: Կը քուէարկուի 290.000 լէյի Շրջ. պիւտճէ մը 1926—27ի համար: Նոր Շրջ. Վարչութիւնը կը կազմեն. — Սիրունի (Ատենայետ), Համադասպ Փիրանեան (ատենադպիր), Արտ. Թ. Թովմասեան (դանձապետ), Դ. Քէստանեան, Օննիկ Սինանեան, Գ. Հաճի Աոթենեան, Յակոբ Պղտիկեան:

1925 Նոյեմբեր 21. — Ռուսճուրի մէջ տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ Շրջ. վարչութեանց խորհրդաժողովր՝ Կահան յեղորներու մասնակցութեամբ: Կը դրուին գործակցութեան մը հիմեր, եւ որոշումներ կը տրուին Հ. Մ. Ը. Մ. կեդրոնի վերատեղծման համար: Այդ տրուած որոշումները իրականացնելու պայտօնով կ'որոշուի ետգմել Հ. Մ. Ը. Մ. ի Առժամեայ կեդր. յանձնախումբ մը: Այս Յանձնախումբին անդամ կը կարգուին Ռուսմանիոյ Հ. Մ. Ը. Մ. եւ Խոսմէ Պ. Պ. Տոթ. Սայրի, Գրիգոր Յակոբեան եւ Սիրունի, իսկ անսամներէ՝ Յ. Նչանեան, Ս. Պապիկեան: Պուլկարիոյ կողմէ Պ. Պ. Տոթ. Թովմասեան, Թաղուր Թաւորեան եւ Կարո Ղադարոսեան, իսկ անդամներ Ներսէս Աստուածատուրեան եւ Լեւոն Գաղանձեան:

1927 Սեպտեմբեր 4 — Պուրբէշի O. W. E. F. ի դաշտը տեղի կ'ունենայ Դրո. ողիմպիականը: Օտուան տեսլեան կը հստակուի Մովսէս Շյուլեան, ախտիւճ մասնաճեւո Պուրբէշ: Դրոշարչաւը կը յահի Պուրբէշ, իսկ Ֆոթատի մրտում տեղի չունենար: 1927ին Ռուսմանիոյ Շրջ. Վարչութիւնը եւ ետգմակերաէ Երասկի աղէտեայներուն, օգնութեան գործը եւ եւ հանսանակէ 12.700 լէյ, որը Հայ Կարմիր Մաշի միջոցաւ կը դրկուի Հայաստան իր նպատակին:

1928ին Սեյեսթրէի մէջ Չասկի տօներուն կը գումարուի սկառւտ տետերու հաւաքումը, իսկ օգոստոս 22ին Պուրբէշի մօտակայ Պան — եասա անտասին մէջ տեղի կ'ունենայ սկառւտ վարիչներու ծօրեայ բանակումը:

1928ին կը կազմակերպուի Շրջ. Վարչութեան նախաձեռնութեամբ Պուլկարիոյ երկրաչարժէն աղէտեայներու օգնութեան գործը, Ֆիլիպէի մէջ կը բացուի սննդակայան մը:

Նոյնպէս 1928ին, Ռուսմանահայ Սրունկայի որբանոցին փակում — մով կը լուծուի եւ Հ. Մ. Ը. Մ. ի Սթրունկայի մասնաճիւղը:

1929ին, Պուլքրէշի մէջ կը ձեռնարկուի կանանց բաժնի կազմու-
թեան :

Այժմ որպէս Մարզարաններու Փօստ Ռուսմանիոյ շրջանը պատ-
րաստ դրամ ունի քանի մը հարիւր հազար լէյի գումար մը, պահ դըր-
ուած դրամատան մը մէջ: 1927էն մինչեւ 1939՝ Ռուսմանիոյ շրջանը
միշտ մնաց իր միեւնոյն եռանդին ու ծաւալին մէջ, օր օրի աւելի
ծաւալելով :

ՆԵՍՐԱ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

1924 Յունիսին էր որ հիմը դրուեցաւ Յունաստանի շրջանին: 1922էն
ի վեր գոյութիւն ունէին սկաուտական երկու խումբեր; — մէկը Ֆիլք-
սի մէջ, միւսը Քօքլինիան: Ֆիլքսը կը ղեկավարուէր Պ. Պետրոս Գարա-
եանի, իսկ Քօքլինիան՝ Պ. Հայկ Տէտէեանի կողմէ :

Երբ սկաուտական առաքելութիւնը վերջ գտաւ, Պ. Մալուեանի



Աթէնք, Ֆիլքսի մասնաճիւղի առաջնորդական կազմը

հրաւէրին վրայ Ֆիքսի մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով մը երկու խմբապետներու եւ քանի մը վարիչներու ներկայութեան, եւ այսպէսով հիմը դրուեցաւ Յունաստանի շրջանին : Քանի մը շաբաթ վերջ արդէն կազմուած էր Յունաստանի Ա. շրջանային վարչութիւնը, հետեւեալ կազմով : Պ. Պ. Առաքել Պետրոսեան, Ս. Տամլամեան, Պատուելի Աճէմեան, Յակոբեան եւ Յովհաննէսեան : Պ. Յարեթեան Փութպոլի խմբապետ, Պ. Պ. Հայկ Տէտէեան եւ Պետրոս Գայաեան՝ սկառու խմբապետներ :

Վարչութիւնը դործի սկսելով որոշեց հրատարակել Նոր Սերունդ անունով ամսաթերթ մը եւ կազմեց Սինկրուլի, Աթէնքի եւ Բիրէայի խումբերը, Սեպտեմբերին ալ կազմուեցան Փութպոլի խումբերը :

Բացման հանդէսը տեղի ունեցաւ Ֆիքսի մէջ, սեպտեմբեր 3ին, հոժ բազմութեան մը ներկայութեան : Շրջանի խմբապետ Պ. Մ. Մալումեան յանձնեց խումբի դրօշակները եւ աստիճանները : Աթէնքի, Ֆիքսի եւ Բիրէայի աւագ խմբապետ կարգեց Պ. Պետրոս Գայաեանը, իսկ Քօքինիայի եւ Սինկրուլի շրջանին՝ Պ. Հայկ Տէտէեան : Եւ այսպէս քանի մը ամսուան մէջ սկսուածներու թիւը հասաւ մօտ 400ի :

Հ. Մ. Ը. Մ. ի Յունաստանի Շրջանային Կեդր. Վարչութիւնը ունեցաւ 7 մասնաճիւղեր, Աթէնքի եւ Բիրէայի շրջաններուն, ինչպէս նաեւ Կրետէ կղզիին մէջ :

Աթէնքի շրջանը՝ երկու մասնաճիւղեր, — Ֆիքս եւ Սինկրուլ : Բիրէայի շրջանը եւս ունի երկու մասնաճիւղեր, Լիբազմա եւ Քօքինիա :

Հ. Մ. Ը. Մ. եան մասնաճիւղեր կազմուեցան նաեւ Ռէթիմնօ եւ Գանտիա քաղաքները, Կրետէ կղզիին մէջ :

Իսկ Փութպոլի խումբեր, Նէօն — Ֆալէրօնի, Վոլոյի, Միտիլլիի եւ Քալամատայի մէջ :

Նոր Յունաստանի, այսինքն Մակեդոնիոյ եւ Թրակիոյ մէջ Հ. Մ. Ը. Մ. ը մասնաճիւղեր պահեց Սելանիկ, Տրամա, Քսանթի եւ Սէրէզ, որոնք սակայն, յետոյ, պարադաներու բերմամբ, ժամանակաւորապէս դադրեցան գործելէ :



Անդամներ. — Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղային անդամներու, սկառուներու եւ մարզիկներու թիւը հետեւեալն եղած է հին Յունաստանի մէջ :

| Աթէնք | սկառուտ | մարզիկ | ֆութպոլ |
|----------------|------------|-----------|------------|
| Ֆիքս | 110 | 35 | 26 |
| Սինկրու | 24 | 4 | — |
| Բիրէա | | | |
| Լիփազմա | 35 | 12 | 16 |
| Քօքինիա | 35 | 10 | 16 |
| Նէօն = Ֆալիրօն | — | — | 13 |
| Ռէթիմնօ | — | — | 18 |
| Գանտիա | — | 5 | 16 |
| <hr/> | | | |
| Ընդհ. գումար՝ | 204 | 66 | 105 |

Միութեան աթլէթիք եւ սկառուտ գործունէութիւնը կանոնաւորապէս յաւաք տանելու նպատակաւ Շրջան, Կեդր. Վարչութիւնը ընտրած էր երկու յանձնախումբեր, Աթլէթիք կեդրոն. յանձնախումբ եւ սկառուտ կեդրոն. յանձնախումբ :


Փութպոլի ճիւղն ալ յետադային յանձնուեցաւ աթլէթիք կեդր. յանձնախումբին, իսկ սկառուտական գործերը իր ուսերուն վրայ առաւ կեդրոն. վարչութիւնը, որ կազմեց միեւնոյն ատեն սկառուտ խմբապետական ժողով մը, զբաղելու համար սկառուտական գործերով :

Բանակումներ. — Աթէնքի եւ Բիրէայի հայ սկառուտները ամէն տարի կանոնաւոր ընդհանուր բանակումներ ունեցած են Աթէնքի մօտակայ դաշտերը :

Տարին գրեթէ երկու անգամ, հայ սկառուտները յունական սկառուտական կեդրոնին կողմէ խառն բանակումի եւ միեւնոյն ատեն քննութեան հրաւիրուած են :

Ամէնէն կարեւոր խառն բանակումը տեղի ունեցաւ Կեսարիանիի բլուրներուն վրայ, որու ընթացքին հայ սկառուտական խումբերը արժանացան Յոյն ընդհ. սկառուտ պետին զնահատանքներուն :

1927ի ընթացքին ալ, Ճէմպօրի մը կազմակերպուեցաւ Յոյն կեդրոնին կողմէ : Երկրին բոլոր նահանգներէն ու կղզիներէն սկառուտական խումբերը Աթէնք հաւաքուեցան ու բանակում ունեցան Աթէնքի Սթատիումի մէջ : Հայերուն կողմէ կը մասնակցէին յատկապէս Սելանիկէն Աթէնք հասնող հայ սկառուտներու խումբը, առաջնորդութեամբ Պ. Ա. Մակարեանի : Սելանիկի խումբը միանալով Աթէնքի եւ Բիրէայի հայ սկառուտական խումբերուն, կատարեցին իրենց վրայ ծանրացող պարտականութիւնները ամենայն կարգապահութեամբ :



Յունաստանի առաջին Շրջանային Վարչութիւն



Յունաստանի հայ սկաուտական Ա. և Բ. խումբերը 1922ին
Մէջտեղը՝ Պ. Արամ Կայծակ՝ կեդր. վարչութեան նախագահ,
աջ եւ ձախ կողմը 2 կազմակերպիչները՝ Գայեան եւ Ն. Մանուկեան

Մարզական. — Սկաուտիզմը լայն տեղ գրաւած էր Յունաստանի երիտասարդական կարգերու մէջ: Վերջին տարիներուն է որ աթլէթիզմը սկսած է ներմուծուիլ Հ. Մ. Ը. Մ. ի Յունաստանի շարքերուն մէջ:

Փութպոլը գրաւած է բաւական կարեւոր տեղ մը: Աթլէթիզմը ունեցած է 4 Փութպոլի խումբեր:

Հ. Մ. Ը. Մ. ի Փութպոլի Ա. խումբը Աթլէթիզմի լիկային մէջ քանիցս յաջող մրցումներ ունեցած է տեղական յունական խումբերու հետ եւ մասնակցած յունական բաժակի մրցումներուն:

Դժբախտաբար, Փութպոլիստներու թիւը տակաւ նուազեցաւ իբր հետեւանք արտադալթի եւ տնտեսական պայմաններու: Լաւ խաղացողներէն շատեր մեկնած են Ֆրանսա կամ Հարաւային Ամերիկա, իսկ ուրիշներ քաշուած են դրաղումներու պատճառաւ:

Յունաստանի Ա. Ողիմպիականը տեղի ունեցաւ 1929 մայիսին:

Յունական Ողիմպիականէն յետոյ, Պալքանեան երկիրներու Հ. Մ. Ը. Մ. ի վարչութիւններուն գործակցութեամբ, Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ը իբր Պալքաններու Հ. Մ. Ը. Մ. ներու ներկայացուցիչ, իր մասնակցութիւնը բերաւ համապալքանեան միջազգային ողիմպիականին, որ սարքուեցաւ Աթլէթիզմի սթատիումին մէջ, 1929 սեպտեմբեր ամսուան ընթացքին:

Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ը թէեւ ունեցաւ փայլուն օրեր, բայց անցուցած է նաեւ ոչ — քաջալերիչ շրջաններ: Իէպի Ֆրանսա, Սուրիա եւ Հարաւային Ամերիկա գաղթերուն պատճառաւ, մարդուած եւ փորձառու ոյժեր մեկնած են երկրէն: Կեդրոն. վարչութիւնները աշխատած են վերակազմելու միութիւնը իր բոլոր մարզերուն մէջ:

Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. ը կը դործէ արտասահմանեան երկիրներու մէջ գտնուող բոլոր Հ. Մ. Ը. Մ. ներէն տարբեր դրութեամբ: Սկաուտիզմը Յունաստանի մէջ պետական հսկողութեան եւ հոգածութեան տակ ըլլալով, թերեւս դանազան քաղաքական տուեալներու բերմամբ, թոյլատրուած չէ Հայերուն ունենալ անկախ սկաուտական կազմակերպութիւն, ինչպէս Պուլկարիոյ մէջ, եւն.:

Հայ սկաուտները ճանչցուած են որպէս յունական կեդրոնի 22րդ եւ 23րդ մասնաճիւղեր: Հայ սկաուտական կազմակերպութիւնը կը վայելէ, միւս կողմէ, որոշ ազատութիւններ եւ ունի իր ներկայացուցիչը յունական կեդրոնին մէջ: Պէտք է յայտնել նոյնպէս որ հայ սկաուտները միշտ գովասանքի արժանացած են յոյն սկուտապետերու կողմէ, որոնք համակրանքով լեցուած են իրենց հայ եղբայրներու հանդէպ:

Հ. Մ. Ը. Մ. ը, իբր հայ Աթլէթիզմի միութիւն, պաշտօնապէս

ճանչցուած է յոյն կառավարութեան կողմէ, 5012/26 թիւ հրամանագրով :

Ունեցած ենք նոյնպէս Օրիորդաց Մարզական Միութիւններ, եւ գործադրութեան դրուած է դործունէութեան նոր ծրագիր :

Անցեալին մէջ, Միութեան նիւթականը ապահովուած էր պատահական նուիրատուութիւններէ եւ Նիր Իսթ Ռիլիֆի կատարած դրամական օգնութիւններէ :

Նիր Իսթը Յունաստանի մէջ վերջ տուած է իր գործունէութեան, որով տուժած է միութիւնը: Այս պարագան չէ յուսահատեցուցած Միութիւնը որ կը ջանայ իր նիւթականը ապահովել մեծ ճիգերով:

Մեր շրջանը երկար ատեն ունեցած է նաեւ իր մարզական ամսաթերթը :

Միութեան Պատ. նախագահն էր Պ. Ա. Պետրոսեան, որ նիւթապէս թէ բարոյապէս օգտակար կը հանդիսանար անոր: Շրջանային կեդր. վարչութիւնը կազմուած էր հետեւեալներէ.— Պ. Պ. Վ. Ճլկունի՝ (ատենապետ), Պ. Սարգիսեան՝ (ատենադպիր), Մ. Բարթիկեան՝ (գանձապետ), Պ. Մարկոսեան եւ Վ. Տէր Մկրտիչեան:

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔ

ՍՈՒՐԻԱ

Եթէ զինադադարէն անմիջապէս վերջ, 1918ին, Պոլիսը եղաւ Հ. Մ. Ը. Մ. ի ծնունդ տուողը, համարձակօրէն նաեւ կարելի է յայտարարել, թէ Սուրիա եւ Լիբանան եղան անոր անմիջական աշխատանքի գետինները ուր Միութիւնը շուտով հող գտաւ ու զարգացաւ, հասնելով ներկայիս իր ամենափայլուն մակարդակին, միեւնոյն ժամանակ բարձրացնելով իր մասնաճիւղերու թիւը մօտ քսանի :

Հակառակ մեր այս տարածումին, կարելի՞ է ըսել, թէ մենք լիովին կատարած ենք այն ինչ որ կը սպասուի մեզմէ, ու այլ խօսքով տառացիօրէն կը պարտադրէ մեր միութեան վեհ նպատակը, որուն համար զոհողութիւններու դժուարագոյնին, ու պարտականութեանց ամենածանրին առջեւ երբեք երկընտրանք կամ տատամսում չենք ունեցած :

Հպարտութեամբ կ'արձանագրենք, եւ թող մեզի ներուի մեր այս յաւակնութիւնը, թէ՛ տրուած ներելի պայմաններու տակ, ու մանաւանդ սակաւաթիւ գործօն ուժերու ներկայութեան, բարձրացուցած ենք Հ. Մ. Ը. Մ. ի անունն ու գործը այն մակարդակին ինչ որ վայել է իրեն :



Հ. Մ. Ը. Մ. ի Պեյրուքի մասնաճիւղի սկաւտներու խումբը
Վերջին շարքին մէջտեղը՝ խմբապետ Ժիրայր Պալեան



Հ. Մ. Ը. Մ. ի Պեյրուֆի Մ. Գիւղի Ա. Խումբը

Գոհ ըլլալով հանդերձ ձեռք բերուած յաջողութիւններէն, բաւարար չենք զգար զայն, այլ աւելի քան երբեք հաստատ հաւատքով կը փարինք այն յիրելի գործին որուն մէջ յստակօրէն կը տեսնենք ոչ միայն հայ երիտասարդութեան Փիղիքական եւ բարոյական զարգացումը, այլ մէկը այն հղօր ազդակներէն, որ Հայը Հայ պիտի պահէ գաղթաշխարհի ոչ հաստատունն ու անմխիթար գոյավիճակին մէջ :

Ինչպէս ըսինք, չենք գոհանար եղածով : Աշխատելու խանդը որ եւ է ժամանակէ աւելի կ'եռայ մեր բոլոր մասնաճիւղերու քով, որոնք հակառակ տնտեսական անօրինակ տապնապին, ու տեղ տեղ հանդիպած արտառոց արշեւքներուն, տենդապին աշխատանքի լծուած են, տարուէ տարի աւելի փայլուն դործունէութեամբ մը ներկայանալու Հ. Մ. Ը. Մ. ի ամբողջական հոյլին մէջ :

Քանի գրի կ'առնուի Հ. Մ. Ը. Մ. ի ընդհ. դործունէութիւնը, անոր քսանամեակին առթիւ, գովելի նախաձեռնութեամբը Քասնամեակի Տօնակատարութեան Կեդրոնական Մարմինին, Հ. Մ. Ը. Մ. ի Սուրբիոյ եւ Լիբանանի Երջ. վարչութիւնը ստորեւ կուտայ իր շրջանի մասնաճիւղերու գործունէութեանց ամփոփ մէկ տեղեկագիրը, սկսելով շրջանիս մէջ ամենաչուտ կեանքի կոչուող մասնաճիւղէն :

1. ՊԵՅՐՈՒԹ. — Կարելի չէ ըսել, թէ Հ. Մ. Ը. Մ. ի քսան մասնաճիւղերը այսօր գոյութիւն չպիտի ունենային Սուրբիոյ եւ Լիբանանի մէջ, եթէ առջին անգամ Պէյրութ նախաձեռնող չըլլար կազմելու շրջանի անդրանիկ մասնաճիւղը, բայց համարձակօրէն կարելի է յայտարարել, որ եթէ Պէյրութ իր կազմակերպութենէն անմիջապէս յետոյ չմտածէր կազմակերպել նաեւ շրջանները, հաւանական էր որ այսքան կուռ եւ կազմակերպուած չըլլար Սուրբիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերու ամբողջութիւնը :

Քանի կը գրուի Հ. Մ. Ը. Մ. ի Սուրբիոյ շրջանի գործունէութիւնը, հարկ է արձանագրել հոս անունները այն քանի մը Պոլսահայ անձնուէր երիտասարդներուն, ինչպէս՝ Պ. Պ. Ալպէր Յակոբեան, Հայկ Պուտաքեան, Ժիրայր Պալեան եւ Յակոբ Հայրապետեան, որոնք հազիւ ոտք դրած Լիբանանի հողին վրայ, ու տակաւին անստոյգ իրենց ոչ միայն ապագային այլեւ առօրեայ հացին, համբուրելի գաղափարը ունեցան ծնունդ տալու Հ. Մ. Ը. Մ. ի, ու աջակից ունենալով գաղութիս քանի մը մարգասէր երիտասարդները, խիստ դժուար պայմաններու տակ հիմը դրին Հ. Մ. Ը. Մ. ի անդրանիկ մասնաճիւղին Պէյրութի մէջ :

1923ին երբ հիմնուեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղը, կարգ մը գպրոցներէ դուրս, մարմնակրթական շարժումը (սփոր) գրեթէ գո-

յութիւն չունէր Պէյրութի մէջ: Հ. Մ. Ը. Մ. ի Փութպոլի խումբին խաղերը հետզհետէ օրինակ դարձան տեղացի երիտասարդութեան, հետեւելու դաղթական Հայուն, ու նոյն տարուայ վերջաւորութեան, Հ. Մ. Ը. Մ. ի շարքին կային նաեւ արաբական քանի մը ներկայանալի խումբեր, որոնց հետ Հ. Մ. Ը. Մ. ի ունեցած խաղերը վերջացած են միշտ Հ. Մ. Ը. Մ. ի յաղթանակով: Ասոնք խթան մը եղած են մինչեւ այդ անկազմակերպ ու անորոշ հայ երիտասարդութեան բոլորուելու Հ. Մ. Ը. Մ. ի շուրջ ընդարձակելով անոր գործունէութեան ասպարէզը:

Փութպոլի հետ զուգընթաց յաստատուած են ասիական խաղերը, ու առաջին անգամ՝ 1925ին մասնաճիւղը սարքած է իր անդրանիկ ուղիմպիականը ուր Հ. Մ. Ը. Մ. ի մարզիկները տուած են խիստ գնահատալի արդիւնքներ, որոնցմէ քանի մը հատը հետագային մասնակցելով Սուրիոյ եւ Լիբանանի միջազգային ողիմպիականներուն, շահած են ախոյեանութիւններ, ինչպէս Եղբ. Օննիկ Փիլիկեան 100 մէթր արգելարչաւի, Նուպար Արսէնեան 200, ու Յակոբ Գատեան 1500 մէթր վազքի մէջ:

Հակառակ մարզական զանազան ճիւղերու մէջ Պէյրութի յաճախ ունեցած նուաճումներուն, սկառուտական բաժինը դժբախտաբար միշտ սպասուած արդիւնքը չէ տուած, եւ այդ անոր համար, որ մասնաճիւղը կարող սկսուտ խմբապետներ չէ ունեցած: Քանիցս ձեռնարկներ եղած են արտասահմանէն հմուտ խմբապետներ բերելու, բայց զանազան պատճառներով այդ ձեռնարկները ամլութեան դատապարտուած են, ու ներկայիս ալ անհրաժեշտ պէտքը կայ սկսուտ խմբապետի մը: Այդ պակասը սակայն պատճառ եղած չէ որ բոլորովին անտեսուի մարզական այս ճիւղը Պէյրութի մէջ, բոլոր վարչութիւնները իրենց կողքին ունեցած են սկառուտական խորհուրդներ, որոնք առաւելապէս զբաղած են սկառուտական գործերով: Այժմ մասնաճիւղը ունի սկառուտներու եւ դայլուկներու չորս տասնեակ խումբեր, որոնք սկսնակ եւ եռանդուն ուժերու ղեկավարութեան տակ կը խոստանան ասպագային աւելի բեղուն աշխատանք մը ցոյց տալ:

Պէյրութի մասնաճիւղի գործունէութեան մեծագոյն առաջը սակայն կը նկատուի իր Փութպոլի դաշտէն վերջ, որուն համար ծախսուեցաւ աւելի քան 20.000 Փրանք, իր վերջերս վարձած Ակումբ պարտէզը, որ իր դիրքովն ու օժտուած մարզական գետիններովն ու գործիքներով, կը խոստանայ քաղաքիս երիտասարդութեան ժամադրավայրը դառնալ: Ակումբը իր մէջ այժմ ունի թէնիս, Պասքէթ-պօլ, հորիզոնական ու զուգահեռ ձողեր եւ սրահի զանազան խաղեր՝ ինչպէս փինկ Ժոնկ, ճատրակ եւ այլն:

Պէյրուսի մասը վերջացնելէ առաջ, աւելորդ չենք նկատեր քանի մը տող գրել անոր տարեկան տօնահանդէսի մասին : Մասնաճիւղը իր տարեկան ծախսերը հոգալու, դաշտի ու Ակումբի յետնեալ պարտքերը փակելու համար, երեք տարիներէ ի վեր Յունիս ամիսին կուտայ բացօթեայ տօնահանդէս մը, որոնցմէ առաջին ու երկրորդը տեղի ունեցան, Պէյրուսի քաղաքապետի բարեհաճ եւ բացառիկ արտօնութեամբ, քաղաքապետարանի ընդարձակ եւ ծաղկաւէտ պարտէզին մէջ, ու վերջինը իւր Ակումբ-պարտէզին մէջ :

Այս տօնահանդէսները իսկական խրախճանքի ու վայելքի ժամեր հայթայթելով ժողովուրդին, որուն համար այլեւս պահանջք դարձաւ Հ. Մ. Ը. Մ. ի Տօնահանդէսները, ամէն անգամ միութեան 10.000 Քրանքի զուտ հասոյթ մը կ'ապահովեն, որոնցմով այսօր Պէյրուսի մասնաճիւղը կրցաւ գեղեցիկ Փութպոլի դաշտի մը եւ Ակումբի մը տէրը դառնալ :

Մասնաճիւղի անդամներուն թիւն է 250, սկաուտներունը՝ 40, իսկ տարեկան պիտճէն՝ 40.000 Քրանք :

2. ԴԱՄԱՍԿՈՍ .— Մեր շրջանի երկրորդ կազմուած մասնաճիւղն է Դամասկոսը, որուն նախաքայլը առնողը եղած է եղբ. Լեւոն Աբգարեան : Առաջին տարիները եղած են առաւելապէս կազմակերպումի շրջան, ու մարմնակրթանքի հանդէպ ժողովուրդի ունեցած բացասական դիրքն ու անդիտակցութիւնը պատճառ եղած են անոր ոչ յարաճուն վերելքին : Սակայն 1928ին կը սկսի իր դործի ընդարձակման



Պէյրուս .— Սկաուտական երգման արարողութիւն

չրջանը, ուր հետզհետէ իր շուրջ կը համախմբուին գաղութի առողջ երիտասարդութիւնը: Շուտով կ'ունենայ Սուրբիոյ եւ Լիբանանի ամենաուժեղ Ֆութպոլի խումբը ու տարիներ կը պահէ զայն որուն շատ մը մրցումները Պէյրութի մէջ՝ ըլլայ տեղական խումբերուն դէմ, ու մանաւանդ Պաղէստինի անդլ. ոստիկաններու եւ բանակին խումբերուն դէմ, ստեղծած է անօրինակ խանդավառութիւն, ուր բազմահազար ժողովուրդը, իսկոյն յաղթանակին իր սիրած Ֆութպոլիստներուն, անվերջ ծափահարութիւններով ու ըստ բացականչութիւններով ուսամբարձ կը հեռացնէր զանոնք դաշտէն :

Դժբախտաբար զգալիօրէն տկարացած է այդ խումբը ներկայիս, իր խաղացողներուն գործի բերումով մեկնած ըլլալուն պատճառով : Այժմ ունի 3 Ֆութպոլի խումբեր, 2 պասքէթ-պօլի եւ մէկ աղջկանց : Անդամներուն թիւն է 90, սկաուտներունը՝ 50, եւ տարեկան պիւտճէն՝ 10.000 Ֆրանք :

3. ՀԱԼԷՊ .— Հպարտ ենք արձանագրելու, որ Հալէպը Սուրբիոյ եւ Լիբանանի Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպութեան պատուոյ տեղը կը դրաւ, 60 հազարի հասնող հայութեան մէջ միակ պլպլացող ճրագն է, որ իր հովանիին տակ առած է գաղութի ամենաառողջ տարրը՝ պատանի - երիտասարդութիւնը, անոր կուտայ Ֆիզիքական դաստիարակութեան հետ արժանաւոր Հայեր դառնալու մտային պաշարը :

Կազմուած 1925ին, միաձուլումովը տեղւոյն « Համագասպ » , « Տալուրիկ » եւ « Կայծակ » անջատ խումբերուն, այսօր միակ մարմնա-



Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ - Դամասկոս խառն կազմը, ընդդէմ Եգիպտական Երկրորդական վարժարաններու խառն խումբին, 1939ին :

կրթական միութիւնն է, որ ուժ եւ կշիռ ունի մարմնակրթական շար-
ժումը ղեկավարելու :

Իր ընդարձակ մարզադաշտը, ուր կողք կողքի կը գտնուին
Ֆութպօլ, պասքէթ-պօլ, թէնիս, շուետական մարզանք, ժամադրա-
վայրն է Հայէպահայութեան մարզասէր հասարակութեան : Առանձին
առանձին յանձնախումբեր, իւրաքանչիւր խաղի յատուկ, եւ վարչու-
թեան հովանաւորութեանը տակ, բարի նախանձէ դրդուած, ու մէկ-
զմէկ գերադանցելու ազնիւ նպատակով, տարուէ տարի աւելի զգալի
նուաճումներ կը կատարեն, կը ստուարացնեն իրենց շարքերը, կը հա-
ւասարակչուն վարչութեան պիտոճէն, ու կը դաստիարակեն իրենց
չուրջ համախմբուած բազմութիւնները :

Սկսուտական խորհուրդը, մէկը ամէնէն գործունեայ յանձնա-
խումբերէն, ունի այսօր 300 սկսուտներ իր վարիչ առաջնորդներով,
Երէցներու փաղանքով եւ դայլուկներով, որոնց թիւը շատ դիւրին
կրնայ բարձրանալ 1000ի եթէ հնարաւոր ըլլայ ամէն դիմողի գոհա-
ցում տալ, ու մանաւանդ եթէ վերջերս սուրիական կառավարութիւնը
որոշ արդեւքներ չդնէր առանձին խմբաւորումներու :

Սկսուտները ամէն տարի բանակումի կ'երթան Հայէպի շրջանի
Հայ գիւղերը, մեծ խանդավառութիւն ստեղծելով հայ գեղջուկներուն
որոնք շատ սիրով կը հիւրասիրեն մեր սկսուտները ու կը մեծարեն
դանոնք մեզրով, կաթով եւ կարկանդակներով :

Թէնիսի յանձնախումբը իր շարքերուն մէջ կը համրէ գաղութի
լուսավոյն տարրերը, կ'ունենայ ախոյեանական մրցաշարքեր, որոնց
հետաքրքրութեամբ կը հետեւի ժողովուրդը :

Ֆութպօլը կ'ընթանայ միշտ յաջող, մրցումներուն միշտ ներկայ
կ'ըլլայ Հայէպի Հայութիւնը. այժմ ան կը համարուի քաղաքի լաւա-
գոյն խումբը :

Հայէպի մասին գրելու ժամանակ աւելորդ չենք համարիր քանի
մը տող եւս գրել Հ. Մ. Ը. Մ. ի տարեկան միջմասնաճիւղային մրց-
ցումներուն մասին որոնք Վ տարիներէ ի վեր (3 տարուան բացառու-
թեամբ մը, որոնք կատարուած են Պէյրութի մէջ) տեղի կ'ունենան
Հայէպի մէջ, Չատիկի կիրակի եւ երկուշաբթի օրերը : Սոյն ախոյե-
նական մրցումներուն կը մասնակցին Սուրիոյ եւ Լիբանանի բոլոր
մասնաճիւղերը, որոնք բաժնուած են Ա. եւ Բ. դասի (catégorie) :

Չատիկուան հայկական տօներուն, ուր Հայէպը տակաւին կը պահէ
իր բոլոր աւանդական սովորութիւնները, Հ. Մ. Ը. Մ. ի շենչող տղա-
քը եկեղեցիէն մինչեւ մարզադաշտ նոր կեանք ու անսահման ուրա-
խութիւն կը տարածեն ամէն կողմ : Ֆութպօլի մրցումներէն վերջ, ուր

Ա. եւ Բ. դասի ախոյեանները կը ստանան բաժակներ, տեղի կ'ունենայ սկաուտներու եւ Ֆուլթպոլիստներու ընդհ. տողանցքը, առաջնորդութեամբ սկաուտական Փանֆառին, ու երեք եռագոյններուն՝ Փրանսական, սուրիական եւ հայկական :

Ներկայ եղող հանդիսականները, որոնց թիւը միշտ ալ 5000ը կ'անցնի, մրցումներէն աւելի այս տողանցքին համար է ժողովուրդին փափաքն է տեսնել Հ. Մ. Բ. Մ. ի մրցումները Հալէպի մէջ, ուր մեծով եւ փոքրով ոտքի վրայ եւ ընդհանուր ծափերու ու խանդավառութեան մէջ կը տեսնէ տողանցքը 1000ի չափ մարդիկներու եւ սկաուտներու, որոնք համաչափ քայլերով եւ հպարտ կուրծքերով կը տողանցեն ժողովուրդին առջեւէն ու նոյն պահուն արձակուած հարիւրաւոր աղաւնիներ, մեզ վերյիշել կուտան վաղեմի մեր նաւասարդեան տօները: Թէ որքան տպաւորիչ է Հ. Մ. Բ. Մ. ի այս տողանցքը ոչ միայն երիտասարդութեան մէջ որու սիրտէն կը խօսի, այլ մանաւանդ սամիկ դասակարգին մէջ, յիշենք դէպք մը որուն ահանատես եղանք այս տարի Հալէպի մէջ :

Չատիկի երկուշաբթին արդէն մրցումները լրանալու վրայ են, սկաուտական շեփորը կուտայ ընդհանուր հաւաքոյթի աղբանշանը, ինչ որ կը թուի թէ, քիչ վերջ տեղի պիտի ունենայ տողանցքը: Նոյն պահուն ընկերով մը հետ դաշտի մուտքի վրան, մենք ալ ալընդէտ կը սպասենք տողանցքին, երբ մեզի կը մօտենայ ալիհեր, 60ի մօտ ծերունի կին մը, ափին մէջ բռնած Վ Փրանքը մեզի երկարելով : կը խնդրէ մեզմէ որ ընդունինք դրամը, ու արտօնենք իրեն ներս մտնել: Կը հետաքրքրուինք իրմով, որմէ յայտնի կ'ըլլայ որ, նոյն ծերունին ամէն տարի անրվէպ, մրցումները լրանալէն վերջ կուտայ դաշտ, ներկայ կ'ըլլայ տողանցքին ու արցունքոտ աչքերով կը հեռանայ մարդադաշտէն: Ի հարկէ իրեն վերադարձուցինք դրամը, ու արտօնեցինք իրեն մասնակից ըլլալ, հաղարաւոր ուրիշներու խանդավառութեան եւ յուզումներուն, որոնց բոլորին համար նոյն տպաւորիչ եւ խրախուսիչ հանգամանքը ունի սկաուտներու եւ Ֆուլթպոլիստներու ընդհանուր տողանցքը :


Հալէպի մասնաճիւղը ունի 250 անդամ, 300 սկաուտներ եւ 15.000 Փրանքի պիւտճէ :

4. **ՉԱՀԼԷ.** — Մասնաճիւղի կազմութեան ու զայն ամուր հիմերու վրայ դնելու պատիւը կը մնայ Ճիպէյլի նախկին սաներէն եղբ. Ներսէս Գազազեանի (այժմ մեկնած Չիլի), իր կողքին ունենալով նոյնքան հաւատաւոր երիտասարդներ յանձին՝ եղբ. Կիրակոս Թապազճեանի ու Սարգիս Ունճեանի (այժմ Պէյրութ), որոնք 1927ին հիմը կը դնեն Չահլէի մասնաճիւղին :

Նոր մասնաճիւղը իր առաջին քայլերուն մէջ դժուարութիւններու չհանդիպելու համար կապ կը հաստատէ Պէյրութի քոյր մասնաճիւղին հետ, որ անհրաժեշտ օժանդակութիւնը, բարոյական թէ նիւթական չի պլանար, նորակազմ մասնաճիւղը զօրացնելու եւ ժողովրդականացնելու համար, որուն մէջ մեծապէս կը յաջողի, ու Չահլէի մասնաճիւղը դանդաղօրէն կը սկսի իր մարմնակրթական աշխատանքներուն, իր շուրջ հաւաքելով մարդասէր երիտասարդութիւնը: Այդ թուականէն ի վեր մասնաճիւղը կը պահէ իր դոյութիւնը, ու իր ուժերուն ներած չափով կը ճգնի իրագործել Հ. Մ. Ը. Մ. ի նպատակը:

Ունի 25 անդամներ եւ 2000 Քրանքի պիւտճէ:

5. ԲԱՅԱՔ. — Հազիւ քանի մը տարիներու կեանք ունի սոյն մասնաճիւղը. հակառակ այդ կարճ ժամանակին կրցած է արդարացնել իր դոյութիւնը, Բայաքի նման շատ փոքրիկ դադութին մէջ, որուն յաջողութեան մեծագոյն դրուականը եղած են Պալրդեան Յակօր եւ Օննիկ եղբայրները, որոնք որպէս քաջ հեծելանաւորներ մեծ համբաւ ունին մեր շրջանին մէջ: Ասոնցմէ երէցը՝ Յակօր մինչեւ 1935 անպարտելի մնացած ըլլալով հեծելանիւի միջազգային բոլոր մրցումներուն մէջ,



Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի ամբողջական կազմը



Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի սկաուտներու խմբանկարը

անկէ ի վեր իր տեղը տուած է իր կրտսեր եղբոր՝ Օննիկին, որը արժանաւորապէս կը պահէ իր եղբոր դիրքը: Երեք յաջորդական տարիներուն, Ֆրանսացիներու Médail Militaireի կազմակերպած հեծելանիւի միջազգային մրցումներուն մէջ, Օննիկ շահած է առաջնութիւն, ստանալով նոյնպէս դրամական պարգեւներ եւ ախոյեանական բաժակ:

Բայաքի Փուլթպուլի խումբը, քանիցս իր ունեցած մրցումներով տեղւոյն Ֆրանսական խումբին հետ, եղած է յաղթական, իսկ այս տարուան միջմասնաճիւղային Փուլթպուլի մրցումներուն Բ. դասի խումբելու մէջ մնաց Ֆինալիստ:

Իր անդամներու թիւը կը հասնի 30ի, իսկ պիւտճէն՝ 1000 Ֆրանք:

6 ԹՐԻՓՈՂԻ.— Մեր շրջանի ամէնէն դժբախտ մասնաճիւղը եղաւ Թրիփոլին: Թուականէս 4 տարի առաջ, երբ կառավարական հրամանագրով մը կը լուծուէին բոլոր մարդական միութիւնները ըլլան առոնք հայ թէ արաբ, բոլոր մեր մասնաճիւղերը յաջողեցան քանի մը ամիսներու մէջ նոր հրամանագիր վերստանալ իրենց մարդական գործունէութիւնը շարունակելու համար, բացի Թրիփոլիի մասնաճիւղէն, որ հազիւ այս տարի կրցաւ այդ արտօնագիրը ստանալ, որով վերջին 4 տարիները Թրիփոլիի համար եղան անգործունէութեան շրջան մը: Այժմ սակայն երբ այլեւս արդելք չկայ, վստահ ենք թէ մասնաճիւղը նոր թափով մը պիտի սկսի իր աշխատանքներուն վերջին տարիներու թափուր գործն ալ աւելիով լրացնելու համար, մանաւանդ որ ներկայիս իր մէջ կը համրէ քանի մը նոր եւ փորձառու անդամներ յանձին՝ Չպուզձեան եղբայրներու՝ Լաթաքիայէն, ու եղբ. Սիմոն Թերճանեանի Պէյրութէն: Թրիփոլի կազմուած է 1928ին, սկառուտներ չունի, անդամներու թիւը կը հասնի 40ի, իսկ պիւտճէն՝ 3000 Ֆրանք է:

7. ԼԱԹԱՔԻԱ.— Հիմնուած թուականէն (1928) մինչեւ 1933, զբաղած է առաւելապէս Փուլթպուլով եւ դասախօսական կրթիչ հաւաքոյթներով: Իր Փուլթպուլի խումբը յաճախ մրցումներ ունեցած է տեղւոյն գինո:որական խումբին հետ գնահատելի արդիւնքներով:

1933ին առաջին անգամ կազմուած է սկառուտական խմբակը, որուն թիւը ներկայիս կը հասնի 30ի: Մասնաճիւղը տեղացի խումբի մը հետ միասին ունի մարդադաշտ մը, ձրիօրէն տրամադրուած կառավարութեան կողմէ, զոր մեր եղբայրները համերաշխօրէն տեղացիներուն հետ կ'օգտագործեն:

Մասնաճիւղի գործը սակայն չի սահմանափակուիր մարդական գործերու մէջ, այլ ան իր բաժին օժանդակութիւնը մեծ չափով բե-

րած է դադութի դանազան կրթական ձեռնարկներուն, կազմակերպել լոյ՛ հանդէսներ եւ դասախօսութիւններ ի նպաստ դպրոցին, որմէ դուրս իր մասնակցութիւնը բերած է բոլոր համազգային տօներուն, որոնք նպաստած են որ Հ. Մ. Ը. Մ. ը դառնայ ժողովրդային համա - կրանքին ենթակայ :

Այժմ ունի 25 անդամ, 30 սկաուտներ 1500 Քրանքի պիւտճէ :

8. ԳՐԸՔԽԱՆ. — Հակառակ դադութի սակաւաթիւ Հայերուն, Հ. Մ. Ը. Մ. ը յաջողած է իր դրօշին տակ համախմբել փոքրաթիւ եւ կղզիացած դադութի բացարձակ մեծամասնութիւնը, որուն մէջ իր անփութարինելի աջակցութիւնը բերած է դադութի ծանօթ ազգայիններէն եղբ. Արամ Մինասեան : Ինչպէս ամէն տեղ, հոս եւս երբ 1931ին կազմուեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղը, միայն 10 անդամներ քաջութիւնը ունեցան առաջին քարը դնելու, բայց այդ տասը շուտով բարձրացաւ 20ի, 30ի : Մասնաճիւղի դործունէութեան առանցքը կը կազմէր Փութպոլը, բայց վերջին տարին արդէն կազմած ըլլալով իր սկաուտական բաժինը, տէրն է այժմ սկաուտական լրիւ խմբակի մը : Իր Փութպոլի խումբը միշտ դործի վրայ է, քաղաքին մէջ ներկայանայի խումբեր չդոնուելուն համար, յաճախ մրցումներու համար կ'երթայ մօտակայ քաղաքները ինչպէս՝ Ալեքսանտրէթ, Անտիօք, Բիհանի եւ Հայէպ : Այս տարի իր խումբը Հալէպի մէջ շահեցաւ միջմասնաճիւղերուն Բ. դասի ախոյեանութիւնը :

Ունի իր սեփական դաշտը, անդամներուն թիւն է 40, սկաուտներուն 45, իսկ պիւտճէն 1000 Քրանք :

9. ԳԱՄԸՇԼԸ. — Հիմնուած 1931ին, Պ. Պ. Ներսէս Պոյաճեանի, Գարրիէլ Սարգիսեանի եւ կարգ մը մարդասէր երիտասարդներու նախաձեռնութեամբ :

1934ին Պանք տը Սիրիի քաղաքի մասնաճիւղին տրամադրած բաժակը շահած եւ այդ առիթով մեծ հետաքրքրութիւն ստեղծած է Փութպոլի շուրջ :

1937ի դարունէն սկսեալ քաղաքական դէպքերու բերումով անդործութեան դատապարտուած է, եւ վերջերս սկսած է կրկին աշխատանքի լծուիլ :

1938 յուլիս 31ին ազուճ մը վարձուած է, եւ այս առթիւ իրեն միացած են երկու խումբեր, արժանանալով ժողովուրդի քաջալերանքին եւ խանդավառութեան :

Սկաուտիզմը վերակազմուած է եւ մասնաւոր ոյժ կը տրուի գայլիկներու կազմութեան :



Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. Ի Ա. խումբը 1937ին



Հ. Մ. Ը. Մ. Դամասկոս.— Սկաուտական խումբ

Անդամները ունին իրենց առանձինն համազգեստը :

Անդամներու ընդհ. թիւն է 44, Ֆուլթայոլի 3 խումբերով :

Ունին փոքր դրադարան մը :

10. ԱԼԵՔՍԱՆՏՐԻԹ .— Կազմուած է 1932ին : Նման միւս մասնա -
ճիւղերուն , Ալեքսանտրէթն ալ , սկզբնաւորութեան ունեցաւ ծանր
դժուարութիւններ , բայց յաջողեցաւ յաղթել բոլոր խոչընդոտներու ,
հասնելու համար կարճ ժամանակուայ մը մէջ տիպար մասնաճիւղի մը
աստիճանին : Մասնաճիւղի ամէնէն շատ աշխատանքը դարձած է իր
Ֆուլթայոլի խումբին շուրջ , որ 1934ին նախ շահեցաւ միջմասնաճիւ -
ղային մրցումներու Բ . դասի ախոյեանութիւնը : Նայած նաեւ իր
խումբի զգալի յառաջդիմութեան 2 տարիներէ ի վեր այդ խումբը
դրուած է Ա . դասի խումբերու մէջ :

11. ԱՆՏԻՈՔ .— Ալեքսանտրէթի ինքնավար Սանճաքի երկրորդ
բաղմամարդ քաղաքն է Անտիոք : Յրուած հայութեան մշտարթուն բե -
կորները , թէեւ քիչ մը ուշ բայց եւ այնպէս զգացած են նորահաս երի -
տասարդութիւնը խանդավառող ու ազգը հայ պահելու նկրտող կազ -
մակերպութեան՝ Հ . Մ . Ը . Մ . ի անհրաժեշտութիւնը նաեւ իր փոք -
րիկ դաղութի մէջ : 1932ին 15 անդամներ ի մի հաւաքուելով կը կազ -
մեն առժամեայ մարմին մը մինչեւ որ իրենց թիւը կը հասնի 25 ու կը
դառնան օրինաւոր մասնաճիւղ՝ կապուելով Շրջ . Վարչութեան :



Հ . Մ . Ը . Մ . Հալէպ .— Կըրլ կայտերը 1934ին

Մասնաճիւղի գործի հիմքը առաւելապէս կը կազմէ Փուլթալը ,
ցարդ ունեցած իր մրցումները ըլլան ատոնք օտարներու թէ քոյր
մասնաճիւղերու հետ , շատ քիչ բացառութեամբ , վերջացած են ի
նպաստ Անտիօքի խումբին : 1933ին շահած է նաեւ միջմասնաճիւղա-
յին Բ . դասի ախոյեանութիւնը :

Մօտ 5 տարի է ունի սկաուտական խումբեր , ունենալով նաեւ իր
սեփական ահումբը :

Անդամներու թիւը այժմ կը հասնի 35ի ու պիւտճէն 2000 Փրանքի :

Պարագայ մը , որ մեզ կը մտահոգէ , այդ մեր երեք մասնաճիւղե-
րու Գրըք - Սանի , Ալեքսանտրէթի եւ Անտիօքի ապագային ունենալիք
հաւանական կազմալուծումն է , որովհետեւ անոնք մէջն ըլլալով Հա-
թայի նոր ինքնավար պետութեան , թրքական կառավարութիւնը չախ-
տի թոյլատրէ կը կարծենք անոնց գործունէութիւնը : Մնաց որ արդէն
չատեր այժմէն հեռացած են այդ վայրերէն , որով ինքնաբերաբար ե-
թէ արդէլ իսկ չըլլայ , ատանց աշխատողի գործ մէջտեղ չի կրնար
դալ անշուշտ :

12. ՀՈՄՍ .— Կազմուած 1932ին , ցարդ կը պահէ իր գոյութիւնը
ուժերու եւ պայմաններու ներած չափով : Վարչութիւնը վառ կը պահէ
մարդական սէյրը երիտասարդութեան մէջ : Ունի Փուլթալի խումբ մը ,
որ միշտ կը մասնակցի միջմասնաճիւղային մրցումներուն : Սարքած է
ողիմպիական խաղեր քաղաքի սպայից վարժարանի կամ տեղական
խումբերու հետ : Շարաթը մէկ անդամ կ'ունենայ մարդական եւ ա-
ռողջապահական դասախօսութիւններ :

Անդամներու թիւն է 24, իսկ պիւտճէն 1000 Փրանք :

13. ՃԱՐԱՊԼՈՒՍ .— Կազմուած է 1934, յունուարին ու անկէ ի վեր
Հ . Մ . Ը . Մ . ի անվեհեր դրօշը կը ծածանի նաեւ Սուրիոյ հեռաւոր այս
փոքրիկ գիւղաքաղաքին մէջ , ուր հաւատաւոր երիտասարդներ ի մի
եկած են Հ . Մ . Ը . Մ . ի գործին ի սպաս դնելու իրենց բաժինը : Գործի
գլուխ անցնող երիտասարդներու անձնագոհութեան , ու աշխատելու
պատրաստակամութեան քաջ վստահ կը յուսանք տեսնել աւելի ըն-
դարձակ գործունէութիւն մը մօտ ապագային : Այժմ մասնաճիւղը ու-
նի 25 անդամ եւ 25 սկաուտ , իսկ պիւտճէն 750 Փրանք :

14. ՊՈՒԲՃ - ՀԱՄՈՒՏ .— Պէյրութի ամէնէն բաղամարդ ար-
ուարձանն է Պուրճ - Համուտ , ուր համախմբուած է Պէյրութահայու-
թեան մէկ ստուար մասը : Հ . Մ . Ը . Մ . ի մասնաճիւղի հիմքը դրուե-
ցաւ 1934ին . առաջին երկու տարիները աւելի նախապատրաստական

չըջան մըն էր որ բոլորեց մասնաճիւղը, բայց այժմ արդէն ընդարձակած է իր գործունէութեան սահմանները: Իր Փութպոլի խումբի կողքին ունի 3 պասքէթպօլի եւ մէկ վոլի - սօլի խումբեր: Աւելի խրախուսիչ են իր տարած աշխատանքները սկստական շարժման մէջ, ուր այժմ ու՛ է աւելի քան 120 սկստական դայլուկներ: Անդամներու թիւն է 60, իսկ տարեկան պիւտճէն 2000 Փրանք:

15. ՌԱՍ - ՈՒՂ - ԱՅՆ. — Թէեւ կազմուած 1933ի գարնան, բայց կարգ մը տեղական արդէլքներ պատճառ եղած են, որ մասնաճիւղը պէտք եղած մարդական աշխատանքները չկարենայ տանիլ: 1937ի սակայն վերակազմուելով, 3 որ վարչութիւնը եռանդուն կերպով փարած է աշխատանքի, աւելի ուժ տալով սկստական շարժման: Ունի այժմ 24 անդամներ ու 15 սկստուներ: Շաբաթը 3 անգամ կ'ունենայ Փութպոլի խաղերը ու շուետական մարզանք:

16. ԱՐԱԲ - ԲՈՒՆԱՐ. — Կազմուած է 1935ին, կը պարապի առաւելապէս Փութպոլով եւ շուետական մարզանքով, փափաք կայ ու նաեւ տրամադրութիւն սկստական շարժում մը յառաջ բերելու, բայց կը պակսի անհրաժեշտ մարդը՝ մարդիչը: Ունի միայն 32 անդամ եւ 500 Փրանքի պիւտճէ:

17. ՆՈՐ ԳԻՒՂ. — Ինչպէս Պուրճ - Համուտը Պէյրութի, նոյնն է Նոր - Գիւղը Հալէպի համար, որը թէեւ 4 տարիներու կարճ կեանք մը ունի, սակայն տիպար եւ օրինակելի մասնաճիւղերու շարքին պէտք է դասել իր կայտառ եւ կարգապահ սկստուներով եւ աւելի քան 6 Փութպոլի խումբերով, որոնցմէ առաջինը այս տարի մասնակցելով միջմասնաճիւղային մրցումներու Ա. դասի խումբերու շարքին, իր դեղեցիկ եւ տալաւորիչ խաղարկութեամբ բոլոր ներկաներուն գնահատանքին առարկայ դարձաւ: Նոյն է պարազան իր սկստուներուն եւ դայլիկներուն, որոնք համագործակցաբար Հալէպի սկստական խմբակներուն փայլը կը կազմեն բոլոր հանդէսներուն եւ Փութպոլի հանդիպումներուն:

Նոր - Գիւղի անդամներուն թիւը կը հասնի մօտ 100ի եւ սկստուներունը 150ի, իսկ պիւտճէն 2000 Փրանքի:

18. ԱԶԷԶ. — Հալէպէն հազիւ մէկ ժամ հեռաւորութեան վրայ, ու թրքական սահմանակից, փոքրիկ գիւղաքաղաք մըն է Ազէզը, ուր 3 տարիներէ ի վեր կազմուած է Հ. Մ. Ը. Մ. մասնաճիւղի, որուն անդամները ամէն ինչ են իրենց քաղաքին համար: Իրենց մարդական պարապումներէն դուրս, որ ներկայիս միայն կը որ գնդակին շուրջ կը


դառնայ, կիրակի օրերը կը դառնան դպիր եւ տիրացու: Կը սարքեն հանդէսներ ի նպաստ տեղական դպրոցին ու անոր աշակերտներուն մէջ սկսած են սիրել տալ մարզանքն ու մարմնակրթական այլ ճիւղերը:

Ազէզը ունի նաեւ սկսուածներու փոքրիկ խմբակ մը: Իր անդամներուն թիւն է 30, իսկ տարեկան պիւտճէն 1000 Փրանք:

19, 20, 21. ԵՐՈՒՍԱՂԷՄ, ՀԱՅՖԱ, ԱՄՄԱՆ. — Թէեւ կապուած եւ համարատու Սուրիոյ եւ Լիբանանի շրջանային վարչութեան, չպիտի դրենք այս մասնաճիւղերու մասին, որովհետեւ որպէս առանձին շրջան, իրենց մասին մասնաւորապէս պիտի գրուի ժողովածոյին մէջ, Պաղեստին շրջան խորագրին տակ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. — Սուրիոյ եւ Լիբանանի Շրջ. վարչութիւնը, ընտրուած 5րդ պատղամաւորական ժողովէն, կը գտնուի Պէյրութի մէջ, որուն մաս կը կազմեն հետեւեալները. —

- Պ. Պ. Օննիկ Պէօճէքեան՝ ատենապետ
- Թադէ Գարագալփաքեան՝ ատենադպիր
- Ալոյէո Յակոբեան՝ գանձապահ
- Խորէն Սուգիասեան՝ հաշուապահ
- Օննիկ Փիլիկեան՝ Աթլեթիք խմբապետ




Հ. Ա. Ը. Մ. Հալէպ. — Ֆութպոլի եւ քէնիսի դաշտերը

Շրջանային վարչութիւնը, որպէս շրջանի վերին եւ պատասխանատու մարմին, իր գործն է ըրած հսկել Հ.Մ.Ը.Մ.ի ընդհ. ծրագրի ու ներքին կանոնադրի անթերի գործադրութեան: Հսկել նաեւ մասնաճիւղերու ընդհանուր գործունէութեան վրայ, ուղղութիւն տալ անոնց մարզական գանազան ձեռնարկներուն, ու իր ներած չափով օժանդակել:



Հ. Մ. Ը. Մ. Հալէպ. — Սկաուտներու խմբանկար մը 1928ին



Հ. Մ. Ը. Մ. Հալէպ. — Ողիմպիական դաշտահանդէս, 1936

կել կարօտ մասնաճիւղերուն : Յարաբերութիւն մշակել քոյր մասնա - ճիւղերու միջեւ , ու դանոնք սերտօրէն կապել իրարու , ու ապա մա - մուլի եւ բեմի միջոցաւ աշխատիլ Հ . Մ . Ը . Մ . ի այս հոյակապ ու վսեմ շարժումը աւելի տարածելու եւ խորացնելու հայ ժողովուրդին մէջ :

Շրջանային վարչութիւնն է որ ամէն տարի կը կազմակերպէ միջ - մասնաճիւղային Փութպոլի ախոյեանական մրցումները , ու յառաջի - կային նաեւ ծրագիր ունի կազմակերպելու միջմասնաճիւղային ողիմ - պիականը :

Շրջ . վարչութեան թելադրութեամբ , ամէն տարի Նոյեմբեր ամի - սէն , բոլոր մասնաճիւղերը կը տօնեն Հ . Մ . Ը . Մ . ի օրը :

Ահաւասիկ Հ . Մ . Ը . Մ . ի դործը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ : Ներկայացնելով դայն իր ամփոփ դիժերով , դադափար մը տուած ըլլալ կը կարծենք այն կարեւոր եւ կենսական դերին , որուն լծուած են Հ . Մ . Ը . Մ . ի բոլոր մասնաճիւղերը :

Այդ գործը սակայն կ'ըլլայ այնքան փայլուն եւ բեղնաւոր որքան հայ ժողովուրդը ինչպէս ցարդ , յետ այսու ալ շարունակէ ըլլալ ան - խորտակելի յենարանը մեր կազմակերպութեան . մեր ժողովուրդին անսպառ ակերէն կը ստանանք մեր առօրեայ ուժը ու կենսունակու - թեան մշտածոր ու բիւրեղեայ աւիշը :

Պէյրուք , Օգոստոս 22 , 1938

ՊԱՂԵՍՏԻՆ

Պաղեստինի մէջ հաստատուած ափ մը հայութիւնն ալ կրցաւ պատուաբեր դիրք մը գրաւել տեղւոյս մարդական ասպարէզին մէջ :

Արարատեան — Վասպուրական որբանոցներու , Միջագետքէն Ե - րուսաղէմ փոխադրուելէն ետք՝ հայ որբ մարդիկներ շուտով սկսան մրցանակներ շահիլ միջազգային մրցահանդէսներուն մէջ , բայց , դժբախտաբար , այդ որբանոցներու Սուրիա փոխադրուելուն պատ - ճառաւ՝ հայ մարդական կեանքը դարձեալ իր լճացած վիճակը վեր - ստացաւ :

Near East Relief Նազարէթի որբանոցն ալ ունեցաւ իր մարդիկնե - րը եւ վերջին տարիները կրցաւ կազմել Փութպոլի խումբ մը , որ տի - րացաւ Նազարէթի ախոյեանութեան , կազմակերպուեցաւ նաեւ ո - դիմպիական մը 1925 — 26ին :

1926ին կազմուեցաւ Որբ . Ընդհ . Միութեան Երուսաղէմի մաս - նաճիւղը , որ , իր Փութպոլի խումբին միջոցաւ կրցաւ արծարծել տեղ - լոյս հայ պատանիներուն սրտին մէջ բռնկած եռանդը՝ դէպի Փիզի-

քական կրթութիւն: Բայց, դժբախտաբար, այս մասնաճիւղն ալ շատ կարճ կեանք մը ունեցաւ:

Յիշեալ մասնաճիւղի լուծումէն անմիջապէս վերջ՝ կազմուեցաւ « Արծիւ » Փութպոլի խումբը, որ կարճ ժամանակուան մը ընթացքին մեծ համբաւ չաճեցաւ տեղւոյս անգլիական, յունական, հրէական եւ այլ խումբերուն դէմ տարած իր վառուցող յաղթանակներով:

« Արծիւ » խումբը մասնակցեցաւ Երուսաղէմի 1930 — 1931 երկրորդական categoryի միջազգային մրցումներուն եւ այդ շրջանին մեծ անուն չաճեցաւ: Սոյն խումբին վարիչն էր Պօղոս Պետրոսեան:

« Արծիւ»ի տարած յաղթանակներէն քաջալերուած, խումբ մը մարզասէր երիտասարդներ՝ ղլխաւորութեամբ Պ. Կարօ Հրաչին եւ Պօղոս Պետրոսեանին՝ հիմը կը դնեն Պաղեստինի Հայ Մարմնակրթական Միութեան, որուն հովանաւորութիւնը կը ստանձնեն՝ Տ. Կիւրեղ վրդ. Իսրայէլեան, Պ. Պլաշֆօրտ, Տոքթ. Վ. Գալպիեան, Լեւոն Գէորգեան եւ Յակոբ Մելիքեան:

Այդ շրջանին Կ. Հրաչ կ'ուղչ հիմնել Հ. Մ. Ը. Մ., բայց վանքի իշխանութիւնը հակառակ կը հանդիսանայ, որով Հ. Մ. Ը. Մ. ի տեղ միութիւնը կը կոչուի Պ. Հ. Մ. Մ.:

Պ. Հ. Մ. Մ. սկսաւ իր շուրջ հաւաքել տեղւոյս հայ պատանիներն ու երիտասարդները, շուտով ունեցաւ պասքէթպօլի եւ Փութպոլի երկու լաւագոյն խումբեր:

1931ին մասնակցեցաւ Y. M. C. A.ի սարքած ողիմպիականին եւ finalist հանդիսացաւ չաճելով 3րդ: Տարիէ տարի Պ. Հ. Մ. Մ. կորսընցուց իր համբաւը:

ԵՐՈՒՍԱԶԻՄ

Երուսաղէմի մարզասէր երիտասարդութեան մէջ շատոնց արդէն ծագում առած էր դադափար մը միացնելու համար քաղաքիս բոլոր անջատ մարզական միութիւնները մէկ դրօշի տակ, Հ. Մ. Ը. Մ. ի կազմութեամբ:

Հիմը դրուեցաւ Հ. Մ. Ը. Մ. ին՝ մաս կազմելով Սուրիոյ, Լիբանանի շրջանին: Վարչութիւնը դործի լծուեցաւ: Յետոյ Փութպոլի խումբեր կազմուելով՝ մարզական ճիւղը մտաւ իր կանոնաւոր հունին մէջ:

Ծնորհիւ տարուած աշխատանքներուն, կարճ ժամանակի մէջ կարելի եղաւ անոր դրօշին շուրջ հաւաքել բաւական թիւով մարզասէր եւ դիտակից երիտասարդներ: «Աղատամարտ» Փութպոլի խումբը միացաւ այս նորահաղմ միութեան:



Հ. Մ. Ը. Մ. ի Երուսաղեմի ֆուտպոլի խումբը



Հ. Մ. Ը. Մ. ի Եափայի ֆուտպոլի խումբը



Հ. Մ. Ը. Մ. ի Եափայի ֆուտբոլի խումբը



Հ. Մ. Ը. Մ. ի Եափայի ֆուտբոլի խումբը

Անդամներու թիւը հասաւ 75ի :

Մէկ տարուան դործունէութիւնը բեղմնաւոր արդիւնք տուաւ իր բոլոր ճիւղաւորումներով :

Ա. Սկաուտական. — Դիմում եղաւ Երուսաղէմի «Հայ Բարեսիրական Միութեան» համաձայնութիւն դոյացնելու համար իրենց «Մասիս» սկաուտական խումբին եւ մեր նորակազմ խումբին միացման շուրջ: Բայց չեղաւ: Կարճ ժամանակուան ընթացքին ունեցանք 25 հոգինոց սկաուտական խումբ մը իր ամբողջ կազմով ու պիտոյքներով :

Մարզական. — Մարզական դործունէութիւնը լաւապէս առաջ տանելու համար, անմիջականօրէն պէտք կը զգացուէր խաղաղաշտի մը: Ուրախ ենք յայտարարելու որ, ունեցանք դայն ալ զոր պատրաստեցին մեր տղաքը :

Խաղաղաշտի շնորհիւ մենք ունեցանք, Փութպոլի եւ պասքէթպօլի զոյգ խումբերը, որոնք այսօր կը մրցին քաղաքիս լաւագոյն խաղացողներուն հետ :

Ատկէ վերջ կը սկսի մեր դործունէութիւնը մարզական ճիւղին մէջ: Կազմուեցան Փութպոլի չորս խումբեր: Ա. խումբը ունեցաւ մրցումներու երկար շարք մը անդլիական խումբերուն դէմ, որոնց մէջ ընդհանրապէս յաղթական կը հանդիսանայինք :

Հպարտութեամբ պիտի արձանագրենք մեր պասքէթպօլի խումբին տարած բարոյական մեծ յաղթանակը Գահիրէի Y. M. C. A խումբին դէմ: Մեր խումբը կը պարտուի այդ նշանաւոր խումբէն, որու մէջ միջազգային ողիմպիականի մասնակցող երեք խաղացողներ կային, 25—29: Մինչդեռ Y. M. C. A. Երուսաղէմը, որ ինքզինք Պաղեստինի ախոյեան կը նկատէր, եւ նաեւ յունական խումբերը չարաչար պարտուեցան անկէ :

Սկաուտական. — Սկաուտական աշխատանքը կանոնաւորապէս յառաջ կը տարուի, միշտ նորեր կուզան բաղմացնել շարքերը: Արշաւանքներ կը կատարուին :

Նաեւ ունինք ընթերցարան մը :

Ամսօրեայ շրջաբերական. — Ձեռնարկ մը որ կը նպաստէ մեր դործունէութեան: Երջաբերականին հրատարակութիւնը սկսաւ 1938 Յունուարին եւ կանոնաւորապէս լոյս կը տեսնէ ամէն ամիս, տպագրեալ:

Հայֆայի մեր մասնաճիւղին դիմումին վրայ՝ «Երջաբերականը» պատկանեցաւ զոյգ մասնաճիւղերուն :

Նոր լոյս տեսաւ մեր մասնաճիւղի առաջին հրատարակութիւնը « Ամսօրեայ շրջաբերական »-ի բացառիկ թիւ 1 « Սկսուտ »-ը, պատկերազարդ 48 էջ :

ԵԱՖԱ

ԵաՓա ունի փոքրիկ հայկական դաղութ մը՝ մօտ 800 հոգիով : 1927էն առաջ զանազան անուններու տակ մարդական խումբեր գոյութիւն ունէին, որոնք կանոնաւորութիւն չունէին : Ներկայիս, խումբերէն լաւագոյնը Նաղարէթի որբերու խումբն է, որ աւանց անունի կազմուած է իբրեւ Փութպոլի խումբ 1927ին : Այս նոյն շրջանին Յովհ. Պէրպէրեան, Յունաստանէն ԵաՓա հաստատուելով Հ. Մ. Ը. Մ. -ի դաղափարը կը յղանայ եւ Գազանճեանի նախաձեռնութեամբ 1928ին հիմը կը դրուի մարգասէրներու կողմէ Հ. Մ. Ը. Մ. -ի մասնաճիւղին : Հ. Մ. Ը. Մ. -ի այս մասնաճիւղը կարճ կեանք մը կ'ունենայ մինչեւ 1930, անդամ ունենալով 30 հոգի :

Այս շրջանին կ'ըլլան դասախօսութիւններ, Փութպոլի խաղեր որոնք բաւական յաջողութիւն ցոյց կուտան : Կը ծրագրուի լողալու մրցում մը սարքել, բայց դժբախտաբար չիրականանար ծրագիրը :

ԻՐԱՔ

Ասկէ մօտաւորապէս հարիւրամեակ մը առաջ, Միջագետքի մէջ հայ վարժարաններէն ներս մարմնակրթութիւն դրեթէ չկար : Սակայն ուրախալի է յիշելու որ 1876 թուին երբ Տիար Միհրան Սվաճեան Պոլսէն կուղայ Պաղտատ՝ իբր տնօրէն հայ աղագային Սուրբ Թարգմանչաց վարժարանին, անմիջապէս դարկ կուտայ մարմնակրթութեան, երբ եկեղեցւոյ շրջափակին մէկ կողմը յատուկ մարմնակրթարան մը կը հաստատէ վարժարանի կողքին, ուր ամէն օր մարմնամարդական վարժութիւններ աշակերտները կը կատարեն :

Երբ Անգլիացիները գրաւեցին Իրաքը, Մէյճըր Հ. Ի. Պաուլման 1919 թուին հիմը դրաւ պոյսքաուտութեան եւ պոյսքաուտ խումբեր կազմեց :

Հայերն ալ իրենց կարգին ունեցան Պաղտատի մէջ արիներու խումբը, որ մեծ մասամբ հայ դաղթական տղաքներէ կը բաղկանար :

Հպարտանքի տէր էինք հայ արիներու խումբին համար, որ այն ատենները շատ փայլուն շրջան մըն ալ ունեցաւ մինչեւ հայ որբանոցին փոխադրուիլը Պաղտատէն արտասահման : Սակայն ցաւալի է ըսել որ այսօր հայ պոյսքաուտի խումբ գրեթէ գոյութիւն չունի Իրաքի մէջ :

Պոյսքառուտութեան փայլուն շրջանին, կ'արժէ յիշել՝ ի մէջ այլոց, Աւետիս Վարդանեան եւ Լեւոն Մելքոնեան (Պաղտատցի) արաւօրէն յառաջդիմեցին իրենց բաժնին մէջ: Իսկ դովետի արժանի է Հրանտ Սաչեան՝ Զէյթունի չորս իշխաններու մէկ ընտանիքին անդամ, որ շատ կարճ ժամանակուան ընթացքին բարձր աստիճանի հասաւ:

Վ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսկաստանի ամբողջ հայութիւնը 25 — 30.000ը չանցնիր: Այս թիւը բաժնուած է փարսախներով հեռաւորութիւններու վրայ երկրի դանաղան կէտերը:

Ընդհանրապէս խօսելով բոլոր այն հայ դպրոցները որտեղ նոր եւ նորագոյն ուսուցիչներ կային, այնտեղ կար նաեւ մարզանքի դաս, անչուչտ ոչ այնքան մասնադիտական ձեւով. այդպիսին ունէին միայն Թաւրիզի գրեթէ բոլոր դպրոցները:

Երկար ժամանակ հայ դպրոցները ընդհատուած ձեւով եւ պատահար միայն ունեցեր են մարզանքի դասեր, եւ ունեցեր են այնքան ատեն ինչքան որ կարողացեր են ունենալ մարզանքի մասին քիչ թէ շատ դադափար ունեցող ուսուցիչներ, այսպէսով հայ դպրոցներու աշակերտութիւնը չէ կարողացեր ունենալ իր սրահումին արժանի մարզական կեանք մը: Այդ տեսակէտէն միշտ աւելի բախտաւոր են եղեր օտար այսինքն եւրոպական դպրոցներ յաճախող հայ աշակերտները:

Պարսկաստանի հայ դպրոցներուն մէջ մարզական կեանքը ծայր է տուած միայն շատ յարգելի մէկ քանի դաստիարակներու ջանքով եւ կը շարունակուէր անոնց ջանքերուն տուած պտուղներով: Հայ դպրոցներու մարզանքի ուսուցիչներէն մեծ մասը այդ անձնաւորութիւններու աշակերտներն էին: Երախտապիտութեան ղդացումով մը պէտք է յիշատակել որ օտար դպրոցներու հայ աշակերտութիւնը շատ դովելի դիտակցութիւնով երբեմն երբեմն դուրս են եկած հայ կեանքի բեմը եւ ունեցեր են բաւականի ուժեղ կազմակերպութիւններ հայ համայնքներու մէջ, ըլլայ մարզական թէ այլ նպատակներով: Այդպէս պատահեր է Զուղայի (Սպահան) անդլիական դպրոցի հայ աշակերտներու նախաձեռնութիւնով, Համատանի Ամերիկեան, Թէհրանի եւ Թաւրիզի Ամերիկեան եւ Փրանսական դպրոցներու հայ աշակերտութեան նախաձեռնութիւնով: Օտար այդ հիմնարկութիւնները հանդիսացեր են տեւական վառարաններ յաճաղող հայ աշակերտներու մարզական կեանքին համար: Հայ համայնքներու մէջ երեւացող ար-

տաղարոցական կազմակերպութիւններէն ամենաուժեղը եւ ամենա —
յիշատակելին եղած է անցեալին մէջ Թէհրանի հայ երիտասարդներու
«Մասիս» սբորդական ակումբը որ եղած է երկսեռ, եւ որդեգրած է
ընդհանրապէս հայ երիտասարդութեան ընդհանուր զարգացման եւ
Ֆիզիքական կրթութեան ծրագիրը: Այս ակումբի Փութայուլի խումբը
երկար ժամանակ պահեր է առաջնութիւնը օտար եւ պարսկական
խումբերու վրայ, ցաւալի է միայն որ հայ համայնքներու տնտեսա —
կան աննախանձելի դրութիւնը չէ կարողացեր երկար ապրեցնել նման
կազմակերպութիւններ եւ յաճախ սպառեր է անոնց քայքայումով
կամ սեղմումներով:

Պարսկահայ դաղութի ամենաբախտաւորը եղաւ Թաւրիզը: Երե —
ւանի դանդուածային դաղթը դէպի Թաւրիզ իր հետ բերաւ սպաներ,
կային եւ մարդանքի ուսուցիչներ: Այդ կերպով հայ դպրոցներէն Կեդ —
րոնականը, Արամեանը, Լիլաւան, ինչպէս նաեւ երկսեռ Գիմնազիան,
որբանոցները, Ադվէնտիսթներու դպրոցը, Ամերիկեան Մէմօրեալը,
Ամերիկեան Օրիորդացը եւն.: Աչքի ընկնող եւ բեղմնաւոր ուսուցիչ —
ներէն պէտք է յիշել պաշտօնակիցներ Պ. Յակոբ Բաղրամեանը՝ երկ —
սեռ Գիմնազիայի ուսուցիչ, նախկին դինուորական, Պ. Վաղարշակ
Քէնտիրեանը՝ նոյնպէս դինուորական, ուսուցիչ ամերիկեան որբա —
նոցներու եւ Լիլաւայի դպրոցի, ինչպէս նաեւ Օր. Շուշանիկ Տէր Մա —
նուէյեանը այս վերջի դպրոցի աղջկանց եւ արտադպրոցական դասե —
րու մարդիչ, Պ. Բաղրատ Եղիազարեանը՝ սպայ եւ մարդիչ Ադվէն —
տիսթներու դպրոցի, Պ. Պարոյր Շերունեանը՝ որպէս դեկամարողը
Ամերիկեան Մէմօրիայի դպրոցի մարդական բոլոր շարժումներուն,
սուս ջանքերու եւ եռանդին շնորհիւ կազմակերպուած տարեկան
ուաշտահանդէսները հպարտութեամբ պէտք է յիշէ Թաւրիզի հայ հա —
սարակութիւնը:

Աթլէթիք խաղերու մէջ մեր աշակերտներու ձեռք բերած ար —
եւնքները շատ դուրսի էին: Առանց մանրամասնութիւններու մէջ
մտնելու որպէս օրինակ կրնամ տալ ձողով բարձրութեան աստիճանը,
Կեդրոնականի եւ Մէմօրիայի աշակերտներէն մեծ թիւ մը ծանր «զա —
բա աղած»ի ձողով 2.90 մէթր եւ աւելի անցած են ազատ կերպով,
սուսորդ օրինական չափէն քիչ մը պակաս ծանրութիւնով 11.40 մէթր,
հեռաւորութիւնը՝ աւելի քան 6 մէթր ոստնելով, բարձրութիւն՝ մին —
չեւ 1.60 մէթր:

Տարիներ առաջ տեղիս Հայոց կուլտուրական միութիւնը ձեռնար —
կեց սկստական կազմակերպութեան:

ՀՆԴԿԱՍՏԱՆ

« Չորրորդ խմբի արիներն իրենց կայտառ կենսունակուրթեամբ եւ վառ գործունէութեամբ, առաջին տեղն են գրաւում տեղական խմբերի մէջ» :

Ահա փայլուն վկայականը, որին Չորրորդ խումբը, որ բաղկացած է Մարդասիրական Ճեմարանի սաներից, արժանանում է տարիից տարի: Ի դուր է ասել, թէ սակաւապետ Բրիտոնի դաւակը շողոքորդութիւններ չուայլել չգիտէ: Հայ արիները վայելել են հանրութեան համակրանքը եւ դրաւել առաջնակարգ տեղը տեղական խմբերի մէջ:

Պ. Կարապետ Գալստեանի կարող դաստիարակչութեան տակ, Հայ արիներն առաջինն են հանդիսացել համընթացութեամբ ամէնամարզերի մէջ եւ ձեռք են բերել «Արքունական դրօշը», որն Բէլալայի նահանգապետը անձամբ, իւր իսկ ապարանքում, արժանավայել հանդիսաւորութեամբ յանձնել է Հայ արիներին: Պ. Պ. Հ. Նալարեանը եւ Յ. Միքայէլեան յաջորդաբար ստանում են եւ դովելի եռանդով ու յաջողութեամբ վարում դաստիարակչի պաշտօնը, մինչեւ որ ժամանակի սղութեան պատճառով սրանք եւս հարկադրւում են պաշտօնից հեռանալ: Օտարազդի դաստիարակիչներ առաջ են դալիս: Սրանց օրով — սկսուտութիւնը կորցնում է իւր թափը կալկաթայում, դժբախտաբար նա հաղիւ այնքան կենսունակութիւն է ցոյց է տալիս, որ կարողանայ իւր դոյութիւնը ապացուցանել: Չորրորդ խումբն եւս, ստեղծուած դրութիւնից ազդելով անցընում է նսեմութեան մի շրջան, մինչեւ որ Մր. Պ. Ս. Օդին կաղմակերպում է մի նոր խումբ՝ Տասներորդը, որ շնորհիւ իւր կաղմակերպող դաստիարակչի եռանդուն ջանքերին, շուտով աչքի է ընկնում ամենայն մասամբ:

Այժմ դոյութիւն ունի միայն Չորրորդ խումբը: Գոյութիւն ունին նաեւ դայլիկները, որոնք դովելի առաջդիմութիւն են ցոյց տալիս:

Վրանակայանում, որ տարին մի անգամ տեղի է ունենում քաղաքից շուրջ 200 մղոն հեռաւորութեան վրայ, տեղական սկսուտները մի տասնեակ օր անց են կացնում նուիրուած իրենց վարժութեանց: Վրաններից միոյն շուրջը արտակարգ եռուղեո, վառ կենսունակութիւն է տիրում, այդ տեղ ցցուած է եռադոյնը, մեղուաջան սկսուտները կրում են եռադոյն փողկապ — թաշկինակներ՝ Հայ արիներն են:

Քաղաքի հեռաւոր արուարձաններում, նրա հեռաւոր շրջակայքում, անամարդաբնակ դաշտերում, կիսախաւար թաւուտներում, եթէ արիների հանդիպէք նրանց ճանաչելու դժուարութիւն չէք ունենայ. նոյն նշանաբանը, նոյն արիները:

Բացօթեայ մարզաքներին, ողիմպիական խաղերին եւ ուրիշ դէպ-

քերուժ կարգ ու կանոն է տիրում, որովհետեւ այդ տեղ էլ Հայ արիւնքներն են :

« Պատրաստ », եւ հաւատարիմ իրենց սկզբունքին, ժպիտը եւ ընտին, նրանք միշտ պատրաստ են : Փոյթ չէ եթէ այրեցեալ դօտիի կրակախառն ճառագայթներն այրում ու տոչորում են . փոյթ չէ եթէ ամառնային անընդհատ անձրեւի հեղեղային տարափները լճացնում են երկիրը, նրանք միշտ պատրաստ են : Միայն հայրենիքի կարօտով է այրում վտարանդի Հայ սկաուտի սիրտը եւ երբեմն էլ վշտով ողորում, բայց դուցէ եւ դրա համար էլ է, որ նա պատրաստ է :

Ուրեմն, Կալկաթայում Հայ սկաուտներ ունենք, իսկ Ջալայում հաւաստի աղբիւրներից լսեցի որ դոյութիւն չունեն, դոնէ այժմ :


Հ. Մ. Ը. Մ. ի չեն պատկանում, որովհետեւ կապ պահուած չէ : Տեղեկագրի մէջ դանց արեցի խօսելը մարդանքների մասին, իսկ եթէ մարդանք ասելով դուք ուղում էք «Sports» եւ «Games» եւս հասկանալ, անցողական կերպով կարող եմ ասել որ մեր սաները յաջող կերպով խաղում են cricket եւ football իսկելով յաղթանակի բաժակը : Կուսամարտի մէջ բառին իսկական իմաստով անդուզական են . միջդպրոցեան մրցումներին, նրանք հակառակորդների սարսափն են . ահա երեք տարի է, որ յիշեալ մրցումներին ջախջախիչ յաղթանակ են տանում : Մերոնց ոսկրոտ կազմուածքը խոչընդոտ է հանդիսանում կարճ տարածութեան (short distance) վաղքի մէջ, բայց երկար տարածութեան (coup du lance) մէջ ալ մի դպրոցի չեն դիջում առաջնութիւնը : Երեք տարի շարունակ Մեսրոպ Միրզարէզեանը (այժմ Գրիգորեան) Բէնդալի — Հնդկաստանի չասելու համար — անպարտելի ախոյեանն էր . նա 10 մղոնը (անդլիական մղոն) վաղում էր 58 րոպէում (minutes) :

Ճեմարանի աշակերտներից շուրջ 50 հոգի տեղական կամաւոր խմբի մէջ են : Մեր կամաւորները արժանացել են Adjutant Capt. Steelի հետեւեալ վկայականին . «Ձինավարժութեանց ամբողջ շրջանում, նրանք (Հայերը) հիանալի ընթացք ցոյց տուին եւ գործը կատարեցին ևս անդով եւ դուարթութեամբ : Խաղերի եւ մրցումների մէջ գերադասեցին : Գեներալից անձամբ տեղեկացայ, որ նա բոլորովին բաւարար է : Ինքս պիտի ասեմ, որ նրանք ուշիմ ու կենսունակ են, եւ ինչ որ կարեւորագոյնն է, մարանչող ոգով տոգորուած են : Իսկապէս հաճոյք է նրանց հետ գործելը » :

Կալկաթայի հայ մարդիկները ձեռք բերած են փայլուն յաջողութիւններ : շահել էին Փութայոյի հօկիի եւ ռըգպիի մրցանակները եւ բնաւ հակում ցոյց չէին տալիս նրանց զիջելու տեղական խմբերին, որոնք գերակշիռ դիրք ստացան, երբ նոր կանոնադրութիւններ եւ սահմանափակումներ աննպաստ դրութիւն ստեղծեցին հայ խմբերի համար :

Աւետիս Մադաթը, որ դովելի եռանդով եւ յաջողութեամբ մասնակցում էր մարզական խաղերին (games) այդ շրջանի ամենակարկառուն դէմքերից մինն էր : Հազիւ 16 տարեկան, խաղում էր Կալկաթայի ակումբների առաջնակարգ խմբերի դէմ, եւ այնպիսի եզակի կորովով ու հմտութեամբ, որ արժանացել էր լաւագոյն մարզիկի բաժակին եւ զանազան առիթներով ստացած մէտալների թիւը 40ի է հասնում : Միջանկեալ կերպով, կարելի է յիշատակել որ Աւետիս Մադաթը եւ իր եղբայր Յովսէփ Մադաթը ճարպիկ եւ մարզուած թէնիս խաղացողներ են . երեք տարի շարունակ իրենց շրջանի ախոյեանները հանդիսանալուց յետոյ ընդ միշտ իւրացրին, այդ տիտղոսի մրցանակ բաժակը :

Բացի մի քանի աչքառու անհատներից, որ մասնակցում են զանազան օտար խմբերին, հայ խումբը բացառապէս բաղկացած էր Մարդասիրական Ճեմարանի պատանի աշակերտութիւնից : Մերոնք յաւակնութիւնը չունէին վիճելու իրենց նախորդ խմբերի փառքի օրերը, սակայն, եթէ ի նկատի առնենք մեր աշակերտութեան համեմատաբար նօսր թիւը, որ խաղերին եւ մարզանքներին մասնակցելու նուազագոյն առաւելութիւնն է տալիս, պէտք է եզրակացնել որ այժմեան մարզա-



Կալկաթայի մէջ, 'Այվատեան Սրբազանը' տեղւոյն սկաուտական չորրորդ խումբին կը յանձնէ իրենց դրօշակը :

կան միջակ դիրքը, համեստ լինելուց հետո է: Հակառակ աննպաստ հանգամանքներին, հայ խումբը, շնորհիւ ի միջի այլոց Պ. Մարտիրոս Մանուկեանի ջանքերին, մէկից աւելի անգամ խլեր է հօկի մրցանակը եւ անպարտելի է մնացել Ռըզբիի ասպարէզում, մարզահան դէսներին, աչքի չենք ընկնում բարձր եւ երկայն ցատկի մէջ, բայց երկայն վազքի եւ կռիամարտի մէջ մերոնց գերակշիռ առաւելութիւնը անվիճելի է: Մեսրոպ Միրզաբէգեանը (այժմ Գրիգորեան) Վ տարեկանում Բէնգալի Մարատոնեան վազքի ախոյեանը հանդիսացած էր: Յետոյ, Վրթանէս Խաղարեանը, թէեւ ոչ նոյնչափով, պահպանում էր այդ մարզի առաջնութիւնը: Հնդկաստանում առ հասարակ, իսկ Բէնգալում մասնաւորապէս, այն կարծիքն է տիրում, որ Հայը կռիամարտիկ է ծնւում: Զուր կարծիք չէ: Թէ՛ հասարակական եւ թէ՛ միջդպրոցեան մարտերին, հայ կռիամարտը երեւան է գալիս ախոյեանին չարաչար հարուածելու եւ առ հասարակ առաջին շրջաններից միում նրան արիւնլուայ տապալելու համար: Արսէն Սարգսեանը, Լեւոն Բաղդասարեանը, որին պատանի Դէմփսի էին յորջորջում, Բ. Յարութիւնեանը, Երկաթաձոյլ Կարօ Մինասեանը, Անդրանիկ Յովհաննէսեանը եւ շատ ուրիշներ ահարկու կռիամարտիկներ են, որոնք իրենց



Կալկաթայի հայ սկաուտները Հիմալայան լեռներու թաւուտներու մէջ

հակառակորդների սարսափն են եւ խանդավառ հանդիսականների համակրանքի առարկան : Սրանցից , Արսէն Սարգսեանը , հանդամանքներն նպաստաւոր դասաւորումով եւ շնորհիւ իւր յարատեւութեան , կամ աւելի ճիշդն ասած , շնորհիւ իւր աջ բռունցքի արճիճային հարուածներին , Բէնդալի միջին ծանրութեան ախոյեանութեան տիտղոսը իսկեց իւր հակառակորդից , որն առաջին շրջանում արիւնաշաղախ անձնատուր եղաւ :

Այս պատկերը լրացնելու համար պէտք է յիշել Մարգար Սաչիկեանի անունը , որ հակառակ իւր բազում դրաղմունքներին մասնակցեց , Բէնդալի օթօմօպիլի ընկերակցութեան սարքած մրցահանդէսին եւ իւր ճարպիկ ու վտանգաւոր մեքենավար խաղերով , առաջինը հանդիսացաւ եւ նոյն ինքն նահանգապետի ձեռքով ըստ արժանաւոյն վարձատրուեց :

ՎԻԿԹՈՐ ՎԱՐԹԱՆ

ԿԻՊՐՈՍ

Ա . Շրջան . — Պ . Օննիկ Եաղմածեանը , պաշտօնի էր կոչուած Աղղային Մելիքեան վարժարանի մէջ :

Քիչ ատենուան մէջ , յաջողեցաւ Հ . Մ . Ը . Մ . ի Նիկոսիոյ մասնաճիւղին հողի եւ մարմին տալ : Հիմը դրուեցաւ Հ . Մ . Ը . Մ . ի Նիկոսիոյ մասնաճիւղին , արժանանալով անխափր բոլոր Հայերու դնահատանքին :

Իրերու այս բնականոն վիճակը խիստ շատ յուսադրիչ եւ մխիթարական էր , բայց շուտով չուշացաւ յուսախարութիւնը : Մարդական աշխատանքները քանի մը ամիսներ միայն շարունակուելէ յետոյ , արիներու անոնց շարքէն հեռացումովը կ'առնէր դանդաղ ու անկանոն վիճակ մը : Ծագեցան տարակարծութիւններ ու դժգոհանք անձի դէմ :

Դարձեալ , համերաշխութիւն դոյացնելու համար եղած փորձերուն հակառակ , անկարելի կ'ըլլար երկու մասի բաժնուած ժողովուրդը նոյն նպատակին շուրջ կեդրոնացնել :

Հ . Մ . Ը . Մ . ի մնացեալ տղաքը միշտ եռանդով կ'աշխատէին եւ կը հետեւէին իրենց առօրեայ մարդական աշխատանքներուն :

Բ . Շրջան . — Այդ շրջանը պայքարներու շրջան մը եղաւ Հ . Մ . Ը . Մ . ի համար , ունենալով սակայն աչքառու գործունէութիւն մը : Եաղմածեանի մեկնումէն վերջ տղաքը իրենք իրենց կազմեցին խումբեր , մասնակցեցան մեծ մրցումներու եւ սկսան ուրոյն միջոցներով հրա-

պարակ իջնել: Գիշերային վարժարանը շարունակեց իր օգտակար գոյութիւնը դարձեալ ու աշխատաւոր արիւնքը հետեւեցան իրենց մասնակի ուսումներուն: Աղքատ ու աշխատաւոր արիւնքը կը թուլթեան համար Հ. Մ. Ը. Մ. ի թափած հուրածու եւ բարենպատակ աշխատանքները վեր են ամէն դրուատիքներէ: Այս շրջանին ամէն անոնք որ հեռացած էին Հ. Մ. Ը. Մ. ի շարքերէն միացան ատենուան մը համար: Կազմեցին դարձեալ հաւաքոյթներ, թատրոն, վիճաբանական ժողովներ եւ սակայն մարդիչի մը չլուրջութիւնը իբր աչքառու պակաս աչքի կը զարնէր, տղաքը չէին կրնար կանոնաւոր մարդական աշխատանքներ ունենալ: Ուստի հինգ, վեց ամսուան շրջանէ մը յետոյ Եազմածեան Փարիզէն դարձեալ կը վերադառնար Կիպրոս, իր առաջուան պաշտօնին ձեռնարկելու համար:

1928 Մայիս 22ին, Յունական մեծ մարդադաշտին մէջ, մասնակցութեամբ Լառնաքայի մասնաճիւղին ու նախադահուլթեամբ Նիկոսիոյ քաղաքապետ Ծօրճ Մարդիտիսի, Հ. Մ. Ը. Մ. ի սարքած զուտ մարդահանդէսին մէջ նախադահին հետեւեալ խօսքերը խիստ շատ ուշադրաւ են եւ կ'արժէ զանոնք յանձնել ընթերցողներուն մասնաւոր ուշադրութեան:

«Սիրելի բարեկամներս, շատ ուրախ կը զլամ ինքզինքս այս պահուս, որքան հայ ազգին նոյնքան եւ ինծի պատուարեր մարդահանդէսի մը նախադահած ըլլալուս համար: Դուք, ինչ որ ընէք՝ լաւը կ'ընէք միշտ, եւ ես այստեղ կոչ կ'ընեմ բոլոր Յոյներուն օրինակ առնել ձեզմէ, եւ ընել լաւագոյնը միշտ»: Այս մարդահանդէսը կը կրկնուէր շաբաթ մը յետոյ Լառնաքայի մէջ, նախադահութեամբ տեղւոյն քաղաքապետին եւ ի ներկայութեան Յոյն ու Հայ բարձրաստիճան անձնաւորութիւններու: Գրեթէ այսքանով կը վերջանայ Հ. Մ. Ը. Մ. ի երկրորդ շրջանը, Եազմածեան կրկին կը մեկնէր Յունաստան, այդ տեղէն եղած գիմումներուն վրայ:

Գ. Շրջան. — Հ. Մ. Ը. Մ. ի առաջին դօրծը կ'ըլլայ, վերակազմել նոր ոյժերով Փութայոլի խումբեր եւ վերահաստատել գիշերային վարժարանը որ կարճ ատենուան մը համար զոցուած էր: Կ'ընտրէ նոր վարչութիւն մը բոլորովին երիտասարդ ու աշխատող ոյժերէ բաղկացեալ:

Իբր հասոյթի աղբիւր՝ կուտան ներկայացումներ: Այս շրջանին նորէն կը սկսի Հ. Մ. Ը. Մ. ի համակիրներու շրջանակը աւելնալ ու յարաբերութիւնները շտկուիլ: Մարդիչ Լեւոն Աբգարեան յարատեւութեամբ կ'աշխատի լիուրի արդարացնելով իրեն վստահուած պաշտօնները:

Ընդհանուր անդամներու թիւը, հաշուելով հանդերձ պատուոյ անդամները, կը հասնէր 180ի, նոյնքան թիւով անդամ ունէր նաեւ Լատինաքայի մասնաճիւղը որ միշտ կը գործէ Նիկոսիոյ մասնաճիւղին հետ համախորհուրդ :

ՍԱՄՈՒԷԼ Յ. ԹՈՒՄԱԵԱՆ

Մելիճնեան հաստատութեան մէջ

Կրթական կազմակերպութեան համընթաց աստիճանով աւագ կարեւորութիւն տրուած է :

Մարզանքի ուսուցիչն է Պ. Լեւոն Աբղարեան :

Հաստատութեան յարակից հողամասին վրայ, կը գտնուի մարդադաշտը, մարզական բոլոր գործիքներով :

Մարզանքի կը մասնակցին մանչերու եւ աղջիկներու բաժինները առանձին խումբերով : Մէն մի դասարան ունի շաբաթական երկու պահ շուէտական եւ սկսութեան մարզանքի եւ երկու պահ ալ Փութպոլի ու պասքէթպոլի դասեր : Ասոնցմէ զատ ամսուան մէջ մէկէ աւելի անդամներ կը կազմակերպուի ընդհանուր պտոյտ, մասնակցութեամբ բոլոր ուսուցիչներուն եւ պաշտօնեաներուն : Այս պտոյտները կ'երկարին երբեմն մինչեւ մօտակայ լեռները, ուր սան եւ սանուհիներ կ'ընտելանան չարքաչ կեանքի մը պահանջներուն :

Սաները բաժնուած են 15 առանձին Փութպոլի խումբերու, իսկ ամբողջէն ընտրուելով լաւագոյնները, կազմուած են վեց ուժեղ խումբեր, որոնք մկրտուած են Հայրենի վայրերու եւ անձերու անուններով : Ասոնցմէ առաջինը ի պատիւ բարերար Տ. Կարապետ Մելգոնեանին, կոչուած է Մելգոնեան խումբ, իսկ միւսները՝ Արարատ, Վասպուրական, Շիրակ, Անի, Տորք, Վարդան եւն. :

Այս խումբերը կը մրցին Կիպրոսի Հայ եւ օտար խումբերու հետ, ի պատիւ Հաստատութեան, կ'արժէ հոս յայտնել թէ Յոյներու եւ Թուրքերու բազմամեայ եւ փորձ խումբերու հետ եղած մրցումներուն մէջ առհասարակ յաղթական ելած են Մելգոնեանի խումբերը :

Գրեթէ ամէն տարի կը սարքուին Նաւասարդեան խաղեր :

ՈՂԻՄՊՈՍ

ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոսի նախապատերազմեան միութիւնները տեսանք ասկէ առաջ: 1922ի նոր դադիթէն վերջ, ընդհանուր միացման մը զազափարը շատերուն սրտին մէջ տեղ դրած էր, եւ այդ իսկ պատճառաւ 1926 — 1927ի շրջաններուն Արարատ Մարմնամարդական Ակումբի մարզավայրին մէջ ընդհանուր հաւաքոյթ մը տեղի ունեցած է, նպատակ ունենալով Հ. Մ. Ը. Մ. ի զազափարին որդեգրումը: Զարմանալի հետեւողութեամբ մը սակայն, այդ հաւաքոյթը բոլորովին բացասական եզրակացութեան մը յանդած է, Եգիպտոսի մէջ հայ մարմնակրթական ընդհանուր միութեան մը դոյութիւնը անկարելի հռչակելով:

Բարեբախտարար ընդհանուրին զազափարը չէր այս, եւ 1927 ապրիլին խումբ մը հայ երիտասարդներ Հէլիօպոլսոյ մէջ համախմբուելով ծնունդ կուտային Հ. Մ. Ը. Մ. ի երկրորդ մասնաճիւղին:

Եգիպտոսի շրջանն ալ դոյացած էր այլեւս, եւ այս մասնաճիւղերու ներդաշնակութիւնն ու կանոնաւորութիւնը ապահովելու համար 1927 մայիսին կ'ընտրուէր առաջին շրջանային վարչութիւնը: Այս թուականէն սկսեալ ներքին կազմակերպման դործը հետզհետէ յառաջ տարուած է բարոյական ու մարդականին հետ զուգընթաց:

Աղեքսանդրիոյ մասնաճիւղը ունեցաւ իննիսունեւից դործօն եւ քսանեակ մը համակիր անդամներ, որոնք սերտօրէն միութեան կառուցած են եւ իրենց այս մասնաճիւղը շնորհապարտ է իր բարերար եւ միեւնոյն ժամանակ պատուակալ ատենապետ Պ. Մանուկ Մանուկեանի, որ թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս աջակցած է: Աղեքսանդրիան ունի բաւարարող մարդավայր մըն ալ:


Աթլէթիք, պասքէթպօլ, Փուլթպօլ եւ ծովային մարզանքներ, հաւասարապէս կը մշակուին անդամներու մեծամասնութեան կողմանէ: Սոյն մասնաճիւղի պասքէթպօլի եւ Փուլթպօլի խումբերն կը մասնակցին միջազգային մրցումներու եւ կը վայելեն ընդհանուրին համակրանքն: Աթլէթիք ներքին մրցումներ յաճախ տեղի կ'ունենան հաւաակ տեղի անյարմարութեանց եւ անդամները կը քաջալերուին ամէն կերպով: 1928 սեպտեմբեր 9ին մեծ դոյութիւններով Աղեքսանդրիոյ «Սթատ»ին մէջ Միջազգային հասարակութեան մը ներկայութեան, Աղեքսանդրիոյ մասնաճիւղը առաջին անգամ ըլլալով հանրութեան գնահատութեան ենթարկեց իր աթլէթներն, ընդհանուրին գովասանքին արժանանալով:

Հէլիօպոլսոյ մասնաճիւղը եւս ունի մարդադաշտ մը:

Հէլիօպոլսոյ մասնաճիւղը այժմ ունի երեսուն եւ հինգ դործօն անդամներ որոնք աթլէթիք, Փուլթպօլ եւ պասքէթպօլով կը զբաղին,

հաւասարապէս տեղ տալով Ֆիզիքական ու բարոյական զարգացման :
Հէլիօպոլիս Գահիրէի արուարձաններէն մին նկատուելով, օտարնե –
րու առաջ Հ. Մ. Ը. Մ. ը մէկ ճակատ ներկայացնելու կ'աշխատի, իւր
երկու քոյր մասնաճիւղերու բոլոր գործօն անդամներուն հաւասարա –
պէս առիթ տալով մրցմանց մէջ փորձուելու : Հէլիօպոլսոյ մասնա –
ճիւղին զլիսաւոր պարապմունքն է այժմ, մարզավայրի յարգարում ու
կահաւորում, որոնք յառաջ կը տարուին անդամներու զոհաբերու –
թիւններով միայն, առանց արդէն իսկ չափազանց ծանրաբեռնեալ հայ
գաղութին ամենափոքր բեռ մը ըլլալու :

Գահիրէի մասնաճիւղը՝ իր Հէլիօպոլսոյ դրացի մասնաճիւղին
նման արդեւքներէ զուրկ չէ մնացած, եւ սակայն նոյնքան հաստա –
տամտութեամբ գիտցած է առանց վրդովելու յառաջ տանիլ իր առ –
տնին գործերն եւ ներքնապէս կազմաւորուիլ : Գահիրէի մէջ գետնի
պակասութիւնն մարզարանի մը հիմնարկութեան հարցը չափազանց



Գահիրէի Գալուստեան վարժարանի աղջկանց մարզանքը

դժուարացուցած է, այնպէս որ այս մասնաճիւղը ժամանակ մը ան —
տուն ու անտեղ մնալէ վերջ, վերջնապէս « Արարատ » Հայ Մարմնա-
մարզական Ակումբի հիւրասէր ընդունելութեան շնորհիւ, յիշեալ
կազմակերպութեան Մինիէթ — էլ — Սէրէկի մարզավայրէն օգտուել
սկսած է, ուր այժմ Հ. Մ. Ը. Մ. ի Գահիրէի մասնաճիւղի անդամներն
կ'երթան գոհացում ստանալու եւ վայելելու ներկայացուած պատեհ
առիթներէն: Այս մասնաճիւղի անդամները Աթլէթիք, Փութպոլ եւ
պասքէթպօլն հաւասարապէս կը մշակեն :

Գահիրէի մասնաճիւղը Հէլիօպոլսոյ մասնաճիւղին հետ միասին
խառն խումբեր ներկայացուցած է որոնք մասնակցած են միջազգային
Փութպոլի ու պասքէթպօլի մրցումներու՝ պատուաբեր արդիւնքներ
ձեռք բերելով: Այս երկու մասնաճիւղերը իրենց անդամներն ու հա-
մակիրներու յարաբերական կապերն ամրապնդելու մտօք կազմակեր-
պած են զանազան արշաւանքներ ու պտոյտներ, ընդ որս աննախընթաց
արշաւ մը դէպի Սաքքարա — Մէմբիսի պատմական բուրգերն ու հնու-
թիւններն, առիթը տալով ութսուն հոգինոց երկսեռ խումբի մը՝ իրեն
այնչափ մօտ եւ սակայն դարերու անջրպետովն բաժնուած այդ հա-
րստութեանց տեսքն վայելելու :

Կեդրոնի մը չգոյութիւնը, բնականաբար ինչպէս ամէնուրեք,



Ուսուցիչ՝ ԱՐՄՐԱՏ ՔՐԻՍԵԱՆ

Եզիպտոսի մէջ ալ զգալի դարձած է : Եզիպտոսի Շրջանային վարչութիւնն հարկադրուած է կաղմակերպչական ծրագրեր յղանալ, սրբագրել եւ գործադրել տալ իր մասնաճիւղերուն մէջ, միշտ գիտնալով հանդերձ թէ այլուր հաւանականաբար տարբեր ձեւեր, տարբեր միջոցներ կը գործածուին :

Այս իսկ պատճառաւ է որ Եզիպտոսի շրջանն երկար ատեն չէ համարձակած սկստուական նուիրական գործին ձեռնարկել, հակառակ անոր խոր համոզմունքներն ունենալուն : Եւ սակայն այս հարցը իր դրաղմանց նիւթ եղած է, եւ իր երեք մասնաճիւղերուն մէջ ալ գետինը տակաւ առ տակաւ պատրաստուած է : Սքօրթիֆ խաղերու օրինակոր կիրարկումովն է որ այս նկարագիրը դրոշմուած է Եզիպտոսի Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղերու մէջ, ուր սկստուտիզմը պիտի գայ գտնել տրամադիր գետին մը :

ԱՄԵՐԻԿԱ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Հայ Մարմ. Ընդհ. Միութեան Ամերիկայի շրջանը հիմնուած է 1921 փետրուարին, Նիւ Եորքի մէջ, իբրեւ 30րդ մասնաճիւղ : Կաղմակերպութեանս հիմնադիր անդամներն են Մամաս Խուպէսէրեան (Պոլսէն, Բերա-Շիշլի մասնաճիւղ), Օննիկ Քէմանճեան (Բերա մասնաճիւղ), Յակոբ Գարապէքեան (Սկիւտարի մասնաճիւղ) : Շրջանիս առաջին ատենապետ ընտրուած է Տոքթ. Ն. Պայընտըրեան (այժմ մեռած) :

Մասնաճիւղը կարող գործիչներու ձեռքին տակ շուտով յառաջ գիմեց եւ ծանօթացուց Հ. Մ. Ը. Մ. ը Ամերիկահայ դաղութին, յաջորդաբար հիմնելով մասնաճիւղերու շարք մը՝ հայաչատ կեդրոններու մէջ : Շրջ. կեդրոնի դերը կը կատարէր Նիւ Եորքի մասնաճիւղը, բայց ստիպուեցաւ շուտով ընտրել զատ կեդր. վարչութիւն մը, որուն առաջին ատենապետն էր Պ. Եղիշէ Քաջունի :

Շրջանային կեդրոնը սարքեց ընդհ. հայկական մրցահանդէսներ, որոնց մասնակցեցան մօտ հարիւրի չափ հայ մարդիկներ, որոնք դաղութային կեանքի մէջ մեծ հետաքրքրութիւն չարժեցին :

Նիւ - Եորքի մասնաճիւղը միշտ լաւագոյն դուրս եկաւ սոյն ողիմպիականներուն մէջ, զօրաւոր հակառակորդ ունենալով Ֆիլատէլֆիայի մասնաճիւղը :

Նիւ - Եորք կը փայլէր Փուլթալուի մէջ դերագոյնը նկատուելով, որուն կը յաջորդէր Ֆիլատէլֆիան: Բայց մի ժամանակ Ֆիլատէլֆիոյ անկաղմակերպ վիճակը տկարացուց այդ մասնաճիւղը եւ Union City դրաւ ծ է իր տեղը: Նիւ Եորք Փուլթալուի մէջ իր առաւելութիւնը կը պարտի Պօղոս Պէօրէքճեանի (Բերա - Շիշի), Տիգրան Խոյեանի եւ Մամաս Խուպէսէրեանի, եւ խաղին հմուտ ուրիշ մարզիկներու: Իսկ Ֆիլատէլֆիոյ Փուլթալուի խումբին մէջ լաւագոյն խաղացողներէն են Ն. Մեթերէսեան եւ Բ. Պետրոսեան:

Union City որ այժմ կ'սպառնայ դառնալ շրջանիս Ախոյեանը, իր յառաջդիմութիւնը Փուլթալուի մէջ կը պարտի չորս Նաղաշեան եղ - բայրներուն, որոնցմէ Միհրան Նաղաշեան (կաղմակերպիչ Union Cityի մասնաճիւղին), կը խաղայ center եւ միւս երեքն ալ միասին կը կազմեն 4/5ը forward դիժին:

Basketballի մէջ Ֆիլատէլֆիա միշտ դիւրաւ կը տանէր յաղթանակը, յաջորդ դօրաւոր խումբ ունենալով Astoriaի մասնաճիւղը, բայց այն տարեշրջանին Union City Basketballն ալ խլեց Ֆիլատէլֆիայի եւ Աստօրիայի ձեռքէն:

Tennisը յառաջ կը տարուի բոլոր մասնաճիւղերու մէջ եւ վերջին միջ - մասնաճիւղային մրցումներուն Union Cityի ներկայացուցիչ (Միհրան Նաղաշեան) փառաւոր յաղթանակ մը ունեցաւ Նիւ Եորքի ներկայացուցիչին (անպարտելի Չարմայր Չօպանեան) դէմ, բայց Camdenի մասնաճիւղի ներկայացուցիչը (Քարիքեան) յաղթեց Նա - գաշեանին եւ Camden տարաւ մրցանակը «Չարիֆեան» բաժակը: (Նը - ւիրուած դերասանուհի Տիկին Արաքս Չարիֆեանի կողմէ):

Ամերիկայի շրջանը այժմ ունի 6 մասնաճիւղեր .

New York, N. Y., Astoria, N. Y., Union City, N. Y., Paterson, N. Y., Camden, N. Y., Philadelphia, Pa.:

Այս մասնաճիւղերը ունին մարդական փորձեր, (մարդարաններու մէջ եւ դաշտային), կ'ունենան բանակումներ, դաշտահանդէսներ եւ ձմեռուան եղանակին մարդահանդէսներ:

Յաջորդաբար կուտանք մասնաճիւղերու վարչ. ատենապետներու անունները եւ անդամներու թիւը.—

New York (Յ. Թորիկեան) 20 անդամներ:

Astoria (Բ. Չարութեան) 20 անդամներ:

Union City (Յ. Ստամպօլեան) 50 անդամներ:

Paterson (Պ. Ժղրայէլեան) 15 անդամներ:

Camden (Ս. Ինճէեան) 15 անդամներ:

Ֆիլատէլֆիա (Պ. Պետրոսեան) 15 անդամներ, (այս մասնաճիւղը այժմ վերակազմուած է եւ 15 անդամը վերջին թիւն է որ ունինք, իր փայլուն շրջանին այս մասնաճիւղը ունէր 40 անդամ եւ համակիրներ — բոլ մեծ թիւ մը) :

Ամերիկայի շրջանային կեդրոնի անդամներն են Արչաւիր Հիւսնեան (ատենապետ), Վ. Սերթոսեան (փոխ — ատենապետ), Ա. Քէ — մանճեան (ատենադպիր եւ քարտուղար), Մ. Նադաշեան (հաշուապահ), եւ Վ. Վարդերէսեան (դանձապետ) : Սոյն վարչ. շրջանը կը վերջանայ Յունիսի սկիզբը եւ նոր վարչութիւն կ'ընտրուի պատգամաւորական ժողովի մը կողմէ, ըստ Հ. Մ. Ը. Մ. ի ծրագիր կանոնադրին :



Խ . Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն



Մեզի համար դժուար է խկական պատկերը տալ Հայաստանի մէջ ներկայիս դոյութիւն ունեցող մարդական շարժումին, որովհետեւ չունինք ոչ աղբիւրները եւ ոչ ալ մասնադէտներ որ այցելած ըլլան եւ մօտէն հետեւած Հայաստանի մարդական շարժման : Ուրեմն, պիտի բաւականանանք թերթերէն մեր քաղած տեղեկութիւններով :

Խ . Հայաստանի մէջ մարմնակրթանքին մեծ ոյժ կը տրուի : Հետեւողներուն թիւը կը հասնի հարիւր հազարներու : Անցեալ տարի տեղի ունեցած տողանցքին մասնակցած էին 60,000 մարզիկներ :

Փութպոլի, կուիամարտի, հեծելանիւի, լուղորդութեան, աթլէթիզմի, վօլի պոլի, պասքէթ պոլի, ծանրութիւն վերցնելու եւայլ ճիւղեր դոյութիւն ունին, եւ Խ . Միութեան մէջ Հայաստան միշտ գրաւած է առաջնակարգ տեղեր :

Մեր ունեցած ծանօթութեանց համաձայն, Փութպոլը շատ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ : Երեւանի խումբը ունեցած է շատ յաջող մրցումներ — ինչպէս Երեւան Մոսկուա — որ վերջացած է Մոսկուայի յաղթանակով՝ 3—2 : Արդիւնքը ցոյց կուտայ որ խումբերը գրեթէ հաւասար կարողութիւն ունին : Իսկ կովկասեան երկիրներու մէջ Խ . Հայաստան միշտ առաջին տեղը կը դրաւ՝ ոչ միայն Փութպոլով, այլ սփոտի դրեթէ բոլոր մարզերուն մէջ :

Խ . Հայաստան ունի անհատ մարզիկներ որոնք կրցած են ամ —

բողջ Խորհրդ. Միութեան մէջ ախոյեանութիւններ չաճիլ: Անոնցմէ մասնաւորաբար կրնանք յիշել Սերգօ Համբարձումեանը, որ 1938ին կոտորեց ծանրութիւն վերցնելու համաշխարհային մրցանիշը՝ 433 քիլօ 500ով, երեք դանադան ձեւով:—

| | |
|-------------------------------------|-----------------|
| 1.— Երկու ձեռքով սեղմած բարձրացնել՝ | 136 քիլօ |
| 2.— Քաշել եւ բարձրացնել | 130 քիլօ |
| 3.— Հրել եւ բարձրացնել երկու ձեռքով | 167 քիլօ 500կր. |
| | <hr/> |
| | 433 քիլօ 500կր. |

Նախորդ մրցանիշը կը պատկանէր Գերմանացի Մանդերայի:

Սերգօ Համբարձումեան 28 տարեկան է եւ դեռ պիտի կարողանայ նոր մրցանիշներ հաստատել:

Սանոյեան դունտ նետելու մէջ շատ լաւ արդիւնքներ ձեռք բերած է, բայց մեղի կը պակսին ճշգրիտ չափերը:

Ռուբէն Մանուկեան ալ Սերգօ Համբարձումեանի նման ծանրութիւն վերցնող մըն է եւ մեծ ապագայ կը խոստանայ: Համամիութենականի մէջ առաջնութիւն չաճած է ձախ ձեռքով պոկելով 86 քիլօ600 կրամ: Ան ախոյեանն է Խորհրդ. Միութեանց կիսածանրութեան, հինգ շարժումներու մէջ ապահովելով 485 քիլօ:

Յաջորդաբար կուզան Յակոբեան, Ղոււմաշեան, Ալլահվերտիեան, Մանգաեան, Խոնդկարեան, Եւայլն:

Աթլէթիկի մէջ՝ Սանոեան, Սահակեան, Շահնագարեան, Միքայէլեան:

Հեծելանիւլի մէջ, մեղի ամէնէն շատ ծանօթ անունն է Յովհաննիսեան:

Պէտք է յիշել որ հեծանիւլի մէջ եւս Խ. Հայաստանի խումբը միշտ չաճած է Խ. Միութեան մրցումներուն մէջ:

Հայկաղ Սարաֆեան բարձրութիւն ցատկելու մէջ ապագայ խոստացող մարզիկ մըն է, բայց չափանիշները մեղի անծանօթ են, 1935ին ցատկած էր 1.75:

Սկաւառակի մէջ Միքայէլեան լաւ նետող մըն է, բայց արդիւնքները անծանօթ են մեղի:

Պոքսի մէջ Թիմուրեան, ախոյեանն է Խորհրդ. Միութեան եւ մասնակցած է դորձաւորներու ողիմպիականին եւ չաճած է բոլոր մըրցումները՝ հռչակուելով ախոյեան Պարսէլոնի մէջ:

Պարոնեան *Խ*. Հայաստանի 800 մեթրի լաւագոյն վազողն է, ժամանակ՝ 2 վ. 11,3/5:


Միֆայելեան՝ 1000 եւ 1500 մեթր:

4×100 մեթր դրօշարշաւ: Բալասանեան, Միֆայելեան, Սարգիսեան, Բելիցկեան, ժամանակ՝ 56,8/10 — 1935ին: Բայց աւելի վերջ, Շեստիչենկոն, Մաթէոսեան, Գարգալսեան եւ Սամվելսկը հաստատած են հայաստանեան մրցանիշը՝ 47,2/5:

Քար նետել՝ Մելեան Հրանտ, նոր անուն մը եւս, որ մեծ ապագայ կը խոստանայ:

Լաւ լուղորդներ կան, բայց արդիւնքները մեզ կը պակսին, միայն մէկ արդիւնք մեզի հասած է զոր բաղդատելով միջազգային չափանիշներու հետ, կ'եզրակացնենք թէ լաւ լուղորդ մըն է:

Ստեփանեան լաւ ցատկող մը:



Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ ԵՒ ՌԱՀՎԻՐԱՆԵՐ



1.— ՅՈՎՀ . Թ . ՀԻՆԴԼԵԱՆ

Պոլսոյ « Նոր Դպրոց »-ի հիմնադիր — տնօրէններէն ու ծանօթ մանկավարժ Պ . Յովհ . Թ . Հինդլեան Հայոց մէջ մարմնակրթական ու մասնաւորապէս սկսողական շարժման դադափարախօսներէն է եղած : Ըլլալով հմուտ դաստիարակ մը՝ ան մարմնակրթանքը կ'ըմբռնէ իբրեւ ազգակ մը հայ երիտասարդութեան բարոյական դաստիարակութեան : Ինքն էր որ, Շ . Քրիսեանի Մարմնամարզին մէջ սկսողատիզմի էութիւնը պարզեց եւ Ընդհ . Պատերազմէն վերջ եւս դադափարախօսը եղաւ անոր : Իր այդ գրութիւնները, պրակներու վերածումաժ, գաւառի մէջ մղիչ ազդակները եղան սկսողական շարժումներու : Իր վարժարանին մէջ կազմեց, 1913ին, առաջին հայ սկսողական խումբերէն մին : Հ . Մ . Ը . Մ .-ի հիմնումէն վերջ, եղաւ անոր գլխաւոր զօրավիգներէն մին : Մանկավարժի իր անվիճելի կարողութիւնը, հանրային իր դիրքը, ու իր մէջի բարոյական ուժեղ անձը՝ միացած՝ մարմնակրթական շարժման մասին իր ցոյց տուած անվերապահ աջակցութեան, ոչ միայն օգտակար եղան նախապատերազմեան մեր մարմն . կեանքին, եւ պատերազմէն վերջ՝ Հ . Մ . Ը . Մ .-ին, այլեւ նպաստեցին անոնց վայելած հանրային համակրանքին տարածմանը :

2.— ԱՐԱՄ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Հայ կրթական մշակներէն երկրորդն է այս, Յովհաննէս Հինդլեանէն յետոյ, որ խորապէս դնահատած է մարզական շարժումը եւ իր լայն աջակցութիւնն է ընծայած անոր :

Ուսուցիչ, տնօրէն եւ վերջապէս Արամեան կրթարանի հիմնադիր (Սկիւտար) Արամ Նիկողոսեան ուժ տուած է դպրոցներու մէջ մարմնամարզի դասերուն :

Ան, իբրեւ Կեդր . Ուսումնական Խորհուրդի անդամ, նոյն ոգիով ու համոզումով ջանացած է որ մարզանքի դասերը պաշտօնապէս ներմուծուին ազգային վարժարաններու դասացուցակներուն մէջ :

Զինադադարին, իբրեւ տնօրէն Շիւլիի Գարակէօզեան որբանոցին, լայնօրէն թոյլատրած է սկսողական խումբերու կազմութիւնը :



Եղած է նաև Հ. Մ. Ը. Մ. ի կեղը. վարչութեան անդամ : Ինչպէս եւ մարզական խնդիրներու շուրջ գրած է յօդուածներ : Մեռաւ 1937ին, Պոլսոյ մէջ :

3.— ՇԱԽԱՐՇ ՔՐԻՍԵԱՆ

Շաւարշ Քրիսեան ծնած է Պէշիկթաշ, 22 յուլիս 1886ին : Աշա — կերտած է նոյն թաղի Մաքրուհեան երկսեռ վարժարանին : 1897 սեպտեմբեր 6ին, իր եղբայրը զինքը կ'ուղարկէ Պարտիզակ՝ Ամերիկ. բարձրագոյն վարժարանը՝ իբր գիշերօթիկ : Շաւարշ յետոյ կ'անցնի Բոսլէրթ Քոլէճ : Հոն, իր մէջ կը ծնի բունն փափաք մը դէպի մարմնակրթանքը : Այնտեղ կը գտնէ նաև Գ. Յակոբեանը եւ ուրիշներ, որոնք ոչ միայն կը քաջալերեն զինքը, այլև կը թելադրեն մարմնակրթական ասպարէզին նուիրուիլ ամբողջովին : Շ. Քրիսեան, դարձեալ Գր. Յակոբեանի միջոցաւ, յարաբերութեան մէջ կը մտնէ՝ Փարիզ՝ Լիսէ ժանսոնի վարիչին, Փրոֆ. Desbonnetի հետ, թղթակցութեամբ հետեւելով անոր մարմնակրթական դասերուն : Յետոյ կը մեկնի Փարիզ (1906 յուլիս), ու յիշեալ ուսուցիչին դասընթացքներուն կը հետեւի վեց ամիս : Անկէ վերջ կ'անցնի Լոնսոն, իր ընկերներուն օժանդակութեամբ, ուր երկուքուկէս տարի կը մնայ, իր ազատ ժամերուն հետեւելով մարզանքի : 1909ին կը վերադառնայ Պոլիս :

Զանազան վարժարաններու մէջ կը ստանձնէ մարմնամարզի դա—

Յաճախ տեսնուած է որ ազգերու կեանքին մէջ երեւան եկած կարգ մը դէպքերու կամ երեւոյթներու հիմնադիրի տիտղոսը կը տըրուի անհատներու՝ որոնք սերիչներու հետեւորդներն են եղած, բայց իրենց քայլերը աւելի յանդուզն ըլլալով կերպաւորած են անոնց խտէալները, թելադրած են այդ դադափարները՝ հանրութեան աւելի լայն խաւերուն մէջ, ու դործնականացուցած են զանոնք: Ահա այս վերջիններէն է Շաւարշ Քրիսեան: Ան դործը ձեռք առաւ այնպիսի ժամանակ մը, երբ իր շուրջ չէին պակսեր բազուկի մարդեր: Գաղափարը կար, ինչպէս եւ դործը, սակայն կղզիացած կերպով: Ամէն մարդական խումբ ինքն իր մէջ եւ իր խումբին համար էր: Շաւարշ դիտցաւ օղտուիլ զոյութիւն ունեցող ատաղձէն եւ մէկ տեղ հաւաքելով այդ տարբեր ուղղութիւններով ուժերը, բերաւ իր Մարմնաւարդ թերթին մէջ ամփոփեց:

Քրիսեան իր պարբերականին միջոցաւ քարոզեց հայ իգական սեռը եւս մարդել, եւ դպրոցներէ ներս մարդանքը պարտադիր դարձնել: Ինչպէս նաեւ դոյութիւն ունեցող հայ մարդական ու Ֆութպոլի միութիւններն ու խումբերը համադաշնակցութեան մը շուրջ հաւաքելու տեսակէտը դրաւ մէջտեղ:

1914ին, Ընդհ. պատերազմի արհաւիրակի օրերուն, Շ. Քրիսեան կը դիմէ Փրանս. հիւպատոսարան՝ Փրանս. բանակին մէջ կամաւոր արձանագրուելու: Կ'ընդունուի, բայց, հիւանդութեան մը պատճառաւ Պոլսէն մեկնումը կ'ունենայ յապաղում մը, որ այնքան ճակատագրական հետեւանք կ'ունենայ, — ուրիշ բազմաթիւ մտաւորականներու հետ կ'աքսորուի ու Այաշի մէջ կը նահատակուի:

4.— ԳՐԻԳՈՐ ՄԵՐՃԱՆՕՖ

Հայ մարմնակրթական կեանքի առաջին ու կարելի է ըսել վեթերան դործիչներէն մին, որ մինչեւ այսօր միեւնոյն թափով կապուած է այս գործին:

Փոքր հասակէն գտնուելով Պուլկարիա, ինչպէս եւ հոն ստանալով իր նախանական կրթութիւնը, Մերձանօֆի մարդական գործունէութիւնն ալ սկսած է Ֆիլիպէէն: Հոն, մասնակցելով պուլկարական «Թրաքիիսքի Եունաք» կազմակերպութեան, եղած է անոր օգնական ուսուցիչը, ստանձնելով աւելի քան 600 տղոց մարդական հոգը:

Այդ աշխատանքը արգելք եղած չէ, սակայն, որ Գր. Մերձանօֆ Ֆիլիպէի մէջ կազմէ նաեւ հայ մարդական միութիւն մը, զայն եւս առնելով իր ղեկավարութեան տակ: Այդ միութիւնը յետոյ չափազանց կը զօրանայ ու ամէնէն վերջ կը միանայ Հ. Մ. Ը. Մ. ին: Ա. անդամ է Ֆիլիպէի Զօրեանց վարժարանին մէջ:

1904ին Մերձանօֆ մասնակցած է Փրակայի մարմն. հանդէսին՝ «Թրաքիսքի Եունաք»ի կողմէ :

Մարզական իր ամէնէն եռանդուն շրջանը կը սկսի, սակայն, Պոլսէն, Օսմ. Սահմանադրութենէն վերջ : 1909ին, Մաքրի գիւղի մէջ կը հիմնէ «Տիտան» խումբը, իսկ Սամաթիոյ մէջ «Վահագն»ը : Այս երկու խումբերը հաւաքական փորձեր կ'ունենան, ու Մերձանօֆ ոչ միայն անոնց, այլեւ Պոլսոյ ուրիշ թաղերու խումբերուն կը դասա —



խօսէ : 1912ին, Բ. մրցահանդէսին, Մերձանօֆի այս խումբերը ուշադրութիւն կը գրաւեն իրենց համաչափ (ռիթմիք) մարզանքներով եւ բուրգերով :

Պատերազմի տեւողութեան կը մնայ Պուլկարիա : Զինադադարին կը վերադառնայ Պոլիս : Մաս կը կազմէ Հ. Մ. Ը. Մ.ի Կեդր. Վարչութեան եւ, Լեւոն Յակոբեանի հետ կը ստանձնէ շուէտական մարզանքի ճիւղին ղեկավարութիւնը : Ինք է որ այդ կերպով, Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերուն մարզանքներուն մէջ կը դնէ միօրինակութիւն ու սիստէմ, եւ կ'ընդհանրացնէ ռիթմիք մարզանքը : Գրած է մարզական յօդուածներ ալ :

Իր մասնագիտութիւնն են գործիական մարզանքները ու չափական մարզանքը : Այս ուղղութեամբ, ան բաւական օգտակար է եղած, պատերազմէն առաջ, Շաւարշ Քրիսեանի :

Յետոյ կ'անցնի Հայաստան : Իսկ 1923էն վերջ կուգայ Փարիզ, ուր, մինչեւ այսօր, առաջին օրերու եռանդով ու սիրով կառչած կը մնայ Հ. Մ. Ը. Մ.ին :

5.— ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ

Այս անունին կապուած է մասնաւորապէս հայ սկաուտական շարժումը: Յակոբեանը եղած է անոնցմէ որոնք, պատերազմէն առաջ, ուղղութիւն ու քաջալերանք են ցոյց տուած Շ. Քրիսեանին՝ մինչեւ որ ան մարմնակրթանքը դարձուցած է ասպարէզ ու ամբողջովին նուիրուած է անոր:

Աշակերտ Բոպէրթ Բուլէճի, ան իր պատանեկուծեանէն՝ սէր ունեցած է դէպի մարմնակրթանքը: Այնքան՝ որ կապ կը հաստատէ փրոֆ. Տէպոնէի հետ՝ Փարիզ, եւ թղթակցութեամբ մարզական դասեր կ'առնէ անկէ: Միանգամայն կը դարձայն իր մարմինը: Յակոբեան օր օրի խանդավառուելով, կը ջանայ Բոպէրթ Բուլէճէն դուրս ալ գրադիլ Փիղիք. դաստիարակութեան գործով: Այսպէս, Պոյաճը դիւղի մէջ կը կազմէ «Պալթա - Լիման» անուն ֆուլթպուլի խումբը, որ առաջին հայ խումբը կ'ըլլայ Պոլսոյ մէջ եւ անուանի կը դառնայ:

Ազատութեան շրջանին, ուրիշ վեթերաններու հետ կը թելադրէ Շ. Քրիսեանին՝ թերթ մը հրատարակել, ինք եւս յանձն առնելով նիւթական զոհողութիւններ:

Սկիւտարի մէջ կը կազմէ սկաուտական խումբ մը, ու վարիչը կ'ըլլայ Սկիւտարի Հայ մարզարանին, երբ Մ. Մկրեան Եւրոպա կը մեկնի: Զինադադարը հաղիւ կնքուած, Գր. Յակոբեանի հրաւերով Պոլսոյ նախկին մարզական միութեանց ներկայացուցիչները հիմը կը դնեն Հ. Մ. Լ. Մ. ին: Ու, կը դառնայ հայ սկաուտներու պետը, կատարելով դասախօսութիւններ եւ գեկավարելով մարզական վարժու - թիւնները:

6.— ՎԱՀԱՆ ԶԵՐԱԶ

Հայ մարմնակրթական շարժման ամէնէն եռանդուն ու ամէնէն նուիրուած գործիչներէն մին: Անձ մը, որուն մէջ հողի ու մամնի չարքաշութիւնը այնքան ներդաշնակ կերպով զօլուած էին: Մարդիկի իսկական տիպարն էր Վահան: Անէր գինուորական ոգի եւ տիպար Հայ մըն էր:

Աշակերտ՝ Պոլսոյ Կեդր. Վարժարանին, ինք է որ նոյն վարժա - րանի տղոց կը սորվեցնէ ֆուլթպուլը, գնդակ մը բերած ըլլալով Անդ - լիայէն: Ու կը կազմէ Սանթրալ անուն ֆուլթպուլի խումբը, որ, ժա - մանակագրական կարգով, ֆուլթպուլի Բ. Հայ խումբը կ'ըլլայ: Զերազ այդ խումբով չի բաւարարուիր, սակայն, կը հիմնէ նաեւ Բրոթի կղզիի համանուն խումբը, ու հողին կ'ըլլայ «Տիրք»ին:

Պալքանեան պատերազմին կ'անցնի Փարիզ, ուր կը մնայ երկու տարի: Երբ Ընդհ. պատերազմը կը ծագի, կ'անցնի Կովկաս՝ իբրեւ կամաւոր: Հոն կ'արձանագրուի Անդրանիկի հրամանին ենթակայ հարիւրեակի մը մէջ: Զինադադարին կ'երթայ Պոլիս: Բայց, քիչ վերջ կը մեկնի Հայաստան՝ Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ՝ իբրեւ մարզիչ, Տիգրան Խոյեանի եւ Օ. Եաղմաճեանի հետ:

— « Հայաստան կ'երթամ, բայց եթէ պատահի որ պատերազմ ծագի, սկաուտութիւնը կը թողում եւ զինուոր կ'ըլլամ» — այս էր եղած իր պայմանը, մեկնելու ատեն:

Ալեքսանդրապոլը (Լէնինական) կ'ընտրէ իբր աշխատանքի կեդրոն, ունենալով, իր խնամքին տակ, ամերիկեան որբանոցներու 500—600 որբերը, որոնք սկաուտներ կը դառնային:

Հայաստանը երբ խորհրդային դարձաւ, Չերազ մնաց հոն՝ իբրեւ ուսուցիչ ամերիկեան որբանոցներուն: Capt. Brownի օժանդակութեամբ՝ կազմեց սկաուտական խումբեր եւ մարզեց որբերը: Գործեց դժուարին, նոյնիսկ անկարելի պայմաններու մէջ, բայց չվհատեցաւ: Իր պաշտօնին բերումով, օր մը վէճ կ'ունենայ չէկիստի մը հետ, ու այդ դէպքը ճակատադրական կը դառնայ իր կեանքին համար, — զոհ կ'ըլլայ անողոք վճիռի մը . . . :

7.— ՀԱՅԿ ՃԻԶՄԷՃԵԱՆ

Ճիզմէճեանի անունը 1918էն վերջ կապուած էր մեր մարզական կեանքին: Ուրեմն եւ՝ Հ. Մ. Ը. Մ. ին հետ: Պատերազմէն առաջ անդամ էր Սկիւտարի «Րաֆֆի Յառաջդիմական»ին, եւ կազմակերպողներէն մին էր արշաւներուն, կ'անդամակցէր դործադիր մարմնին, իսկ 1913ին մաս կը կազմէր Սկիւտարի Հայ Սկուտներու տեղական ժողովին:

Իր այս կապը բաւական կ'ըլլայ, որ Զինադադարի առաջին օրերուն, ինք եւս մասնակցի այն ժողովին, որ հիմը պիտի դնէր Հ. Մ. Ը. Մ. ին: Ու Ճիզմէճեան Հ. Մ. Ը. Մ. ի հիմնաքարերէն մին կ'ըլլայ:

Ճիզմէճեան եւս մեծ եռանդով կը փարի այս շարժման: Ու խորապէս գիտակցելով Հ. Մ. Ը. Մ. ի վերնապահուած ազգային վսեմ գործին, արտակարգ աշխուժութեամբ մը կը նուիրուի տղոց հոգեկան ու բարոյական զարգացման: Մարզական ոչ մէկ բաժին կը ստանձնէ, բայց, կ'ըլլայ ամէնուն հետ, ամէն տեղ ու ամէն ատեն, նոյնիսկ իր վաճառատուներ տեսակ մը Հ. Մ. Ը. Մ. ի երկրորդ գրասենեակ դար —

ճնելով: Անշուշտ, այս բոլորին մէջ զգալի դեր կը կատարեն ոչ թէ իր մարդական կամ սկաուտական ծանօթութիւնը, այլ իր ոգին, նկարագիրը, խառնուածքի ջերմութիւնը եւ ընկերական ու ջանադիր տրամադրութիւնները, ինչպէս եւ իր ներքին ջերմ հաւատքը գործի վստահութեանը մասին:

Ահա թէ ինչո՛ւ Հայկ Ճիզմէճեան անտիտղոս տիտղոսաւոր մը կ'ըլլայ, ու Հ. Մ. Ը. Մ. ի մէջ բոլորը իր իրաւասութեանց սահման —



ները չեն փնտռեր, բայց թէքնիք եւ փորձառու ղեկավարներու կողքին — նաեւ այս վերջինները — միշտ կը փնտռեն զինքը, որ, իր կարգին, աշխատանքի տեսակներ չընտրեք, աւ գրեթէ ամէն գործի կը բերէ իր անվերապահ աջակցութիւնը:

Ճիզմէճեան, որ խօսելու շնորհ ունի, յաճախ կ'ըլլայ թաղէ թաղ: Կը բանախօսէ ու կը գասախօսէ, ու շուտով իր անունը կը նոյնանայ մեր մարդական կեանքի աչքառու անուններուն հետ:

1922ի վերջաւորութեան կ'անցնի Եգիպտոս: Ոգին ու համոզումը

ները կը մնան անփոփոխ, անշուշտ, բայց իր գործունէութիւնը ան —
համեմատօրէն կը նուազի, թերեւս հետեւանք տեղական պայմաննե-
րուն, քանի որ, որ եւ է ընդհանրական ձեռնարկի ատեն Հայկը իր
գրութիւներով նոյն խանդն ու նոյն հաւատքը երեւան կը բերէ մինչեւ
այսօր :

8.— ԳԱՌԼՕ ՇԱՀԻՆԵԱՆ

Մարզական կեանքին մէջ Շահինեանի մասնակցութիւնը կուգայ
իր պատանեկութենէն, երբ տակաւին Պէրպէրեանի սան՝ իր շուրջ է
հաւաքած Սկիւտարցի տղաք ու հիմը դրած «Հայորդիներու» Միու-
թեան :

Այդ միութիւնը մէկը կ'ըլլայ, պատերազմէն առաջ, սկաուտական



չարժման յարողներէն: Շահինեան եղած է նաեւ մարզիկ, մասնակցած
է մրցահանդէսներու՝ ուժով եւ կեցած բարձրութիւն ցատկելով, ու
յաճախ առաջնութիւն է խլած :

Զինադադարին ինք կ'ըլլայ «Հայորդիները» ներկայացնողը այն
պատմական ժողովին մէջ ուր հիմը կը դրուէր Հ. Մ. Ը. Մ. ի: Կ'ընտ-
րուի կեդր. վարչութեան անդամ ու կ'ըլլայ ամբողջութեամբ բաժնի վարիչ :
Ան, միանգամայն, կը շարունակէ ըլլալ Սկիւտարի մասնաճիւղի ղե-

կալարներէն : Սկիւտարի մրցահանդէսներուն գլխաւոր կազմակերպիչն է եղած : Իսկ զանազան թաղերու եւ ընդհ. մրցահանդէսներու մէջ դատաւոր, խորհրդատու, յանձնախումբի անդամ : 1922ին կ'անցնի Պուլկարիա : 1925ին՝ Փարիզ, ուր մինչեւ այսօր կը շարունակէ կապուած մնալ Հ. Մ. Ը. Մ. ին եւ ընդհանուր ձեռնարկներուն բերել իր եռանդուն մասնակցութիւնը : Շահինեան ձեռներէց է ու տէր գործօն խանդավառութեան մը, զոր վարակիչ կը դարձնէ իր շուրջիներու համար եւս :

9.— ԲԻԻԶԱՆԻ ԿԵՕԶԻԻՊԵՅՅԻԻՔԵԱՆ

Կէօզիւպէօյիւքեան եւս կը պատկանի Բոպէրթ Քոլէճի խմբակին : Հետեւաբար, ինք ալ մէկն է մեր մարզական շարժման մղիչներէն : Դպրոցը աւարտելէ վերջ, կը դառնայ ուսուցիչ, միանգամայն աւանդելով մարմնամարզ : Այդ կերպով, ան առիթ կ'ունենայ պատրաստե-



լու մարզիկներ, որոնք յաջողութիւններ ձեռք կը ձգեն նախապատե-
րազմեան մրցահանդէսներուն : Կէօզիւպէօյիւքեան ինք եւս կը մաս-
նակցի այդ մրցումներուն ու կը շահի անաջնութիւններ : Ինք էր որ
խլեց, Բ. մրցահանդէսին, ախոյեանութիւնը, եւ երկար տարիներ
պահեց բարձրութիւն ցատկելու հայկական մրցանիշը (1 մ. 71) :

Կէօզիւպէօյիւքեանի դերը աւելի մեծ եղաւ Հ. Մ. Ը. Մ. ի կազմակերպէն վերջ : Ան, ըլլալով խնամակալութեան ընդհանուր տնօրէն,

մեծապէս սատարեց որբանոցներու մէջ սկսուտական շարժման կազմակերպումին, դռները լայն բանալով մեր մարզիչներուն առջեւ: Ասիկա պզտիկ նպաստ մը չէր, անշուշտ: Ու կը բխէր Կէօզիւպէօյիւք — եանի այն խոր համոզումէն թէ ոչ միայն մարմնակրթանքը, այլեւ Հ. Մ. Ը. Մ. ի դադափարականութիւնն ու ոգին հարկ էր ներմուծել մեր պատանիներուն մէջ, որոնք այնքան խաթարուած ու այնքան անմշակ կերպով բերուեր՝ մէկտեղուեր էին որբանոցները, անապատներէն թէ թուրք տուներէն առնուելով ...

10.— Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

Սիրունի անոնցմէ է, որոնք անձնապէս մարզանքի հանդէպ որ եւ է ներքին հակում ունեցած չեն, բայց հայ մարզական շարժման ոչ միայն մօտ են եղած, այլեւ զօրավիղ հանդիսացած են անոր: Սիրունի աջակցութիւնը անցած է համակրանքի սահմանը, ու, հակառակ




դրական մարդ մը ըլլալուն, ան յաճախ անպաշտօն գործակցող մը եղած է մեր ղեկավարներուն: Եղած է Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադիրներէն մին:

Զինադադարէն վերջ եւս, Ռուսմանիոյ մէջ, Սիրունի գլխաւոր ազդակը եղաւ Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսմանիոյ շրջանին, խմբագրեց «Սրի»-ն, նախաձեռնութիւններ վերցուց, վարչական ծանր հոգեր առաւ ուսերուն, ու մինչեւ այսօր ալ նոյն ոգիով ու եռանդով կապուած կը մնայ Հ. Մ. Ը. Մ. ին:

11.— ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ

Բոպէրթ Քոլէճեան մը :

Վահրամ 1907ին կը մտնէ Քոլէճ : Նիւթական միջոցներ չունի : Փոխառութեամբ հեծանիւ մը կը գնէ : Պապը Ալիէն վերին Վոսփոր ամէն առտու լրագիր պիտի բերէ : Ու յաճախ ստիպուած կ'ըլլայ հե — ւասպառ վազել՝ թերթ հասցնելու համար : Այդ ձեւով, ան հետզհետէ կը վարժուի արագ ու երկար վազելու : Կը շահի կէս մղոնի մրցանակ մը : Միջին Վոսփորի մէջ կը հիմնէ «Արտաւազդ»ը : 1912ին, երբ մար — դական կեանքը թափ է ստացած մեր մէջ, Վահրամ Փափազեան Մկր



Մկրեանի հետ կը դրկուի Սթոքհոլմ՝ Միջագոյին ողիմպիականին , կը մասնակցի կէս մղոնի վազքի մրցման : Կը գլխի մրցանակիցները , բայց 100 մեթր մնացած՝ անզգայ կ'իյնայ : Հիմնադիրներէն է Հ. Մ. Ը. Մ.ի :

Պատերազմէն առաջ եղած է ուսուցիչ : Ու աշխատակցած է «Մարմնամարզ»ին : Ինչպէս եւ «Ազդարար»ին ու «Հայ Սկաուտ»ին՝ պատերազմէն յետոյ : Ժ. Եաղմուրեանի հետ հրատարակեց «Մար — դաշխարհ»ը : Լաւ լուղորդ էր ու միշտ առաջնութիւն կը շահէր : Փա — փազեան. ունի գործնական ոգի մը, զոր ամէն բանի մէջ երեւան կը բերէ : Զարքաչ է, պարզունակ եւ յարմարող : Ու միանգամայն յարա — րեւող ու յամառ՝ իր ծրագիրներուն մէջ : Հ. Մ. Ը. Մ.ի հիմնումէն

վերջ եղաւ աթլէթիք բաժնի վարիչներէն մին՝ Կեդր. Վարչութեան մէջ: 1922ին անցաւ արտասահման: Այժմ Սուրիա է, ու կը շարունակէ աշխատակցիլ հայ մամուլին:

12.— ՔԱՂՈՒՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Չանջատեցինք Եզնիկն ու Եղիշէն, որովհետեւ, նոյնարիւն այս երկու երիտասարդները ոգիով ու ճիգերով կապուած մնացին նաեւ մեր շարժման մէջ:

Եզնիկին կը հանդիպինք պատերազմէն առաջ, «Տորք»ի շարքերը: Աշխոյժ ու վարակող, ան կիրակնօրեայ արշաւանքներու ոգին է հոն: Իսկ երբ «Մարմնամարզ»ի հրատարակութիւնը կը սկսի, Եզնիկ Քա-



ղունի կը դառնայ Շ. Քրիսեանի գործակիցներէն մին: Ան եւս կը կատարէ դասախօսութիւններ՝ առողջապահական նիւթերու շուրջ:

Պատերազմէն վերջ Երեւան է: Հոն կը մնայ՝ իբրեւ մարզանքի ուսուցիչ ամերիկեան որբանոցներու: Ու կը նուիրուի, երկրի մէջ, մարզական — սկաուտական այն շարժման, որու մասին առանձին գրած ենք: Իրեն յանձնուած էին Աղեքսանդրեան եւ Գալֆաեան կիմ — նազիոններու մարզանքի դասերը:

« Եռուզեռը որ ծայր տուեր է հիմա, — կը գրէր Երեւանէն՝ Հ.

Մ. Ը. Մ. ի կեդրոնին — մեր ջանքերով՝ անհամեմատ աւելի ուժեղ է եւ աւելի բարձր է : Սրտով ձեզ հետ ենք» :

Եղիշէ, — Կեդրոնականի աշակերտ : Մեր առաջին Փութպոլիտաներէն մին, նախ՝ «Սանթրալ» ի եւ յետոյ «Տորք» ի մէջ որուն հիմնադիրներէն կ'ըլլայ : Կ'ուսանի, Պոլսոյ մէջ, իրաւաբանութիւն : Յետոյ կ'անցնի Վան՝ իբրեւ մարզանքի ուսուցիչ : Հոն կը հիմնէ «Վասպուրական» Փութպոլի խումբը : Ընդհ. պատերազմին, կը մասնակցի Վանի ինքնապաշտպանութեան կռիւներուն : Յետոյ կը դառնայ Զօր. Անդրանիկի քարտուղար, անոր հետ Կովկասէն կ'անցնի Փարիզ, Լոնտոն, Մանչէսթր : Նոյն այդ պաշտօններուն կողմէ կը վերադառնայ Հայաստան՝ զգեստեղէն բաժնելու համար : Այդ առթիւ, ան շփում ունեցաւ, Պոլսոյ մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնին հետ, խոստացաւ երկրի մէջ սատարել սկաուտական շարժման եւ իր հետ տարաւ մարզական դոյքեր :

13.— ՄԿՐՏԻՉ ԵԱՆԸԳԵԱՆ

Այտընի նահանգին հայ սկաուտներու պետն էր Մկրտիչ Եանըգեան : Մասնազէտ Փութպոլիտա մը եղած է ան : Ունի ձեռագիր ուսումնասիրութիւն մը՝ Փութպոլի մասին :

Ինք եղած է Իդմիրի հայ մարզական կեանքի ամէնէն աչքառու դէմքը : Կապ հաստատած է Անդլիոյ սկաուտական պետերուն հետ : 1911ին դացած է Պոլիս՝ Ա. մրցահանդէսին՝ իբրեւ ներկայացուցիչ «Որսորդաց» ակումբին : Հոն շփում ունեցած է «Մարմնամարզ» ի շրջանակին հետ ու միշտ կապ պահած է անկէ վերջ : Պատերազմէն յետոյ կը թղթակցէր «Հայ Սկաուտ» ին : Իսկ 1922ին միացաւ Հ. Մ. Ը. Մ. ին : 1922ի աղէտէն վերջ անցաւ Միացեալ Նահանգները, ուր դասախօսութիւններ տուաւ սակուտիամի՝ եւ Փութպոլի մասին : Ընտրուեցաւ դատաւոր Նիւ Եորքի Փութպոլի Փէտէրասիոնին : 1936ին հրատարակեց Փութպոլի օրէնքներու մասին հայերէն դիրք մը :

14.— ԱՐԹԻԻՐ ԷԼՄԱՍԵԱՆ

Իդմիրի մարզական ղեկավարներէն է եղած Էլմասեան, զեռ բռնապետական շրջանէն սկսած : Երկար տարիներ կապուած է մարզական շարժման, հետզհետէ իւրացնելով մարմնակրթանքի նրբութիւններն ու թէքնիքը : Այժմ Գահիրէի մէջ ունի մարմնակրթանքի անձնական սրահ մը : Իր աշակերտն է եղած Եգիպտոսի մարզանքի օրինակելի ուսուցիչը՝ Ստ. Խանճեան :

15.— ՄԿՐ ՄԿՐԵԱՆ

Մեր առաջին ու լաւագոյն մարդիկներէն մին :

Բոպէրթ Բուլէճի մեր մարդական հոյլէն : Սկիւտարի մէջ հիմնած է «Հայ Մարդարան»ը, եւ խնայած չէ ոչ իր ջանքերը, ոչ ալ, ի հարկին, իր դրամը : Պատերազմէն առաջ աչքաուռ վարիչներէն մին էր : 1912ին զրկուեցաւ Սթոքհոլմ՝ միջազգային ողիմպիականին, ուր մասնակցեցաւ Փէնտաթլոնի մրցումին եւ 5րդ եյաւ : Նոյնը՝ սկաւառակի մրցման մէջ :

Հակառակ իր ջերմ սիրոյն՝ դէպի մարմնակրթանքը, Մկրեան, անբացատրելի կերպով, մեկուսացած մնաց Հ. Մ. Բ. Մ. էն ու մինչեւ վերջ իր մասնակցութիւնը չբերաւ անոր :

16.— ՍՏ. ԽԱՆՃԵԱՆ

Գտնուելով Պուլսէն հեռու՝ Ստ. Խանճեանի անունը ընդհանրացած չէ՝ որպէս մարդական առաջնորդ : Այսուհանդերձ, Խանճեան մեր պատրաստուած վարիչներէն մին է, ունի յարատեւելու կամք, աշխատանքի սխտէմ, դործի բծախնդրութիւն եւ ատող ոգի :

Ան աւարտած է Լիոնի ակադեմին, ու անցած է Աղեքսանդրիա՝ իրրեւ մարզանքի ուսուցիչ Պողոսեան վարժարանի եւ Փրանսական քոլէճի : Այնտեղ իր դործունէութիւնը մեծապէս դնահատուած է : Խանճեան վարիչն է եղած Աղեքսանդրիոյ «Կամք» մարմնամարդական միութեան :

17.— ՎԱՐԱԳ ՓՈՂԱՐԵԱՆ

Վարագը բնիկ Շապին Գարահիսարցի է : Զուտնաճեան է. բայց՝ յետոյ հայացուած (Փողարեան) : Յաճախած է Բոպէրթ Բուլէճ, աւարտած է դայն ու նշանակուած է, նոյն վարժարանին մէջ, մեքենական ճիւղին վարիչ : Պաշտօն մը, զոր մինչեւ վերջ շարունակեց : Վ. Փողարեան միանգամայն մարզանքի ուսուցիչ էր : Պատերազմէն առաջ իրրեւ այդպիսին դնաց Կիլիկիա, ուր շարժում ստեղծեց : Մասնակցած է մրցահանդէսներու, կը պահէր նիւրակ նետելու մեր մրցանիչը (ծայրէն) : Կը նետէր նաեւ դունդ, քար եւ սկաւառակ : Բայց, Վարագ առաւելապէս Փութպոլով է որ անուանի դարձած է : Պատերազմէն առաջ «Տորք»ի լաւագոյն խաղացողներէն էր : Յետսապահ էր : Ու ամբողջ Պուլիսը դայն կը նկատէր «անծակելի պատուար մը» : Պատերազմէն վերջ Հ. Մ. Բ. Մ. ի Փութպոլի կեդր. յանձնախումբի ան-

դամ էր : Թուռնուաները ինք կազմակերպեց : Լաւ դատաւոր էր : Վարաց թէ պատերազմէն առաջ եւ թէ յետոյ գրած է յօդուածներ Փուլ-



պուլի մասին : Ունի նաեւ գիրք մը՝ որ կրնայ մրցիլ Փուլպուլի մասին եղած որ եւ է եւրոպ . հրատարակութեան հետ : Իր անունը նոյնացած էր Փուլպուլին հետ :

Խառնուածքով հեղ էր , ընկերական , իրական սփորթմէն մը : Մեռաւ Պոլիս , 1938ին :

18.— ԼԵԻՈՆ ՅԱԿՈՒԵԱՆ

Եղբայրը Գր . Յակոբեանի : Անդամ «Տորք»ի : Աշխատած է եղբօրը հետ ու ջերմօրէն փարած է հայ մարզ . շարժման : Ինք եւս չէ խնայած ո՛չ ժամանակ , ո՛չ եռանդ եւ ո՛չ ալ նիւթական : Անդամ էր աթլէթիք կեդր . յանձնախումբին : Լաւ լուղորդ էր : Եղած է մարզանքի ուսուցիչ ազգ . վարժարաններու մէջ :

19.— ՊՕՂՈՍ ՇԱՊՈՅԵԱՆ

Բնիկ Արաբկիրցի : Յաջողութեամբ աւարտած է Պոլսոյ «Սուլթանիէ»ն : Եղած է «Տորք»ի լաւագոյն խաղացողներէն մին : Գում Գա - փուլի մասնաճիւղի վարիչներէն էր : Նաեւ՝ մարզանքի ուսուցիչ : Մինչեւ վերջ մնաց Հ . Մ . Ը . Մ . ի վարիչ տարրերէն մին : Անդամ էր մարզ . կեդր . յանձնախումբին :

20.— ՏԻԳՐԱՆ ԽՈՅԵԱՆ

Սոյեան «Փրոթի»ի անդամներէն էր: Ու անոնց ամէնէն ընդունա-
կը: Չերազի ձեռքին տակ մարդուեցաւ, կրեց անոր ազդեցութիւնը
եւ խմորուեցաւ անկէ: Եղաւ անոր օգնականը: Նախապատերազմեան
չրջանին ինք կը ներկայացնէր «Փրոթի»ն: Իբրեւ այդպիսին ալ մաս-



նակցեցաւ, Չինադադարի սկիզբը, Հ. Մ. Ը. Մ.ի հիմնադրութեան
ժողովին: Եղաւ սկսուտ խմբապետ: Յետոյ մաս կազմեց Հ. Մ. Ը.
Մ.ի կողմէ Հայաստան ղրկուած առաքելութեան: Աւելի վերջ անցաւ
Ամերիկա: Հոն աւարտեց ամերիկեան մարմնակրթ. վարժարան մը ու
եղաւ մարզանքի ուսուցիչ: Հ. Մ. Ը. Մ.ի Ամերիկայի շրջանը կազ-
մողներէն մին եղաւ, օգտուելով արդէն իսկ գոյութիւն ունեցող կո-
րիզէն :

21.— ՕՆՆԻԿ ՖՐԷՆԿԵԱՆ

«Արաքս»ի թիմէն էր: Լաւ յետսապահ մը: Պատերազմէն յետոյ
Հ. Մ. Ը. Մ.ի եռանդուն վարիչներէն մին եղաւ: Իր ջանքերուն շնոր-
հիւ էր որ Բերայի Շիշլի մասնաճիւղը հասաւ նախանձեղի աստիճանի
մը: Անդամ էր սկսուտական կեդր. յանձնախումբին :

Ա.ԽՈՅԵԱՆՆԵՐ

.....

Ստորեւ կուտանք ամփոփ տեղեկութիւններ այն հայ մարզիկներու մասին, որոնք ամփոփ տեղեկութիւններ են իսլաժ՝ հայ թէ օտար մըր-
ցահանդէսներու մասնակցելով :

ԳԵՈՐԳ ՅԱԲԵԹԵԱՆ

Ծնած է Իզմիր . առաջին անգամ 1916ին սկսած է մարմնամարզի
հետեւիլ Ս . Մեսրոպեան վարժարանը :

1911ին Փարատիսոյի ձիարշաւի դաշտը հայկական ողիմպիական
մրցումին շահած է առաջնութիւններ :

1912ին Պոլսոյ մէջ, հայկական ողիմպիական մրցումներուն կը
մասնակցի, շահելով հարիւր մէթր վաղքի եւ մէկ քայլ ցատկելու ա-
ռաջնութիւնները, եւ երեք քայլի երկրորդութիւնը, 1 սանդիմ տար -
բերութեամբ :

1913ին՝ մէկ եւ երեք քայլ ցատկելու մէջ առաջնութիւն կը շահի :
Իսկ 100 մէթրի մէջ երկրորդութիւն :

1912ին եւ 1913ին Ամերիկեան Քոլէճի խմբապետութիւնը կը վա-
րէ, ուր դպրոցական բաժակի մրցումներ կը կատարուին եւ երկու
տարի իր խումբը առաջնութիւն կը շահի :

Պատերազմի շրջանին հայկական խումբը կը լուծուի եւ ան կը
մասնակցի «Ալթա» Փութպոլի խումբին, ուր մեծ ընդունելութիւն կը
դանէ, ստանալով verdun մակդիրը :

Հ . Մ . Ը . Մ . ի Յունաստանի կեդրոնը զինքը դարձեալ խմբապետ
նշանակած էր քանի մը տարի առաջ :

Զինադադարէն մինչեւ Իզմիրեան աղէտը, հայկական Փութպոլի
եւ Վասպուրականի մարմն . ախումբի Փութպոլի խումբերուն խմբա-
պետութիւնները կը վարէ :

Աղէտէն քանի մը օր առաջ կ'ապաստանի Աթէնք : 1923ին կը կադ-
մուի Հ . Մ . Ը . Մ . ը Յունաստանի մէջ եւ ան կ'ընտրուի խմբապետ
Փութպոլի առաջին խումբին, զոր կը շարունակէ մինչեւ 1927ի վեր -
ջերը : Այժմ կը հետաքրքրուի ի դարձեալ հայ մարզական կեանքով :

ՅԱԿՈՒԹ ԱՇՃԵԱՆ

Ան՝ համբաւ ունի Իտալիոյ մէջ եւ 1927ին մասնակցած է նաեւ
Փրանսահայ ողիմպիականին ազգային նոր recordներ հաստատելով :
1927 տարւոյն մէջ է որ ձեռք ձգած է իր ամենալաւ արդիւնքնե -

ըր, եւ իրաւի Հոռվմի Միջագրային Ուսանողական Ողիմպիականին պատրաստութեան միջոց մրցումի մէջ նիղակը նետած է մինչեւ 53.35 մեթր եւ միանգամայն Գ. հանդիսացած է բոլոր աղղերու ուսանողաց ներկայացուցիչներուն մէջ: Նոյն տարին Փարիզ հրաւիրուելով Հ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղէն՝ Ա. հանդիսացած է 4 մրցումներու մէջ, եւ պաշտօնական կերպով կտարած է նիղակի աղղային հին recordը նետելով նիղակը մինչեւ 50.03 մեթր :

Տորթ. Յակոբ Թաշճեան որ ծնած է 1903 թիւին՝ Պոլիս, նախկին Հ. Մ. Ը. Մ. ական մըն է: Ան իր ուսումը ստացած է Մխիթարեան վարժարանին մէջ եւ յետոյ անցած է Վենետիկի Մուրատ Ռափայէլեան վարժարանը: 1922ին վերադառնալով Պոլիս, առաջին անգամ ըլլալով մասնակցած է մրցման մը՝ նոյն տարուան հայկական ողիմպիականին եւ Ա. հանդիսացած է կեցած երկայնութիւն ցատկելու մէջ:

Քանի մը տարուան շրջանին կը դառնայ Բիէմոնթէ նահանգին ամենակատարեալ մարզիկը՝ դրաւելով առանձնաշնորհեալ դիրք մը, եւ պանծացնելով հայ անունը :

Յակոբ Թաշճեան իր երեւելի Փիլիքականին շնորհիւ, մեծ յաջողութիւն դտած է մանաւանդ նիղակ նետելուն մէջ, եւ այս ճիւղին Բիէմոնթէի recordmanն է, ան կը փայլի նաեւ երեք քայլ եւ կեցած ցատկելուն մէջ, 110 մեթր ցանկարչաւի, սկաւառակ եւ քար նետելու մէջ: Հուժկու բաղուկով մը դինուած՝ եւ ընտիր styleէ մը օգտուելով՝ Թաշճեան իր ամենափայլուն արդիւնքները նիղակ նետելուն մէջ ձեռք ձգած է:

100 մեթր վազք՝ 11 4/5 : 400 մ. 56 4/5 : 110 ցանկարչաւ 18 4/5 : Ուժով երկայնութիւն ցատկել 6,02, կեցած երկ. 2.94: Զոդով բարձրութիւն ցատկել 2.90, սկաւառակ նետել 34.55, ուժով երեք քայլ ցատկել 12.88, կեցած երեք քայլ ցատկել 9.02, քար նետել (6.5 քիւնոց) 13.17, նիղակ նետել 50.05:

Այս վերջին չորս չափանիշները կարծենք հայկական պաշտօնական recordներէն բարձր են, որով կը յուսանք որ հաստատուին իբր հայկական նոր recordներ:


Այս փայլուն արդիւնքներէն վերջ կրնանք Յակոբ Թաշճեանը իբր կատարեալ մարզիկ մը նկատել :

ՀԱՅԿ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Հայկ Ասատուրեան կուփամարտիկ մըն է, ու ախոյեան է եղած Եգիպտոսի, Սուրիոյ եւ Պաղեստինի մէջ:

ՅԱԿՈՒ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ֆիլիպէի « Շանթ » միութեան անդամներէն է եղած Յ. Մամիկոնեան, կամ « Մամիկոն »ը՝ ինչպէս սովորութիւն եղած է կոչել զինքը: Ֆիլիպէէն անցած է Փարիզ ու Մարսէյլ: Տարիներու հետեւողական աշխատանքով՝ Մամիկոն դարձած է « Աթլէթ քոմիտէ » մը, ըլլալով Հ. Մ. Ը. Մ. ի լաւագոյն մարզիկներէն մին: Յաջողած է ձեռք ձգել 200 մեթր վազքի, ձողով բարձրութիւն ցատկելու, 400 մեթր դրօշարշաւի ազդ. մրցանիշերը: Մասնակցած է Փրանս. ազդ. խումբին, ու հոն է որ յաջողած է ձողով 3.60 մեթր ցատկել (մեր մրցահանդէսին մէջ ցատկած է 3.32):




ՅԱԿՈՒ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ձողով ցատկելու մէջ, Փարիզ (3 մ. 32)

ՄԱՐՏԻՐՈՍ ԳՈՒՅՈՒՄՉԵԱՆ

Իր մէջ մարդական հակումն ու ընդունակութիւնը երեւան են եկած Բոպէրթ Քոլէճէն ներս, զոր աւարտած է յաջողութեամբ: Հոն, Գուլումճեան խլած է առաջնութիւններ: Մասնակցած է նաեւ Ա. եւ Բ. հայկական մրցահանդէսներուն (ձողով ցատկել, արգելարչաւ



եւայլն): Ան ստանձնած ու կատարած է կազմակերպչական աշխատանքներ եւս: Բոպէրթ Քոլէճի ներկայացուցիչն էր այն մրցահանդէսներուն, որուն նախաձեռնութիւնը կը ստանձնէր «Մարմնամարզ»: Գուլումճեան նախագահն էր Քոլէճի մէջ կազմուած «Dodge» միութեան: Այժմ Պաղտատ կը գտնուի :

Յ. ԵՐԱՄԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ի Վառնայի մասնաճիւղի անդամներէն: Աթլէթ Գոմփիլէ: Տիպար մարզիկ մը՝ իր նկարագրով եւ կենցաղով: Միանգամայն Փութպոլիստ: Մաս կը կազմէ Վառնայի պուլկարական «Թիւչա» խումբին (նաեւ Հ. Մ. Ը. Մ. ի թիմին): Խաղացած է նաեւ պուլկազգ. խումբին մէջ: Պուլկարիոյ կողմէ մասնակցած է միջպալքանեան մրցահանդէսներուն: Լաւ վազող է: Իրն է ուժով բարձրութիւն ցատկելու ազգ. մրցանիշը: Իր մրցանիշները կ'երեւին Պուլկարիոյ շրջանի տեղեկագրին մէջ:

ՃԻՏԷՃԵԱՆ

Կուիամարտիկ մըն է նաեւ Ճիտէճեան, որ շահած է Թուրքիոյ փետուր ծանրութեան ախոյեանութիւնը :

Ս. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ֆութպոլիստ մը: Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի Ա. խումբէն: Յետոյ՝ Club Français ի մաս կազմեց (Փարիզի ախոյեան խումբը որ finaliste եղաւ Ֆրանսայի ախոյեանական մրցումներուն): Ս. Կարապետեան sélection եղած է Փարիզի խումբէն:

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

.....

Բաղմաթիւ կորուստներ ունի հայ մարզական շարժումը: Կորուստներ՝ Մեծ Եղեւնի օրերէն, պատերազմի դաշտին վրայ, արկածներէ կամ հիւանդութեանց իբրեւ զոհ :

Մեր քսանամեայ պատմութեան նուիրուած այս հաստորին մէջ, փոխան ծաղկեպսակի, իրենց յիշատակը կ'սղեկոչենք այս էջերուն մէջ, — քանի որ անոնք միշտ մեզի հետ են՝ սրբան ատեն որ դործը կենդանի է :

Տարարախտարար, անկարելի եղաւ նաեւ մեր կորուստներուն ցանկը լրիւ տալ, — այնքան ցանուցրիւ են անոնց աճիւնները ու անկարելի՝ ամէն մէկի մասին տեղեկութիւններ ձեռք ձգել :

ԳԱՌՆԻԿ ՇԷՀՐԻԿԵԱՆ

Հ. Մ. Բ. Մ. ի ամէնէն արդիւնաւոր սատարողներէն մէկը: Ինք էր որ, իբրեւ ընդհանուր համարակալ կեզր. վարչութեան, յաջողեցաւ ստեղծել հաշուապահական եւ անդամագրական օրինակելի դրութիւն մը: Ստապահանջ՝ իր խառնուածքով՝ Շէհրիկեան նոյն ոգին կիւրարկեց նաեւ Միութեան մէջ: Կեզր. վարչութիւնը իր 1922 մարտ 22ի նիստին մէջ որոշեց արծաթ մետալով մը պատուել զայն :


1923ին, երբ Փարիզ հաստատուեցաւ, կրկին դործօն դեր ստանձնեց Հ. Մ. Բ. Մ. ի մէջ: Յետոյ անցաւ Թիխոն (Սպանիա) ; ուր մեռաւ:

ԺԻՐԱՅՐ ԵԱՂՄՈՒՐԵԱՆ

Հ. Մ. Ը. Մ. ի անդամ մը: Պատերազմէն վերջ էր ուր իր անունը խառնուեցաւ Հայ Մարդ. շարժման: Մարդիկ մը չէր Եաղմուրեան, ո՛չ ալ՝ Փուլթալուի մը: Մարզական աշխատակիցն էր զանազան հայ թերթերու: Ինք մէկը եղաւ Պոլսոյ Փուլթալուի թուռնուան կազմակերպողներէն: Վ. Ս. Փափազեանի հետ հրատարակեց «Մարզաշխարհ»ը: Մեռաւ 1937ին, Փարիզի մէջ:

ՀԱՅԿ ՃՕԼՕԼԵԱՆ

Ծնած է 1893ին, Ատափազար: Նախնական եւ երկրորդական կրթութիւնը առած է Էսաեան, Կեդրոնական եւ Արդի վարժարաններու մէջ: Փոքր տարիքէն նուիրուած է մարզական կեանքին: Հետեւած է



մասնաւորաբար Փուլթալուի եւ դաշտային խաղերու: Եղած է Արաքսի ու Տորքի եռանդուն անդամներէն: Մասնակցած է նախապատերազմեան մրցախաղերուն: Արդի վարժարանի մէջ կազմած է «Արարատ» Փուլթալուի խումբը: 1914ին դացած է Կարին՝ խճուղիներու շինութեամբ զբաղող Փրանսական ընկերութեան մը մէջ իբրեւ երկրաչափի օգնական: Զօրաշարժին՝ արձանագրուելով իբրեւ երկրաչափի օգնական՝ թրքական բանակին մէջ, պահ մը ծառայած է Կարին եւ յետոյ

Սերաստիա, ուր 1916ին զոհ գացած է Շար — Քըչլայի կոտորածին :
Պառնուածքով անչահախնդիր էր, չափազանց ընկերասէր, նուիրուն,
զոհաբերող եւ համեստ :

ԲԱԳԱՐԱՏ ԹԱՀԹԱՃԵԱՆ

Մէկը հայ խոստմնալից մարդիկներէն՝ որ զոհ եղաւ կռիամար —
տին : Բազարատը՝ որբացած Ատանայի եղեռնին ատեն, 1909ին Պոլիս
կուզայ ու կը յաճախէ Պէրպէրեան, միեւնոյն ատեն մասնակցելով
մարզական շարժման, «Ռաֆֆի» մարզական միութեան մէջ : 1920
Դեկտեմբեր 25ին 10 բառնանոց մրցումի մը մէջ 6ի դէմ 12 կէտով
յաղթեց Թուրքիոյ 8 տարուան ախոյեան Քէմալ Պալոֆի : Հիւանդ հիւ-
անդ մասնակցեցաւ Բերայի մէջ կռիամարտի մը, 1921 սեպտ. 17ին,
Ամերիկացի Պէթլինկ Քէլլիի հետ : Երրորդ բառնատէն յետոյ, դատա-
ւոր Մազլումիտիսի անարդար մէկ միջամտութեամբը Բազարատ կը
ստիպուի ընկէն դուրս իր հակառակորդէն հարուած մը ընդունիլ
ձախ աղանջին, եւ կ'իյնայ զգայալիբկ, ու ալ չարթննար :

ՔՐԻՍ ՖԵՆԷՐՃԵԱՆ

Հայ յեղափոխութեան վէթէրանը, պահ մը սատարեց նաեւ Հ. Մ.
Ը. Մ.ին : Ան անդամ էր Պոլսոյ վերջին Կեդր. Վարչութեան, եւ սկը-
սած էր աշխատիլ երիտասարդի մը աւիւնով՝ մեր վաղուան սերուն —
դին մարմնի եւ հոգիի ազնուացմանը համար : Ան միեւնոյն ատեն Հ.
Մ. Ը. Մ.ը կը ներկայացնէր Հայրենիքի Օգնութեան Մարմնին մէջ :
1922ի ծանօթ դէպքերը շատերուն հետ Քրիսին ալ աշխատանքը ան —
պտուղ թողուցին : Պոլսէն անցաւ Պուլկարիա, եւ անկէ ալ Փարիզ,
հոն ալ հիւժախտէն տապալեցաւ այս վիթխարի կաղնին, ան՝ որ փոր-
ձեր էր օր մը Երլարըր դղրդել :

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

Ծնած է 1894 Յունուար 17ին Պոլսոյ Կէտիկ փաշա թաղը : Թափա-
ռած է դպրոցէ դպրոց, — Պէրպէրեան, Պարտիզակի Ամերիկեան բար-
ձրագոյն վարժարանը, Ռոպէրթ Քոլէճ, յետոյ կրկին Պէրպէրեան,
զոր աւարտած է 1913ին : Կը մեկնի Ատանա, իբր մարզանքի ուսուցիչ :
Հոնկէ Լիբանան կ'անցնի՝ դարձանելու իր վտանգուած առողջութիւ-
նը, Պոլիս դարձին՝ ուսուցիչ է Պէրպէրեանի մէջ : 1921ին այլեւս չի

կրնար շարունակել դպրոցը, ու Մեծ կղզի կ'առանձնանայ դարմանելու իր հիւժած մարմինը: Մահը ղինք հոն կը գտնէ 1924ին: ԶարիՓեան առաջին օրէն սիրահար էր սփօռի: 1912ի հայկական Բ. ողիմպիականին Ա. կը հանդիսանայ երեք քայլ ցատկելու մէջ, երկրորդ՝ երկաթ նետելու, եւ երրորդ՝ սկաւառակի, նիզակի, եւ կեցած երկայնու թեան մէջ: Օրուան ախոյեան կը հանդիսանայ, 1911 Օգոստոս 28ին «Ռաֆֆի»ի տարեկան մրցահանդէսին մէջ :

ՏՈՒՔԹ. ՍՈՒՐԷՆ ՈՒԶՈՒՆԵԱՆ

Հայ մարմնակրթութեան սրտցաւ բարեկամ մը եղաւ ան: Հաւատացած անոր բերած բարիքներուն՝ Տսքթ. Ուղունեան մինչեւ իր վերջին շունչը մարմնակրթութեան սէրը քարոզեց եւ դորավիզ մը եղաւ Հ. Մ. Ը. Մ. ին:

ԱԼԷՔՍ (ՄԿՐՏԻԶԵԱՆ)

Հայ մարզական շարժման կրտսեր սերունդէն, մեծապէս տքնած այդ շարժումին ծաւալմանը համար: Թերթերու կ'աշխատակցէր մարզական նիւթերու շուրջ յօդուածներով: Անցեալ տարի թոքախտը զոհ տարաւ ղինքը Պոլսոյ մէջ :

ՆՈՒՊԱՐ ԱՆԵԱԶԵԱՆ

Սկաուտ վարիչ Հ. Մ. Ը. Մ. ի Կալացի մասնաճիւղին՝ ծաղիկ հասակի մէջ գերեզման մտաւ չկրնալով տոկալ վիրաբուժական գործողութեան մը :

ԳԷՈՐԳ ԹԵՐՃԻՄԱՆԵԱՆ

Հայկական Ա. ողիմպիականի կազմակերպիչներէն: Սպաննուած տարագրութեան մէջ :

ՄԱՐՏԻԿ ՇԻՇՄԱՆԵԱՆ

Ծնած է 1896ին: Անդամ էր «Հրատ» մարմնակրթական միութեան: Յետոյ եղաւ առաջնորդ Սկիւտարի սկաուտական խմբակներէն մէկուն: Կարգապահ էր ու խանդավառ: Ու պարզասէր :

ՀԱՅԿ ՄՐՏԻԿԵԱՆ

Զինադադարի վաղորդային անվլիական օղանաւերէ նետուած ուումք մը խլեց Հայկը, որ Պոլսոյ մարզիկներէն էր եղած :

ԱՐՏԱՇ – ԵՓՐԵՄ

Սկիւտարի Հայ Մարդարանի ամենափառաւոր շրջանի վարիչներէն : Պոլսահայ ծանօթ մարդասէր մը եւ տեղեակ աթլէթիք խաղերու, մասնագէտ – դատաւոր վաղքերու : Բոլոր ընդհ. ողիմպիականներուն «ժամ բռնող»ը եղած է : Մինչեւ անցեալ տարի «Նոր Լուր»ի մարդական աշխատակիցն էր :

ՊԵՏՐՈՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Բնիկ Ռոտոսթոցի : Ուսումը առած է Պոլսոյ Պէդագեան լիսէն : Կանուխէն կապուած է մարդական կեանքին : Հ. Մ. Ը. Մ. ի Ֆիլիպէի մասնաճիւղի հիմնադիրներէն է եղած : Եղած է աթլէթիկ ու Փուլթպոլի ճիւղերու մարզիչ : Պուլկարիոյ մէջ անուանի Փուլթպոլիստ մըն էր ու կը խաղար պուլկար ախոյեան խումբերուն մէջ (կեդրոն միջնապահ) : Նկարագրով տիպար երիտասարդ մը, հեղ, ուրախ, նուիրուն եւ կամքի տէր : Սոֆիայի մէջ զոհ գնաց վիրաբուժական գործողութեան մը :

Ս. ՍԻՆԷՄԵԱՆ

Ծնած է Պոլիս : Պէրպէրեանի փայլուն շրջանաւարտներէն է եղած : Նախ անդամ էր Սկիւտարի «Հ. Մարմնամարդարան»ին : Ուժով բարձրութիւն կը ցատկէր : Զինադադարին Հ. Մ. Ը. Մ. ի լաւ մարզիկներէն մին եղաւ : Ու իր մասնակցութիւնը բերաւ մարդական ձեռնարկներուն : Մեռաւ 1938ին, Փարիզ :

ԳԱԼՈՒՍՏ ԱՐԵԱՆԵԱՆ

Որք մը եղած է ան՝ Եէտի Գուլէի մէջ : Հոն կազմած էր «Որբա – նոց» եւ «Արծիւ» խումբերը զորս յետոյ միացուց «Արտաւազը»ին (Վերին Վոսփոր) :

Ընդհ. պատերազմին աքսորուեցաւ Տէր Զօր, ուր սպաննուեցաւ :

ԱԻԵՏԻՍ ԱՅՃԵԱՆ

Ծնած է, 1892ին, Արաբկիր: Կրթութիւնը ստացած է Խարբերդի Փրանսական Քոլէճը: Աւարտելէ վերջ անցած է Պոլիս եւ հետեւած է Օսմ. համալսարանի ուսողութեան ճիւղին: Պատերազմի ատեն Պիթլիս էր՝ իբրեւ ուսուցիչ թրք. լիւթին: Հոն մասնակցած է մարզական շարժումին: Իսկ Պոլսոյ մէջ «Տորք»ի անդամ էր: Տեղահանութեան ատեն անհետ կորած է:

ԶԱՐՄԱՅՐ – ՊՕՂՈՍ ԱՅՃԵԱՆ

Ծնած է Սկիւտար՝ 1897ին: Նոր՝ դպրոցն է աւարտած: Ու եղած նոյն վարժարանի սկսուտներէն: Պատերազմի Ա. տարին ուսուցիչ եղաւ հոն: Յետոյ՝ թարգման՝ թուրք բանակին մէջ: Բայց, առողջու – թիւնը քայքայուեցաւ եւ մեռաւ:

ՎԱՐԴԵՎԱՌ ԵԱՓՈՒՃԵԱՆ

Հաճնցի: Տարսոնի Ամերիկեան Քոլէճի բարձրագոյն կարգի ու – սանողներէն եւ նոյն հաստատութեան մարմնամարզի ուղին: Հայ մարզական կեանքին մէջ կրնար նշանակելի դեր մը կատարել: Աքսոր – ուելով Տէր Զօր՝ նահատակուեցաւ:

ՍԻՄՈՆ ՍԱՆԹՈՒՐԵԱՆ

Մեծղի մըն էր Սիմօն: Սկիւտարի մէջ դինքը կը կոչէին «Սիմօն – ներ»: Խանդավառօրէն կապուած էր մարզական կեանքին եւ անդամ էր «Անդրանիկ» մարզական միութեան, զոր ինք էր հիմնած: Մաս – նակցած է Բ. մրցահանդէսին: Զոհ եղած ընդհ. պատերազմին:

ԳԵՈՐԳ ՔԵՐԷՍԹԵՃԵԱՆ

Առաջնորդը Մազրիզիւղի «Սասուն»ին: Ինք էր որ դպրոցի տղաքը խմբեց գնդակի մը շուրջ, վերածելու համար զայն միութեան մը, որ յաջողութենէ յաջողութիւն պիտի քալէր:

Գէորգ «Սասուն» Ֆութպոլի թիմին երկաթ պէքն էր, Ռոմէլի լիկին լաւագոյն խաղացողներէն մին:

Իր մշտակայ քաղցր ժպիտը խոտոր կը համեմատէր իր կազմին: Զոհ ահաւոր պատերազմին:

ՀՐԱՆՏ ԿԵՕԶԻԻՊԵՕՅԻԻՒՅԵԱՆ

Ուսանող Ռոպէրթ Քոլէճի եւ անդամ Սկիւտար «Ռաֆֆի» մարմնամարզական միութեան: Խոստմնալից աթլէթ էր, իր մարզական պատրաստութիւնը կը պարտի Ռոպէրթ Քոլէճի: Վաղաժամ բաժնուէցաւ կեանքէն՝ չկարենալով յաղթահարել իր կուրծքը քանդող հիւանդութեան: Եղբայրը՝ Բ. Կէօզիւպէօյիւքեանի :

ՏՈՔԹ. ԳԱՐԱՆՖԻԼԵԱՆ

Մարմնակրթութեան ջերմ տարածող մը: Մարմնամարզի եռանդուն աշխատակից մըն էր այս երիտասարդ բժիշկը :

ԵՐՈՒԱՆԻ ՆՇԱՆԵԱՆ

Հիմնադիրներէն Մազրիզիւղի Սաաւուն մարմնամարզական միութեան, կազմակերպական աշխատանքի ամէնէն ծանր բեռը իր վրայ կեդրոնացած էր: Հետեւողական եւ յամառ ըսուելու աստիճան յարատեւ իր գործունէութեան ընթացքին: Իր անխոնջ ջանքերուն շնորհիւ Սաաւուն միութիւնը մաս կը կազմէ Ռումէլի լիկին (միջազգային) եւ 1914ի խաղաչրջանին ախոյեան կը հանդիսանայ: Գիտէր խրախուսել եւ աշխատանքի մղել, գիտէր նաեւ ուղիղ դատել եւ ճշմարտութիւնը երեսիդ ըսել աչքերուդ մէջ նայելով: Ցաւալի արկածի մը զոհ զնաց:

ԳԱՌԼՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գառլօ Պետրոսեան Մազրիզիւղի մասնաճիւղին եռանդուն ատենապետը: Գառլօ իր ճերմակ մազերով ամէն տեղ էր, կը մասնակցէր ժողովներու, սկառտական արշաւներու, վերջապէս Հ. Մ. Ը. Մ. ի ամէն ձեռնարկներուն: 1924ին կ'անցնի Փարիզ, ուր եւս ունեցած է գործունէութիւն: 1929 — 31, Շրջանային Վարչութեան անդամ: Նկարագրով խանդավառ, իր ջանքերով էր որ 1930ին Հայ Սկառտը լոյս տեսաւ: Մեռաւ 1932ին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՐԵԱՆ (ՕՎԻԿ)

Ռոպէրթ Քոլէճի ուսանող: Ապագայ խոստացող աթլէթ մը, լաւ ֆուլթպոլիստ: Պատերազմի վերջաւորութեան (1918) զոհ զնաց թիֆլիսի:

ԱՐԻԿ ԽԱՆՃԵԱՆ

Վահան Չերազի աջ բազուկը Բուլթիի մէջ եւ կղզիին առաջին sportmanը :

Սիրեց ու տարածեց Ֆուլթուլը եւ աթլէթիզմը :

Կղզիի յաջորդող մարզական յերունդները աւանդութեան մը պէս կը վերյիշեն իրենց ռահվիրայ Աբիկը ամէն անգամ որ յաղթանակներ տանին : Հիւժախտը խլեց զինքը 1909ին :

ԱՌԻԻԾ ԽԱԶԻԿ ՎԱՆԵՑԻ

Ֆուլթուլիստ մականուանեալ « մեծ տրէթ-նօթ »ը : Բիւրե - ղի պէս մաքուր տղայ մը : Հայաստանի հողին կը յանձնեն դայն պա - տերազմի վերջաւորութեան :

ՎԱՐԻՉՆԵՐ ԵՒ ԳՈՐԾԻՉՆԵՐ

.....

ԱՐՇԱԿ ՅԱԿՈՒԲԵԱՆ .— Սամաթիոյ սկաուտ խումբի ժրաջան խմբապետ , եղած է սկաուտական կեդրոնի (Կ . Պուլիս) ենթալանձնա - խումբի անդամ : 1923ի դաղթին Հ . Մ . Ը . Մ .ի կեդրոնական վարչու - թեան կողմէ զրկուած է Յունաստան (տես Յունաստանի առաքելու - թիւն) ուրկէ անցած է Ամերիկա , որոշ ատեն մը հոն եւս հետեւած է Հ . Մ . Ը . Մ .ի կեանքին :

ԼԵՒՈՆ ԳԱԶԱՆՃԵԱՆ .— Վոսփորի մասնաճիւղի սկաուտ խմբա - պետը : 1923ին անցած է Պուլկարիա ուր ունեցած է բաւական լայն դործունէութիւն : Եղած է շրջանային վարչութեան անդամ եւ Պուլ - կարիոյ շրջանի սկաուտ պետ :

ՆԵՐՍԷՍ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ .— Ընդհ . Պատերազմէն առաջ Սկիւտարի « Հայորդիներու » մարզական միութեան անդամներէն : Պատերազմէն յետոյ Սկիւտարի մասնաճիւղի եռանդուն սկաուտ խմ - բապետը : 1923ին անցած է Պուլկարիա ուր կը մնայ մինչեւ այսօր Պուլկարիոյ շրջանային վարչութեան անդամ : 1935ին Ներսէսի ջան - քերով է որ Մարթաեանի կիսատ թողած երկասիրութիւնը , Նաւա - սարդական անունին տակ հրապարակ ելած է որուն մէջ կը տեսնենք Հ . Մ . Ը . Մ .ի հին վաստակաւորներուն գրութիւնները :

ԺԻՐԱՅՐ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ. — Մեր տարէց սկսուտ խմբապետը, ան ամէն տեղ էր, կը վազէր, կը վազվզէր — Հ. Մ. Ը. Մ. ի համար: Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ նշանակուած էր Կ. Պոլսոյ միջազգային սկսուտներու համագումարին լիազօր: Ինք կը պատկանէր Ռոպէրթ Գոլէճի նախապատերազմեան սերունդին:

ԱՐՏԱՇԷՍ Ա.Լ.Ա.ՀՎԷՐՏԻ. — Մաղրի — դիւզի մասնաճիւղի Ա. սկսուտ խմբապետը: Ըլլալով լաւ զինուորական մը, զինուորական մարզանքի վրիսաւոր ատաջնորդներէն մին է Հ. Մ. Ը. Մ. ի կեանքին մէջ: Եղած է սկսուտական կեդրոնական յանձնախումբի անդամ:

ՄԿՐՏԻՉ ՄԱ.ԼՈՒՄԵԱՆ. — «Տորք» ի նախկին մարզիկներէն: Զինադադարէն յետոյ Կ. Պոլիս սկսուտ խմբապետ՝ նախ Խասգիւղի մասնաճիւղին, յետոյ Բերայի եւ Գատրգիւղի որբանոցներուն: Միաժամանակ պաշտօնավարած է Պոլսոյ որբանոցներու եւ կարգ մը վարժարաններու մէջ որպէս մարզանքի ուսուցիչ: 1923ին Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնական վարչութեան կողմէ ղրկուած է Յունաստան (տես Յունաստանի առաքելութիւն) եւ հոն պաշտօնի կոչուած է Ամերիկեան նպաստամատոյց ընկերութեան կողմէ: 1924ին անցած է Ֆրանսա եւ կազմակերպած է Մարսէյի մասնաճիւղը: Կազմակերպած է միջազգային: ախոյենական մրցումներ ուր Մալումեանի մարզիկները եւ Հ. Մ. Ը. Մ. ը առաջին հանդիսացած են: 1928ին Փարիզ հաստատուած է: Ներկայիս ունի իր Culture physiqueի հաստատութիւնը: Եղած է Փութպոլի համազանակցութեան պաշտօնական դատաւոր, անդամ է Comité national technique des Sportsի, նոյնպէս Congrès International de l'éducation physique et Sportի: Արժանացած է Ֆրանսական կառավարութեան կողմէ officier d'Académie եւ Education physiqueի մէտայլներուն:

Ք. ԺՊՏՈՒՆԻ. — Մաղրի — դիւզի Սասուն մարմնամարզական միութեան անդամներէն, պատերազմէն յետոյ, Պէզադեան որբանոցի սկսուտ խմբապետ: 1920ին անցած է Ֆրանսա, ուր կը մնայ այժմ:

ՕՆՆԻԿ ԵԱ.ՉՄԱՃԵԱՆ. — Եէտի — դուլէի որբանոցի սկսուտ խմբապետ: 1920ին Չերաղի եւ Խոյեանի հետ Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնական վարչութեան կողմէ կը ղրկուի Հայաստան որպէս մարզիչ: Երեւանի շրջանը յանձնուած է Օննիկին, բաւական կարեւոր աշխատանք տարած է: 1924ին անցած է Ֆրանսա, յետոյ 1925ին նշանակուած է Կիպրոսի Մելքոնեան հաստատութեան մարզանքի ուսուցիչը: Անկէ կ'անցնի կրկին Ֆրանսա: Եղած է Հ. Մ. Ը. Մ. ի կեդրոնական սկսուտական յանձնախումբի անդամ: 1934ին մեկնած է Սթոքհոլմ՝ հետե-

ւելով մարզանքի ուսուցչութեան վարժարանին եւ հոնկէ անցած է Պարսկաստան իբրեւ մարզանքի ուսուցիչ :

ՀԱՅԿԱԶՆ ԱՒԵԼԵԱՆ .— Պատերազմէն առաջ «Տորք»ի անդամ , յետոյ Մազրի — դիւղի Սաաւն մարմնամարզականին մէջ : Զինադա — դարէն յետոյ ունեցած է լայն դործունէութիւն Մազրիդիւղի Հ . Մ . Ը . Մ .ի մասնաճիւղին մէջ , Ժպտունիի հետ միասին : Մասնակցած է հայկական ողիմպիական խաղերու 1500 մ . վաղքերուն : Երկու տարի վարած է Մազրի դիւղի սկաուտական խումբը , 1920ին Ֆրանսա : 1928ին պաշտօն տրուած է իրեն կազմակերպելու Ֆրանսայի սկաու — տական խումբերը եւ շրջանը մինչեւ 1933 , ստացած է շրջանի խմբա — պետի աստիճան : Կարելի է ըսել թէ մասնակցած է Հ . Մ . Ը . Մ .ի բոլոր ձեռնարկներուն , ղեկավարած է սկաուտական դործը մինչեւ 1936 : Հ . Մ . Ը . Մ .ի Փարիզի շրջ . սկաուտական շարժումը շատ բան կը պարտի Հայկազի անձնուէր աշխատութեան :

ԿԱՐՕ ՈՒՇԱԳԼԵԱՆ .— Հ . Մ . Ը . Մ .ի կեդրոնական վարչութեան ընդհանուր քարտուղար , Կարօն էր որ իր շրջաբերականներով վար — չական մեքենան ու սկաուտական խումբերը շարժման մէջ կը դնէր : Ո՞վ չյիշեր Հայ Սկաուտի իր խմբադրականները : Հ . Մ . Ը . Մ .ական — ներու մեծ մասը իր խմբադրականներէն ներչնչուած են : 1924ին կ'անց — նի Ֆրանսա , կը մասնակցի Հ . Մ . Ը . Մ .ի Փարիզի յաջորդական վար — չութիւններու : 1929ին կը դրաւ իր աթոռը որպէս Ֆրանսայի շրջ — ջանի քարտուղար , կը հրատարակէ կրկին Հայ Սկաուտը : Երկու տա — րի յետոյ Հ . Մ . Ը . Մ .ի ընդհ . պատգամաւորական ժողովէն վերջ կը նշանակուի կեդրոնական վարչութեան քարտուղար , շարունակելով միաժամանակ Հայ Սկաուտի խմբադրութիւնը :

ԿԱՐՕ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ .— Նախապատերազմեան շրջանի մարզիկ — ներէն , Զինադադարէն յետոյ Հ . Մ . Ը . Մ .ի Մազրի դիւղի վարչու — թեան անդամ : 1923ին կ'անցնի Պուլկարիա , շրջանային վարչութեան անդամ , 1925ին կը հրատարակէ Հ . Մ . Ը . Մ .ը Պուլկարիոյ շրջանի պաշտօնաթերթը : 1927ին կը հրատարակէ Մարզիկը , նոյնպէս Պուլ — կարիոյ շրջանի Հ . Մ . Ը . Մ .ի պաշտօնաթերթը : 1938ին անցած է Ֆրանսա եւ այժմ կը գտնուի Փարիզ : Պարտք կը համարենք յայ — տարարելու որ Կարօն բերաւ իր աշխատանքի մեծ բաժինը այս հա — տորին խմբադրութեան գործին մէջ :

ՍԻՄՈՆ ՊԱՊԻԿԵԱՆ .— «Տորք»ի երկաթեայ հաճախէր : Պատե — րազմէն յետոյ Շապոյեանի եւ Իռնունիի հետ Գում — Գարուի մասնա —

ճիւղը հիմնեցին: Եղած է վարչութեան անդամ: 1923ին անցած է Ռուսմանիա, հոն եւս ունեցած է որոշ դործունէութիւն, ընտրուած է Ռուսմանիոյ շրջանային վարչութեան անդամ, կը մնայ միշտ Ռուսմանիա:

ՅԱԿՈՒԲ ԳԱՓՈՒՃԵԱՆ (Դոնուսի) .— Իր մարդական դործունէութիւնը կը սկսի համիտեան շրջանէն, ինք է որ հիմնած է Գումդարուի Փութպուլի խումբը: Չինադադարին Հ. Մ. Բ. Մ. ի կողքին տարած է լայն աշխատանք, եղած է Գում Գաիուի եռանդուն ատենապետը: 1925ին կը հանդիպինք իրեն Փարիզ, ուր կ'ապրէր քաշուած, բայց Հ. Մ. Բ. Մ. ի տղաքը զինք հանդիստ չեն թողուր, կրկին կը լծուի աշխատանքի, կը ստանձնէ Փարիզի վարչութեան ատենապետութիւնը: Իր շրջանին Հ. Մ. Բ. Մ. ունեցաւ բաւական արդիւնաւոր դործունէութիւն:

ԺԻՐԱՅՐ ՄԻՆԹԱՆՃԵԱՆ .— Բերա, Գարակէօղեան որբանոցի սկառւտ խմբապետ: 1923ին Հ. Մ. Բ. Մ. ի կեդրոնական վարչութեան կողմէ զրկուած է Յունաստան (տես Յունաստանի առաքելութիւն): 1924ին կ'անցնի Ֆրանսա եւ առաջին անգամ Ժիրայրն է որ իր շուրջ կը հաւաքէ բոլոր հին սկառւտները եւ կը կազմէ երէց սկառւտներու խումբը: 1928ին կը կազմէ Ալֆորվիլի սկառւտներու խումբը, 1929ին շրջանի փոխ խմբապետ, իսկ 1933 — 1936 Ֆրանսայի շրջանի պետ:

ԱՐԱՐԱՏ ՔՐԻՍԵԱՆ .— Նոր Դպրոցի սկառւտ խմբապետ, ողբացեալ Շաւարշ Քրիսեանի եղբորորդին, այժմ Գահիրէ որպէս մարդանքի ուսուցիչ:

ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ .— Բերայի Եսայեան վարժարանի սկառւտ խմբապետը: 1923ին անցած է Ֆրանսա, հիմնած է Մարսէլի մասնաճիւղը: 1927էն ի վեր հաստատուած է Փարիզ: 1934ին Ֆրանսայի շրջանային վարչութեան անդամ, 1936էն ի վեր շրջանի սկառւտ պետ:

ՆԵՐՍԷՍ ՍԵՐՈՒԵԱՆ .— Վասպուրի (Կ. Պոլիս) սկառւտ խմբապետ: 1924ին կ'անցնի Ֆրանսա: 1928ին կը կազմէ Անկէնի սկառւտներու խումբը:

ՕՆՆԻԿ ԴԱՐԲԻՆԵԱՆ .— Գատը գիւղի սկառւտ խմբապետը, 1920ին Հ. Մ. Բ. Մ. ի Փարիզի մասնաճիւղի հիմնադիրներէն եղած է միաժամանակ լաւ Փութպուլիստ մը:

ՍՈՒՐԷՆ ԲՍԱԽԵԱՆ .— Պէրպէրեան վարժարանի սկաուտներու խմբապետ , եղած է Սկիւտարի մասնաճիւղի վարչութեան անդամ : 1924ին Փարիզ , ուր ունեցած է բաւական լայն դործունէութիւն : 1927ին կը մեկնի Սուրիա որպէս ուսուցիչ : Հոն եղած է շրջանային վարչութեան անդամ , ուր կը մնայ միշտ :

ԱՐՏԱՇԷՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ .— Բերայի վարիչներէն , ինք է որ առաջին անգամ 1925ին հիմնած է Փարիզի սկաուտական խումբը եւ կը մնայ միշտ Փարիզ :

ԳԱՌՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ .— Հ . Մ . Ը . Մ .ի ջերմ հաւատացեալ մը : Իր դործունէութիւնը կը սկսի Պուա Քոլոնպի մասնաճիւղէն : Ինքն շատ շուտ ճանչցաւ Հ . Մ . Ը . Մ .ը եւ մանաւանդ անոր կատարելիք դերը դադութներու մէջ : Անոնցմէ է որ մեծապէս կը հաւատան , թէ կարելի է Հ . Մ . Ը . Մ .ի միջոցաւ մեր նորահաս սերունդը փրկել : Եղած է Ֆրանսայի Շրջանային Վարչութեան եւ սկաուտական վերին մարմնոյ անդամ :



Հ . Մ . Ը . Մ .ի քսանամեակին առթիւ , հարկ էր , անշուշտ , առանձին էջեր յատկացնել նաեւ անոնց , որոնք կամ օժանդակներ եղան , եւ կամ ուղղակի խումբերուն ու սկաուտներուն շարքերուն մէջ գործեցին իբրեւ խմբապետներ եւ առաջնորդներ կամ յանձնախումբերու անդամներ , բայց տեղի անձկութիւնը մեզ կը ստիպէ բաւարարուիլ անուններու յիշատակումով մը միայն .—

- ՆԵՐՍԷՍ ՕՀԱՆԵԱՆ
- ՏՕՔԹ . ՍԱԼԲԻ
- Օ . ԳԱՎԱՆՕԶԵԱՆ
- ՏՕՔԹ . ԼԵՒՈՆ ԳԸԼԸՃԵԱՆ
- ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆ
- ԲՐՕՖ . Գ . ԱԲՈՒԼԵԱՆ
- ՏՕՔԹ . ԻԶՄԻՐԼԵԱՆ
- ՏՕՔԹ . ԼԵՒՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ
- ՏՕՔԹ . ԽԱՆԶԷՐ
- ՊՕՂՈՍ ՖՐԷՆԿԵԱՆ
- ՅԱՐ . ՊՕՂՈՍԵԱՆ
- ԳՐԻԳՈՐ ԳԱՍԱՊԵԱՆ
- ԽՈՒՊԷՍԷՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ
- ՀԱՅԿ ՄԵՐԿԵՐԵԱՆ

ԱԼԻՔՍԱՆ ՄԻՍԱՔԵԱՆ
ԵՐՄՈՆ ԹԱՇՃԵԱՆ
ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
ՀՐԱՆՏ ՊԱՐՍԱՄԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ԹԻՐՁԵԱՆ
ԿԱՐՊԻՍ ԱՍԼԱՆԵԱՆ
ՇԱՏԱՆԵԱՆ
ՍԵՐՈՒՄ ՍԵՐՈՒՄԵԱՆ
ԽԱԶԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ
ՏՕՔԹ. ԳՈՒԼԱՔԵԱՆ
ՕՆՆԻԿ ՊԷՕՃԷՔԵԱՆ
ԴԱԹԻ ՔԱՐԱԳԱԼՓԱՔԵԱՆ
ՎԱՐԴԳԻՍ ՔԱԶՈՒՆԻ
ՅԱԿՈՒ ԹԻԻԹԻՒՆՃԵԱՆ
ՈՐԴԻԿ ՇՄԱԻՈՆԵԱՆ
ՍԱՎԱԵԱՆ
ՊԱՏՈՒԵԼԻ ԲԵՆԻԱՄԻՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԵԴՈՒԱՐԴ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ
ԳՐԻԳՈՐ ԳՐԼԸՃԵԱՆ, Եւայլն
ԳՐԻԳՈՐ ՉԱՄԻՉԵԱՆ
ՆՇԱՆ ՍԵՐԳՅԵՈՒՆ
ՀԱՅԿ ՔՆԱՐԵԱՆ
ԶԱԻԷՆ ՅԱԲԵԹԵԱՆ

ՍԿԱՌԻՏ ԽՄԲԱՊԵՏՆԵՐ

ԲԵՐԱ, Աւագ Խմբապետ՝ Օննիկ Ֆրէնկեան, Խմբապետներ՝ Արա Տօմինեան եւ Ժիրայր Մինթանճեան, փոխ Խմբապետներ՝ Լեւոն Սարուխան, Արշակ Պէնկեան, Պիմէն Պէօրէկճեան, Աղասի Արխանեան :

« ՆՈՐ ԴՊՐՈՅ » Խմբապետ՝ Արարատ Քրիսեան, փոխ Խմբապետ՝ Սուրէն Քնարեան :

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԲԵՐԱ, ԳԱՏԸ ԳԻԻՂ ԵՒ ԽԱՍ ԳԻԻՂԻ մասնաճիւղին Խմբապետ՝ Մկրտիչ Մալուճեան :

ՊԷՇԻԿԹԱՇ .— Վահրամ Էքմէքճեան :

ՕՐԹԱԳԻԻՂ .— Լեւոն Գաղանճեան :

ԱՐՆԱՎՈՒՏ ԳԻԻՂ — ՎՈՍՓՈՐ .— Ներսէս Սերոբեան եւ Պապայեան :

ՊԷՕՅԻԻՔ ՏԷՐԷ .— Շատանեան :

ՍԿԻԻՏԱՐ .— Պոստանճեան Ս., Ներսէս Աստուածատուրեան, Արտաւազդ Վարդանեան, Ենովք Պամաճեան (Պէյլէրպէյի) :

ԳՍՏԸ ԳԻՒՂ .— Եալտրղճեան , Սահաթճեան Պիմէն , Օննիկ Դարբինեան :

ԳՈՒԼԷԼԻ .— Յովհաննէս Պօղոսեան , Գ . Ճօլօլեան :

ՀԱՅ ԿՂՁԻ .— Տիգրան Խոյեան , Գուրգէն Խոյեան :

ՄԱԳՐԻ ԳԻՒՂ .— ՍԱՆ ՍԹԷՖԱՆՕ .— Ա . Ալլահվէրաի , Հ . Աբէլեան , Ք . Ժպտուէրի (Պէղաղեան) :

ԵՏԻ ԳՈՒԼԷ .— Օննիկ Եաղմաճեան , Խոսրով Ներսէսեան :

ՍԱՄԱԹԻԱ .— Արշակ Յակոբեան , Սաեփան Գըլըճեան :

ԳՈՒՄ ԳԱՅՈՒ .— Յարութիւն Ապաղեան , Գրիգոր Գրիգորեան , Յակոբ Մամիկոնեան :

ՊԱԼԱԹ .— Թորղոմ Յովնանեան :

ՔՐԱՆԱՄԵԱԿԸ

.....

Հ . Մ . Ը . Մ . ը որ հայ կեաքին վրայ իր դրոշմը դրած է իբր ազգային երիտասարդացման կազմակերպութիւն , եւ որ այնքան տազանապնէ ու աշխարհաստան դէպքերէ յետոյ իսկ իբր փիւնիկ վերածնած է ամէն հայկական դադութի մէջ , չէր կրնար լուռ անցնիլ իր քսանամեակին առջեւէն :

Գաղափարը միաժամանակ գրեթէ ծնունդ առած է աշխարհի ամէն կողմը ցրուած եւ սակայն իտէալ սիրով մը իրարու զօղուած մարմիններուն մէջ , եւ ամէն կողմ , առաւել կամ նուազ փայլով , տօնուեցաւ մեր մեծ կազմակերպութեան քսանամեայ այս յորելեանը , 1938 եւ 1939 տարիներու ընթացքին :

Այս նպատակով մարմին մըն ալ կազմուեցաւ Փարիզի մէջ եւ քսանամեակի տօնակատարութիւնը հանդիսաւորապէս տեղի ունեցաւ 1939 մայիս 21 ի կիրակի օր Սորպօնի մեծ ամփիթատրոնին մէջ որ հաղուադէպօրէն կը տրամադրուի օտարներու :

Ֆրանսայի կրթական նախարար Պ . Ժան Չէ ճանչնալով գործին դերադանցապէս հանրային հանդամանքը , բարեհաճած էր իր բարձր հովանաւորութիւնը շնորհել :

Փարիզահայ դադութին բոլոր դասերը իրենց սիրալիր մասնակցութիւնը բերին այս մասին ինչպէս կը տեսնուի հետագայ կազմէն .—

ՀՈՎԱՆԱԻՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ

M. RIMET: Président de la F. I. F. A. et F. F. F. A., M. JEVAIN: Président de la L. P. F. A., M. le Prof. DESBONNET, Գեր . ՏԻՐԱՆ վրդ . ՆԵՐՍՈՅԵԱՆ , Գեր . Հ . ՍՍ . ՀԱԿ վրդ . Տ . ՄՈՎՍԷՍԵԱՆ , Գեր . Հ . Քէ - ՉԷՃԵԱՆ , Վեր . Չ . Բ . ՊՈՒՏԱՔԵԱՆ :

ՊԱՏՈՒՈՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք, ՁԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ՝ նախադաս, ՏՈՔԹ. Վ. ԹՈՐԳՈՄ-
ԵԱՆ՝ փոխ . նախադաս, ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ՝ փոխ - նախադաս,
ՏՈՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ատենադպիր, Հ. ԱԲԵԼԵԱՆ՝ փոխ - ատե-
նադպիր, Ե. ՊԱՐԿԸՐՃԵԱՆ՝ գանձապետ, Գ. ՇԱՀԻՆԵԱՆ՝ փոխ -
գանձապետ :

Ապագայ, Անահիտ, Կեանք եւ Արուեստ, Յառաջ :

ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ, ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉ, ԵՐԷ-
տասարդական միութիւններ եւ Համադործակցական :

Տ. Լ. ՔՀՆՅ. ԱՐՍԼԱՆԵԱՆ :

Տիկիւններ, ԲՈՒՏԱՂԵԱՆ եւ Շ. ՄԻՍԱՔԵԱՆ :

Օրիորդներ, ՀԱՅԿԱՆՈՒՇ ԹՈՐՈՍԵԱՆ եւ ԻՐԻՍ ՊԻԼՊԻԼԵԱՆ :

Տեարք, ԱՐՍԼԱՆԵԱՆ, Գ. ԱԼԵՄՇԱՀ, Գ. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ,
Տօքթ. ԳԱԼՃԵԱՆ, Ա. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ, Տօքթ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, Ա. ԽԱ-
ՏԻՍԵԱՆ, Տօքթ. Ա. ԽԱՆՉԷՐ, Ա. ԿԻԼՊԷՆԿԵԱՆ, Վ. ՄԱԼԷՉԵԱՆ,
Շ. ՆԱՐԴՈՒՆԻ, Ա. ՉԱՔՐԵԱՆ, Մ. ՊԱՐՍՍՄԵԱՆ, Հ. ՍԱՄՈՒԷԼ, Ն.
ՍԵՐԳՈՅԵԱՆ, Չ. ՎԱՐՊԵՏԵԱՆ, Ս. ՎՐԱՅԵԱՆ, Ս. ՏԷՐ ԹՈՎՄԱՍ -
ԵԱՆ, Ա. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ, Հ. ՔԷՕՍԷԵԱՆ, Տօքթ. Պ. ՔՕԼՕԼԵԱՆ, Գ.
ՖԷՆԷՐՃԵԱՆ, Պ. ՖՐԷՆԿԵԱՆ :

ԸՆԴՀ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Գ. ՄԵՐՃԱՆՕՖ՝ ատենապետ, Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆ՝ փոխ - ատենա-
պետ, Վ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ՝ փոխ - ատենապետ, Հ. ԱԲԷԼԵԱՆ՝ ատենա-
դպիր, Գ. ՇԱՀԻՆԵԱՆ՝ գանձապետ, Մ. ՔԻՒՐՔՃԵԱՆ՝ փոխ - գան-
ձապետ, Լ. ՄՕԶԵԱՆ՝ հաշուապետ, Կ. ՈՒՇԱԳԼԵԱՆ, Վ. ՓԱՓԱՉ -
ԵԱՆ, Կ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ :

ՄԵՌԵԱԼՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ. Մ. Ը. Մ. Ի քսանամեակի տօնակատարութեան կեդր. յանձ-
նախումբի նախաձեռնութեամբ, նահատակ եւ անհետացող մարզիկ -
ներու յիշատակին հողեհանգիստ մը կատարուեցաւ Կիրակի, 19 յունիս
1938ին, Փարիզի Հայոց եկեղեցին :

Յանձնախումբը ժամանակէն առաջ գրաւած էր իրեն յատկացուած
վայրը : Քառաձայն պատարագի պահուն երկու սկառտներ վեղեցիկ
ծաղկեպսակ մը ներս բերին եւ զետեղեցին խորանին առջեւ, երկու
կողմը պատուի կենալով : Միւս կողմէ խառն սկառտները երկշարք
կազմելով հետեւեցան արարողութեանց : Պատարագէն վերջը, Վռամ-
շապուհ եպս. խօսք առնելով, ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան

խոնարհիւ Հ. Մ. Ը. Մ. ի նահատակ եւ անհետացող մարզիկներու նուիրական յիշատակին առջեւ :

Հողեհանգստեան արարողութենէ վերջը, Հ. Մ. Ը. Մ. ի կեղըր. յանձնախումբի անդամները շրջապատուած՝ Միութեան անդամներով եւ սկառտներով, գեղեցիկ ծաղկեպսակը տարին զետեղեցին հայ անծանօթ զինուորին յիշատակարանին առջեւ :

Այս առթիւ քսանամեակի կեղըր. յանձնախումբի կողմէ հետեւեալ ուղերձը կարդաց Պ. Գ. Մերձանօֆ. —

« Յանուն Հ. Մ. Ը. Մ. ի քսանամեակի տօնակատարութեան կեղըր. յանձնախումբի, յանուն տարագիր ու ցիրուցան հայ մարզիկներու, կուգամ խոնարհելու նահատակ եւ յաւէտ բաժնուած մեր մարզիկ ընկերներու նուիրական յիշատակին առջեւ :

Անծանօթ զինուորի այս յիշատակարանին առջեւ, ես կը դիտեմ մեր այն բոլոր մարզիկները, որոնք իրենց ջլապինդ բազուկին, ամբալուռ մկաններուն եւ անվհատ կորովին զօրութիւնը ի սպաս դրին հայ ժողովուրդի Փիղիքական փրկութեան եւ նորահաս սերունդի հայատենչ դաստիարակութեան համար: Զինուորներ էին անոնք ալ, կամ մաւոր եւ սպարտաճանաչ հայ զինուորներ :

Ո՛րքան երկար է անոնց շարքը: Դժուար է մի առ մի կանգ առնել անոնց թանկագին անուններուն առջեւ: Պոլսէն մինչև Տէր-Չօր ու արաբական անապատները, Հայաստանի բարձրաբերձ սարերէն մինչեւ արտասահման ու այլուր, անոնք ամէնքն ալ քալեցին անվկանդ, տեղ մը զինուորի հրացանը ու մախաղը ուսին, տեղ մը մարզիկի պայուսակը կռնակը, միշտ ի խնդիր հայրենիքի վերածնութեան, միշտ ի խնդիր մեր տառապակոծ ժողովուրդի Փիղիքական յարութեան :

Ամենուրեք անոնք բարձր բռնեցին մեր ցեղին պատմական արժէքները, աւանդական առաքինութիւնները եւ աղգային դարաւոր ժառանգութիւնները: Ամէն տեղ անոնք ներշնչեցին ասպետական հպարտութիւն, կամք եւ ապագայի վառ յոյսեր :

Այսօր չկայ, յաւիտենապէս բաժնուած է մեզմէ տիպար մարզիկը՝ Շաւարշ Քրիսեան՝ զոհ թրքական նախճիրներուն, չկայ Վահան Զերաղը, որ Երզնկայի լեռներէն մինչեւ կարս ու Ղարաքիլիսէ հայկական բանակի բոլոր հերոսամարտներուն իր անձնուէր բաժինն էր բերած, չկայ Հայկ Ճօլօլեանը որ դպրոցներէն ներս մատաղ սերունդը կը կազմակերպէր, չկան Հմայեակ Մատթէոսեանը, Ժիրայր Եաղմուրեանը, Ժիրայր Պոստանճեանը, Նուպար Սրապեանը, Արխանեանը, Զարմայր Այճեանը, Քրիս Ֆէնէրճեանը, Գառնիկ Շէհրիկեանը, Ներսէս Օհանեանը, Վանեցի Առիւծ Խաչիկը, Երուանդ Նշանեանը, Վարդավառ Եափուճեանը, Աբիկ Խանճեանը, Գէորգ Քէրէսթէճեանը, Յովհաննէս Գորեանը, Գառլօ Պետրոսեանը, Հայկ Մրտիկեանը,

Մեր քառամեակին առթիւ ամբողջ հայ մամուլին մէջ եղան համակրական ու քաջալերական հրատարակութիւններ, բազմաթիւ թերթեր բացառիկ թիւեր նուիրեցին եւ վեր հանեցին այն ծառայութիւնը զոր Հ. Մ. Ը. Մ. կատարած է ազգին մէջ եւ այն ամէնը ինչ որ դեռ կը սպասուի իրմէ :

Իբր նմոյշ մը այդ բոլորին եւ իբր վերջաբանը այս հատորին , ստորեւ կ'արտատպենք Պէյրութի ԱԶԴԱԿին մէջ երեւցած երկու գեղեցիկ խմբագրականները .—

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԵՐԴԸ

.....

ԲԱՐՁՐԱՑԻՐ , ԲԱՐՁՐԱՑՈՒՐ

Հ. Մ. Ը. Մ. ի քառամեակը , որ այս օրերս կը տօնուի ամէն կողմ , սովորական երեւոյթ մը չէ :

Քսա՛ն տարի՝ մարդանքի դրօշը պահել միշտ վեր , հողիները՝ խանդավառ , ջիղերը՝ պիրկ , հաւատքը՝ ամրակուռ , եւ աշխատանքը՝ ողբուր : Ընդունեցէք թէ դործ մըն է որ պատիւ կը բերէ ո եւ է ազգի : Իսկ երբ հեղինակն է համայնքժողովրդապետ կտոր եղաւ եւ տասը հո — վերէ քշուեցաւ , այն ատեն դործը կը դառնայ ուղղակի հրաշք , արժանի՝ յարգանքով ծունկի բերելու բոլորը , հայ թէ օտար :

Իրապէս , եթէ դիւրին էր հիմը նետել 1918ի վերջերը , երբ բնու-

Պէօրէքճեանը , Արտաւազդ Վարդանեանը , Սիմօն Սանթուրեանը , Օննիկ Գովանը , Մկր Մկրեանը , Տիգրան Խաչատուրեանը , Մարտիկ եւ Գարրիէլ Շիշմանեանները , Ենովք Պատմաճեանը , Միհրան Պալլքճեանը , Սավայեանը եւ ուրիշ շատ շատեր , որոնք յաւէտ բաժնուած են մեզմէ :

Մենք վերապրողներս ու դործակիցներս , անոնց թանկագին յիշատակին համար կազմակերպուած այս հողեհանդատի արարողութեան միջոցաւ , կուզանք սղալու հայ մարդական բնտանիքի անդին զաւակներուն կորուստը եւ լսելու թէ անոնք մեր սիրտերուն մէջ երբեք մեռած չեն : Վառ է անոնց հաւատքը մեր մէջ , եւ տակաւին երկար ատեն վառ կը մնայ բոլոր հայ սիրտերուն մէջ :

Ո՛ւր որ ալ ըլլանք , հեռու թէ մօտ , հայրենիքին մէջ թէ տարագիր , մենք դուրգուրանքով պիտի թօթափենք անոնց յիշատակին վերայէն ժամանակին փոշիները , պիտի սգանք , բայց պիտի ներշնչուինք , առանց ընկրկելու , առանց վհատելու , մի՛շտ հայ ժողովուրդին հետ , միշտ հայ ժողովուրդին համար » :

Թեան թոշնած եղանակն անգամ դարունի փոխուեցաւ աշխարհասա — սան խանդավառութենէն, դիւրին չէր սակայն պահել 1922ի աշնան, երբ ամբողջ աշխարհ մը փուլ եկաւ հայութեան դիւտուն Արարատեան դաշտէն մինչեւ Անատոլուի տափաստանները, պատմական Կիլիկիայէն մինչեւ Բիւզանդիոնի բլուրները :

Եւ քաղաքական շարժը այնքան ահեղ եղաւ, որ հայ զանգուածը փշուր փշուր ըրաւ եւ եօթը ծովեր անդին շարդեց, իւրաքանչիւրը մէկ կողմ, հեռու ու անհաղորդ իրարմէ :

Օտար պատմաբանը եթէ վաղը ձեռք ասնէ դրիչը նկարագրելու համար այս շարժը, ուղղակի պիտի ասոյ՞ իմանալով որ, հազիւ ոտք կոխած օտար հողին վրայ, դեռ սեփական երդիքը չչինած, այդ ցան ու ցրիւ բեկորներուն առաջին հողն եղաւ քով քովի գալ, բջիջներ կազմել, կապ հաստատել մօտաւոր ու հեռաւոր «քոյր»երուն հետ, ծոցէն հանել Հ. Մ. Բ. Մ. ի դրօշը եւ պարզել օտար երկնակամարին տակ :

Սրբազան նշանախօսքին առաջին պատուիրանն էր որ կը կատարուէր. «բարձրացի՛ր» :

Եւ բարձրացաւ խոյանքով մը, որ զմայլանք ու հպարտանք կը պարտադրէ հաւատարապէս : Առջանք մը՝ որ ինքնին համաշխարհային մրցանիչ մըն է, աննախընթաց ու անխորտակելի :

Կը մնար երկրորդ պատուիրանը. — բարձրացո՛ւր :

Ազնուակա՛ն, այլ ապերա՛խտ առաջադրանք : Որքան ալ ջախ — ջախուած ու թեւատ, վերջ ի վերջոյ կրնաս թեւ ասնել ու ճախրել : Բայց բարձրացնե՛լ նաեւ զանդուած մը, զոր ճակատադրի անողոք թաթը դեանէ դետին զարկած ու հողին փակցուցած է, — օ՛, ասիկա արդէն միայն հէքեաթի կալուածին կը պատկանի, Մհերներու կամ Սասունցի Դաւիթներու ահեղ ուժին կը կարօտի :

Թէեւ դաղթական ու յաճախ սրբ, մեր տղաքը ահա այս հէքեաթն է որ վերածեցին շքեղ իրականութեան մը, իրենց ստքին կապելով «զանգուած» կոչուող սա երկանաքարը եւ իրենց հետ բարձրացնելով դէպի ցեղային դիտակցութեան ու հաւատքի սլորտները :

Եւ լցաւ դիրն որ ասէ. — «բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» . . . :

Վկայ՝ քսանամեակը զոր բոլորեց Հ. Մ. Բ. Մ. ը, դառնալով ազգային ուժի եւ յոյսի փարոս մը որուն ճաճանչները այսօր կ'ընդգրկեն ամբողջ աշխարհներ, Իրանէն մինչեւ Ամերիկա, Փարիզէն մինչեւ Ճափա : Ամէն տեղ՝ ուր հայ սիրտը կը տրոփէ տոհմիկ տենդով :

Ու հիմա, կանգնած քսան տարիներու շքեղ բուրգին վրայ, կրնայ ճակատարաց ձայն տալ իր նահատակ հիմնադիրներուն .

— Ուխտ մը կտակեցէք մեզի. «Բարձրացի՛ր բարձրացո՛ւր» : Անցանք ընդ հուր եւ ընդ սուր, ենթարկուեցանք բախտին ամէնէն շճե-

ցուցիչ հարուածներուն, կթոտեցան մեր ծունկերը, արիւնեցան մեր ձեռքն ու ոտքը, ինկանք — ելանք, բայց շարունակեցինք հանդրուանէ հանդրուան հասցնել աւանդ դրօշը եւ ահա կը պարզենք զայն՝ բոլորովին անաղարտ ու անծալ: Մենք կատարեցինք մեր ուխտը . . . :

Ուխտերնիդ կատա՛ր, տղաք: Կտրի՛ճ տղաք, զոր մեր նախնիքը կը պճնէին դափնիներով, երբ այսպէս կը կանգնէին իրենց առջեւ, յաղթանակով կուրծքը ուռած, ճակատը բարձր ու դէմքը լուսաճա՝ ճանչ :

Եւ հաւատացէ՛ք, տղա՛ք, որքան ալ կարեւիւր ու սղաւոր, այս ժողովուրդը միշտ ձեզի հետ է, ձեր կողքին կանգնած, ի խնդիր ձեր սրբազան ուխտին շարունակութեան .

— Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր :

Ու այն խոր հաւատքով, որ օր մը հայրենի երկնակամարին տակ պիտի հնչեցնէ նոյն կոչը, մի՛շտ ձեզի հետ, մի՛շտ ձեզի ձայնակից :

Ողջո՛յն այդ օրուան, ողջո՛յն ձեզի՝ արի արանց, հաւատաւոր մողերը այդ օրուան . . . :



Բայց եթէ այդ բոլոր ճատերն ու տօնակատարութիւնները պիտի ծառայեն միայն յարդարելու արտաքին պաճուճանքը, մե՛ղք սպառած շունչին ու եռանդին: Եւ մանաւանդ մե՛ղք Հ. Մ. Ը. Մ. ի անունին, որ տասնեակ տարիներէ ի վեր հոմանիշը դարձած է գործփին, առողջ ու շինարար, առնական ու հայեցի: Ամէնէն ողորմելի միութիւններն անգամ, որոնք մատի վրայ անգամ կը համրեն, դիտեն ամէնէն չքեղ հանդէսները սարքել, ծափի փոթորիկներ յարուցանել: Չէ՞ որ ձրի է ծափն ու ծնծղան . . . :

Իբրեւ կազմակերպութիւն մը, որ մէկ հատիկ եղաւ մեր միջա՝ վայրին մէջ եւ այդպէս ալ պիտի մնայ, Հ. Մ. Ը. Մ. ը պէտք է ան՝ նման ըլլայ նաեւ տօնակատարութեամբ: Ըսել կ'ուզենք թէ՛ շարժ՝ ման մէջ դնելու չէ ամերը ի խնդիր աժան ծափերու, կամ հաղազը՝ պոռոտ բացաղանջութեանց համար: Այլ հողիները՝ յանուն ազգային կայծկրլուման, եւ բազուկները՝ ի շահ տոհմիկ ստեղծապործութեան: Կարճ՝ լուրջ դործ, փոխան թեթեւ խօսքերու: Զգացական հեշտ այլ վաղանցուկ խաղերէ աւելի՝ միտքի դժուար այլ յարատեւ կռանում՝ ներ:

Քսանամեակը պարզե՞ց այս ակնապարար տեսարանը: Իբրեւ օրկան մը որ շատ սիրտի մօտիկ զգացած է Հ. Մ. Ը. Մ. ը, հեւ ի հեւ հետեւած անոր վերելքին ու մանաւանդ խորապէս սերտած անոր «ծննդոց»ը, ստիպուած ենք «ո՛չ» ըսել, որքան ալ ճմլում պատճառէ մեզ խոստովանանքը: Վերջ ի վերջոյ, մեր դիմացինը տղեկ մը չէ որ

պէտք ունենայ օրօրի, այլ 20 տարեկան երիտասարդ մը, աւիւնով յորդուն, կամքով թրծուած, որ տիրաբար ձեռք առած է սերունդին դաստիարակութեան ղեկը եւ հետեւաբար ի վիճակի է անխռով լսելու սրտցաւ խօսքերը :

Պէտք է ներշնչել միութեան այնքան խօսուել նշանաբանէն. — Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր :

Բարձրանալ՝ ամէնէն առաջ ողիով, ազգային շունչով: Որովհետեւ — ինչո՞ւ ծածկել — սկիզբէն ի վեր մեր աշխատանքը եղած է միակողմանի եւ առաւելապէս դնդերը շօշափած է: Մինչդեռ, առաւելապէս հոգեկան ըլլալու էր մարձումը: Մոռնալու չէ, որ շատ բան չենք կորսնցներ իբրեւ ազգ, եթէ առաջին չհանդիսանանք հողէ մարդազաշտին վրայ: Բայց կը կորսնցնենք ԱՄԷՆ ԲԱՆ, եթէ ընկրկինք բարոյական մարգագաշտին վրայ :

Առաջին պարագային՝ արուեստական բերդը կը փլի. երկրորդ պարագային բնական բերդը, ազգային դիմադիծը :

Կաշեզնդակը՝ մեր զգացումի՛ն կը դպչի, մեր ինքնասիրութիւնը կը վիրաւորէ: Այլասերման գնդակը՝ արդէն ուղղակի սիրտի՛ն կը հանդիպի, մեր ազգային գոյութիւնը կը վիրաւորէ: Օր մըն ալ մեռցնելու համար :

Առաջ, երբ տուն — տեղ էինք եւ որոշ չափով ապահովուած ազգապահպանման տեսակէտով, մասամբ ներելի էր ֆուքսուի գնդակին վրայ կեդրոնացնել ամբողջ ուշադրութիւնը: Բայց հիմա, երբ ամբողջ զանգուածներ դարձած են գնդակ ու ամէն ափ կը նետուին, ներելի չէ լայն օրերու յատուկ այդ պերճանքը: Հիմա, ստիպուած ենք առաւելապէս բանիլ բարոյական մարգագաշտին վրայ եւ ամբողջ ուժովը պաշտպանել բարոյական բերդը, որ ենթարկուած է կատաղի գրոհներու :

Բարձրանալու այս կենսական աշխատանքէն վերջն է որ պիտի սկսի ծրագրին երկրորդ մասը. — բարձրացնել: Այսինքն հրապարակ իջնել կոչնակը ձեռքին, շարժում ու ոգեւորութիւն ստեղծել, եւ հաղորդութեան հրաւիրել բոլորը, նայնիսկ անոնք որ հեռացած են «փարախ»էն: Չէ՞ որ Հ. Մ. Ը. Մ. ը այն գետինն է, ուր չիք խտրութիւն Հրէի ու Հեթանոսի, ուր տիրողը միայն ազգային շունչն է, մաքուր ու անխտրական :

Եթէ ճիշդ է որ բացառիկ տարեդարձները առիթներ են նոր գօտեպնդումներու, ապա ուրեմն Հ. Մ. Ը. Մ. ի քսանամեակը պէտք է կազմէ մեկնակէտը բացառիկ խոյանքի մը, ի խնդիր բարոյական բերդին պաշտպանութեան :

ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս յառաջաբանին մէջ եւ սւրիչ տեղեր, իբր վերջին խօսք պարտք կը համարինք կրկնել անդամ մըն ալ, թէ ներկայ հատորով կարելի չեղաւ ամբողջական եւ մանրամասն համարատուութիւնն ընել Հ. Մ. Ը. Մ. այնքան ընդարձակ եւ բազմաճիւղ դործունէութեան :

Ասիկա առաջին փորձ մը կը նկատենք, քանի որ, հակասակ մեր բազմաթիւ դիմումներուն եւ կոչերուն, չունեցանք բոլոր տարրերը՝ կատարեալ դործ մը երեւան բերելու համար :

Այս հատորը հաւաքական աշխատակցութեան արդիւնքն է մեր մասնաճիւղերուն եւ անդամներուն, որով կը փութանք մեր շնորհա-կալութիւնն յայտնել բոլոր անոնց որ տեղեկագիրներով եւ յուսա-նկարներով օժանդակեցին այս երկասիրութեան հրատարակմանը :

Ուզեցինք այս հատորին մէջ տեղ տալ միայն իրական ու պատմական անցուղարձերու, աւելի աւարկայական ըլլալու միտքով, եւ այս պատճառով խիստ դանց ըրինք հրատարակել կարգ մը դրութիւններ որոնք անձնական տպաւորութիւններ եւ յիշատակներ էին կամ մասնագիտական բովանդակութիւն ունէին : Այս մասին կը յուսանք թէ ներողամիտ կ'ըլլան մեր այդ աշխատակիցները :

Նպատակ ունինք, եթէ պարագաները թոյլատրեն, կազմել այս Յիշատակարանին երկրորդ հատորը, եւ այն ատեն, կը յուսանք տալ ինչ որ կը պակսի ներկային մէջ :

Ուստի, այժմէն կոչ կ'ընենք մեր բոլոր մասնաճիւղերուն, նախկին ու արդի մեր անդամներուն, բարեկամներուն եւ համակիրներուն, որ մեզ փութացնեն Հ. Մ. Ը. Մ. ի անցեալ ու ներկայ կեանքին վերաբերեալ ինչ տեղեկութիւն ու փաստաթուղթ (յուսանկար եւայլն) որ ունին, որպէսզի զանոնք դասաւորելով կարենանք դնել մեր երկրորդ հատորին մէջ եւ այսպէս լրացնել Հ. Մ. Ը. Մ. ի պատմութիւնը :

ՆԻԻԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

.....

| | Էջ |
|--|-----|
| Մեր ձեռնարկին նպատակը | 3 |
| Քայլերդ Արիներու (Գ. Կառվարենց) | 6 |
| Հանդիսական ուսմունք Հայոց մէջ (Հ. Վ. Հացունի) | 7 |
| Հին Հայոց Նաւասարդեան խաղերը (Հ. Ե. Պօղոսեան) | 16 |
| Խաղն ու մարզանքը Հայոց մէջ (Զիթունի) | 21 |
| Հայ մարզական շարժումը (1900 — 1908) | 44 |
| Մարզական միութիւնները (1900 — 1908) | 46 |
| Հայ մարզական շարժումը (1908 — 1910) | 50 |
| Մարզական միութիւններու ցանկը | 54 |
| Գաւառներու մէջ | |
| Իզմիր | 70 |
| Կարին | 77 |
| Խարբերդ | 81 |
| Այնթապ | 81 |
| Եգիպտոս | 82 |
| Հայ սկսուտական շարժումը (Ն. Աստուածատուրեան) | 84 |
| Հ. Մ. Ը. Մ. ի հիմնադրութիւնը | 92 |
| 1919 Յուլիս 14ի մեծ ջահազնացութիւնը | 102 |
| Միջազգային սկսուտական տողանցք | 105 |
| Զանազան աշխատանքներ | 107 |
| Ընդհ. մրցահանդէսներ եւ մրցանիշներ | 110 |
| Ողջոյն Նաւասարդեան խաղերուն (Ա. Վ. Ռամեան) | 111 |
| Բանակում — ցուցահանդէս | 115 |
| Հ. Մ. Ը. Մ. ը որբանոցներէն ներս (Մ. Մալումեան) | 120 |
| Հ. Մ. Ը. Մ. ի առաքելութիւնը Հայաստան | |
| Սկսուտներու երթը (Հ. Սէրէնկիւլեան) | 126 |
| Մարդիկներու առաքումը | 130 |
| Գաւառները | |
| Տարտանէլ | 143 |
| Կիլիկիա | 144 |
| Մալկարա | 145 |
| Ռոտոսթօ | 146 |
| Իզմիր | 149 |
| Հ. Մ. Ը. Մ. ի տեղահանումը | 151 |
| Հ. Մ. Ը. Մ. ի առաքելութիւնը Յունաստան | 152 |

Գաղութներու մէջ

| | |
|----------------------------|-----|
| Փարիզ եւ շրջաններ | 159 |
| Մարսէյլ | 174 |
| Կեղը . եւ Հարաւային Ֆրանսա | 178 |
| Իտալիա | 181 |
| Զուիցերիա | 182 |
| Պելճիքա | 186 |
| Կ . Պոլիս | 187 |
| Պուլկարիա | 192 |
| Ռումանիա | 201 |
| Յունաստան | 209 |
| Սուրիա | 215 |
| Պաղեստին | 234 |
| Իրաք | 239 |
| Պարսկաստան | 240 |
| Հնդկաստան | 242 |
| Կիպրոս | 246 |
| Եգիպտոս | 249 |
| Միացեալ Նահանգներ | 252 |
| Խ . Հայաստան | 254 |
| Հիմնադիրներ եւ ռահվիրաներ | 257 |
| Ախոյեաններ | 274 |
| Մեր կորուստները | 278 |
| Վարիչներ եւ գործիչներ | 285 |
| Սկսուտ խմբապետներ | 290 |
| Քսանամեակը | 291 |
| Մեռեալներու յիշատակին | 292 |
| Բարոյական բերդը (Ազդակ) | 295 |
| Յայտարարութիւն | 298 |

ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ



| | Էջ |
|--|-----|
| Պոլսոյ Արաքս Փուլթալի խումբը | 48 |
| Շաւարշ Քրիսեան | 53 |
| Գրիգոր Յակոբեան | 64 |
| Նոր - Դպրոցի եւ Սկիւտարի սկառւտները | 69 |
| Իզմիրի հայ Փուլթալի խումբը | 73 |
| Նոր դպրոցի սկառւտները արշաւէ դարձին | 83 |
| Ա. ողիմպիականէն վերջ առնուած խմբանկար | 93 |
| Հ. Մ. Ը. Մ. ի Բ. Պատգմ. Ժողովի խմբանկարը | 96 |
| Յուլիս 14ի ցոյցէն վերջ սկառւտներու խումբը | 101 |
| 1922ի ողիմպիականէն՝ ցանկարչաւի մեկնումը | 105 |
| Տողանցք Սկիւտարի մէջ | 109 |
| Հ. Մ. Ը. Մ. ի Վոսիորի մասնաճիւղին սկառւտները | 116 |
| Հ. Սէմէրճեան 400 մէթր վազքի մէջ | 119 |
| Նոր դպրոցի սկառւտներու խումբը | 121 |
| Մ. Մալումեան | 124 |
| Հ. Մ. Ը. Մ. ի Փարիզի Փուլթալի խումբերը | 125 |
| Խ. Հայաստանի մէջ սկառւտներու դասախօսութիւն | 129 |
| Հայաստանի մէջ մարզիկներու խումբ մը | 133 |
| Հայաստանի մարզկուհիներու տողանցքը | 136 |
| Հայաստանի մարզիկներու տողանցքը | 137 |
| Հայաստանի մէջ չմշկող պատանիներ | 140 |
| Ռոտոսթոյի սկառւտներու բանակումը | 148 |
| Գէորգ Յարեթեան | 150 |
| Յունաստանի առաքելութիւնը | 155 |
| Փարիզի Փուլթալի խումբը | 158 |
| Փարիզահայ մարզիկներու տողանցքը | 160 |
| 100 մէթրի վազքի փորձերը | 161 |
| Կարօ Ուշագլեան | 163 |
| Փարիզահայ սկառւտներու բանակումի կեանքէն | 164 |


| | Էջ |
|---|-----|
| Փարիզահայ սկսուածները Սթէլլա փլաթ | 165 |
| Փարիզի հայ եկեղեցիին մէջ Հ. Մ. Ը. Մ. ի խմբանկար | 168 |
| Փարիզի սկսուածական Ա. խումբը | 169 |
| Հայկազն Աբէլեան | 172 |
| Վաղդէն Անդրէասեան | 173 |
| Յաղթական կամարին առջեւ | 176 |
| Փարիզի սկսուածական խումբ | 176 |
| Փարիզի Փուլթպոլի խումբը 1929ին | 177 |
| Փարիզի դայլիկներ եւ կայտերը | 177 |
| Ալֆորվիլի սկսուածական խումբը | 180 |
| Պուա – Քոլոմպի սկսուածական խումբը | 181 |
| Մարսիլիոյ մարզիկներու երկսեռ խումբը | 184 |
| Մարսիլիոյ Հ. Ը. Մ. Ը. ի խումբը | 185 |
| Վիէնի Հ. Մ. Ը. Մ. ի սկսուածական խումբերը | 188 |
| Ողիմպիականներուն տրուած մրցանակ մը | 189 |
| Պալքանեան Պատում. ժողովը | 193 |
| Պուրկազի Հ. Մ. Ը. Մ. ի մարզական խումբը | 196 |
| Վառնայի դայլիկներու խմբանկարը | 197 |
| Սլիվէնի Փուլթպոլի Բ. խումբը | 200 |
| Յ. Երեմեան, Պուլկարահայ ախոյեանը | 200 |
| Պուքրէշի սկսուածները | 201 |
| Պալչըքի Հ. Մ. Ը. Մ. ի առաջնորդները | 204 |
| Պուքրէշի եւ Սթրուենկայի սկսուածները | 205 |
| Աթէնք, Ֆիքսի առաջնորդական կազմը | 209 |
| Յունաստանի առաջին Շրջ. Վարչութիւն | 212 |
| Յունաստանի սկսուածական Ա. եւ Բ. խումբերը | 213 |
| Պէյրուի սկսուածական խումբը | 216 |
| Պէյրուի Հ. Մ. Ը. Մ. ի Ա. խումբը | 217 |
| Պէյրուի – սկսուածական երդում | 220 |
| Պէյրուի – Դամասկոս խառն կազմը | 221 |
| Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի ամբողջ կազմը | 224 |

| | Էջ |
|---|-----|
| Դամասկոսի սկառուտներու խմբանկարը | 225 |
| Դամասկոսի Փուլթպուլի Ա. խումբը | 228 |
| Դամասկոսի Հ. Մ. Ը. Մ. ի սկառուտական խումբ | 228 |
| Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի կայտերը 1934ի | 229 |
| Հալէպի Հ. Մ. Ը. Մ. ի մարզադաշտը | 232 |
| Հալէպի սկառուտներու խմբանկար 1928ին | 233 |
| Հալէպի ողիմպիական դաշտահանդէս | 233 |
| Երուսաղէմի Փուլթպուլի խումբը | 236 |
| Եաֆայի Փուլթպուլի խումբը | 236 |
| Եաֆայի Փուլթպուլի խումբերը | 237 |
| Կալկաթայի մէջ դրօշակի յանձնում | 244 |
| Կալկաթայի սկառուտները լեռներու մէջ | 245 |
| Գահիրէի աղջկանց մարզանքը | 250 |
| Արարատ Բրիտեան | 251 |
| Յ. Թ. Հինդլեան | 256 |
| Արամ Նիկողոսեան | 258 |
| « Մարմնամարզ » ի գլուխը | 259 |
| Գրիգոր Մերճանօֆ | 261 |
| Հայկ Ճիզմէճեան | 264 |
| Գառլօ Շահինեան | 265 |
| Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան | 266 |
| Յ. Ճ. Սիրունի | 267 |
| Վահրամ Փափաղեան | 268 |
| Ե. Քաջունի | 269 |
| Վարազ Փողարեան | 272 |
| Տիգրան Խոյեան | 273 |
| Մարտիրոս Գուլումճեան | 276 |
| Յակոբ Մամիկոնեան | 277 |
| Հայկ Ծօլօլեան | 279 |

489790

Imp. A. DER AGOPIAN
17, Rue Damesme - Paris

Printed in France



ՆԵՐԿԱՅ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆՆ Է

| | |
|---------------------|---------|
| Ֆրանսա եւ գաղութներ | 40 ֆր. |
| Արտասահման | 50 ֆր. |
| Աւերիկա | 1½ տոլ. |

Յանձնարարութիւները ուղղել

Պ. Գ. ՇԱՀԻՆԵԱՆԻ

34, Rue St. Lazare — PARIS (9)

Imp. A. DER AGOPIAN
17, Rue Damesme - Paris

Printed in France